

ՄԵՐ ԵՂԵՌՆԵ ՎԵՐԱԳՐԱԾՆԵՐԸ

Ինգա Ավագյան

# ՄԵՐ ԳՆԴԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

Հովհաննես Թոչունյան-Հովհաննիսյանի հուշապատումը

Ինգա Ավագյան

## ՄԵՐ գնդի ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

Հովանան Թեոֆիլ-Հովանիայանի ՀՈՒՍՊԱՏՈՒՄԸ

Գյումրի  
ԷԼՂՈՐԱՂՈ  
2016

ՀՏԳ- 94(479.25):821.19-94

ԳՄԳ- 63.3(5Հ)+84(5Հ)

Ա 770

*Երաշխավորված է հրատարակության ՀՀ ԳԱԱ Հայոց գեղասպանության քանգարան-  
ինստիտուտի գիտական խորհրդի (23.02.2015)*

*ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների  
կենտրոնի գիտական խորհրդի (16.08.2016)*

*Գյումրու «Կոմսայրի» պարմամշակութային արգելոց-քանգարանի որոշումներով*

Գիտական խմբագիր՝  
պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ  
Գրախոսներ՝

**Արթուր Հովհաննիսյան**  
**Մկեղիան Տեր-Մարգարյան**  
**Պարույր Զաքարյան**  
**Անահիտ Մկրտչյան**

Խմբագիր՝

**Ավագյան Ինգա**

Ա 770 Մեծ եղեռնը վերապրածները, Մեր գնդի ճակատագիրը, Հովհաննես  
Թռչունյան-Հովհաննիսյանի հուշապատումը, / Ի. Ավագյան.— Գյումրի:  
Էլդորադո, 2016.- 336 էջ:

*«Էդիհնակի» «Մեծ եղեռնը վերապրածները» մասրենաշարի հիկնգերորդ գիրքն է, որը, ինչպես և  
նահտորդ չորսը, արեղծվել է իրական ռեսպերի և փաստերի հենքի վրա: Այս անգամ մշակվել  
պարմական փաստերի հետ համատրվել և գրքի տեսքով ընթերցողի սեղանին են դրվել  
Արևելյան և Արևելյան Հայաստանում 1915-1920թթ. Հայոց եղեռնը վերապրած երգնկաջի 16-17-  
սմյա պարմունո՝ կոտորածից մագապործ Հովհաննես Թռչունյան-Հովհաննիսյանի հիշողություն-  
ները: Վերջիններս, ի պարիվ թե՛ հուշագրի, թե՛ աշխատության հեղինակի, պարմականի, փաս-  
տագրականի, աղբյուրագիտականի և ազգագրականի հետ մեկտեղ ունեն նաև գեղարվեստական  
արժեք, քանգի պարմական իրադարձությունները, գործող հերոսները, վերապրողի քնարական  
պարմանները վիպականություն են հաղորդում գրքին: Ընթերցողի վրա ծանր տպավորություն են  
գործում Երգնկայի և հարևան գյուղերի հայկական քնակչության կոտորածը, 1918թ. սկզբին ռու-  
սական գորքի և հայկական կամավորական ցոկարների նահանջը Երզրումից, Հասանկարայից,  
Մարիդամիչից, Կարսից, Ալեքսանդրապոլից, 1919թ. ապրիլին անգլիական հրամանատարության  
կողմից Անդրանիկ գորմարի «Հայական առանչին հարվածող գորմանաի» ցրումը, 1920թ. հայ-  
թուրքական պարերագը, թուրք ոնրագործների մյուս հրեշավոր գործողությունները Հյուսիսա-  
յին Կովկասում ապարմանած հայ գաղթականների նկարմամբ: Քարերգագրի մանրակրկի-  
տությանը ներկայացված են Երգնկայի, Երզրումի, Հասանկարայի, Կարս քաղաքի և Կարսի գյու-  
ղերի, Ալեքսանդրապոլի գամարի գյուղերի տեղագրությունը, թերդերը, քաղերն ու փողոցները,  
ինչպես նաև հայ, թուրք և հույն ազգագրականության փոխհարաբերությունները, կենցաղն ու նիս-  
տականցը, ավանդույթներն ու քաղբերը:*

*Գիրքը մեծապես արժեքավորվում է հեղինակի գիտական և մեկնաքնական հարուստ  
ծանոթագրություններով, պարմական քարտեզներով, լուսանկարներով, ինչպես նաև երգն-  
կաջու իտավածքում օգրագործվող օլար քառերի և արտադարձությունների քառարմանով:*

*Գիրքը հասցեագրվում է Մեծ եղեռնի թեմայով զբաղվող գիտական հասարություննե-  
րին, պարմաքաններին, աղբյուրագեպրներին, ազգագրագեպրներին, քանասերներին, ժողո-  
վրդագրությանը զբաղվողներին և ընթերցող լայն շրջանակներին:*

ՀՏԳ- 94(479.25):821.19-94

ԳՄԳ-63.3(5Հ)+84(5Հ)

ISBN 978-9939-826-54-7

© Ավագյան Ի., 2016թ.

## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

«Հայրենիքի ապագա՝ սերունդներ՝ աղջիկ թե պատանի, լավ լսեցեք էս բոլորը, էս իրողությունը, որ եղել է 1915թ. գարնանը ձեր պապերու, մամերու, եղբայրներու, քույրերու հետ, դուք ձեր կյանքում չմոռանաք»...

### Հ. Թոշունյան-Հովհաննիսյան

Մեծ եղեռնի հարյուրամյակին ընդառաջ ավելի է մեծանում հետաքրքրությունը XXդ. սկզբի խոշորագույն ոճրագործության՝ հայոց ցեղասպանության նկատմամբ, որը պայմանավորված է բազմաթիվ երկրների կողմից պատմական այդ փաստի ճանաչումով: Հայոց ցեղասպանության մասին լույս են ընծայվել շատ ուսումնասիրություններ, գիտական աշխատություններ, գեղարվեստական գործեր և փաստաթղթերի ժողովածուներ:

Վերջին տարիներին հրատարակված գրականության մեջ իրենց կարևոր տեղն են գրավում պատմական հիշյալ իրադարձությունների անմիջական մասնակիցը դարձած ականատես վկաների և Մեծ եղեռնը վերապրածների պատմած ու գրի առած հիշողությունները, որոնք կարևոր նշանակություն ունեն Հայ դատի լուծման և հայոց ցեղասպանության ճանաչման համար:

2003-ի ամռանը Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի և Գյումրու «Կումայրի» արզելոց-թանգարանի (ԿԱԹ) հանձնարարությամբ նախաձեռնեցինք «Մեծ եղեռնը վերապրածները» խորագրով մատենաշարի հրատարակությունը՝ ընդգրկելով Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանում, Շիրակի մարզում և Գյումրիում Մեծ եղեռնը վերապրած մարդկանց հուշապատումները: Աստենաշարում մեր հրատարակած հուշապատումներն են՝ 2004թ.՝ «Ծննդավայրիցս դեպի Տեր Զոր (Քաջունի Ղարագյոզյանի հիշողությունները)», 2006թ.՝ «Հուշեր անցյալից (Հայրապետ Տոնոյանի հիշողություն-

ները)», 2008թ.՝ «1915թ. Բիթլիսյան ողբերգություն (Սիիրան Ղազարյանի հուշապատումը)», 2015թ.՝ «Հիշողություն մեր ընտանիքի պատմության մի քանի պահերից (Աղասի Մակարյանի հուշապատումը)»: Այս անգամ ընթերցողի սեղանին ենք դնում հայոց ցեղասպանության ականատես-վկա Հովհաննես Պողոսի Թռչունյան-Հովհաննիսյանի «Մեր գնդի ճակատագիրը» հուշապատումը: Մատենաշարում հրատարակված չորս հուշապատումներն էլ աչքի են ընկնում իրենց եզակիությամբ, բայց իրարից անկախ, գրեթե նույնությամբ պատկերում են պատմական նույն իրողությունները, պատմական իրար նման դեպքերը, կերպարները և իրադարձությունները, նույն ահասարսուռ տեսարաններն ու դաժանությունները, որոնք զուգակցվելով հաստատում, շարունակում, լրացնում և ընդհանրացնում են միմյանց՝ անձնականից վերածվելով ընդհանուր, ապա և համազգային ողբերգության, Մեծ եղեռնի ու հայոց ցեղասպանության:

Պատմական գրականության մեջ բազմիցս նշված է, որ հայոց ցեղասպանության ականատես-վկաների պատմած կամ գրի առած հուշերը իրենց կառուցվածքով կա՛ն հակիրճ են ու սեղմ, կա՛ն ծավալուն ու երկարապատում<sup>1</sup>: Այս դեպքում հիշողությունները ծավալուն ու երկարապատում են և ներառում են զանազան երկխոսություններ, մեջբերումներ, ժողովրդական բանահյուսություն՝ երգ, վիպերգ, զրույց, առած-ասացվածք, օրհնանք, անեծք, աղոթք, երգում, ավանդույթներ, աշուղական երգեր<sup>2</sup>: Վերապրածը մասնավորապես հիշում է անհայտ աշուղի խոսքերը.

***Շուն փաճիկը Արփաշայն անցավ,  
Քանդեց ավանները Շորագյալ,  
Չարկեց այծյամներդ, կերավ զաններդ,  
Մարուր հորթ չմնաց Շորագյալ...:***

Այս ամենով հեղինակը փորձում է հաստատել, փաստագրել իր պատմածի իսկությունը՝ առավել արժեքավոր ու ցնցող դարձնելով իր հուշերը: Հովհաննես Պողոսի Հովհաննիսյանը (Թռչուն-

յան) հիշում է Կոմիտասի մշակած հայերեն երգերը, որոնք ուսուցանվել էին երգեցողության ժամին Կոմիտասին աշակերտած վարժապետի կողմից, վերապրածի փեսայի գրած հայերեն և քրդաթրքերեն երգերը, պատմում է «Չախ-չախ թագավորը» ժողովրդական հեքիաթի տարբերակներից մեկը, ներկայացնում եկեղեցական ծեսերը՝ Բարեկենդան, Մեծ պահք, Չատիկ, խոսում ազգային սովորությունների (երեխային անփորձանք պահելու նպատակով սրբի դիմաց վեր բարձրացնելը), պատմական իրողությունների մասին, մասնավորապես Պապ թագավորի սպանության վայրի հետ կապված՝ ներկայացնում Բասենի Բաղիջավան գյուղի և Թորգոմա երկիր-Թորթում տեղանունների տեղանվանական համառոտ վերլուծությունը: Ուշագրավ է վերապրածի կողմից Երզնկա քաղաքին, գավառին և վիլայեթին վերաբերող մի շարք պատմական, աշխարհագրական և ազգագրական բնույթի տվյալներով ու տեղեկություններով հիշողությունները համալրելու և հարստացնելու փորձը: Թռչունյանի հուշապատումը հարուստ է ժամանակագրությամբ, իրական փաստերով: Ինչպես մյուս վերապրածները, այնպես էլ Հովհաննես Հովհաննիսյանը իր պատմածի նկատմամբ զգում է բարոյական պատասխանատվություն և պարտքի գիտակցում: Հայոց ցեղասպանությունը, որը իրականացվել է XX դարասկզբին, անմիջականորեն ընկալվել է ականատեսի զգայարաններով և անջնջելիորեն տպավորվել նրա հիշողության մեջ: Պատմական այդ իրադարձությունների ականատես-վկան, խոր ցավով վերապրելով իր տխուր անցյալը, մեզ է հաղորդում իր անձնական հուշերը՝ պատմական հայրենիքի, ծննդավայրի, հայրենի օջախի, սիրելի հարազատների մասին, որոնք վաղուց չկան<sup>3</sup>: Այդ անձնական հիշողությունները նրա հետ են եղել ողջ կյանքի ընթացքում, և ինչպես մյուս վերապրածները, նա ևս չի կարողացել ազատվել այդ դառը հիշողությունների մղձավանջից: Հովհաննես Հովհաննիսյանի հիշողությունները, անշուշտ, եզակի են իրենց բովանդակությամբ, բայց և նման են մյուս վերապրածների պատմած հուշերին: Հուշապատումի մեջ հանդես եկող գլխավոր անձը պատմողի կեր-

պարն է, որը ոչ միայն ներկայացնում է դաժան իրադարձությունները, այլև դրսևորում է իր անհատականությունը, աշխարհայացքը, մոտեցումներն ու տեսակետները իրեն բնորոշ լեզվով ու ոճով<sup>4</sup>: Հուշապատումը եզակի է նրանով, որ թույլ է տալիս վեր հանել ոչ միայն Մեծ եղեռն վերապրածի (վերապրածների) հոգեբանական բարդությունները, այլ նաև տեսնել և ընկալել այն ուղիները, որ վերապրածը փնտրում է հոգեբանական ծանր վիճակից դուրս գալու համար: Հոգեբանական այս դժվար հանգույցը գրեթե անհնարին է դառնում քանդել ողջ կյանքի ընթացքում, ինչի արդյունքում վերապրածը ունենում է լուրջ և անհաղթահարելի բարդություններ:

Հովհաննես Հովհաննիսյանի հուշապատումի մեջ կան նաև թե՛ պատմական բնույթի, թե՛ ոճական որոշ անճշտություններ, այդ իսկ պատճառով հուշապատումը ներկայացվում է մասնակի միջամտություններով: Հուշերում կան թվագրման՝ ժամանակագրության հետ կապված սխալներ, որոնք ճշտված են անմիջապես տեքստում, տողատակերում բերված են բնագրային տվյալները:

Ընթերցելով հիշողությունները՝ չմոռանանք, որ ականատեսվկան Մեծ եղեռնի ժամանակ եղել է 16-17 տարեկան պատանի: Մեր խոսքը՝ մեջբերումներ, լրացումներ, մեկնաբանություններ, բերված է տողատակերում, հուշապատումին կից դրված է ձայնասկավառակ՝ վերապրածի ձայնով: Վերջում տրված է հեղինակի գրառումներում օգտագործված օտար բառերի բառարան:

Հովհաննես Հովհաննիսյան-Թռչունյանի հուշապատումը գրվել է 1915թ. Մեծ եղեռնից 53 տարի անց՝ 1968թ.: Վերապրածը խոստովանում է. «Անշուշտ քար չէր իմ սիրտը, ես, սպրելով ցեղիս դահիճների կողքին, կհավաքեի փասպեր ու իրողություններ մի օրս լույս արևի հանելու և հրապարակելու հույսով»: Վերապրածը թե՛ իր, թե՛ մեր առջև դնում է մի կարևոր խնդիր՝ հավաքել, գրի առնել դաժան իրողությունների վկաների հուշերը: Նա քաջ գիտակցում է ցեղասպանության ճանաչման համաշխարհային նշանակությունը, նաև եղելությունը գրի առնելու, տարբեր լեզուներով թարգմա-

նելու, միջազգային հանրությանը ներկայացնելու անհրաժեշտությո՜ւնը: Վերապրածը հայոց ցեղասպանությունը որակավորում է ոչ միայն որպես հայոց պատմության ողբերգական էջ, այլև համաշխարհային պատմության խոշոր ոճրագործություն, որից աշխարհը պիտի դասեր քաղի՝ հետագայում նման այլ ոճրագործություններից խուսափելու համար.«...Վաղը պատմությունը կրարի մեզ մենք պետք է գրենք, թե ինչ է կատարվել 1915թ. Թուրքահայաստանում: Համաշխարհային պատմության մեջ պետք է բոլոր լեզուներով գրվի, թող բոլոր, բոլոր ազգերն իմանան թուրք բարբարոսների վայրագությունների մասին»: Ուշագրավ է վերապրածի դիմելածը մեզ.«Հայրենիքի ապագա՝ սերունդներ՝ աղջիկ թե պատանի, լավ լսեցեք էս բոլորը, էս իրողությունը, որ եղել է 1915թ. գարնանը չեք պապերու, մամերու, եղբայրներու, քույրերու հետ, դուք չեք կյանքում չմոռանաք»: Վերապրածի առանձնաշնորհն այն է, որ իր հուշերում ներգրավել է նաև իր ընկերների, ազգականների, մերձավորների, հարևանների, անգամ թուրք զավթիների հուշերը և փոքրիկ պատառիկներ, որոնք անգին տեղեկություններ են պարունակում պատմաքաղաքական, սոցիալ-տնտեսական, ազգագրական և կրթական առումով:

Ենթադրվում է, որ Հովհաննեսը ծնվել է 1899-1900 թթ., որովհետև ինչպես ինքն է գրում Մեծ եղեռնի ժամանակ տասնվեց տարեկան էր: Հովհաննես Հովհաննիսյանը ծնվել է Երզնկայի գավառի Ղարադեկին<sup>5</sup> գյուղում, որ ութ կմ է հեռու Երզնկա քաղաքից:

Հուշապատումն անավարտ է, պահպանված մասերն են «Գիրք առաջինը» և «Գիրք երկրորդի» մի հատվածը: Առաջինը գրեթե ամբողջական է, բացակայում են պահպանված ձեռագրի որոշ հատվածներ՝ էջ 49, 135-148, 176-177, 233: Հուշապատումի այն հատվածը, որ վերապրածը նախապես վերնագրել է «Գիրք առաջին»՝ «Մեր գնդի նահանջը», բաղկացած է ութ տետրերից (ընդհանուր հաշվով 369 էջ): «Գիրք երկրորդը», որ հեղինակը սկսում է Էջմիածնում Անդրանիկի զորախմբի լուծարումից հետո, մնացել է անավարտ: Այս անավարտ մնացած մասից մինչև վերապրողի մահը ընկած

ժամանակահատվածը կփորձենք լրացնել մենք՝ կից դնելով վերապրողի մասին կենսագրական ակնարկը:

Վերապրածի հուշերում անգին են պատմական այնպիսի տեղեկությունները, որոնք վերաբերում են Համիդյան (1894-96թթ.), Կեմալի և Սանաայի կիրճերում Երզնկայի խաղաղ բնակչության և թուրքական բանակ զորակոչված հայ զապթիների, ասկյարների և ամալիա թաքուրների, դաբախսանայում ծառայող հայ երիտասարդների 1915թ. կոտորածներին, Էրզրումի քարավանի դաժան ջարդին, Հասանդալայի բերդին և Բասենի դաշտում ջերմուկի վրա կառուցված բաղնիքին, Սարիդամիշի անտառներում փայտի մշակման ցեխի, սողցարանի աշխատանքներին, Էրզրումից խայտառակ նահանջին և թշնամու հարձակման ժամանակ զինվորական հիվանդանոցի հիվանդներին լքելուն, Էրզրումի բերդի և նրա դռների, Երզնկայի հայկական թաղի, եկեղեցու, Եփրատի կամուրջների նկարագրությանը: Առանձնահատուկ ուշադրության են արժանի փոխարքա Նիկոլայ Նիկոլանիչի Երզնկա ժամանման, բոլշևիկյան և մենշևիկյան ժողովների արդյունքում բանակի բարոյալքման նկարագրությունները, նաև այն կարևոր հանգամանքի ներկայացումը, որ ցարական Ռուսաստանի բանակում ծառայած հայ զինվորական դասը նույնպես կրել է Գեկաբրիստական շարժման լուսավորչական ազդեցությունը և իր պարտքն է համարել լուսավորել Թուրքահայաստանի հայությանը: Հուշերի մեջ արտացոլված է հայ ժողովրդի վերաբերմունքը ինչպես ցարական ընտանիքի անդամների, այնպես էլ Փետրովարյան և Հոկտեմբերյան հեղափոխությունների հետ կապված քաղաքական և հասարակական մի շարք տեղեկությունների հանդեպ, խոսվում է մեր ժողովրդի հասարակ խավի համար անըմբռնելի բոլշևիկյան գաղափարախոսության քայքայիչ ազդեցության մասին Հայաստանի Առաջին հանրապետության օրհասական ժամերին, ներկայացվում է նույն գաղափարախոսության պատճառով անցածը մոռացնելու և Խորհրդային Ադրբեջանում թուրքից փրկվելու, պատսպարվելու և փրկության նոր եզրեր ապարդյուն փնտրելու հանգամանքը:

Եզակի են տեղեկությունները 1918թ. Վաղիկավկազյան հանրապետության տարածքում տեղի ունեցող իրադարձությունների մասին, երբ թուրք զերիներին կամավոր են գրել Դենիկինի Սպիտակ գվարդիա և առիթից օգտվելով՝ փորձել են շարունակել օսմանյան քաղաքականությունը գաղթական հայերի նկատմամբ. հայերի կոտորածների մասին, որոնք տեղի են ունեցել 1920թ. Մուստաֆա Քեմալի արշավանքի ժամանակ Դերբենդում և Պետրովսկ-Պորտում, բոլնիսիաչեցիների դավաճանության պատճառով 1918թ. դեպի Թիֆլիս նահանջող հայկական 80 հոգուց բաղկացած զինվորական գնդերից մեկի ղեկավարման մասին: Սակայն առավել կարևոր ենք համարում Անդրանիկ գորավարի բանակում վերապրածի անցած ճանապարհը, Խոյի ճակատամարտի, Գորիսի, Սիսիանի, Աղուղի ու Վաղուղի դեպքերը, որոնք թյուր են ներկայացվել խորհրդային գրականության մեջ: Վերապրածը, լինելով Խոյի ճակատամարտի մասնակից, ռազմական գործողությունները տեղայնացնում է մի վայրում, որը, ըստ ավանդության, հայերը կոչել են Վարդանանց գերեզման: Նա Անդրանիկի հետ անցած իր ճանապարհը ավարտել է Էջմիածնում, սակայն կրկին զինվորագրվել է 1920թ. և մասնակցել հայթորքական պատերազմին: Տողատակերում Անդրանիկի Հայկական առանձին հարվածող զորամասում Հովհաննեսի անցած ճանապարհը համադրում ենք Անդրանիկի հսկողությամբ նրա դպիրի՝ Եղիշե Քաջունու գրի առած օրագրում<sup>6</sup> և Կ. Ալեքսանյանի հրատարակած Միհրան Խաչատրյանի հուշապատումի մեջ<sup>7</sup> հանդիպող տվյալների հետ և հանգում այն եզրակությանը, որ և՛ Հովհաննեսը, և՛ Միհրանը իրարից անկախ ներկայացնում են նույն ճանապարհը, որ անցել են զորամասի հետ, հիշում նույն տեղանունները, փաստերը, դեպքերը և մարդկանց անունները, որոնք Անդրանիկը թելադրել է Եղիշե Քաջունուն: Այս ամենին համադրվում են նաև բանահավաքության միջոցով մեր կողմից գրի առնված որոշ փաստեր: Մասնավորապես Սամվել Գևորգյանը պատմել է, որ 1918թ. ապրիլին Անդրանիկը ապրել է Բասահայան 86 տանը և հետագա տարիներին՝ հատկապես 1988թ. երկրա-

շարժից հետո, տան պատերից հայտնաբերվել է մեծ քանակությամբ զինամթերք: Տիգրան Պողոսի Հուրմուզյան-Սիմոնյանը Ադուղի և Վաղուղի դեպքերի և Էջմիածնից հետո գորավարի անցած ճանապարհի մասին կարևոր փաստեր է հայտնել իր թռուածնը՝ Սամվել Սիմոնյանին:

Հովհաննեսի հիշողություններում կարևոր տեղեկություններ կան Երզնկայի, Էրզրումի, Ալեքսանդրապոլի որբանոցների և որբահավաքի, մինչև 1915 թ. Արևմտյան Հայաստանում գործող կրթական համակարգի և ծխական դպրոցներում տիրող անբարենպաստ վիճակի մասին: Վերապրածը մասնավորապես նշում է, որ Ղարադեզին գյուղի արական վարժարանը, որը գործում էր Ս. Հրեշտակապետ եկեղեցուն կից, ունեցել է երեսուհինգ աշակերտ, մինչդեռ պաշտոնական տվյալներով սանների թիվը եղել է ընդամենը տասնչորս<sup>8</sup>: Առավել արժեքավոր կարելի է համարել դեռահաս աղջիկների և ջահել կանանց առևանգումների դեպքերի մասին հիշատակությունները: Անժխտելի է այն հանգամանքը, որ առևանգումների դեպքերը շարունակվել են նաև ռուսական բանակի կողմից վերանվաճված տարածքներում գործող որբանոցներից, ինչպես, օրինակ, տասներեքամյա Հազարվարդի առևանգումը Էրզրումի որբանոցից:

Ինչպես «Մեծ եղեռնը վերապրածները» մատենաշարի առաջին երկու հուշապատումների հեղինակները, այնպես էլ «Մեր գնդի ճակատագիրը» հուշապատումի գլխավոր հերոսը ապրել են Լենինականում (Գյումրի):

Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Հ.Պ. Հովհաննիսյանի դստերը, թոռնուհի Սաթիկին՝ հուշապատումի ձեռագիրը, սևագիր պատառիկները, լուսանկարները և այլ պահպանված նյութերը՝ փաստաթղթեր, ձայնակավառակ (որտեղ վերապրածը երգում է) և այլն, տրամադրելու համար: Առանձնակի շնորհակալություն ենք հայտնում ՀՀ «Արդիմպեքս» կազմակերպության գլխավոր ճարտարագետ Էդուարդ Ավագյանին և Միքայել Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտի դասախոս, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Արտակ Հով-

հաննիսյանին՝ գրքի հրատարակությանը սատարելու համար, նաև Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր Հայկ Դեմոյանին, «Կումայրի» արգելոց-թանգարանի տնօրեն Ստեփան Տեր-Մարգարյանին, լրագրող Համլետ Մոսինյանին՝ աջակցություն ցուցաբերելու համար: Հույս ունենք հանրության ուշադրությունը սևեռելու 1915թ. հայոց ցեղասպանության, հայկական հարցի և հայ դատի վրա:

Նվիրում ենք 1988թ. ադետալի երկրաշարժի զոհերի հիշատակին, որոնց թվում էին նաև տատս՝ Եպրաքսյա, քեռիս՝ Ալեքսան, քեռակինս՝ Անահիտ և քույրիկս՝ Հերմինե Մարկոսյանները:

***Ինգա Էդուարդի Ավագյան***

## ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

### Գլուխ առաջին

Այս պատմությունը Երզնկայի կոտորածի մասին գրելու առաջին փորձն է, և, անշուշտ, կունենամ թերություններ, ինչի համար ներող եղեք և սիրո՛վ ընդունեք այն: Ես շատ գրագետ չեմ, բայց շատ էի մտածում՝ ինչու չգրեմ, կգրեմ այնքան, որքան կարող եմ: Հաճախ էի մտածում, որ չեմ կարող գրել, գլուխ չեմ հանի: Խոր ցավ էի զգում, որ մի ողբերգական պատմություն էլ կարող է անհայտ մնալ: Երզնկայում կատարվածը իբրև սերմ եմ թողնում մեր հայ ազգին: Անմիջապես, բայց շատ դժվարությամբ, որոշեցի, որ գրեմ, մտածում էի որքա՞ն արժանի և վայել է պատմությունն հիշատակ թողնել ապագա սերունդներուն՝ հայ ժողովրդի նկատմամբ կատարված սպանությունները, ամենասարսափելի տանջանքները, թուրք բարբարոսներու սրից և սովից տանջամահությունը. լիովին ճիշտ տեղեկություններ ամեն ինչի մասին: Իմ ծաղիկ հասակում կատարված դեպքերը անցյալից լույս եմ ընծայում: Չպետք է մոռանալ, որ 53 տարի առաջ՝ 1915թ., Արևմտյան Հայաստանի աղետը ցնցեց ամբողջ աշխարհը: Տեղի ունեցածը վիթխարի նշանակություն կունենա ներկա և գալիք սերունդների համար, կայունության համար: Թող լավ իմանան մեր բոլոր սերունդները՝ աշխարհում հայրենիքից թանկ բան չկա, աշխարհում հայրենիքից էլ լավ տեղ չկա: Եթե սիրում ես հայրենիքդ, ուրեմն սիրում ես ծնողներուդ, ես էսքանը գիտեմ:

Թուրքիայի տերիտորիայում<sup>9</sup> հայ ժողովրդի նկատմամբ կատարված զազանությունները, ոճրագործների այլանդակությունները, դաժան դատաստանը խարդախ Թուրքիայի հանցագործությունն էր, հանցագործ քաղաքականությունը: Անհնար է լիովին պատմել աշխարհահռչակ զազան չարանենգ Թուրքիայի կազմակերպած սպանդի մասին, որը բազմատեսակ դաժանություններով դարձավ զազաններու ուսուցիչը: Եթե ես գրագետ լիների, աշխարհի ամենամեծ գիրքը կգրեի հայու կոտորածի մասին:

Թուրքիայի «Ֆաշիստները» հատուկ մեթոդներ և սպանությունների դաժան եղանակներ մշակեցին, որով իրագործեցին հայ ժողովրդի մասսայական ոչնչացումը՝ չխնայելով փոքրից մինչև մեծը ոչ մեկի: Էնվերն ու Թալեաթը շարունակեցին իրենց ուսուցչի<sup>10</sup> սև գործը: Նրանց հատուկ հրամաններով մարդկային կերպարանքը կորցրած գիշատիչ գազանները Առաջին համաշխարհային պատեագմի ժամանակ իրագործեցին հայ ժողովրդին ոչնչացնելու ծրագիրը թե՛ թուրքական բանակում, թե՛ խաղաղ բնակչության մեջ: Թալեաթը ժողովի ժամանակ ասել էր.«Մենք պետք է ոչնչացնենք այլ ազգերուն, որ հասնենք մեր հաղթանակին: Եթե ինձ հարցնեք, առաջին հերթին Թուրքիայի բոլոր հայերին նկատի ունեմ: Դա էն է, ինչ ես մտածել եմ իրականացնել, դա իմ խնդիրն է, և ես իրավունք ունեմ գործելու, քանի նրանց քեռին՝ ուռուսը, չի եկել»: Ապա Էնվերն ու Թալեաթը իրենց փաշաների հետ Թուրքիայի նահանգներում և շրջաններում, որտեղ խաղաղ ժողովուրդն էր ապրում, սկսեցին իրագործել հայ ժողովրդին մեջտեղից հանելու ծրագիրը՝ ըստ իրենց վաղօրոք կազմած պլանի: Ծրագիրը ենթադրում էր արագ և դաժան եղանակներով հայ ժողովրդի մասսայական ոչնչացում, քանի դեռ ռուսները չէին սկսել հարձակումը: Առաջին հերթին մեջտեղից հանվում էին առաջավոր մարդիկ, երկրորդը՝ գնդակահարվում էին տասնհինգ տարեկանից սկսած մինչև վերջին ծեր տղամարդը,<sup>11</sup> երրորդ՝ մնացած կնկտիք ու երեխեքն ալ տեղահան էին արվում և հնարավորության դեպքում կոտորվում մուսուլմանների կողմից: Չէին խնայում անգամ անտեր մնացած փոքր երեխանցը, նրանց հավաքում և լցնում էին ջուրը: Բանակում գտնվող հայ զինվորներուն զինաթափ էին անում, ուղարկում թիկունք՝ հարմար տեղում սպանելու: Հրամանը արագ կերպով իրականացվեց բոլոր նահանգներում:

Հրամայված էր քրեական հանցագործներուն և մարդասպաններուն բաց թողնել, և նրանց թույլատրվում էր վարվել հայ ժողովրդի հետ այնպես, ինչպես կուզեին. այժմ դա նրանց իսկական գործն էր: Թուրքերը բանտերից բաց թողեցին իրենց կատաղած շներուն, մարդասպաններուն. գոյացան դաժան գայլերի ոհմակ-

ներ: Թուրքական կառավարությունը դիվային նպատակին հասնելու և իր սև ծրագիրը իրագործելու համար օգտագործեց Առաջին աշխարհամարտը:

Մարտի վերջին սկսվեց հայոց տեղահանությունը, սկսվեց Բասենից ու հետզհետե հասավ մեր Երզնկա: Մայիսի վերջին մեր գյուղը տեղահան արեցին, մի քանի օրվա ընթացքում կողոպտեցին և ձերբակալեցին բոլոր տղամարդկանց, սկսվեց համատարած ջարդը անգույթ չաթաներու<sup>12</sup> և վրիժառու թուրք մուսուլմաններու կողմից: Կյանքիս ընթացքում շատ տանջանքներ եմ մոռացել, սակայն անմոռանալի է ծնողներիցս բաժանվելը: Բնավ հույս չկար, որ ես կազատվեմ մահվան ճիրաններից, շատ դեպքերում եմ ազատվել և արժանացել եմ իղձս կատարելուն. ամենամեծ փափագս գրելն է: Շնորհակալ եմ իմ հարս Դեսայինային, որ օգնեց էս գիրքը գրել:

Սկսեմ պատմել ցավալի, կսկծալի դեպքեր իմ հուշերից:

### Մեր դպրոցը<sup>13</sup>

Վաղ առավոտվանից սկսվում էին դասերը: Աշակերտները պետք է կարդային եկեղեցական գրքերը և իմանային ժամի աղոթքն ու ժամի երգերը, ինչ որ հարկավոր էր ժամին: Մեր երկրում հայտնի էին «Սաղմոսը», «Կտակարանը» և «Նարեկը»: Չիրուխները խրճով դրված էին վարժապետի կողքին և սպասում էին իրենց տիրոջ հրամանին: Էնպես էր լինում, որ դաս չիմացողների թիվը շատանում էր, էդ օրը միայն ծեծի դաս էինք անցնում: Մեղան կոչված բանը չկար: Ծնկաչոք նստում էինք խոնավ գետնի վրա: Առաջին պատիժը բոլորովին չտվորողների համար ֆալխական<sup>14</sup> էր (պառկեցնում էին գետնին և ոտքերին խփում վարժապետի սահմանած չափով): Երկրորդ պատիժը կիսատ սովորողներին էր վերաբերում. մի ոտքի վրա կանգնում էին անկյունում և սպասում էին վարժապետի հրամանին: Երրորդի ժամանակ անկյունում ծնկաչոք կանգնում էին մանր քարերի վրա: Էդ

ուսում չէր, որ մենք ստանում էինք: Աշակերտներս սովորում էինք ծեծի, ճիպոտի ուժով, ոչ մի բան էլ չէինք հասկանում, գլուխներս բթացել էին:

Մեզ համար մեծ պատիժ էր «Մեծ պասի» գալը. Գանիելի գրքով գործ պիտի անեինք: Տեր հայր Առաքելը պարապում էր մեզ հետ: Պատմում էր «կրոնական հրաշքների մասին», «Աստվածաշնչի» այն պատմությունը, թե Քրիստոսը ինչպես էր շրջել երկրեերկիր, գանազան հրաշքներ գործել: Երկիրը շրջելուց հետո ծովերն ու ցամաքները ման եկել:

Մարսափը տիրում էր մեզ, երբ որ գալիս էր տեր Առաքելը: Նա մեզնից հինգ կիլոմետր արևելք էր ապրում՝ Վերի Չութիք<sup>15</sup> գյուղում: Երկու-երեք օրը մի անգամ էր գալիս դաս տալու: Աշակերտները պետք է բառ առ բառ պատմեին Քրիստոսի հրաշքների մասին: Յավն այն էր, որ ոչինչ չէինք հասկանում եկեղեցական գրվածքներից: Մեծագույն տանջանք էր սկսվում, դա ուղղակի պատիժ էր մեզ համար: Աշակերտները պիտի պատմեին այնպես, ինչպես գրված էր գրքում:

Սկսվում էր կրոնի դասը: Տեր հայր Առաքելը առաջին աշակերտին կանչում էր.

-Կարդա՛ դասդ:

Հենց որ աշակերտը շփոթվում էր, նրա ձեռքը ցույց էր տալիս անկյունը: Աշակերտը պարտավոր էր համբուրել տեր Առաքելի ձեռքը, ապա չոքում էր հատակին: Էնպես էր լինում, որ դասարանում բոլորը համբուրում էին տեր Առաքելի ձեռքը և չոքում հատակին: Հայր Առաքելը մեր բախտից միշտ հանգիստ էր և ախ ու վախ անելով սկսում էր իր խրատները.

-Ախր լուսավորչական սերունդ եք, ոչ թե հեթանոսական, ինչու՞ չէք սովորում ձեր դասերը, երկինք-գետին ստեղծող Աստծու օրենքները, ա՛խ դուք, հիմարներ:

Եվ սկսում էր իրան-իրան խոսելը.

-Արդյոք դուք գիտե՞ք, թե ինչ է ձեր մասին մտածում հայր աստվածը և Քրիստոսը՝ Աստծու որդին:

Ապա սկսում էր Աստծու որդու՝ Քրիստոսի հրաշքների պատ-

մությունը, թե ինչպես Քրիստոսը ման է եկել աշխարհում և հիվանդներին խաչակնքել<sup>16</sup> լավացրել է, ինչպես է բուժել քոստոներին և այլ շատ ու շատ հրաշքներ գործել, թե ինչպես Աստծու որդին՝ Քրիստոսը, ուղղություն է տվել հեթանոս ժողովրդին:

Մենք՝ աշակերտներս, սարսափում էինք տեր հոր պատմած հրաշքներից, քանի որ բոլոր աշակերտներս էլ ժամի կրթությունից ոչինչ չէինք հասկանում: Մեզ պարզ չէր, թե ինչու երբեմն տեր հայր Առաքելը առանձին գովում էր աշակերտներից մեկին: Վերջում պարզվեց, որ գովում էր նրան, ում ծնողը տեր Առաքելին լավ պարտք էր տալիս, պատարագի ժամանակ փող գցում թաբաղը, ջրօրհներին փող տալիս, Մեծ պասի ոտնվալյին յուղ բերում և այսպիսի մի շարք բաներ:

Տեր հայր Առաքելը շատ էր պատժում Մայնոսի որդիներին՝ Կարապետին և Հարութին, չնայած որ շատ լավ էլ սովորում էին. նրա համար, որ Մայնոսը խաբել էր տեր հայր Առաքելին: Հետո կպատմեմ, թե ինչպես էր նա տղոնցից հանում մոր վրեժը:

## Նոր վարժապետ

1913թ. քաղաքից նոր վարժապետ բերին՝ երկու ոտքից կաղ, ասում էին՝ Կոմիտասի աշակերտն է եղել, «թուփալ վարժապետ» էին ասում: Վարձի մասին չգիտեինք, թե ինչ պայմանով էր աշխատում, իսկ ինչ վերաբերում էր ուտելիքին, շաբաթը մի աշակերտի տանն էր ուտում, քնում, այդտեղ էլ լվանում էին նոր վարժապետի շորերը:

Այս վարժապետը առաջին օրվանից նոր բան մտցրեց դասարանում: Ստուգեց մեր մաքրությունը, տեսավ, որ բոլոր աշակերտները հագել էին ինչ ձևով ասես: «*Լսե՛ք, Կողե՛ք, առաջին հերթին բոլորդ պետք է մազերդ խուզեք,-ասաց ու հետո դիմեց ինձ,-մոտրիկ արի, Կողա՛ ջան, անունդ ի՞նչ է*»: «*Հովհաննես*»: «*Հովհաննես, բարբարին կանչե՛ (այսինքն՝ սափրիչին), ասե՛, որ վարժապետը խնդրվալ, գաս դպրոց, որ աշակերտների մազերը*

*խուզես»։ Ես վազելով գնացի, բարբարին ասի վարժապետի կարգադրության մասին։ «Ես հիմա կգամ», - ըսավ և եկավ բոլորիս մազերը խուզեց։*

-Տղե՛ք, հարկավոր է նոր շորեր հագնել, մաքուր, թեկուզ հին լինի, կարկատած, բայց պատռված չլինի։ Էսօր ձեր ծնողներին ասե՛ք այն, ինչ որ ես պահանջում եմ։ Ով կոշիկ ունի, թող հագնի, ով չունի, թող չարուխ հագնի։ Առավոտ ես ձեզ տեսնեմ մաքուր։ Եվ սովորե՛ք բարև տալ, օրինակ, էսօր ինձ ոչ մեկը բարև չտվեցիք։ Առավոտ ով որ դպրոց մտնի, պետք է ինձ ասի՝ բարի՛ լույս, պարո՛ն վարժապետ, հասկացա՞ք, իսկ եթե ես մտնեմ դասարան վերջում, ես կասեմ՝ բարի՛ լույս, տղե՛ք։ Հա՛, լսե՛ք, տղե՛ք, եղունգներդ մաքուր կտրեցե՛ք, այսօր վերջացնում եմ դասերը։

Մենք վազելով ուզում էինք դուրս ելնել դասարանից, բայց նա ասաց.

-Էսպես չեղավ, տղե՛ք, առա՛ջ եկեք ի հասակի և գույգ-գույգ կանգնեցե՛ք... հիմա դուք ձեր գույգերին ճանաչեք, որ դուրս գաք հանդարտ, հասկացա՞ք։ Դե՛, շարժվե՛ք, հանգի՛ստ, հա՛, և չմռռանաք, առավոտ լավ վացվեք։

Երբ մենք դուրս եկանք, մեկս մեկիս հարցնում էինք. «*Երևի էս թուխալը վարժապետ չի, էս ի՞նչ նորություն ենք լսում։ Մնազ ամին էսպես բան չէր ակնում*»։ Շատ ծեծ ուտող Մանուկը ասաց. «*Տղե՛ք, չասաց՝ չիթուխը քերեք։ Երեք տարի է՝ դպրոց ենք գալիս, ու՞մ էր պետք այս բոլորը*»։

Երկրորդ օրը պարոն վարժապետը բոլորից շուտ էր եկել դասարան։ Ով որքան կարողացել էր, մաքրվել էր։ Նստել էինք զարմացած, թե ինչ նորություն պիտի անի։ Եվ նա ասաց. «*Տղե՛ք, էս ինչ որ ասել էի, կատարե՞լ եք*»։ «*Այո՛, բոլորս էլ կատարել ենք, պարո՛ն վարժապետ*»։ Ինքը նորից ստուգեց բոլորիս մեկ առ մեկ։ Կանչեց առաջին տղուն, որի անունը Մանուկ էր։ Բոլորս զարմացած նայում էինք, թե ինչ նորություն պիտի ասի։ Եվ նա ասաց. «*Հորդ ակունը Մնա՞զ է։ Հա՛, դու առաջին վարժապետի տղա՞ն ես*»։ «*Այո՛*»։

-Ուրեմն, դու բոլորից լավ պիտի սովորես, Մանուկ։ Ահա քեզ

քարե տախտակ, քարե գրիչ, այբբենարան, մեկ տետր և մեկ գրիչ,- և բոլորիս էլ նույնը տվեց, ինչ Մանուկին:

Քարե տախտակի չափը երեսուն քառակուսի սանտիմետր էր: Մի կես մետրի չափ քարե տախտակ էլ կախեց պատից: Բոլորը զարմացած էին, թե էս սև տախտակը ինչ պետք է անեն: Նա հարցրեց. «*Բոլորդ էլ սրացա՞ք, տղե՛ք*»: «*Այո՛*»: Մտտեցավ պատի տախտակին և սկսեց գրել անուն-ազգանունը, մեկից մինչև քսանը: Մենք զարմացած էինք, որովհետև առաջին անգամ էինք այսպիսի բան տեսնում:

-Լսե՛ք, տղե՛ք, ինչ որ էս տախտակին գրել եմ, դուք էլ գրե՛ք և աշխատե՛ք ինձ պես գրել, որքան կարող եք, գրե՛ք ինձ նման, եթե նման չի, նորի՛ց գրեք:

Մանուկը հարցրեց. «*Պարո՞ն վարժապետ, որտե՞ղ գրենք*»: «*Էդ մեկը, կներեք, ես չբացատրեցի. խոսքը քարե տախտակի հրաշքի մասին է: Հիմա նայեցե՛ք, ես գրածս մաքրում եմ շորով, նորից նույնը գրում եմ, դուք էլ այդպե՛ս արեք, չե՛ր քարե տախտակի վրա որքան կուզեք, գրե՛ք, որքան կուզեք, ջնջե՛ք, էս տարի հերիք է չեզ: Որքան կուզեք, գրե՛ք, ջնջե՛ք, վերջում ես չե՛ր գրածը կսրուզեմ: Ով չի կարող գրել, թող գա ինչ մուր*»:

Աշակերտներիս ուրախությանը չափ ու սահման չկար: Այսպիսի նորություն մեր դպրոցում: Վերջապես մեկ ժամ գրինք ու ջնջինք: Եվ պարոն վարժապետը սկսեց ստուգել. ով ճիշտ չեր գրում, ինքը կանգնում էր մոտները, մենք ջնջում էինք և նորից գրում: Եվ նա ասաց. «*Հիմա ես չեզ տնային աշխատանք կրամ, (բոլորիս տետրակի մեջ գրեց մեր անուն-ազգանունները, մեկից մինչև հիսուն թիվը), տետրակի մեջ ոչինչ չգրեք, գրե՛ք քարե տախտակի վրա: Եթե լավ չի սրացվում, ջնջե՛ք, նորի՛ց գրեք, վերջում տանը գրածների բերե՛ք, որ ես առավոտյան սրուզեմ: Մի ուրիշ գործ, տղե՛ք, էս մեր դպրոցը պետք է մաքուր լինի, գունի նման է, գնացե՛ք ու չեզ հետք բերե՛ք բահեր, դույլեր, ջնջոցներ, ջրաման: Այսօր պետք է մաքրենք դպրոցը*»:

Էս մեր վարժապետը իր նորություններով մեզ զարմացնում էր: Մենք անունը չգիտեինք, դրա համար էլ անունը «թուփալ վարժա-

պետ» էինք դրել: Դպրոցում «պարոն վարժապետ», իսկ դրսում՝ «թոփալ վարժապետ»... «Պարոն վարժապետը» արդեն հինգ շաբաթ էր՝ ինչ պարապում էր մեզ հետ, բայց ոչ մի աշակերտի մատով չէր կպել, բոլորս զարմանում էինք, որ ծեծը վերացավ: Մեր դասերը քանի գնում, այնքան բազմազան էին դառնում՝ թուրքերեն, ֆրանսերեն, երգեցողություն: Էնպես աշակերտներ կային, որ գերազանց էին սովորում: Ամենափոքր աշակերտը Գառնուկն էր՝ Վարդգեսը (հայրենադարձ է, հիմա ապրում է Վերին Ձեյթուն, 17 փողոցի 18 տանը): Ահա այս տղեն վկա, որ հայ ժողովրդին տանջամահ արին թուրք բարբարոսները, նաև մեր գյուղը զոհ գնաց թուրքերին: Քամախի նեղուցում ազատվել են միայն ինքը (վերջում կալատմեն իրականությունը) և Հարությունը՝ Մայնուսի տղեն, որ 1918 թ. անհետացավ Ջուլֆայում (կալատմեն վերջում):

Մինչ նոր վարժապետի հայտնվելը մենք՝ երեխեքս, հայերեն երգել չգիտեինք, իսկ հիմա երգեցողության դաս էինք անցնում խմբով: Կոմիտասի երգերից՝ «Սոնա յար», երկրորդը՝ «Ես վերեն կուգայի, դու դուռը բացիր, ախ արիր, լացիր», «Ալազյազի երգը»՝ «Սև մութ ամպեր ճակտիդ դիզվան<sup>17</sup>, դուման հագար, ա՛խ, Ալազյազ», չորրորդը՝ «Հյուրաթի երգը» և «Կռունկը»: Ես ձայնավոր էի տողոց մեջը: Ինձ կանչում էր մտորը և ասում.«*Հովհաննես, երգի՛ր «Ալազյազը»*»,-իսկ ինքը սկսում էր քյամանչայի վրա չալելը, և այսպես մեր տողոց ուրախությանը չափ չկար: Անցել էր երկու ամիս ու կես: Մի օր էլ տղաների ձեն եկավ փողոցից. մեր հարևան կույր Շարամն էր: Թուրք տողոց հետ Շարամը, փայտը թխկացնելով, խնդալով կանգնել էր պատի տակ: Նոր հրաշք վարժապետը հարցրեց.«*Տղե՞ք, էս կույրը ո՞վ է, հա՞յ է, թե՞ թուրք*»: Ես պատասխանեցի.«*Պարո՛ն վարժապետ, մեր հարևանի տղան է, հայ է: Հայրը թագի է*<sup>18</sup>»:

Մեր գյուղը վեց գյուղի կենտրոն էր. թագի էլ կար, բարբար էլ կար, խանութ էլ կար: Բոլոր գյուղերից գալիս էին մեր գյուղը՝ շոր կարելու, առևտուր անելու և շատ ուրիշ բաների:

-Հովհաննես, կանչի՛ր էդ Շարամին:

Ես գնացի և ասացի.«*Արի՛ գնանք, վարժապետը կանչում է*

քեզ», - նա քսան տարեկան էր, բոյով: «Վարժապետը ի՞նչ պիտի անի ինչ»: «Չիդեմ, արի գնանք», -ասացի և քաշելով տարա դասարան:

-Անունդ ի՞նչ է, տղա՛ ջան:

-Շարամ՛, պարո՛ն վարժապետ:

Բոլոր աշակերտներին հետաքրքիր էր, թե վարժապետը ինչ պիտի անի:

-Քյամանչա չալել սորվել կուզե՞ս:

-Ախր ես կույր եմ, պարո՛ն վարժապետ, չալել ինչպե՞ս սովորեմ:

-Ես կսովորեցնեմ: Մեր Պոլիսում<sup>19</sup> շատ կույրեր կան, որոնք չալղըջի են:

Պարոն վարժապետը կարճ ժամանակամիջոցում Շարամին սովորեցրեց չալել: Նա դարձավ մեր գյուղի չալղըջին: Հարցնում էինք. «Լավ սովորե՞լ ես չալել»: «Շատ լավ, կվզվզեցնեմ ու փարեն կարնիմ»:

Անցավ բավականին ժամանակ. «Թուրք միսթարին ո՞վ կճանչնա»: «Ես կճանաչեմ, մեր հարևանը նրա գորակն է՝ Գյուլլի անուս: Իբրահամ աղան է միսթարը»: «Դե գնա՛, կանչի՛ր միսթարին, ասե՛, որ պարոն վարժապետը կանչում է քեզ. մի կարևոր գործ կա, եթե կարելի է, թող գա»:

Մեր գյուղի բնակչությունը երկու մասի էր բաժանված. կեսը հայ էր, կեսը՝ թուրք: Իսկական կրոնով քուրդ էին, թուրքացել էին: Տերսիմից քուրդ շեյխը գալիս էր իրենց կրոնը քարոզելու: Դրանց գլուխներն ու երեսը բաց էին մեզ պես, նամազ էլ չէին անում: Թուրքերը իրենց համար միսթար ունեին, հայերը՝ իրենց համար: Էս բարի Իբրահամ աղան մեզ փրկեց թուրքի սրից 1915 թ.: Ես անմիջապես վազեցի, կանչեցի Իբրահամ աղային, հայտնեցի պարոն վարժապետի հրավերը: Իբրահամ աղան լավ հայերեն գիտեր. «Էդ ի՞նչ կարևոր գործ է, Հովհաննես՛ս»: «Չիդեմ, աղա՛»: «Լավ, գնանք փեսուներք»: Ներս մտանք դասարան, բարև տվեց, աշակերտները ոտքի ելան՝ հարգանք-բարևի: «Լավ, նստե՛ք, փրկե՛ք»: Բոլորս զարմացած ուշադիր մտիկ էինք անում վարժա-

պետի բերանին՝ ինչ պիտի ասեր աղային:

-Պարո՛ն վարժապետ, ի՞նչ եք հրամայում, ես լսում եմ:

-Ես էսօր տեսա ձեր թափառող տղոցը փողոցում, մի միտք ծագեց իմ գլխում, ասի տեսնեմ հավանություն կտա՞ս, Իբրահա՛ն աղա: Դուք օղա ունի՞ք:

-Ունիմ:

-Ես ուզում եմ՝ լավություն անեմ, գրել-կարդալ սովորեցնեմ տղոցը, իհարկե, թուրքերեն: Դուք՝ որպես առաջնորդ, պետք է օգնեք էս գործին:

-Դուք շատ լավ բան եք մտածել, և շատ էլ բարի միտք է Ձեր մտածածը, բայց մենք՝ թուրքերս, ոչ մի միջոց չունենք, բոլորս էլ աղքատ, հացի կարոտ ենք, ուր մնաց կարդալ-գրելու մասին մտածենք: Չէ՞ որ շատ դժվարությունների հետ է կապված կարդալը՝ գրականություն, թուրք, մատիտ, գրիչ: Մոլլան էլ առանց փողի չի սովորեցնում:

-Ես էդ բոլորը գիտեմ, Իբրահա՛ն աղա, ահա այսպես, էդ բոլոր դժվարությունները ես ինձ վրա եմ վերցնում, միայն Դուք համաձայնեք: Ես հիմա Ձեզ ցույց կտամ մի փոքր օրինակ, և Դուք կհամոզվեք: Մեր տղաներն էլ համարյա ձերոնց պես էին: Մեր աշակերտներից ամենափոքր աշակերտը մոլլայից էլ շատ բան գիտի: Գառնուկը: Գառնու՛կ, արի՛ գրատախտակի մոտ: Մի օրինակ տվեք, թուրքերեն թող լուծե:

-Ես, պարո՛ն վարժապետ, բոլորովին անգրագետ եմ, ոչ մի բան չեմ հասկանում գրականությունից:

-Դրա համար էլ ես կուզեմ, որ Ձեր տղերքն էլ անգրագետ չմնան, ես կօգնեմ առանց փողի: Օրինակը կասեմ թուրքերեն. մեր Գառնուկը տեսե՛ք՝ ինչպես հաշիվ կենե: Հիմա տե՛ս մեր ամենափոքր աշակերտը՝ Գառնուկը, մի երկու ամիս առաջ ոչինչ չգիտեր: Նա ձեր գյուղի ամենաաղքատ տղան է, իսկ հիմա բոլորից լավ է սովորում: Իբրահա՛ն աղա, դու հիմա հավատա՛, որ ճիշտ եմ ասում: Ես մի հաշիվ կասեմ, դու էլ լսի՛: Ինչ որ կասեմ, գրի՛ր թուրքերեն, Գառնու՛կ: Հարյուր ամալյա (բանվոր) մի օրում հազար դուրոշ աշխատեցին, որքա՞ն է հասնում ամեն մի ամալյայի:

Գառնուկը անմիջապես բաժանեց. «*Օրական ամեն մի ամալի հասնում է փասը դուրուշ*»<sup>20</sup>:

-Հիմա հասկացա՞ր, որ մեր Գառնուկը ձեր մոլլայից էլ շատ բան գիտի:

-Եթե էսպես սովորեն, պարոն՝ վարժապետ, սրանք բոլորն էլ զարբիտ<sup>21</sup> (աֆիցեր) կդառնան:

-Ոչ թե զարբիտ, այլ փաշա էլ կդառնան: Երեկվա կարիքի մեջ թաղված աղքատ տղան էսօր փաշա կդառնա: Ես մտածել եմ մեր աղջիկների համար էլ դպրոց բանալ: Մայրը գրագետ լինի, երեխան ավելի վարժ կսովորի:

-Լավ, ես մեր ճամաթին<sup>22</sup> կասեմ Ձեր առաջարկը:

Բայց ոչ մի բան էլ չարեցին թուրքերը իրենց երեխաներին կարողալ սովորեցնելու համար:

Բարեկենդան էր<sup>23</sup>, ամենալավ, ուրախ օրերը հայերի համար, զաթա էին թխում, լավ-լավ յուղալի ճաշեր էին եփում, ուտում. շուտով Մեծ պասն էր. յոթ շաբաթ ոչ մի յուղալի բան չպիտի ուտեինք: Բարեկենդանը ուրախ անցկացնելու համար պարոն վարժապետը մի ներկայացում սովորեցրեց մեզ՝ «Չախ-չախ թագավորը»: Ահա այսպես էր կարճառոտ բովանդակությունը:

Մի մարդ ուզում էր թագավորի աղջկան: Ինքն աղքատ էր: Մտածում է, մտածում, վերջը իր ընկեր աղվեսի հետ ելքը գտնում է: Իր անունն էլ Չախ-չախ էր: «*Լսի՛ր, աղվես՛ս ախպեր, զնա՛ թագավորի կուրը ուզի, ասա՛, որ մեր թագավորը ոսկի չափելու կուրը ուզում է, փանեն չափենք, նորից բերեն*»: Էս թագավորը զարմանում է. «*Ո՞րքան ոսկի ունի չեր թագավորը*»: «*Չգիտեմ չափը*»: «*Լա՛վ, փա՛ր*»: Աղվեսը կոտր բերում է: Ի՞նչ է մտածում Չախ-չախ թագավորը: Նա մի երկու ոսկի պարտք է անում, թողնում կոտի մեջ, իսկ ընկերոջն ասում. «*Կուրը փա՛ր, երբ որ հասնես, դիտարավորյալ կուրը զցի ցած, այնպես, որ ոսկիները ցած ընկնեն ու թագավորը հավատա, որ իրոք ոսկի ենք չափել, իսկ դու ասա՛ վա՛՛յ, էս երկու ոսկին էլ մնացել է*»: Եվ էդպես էլ անում են Չախ-չախ թագավորն ու աղվեսը: Անցնում է բավականին ժամանակ. «*Դե՛, հիմա, աղվես՛ս եղբայր, զնա՛ թագավորի աղջկան ու*

զի ինչ համար: Գնա՛, թագավորի իսնամաքարին նսրի՛ր: Քեզ կկանչեն թագավորի քով: Հարց կդա թագավորը, թե ինչ ես ուզում: Կասես.«Ես Չախ-չախ թագավորի աղվեսն եմ, եկել եմ իսնամախոս: Թագավորն սպրած կենա, եկել եմ քո աղջկան մեր Չախ-չախ թագավորի համար ուզելու»: Թագավորն ուրախանում է, որ էսպիսի հարուստ թագավոր փեսա պիտի ունենա: Համաձայնում է, մի շաբաթ վերջը հարսանիք նշանակում: Լեղապատառ գալիս է աղվեսը, աչքալուսեք բերում: Բռռում են՝ եկա՞՛վ, եկա՞՛վ աղվեսը: Աղվեսը մտնում է ներս, չի կարող խոսել: «Չախ-չախ թագավորի՛ օգնական, խոսի՛ր, թե չէ հիմա գլուխդ կկտրեն»: «Թագավորն սպրած կենա, էս բոպեհն ես խոսեցնեմ», -ասում է մեկը և աղվեսի պոչին մի չուլ է կապում, նազվով վառում: Աղվեսը սկսում է պտտվել, պոչը վառվում է, ժողովուրդը ծիծաղում է:

Ա՛խ, ի՛նչ անուշ օրեր էին. գյուղի մեծից փոքրը էստեղ էին: Դա մեր գյուղի հարուստ հաջի Ամիենց օղան էր: Առաջին անգամն էր, որ էսպիսի ուրախ ներկայացում էր լինում մեր գյուղում: Չախ-չախ թագավորի դերը տանում էր Մայնոսի տղան՝ Կարապետը, աղվեսի դերը տանում էր Մանուկը: Մանուկի պատկերը մինչև հիմա աչքերիս առաջն է՝ քիչըմ շեկ, չաղլիկ ու սիրուն: Աղվեսի պոչը մարում են.«Դե հիմա խոսի՛ր»: «Թագավորն սպրած կենա, աչքդ լույս, շաբաթվա վերջ հարսանիքդ է»: «Էհ, ինչ պետք է անենք», -մորուքը շփելով՝ մտածում է Չախ-չախ թագավորը: Նստում են խորհրդի: Չախ-չախ թագավորը մեկեն վեր է թռչում և ասում.«Ես գրա հնարը»: «Բնչպե՞ս, ինչպե՞ս»:

-Ահա այսպես, աղվեսն ախպեր, լսի՛ր, ինչ որ կասեմ: Մենք տասը հոգով գնում ենք հարս բերելու, մեզնից մի օր առաջ գնում ես թագավորին հայտնում.«Չեր սահմանի մուր ավազակները հարչակվել են մեզ վրա, մեզ թալանել են, չիերն ու մեր շորերը փարեղ, գյուղական հին շորեր փվել: Թագավորն սպրած կենա, մեր թագավորը սպասում է Չեր հրամանին»: Թագավորը պետք է ասի.«Լավ, ես հիմա: Քանի հոգի՞ եք: Տասը չի և փասը չեռք շոր փա՛ր, թող հազնեն, գան»: Հեյոո, երբ որ կվերադառնաս, աղվեսն ախպեր, որքան շինական կհանդիպի, կասես, որ հարցնեն՝

*էս ու՞մ հողն է, թող ասեն՝ Չախ-չախ թագավորի հողն է: Վահեցրու՛ շինականներին՝ եթե էդպէս չասեն, գլուխները կկտրեն: Մալ արածեցնողներին էլ էդպէս կհրամայես»:*

Էդպէս գնում են հարս բերելու: Իսկ Մանուկի անունը էդպէս էլ մնաց աղվես, թէն բոլորովին մնան չէր աղվեսի:

Անցավ Բարեկենդանը, մտանք Մեծ պասի մեջ:

Մեծ պասը մեծ պատիժ էր երեխաներիս համար, մաս մեծերի համար. Էնպէս էլ ուտելու բան չկար, բայց եղածն էլ արգելվում էր ուտել՝ մածունը, կաթը, ձուն, յուղը, մսեղենը: Մեզ՝ երեխաներիս, վախեցնում էին, որ պասին ուտելը մեծ մեղք է, Աստված ուտողին կպատժե, կկուրացնե, մի շարք պատիժներ կտա: Մեզ կարելի էր ուտել միայն բուսեղեն յուղ<sup>24</sup>, իսկ որտեղի՞ց բուսեղեն յուղը: Չիթատու բուսականություն մեր գյուղում չէր աճում, բնակչությունն էլ դրանից չէր օգտվում: Չէին էլ ցանկանում, չիղեն՝ չէի՞ն ցանկանում, թե՞ թամբալ էին: Իմ հայրիկը ամեն տարի բուստան էր ցանում, բացի կարտողից<sup>25</sup>՝ ամեն ինչ. ասում էին՝ կարտոլ ուտողը քոստում է: Մեր տունը պասի ժամանակ բավականին առատ էր. լոբի ունեինք, թթու: Իհարկե, բուստան ցանողները բուսեղեն ամեն ինչ ունենում էին, իսկ արի տես, թե ուրիշները ունեի՞ն, իհարկե, ո՛չ: Իմ հորեղբայրենք, որոնք հիմա ապրում են Երևանում՝ Չեյթուն թաղամասում, չորս եղբայր էին մի տան մեջ, հացից բացի ոչինչ չունեին ուտելու, և մեծ եղբայրը մեռավ թոքախտից 1910 թ. ձմռանը:

Հիշում եմ՝ Մեծ պասին հայտնվում էին շորագլայցի ձեթ ծախողներ, որոնք ձեթը բերում էին տիկերով, ման էին գալիս գյուղերում, ձեթ էին ծախում: Մայրիկս կակալից<sup>26</sup> ձեթ էր հանում. ջարդած կակալը դնում էր տաք թունդիրի կողքին, լավ տաքանալուց հետո ձեռքով սեղմում էր, ու ստացվում էր կակալի յուղ: Երդիկից կախում էին մի մեծ սոխ, վրեն խփում յոթը փետուր, ամեն շաբաթվա վերջում հանում էին մի փետուր, որ իմանան՝ ինչքան մնաց Չատիկին<sup>27</sup>:

\*  
\*   \*  
\*

Մենք մոռացել էինք մեր վարժապետներին: Հինը՝ Մնագ ամին, ժամկոչ էր, առտուն-իրգուն զանգը խփում էր, ժողովուրդը գալիս էր աղոթք անելու, իսկ տեր Առաքելը չէր երևում. դու մի ասի, ծանր հիվանդացել էր...

Մեկեն հայտնվավ տեր Առաքելը: Նորից սարսափը պատեց մեզ, նորից փալաքիան, և իրոք, ճիշտ էր մեր գուշակությունը: Տեր հայրը հարցրեց Մնագ ամուն, թե ինչ է կատարվել իր բացակայության ժամանակ: Հին վարժապետը սկսեց բողոքել. «*Ծեծը բոլորովին վերացել է, տղեքը երես եկ առել, մեծուսիրոքը չեն նանաչում, օրինակ՝ ես մեր Մանուկին մի անգամ ծեծեցի, ետ դարձավ, թե՛ մեր վարժապետը քեզնից լավ է, ոչ մի անգամ մեզ չի ծեծում*»: «*Ես շարտերից եմ լսել, որ վարժապետը երեխանց փշացնում է, երեխեքը մայրերուն չեն լսում, տունը իրենց կարգին չեն պահում: Երբ որ մայրերը ծեծում են իրենց երեխաներին, պատասխանում են. «Ինչու՞ ես ծեծում, վարժապետը քեզանից իսկուք է, մեզի չի ծեծում*»: Կտեսնիս, վերջում բոլոր ծնողները կանիծեն նոր վարժապետին», -ասում էր տեր Առաքելը: «*Գիտեմ, գիտեմ, նա բոլորովին էլ իսկական ուսուցիչ չէ: Ես կարծում եմ, որ դա լուսավորչական ալ չէ, կա՛մ ֆրանկ պիտի էղնի, կա՛մ բողոքական*<sup>28</sup>: *Ես վաղը ժողով կենեմ, կիմանամ ծնողներու կարծիքը: Ես ինքս կերթամ քաղաք՝ առաջնորդարան, կհայտնեմ ես բոլորը*»:

Ժողովը լինում է Մանուկենց օդայում: Մեր գյուղի Մխիթարենց օդեն Դալիքյահա էին ասում: Չորս եղբայր էին տերերը. մեծ եղբայրը Մխիթարն էր, երկրորդը՝ մեր ծանոթ Մնագ ամին, երրորդը՝ գյուղի իսկական ժանդարմը, չորրորդը՝ Սարգիսը, որ Ամերիկայից նոր էր եկել: Մանուկը թաքնվում է դռան քովը՝ մարդկանց ետևում: Էսպես է սկսում ժողովը տեր Առաքելը.

-Հարգելի՛ ժողովուրդ, մեր ժողովի նպատակն էս է՝ մեր ապագա սերնդի դաստիարակությունը: Իմ երկար բացակայության հետևանքով ծնողների և իմ բողոքը լավ բան չի գուշակում: Ես

խնդրում եմ՝ մեր նոր վարժապետի դաստիարակության մասին ով ինչ կարծիքի է, թող խոսի:

-Ես խոսք ունիմ,-ասում է մեր առաջվա վարժապետ Մնագ ամին (առակըն կա. ո՞վ է վկա քոխմիին՝ գգիրը): -Օրինակ՝ մեր Մանուկը շատ խելացի տղա է, իսկ հիմա տանը լեգու է դարձնում: Ես ծեծեցի, ու տեսե՞ք, թե ինչ պատասխանեց.«Մեր վարժապետը քեզնից խելացի է հազար անգամ, մեզի մայրով չի դիպչում»: Իմ ժամանակ ավելի լավ էին սովորում, լավ լսող էին և վախենում էին, և ես շատ ծնողներից լսել եմ, որ լավ չի սովորեցնում դասերը, շատերից եմ լսել, որ նոր վարժապետը երեխանց փչացնում է:

Խոսում է նոր վարժապետը.

-Ես ձեզ չեմ մեղադրում, էս բոլորը գալիս է հնությունից: Դուք կարծում եք, թե առանց ծեծի, առանց փալախանի ոչինչ դուրս չի գա: Այո՛, շատ ճիշտ է, դուք երեխանց ծուլություն և անփութություն էիք սովորեցնում, մի՞ թե դուք՝ ծնողներդ, չեք հասկանում, որ երեխան շատ բարդ էակ է: Դու երեխանց անդունդ էիր գլորում, իսկ ես քնած երեխանց կամաց գարթնեցնում եմ: Ժամանակին ես էլ էդ փալախանի երեսից ուզում էի ինքս ծովն ընկնեի և ագատվեի:

Խոսում է Մանուկի՝ Ամերիկայից եկած ամենափոքր հորեղբայրը.

-Հարգելի՛ ժողովուրդ, ես կուզեմ ավելին ասեմ, քան մեր վարժապետը: Տե՛ր հայր, մենք դեմ չենք կրոնին, դրա կողքին կա մի ավելի կարևոր կրթություն: Ես էսքանը կասեմ, որ ես էստեղ գտնվողներից բոլորից փոքրն եմ, բայց չնեղանաք, ես ավելի շատ բան գիտեմ, քան դուք: Օրինակ՝ մեր գյուղը ամենահետնյալն է կրթության կողմից, մեր մեծերից ո՞րն է գրագետ. համարյա ոչ մի մարդ, դուք ուզում եք, որ ձեր երեխե՞քն էլ նույնը շարունակեն: Կրթությունը, որ մեր նոր վարժապետը սովորեցնում է, իսկական մանկական կրթություն է: Ես անձամբ մի քանի անգամ ներկա եմ եղել դասերին: Համարյա եվրոպական կրթություն է տալիս նոր վարժապետը: Ողջ Եվրոպայում էլ երեխեքը նոր տեսակով են սո-

վորում: Եվ ի՞նչ վատ բան եք տեսնում նոր կրթության մեջ: Օրինակ՝ իմ մեծ եղբայրն է վարժապետը, ի՞նչ էր սովորեցնում. ոչ մի բան, ինքը չիդեր, ի՞նչ պիտի սովորեցներ՝ Այբ, Բեն, Գիմ... և մեկ էլ ժամի երգեցողություն: Էդ պայմաններով մեր գյուղի երեխեքը ոչ մի բան էլ չեն կարող սորվել: Ես մի ուրիշ օրինակ բերեմ. առաջին օրը քաղաքից գալիս էի, հանդիպա մի տեսարանի. տասնապետը մի զինվորի մարզանք էր սովորեցնում, զինվորը քուրդ էր, ձախ կողմը կախած էր սոխը: Մենք հետաքրքրվանք, կայնանք, մտիկ արեցինք: Տասնապետը հրամայում էր՝ սաղ աբաղ, սողան աբաղ, այսինքն՝ ա՛ջ նայիր, ձախ նայիր: Քուրդը չիդեր ո՛չ աջը, ո՛չ ձախը: Տասնապետը սկսում էր ծեծել: Հիմա ի՞նչ գուզեք, որ ձեր երեխա՞ յքն ալ բացի ծեծից ոչ մի բան չիմանան, ինչպես քուրդը:

Նորից խոսում է նոր վարժապետը.

-Մի՞ թե դուք՝ ծնողներդ, չեք հասկանում լավն ու վատը երեխայի համար: Ես օրինակ մը կասեմ, առաջին օրվանից մեկառմեկ ստուգեցի, թե ինչ գիտելիք ունեին. ոչ մի բան: Մեր երեխեքը քնած էին, ես վա՞տ արեցի, կամաց հրեցի և զարթնեցրի: Հիմա ո՞րն է լավը, էդ զարթնող երեխային անդու՞նդ գլորեի, թե՞ սիրեի: Սարսափելի կարիքի մեջ ապրող դժբախտ երեխանցը ուզում եք ծեծի միջոցով ուսում սովորեցնել, որք՞ան վայրենի է դա, ինչպես առաջ է եղել: Ես չեմ կարող պատժել երեխանց. ինչու՞ չգնալ մանկական խելքի, մանկական ուղու հետ: Իմ փորձից գիտեմ. ժամանակին ինձ էլ ծեծել են փալախանով, ես նույնիսկ ուզում էի ծովը նետվել, ազատվել էդ դաժան փալախանի տանջանքներից, բռնությունից: Եվ ես, իմ փորձից ելնելով, գիտեմ՝ դա աշակերտի համար կոպիտ բռնություն է, որն ավելի է ծուլացնում, ուրիշ ոչինչ:

-Լա՛վ վ,-ասում է Սարգիսը,-կանչե՛ք Մանուկին, թող ասի նոր վարժապետի և հին վարժապետի (որն իր հայրն է) մասին: Տեսե՛ք՝ ինչ տարբերություն կա սովորելու մեջ:

Էս ազատախոս Մանուկը, ողջ խոսակցությանը ներկա լինելով և գիտենալով, որ իր հորեղբայրը կպաշտպանե իրեն, առանց

վախի սկսում է խոսել. «Մենք առաջ սովորում էինք ալքոհոլիստիկական մտայնությամբ՝ Այբ, Բեն, Գիմ, Դա... Ծե, Ռա... Ժամի երգերից, կրոնից սովորում էինք, խոսարովանում են, րվիկնք, առանք, բայց մեծ պատերազմ էին եկեղեցու դասերը, չէինք ըմբռնում, կրոնի ոչ մի ընդունակություն էլ չունեինք»:

Տեր հայրը մեկեն տեղից վեր է թռչում. «Մեղա՛, մեղա՛ քեզ, երկինք, գերին սրեղծո՛ղ Աստված, էս ի՞նչ ենք լսում, բոլորովին մոլորվել են երեխեքը: Դու չե՞ս հավատում եկեղեցու ուսումին»: «Ո՛չ, բոլորովին», -ասում է Մանուկն ու փախչում է դուրս:

Թե ինչպես էր խոսել օդայում, երկուշաբթի խնդալով հայտնեց մեզ ինքը՝ Մանուկը: Այդ օրը վերջին դասը եղավ Երկրի մասին. վարժապետը պատուհանները փակել տվեց. էլի զարմանում էինք, թե ինչ նորություն պիտի ասի. «Մե խնչորում քե՛ր, Մանու՛կ, և տան լամպը»: Խնձորը պոչից կապեց մի չվանով, լամպը դրեց աթոռի վրա.

-Դե՛, արե՛ք մոտիկ բոլորդ, Մանուկ, լամպին մոտիկ բռնի՛ր չվանը, խնձորը՝ ուղիղ լամպի դիմաց: Հիմա լավ նայեցեք, խնձորը Երկիրն է, լամպը՝ Արևը: Տեսե՛ք՝ լամպը լուսավորում է խնձորի կեսը, չե՞, իսկ մյուս կեսը մութ է: Ուրեմն Երկրի կեսը լույս է, կեսը՝ գիշեր: Էս բուպեիս մենք գտնվում ենք Երկրի լույս կողմը: Հիմա կամաց պտտեցնում են խնձորը, տեսե՛ք, մեր կողմը մթնում է, Արևը մեր է մտնում: Արևմուտքը նշան անեն, որ լավ հասկանաք. խնձորը կամաց պտտեցնում են, տեսե՛ք՝ սկսում է մթնելը, կեսգիշեր է, իսկ մյուս մասը՝ Երկրի կեսը, լույս է, ապա մեր մասը կամաց-կամաց արշալույս է, ահա Արևը ծագեց, առավոտ է: Մի քիչ վերջը կեսօր է, հետո՝ իրիկվա թարաֆ, ահա Արևը մայր մտավ նորից:

Ներս մտավ Սարգիսը՝ Մանուկի հորեղբայրը. «Վա՛յ, հոգու՛դ մատրադ, վարժապե՛տ, իսկական լուսավորիչ ես, որ կաս, դու մեր տղանցը մութ տեղից լույս աշխարհ պիտի հանես: Քանի որ պատուհանները փակ են, կուզեն տղանցը մի տեսարան ցույց տալ, թող ուրախանան»: Գնաց, եկավ ձեռքը մի փոքր սնդուկ, պատին սև շոր կպցրեց: «Հիմա մտիկ արեք պատին, -ու պատին լույս»

*զցեց,-ահա Ամերիկան լույսի մեջ երևում է, ցույց կուրամ մե ամերիկագյուղացու հարսանիք»։ Սկսեց նկարը ցույց տալը. «Ահա բովանդակությունը, թե ինչպես մի րդա ու աղջիկ իրար սիրում են, վերջը ամուսնանում են։ Առաջ ցույց են րալիս նշանդրուքը, հետո՝ հարսանիքը»։*

Էդ օրը վերջացան մեր դասերը։ Մի բան անհասկանալի և հակասական եղավ մեզ համար, քանի որ մենք Մնագ վարժապետից սովորել էինք, որ երկիրը երեք մեծ փղերի վրա է, ու երբ որ փղերը շարժվում են, երկիրն էլ շարժվում է։ Մյուս օրը Մանուկը չհամբերեց, հարցրեց երկրագնդի մասին։ «*Լավ,-ասաց վարժապետը,-ես մե փոքրում ծանոթացրի Երկրի մասին, հետագայում լրիվ կհասկնաք*»։

\*  
\*   \*  
\*

Տեր հայր Առաքելը գնում է քաղաք, որ բողոքի նոր վարժապետից և քաղաքից իր հետ բերում է մի քննիչի։ Երբ մենք երգեցողության դասն էինք անում ու խմբով երգում էինք «Ալազյազը», ներս մտան տեր հայրն ու մի նոր մարդ։ Մենք դադարանք երգելուց, չիղեմ՝ ինչ խոսեցին քննիչի հետ։ «*Տղե՛ք, նոր վարժապետից զո՞հ եք*»։ Բոլորս մեկեն՝ այո՛։ «*Կրոնից ի՞նչ դաս եք անցնում*»։ «*Տեր հայր Առաքելը հիվանդ էր,-ասինք,-վաղվանից պիտի կրոն անցնիք, դա մեր սուրբ պարտականությունն է*»։

Մանուկը թե՛ «*Միայն փալախան չիդա*»։ «*Չէ՛, չէ՛, չիդա...*»։

Տեր հայր Առաքելն էդ տարի այդպես էլ մեզ դաս չտվեց, չգիտեմ խռովե՞լ էր, թե՞ հիվանդ էր։

1913թ. հայ ժողովուրդը սարսափի մեջ էր. չերթեզները ամռանը հարձակվում էին հայկական գյուղերի վրա, ոսկի էին պահանջում կամ մալերը քշում տանում էին ու դիմացը փող պահանջում։ Չերթեզներն իրենց լեզվով, հագուստով (տարազ), կեցվածքով կարծես ուրիշ ազգ էին ներկայացնում, ուրիշ ժողովուրդ։ Ազատ էին կառավարության հսկողությունից և իրենց ուզածն անում էին։ Ահա մի քանի օրինակ, թե ինչպես են ես մանուկ հասակում

տեսել էր ավագակներու արարքները: Մեր գյուղի հարուստ մխթարենց մալը քշել տարել էին և դիմացը փող էին պահանջում, էլ չգիտեմ, թե ինչպես ետ բերին մալը: Մի օր էլ հաջի Ամիենց դուռն իջել էին չորս չարքյազ<sup>29</sup>, նորից փող էին պահանջում: Ժողովուրդը հավաքվել էր սեյրի, ես էլ եղտեղ էի: Հեռու կանգնած՝ մտիկ էինք անում: Եվ ահա անսպասելի հերոսություն ցույց տվեց Իբրահամ աղայի աղջիկը՝ Ֆաթիման: Իմ ազատարարը բռռաց. «*Տղե՛ք, արե՛ք էստեղ, շուր քա՛ր հավաքեք*»: Մենք զարմացանք, թե ինչ կուզե էս աղջիկը: Ապա հրամայեց. «*Տղե՛ք, խփեցե՛ք, չվախեևա՛ք*»: Չիդեմ՝ որքան տղա կլինեիկնք, սկսեցինք քարերով խփել չարքյազներին ու նրանց ձիերին: Էս հերոս չարքյազները սկսեցին իրենց պաշտպանելը, տեսան, որ դրուսյունը վատ է, հեծան ձիերն ու փախան: Իսկ աշնան թարաֆ մի ուրիշ դահիճ դուրս եկավ: Ո՞վ չէր ճանաչում նրան՝ Մրթոյին: Մի դեպքըմ եղավ 1913թ., ողջ ժողովուրդը խոսում էր մարդասպանի մասին. մեր շրջանի հայերի արյունախոտը և ավագակը Պալբեկի մոլլայի տղան էր: Էս Մրթոն մի օր գալիս է քաղաքից և Սև ջրի մոտ հանդիպում խաղող ծախող հայի մը ու ասում.

-Մի խոխա խաղո՞ղ տուր, հա՛յ:

-Էս բոպեխս քաշեմ տամ: Դե, աղա՛, փողս տու՛ր, ես երթամ:

-Ի՞նչ փող, գյավու՛ր:

-Խաղողի փողը:

-Ես հիմա քեզ փող ցույց կտամ, գյավու՛ր, դաշույնը հանում և հարձակվում է հայի վրա, սպանում ու թողնում գնում է:

-Էս լուրը տարածվում է ամբողջ շրջանում, իսկ կառավարությունը ոչ մի միջոց ձեռք չի առնում: Նրա հայրը հենց որ իմանում է, որ որդին մարդ է սպանել, տնից դուրս է անում՝ ասելով. «*Քեզ անան ավագակ ինչ պեղք չէ*»: Վերջը Մրթոն շատ թե քիչ ման է գալիս, մի աղջիկ է փախցնում, Եփրատի բերանը մի փոքր հողիկ է սարքում և մեջը ապրում: Մեր քաղաքի հարուստ միջիգանները հող ունեին մեր գյուղում: Գևորգ աղան գալիս է մեր գյուղ կալի ժամանակ, որ իրանց հասանելի ցորենը տանի քաղաք: Էղտեղ գալիս է Մրթոն և ծանոթանում Գևորգ աղայի հետ: Գևորգ աղա-

յին հասկացնում են, որ էս Մրթոն է՝ Սև ջրի<sup>30</sup> մոտ հային սպանողը: Գևորգ աղան վախենում է: Շատ են խոսում, թե քիչ, վերջը էս Մրթոն թե. «*Գևորգ աղա, մի քան եմ խնդրում քեզանից, չմերժես*»: «*Ի՞նչ է, Մրթո՛*»: «*Ինչ մի քիչ փողով օգնի՛ր, փուն չունենեմ, ես շար շուր քո փողը կվերադարձնեմ: Գալոդ փարի կուզեմ՝ Թերջանի երեսը առնեմ, պերական փուրքը հավաքեմ, այնպես որ մի՛ վախիր, քո փողը շուր կփամ*»:

Գևորգ աղան վախից ասում է. «*Շա՛ր լավ, արի՛ քաղաք, քոչան սաղցնեմ, փամ առանց փոկոսի*»: Մյուս օրը գնում է քաղաք, Գևորգ աղայից առնում հարյուր ոսկի, մարդ է վարձում, տուն է շինում ուզածիդ պես և տասը հեկտար ալ խոպան հող, ջրի առու է շինում դեպի իր հողերը: Մրթոն դառնում է Մրթգար աղա: Գարնան գլուխ գալիս էր մեր գյուղը, բոլոր գյուղացունց հավաքում էր, Եփրատի առաջը փակում էին, ջուր էր հանում, որ արտերը ջրեր. առաջին հերթին՝ իր հողերը: Էդ դեպքից հետո Մրթոյին հայերը հարգում էին և վախենում. ավելի շուտ նրանից վախենում էին, քան հարգում, քանի որ նրա համար օրենք էր մարդ սպանելը, ինչպես միջիգան Գևորգ աղան վախեցավ. եթե փողը չտար, մի օր էլ նրան կսպաներ:

Ես լավ հիշում եմ, որ էս ավագակը գալիս էր մեր տուն ու հայրիկիս հետ խոսում իր անելիքների մասին: Մեր տունը միշտ օղի կար, մամս միշտ օղի էր քաշում: Մեր գյուղի ժանդարմա Մահմադը և էս ավագակը գալիս էին մեր տուն. «*Պողո՛ւ քյահա, դե քե՛ր, բողազներս մի քիչ թրջենք*»: Հայրիկս ասում էր. «*Համեն՛ցեք, նսրե՛ցեք, չե՛ր ուզածն ի՞նչ մեծ քանն է, ջա՛նրս*»: Մամաս դաուրման անմիջապես քանդում, տաքացնում էր, օղին էլ հետը բերում: «*Շար-շար ոզա ենք, Բուրի՛կ խանում, էս օրվանից մենք եղբայրներ ենք, քանի ես կամ, քո ընդհանիքից մազմ չի պակսի, ես քո ընդհանիքին առնում եմ իմ հովանավորության փակ (դա թուրքական օրենք էր. եթե մի թուրք մի հայի առնում էր իր հովանավորության փակ ոչ ոք իրավունք չունե՛ր դիպչելու նրան): Ես երդվում եմ փեհավա՛րի և ալլահի սնունով, որ էս մեր եղբայ-*

*րությունը հավիրտյան լինի: Մահմանդ, դու էլ վկա՛ եղիր էս մեր ուխտին: Սաղ լինես, Պողո՛ս, խմենք մեր եղբայրության կենացը: Պողո՛ս, ալլահը կսիրես, հլա պատմի՛ր շեյխի պատմությունը»:*  
*«Ձա՛նրմ, Մրթգա՛ր աղա, դա վրանգավոր բան է, հարկավոր չէ պատմել»,*-ասում էր հայրս: *«Մենք երդվում ենք, ոչ ոքի չենք ասի, պատմի՛ր, Պողո՛ս աղա»:*

### **Շեյխի պատմությունը և իմ պապի ճակատագիրը**

Իմ պապը շատ հարուստ է եղել և ապրել է մեր գյուղում, ունեցել է յոթ որդի ու մեկ դուստր (ես պապիս գերագանցեցի և ունեցա յոթ որդի, երկու դուստր): Յավոք, ես մանրամասն չեմ կարող գրել էդ կոտորածի մասին: Պապս զոհ է դառնում սուլթան Համիդի կոտորածին<sup>31</sup>, որից 1895թ.<sup>32</sup> փրկվում են տառս ու չորս երեխաները, ազատվում են երեք տղաները՝ հայրս՝ Պողոսը, Արշակը, փոքր հորեղբայրս՝ Պետրոսը, և հորաքույրս: Հրաման է տրվում երեք օր ու գիշեր թալանել և կոտորել հայերին: Պապիս ռիսերիմ թշնամին է լինում թուրք շեյխը, որն առաջին օրը հարձակվում է մեր տան վրա և իր վրեժը հանում պապիցս: Ինչպե՞ս էին նրանք թշնամացել:

Պապս հանաքչի էր: Տաճկական օրենքով ձմռանը ժամանակ անցկացնելու համար մեծ մարդիկ հավաքվում էին օդեն և սկսում վարից ու վերից խոսելը: Մի օր էլ շեյխը ներկա է լինում օդայում: Ասում է, թե ես էս գիտեմ, էն գիտեմ երկնքի ու երկրի մասին, թե ծովի տակ ինչ կա, ինչ չկա: Հավաքված են լինում մեր օդայում: Գալիս է ճաշի ժամը, պապս մտածում է. *«Մի օյին պիրի խաղամ էս պարծենկոտ շեյխի գլխին, որ բոլորը ուրախանան»:* Մամիս ասում է. *«Գիրես՝ ինչ կանես, բոլորի միսը փլավի վրա կդնես, իսկ շեյխինը ամանի տա՛կը դիր, որ չերևա»*, -և գնում նստում է իր տեղը՝ շեյխի քովը: Սկսում են ճաշը բաժանել: Շեյխը տեսնում է, որ բոլորի փլավի վրա միս կա դրած, իսկ իրենի վրա

չկա, մոռոթները կախում է: Պապս ասում է.

-Համեցե՞ք, շե՛ յի էֆենդի, մի քիչ առաջ որքա՞ն ուրախ էիր, ջա՛ նըմ, ի՞նչ պատահեց քեզ:

-Ի՞նչ պիտի լինի, չե՞ս տեսնում՝ բոլորի փլավի վրա միս կա, իսկ իմինի վրա չկա:

-Հա՛, դե ասա՛, տնաշե՛ն, երևի խանումը մոռացել է,-հետո, իբրև թե ոչինչ չգիտի, վազում է դուրս, նորից գալիս է և սկսում շեյխի հոգու հետ խաղալը,-մի քիչ առաջ ասում էիր երկինք-գետինք ման ես եկել, ծովերի տակ ու վրան գիտես, իսկ քու քթի տակը չգիտես, թե ինչ կա, ահա մսի կտորը փլավի տակն է,- ներկա եղողները ծիծաղում են շեյխի վրա, և այդ ժամանակից էլ շեյխը թշնամանում է պապիս հետ և ոխը հանում կոտորածի ժամանակ:

\*  
\*   \*  
\*

Երեք եղբայրները ազատվում են՝ չունենալով ոչ մի բան. միայն դատարկ տուն: Մեծ եղբայրը հայրս էր, պարտք է անում հարուստ թուրքերից, որ ապրեն: Չգիտեմ՝ հայրիկիս ամուսնանալուց ինչքան է անցնում, թուրքերը գողանում են առաջին կնոջը: Պետրոս հորեղբայրս ամուսնացած է լինում, իսկ Արշակը թողնում է գյուղը և հեռանում, չգիտեմ, թե ուր: Պետրոս հորեղբայրս շատ էր սիրում իր հարսին: Աղքատի շորեր է հագնում և սկսում է ման գալ թուրքերի գյուղերում, շատ է ման գալիս և չի գտնում, հուսահատ հետ է գալիս: Հորս նորից ամուսնացնում են իմ մայրիկի հետ<sup>33</sup>:

Պետրոս ամիս ասում է հորս.«*Թքե՛լ եմ էսպիսի երկրի վրա, ոչ մի բան քուկդ չի, ապրում եմք շան պես, ինչի համար՝ չգիտեմ: Ես հեռանում եմ, ո՛չ կյանքներս է մերը, ո՛չ մեր ընտանիքը, ո՛չ էլ մեր ունեցվածքը, էլ ինչի՞ համար եմք մնացել էս գազանի երկրում: Ես վաղվանից հեռանում եմ*»: Եվ եղպես էլ հեռանում է ու նամակ չի գրում տասներեք տարի: 1913թ. ամռանը անսպասելի բան տեղի ունեցավ. մի օր հորեղբորս կինը եկավ մեր

տուն.«*Եղբա՛յր, ինչ ուզող կա, թու՛յլ փորձ՝ ամուսնանամ, ես մեղավոր չեմ, ո՛չ նամակ ունեմ և ո՛չ էլ լուր*»։ Ես էսօրվա պես հիշում եմ. հայրս գույնը գցեց, սկսեց ինքն իր հետ խոսել, տան մեջ գնում-գալիս էր, վերջը եկավ նստեց. բոլորս սպասում էինք հայրիկիս, թե ինչ պիտի ասի։ Վերջապես հայրս խոսեց.«*Ամուսնացի՛ր, հա՛րս ջան, իրավունք ունես։ Հալալ լինի կերածդ կաթը, որ այսքան ժամանակ սպասել ես, ամուսնացի՛ր, ես իրավունք եմ փալիս*»։ Եվ ի՞նչ կասեք, հորեղբորս կնոջ ամուսնանալու երրորդ օրը հորեղբայր Պետրոսը եկավ։

1913 թ. ամռանն էր, ես և հայրս անասուններին արածեցնում էինք վարի հանրում։ Քաղաքի կողմից մեր գյուղի չարչի Մահմադը վազելով եկավ դեպի մեզի ու գոռաց.«*Պողո՛ւ, մյուզդասու, Պողո՛ւ քյահա, մեծ-մեծ մյուզդաս պիտի փասս*»։ «*Ինչի՞ համար մյուզդաս փամ*»։ «*Տեսնու՞մ ես էն երեք հոգուն, Պողո՛ւ*»,-ձեռքը դեպի քաղաքի կողմը դարձնելով՝ ասաց Մահմադը։ «*Ի՞նչ, կարող է Ռգա փաշայի մարդկանցից է*»։ «*Չէ՛, Պողո՛ւ, չհանեցիր։ Քո եղբայր Պեպրոսն է։ Պողո՛ւ, մյուզդասս փո՛ւր*»։

Հայրս հանկարծակիի եկավ, վազեց, փաթաթվեցին իրար, կողքի մարդիկ աչքալույս տվին։ Հայրս կանչեց ինձ.«*Արի՛, արի՛, Հովհաննե՛ս*»։

Ես էլ վազելով եկա նրանց մոտ։ Հորեղբայրս գրկեց, համբուրեց ինձ, գրպաններս կոնֆետ լցրեց։ «*Դե՛, զնանք փուն*», -ասաց հայրիկս հորեղբորս։

Մեր տունը լիքը ժողովուրդ էր, ոտք դնելու տեղ չկար։ Եկողը՝ հայ թե թուրք, աչքալուսանք էր տալիս հայրիկիս։ Վերջապես կեսգիշերին մոտ ժողովուրդը ցրվավ. Մնացինք մերոնցով, մայրիկս ճաշ բերեց, սկսեցինք ճաշել։

«*Եղբա՛յր, մի բան պիտի հարցնեմ, հարսը ու՞ր է*», -հարցրեց հորեղբայրս։ «*Հարսը երեք օր առաջ ինչանից թույլփություն վերցրեց ամուսնանալու։ Ես էլ, Պեպրո՛ւ ջան, իրավունք փվի։ Ամուսնացավ*»։ «*Գիտե՞ս, եղբա՛յր, նա մեղավոր չի, ես եմ մեղավոր։ Գնացե՛ք բերե՛ք*»։

Հայրիկս դարձավ հորեղբորս.«*Ա՛յ փղաս, էս ի՞նչ օյի՛ն բերիիր*

մեր գլխին, գնացիր ու գնացիր, ոչ մի խաբար, էդ ի՞նչ համբերության րեք ես»: «Ի՞նչ անեի, եղբայր, ես զզվում էի, երբ ուրիշները փայխ էին այս աշխարհի անունը, դրա համար էլ չէի գրում: Էս ի՞նչ աշխարհ է, բռնություն, ուրիշ ոչինչ: Արի գնանք ուրիշ աշխարհ, րե՛ս, թե ինչ կա. մարդիկ հավասար ապրում են, ոչ մի փարբերություն չկա՝ հայ ես, թե թուրք, և ոչ մի բռնություն չկա, եղբա՛յր: Ես Ռումիլիայի Ֆուրիշեն<sup>34</sup> քաղաքում ապրում էի փասնեքեք փարի, և ոչ մի անգամ այդպիսի դեպք չեղավ, ինչպիսին մեր հարսին փանելն էր: Եթե կարելի է, գնացե՛ք շուրքում հարսին ե՛ր քերեք»: «Գիտես, Պետրո՞ւս, հարսը մեր գյուղում չէ»: «Բա որտե՞ր է»: «Գյուլուջա<sup>35</sup>, մեր գյուղից յոթ կիլոմետր հեռու է»: «Բան չկա, գնացե՛ք, ե՛ր քերեք»: Գնացին երեք հոգով քերելու, առավոտյան կողմ քերեցին: Նոր մարդը շատ դժվարությամբ էր համաձայնել հետ տալ:

Հորեղբայրս մոտ երկու ամիս մնաց մեր գյուղում: Վերջապես Պետրոս ամիս հարց դրեց հայրիկիս առջև. «Եղբա՛յր, ինչ կա չկա ծախի՞ր, գնանք այս անիրավ աշխարհից, գնանք Ռումիլիա: Ապրուսրի մասին չմտածես, քանի որ Ֆուրիշեն քաղաքում ես «գասարիկցա» ունեն: Բոլորովին չմտածես ապրուսրի մասին»: Շատ չափին-ձևին, վերջապես որոշեցին գնալ տեսնելու, թե կարո՞ղ են ապրել: Գնացին չորս հոգով՝ հայրիկս, հորեղբայրս, մեծ եղբայրս և նանաս:

Չորրորդ ամսի վերջում՝ 1914թ. հունվարին, հայրս եկավ: Ժողովուրդը հավաքվել էր, հարցնում էր ճանապարհների մասին, ինչպիսի՞ աշխարհ է: Երբ հայրս եկավ, մեզ մոտ արդեն ձմեռ էր, մորս հետ խոսում էր ու ասում. «Գարևանը պետք է գնանք Ռումիլիա, քանի շուր է: Ես շար հավանեցի այնպեղի ժողովրդին էլ, ապրուսրն էլ»: Հայրս Ռումիլիայից իր հետ աչքի դեղորայք էր բերել: Մեր Երզնկայում աչքի հիվանդություն շատ կար. մեր տանը իմ աչքերն էին ցավում, տարախումե՞ն<sup>36</sup> էին ասում, հայրս աչքերս լավացրեց: Ռումիլիայում իրենց հարևանը աչքի բժիշկ է լինում, երբ ծանոթանում է հայրիկիս հետ, հայրս ասում է, որ մեզ մոտ աչքի ցավ շատ կա: Էս բարի բժիշկը ասում է. «Ես քեզ կս-

*վորեցնեն, թե ինչպես պիրի բուժես»*: Հայրս շատ լավ սովորել էր, թե ինչ պետք է աներ: Հետը բերել էր մի մեծ սումկա՝ խաչը վրեն: Մեկ բանկա կիսակարմիր մագ էր բերել, մի հատ կապույտ մատիտ, կապլի<sup>37</sup> և մի հատ էլ սրվակ: Առաջին անգամ ինձ սկսեց բուժելը. սկզբում լավ վանում էր աչքերս, հետո կապլին կաթեցնում էր և բամբակով լավ տրորում, կոպերս հետ էր տանում ու քսում մատիտը: Այդպես էլ լավացրեց աչքերս:

1914թ. գարնանը ճանապարհներն արդեն փակ էին, խոսում էին պատերազմի մասին: Մեր հարևան Նոր Զաղ<sup>38</sup> գյուղում մի թնդանոթ գցին: Ժանդարմա մը եկավ մեր գյուղ, միթարին հայտնեց, որ բոլոր տների տերերը գան Նոր Զաղ: Հայրիկս էլ գնաց, տուն որ եկավ, մայրիկս հարցուց. «*Զա՛ մարդ, ինչի՞ կանչին չեզ*»: Հայրիկս ախ քաշեց, տխուր պատմեց դրությունը. «*Շար վար է, լավ հուր չի փչում*»: «*Զա՛ մարդ, ի՞նչ եղավ, որ վար է*»: «*Ահա թե ինչու է վար,-ասաց հայրիկս,-Ռզա փաշան հարցնում էր, թե՛ հողդ կուրա՞ս թշնամուն, ես էլ պարասխանեցի՝ ոչ մի դեպքում, չեմ րա*»:

-Իսկ եթե թշնամին կուզե հողդ առնի, ի՞նչ պիտի անես, Պողո՛ւ:

-Ահա ես՝ Թուրքիայի քաղաքացի Պողոս Թռչունյանս, իմ հոգիս, մալս, միլքս կուտամ պետությանս, իսկ հողս չեմ տա թշնամուն:

-Էֆերիմ,-ասում է,-Պողո՛ւ, դե արի՛, էստեղ ստորագրի:

Եվ եղպես Ռզա փաշան մեր շրջանի բոլոր գյուղացունց ստորագրությունը հավաքեց: Անցավ միառժամանակ, և մի օր հայտնեցին, որ պատերազմ է: 1914 թ. ամռանը՝ գյուղացու ամենաթեժ աշխատանքի ժամանակ, Թուրքիան ռազմակոչ հայտարարեց, գորակոչվեցին 20-50 տարեկանները: Չորակոչի վճռական գործողություններ իրագործվեցին հողագործի համար ճակատագրական ժամանակահատվածում: Յնցվեց շրջապատը, և հանկարծ տակնուվրա եղավ խաղաղ կյանքը: Մե փոթորիկմ հանկարծ փչեց անգիտակից և հեռուն չմտածող թուրք վերնախավի կողմից, խանգարեց ամեն բան: Տակնուվրա էրեց ամեն բան, ես դա

լավ հիշում եմ էսօրվա պես: Լացուկոծն ընկավ ժողովրդի մեջ: Իմ հիշողության մեջ դաջվեց 1914թ. ամառը: Ես լավ, էսօրվա պես հիշում եմ. մեր բուստանն էի, որը շոշի մոտն էր, հանկարծ արևը բռնվավ, քիչ-քիչ բոլորովին փակվավ, մոտ 15-20 րոպե աստղերը երևացին<sup>39</sup>: Թուրքաց գորքը գնում էր դեպի արևելք, կալի վախտն էր: Սկսեցին թնդանոթով կրակել արևի վրա, որ արևը բացվի: Մեր գյուղը մոտիկ էր շոշին: Ամեն օր գորքը գնում էր դեպի Էրզրում:

Եկավ աշունը, սկսեցին տներից ձեռնոց, գուլպա, ձավար, յուղ պահանջելը: 60 տարեկանից սկսած մինչև 15 տարեկան տղամարդը պետք է երկու կոտ ցորեն շալակով տաներ Մամախաթուն<sup>40</sup>: Ժանդարմները վխտում էին գյուղում, ով չէր ենթարկվում, ծեծում էին: Էդ տարի ձմեռը սարսափելի էր: Չորս-հինգ ամիս չանցած՝ եկավ վիրավորը, հիվանդը: Վիրավոր թե հիվանդ թուղթ էին տալիս, ուղարկում Էրզրումից Երզնկա: Տեղափոխելու միջոց չկար, բոլոր հայերի տները լիքն էին վիրավորներով և հիվանդներով, մեկը գալիս էր, մյուսը՝ գնում: Որքան ալ հիվանդությունից էին մեռնում՝ սրան հաշիվ չկար:

Ոչ մի հայ չէր մտածում ապրուստի մասին: Անհնար է պատմել, թե ինչ էր կատարվում 1915թ. Թուրքահայաստանում: Հայերու համար մահն էր իշխում: Մահը դանդաղ մոտենում էր հայ ժողովրդին: Թուրք բարբարոսները ստեղծել էին հատուկ չաթաների խմբեր<sup>41</sup>, որոնք սարսափի մեջ էին պահում ժողովրդին: Ինչ որ պիտի պատմեն, իրական դեպքեր են, հորինված չեն: 1915թ. հունվարից սկսած՝ հայկական գյուղերից ով ինչ ուներ, տալիս էր՝ յուղ, հավկիթ, ձավար, կաթ, գուլպա, ձեռնոց: Տալիս էին այն, ինչ պահանջում էին ժանդարմերը: Մեր տնից տարան երկու արջառ և մի երինջ: Թուրքական բանակի համար մայրիկս պարտադիր գուլպա էր գործում, քույրիկս՝ ձեռնոց: Հայ բնակչությունը պարտավոր էր սննդամթերքը շալակով փոխադրել յոթ օրվա հեռավորության վրա գտնվող Հասանկալա<sup>42</sup>: Փոխադրումները կատարվում էին շատ ծանր պայմաններում, անհնար էր էլերին աշխատեցնել, քանի որ չափազանց ցուրտ էր, և շատ ձյուն էր

գալիս: Ո՞վ պիտի օգներ բանակին՝ հայ գյուղացին: Մասնակցում էին 15 տարեկանից մինչև 60 տարեկան հայերը: Չմռան սառնամանիքներու պայմաններում գնացողները հետ չէին գալիս: Հայ գյուղացին պարտավոր էր վիրավոր կամ հիվանդ թուրք զինվորներուն պահել իր տանը, խնամել, որքան հնարավոր էր: Մեր տանը քսան օր մնաց Մահմադ չաուշը: Հայ ժողովուրդը օգնում էր թուրքական բանակին ամեն ինչով, և ի՞նչ դուրս եկավ: Լավության փոխարեն՝ վատություն... Բանն այն էր, որ թուրքերը չէին մասնակցում ոչ մի բանի: 1915թ. ձմեռը սուգ ու շիվանի ձմեռ էր՝ մարդկության կյանքում չտեսնված դաժանություններով լի: Պետական ժանդարմեքը տներից հավաքում էին, ինչ ուզում էին: Գյուղի մի ծայրից մտնեիր, մյուս ծայրից դուրս գալիիր մի ուրախ մարդ չէիր տեսնի:

Երկու ժանդարմա և մխթարը մտան մեր տուն.«*Պողո՛ւ ս քիհա, մե հար սել լծե, դուն ալ հերը, հավաքած յուղն ու չավարը փանես հասցնես Մամախաթուն, առավոր պարտաստ կաց*»: Հայրիկս նստած մտածում էր, ախ ու վախ էր անում, մայրիկս, թե.«*Քա մա՛րդ, ի՞նչ եղավ քեզի, ինչ որ պիտի էղնի, արդեն երևում է*»: «*Բուրի՛ կ ջան, ջմեռը գնացողներից ոչ մեկը եր չեկավ, ես էլ էդ բախտին պիտի հասնեմ*»: «*Քա մա՛րդ, ինչպես բռլորը, այնպես ալ մենք, ի՞նչ կրնանք էնենք*»: Ես տեսա հայրիկիս տանջվելը, մոտեցա ու ասացի.«*Հայրի՛ կ, ես կփրակեմ սելը, մի՛ մտածե*»: Դարձավ, ինձ նայեց.«*Այրի՛ ս, որդի՛ ս, արի՛ մոտիկ,-լա՛վ համբուրեց,-է՛, բալի՛ կ ջան բալի՛ կ, էս կյանք չի, որ մենք քաշում ենք, մեր ապրուստը կարտարյալ պարիժ է, պարիժ*»: Առավոտ հայրիկս Աթուն և Քյալաշ եզներին լացով լծեց սելը: Ժամում հավաքած ուտելիքը բարձան և չորս ուրիշ սելերով ճամփա դրին գյուղից: Ժանդարմ Մահմադի հետ հասնում են Խալեղ աղայի խանը: Իրիկունը մեր գյուղացի Մահմադն ասում է.«*Պողո՛ւ, փախի՛ր, սելի, եզների մասին մի՛ մտածիր, քո կյանքը փրկիր*»:

## **Մեր տանը ապրող Ռ-զա չաուշի պատմածը Սարիղամիշի ճակատամարտի մասին**

Ռ-զա չաուշը 15 օր մնաց մեր տանը: Նա պատմում էր. «*Միր, Պողո՛ւ ս քիհա, ծառայությունը թուրքական բանակում ծանր պատիժ է, սևուևնդի մասին ոչ ոք չի մտածում: Մեզ տալիս էին ցորեն, գարի, չավար, ինչքան ուզում էին: Ուզեին, չուզեին, պիտի կողոպտեին բնակչությունից, իհարկե, հայերից: Հրաման տվին հարչակման: Առաջին անգամ, որ սկսին հարչակումը, շատ առաջ գնացինք: Դա դեկտեմբերի սկզբին էր, հասանք հայ-հայ Սարիղամիշ<sup>43</sup>: Ուռուսները մեր ճանապարհը փակին, սկսվավ ուժեղ կռիվը<sup>44</sup>: Օրերը շատ լավ էին, մեր դիվիզիան<sup>45</sup> կանգ առավ Սարիղամիշի ուղղությամբ՝ Խանդարայում<sup>46</sup>: Քիչ մնաց մյրնեինք Սարիղամիշ: Միանգամից ցրտերը սկսվեցին, էն էլ ի՞նչ ցրտեր, չրեսևված: Չէինք ալ կարող գեևք աշխատցնել: Քանի գնաց, ցրտերը ուժեղացան: Մենք բոլորովին հուսահատվանք, անհնար էր կռվելը, առանց կռվել սկսվավ գորքի շարդը: Սառչում էին անհաշիվ. ասկյարը ամառվա շորերով էր: Մեր չորրորդ բանակում (օրդա) մարդ չմնաց, որ ըսեմ, հավարա՛: Մեր մեղքի համար Աստված մեզ պատժեց: Ոչինչ չկար ուրելու, սովի հետ ավելացավ նաև հիվանդությունը: Ավելի սարսափելի էր ցորտը»:*

-Ներողություն՛ ն, Ռ-զա՛ չաուշ, ի՞նչ մեղք գործեցիք, որ Աստված պատժեց:

-Ինչ ասեմ, Պողո՛ւ ս քիհա, վայրենություն, հայ գյուղացիք չկային, մեջտեղից վերացել էին, մնացել էին ուռումները<sup>47</sup>: Ուռումների ուտելիքն ու ընտանիքը պատկանում էին ասկյարներուն: Դու տեսնեիր Սարիղամիշի անտառներում ինչքա՞ն ուռում կնկտիք կային ասկյարներու համար, և դրա պատճառով էլ մենք Աստծուց պատժվանք: Ուռուսները սկսին հարձակվելը, ով կարողացավ, փախավ: Ես երկու սառած ասկյարի շորերը հանեցի, հագա ու փախա: Էլ ո՞վ կմտածե կռվի մասին: Մնացողները հասան Քյուրփի<sup>48</sup> քով: Ինչ-որ ռազմական «թուփ» ու «պլիմոտ» ունեինք,

մնաց գերի: Ուռուսները ախմախ էին, որ չեկան մեր ետևից, չիդեմ ինչու կանգնան սահմանի վրա: Սարսափելի սառնամանիքին երևի ուռուսների համար էլ դժվար էր առաջ գալը:

-Ի՞նչ միջոց կար հիվանդ, վիրավոր ասկյարներու համար:

-Ոչ մի միջոց, Պողո՛ս քիհա, ահա էս կտոր մը թուղթը: Մի թուղթ էին տալիս վիրավորին, թե Էրզրումից գնա՛ Երզնկա, տեսնու՛մ ես փրկության ինչ լավ միջոց, էն էլ ձմեռ ժամանակ: Հիվանդ, վիրավոր զինվորներ... գնա՛, ուր կուգես՝ 200 կմ: Միայն հայերն էին օգնում, ներս առնում, շորերը փոխում, լողացնում:

Մեր գյուղի Մայնուր ամեն օր՝ առավոտյան, դուրսը մեծ ամանով էրիշտա ապուր էր եփում, ցրում էր վիրավոր, հիվանդ ասկյարներուն: Իսկ մեռնող ասկյարներուն հաշիվ չկար, հատուկ մարդկանց էին նշանակում, որ թաղեն: Մե օրմ դուրս եկա մեր տնից, տեսա, որ արաբա մը լիքը ջանդակ, երեք-չորս կնիկ հետևից գնում են, քանիմ հատ ալ երեխա: «Օ՛հ, էս ու՞ր կերթաք»: «Գնում ենք թաղելու»: Մե մարդմ ալ պետական շորերով էր, ես էլ գնացի հետևից: Հասան թուրքերու գերեզմանը, վար առան դիակները, երեք-չորս հոգի փորում էին փոսը:

-Դե հիմա մեռելներու վրա լացե՛ք, կնկտի՛ք,- ասաց պաշտոնավոր մարդը:

Հայ կնկտիք էին, կնկտոնց մեկը Բելո մամն էր, որ սկսեց սուտ լացը.

-Ա՛ խ, Աստվա՛ծ ջան, մեռնեմ քու գորությանդ, էսպես մեկ-մեկ մեռնելեն ե՞րբ պիտի վերջանան, յամա՛ն, յամա՛ն, վա՛ խ յամա՛ն, յամա՛ն, գոնե օրական մե հազարը մեռնին, վա՛ խ, յամա՛ն, յամա՛ն:

Ես սկսեցի խնդալը, հասկացա, որ Բելո մամը սուտ լաց է անում: Էդ պաշտոնավոր մարդը տեսավ, որ ես խնդում էի, ըսավ.«Հեռացե՛ք, շա՛ն որդիք, թողե՛ք կնկտիք լան»:

Ռ-գա չաուշի պատմածը ճշտեց Ղարսա շրջանից Բայդարա<sup>49</sup> գյուղացի Գրիգոր ամին, որն հիմա 75 տարեկան է: Ահա թե ինչ պատմեց նա.«Թուրքի սառած գորքը ավելի շատ էր, քան անտառը: 1915թ. մարտին եկան մեզ գյուղից արաբայով տարան Սարի-

ղամիշի անտառը՝ սառած ասկյարներուն հավաքելու: Արաբաներով բոլոր գյուղերից եկել էին սառած ասկյարներուն հավաքելու և թաղելու: 15 օր շարունակ հավաքում էինք, բայց վերջ չկար: Եվ խեղճ ուռումի 14-15 տարեկան աղջիկներն ալ բերել էին իրենց քմահաճույքի համար»:

Պատմում է մեր հարևան Հարությունը.«1915 մարտին Սևահից<sup>50</sup> ելանք մի հազար հոգի, Երզնկա հասնելուց հետո մնացինք հինգ հարյուր հոգի, հասանք Էրզրում, մնացինք քսանհինգ հայ: Բոլոր թուրքերը փախան: Հասանք Հասանկալա, Էդտեղից էլ մենք փախանք: Քսան օր ճանապարհ եկանք, ապրում էինք մեր միջոցներով, ոչ մի բան չէինք ստանում կառավարությունից: Մենք կարծում էինք, թե հասնենք տեղ, լավ կեղնի: Հասանք տեղ, ո՞վ էր տերը, Էդպես էլ մենք անցանք ռուսաց կողմը»:

Ըստ Հարությունի ու Ռ-գա չաուշի պատմածի՝ առաջին հերթին թուրքերն էին փախչում, բայց, ինչպես տեսանք, հետո մրեցին հայ զինվորներուն: Թուրքերը հնարեցին, թե հայերը փախչում են ռուսաց կողմը, իրենց դեմ են կռվում, կարծես ուռուսը գորք չունենր, թուրքի պես սոված էր և պարտվել էր: Սարիղամիշի ողջ մեղքը գցեցին հայերու վրա: Հայերու երեխեքը, կնկտիքն էին մեղավոր, որ օսմանցոնց գորքը շոր չունի և ուտելիք չունի: Շատ ճիշտ է, ո՞վ չէր փախչում, իրենք՝ թուրք զինվորներն ալ փախչում էին, մեր գյուղից վեց թուրք զինվորներ փախել էին ֆրոնտից: Նրանք պատմում էին.«*Ուրեկիք չունեինք, ոչ ալ հազնեկիք, սովից, ցրտից անխնա մեռնում էինք: Ո՞վ էր տերը, դրա համար ալ լքում էինք բանակը*»:

Փախչում էին թե՛ հայ, թե՛ թուրք զինվորները, և Էդպես ալ սկսվում է թուրքերու բանակի քայքայումը: Եվ ո՞վ էր մեղավոր: Թուրքերի տգետ ղեկավարները 1914թ. աշնանը բանակը քշում էին դեպի արևելք՝ չմտածելով, որ առջևում ձմեռն է, գորքը ո՛չ շոր ունի, ո՛չ էլ ուտելիք: Իրենց կարճ խելքով ուզում էին տիրանալ Կովկասին<sup>51</sup>, ինչ կարիք կա մտածելու դրանց մասին:

Անցավ ծանր ճմեռը, եկավ 1915թ. գարունը, սկսին հավաքել հայերու առաջավոր մարդկանց: Բավականին ժամանակ անցավ, օրերը շատ լավն էին, ամեն օր անձրև էր գալիս, էդ տարի բերքը շատ լավն էր:

### **Հայ ժողովրդի տեղահանումը և կոտորածը 1915թ.**

Ապրիլի մեջ եկավ Բասենի<sup>52</sup> հայ ժողովուրդը, հարցնում էինք, թե էս ինչ բան է: «Մենք ի՞նչ գիտենք, որ չեզ էլ ասենք»: Եկավ Մամախաթունի, Թերջանի ժողովուրդը՝ բոլորը մերկ, կնկտիք, երեխեք գնում են լալով, երեխանց լացն ու մեծերու վայնասունը աշխարհ էր բռնել: Երզնկայի հայոց տեղահանը<sup>53</sup> դեռ չսկսած՝ փաշան կանչում է Մրթոյին՝ մեր շրջանի մարդասպան ավազակին ու ասում. «Գիրե՛ս, Մրթո՛, դու պետք է մեծ գործ կատարես»: «Փաշան սաղ էղնի, ես պատրաստ եմ»: «Ուրեմն լսի՛ր ինչ, դու մեզ պետք է օգնես»: «Ես պատրաստ եմ էդ գործի համար»: «Ես գիրեմ, որ դու ընդունակություն ունիս, դրա համար էլ քեզ կանչեցի: Բու տրամադրության տակ եմք դնում հինգ գյուղ՝ քո հարեան գյուղերը: Դու էս գյուղացունց բոլորին ճանաչում ես, չէ՞»: «Հա՛, փաշա՛»: «Դրա համար էլ քեզ եմք հանչնում էս գործը: Ուրեմն պետք է էնպես էնես, որ ոչ մի մարդ չմնա աքսորի ժամանակ: Հասկանո՞ւմ ես, իսկ մնացած գործերը դու գիրես, որքան կուզես, սպանե՛, ինչպես ուզես, էնպես էլ էրա՛: Դե՛, դու ախանջ դիր. ամենապակասը երկու-երեք հազար ոսկի պետք է հավաքես էդ հինգ գյուղից: Ուրեմն ի՞նչ պիրի անես»: «Բավական է, որ դու թույլ տաս, մնացածը ես գիրեմ՝ ինչ կանեմ, փաշա՛»: Էս ֆաշիստ Մրթոն, որ իրավունք է ստանում, գալիս է տուն, իր պլանը կազմում, թե գաղթից 15 օր առաջ ինչ պետք է աներ, ու սկսում է իր սև գործը. խաբում է հարուստներին, ոսկին դուրս բե-

րում՝ խոստանալով իրենց հետ պահել աքսորից: Մի օր եկավ մեր տուն.«*Պողո՛ւ, Բուրիկ խսկումի՜ն ասե՛ լավ ճաշ եփե, էսօր չե՞զ դոնախ եկնք*»: Հայրիկս երկու հավ մորթեց, մայրս փլավ եփեց:

Իրիկունը եկան Մրթոն ու մեր գյուղի Մահմադը, հետներն էլ՝ մի ժանդարմ, նստան հաց ուտելու, հայրս արաղ բերեց, սկսեցին ուտելը: «*Պողո՛ւ, գնա՛ գգիրի՜ն կանչե՛*»: Հայրիկս գնաց գգիրին կանչեց: Էս Մրթոն ասաց.«*Լսի՛ր, գյաու՛ր գգիր, իմ հրամանները կատարի՛ր, ինչ որ ասում եմ, հասկացա՛ր, թե չէ քիթդ կպոկեմ: Հինա՛ գնա՛, բարբարի աղջկան՝ Սոնիկի՜ն, թե՛ չէ քիթդ կպոկեմ: Հինա՛ գնա՛, բարբարի աղջկան՝ Սոնիկի՜ն, թե՛ չէ: Ասա՛, որ քեզ Մրթգար աղան կանչում է,-հեյրո դարձավ մորս,-էս սհաթիս րեդս գգիր քիլարը, շու՛ր*»: Մերս դողալով տարավ տեղը գցեց քիլարում: Սպասում էինք, թե ինչ պիտի եղնի: Մի քիչ հետո ներս մտան գգիրը, աղջկա հերն ու մերը: Աղջկա ծնողները վազելով եկան ընկան Մրթոյի ոտը.«*Մրթգա՛ր աղա, ինչա՛յի՛ր մեր աղջկան, վերև՝ ասարված, վարը՝ դու*»,-սկսան լալը: «*Եթե՛ ուզում եք, որ սաղ մնաք, պիտի կատարեք իմ հրամանը, էս բուպեհին երկուսիդ էլ շանսարակ կանեմ, վարն էլ ես եմ, վերև էլ: Դե՛, շուր գնացե՛ք, մի քսան վայրկյան չե՞զ ժամանակ*»: Էս խեղճերը վզերը ծուռ գնացին: Ատրճանակը ձեռքին բռնած՝ գգիրի վրա գոռաց.«*Գնա՛, շուրըմ բերե՛ք, թե չէ կգամ բոլորին շանսարակ կանեմ: Դուք, միևնույնն է, իմ չեռքից չեք ազարվի, ես չե՞զ բոլորիդ կսպանեմ, շուր բերե՛ք աղջկան*», -գոռում և հայիոյում էր նա:

Ես նկարիչ չեմ, որ նկարեմ Մրթոյի նկարը, թե ինչ դեմք ուներ Մրթոն. կարմիր աչքերով, ատամները կրճկրճացնելով, խանձած բեղերով, միջահասակ, զարուն, մարդկության թշնամի, զազան, եթե հիմա տեսնեմ, հազար մարդու մեջ կճանաչեմ: Բավականին ժամանակ անցավ, հերն ու մերը, խեղճ աղջկա թևերը բռնած, բերին նրան: Լալով աղջիկն ասում էր.«*Սպանե՛ք, ես չեմ գա*»: Հերն ու մերն էլ իրենց հերթին լալիս էին: Եկան, մեր տան մեջ կանգնե-

ցին, լալիս էին երեքով: Ավազակը դուրս եկավ. «*Ի՞նչ էք փերացել, մեկ չէ՞, մարդու չպիտի՞ րաք: Հոժար չե՞ք, ես պիտի առնիմ ձեր աղջկան: Ես չբռնեմ, ուրիշը կրանի, իզուր փեղը մի՛ լացեք*»: Ինքը եկավ, աղջկան սկսեց քաշելը, աղջկա ուշքը գնաց, ընկավ գետնին: Մերը նորից սկսեց աղաչելը, իսկ գազանը հարձակվեց մոր վրա ու գցեց գետնին, հորը նույնպես, ու գգիրի հետ քաշին, տարան աղջկան: Բոլորս սառել էինք, ոչ մի խոսք: Իմ քունը տարավ, չիդեմ՝ ի՞նչ կատարվավ<sup>54</sup>:

Մրթոն հարուստներից փող էր հավաքում, որ նրանց ազատի: Աքսորի ժամանակ պահեց իր որսերին. ինչ որ տվել էին, չէր կշտացել: Մայնուդացի<sup>55</sup> յոթ հարուստների իրենց տան մեջ սպանեց, ասելով. «*Ոսկի չունե՞ք, ուրեմն մեռե՞ք*»: Գոնե մի կարգին տղամարդ էլ լիներ. կիստուկի մեկը, բեղերը խանձած, դեղնած երեսով վախլուկի մեկը: Հիշում եմ՝ մեծ եղբայրս՝ Հմայակը, ուզել էր ծեծել, փախել եկել էր հորս մոտ ու ասել. «*Պողո՛ւ, րդուդ չվանը քաշե՛, ժողովրդի մեջ ինչ խայրատակեց*»:

## Մեր գյուղի տեղահանումը

Մի ժանդարմա մի հասարակ հրաման բերեց ու մեր գյուղի միսթարին հանձնեց: Գյուղի տեղահանման հրամանն էր: Առանց հրամանի էլ Մրթոն մեր գյուղում ամեն ինչ տակնուվրա էր արել: Ամբողջ ժողովուրդը, փողոցում թափված, իրար գրկած, գուլար, ես էլ խառնվել էի ժողովրդին. չէ՞ որ ամբողջ գյուղը սպանվելու պիտի երթար, կարելի՞ քան էր, որ ամբողջ ազգը բնաջնջվեր: Ես կանգնած նայում էի ժողովրդի լացին: «Մայր աստվածածին» էին կանչում, որ ազատի կոտորածից, բայց ոչ ոք չօգնեց. չէ՞ որ զօրուգիշեր խոսում էին Աստծո գորության մասին, սրբերի գորության մասին, ախր ի՞նչ եղավ, ինչու՞ չէին պատժում էս թուրք

Ժանդարմներին, որ էսպես էին վարվում ժողովրդի հետ, իսկ թուրք ժանդարմները հռհռում էին բոլորի վրա.

-Առավոտը կփրկվեք բոլոր ցավերից, գյավուրնե՛ր, էնթու աշխարհում թող հիմա ձեր քեռին գա, ձեզ ազատի, ձեր ուռուս քեռին:

Ես էդ օրվանից իմացա, որ ինչ որ կրոնի մասին խոսում էին, սուտ էր, եթե ճիշտ էր, թող իր գործությունը ցույց տար ու պատժեր էս դահիճներուն: Էս խեղճ ժողովրդին կոտորում են, ուրեմն ոչ մի գործություն էլ չկա: Անցել է 53 տարի, բայց այսօրվա պես հիշում եմ մեր գյուղի ժողովրդի վայնասունը, ոչ մի բուսակ մտքիցս չի ելնում, հիմա էլ վշաքաղվում եմ, երբ հիշում եմ էդ ֆաշիստ թուրքերի արածը: Էդ ահավոր պատկերը այժմ էլ աչքիս առաջն է, և ես երբեք էլ չեմ մոռանա, չնայած անցել է 53 տարի: Ժողովուրդը լաց ու բողոքով Աստծուն աղաչում էր՝ գիտակցելով, որ վաղը այս ժամին թուրքերի ձեռքով սփնահար պիտի լինի կամ էլ գնդակահարվի թուրքի կամքով, այնպես, ինչպես վերջը կուզենա անպետք ոճրագործը:

Հայրենիքի ապագա՝ սերունդներ՝ աղջիկ թե պատանի, էս իրողությունը, որ եղել է 1915թ. գարնանը ձեր պապերու, մամերու, եղբայրներու, քույրերու հետ, դուք ձեր կյանքում չմոռանաք: Մեր հայրենիքի դաշտերն ու առուները, լեռները մեր որդունց արյունով են ներկված: Պատանինե՛ր ու աղջիկնե՛ր, լավ լսեցեք էս բոլորը ու երբեք չմոռանաք էս դեպքերը: Թուրքահայաստանը դարձել էր հայերու մի համատարած սպանդանոց: Մեր զոհերու ողբն ու ճիչը լսվում էր աշխարհով մեկ: Ես մեկն եմ նրանցից, որ ազատվել են այդ սպանդից, ազատվել են ամենասարսափելի գազանություններից: Ջարգնում եմ, և թվում է, թե մեր գյուղի վրա դեռ կախված են տարիներ առաջ կատարված գազանությունների պատկերները: Ժողովրդի ձայնը իմ գլխից չի հեռանում ու դեռ հնչում է իմ ականջներում: Դաժան ժանդարմները ման էին գալիս

գյուղերում և անում էին այն, ինչ որ սրտները կուզեր, և ես էդ օրվանից չեմ հավատում Աստծու գործոթյանը: Էլ ինչու՞ էին Աստծուն գովում, եթե հանդուրժում էր, որ թուրքերը էսպիսի դաժանություն անեն, ոչխարի պես անխնա սպանեն հայերին՝ չխնայելով ոչ մեկին՝ փոքր երեխուց բռնած մինչև վերջին հայր: Քանի որ հայ եմ, այս տողերը գրելիս աչքիս առաջ են մեր գյուղացունց լացն ու կոծը, չեմ կարող մոռանալ նրանց վերջին օրը: Բոլորը՝ երեխեքից բռնած մինչև վերջին մարդը, լացում էին, գիտեին, որ իրենց վերջին օրն է: **1915թ մայիսի 10-ը**<sup>56</sup> էս աշխարհի վերջն էր:

Հայոց գաղթը, սկսվելով արևելքից, հասավ մինչև արևմուտք: Հերթը հասավ Երզնկային, մեր գյուղացունց վերջին օրն էր, վերջին գիշերը, որ մեր հարազատ տներում անցկացրինք: Ես էդ օրը քաղաք էի գնացել, երբ վերադարձա տուն, կեսօրին մոտ էր: Հայրս ու մայրս դուռը նստած էին. մայրս լալիս էր, հայրս էլ իրեն-իրեն խոսում էր. ինձ հետ չխոսեց: Ես էլ նստեցի դուրսը՝ մայրիկիս կողքին. «Սոված եմ, մայրիկ»։ Մայրիկս դարձավ ինձ. «Ի՞նչ կուզես, տղաս, ոչ մի բան էլ չկա տանը, թուրքերը եկան, ամեն ինչ թալանեցին տարան»: Ես ելա, վազեցի տուն, տեսա՝ տունը դատարկ էր. ոչ մի բան չկար<sup>57</sup>:

\*  
\*   \*  
\*

...Եփրատի ալիքներին զոհ էին դառնում հազարավոր մանուկներ և մեծ մարդիկ. առաջին հերթին երեխանց էին զցում Եփրատը: Իմ քույրիկի օրինակին հետևում էին հազարավոր մայրեր, իրենց երեխաներին թափում էին Եփրատը, դե ի՞նչ անեին, որ ազատվեին տանջված, լացող, սոված երեխանց ցավից, քանի որ երկու-երեք օր հետո իրենք էլ պիտի մեռնեին սովից: Աշխարհում ոչ մի պետություն էսպես դաժան չի վարվել իր հպատակ ժողովրդի հետ, ինչպես թուրքերը վարվեցին, և աշխարհում ոչ մի

ժողովուրդ չի լացել, ինչպես հայերը լացին: Ոչ մի ժողովրդի մայր չի լացել այնպես, ինչպես հայ մայրերը, ոչ մի ժողովրդի հայր չի լացել այնպես, ինչպես հայ ժողովրդի հայրերը լացին, ոչ մի ժողովրդի երեխա չի լացել այնպես, ինչպես հայ ժողովրդի երեխաներն են լացել: Լալիս էին սովից ու տանջանքից՝ փոքրից սկսած մինչև վերջին մեծը: Մայրերը լալիս էին իրենց երեխաների համար, որ սովամահ էին լինում: Չկա, չկա աշխարհում էնպիսի տեղ, որ էսքան արցունք լինի թափած, որքան թափեցին Թուրքիայի հայ մայրերը:

Ի՞նչ էին մտածել թուրք բարբարոսները. քանի որ ամառ էր, և ամեն ինչ հասած էր դաշտերում, և որպեսզի հայությունը Քյամախի<sup>58</sup> նեղուցից դուրս չգա բաց դաշտ և ուտելիք չճարի դաշտում, հարկավոր էր չթողնել, որ հայերը Քյամախից առաջ գնան: Վայրը հարմար էր թե՛ սպանելու, թե՛ Եփրատը թափելու, թե՛ սովամահ անելու համար: Քյամախի նեղուցից էլ հարմար տեղ չկար, այդ ամենը կանխամտածված էր թուրքերի կողմից և պարտադրված Երզնկայի հայերին: Թուրք բարբարոսները 50000 հայերի սպանող կազմակերպեցին: Ազատվում էին միայն նրանք, ում թուրքերը տանում էին իրենց կարիքների համար՝ սիրուն աղջիկները, հարսներն ու տասներկու տարեկան տղերը:

Ես գրում եմ հեռավոր անցյալի մասին լիակատար ճշմարտությունը: Ոչ մի ժողովուրդ չի տեսել էսպիսի դաժան, ցավալի դեպքեր, ինչպիսին տեսավ հայ ժողովուրդը 1915թ. թուրք դահիճների ձեռքով: Մարդիկ մեռան, բայց իրենց ազգին չդավաճանեցին: Նրանց գործը անմահ է: Երբեք ու երբեք չի մոռացվի անցյալը, կհիշվի հազարավոր դարեր, և մեր սերունդներն էլ չպիտի մոռանան երբեք ու երբեք: Մարդկության մեջ չտեսնված, չլաված դաժանություն թափեցին թուրք դահիճները աշխատավոր հայ ժողովրդի գլխին: Մեր սերունդը էս բոլորը ականջին օղ պիտի անի և եկող սերունդներին էլ հաղորդի, որ շատ սիրեն իրենց հայրենիքը, անգամ իրենց կյանքի գնով թույլ չտան, որ թշնամին իր արյունոտ ոտքը երբևէ դնի մեր սուրբ հողի վրա. Թող աղջիկ ու

պատանի չմոռանան ու, զենքը ձեռքերին, պաշտպանեն իրենց հայրենիքը: Մենք՝ բոլոր հայերս, պետք է իմանանք, թե ինչ է տեղի ունեցել մեր հայրենիքում: Ես պետք է պատմեմ այն ծանր օրերի մասին, երբ բնաջինջ եղավ հայ ժողովուրդը: Գալիք սերունդներին պիտի հիշեցնեմ, որ միշտ պատրաստ լինեն զենքը ձեռքերին պաշտպանել իրենց հայրենիքը: Թող նրանք դաստիարակվեն հայրենասիրությամբ: Թող երիտասարդության գիտակցության մեջ խորանա և ամրապնդվի մեր ծանր օրերի պատմությունը: Թող իմանան և խորությամբ ուսումնասիրեն իրենց հայրենիքում կատարված դեպքերը: Յավոք, շատ երիտասարդներ չգիտեն իրենց ժողովրդի անցյալը: Իմանալով այն՝ նրանք կձգտեն պաշտպանել իրենց չքնաղ հայրենիքը: Մատաղ սերունդը պիտի իմանա նոր ստեղծված Սովետական Հայաստանի պատմությունը, որը կործանման եզրին էր կանգնած, թե ինչպես կարճ ժամանակում մեր ժողովուրդը հրաշքներ կատարեց և փրկվեց կործանումից: Յուրաքանչյուր ոք, եթե իրեն կրթված է համարում, պարտավոր է իմանալ իր հայրենիքի անցյալն ու ներկան՝ սեղանի վրա դնելով պատմական գրքեր: Նպատակս ու ցանկությունս է, որ մատաղ սերունդը հասկանա մեր հայրենիքի ճակատագիրը և գնահատի ներկա երջանկությունը:

Մեծ դժվարությամբ, բայց կփորձեմ պատմել Երզնկայի հայ ժողովրդի ճակատագրի մասին: Պատկերացրե՛ք ինչ պիտի լինի ժողովրդի վիճակը. ուտելիք չկա, սկսվել է սովը, մի կողմից՝ հիվանդությունը, մյուս կողմից՝ թուրքերի գազանությունը. ով չէր ենթարկվում, սպանում էին: Մյուս կողմից՝ 35 աստիճան տաքություն, ո՛չ ուտելու բան կար, ո՛չ փրկվելու տեղ: Մի կողմը Եփրատն էր, մյուս կողմը՝ ասպառաժ սարը: Ի՞նչ պետք է աներ ժողովուրդը, որ ազատվեր այդ տանջանքից. սկսում էին իրենց գցել Եփրատը: Աղջիկները 40-50 հոգով, իրար ձեռք բռնած, երգելով թափվում էին Եփրատը: Սովից ու հիվանդություններից մեռածներին հաշիվ չկար, մեռածներին՝ օրական երկու-երեք հազար մարդու, թափում էին Եփրատը: Թուրքերը գազանաբար հոշոտում էին հայե-

րին, ստիպում, որ մարդիկ հանեն վրայի շորերը. մեկ է, պիտի մեռնեին: Մեր գյուղի ու շրջանի թուրքերը գնում կենդանի մարդկանց մերկացնում էին, մեշոկներով շոր բերում: Թուրքական բռնեհները, իրենց արյունոտ թաթը դնելով Երզնկայի վրա, եղեռնը սկսեցին հունիսի 8-ի<sup>59</sup>, թե<sup>60</sup> 10-ին<sup>59</sup>: Արյունաքթու գիշատիչները դաժան դատաստան տեսան Երզնկայի հայության հետ, չխնայեցին ոչ ոքի, գազանաբար հոշոտեցին անմեղ ժողովրդին: Հայաստանի կարևոր մշակութային օջախներից մեկը ևս՝ ոսկեղեն Երզնկան, վերածեցին ավերակի: Գազանությունների գոհ էին դառնում բոլոր հայ երեխաները, որոնց հավաքում լցնում էին արաբները, ապա տանում լցնում Եփրատը: Երեխանց ոտքերից բռնում էին, գլուխները խփում քարերին, ջարդում: Առանց մի խղճի խայթի, հղի կնկտոնց վրա բաս էին բռնում, թե ինչ է փորում՝ աղջի<sup>61</sup>կ, թե<sup>62</sup> տղա: Ավերեցին մեր հայրենիքը և այն ամենը, ինչոր պատկանում էր հայերին: Մտածելիս մարդ սարսռում է. եթե ներկայիս սերունդն էլ գիտենա իմ գիտեցածը, բոլոր աչքով տեսածներս և ականջով լսածներս, ապա կզարհուրի:

Ահա երկու վկա մեր գյուղից: Աքսորի ժամանակ մեր գյուղից ազատվել են երկու տղա՝ Վարդգեսն ու Ջիվանը: 200 ընտանիքից երկու տղա: Հինա Վարդգեսը ապրում է Երևանում՝ Շահումյանի շրջանի 15 փողոցի 45 տանը: Նա Քյամախի կոտորածից սարսափելի բաներ է պատմում: Քյամախը անիծյալ է. այդ տարվա մեջ շատ արյուն ու արցունք թափվեց այդ անիծյալ տեղում: Կարինի, Մամախաթունի, Երզնկայի, Տրապիզոնի<sup>60</sup>, Բայբուրթի<sup>61</sup> շրջանների ողջ հայության համար Քյամախը եղավ համատարած գերեզման: Անիծյալ է անունը, որին արժանի էր լիովին: Վարդգեսի պատմածից կարելի է մի տասը հատոր գիրք գրել: Քանի որ ես գրագետ չեմ, չեմ կարող գրել: Մի քիչ կարող եմ միայն տեղեկացնել մեր գյուղացունց քսորի մասին:

«Երկրորդ օրը հասանք Քյամախի նեղուցը, քսորում էին Երզնկայի շրջանի բոլոր գյուղերը, հավաքում Քյամախի նեղուցում, պատմում է Վարդգեսը: -Եկավ քաղաքի ժողովուրդը: Չէին թողնում առաջ շարժվել: Եվ ահա էս պատմելիս մարմինս փշա-

քաղվում է, մատներս դողում, Հովհաննես: Երբորդ օրը թուրքերի և քրդերի չափաները սկսեցին իրենց որսը, ոչ թե վայրի գազանների որսը, այլ կենդանի մարդկանց որսը: Չգիտեմ՝ ինչպես պատմեմ, Հովհաննես, դեռ մինչև հիմա իմ հիշողությունից չի հեռանում էդ սարսափելի տեսարանը, որ ես տեսա: Հարձակվան ժողովրդի վրա, ոնց որ սոված գելը՝ անտեր հոտին: Չգիտեմ՝ որի մասին պատմեմ. դանակներով սպանում էին, ում պատահեր՝ երեխա լիներ, թե մեծ մարդ, սպանեցին, ինչքան որ իրենք ուզեցին, թողին սպանելը, սկսեցին թալանելը. հանում էին շորերը, իսկ ժողովրդի ձայնն ու լացը սարսափելի էր: Երանի՜ քեզ, Հովհաննես, որ չտեսար: Ավելի սոսկալի էր երեխանց նայելը, կորցնելով մայրերին՝ թափառում էին, ման գալիս նրանց: Չարագործություններից չհագեցած թուրք դահիճները մեկ ուրիշ տեսարան սկսեցին: Սկսեցին ջոկել տղամարդկանց, որոնք սաղ էին մնացել, նորից սկսեցին սպանելը ու Եփրատը թափելը, մինչև որ մթնեց: Չորրորդ օրը ժողովրդի դրությունն ինչ էր. չէ՞ որ ժողովրդին չթողեցին ուտելու ոչ մի բան վերցնել իրենց հետ: Կիսամեռ մարդիկ. խոտ էլ չկար, որ ուտեին, մի կողմում Եփրատն էր հոսում, մյուս կողմում Քյամախի նեղուցն էր՝ ապառաժ քար: Գիշերը՝ բաց օդում, գորը՝ արևն էր վառում: Առավոտյան սպանվածների դիակները սկսեցին թափել Եփրատը: Աղջիկները՝ 20-30 հոգով, իրար ձեռք բռնած, երգելով թափվում էին Եփրատը: Չտեսնված, չլսված սպանող արեցին թուրքերը: Ողջ ժողովուրդը ողբում էր՝ տեսնելով թուրքերի արած սոսկալի ու չտեսնված գազանությունը:

Չորրորդ օրը ոչ մի բան չեղավ. գազանները հանգստանում էին: Իրենց հարազատների կորուստը, լացը, սովը առանց սպանելու մեռցրել էր մնացածներին: Հինգերորդ օրը գազանները նորից եկան և սկսեցին իրենց որսը: Հանկարծ ամեն կողմից սկսվեց ժողովրդի լացն ու կոծը, դահիճները սկսեցին ժողովրդին կոտորել. ձորը շրջապատված էր: Ժողովրդի կեսը կոտորված էր, կեսը՝ սովամահ եղած, կեսն էլ խենթացել էր իրենց հարազատների

կորցնելուց: Շատերն էլ, սոված գայլերի նման ընկած, սովից հայ-հայ էին կանչում: Կիսաշունչ կանաչք Աստծուն էին օգնութ-յան կանչում: Ես երբեք չեմ մոռանա էդ սև օրն ու չորս կողմից սկսված կոտորածը:

Ես նայում էի խեղճ ժողովրդին. հիվանդությունից, սովածուք-յունից հյուծված էին, ոչ մի մարդ մարդու նման չէր. մեկի դեմքն էր վիրավոր, մյուսի մարմինը հոշոտված, կիսավիրավորները ա-ղաչում էին՝ օգնեցե՛ք, ի սեր Աստծո: Շատերն էլ, իրենց քարշ տալով, սողում էին դեպի Եփրատը՝ ազատվելու այդ տանջան-քից: Մարդիկ կմախքի նման էին, ականջները ուռած, քթերից ար-յուն էր հոսում: Էս ողջ ժողովրդի մեջ ոչ մեկը նման չէր մարդու: Որ կողմը նայում էիր, սարսափելի էր: Ոտքի վրա մարդիկ օրոր-վում էին ուժեղ հարբած մարդու նման: Սոված ու կիսամերկ՝ դարձել էին կմախք: Արևը այրում էր, ո՛չ հաց կար, ո՛չ ուտելիք: Ոմանք պառկում էին ու մնում մեռած: Հաց չկար, ուտելու համար խոտ էլ չկար: Շատերը տնքում էին մեռնելու վախից: Ոճրագործ-ները ողջերի գերեզմանոց դարձրին Քյամախի նեղուցը: Վեցե-րորդ օրը նորից եկան մարդագելերը և սկսեցին իրենց որսը: Մի քուրդ ձեռքս բռնեց. «Արի՛, ես քեզ փանեմ, ինչ փղա էնեմ,-ու չեռ-քիցս բռնած՝ գնում էիք ժողովրդի միջով,-փղա՛, դու թուրքերեն գիրեն՞ս»: «Հա՛, էֆենդի՛»: «Հիմա կգնանք չաթաների մեծի քով: Կխնդրես, որ քեզ թողնեն, կասես, որ հոժարությամբ մյուսուլման կեղնիս, կասես՝ խնդրում եմ, ինչ չսպանեք, ես աղաչին փղա կեղնիս»: Հասանք չաթաների մեծի քով, բարև տվի. «Խնդրում եմ, փաշա՛ Մյուղուլ, ինչ չսպանեք, ես մյուսուլման կեղնիս փեխամ-բարի, սուրբ Մահմեդի օրենքով»: «Էդ որտեղի՞ց էդպես մաքուր թուրքերեն գիրես, ա՛յ փղա»: «Փաշա՛, մենք մեր գյուղում թուր-քերեն սովորում էիք»: «Լա՛յլ,-ըսավ,-որ դու թուրքանում ես, նե-րում եմ: Դու փեսնում ես,-մաքով ցույց փվավ ժողովրդին,-մեր չաթաները ինչպես են սպանում մարդկանց, դրանցից ոչ մեկը միևնչև վաղը սաղ չպերք է մնա: Մենք էլ շատ գործ ունենք, պերք

է գնանք Խարբերդ»։ Մոտեցավ իմ փրկարարը, թամալահ տվավ.«Փաշա՛, խնդրում եմ, էս տղուն խնայե՛ք, ես խոստանում եմ ամենալավ մշտուլմանը դարձնել, խնդրում եմ՝ չմերժեք և խնայե՛ք նրան ինչ համար»։ «Լա՛վ,-ասաց մարդակերների գլխավոր արյունախումբ,-տա՛ր, լա՛վ մշտուլման դարձրու»։

Ես մնացի էդտեղ մինչև 1930թ. և չմոռանալով հայությունս՝ եկա Հայաստան։ Էսպես, Հովհաննես՝ս, վերք թողեցին թուրք բարբարոսները հայոց պատմության մեջ։ Շատերը ասում են՝ գնացածի ետևից չեն խոսում։ Աչքերիդ առաջ սպանում են հորդ ու մորդ, քրոջդ ու եղբորդ, մի՞թե կարելի է մոռանալ։ Երբեք ու երբեք չի մոռացվի 1915թ.։ Թուրք բարբարոսները կուլ տվեցին երկու միլիոն հայությունը։ Ազատվան միայն նրանք, որոնց թուրքերը տանում էին իրենց կարիքների համար՝ աղջիկ, տղա թե հարս։ Սուտ է, սուտ է, անցյալի վերքերը չեն բուժվի, չեն էլ կարող բուժվել, պարզապես անհնար է մոռանալ, անհնար է փախչել հիշողություններից, որոնք հետապնդում են։ Նրանք քեզ հետ են, քո կյանքի հետ. և՛ բաժանվել չես կարող, և՛ մոռանալ էլ չես կարող երբեք ու երբեք։ Իմ ծաղիկ հասակի հուշերը չեմ կարող մոռանալ, շատ եմ փորձել մոռանալ, բայց չեմ կարողացել։ Էս ինչ դաժանություն արեցին թուրքերը, Հովհաննես՝ս, կարմիր արյունով ներկեցին Հայաստանը։ Թուրքիայի արևելքից սկսվեց մահվան սարսափելի հունձը և շարունակվեց արևմուտքում։ Էսպես վայրենիների գրկում հայտնված գեղեցիկ Հայաստանը ավերեցին ու կործանեցին, արմատից քանդեցին ու կործանեցին անհաշիվ քաղաքներ ու գյուղեր, անհաշիվ դիակներ անթաղ մնացին ու գազանների կեր դարձան։ Ով ազատվել է թուրքերի սրից, նա գիտի՝ Թուրքիայի վերնախավը՝ մարմնից սկսած մինչև ոսկորների ծուծը, արյունախում էր։ Թուրքական սուրը ամայի գերեզման դարձրեց ամբողջ Արևմտյան Հայաստանը։ Էս գիշատիչները բոլորովին էլ չզարմացան իրենց արածից, իսկ հայերի սրտի վրա չտեսնված սև բիծ թողին։ Թուրքիայի բոլոր կողմերում հայի արյուն էր հոսում, ողջ մնացած ամեն մի հայ ողբում էր, սուկալի էր հայ ժո-

ղովրդի ճակատագիրը: Պատերազմի ընթացքում թուրքերը Էնպիսի գազանություն կատարեցին, որ մարդկությունը դեռ չգիտեր և երբեք չէր տեսել:

Հայ ժողովրդի մասսայական ոչնչացման, ժողովրդին մեռցնելու համար ստեղծվել էր մի բարբարոս ծրագիր, որը ներառում էր թուրքերի արած չտեսնված ու չլաված գազանությունները: Եվ շատ կարևոր է, որ նրանք, ովքեր ազատվել են կոտորածի ժամանակ, և ովքեր, որ ծնվել են կոտորածից հետո, նույնպես իմանան թուրքերի հանցագործության մասին, Էնպիսի բարբարոսության, որ ոչ մի ազգ չի տեսել: Արևմտյան Հայաստանը թուրքերը հիմնովին ավերեցին այնպիսի չտեսնված ու չլաված բարբարոսություններով, որ թեկուզ հազար տարի էլ անցնի, չի մոռացվի: Քրիստոնյա մեծ ազգերը տեսնում էին էդ բոլոր արարքները: Գերմանացիք, ֆրանսիացիք, անգլիացիք ու ամերիկացիք ոչ մի օգնություն ցույց չտվեցին: «Ֆաշիստ» թուրքերի կեղտոտ գաղափարն էր, որ ոչ մի հայ չպետք է մնա աշխարհի երեսին, բայց հայ ժողովրդին արմատից կտրել չկարողացան: Ամուր արմատից ամուր ճյուղեր էին աճում ու բռնելով ավելի մեծ տարածություն՝ չտեսնված բերք տալիս: Հայ ժողովրդի արմատը չկարողացան կտրել: Ես իմ աչքով եմ տեսնում, թե ինչպես է օրեցօր աճում շքեղ Երևանը: Ինձ թվում է, թե երագում եմ, Հովհաննես՝ ս, հլա ես ինձ չեմ հավատում. մի՞թե ճիշտ է այս բոլորը»:

Ահա մի ուրիշ վկա Խարբերդից. ես նրան հանդիպեցի 1968թ. Լենինականի հիվանդանոցում: Խարբերդի<sup>62</sup> Քասիրա<sup>63</sup> գյուղացի Հակոբ Գալստյանը ապրում է Լենինականում՝ Նորավանի 39 շենքում: Ահա, թե ինչ է պատմում նա կոտորածից:

*«Ես տասը տարեկան էի. 1915թ. հունիսի չգիտեմ քսանիսը կլինեիր. մեզ արքունեցիկն մեր գյուղից<sup>64</sup>: Գաղթից 15 օր առաջ 15 տարեկանից սկսած միևնչև վերջին տղամարդը հավաքեցին, տարան Եփրատի քովը, սպանեցին և թափին Եփրատը: Մնացել էին կնկրիք և երեխեքը: Ամեն օր թուրքերը գալիս էին, ինչ որ կար տներում, հավաքում տանում. Էսպես թալանեցին հայերի ունեցվածքը: Աղջիկ ու հարս չմնաց, բոլորին տարան: Գիշերուզօր լա-*

լիս էին գյուղացիք՝ Ասործուն օգնության կանչելով: Վերջը հերթը հասավ մեր մնացած ժողովրդին, քչեցին փարան դեպի Եփրատի կամուրջները: Խարբերդի գյուղերից էլ շար կային, միացան մեր քարավանին: Հասանք Եփրատի կամուրջները<sup>65</sup>, Էսրեղ խուժանը վրա փվավ մեր քարավանին: Չաթաները՝ թուրք դահիճները, ինչ ասեմ, որ հասկանաս, սկսեցին դանակով սպանել ժողովրդին: Որքա՛ն սպանեցին, որքա՛ն փարան՝ չգիրեմ, որք երեխանց լցրին լողկելը, փարան թափեցին Եփրատը: Մնացածին սկսեցին ծեծելով քշել չգիրեմ, թե ուր: Էսպես գնացինք 5 թե 6 օր շարունակ: Խուժանը գալիս ժողովրդին սպանում էր ու թալանում, ով ինչ ուզում, անում էր: Ինչ և մորս մի թուրդ փարավ իր քովը՝ Տիգրանակերտի մոտ: Էլ չգիրեմ՝ ինչ եղավ մնացած ժողովուրդը, վերջը քչեցին դեպի Գյուլջուկ<sup>66</sup> անապարը: Ոչ մի մարդ էլ չազարվավ»:

Ահա ես ինքս վկա եմ: Ես պարզապես ուզում եմ, որ ընթերցողներս իմանան եղ բոլորը: Կկարդամ գրածս ու չեմ ձանձրանա, գոհ եմ, որ թողնում եմ այս ամենը սերունդներին: Ես մի գյուղացի տղա եմ ու պատմելու եմ, թե ինչպես հայ ժողովուրդը մեռավ իր հայրենիքում: Մեկը պիտի լիներ, որ վկայություն տար, թե ինչպես անգութ չաթաներու կողմից սկսվավ ջարդը: Ես, երկու տարի մահվան դեմ կռվելով, ազատվա, երբ ռուսաց զորքը գրավեց մեր Երզնկան: Էն, ինչ որ ես պատմում եմ, միայն մե կաթիլ մըն է: Ինչու՞ ասում եմ մի կաթիլմ, նրա համար, որ ես տեսել եմ միայն մեր գյուղի և շրջակա գյուղերի կոտորածը՝ սպանող՝ կազմակերպված Մրթոյի և նրա օգնականների կողմից:

Իմ սիրելի՛ հայրենակիցներ, ես կպատմեմ 1915, 1918, 1920թթ. եղելությունները, այն, ինչ տեսել եմ անձամբ: Ես պատմության համար շատ բան պիտի անեմ. կորստից փրկելու եմ կարևոր փաստեր անցյալից՝ մեր պատմաբաններին տալով հարուստ նյութեր անցյալի վերաբերյալ:

Ինչպես վերևում ասացի, Մրթոն երդվել էր: Նա իր եղբայրության երդումը չէր մոռացել և մեզ ընտանիքով տեղափոխեց Իբրա-

հիմ աղայի տունը:

## Մեր և աշխատանք

Իմ առաջին պատմությունը իմ ընկեր Դուրսունի և Ֆաթիմայի հետ է կապված. մենք մանկության ընկերներ ենք եղել: Ինչի՞ համար Դուրսունի և Ֆաթիմայի անունն են հիշում, որովհետև նրանք էին ինձ հաղորդում, թե ինչ էր կատարվում դրսում հայ ժողովրդի հետ: Նրանք քրոջս ու ինձ փրկեցին թուրքերու սրից:

Ես և հորեղբորս տղա Մուկուչը ազատվանք ու հայտնվեցինք Իբրահիմ աղայի տանը: Մեր ընտանիքը հինգ հոգուց էր բաղկացած: Իրենց աղջկան՝ Ֆաթիմային, ուզում էին տալ իմ հորեղբոր տղուն՝ Մուկուչին, քանի որ իրենք տղա չունեին: Եվ քանի որ մեր Մուկուչը թուրքացել էր, մուսուլմանին մուսուլմանի հետ ամուսնացնելու իրավունք ունեին: Աղջիկը՝ Ֆաթիման, Մուկուչին ատում էր, իսկ ինձ՝ չափից դուրս սիրում: Իհարկե, ես չէի հասկանում: Ամենից առաջ դուրեկան էր Ֆաթիմայի չտեսնված համեստությունը, անուշ խոսքը և սիրունությունը: Երբ էս բարի աղջիկը բան էր խնդրում, երկու փոսիկներ էին երևում թշիկների վրա, որից էլ ավելի ու ավելի էր դուրեկան դառնում: Մայրիկիս ասում էր. «Բուրի՛ կ'անա, մի՛ մտածեք, կանցնին էս վայր օրերը, խաղաղություն կլինի, մարդիկ իրար կհարգեն որպես մարդ»: Միշտ ուրախ-ուրախ խոսում էր մորս հետ ու հանաք էր անում:

Երկու օր չէր անցել, երբ եկավ Իբրահիմ<sup>67</sup> աղան, թրքուհու շոքեր բերեց մորս ու քրոջս համար. «Հագե՛ք էս շոքերը, որ թուրքի լմանիք: Աշխարեցե՛ք մեր տանը, տեսնենք՝ ինչ կեղևի: Հովհաննես՛ս, վաղվանից արի հետս հանդը աշխատանքի, - հայրիկիս էլ ասաց, - Պողո՛ս, մնա մարագում, դուրս չելնիս, Հովհաննեսը քեզ հաց կբերի»: Ես ամեն օր հաց էի տանում հայրիկիս: Նա էդ մի քանի օրում բոլորովին փոխվել էր: Հայրիկս էնպես էր սպիտակել: Խոսում էր դուրսը եղածի մասին, միշտ հարցնում էր, թե ինչ կա, ինչ չկա: Ինչ որ գիտեի, հաղորդում էի հայրիկիս. «Շատ ուշադիր եղի՛ր, տղա՛ս, տե՛ս՝ ինչ է կատարվում դրսում և ինչ խաբար

բեր, հասկացա՞ր, մարդու բաւ չասես»։ Հայրիկիս բաժին հացը տալիս էր Իբրահիմ աղայի աղջիկը՝ Ֆաթիման։ Նա անունս փոխեց, Ուսուփ դրեց։ Թուրքերեն աղոթք սովորցրեց. «*Քաւի որ լավ կարդալ գիրես թուրքերեն, եթե թուրքերը քեզ հարցնեն օրենքները, կարողանաս պատասխանել։ Ես եղբայր չունեմ, էսօրվանից դու իմ եղբայրն ես, հոժա՞ր ես, Ուսուփ*»։ «*Հա՛, քույրի՛կ, հոժար եմ*»։ Իրիկունը, որ ես ուշանում էի, կանչում էր. «*Արի՛, շուր հորդ հացը տա՛ր, սոված կեղևի հերդ*»։ Էս բարի աղջիկը մեզ համար, մեր ընտանիքի համար ուղղակի հրեշտակ էր։

Գուռը ծեծում էի, հայրիկս բաց էր անում, հարցնում էր. «*Ի՞նչ կենեկիք էսօր, ի՞նչ կա դուրսը, ի՞նչ կենեն թուրքերը*»։ Պատասխանում էի, ինչ որ գիտեի։ Նստում էր հաց ուտելու, բացում էր բոխչեն, մտիկ էր էնում. «*Էս հացն ո՞վ է տալիս, Հովհաննէն՝ս*»։ «*Ֆաթիման, հայրի՛կ, ինչի իրան տխար արեց, անունս փոխեց, Ուսուփ դրեց, ես էլ համաշայնությունս փոխի։ Թուրքերու աղոթքն ու օրենքն է սովորեցնում ինչ*»։ «*Շատ լավ է էնում, տղաս՛, բայց չմոռանաս քո ազգիդ, հասկացա՞ր։ Թեկուզ անցնի մեկ տարի, երկու, երեք, հինգ տարի էլ անցնի, չմոռանաս մեր հայ ազգին։ Ես գիրեմ, որ ես սաղ չպիտի մնամ։ Լսի՛ր, տղաս՛, եղբայրդ, հորեղբայրդ որ գան, դուք պեպք է վրեժնիդ առնեք սրանցից, հասկացա՞ր, մարդասպաններուց և դահիճներուց։ Թուրքիան պեպք է պարտվի, դրա մասին խոսք չկա։ Մեր անմեղ հայ ժողովուրդի արյունը թուրք ջանդարմաներու փորն է։ Դե, գնա՛, բալի՛կ ջան, ինչ որ կասեն, չդիմադրես, լսո՞ղ եղիր, հասկացա՞ր, ես գիրեմ, դու սաղ կմնաս*»։

Տասնհինգ օր էր անցել Երզնկայի ժողովրդի տեղահանումից։ Ո՛չ քաղաքում, ո՛չ գյուղերում մարդ չէր մնացել, բոլորովին դատարկվել էր Երզնկան իր շրջակայքով, քանի որ հայությունը շատ էր։

## Կարինի ժողովուրդը Երզնկայում

Կարինի<sup>68</sup> հարուստ քարավանը<sup>69</sup> թալանելու և կոտորելու ճոխ բաժինը հասավ Երզնկայի շրջակա թուրք գյուղացոնցը: Այդ մասնակի ջարդերը իրականացվեցին Երզնկայի անգութ մուսուլմաններու կողմից: Էսպես եկավ, աստծուն աղաչելով անցավ մեր հողով շալով Կարինի կենտրոնահայությունը: Մեր գյուղացի թուրքերն ալ գնում էին էդ հարուստ թալանին: Ես ականատես եղա անոնց վիճակված բախտին, որպեսզի օր մըն ալ կարողանամ գրի առնել և պատմել անոնց մասին իրականությունը: Վերջը եկավ Էրզրում քաղաքի ժողովուրդը, քարավանը նստել էր Երզրնկայի տակ՝ Ջանբալա-քյորպուսի<sup>70</sup> քովը, շոշին մոտիկ: Թուրքերու տոնն էր՝ Դուրբան քայրամ<sup>71</sup>: Նույն ժամանակ գնում էին քաղաք՝ բան-ման առնելու: Ես էլ էի գնացել քաղաք Ռ-գայի հետ: Ինչպես եղավ, իրար կորցրինք, ես հետ դարձա, գալիս էի գյուղ, հասա Ջանբարակ<sup>72</sup>, որտեղ Էրզրումի ժողովուրդն էր: Կայնա, մտիկ արեցի, որոշի մտնիմ մեջներնին, գնացի կողքի մարդկանց բարև տվի. «Բարև, հագա ը բարև, տղա ջան, հա՛յ ես, որտեղացի՞ ես»: «Հա՛, հայ եմ, էտրեղաց գյուղացի»: «Չերոնք գյուղն են»: «Չէ՛, արսոր են»: «Բանի՞ օր կեղնի»: «Տասնհինգ օր»: «Բա ինչպե՞ս եղավ, որ դու չես գնացել»: «Մեզի տնով պահեցին, հիմա սաղ ենք, մեր գյուղի Իբրահամ աղայի տանը: Չեզի շա՛ տր վնաս տվին, մայրի կ՛»: «Բա չտվին, ու՞ր են մեր տղամարդիկ: Մամահաթունում ջոկին, հավաքին տարան, տեսնինք մեզ ի՞նչ պիտի էղնի: Խաբեցին մեզ, խաբեցին, մենք դուրս չէինք գալիս քաղաքից, որքան չարչարվանք, բան դուրս չեկավ: Վերջը եկան երկու գերմանացի տերտեր<sup>73</sup>, Քրիստոսի անունով, Ասրծո անունով երդում արին. «Չեզի ոչ մի բան չկա, ժամանակավոր թողե՛ք քաղաքը: Բանի որ Էրզրում քաղաքը ռազմական քաղաք է, վերջում անհամություն չի եղնի: Ժամանակավոր գնացե՛ք Երզնկա, պատերազմը վերջանա, նորից գուկաք: Ինչ որ ուրեկիք, շորե-

ղեն, մանր բաներ ունեք, վերցրե՛ք հեղուներդ, կառավարությունը չեզ արաբեք կհարկացնի, նսրե՛ք արաբաներու<sup>74</sup> մեջ, գնացե՛ք: Չեզ հետ կլիսեն 100 ջանդարմա, իսկ չեք տան վեշերը կարող եք լավ կապել, չեք անուն-ազգանունները վրան գրե՛ք, տարե՛ք հայոց ժամը, էնրեղ մարդ կա, բոլորը կդասավորի, երբ որ վերադառնաք, կտրանաք»: Իսկապես որ, քաղաքի մեջ ոչ մի անկարգություն չեղավ, ամեն մարդ իր վեշերը տարավ հայոց ժամը, վերջը բերին արաբեքը ու ամեն թաղի բաժանեցին: Լացով, վայնասունով ելանք քաղաքից, էդ 100 ջանդարմը մեզ հետ խաղաղ եկանք մինչև Մամախաթուն: Քարավանը նստած էր Եփրատի կամուրջի քով, Մամախաթունի շրջանի թուրքերը մեզ կապասեին: Եվ ահա սկսվավ ժողովրդի թալանը, մարդ սպանելը, թուրքերը իրենց հերթին, ջանդարմեքը՝ իրենց: Տղամարդ չմնաց, բոլորին սպանին, որքան աղջիկ տարան թուրքերը, Ասրված գիրտե: Չանդարմեքը ասում էին. «Դե՛ թող գա չեք քեռին՝ ուռուսը, ու չեզ ազարի, գյավուրեն՝ ը»: Մնացածին հավաքին, բերին, տեսնինք ինչ կեղևի վերջը, դուրքա՛ն քեզի»:

-Մնաք բարով, ես գնամ, մե՛ր ջան:

Էդ իրիկունը արդեն պառկելու վախտն էր (ամռանը մենք երդիկն էինք պառկում), մեկ էլ լսեցինք. «Մամա՛ջան, ինչի սպանին, վա՛յ, տարան երեխանց»: Լացն ու կոծը, թուրքերու բռռոցը երկինք էր բռնել, գռռում էին՝ Գյավուրլարա, ու սպանում: Քունս փախավ, էլ չկարողացա քնել, մտիկ էի անում վայնասունին: Ֆաթիման զարթնավ. «Ի՛նչ էս նսրե՛լ, պառկի՛ր, Ուսու՛ի»: Իբրահիմ աղան էլ զարթնավ, նրա կինը. «Էս ի՛նչ վայնասուն է»: «Չիդե՛ս ինչ է, Էրզրումի ժողովրդին թալանում, սպանում են, վա՛յ, ես չեք տուն ու մեսաքը անիծեմ, թուրքե՛ր, հերիք չեղավ չեք արածը»: Մեր գյուղը քաղաքից չորս կմ էր հեռու<sup>75</sup>, պարզ ձեներնին գալիս էին:

Մեր գյուղի քրդերը թրքացել էին, բայց իրենց օրենքը գործածում էին, նամազ չէին անում թուրքերու պես: Կնկտիք երեսները

չէին ծածկում: Նրանց շեյխը ամիսը մի անգամ գալիս էր, իրենց օրենքը քարոզում: Ես իմ ընկերոջը՝ Դուրսունին, ասացի. «Արհ՛, առավոտը շուրս գնանք, տեսնենք՝ ինչ արին էն ժողովրդին»: Ինձ Դուրսունն էր հաղորդում, թե ինչ էր կատարվում հայ ժողովրդի հետ դրսում. բնակիչները գիտեին, թե ինչ էր կատարվում, ու մեկը մեկին էին հաղորդում: Առավոտ Դուրսունն ու ես գնացինք այնտեղ, որտեղ Էրզրումի քարավանի ժողովուրդն էր նստած: Վազելով հասանք Ջանբալա-քյորպուսին: Ա՛խ, Աստված ջան, ինչպե՞ս ասեմ, որ հասկանաք: Մի շտենված արյունալի տեսարան բացվեց մեր առաջ: Աչքովս տեսա. փոսերը լիքն էին մահացածների դիակներով, սակայն ամենասարսափելին հոշոտված դիակներն էին, որոնք ինձ ցնցեցին: Էս սարսափելի տեսարանից ամբողջ մարմինս փշաքաղվեց: Մինչև օրս էլ չեմ մոռացել սարսափելի տեսարանը՝ Էրզրումի ժողովրդի սպանողը, որը տեղի ունեցավ Երզնկայի տակ՝ Ջանբալա-քյորպուսում: Էսօրվա պես հիշում եմ աչքովս տեսածը: Ինչպե՞ս սպանեցին անմեղ ժողովրդին: Երեխանց, կանանց դիակները, կիսամեռելների տնքոցը, սաղ դուրանը՝ էսպես լիքը դիակ: Ես ու Դուրսունը կանգնած մտիկ էինք անում էս զարհուրելի տեսարանին, ոչ մեկս չէր խոսում: Մեկ էլ մի կնիկըմ ձեռքով կանչեց մեզ. «Արհ՛, դուրբան՛, արի՛»: Ես վազեցի դեպի վիրավոր կինը. «Ի՞նչ է, մայրիկ»: «Ես քեզ դուրբան, ես քեզ դուրբան, բալի՛կ ջան, քիչ մը ջու՛ր բեր, խմենք»: Ես վազեցի, ֆասովս ջուր բերեցի, խմեց, օ՛Ֆ արեց ու աչքերը ընդմիշտ փակեց: Ամբողջ մարմինը ծածկված էր դանակի հարվածների հետքերով: Ով որ մնացել էր, տարել էին Քյամախ, մնացածին էլ էնտեղ էին սպանելու: Էսօրվա պես հիշում եմ թուրքերու դաժանությունը, թե ինչպես իրիկունը սկսեցին Էրզրումի ժողովրդին սպանելը: Ժողովրդի ձայնը իմ ուղեղից դուրս չի գալիս: Հիմա էլ, որ հիշում եմ, փշաքաղվում եմ:

Մարդ մտածում է՝ ինչքան լավ կեղնի աշխարհը, եթե չծնվեին էդ թունավոր օձերը: Թուրքիան դարձել էր մարդկային սպանդանոց: Հայերի սպանողի դժոխսային օրեր էին: Եթե այդ օրերին տեղի

ունեցած դեպքերը տեսնեք կինոյում կամ թատրոնում, չեք հավատա: Բառերով անհնար է նկարագրել թուրքական խուժանի և ոստիկաններու բարբարոսությունը: Այս պատմությունը պիտի վկա էղնի ապագա սերունդներու համար:

Առաջին աշխարհամարտի օգոստոսի մեկը հիշատակ եղավ հայերու համար: Կգա ժամանակ, որ մարդիկ իրար կհարցնեն, թե իրո՞ք այդպիսի գազանություն եղել է, թե՞ այդ բոլորը առասպել է: Այո՛, եթե մի քանի դար անցնի, մեր սերունդները դժվար թե հավատան, որ 1915թ. այդպիսի գազանություն եղել է: Այո՛, եղել է, այն էլ ինչպիսի՞: Մազապուրծ եղածներս ստիպված ենք եղել էդ բոլորը տեսնել՝ հայրենակիցների տանջանքները, բարբարոսների ծաղրուծանակը խեղճ ու թշվառ ժողովրդի հանդեպ: Եթե ես գրագետ էղնեի, աշխարհի ամենացավալի ու ամենամեծ գիրքը կգրեի: Այո՛, ովքեր հիշում են 1915թ., ովքեր ազատվել են թուրքերի սրից, կհամաձայնեն ինձ հետ: Թուրք բարբարոսներին և մարդագեյլերին դա հաճույք էր պատճառում: Այո՛, կանցնին տարիներ, դարեր, շատ բան կփոխվի, բայց մենք՝ հայերս, աշխարհի որ մասում էլ էղնինք, պետք է միշտ հիշենք, թեկուզ մի քանի հազար դար էլ անցնի, պիտի հիշենք այն սև բիծը, որ թուրք բարբարոսները թողել են մեր ժողովրդի սրտում:

Մի օր Իբրահիմ աղայի հետ խոս էինք հավաքում, երեք հոգի եկան, բարևեցին:

-Նատենք մե հատ ջիկարա քաշենք,-մստեցին, խոսեցին հայերի մասին, լավից, գեշից, վերջը խոսեցին պատերազմի մասին: Հասակով մեկն ասաց.

-Գիտե՞ք, որ ռուսաց զորքը Էրզրումի տակն է:

Իսկ մյուս թուրքն ասաց.

-Գիտե՞ս ինչ, եթե ուռուսը Էրզրում մտնի, թքելով կխեղդեն Էրզրումի ժողովրդին:

Հասակով թուրքն ասաց.

-Դուք ի՞նչ գիտեք ուռուսի մասին: Ես Լոռիս Մելիքովի<sup>76</sup> կովին եղել եմ, եթե ուռուսը ուզենա, Թուրքիան մի ամսվա մեջ տակնու-

վրա կեննե: Լոռիս Մելիքովի կռվին ես հեծյալ գնդում էի, Ղարսից մեզի մալի պես խառնեց առաջը և հասցրեց մինչև Էրզրումի տակը: Մեր զորքի կեսը գերի վերցրին, շատ մասը վիրավորվեցան: Վերջապես մենք հասանք Դավա բոյնի<sup>77</sup>, կանգ առանք: Տասը օր հանգստացանք, նորից սկսվավ հարձակումը, ուժեղ ճակատամարտ եղավ, մի երեք օր շարունակ ո՛չ առաջ էինք գնում, ո՛չ ետ: Չորրորդ գիշերը խաբար տվին, որ շուտ հետ քաշվենք, ուռուսը Թորթոմի<sup>78</sup> կողմից առաջ է շարժվում, Էրզրումի ճամփեն փակում է: Մեր գունդը ամբողջ գիշերը ճամփա քելեց, մեզի շուտմ տարան դեպի Իլիջա<sup>79</sup>, որպեսզի ուռուսի առաջը առնենք, որ Էրզրումի ճամփեն չփակի: Առավոտ հասանք Իլիջա, ուռուսը դեռ չէր հասել, մենք հարմար տեղ դիրքավորվանք: Ուռուսաց դազախը<sup>80</sup> հասավ մեզի: Սկսեցինք կռվելը մինչև իրիկուն, իսկ մեր հետևակն ու թնդանոթները ետ քաշվան Էրզրումից, թողին առանց կռվի: Մեր զորքը ետ քաշվեց մինչև Մամախաթուն, զինադադար, ապա հաշտություն կնքեցին<sup>81</sup>: Վերջապես պատերազմը վերջացավ: Գիտե՞ք՝ ինչ կա, որ ուռուսները առաջ չեն գա, նրա համար է, որ Ալամանի<sup>82</sup> հետ գործը լավ չի:

Էսպես նկարագրեց Լոռիս Մելիքովի 1878 թ. կռիվը այս թուրքը: Վերջապես թուրքերը գնացին:

Ես անհամբեր սպասում էի, թե թուրքերը երբ պիտի գնան, որ նորությունը հայրիկիս հաղորդեմ. «Գիտե՞ս՝ թագա խաբար եմ քերել»: «Ասա՛, տղա՛ս»: «Գիտե՞ս, հայրի՛կ, էսօր Իբրահամ աղայի մուր երեք թուրք եկավ, խոսեցին ուռուսներու մասին»,-ինչ որ լսել էի ուռուսներու մասին, պատմեցի հայրիկիս: «Շատ ճիշտ է պատմել թուրքը, տղա՛ս, եթե գերմանական ռազմաճակատը չեղնիր, ուռուսները, ճիշտ որ, պետք է շուտ գրավեին Թուրքիան, քանի որ թուրքական ամբողջ զորքը Սարիղամիշի ճակատամարտում ոչնչացավ: Կեսից շատը գերի է, շատ մասը սառել է, թուրք վիրավորներու պատմածով՝ հիվանդությունն էլ մի կողմից: Վերջը ես գիտեմ, որ ինչ կսպանեն վաղ թե ուշ, Մրթոյից և նրա օգնականներից հանե՞ք անմեղ մարդկանց վրեժը: Սիս օս-

յաթս, բալի՛կ ջան, չմոռանաս, չմոռանաս, էսքանը կհաղորդես հորեղբորդ և եղբորդ: Դու փոքր ես, բալի՛կ ջան, աշխարհից ոչ մի բան չես հասկացել, դու չմոռանաս ազգիդ: Լսի՛ր, ինչ որ կասեմ, իմ սասածը ականջիդ օղ արե՛, որդի՛ս: Ես համոզված եմ, որ դու սաղ կմնաս, քանի որ աշխատող արդա ես և դեռ փոքր ես: Մա՛նչս, մա՛նչս, դու շատ խելոք պետք է ըլլաս, որ քեզ պաշտպանես փորձանքներից: Հույսս դու ես, որ հորդ օջախը վառ պահես: Ես քո հայրն եմ, մի բան ունիմ ասելու, Հովհաննե՛ս, քո հավատքը, հայությունը չմոռանաս, ինչ էլ որ լինի: Ինչ որ պատահի, թեկուզ ամուսնանաս թուրք աղջկա հետ, նորից եմ ասում, չմոռանաս քո ազգը»: Հայրիկիս սիրտը վկայում էր, որ մի օր իրեն կսպանեն: Իմ սիրուն հայրիկիս սիրտը վկայում էր, որ ինքը սաղ չպիտի մնա, ու էս մեր խոսակցության երկրորդ օրը Միթոն սպանեց հայրիկիս:

«Մեր ազգը թե՛ անցյալում, թե՛ ներկայում շատ հալածանքներ է արեսել,-ասում էր հայրիկս,-որոնք հին և նոր վերքեր են թողել մեր հոգու մեջ: Ի՛նչ հերոսներ ենք ունեցել Վարդան գորավարի պես, իսկ հիմա մնացել ենք անարեր»: Ա՛խ, կործանեցին հայ ժողովրդի հին անցյալը կրող, փառահեղ քաղաքակրթության, արվեստի կենտրոններից մեկը՝ Երզնկան: Հին պատմություն ունի վաճառականներու և արհեստավորներու քաղաքի՝ Երզնկայի հայությունը<sup>83</sup>: Հայրիկս շատ ցավալի դեպքերի մասին էր պատմում, երկրաշարժերի<sup>84</sup> մասին.«Հինգ, տասը, քսան հազարով մարդ է մահացել մի քանի անգամ, բայց էսպիսի չրեսևկած, չաված աղետը երբեք չի եղել մեր հայրենիքում: Դժբախտություն եկավ հայոց աշխարհի գլխին. Աշխարհում շատ են եղել տեսակ-տեսակ կռիվներ, շատ բանակներ են իրար արյուն թափել, բայց էսպիսի բան չի եղել երբեք, ոչ մի պետություն իր հպարտ ժողովրդի հետ այսքան դաժան չի եղել: Մարդկության պատմության մեջ նման դաժանության որևէ դեպք չի արձանագրված: Հռոմներու ժամանակ էսպիսի բան չի եղել, արաբներու ժամանակ ալ չի եղել, սելջուկներու ժամանակն ալ, երբ թուրքերը գրա-

վեցին մեր հայրենիքը, նորից չի եղել էսպիսի դեպք: Ծիշյո է, հայերու թալան եղել է մի քանի անգամ, սակայն սուլթան Համիդի կոտորածի օրոք մարդկային գոհերի թիվը շատ քիչ է թվում՝ համեմատած էս չարակենց դաժանության հետ, որը եզակի է: Տեղահասն անել անմեղ ժողովրդին, կազմակերպել սպանող ու կոտորել ոչխարի պես, -որը զարկում էր գեղնիկն հայրիկս, -չէ, դու, գազա՛ն, կպարտվի՛ս: **Նախասխան երթա խարմազ**»: Սիրուն հայրիկս իրան-իրան խոսում էր էսպես, դառնում էր ինձի և լավ համբուրում: Հայրիկիս խոսքերը ոսկի էին, իրոք որ պատժվան երկու գլխավոր գազանները՝ Էնվերն ու Թալեաթը: Մեկը՝ Բաքվում, հայ աղջկա ձեռքով<sup>85</sup>, մյուսը Գերմանիայում՝ հայ տղու ձեռքով<sup>86</sup>:

### **Հայրիկիս, մայրիկիս, քրոջս վերջին օրը, վերջին առավոտը, վերջին արևը մեր հայրենի գյուղում**

Ես ու իմ ընկեր Դուրսունը աշխատում էինք հանդում, արտ էինք քաղում: Էս Դուրսունը մի հատ դաբանջա ուներ. «Արի տեսնենք, Ուսու՛ի, ով լավ նշան կհսիի», - էսպես խաղում էինք, ֆասս վերցրեց, տարավ մի քիչ հեռու դրավ ու նշան բռնեց: «Չէ՛, մի՛ հսիե՛»: Ես վազեցի, որ ֆասս վերցնեմ, Դուրսունը կրակեց, դիպավ աջ թևիս արմունկին: «Վա՛խ, բան չկա, Ուսու՛ի ջան, ես մասխուո՞ց<sup>87</sup> չարի, ես ներողություն», - մի շորքմ վառեց, բերավ, դրավ վերքին ու կապեց: Ես չէի աշխատում, թևս կապած պռոկել էի: Չիղեմ՝ որքան ժամանակ էր անցել, մեկ էլ ասաց. «Ուսու՛ի, Ուսու՛ի, արի՛ գնանք գյուղ»: «Ինչի՞՞ համար գնանք գյուղ»: «Չենքի ջեն եկավ գյուղից, քելե՛, մի քիչ առաջ հիևզ չիավոր գնացին գյուղ»: Գնացինք գյուղ, ես ուղիղ գնացի մեր տունը. մայրիկս, մեծ քույրիկս ու փոքր քույրիկս նստել գուլային: Մայրիկս ինձ համբուրեց. «Գիտե՛ս, տղա՛ս, հայրիկիդ սպանեցին»: Չանդարմամ եկավ, մորս ասաց, որ հավաքվենք, պետք է գնանք: Մայրիկս քրոջս ասաց. «Գնանք, Եփրատը թափվենք, էլ ու՛մ ենք

*պեպք»*: Բայց քույրս չհամաձայնեց: Ջանդարման եկավ, մորս ասաց. «*Դե՛ շուր, դու՛րս արեք*»: Ելանք գնալու, հայաթից դեռ դուրս չէինք եկել, Ֆաթիման վազեց ինձի ու քրոջս բռնեց, պռռաց ջանդարմայի վրա. «*Էս երեխանց ու՞ր էս տանում, էս տղեն իմ եղբայրս է, անունը փոխել, Ոսուփ եմ դրել, իսկ էս փոքր աղջիկն էլ քույրս է, չե՛մ տա*»: Ջանդարման ասաց. «*Ուզում էս՝ տա՛ր, քյուշուկ խանում, մի՛ նեղանար*»: Մայրիկս վազեց մեզ վրա. «*Ես իմ երեխանցը չեմ տա, ես որտեղ որ կմեռնեմ, թող իրանք էլ հեղու մեռնին*»: «*Լավ,-ասաց ջանդարման,-դու պեպք է մեռնիս, իսկ երեխանքդ ինչու՞ մեռնին*»: Ու մորս ձեռքից բռնեց, քաշեց ետ: «*Մի, մայրի՛կ ջան*», -ասի, վազեցի մորս քով, գլուխս թաղեցի մորս գրկի մեջ, չեմ ուզում բաժանվել մորիցս, ձեռնով մեկ լալիս եմ, համբուրում եմ մայրիկիս շորերը, քաշում եմ ինձի մայրիկիս, իմ մանկական սիրտը վկայում էր, որ էլ չպիտի տեսնեմ անուշիկ մայրիկիս, անգին մայրիկիս: «*Հերի՛ք է գոռաս*», -վերջապես համբուրվում եմք մայրիկիս ու մեծ քրոջս հետ ու բաժանվում եմք հավիտյան: Մայրիկս ինձ գրկեց, ձեռքերիցս բռնեց, համբուրեց, ձեռքերս առավ իր դողդոջուն ավերի մեջ, վերջին խոսքերն արտասանեց արտասուքով. «*Մի, իմ Աստվա՛ծ, էրեխեքս ի՞նչ պիտի եղնին,-ծնողական սրտի խորին ցավով ասաց,-մնացե՛ք բարով, մնացե՛ք, բայիկնե՛ր, բայքիմ դուք սաղ մնաք*»: Ես երբեք չեմ մոռանա այդ օրը, իմ մայրիկի վերջին խոսքերը. «*Մի, իմ բայիկնե՛ր, ի՞նչ պիտի եղնի չե՛ր վերջը...*»: Եվ բաժանվեցինք... Անիրավները տարան մեծ քրոջս ու մայրիկիս, էսօրվա պես հիշում եմ: Դաժան հիշողություն մանկությունիցս: Էդ օրը մեր գյուղից սպանեցին հայրիկիս, քոռ Շարամին, Մայնուսի մարդուն՝ Համբարձումին, և տասը հոգու մեր հարևան գյուղից՝ Վերին Ջութուկից: Սպանողը կատարվեց Մրթոյի ձեռքով մեր գյուղի բախչաներու տակը: Էդ օրը հայրիկիս սպանեցին, մայրիկիս ու քրոջս տարան: Այլևս ոչինչ չէր մնում, ես կորցրի ծնողներուս, աշխարհում ինձ համար ամենաթանկագինը, իմ սիրտը, այն, ինչ սիրելի էր

ինձ համար: Առաջին գիշերն էր, որ ես մենակ ու անօգնական պառկել էի երդիկին, նոր զգացի, որ ես անտեր եմ, էլ ո՞ւմ եմ պետք: Ամեն ինչ վերջացավ, աշխարհն ինձ համար դատարկվել էր: Գիշերը քունս չէր գալիս, հենց որ աչքերս փակում էի, առաջս էին գալիս հայրիկիս ու մայրիկիս քաղցրիկ դեմքերը: Դահիճ Մրթոն իր գործակիցների հետ համարյա թե ամեն օր գազանութ-յուններ էր կատարում:

-Էս ի՞նչ աշխարհ է, ինչու՞ սպանեցին հայրիկիս, ինչու՞ և ո՞ր տարան մայրիկիս ու քրոջս: Հիմա որտե՞ղ եք, ա՜խ, իմ անուշ մայրիկ, անգին քույրիկ,-քանի գնում էր, էնքան լացս ավելի էր գալիս:

Մեկ էլ խանումս ձեռն է տալիս մարդուն.«Իբրահիմ, էգուց էս տղուն տա՛ր, թող տանեն, գլուխս տարավ իրա լացով»: Մեկ էլ Ֆաթիման եկավ.«Ի՞նչ է, մայրի՛կ, ինչու՞ ես բռռում էս տղու վրա»: «Ի՞նչ պիտի էղնի, լալով գլուխներս տարավ, թող վաղը հերդ տանի»: «Իսկ եթե քու հորդ ու մորդ սպանեին, դու ի՞նչ կանեիր, մայրի՛կ, վայ թե կուրահասնայիր, հա, լավ բան չես անում, մայրի՛կ»: Ֆաթիման եկավ քովս.«Գիրեմ՝ ինչու՞ գուլաս, եղբա՛յր ջան, ցավալի է հորից, մորից բաժանվելը, ի՞նչ անենք էդ անաստված թուրքերու էրածը աշխարհով է: Արի գնանք քովս, քնի,-ջուր քերեց, լվացվա,-արի՛ քիչըմ հա՛ց կեր, քիչըմ հանգստ-տալի՛ր»: «Հաց չես ուտում, քույրի՛կ»: «Լա՛վ, արի՛ քնի»:

Էստեղ եմ ասում՝ յարան տիրոջը ցավ կուտա, մինչ էդ ես կարծում էի, թե սուտ է էս բոլորը, ինչ-որ մի բան է, կանցնի, քանի որ իմ ծնողներուս չէին սպանել, ու ես ինձ հանգիստ էի զգում, կարծես ոչ մի բան չէր պատահել մեր գյուղի ժողովրդի հետ: Իսկ իրականում չկար մեր գյուղի ժողովուրդը, կային թուրքերը, գազան թուրքերը, որոնք հոշոտել էին բոլորին, ամբողջ գյուղից սաղ էր չորս երեխա: Ես նոր զգացի, որ մենակ եմ, չկար հայրիկս, անուշ մայրիկս, քույրս, էլ ու՞մ եմ պետք: Ես վախիցս էլ չէի լալիս, գնում

էի հայրիկիս թաքնված տեղը՝ մարագը, նստում, լալիս էի, հիշում հայրիկիս խոսքերը. «*Ես սաղ չեմ մնա, արդա՛ ջան, հորեղբայրդ, եղբայրդ, որ գան, մեր վրեժը կհանենք*»: Ինչպիսի տանջանքներ էի ես կրում: Ծնողներու կորստի համար ես չէի կարող լալ, համարյա ամեն բույս ստիպված էի ճնշել մանուկ սիրտս: Անողոր դահիճները սպանեցին սիրելի հայրիկիս, և նույն օրը բաժանվեցի անուշիկ մայրիկիցս ու մեծ քրոջիցս: Ես մենակ նստել էի մարագում. երեկ էս ժամին խոսում էի հայրիկիս հետ, իսկ էսօր չկա. «*Ա՛խ, հայրի՛կ, հայրի՛կ, անուշի՛կ հայրիկ*», - աշխարհում ծնողից անուշ բան չկա, չկա ու չկա: Զնում էի թե զարթնում միշտ հայրիկիս, մայրիկիս ու քրոջս էի հիշում, ինձ չէի կարող զսպել, որ չլամ, չէի կարող մոռանալ ծնողներուս: Կարծես մի տասը տարի էր, որ բաժանվել էինք իրարից, դեռ երկու օր էլ չկար, իսկ իմ ծնողների կարոտը գիշեր ու զօր սաստիկ տանջում էր ինձ, ամեն վայրկյան մտքիցս չէին ելնում. Սկսում էի լալը: «*Անգի՛ն հայրիկ, մայրիկ, ես չե՞զ սիրում եմ, չեմ կարող մոռանալ*», - լալիս էի ես, բայց վիրավոր սիրտս, տնքացող սիրտս լալով չէր թեթևանում: Նստում էի հայրիկիս մարագը, լալիս էի, չէի կարող մոռանալ. գոնե մե ելքըմ գտնեի:

Երկրորդ օրը, ձեռքս վիրավոր, ես նստել էի դուրսը՝ նարդվանների վրա, մտածում էի իմ ծնողներու կորստի մասին, մեկ էլ հայտնաբերեցի մտավ Բյալփաշիկը՝ արյունախում Մրթոյի օգնականը՝ նրա մեծ եղբոր տղան, որը մոտ քսան տարեկան էր. «*Արի՛ էսպեդ, Պողոս քյահայի՛ արդա*»: Ես մոտեցա, էնպես ինձ հարվածեց, որ ես փռվա գետնին: «*Ա՛խ, մայրի՛կ*», - ճչացի ես: Ես գազանը չոքավ վրես, դանակը հանեց, ասաց՝ յա, ալլահ: Ուզում էր ինձ մորթել: Ձենիցս Ֆաթիման դուրս վազեց, տեսավ, որ ես փռված եմ, Փաշիկն էլ չոքել է վրես, էլ չսպասեց, համալը վերցրեց ու տու՛ր թե կտաս: «*Վա՛խ, - ասաց Փաշիկը ու թողեց ինչի,-ի՞նչ ես անում, ախմա՛խ, խո չես խելոռե, աղջի՛*»: «*Իսկ դու խելո՞ք ես, ինչի՞ զարկիր արդուն և ուզում ես մորթես մեր հայտնի մեծ: Ես հիմա քեզ*

պիրի մորթեմ, րե՛ս ինչ լավ կեղևի», -վազեց ներս, դանակն առավ, դուրս եկավ, հետևից էլ Ֆաթիմայի մայրը. «Ի՞նչ է, ի՞նչ է, ա՛յ աղջիկ»: «Ի՞նչ պիտի էղնի, մայրի՛կ, տեսնո՞ւմ ես էս քյաչավ շանը, ուզում էր Ուսուփին մորթել, էն էլ մեր հայաթի մեջ: Դե շուտ հեռացի՛ր, չասես, թե ես աղջիկ եմ, չեմ կարա քեզ մորթեմ, օձի՛ ծնունդ»: Ֆաթիմայի մայրը, թե. «Ա՛յ, բալամ, դուք ի՞նչ իրավունքով եք մրել մեր բակը և ի՞նչ իրավունք ունեք էդպիսի անշնորհքություն անել»: «Դե դու՛րս անցի, մյուս անգամ չհամարչակվիս մեր հայաթը մրելիս: Ասլան էս դարչեկ, սովա՛ծ քյաչաւ, ինեղճ հայերու վրա: Լսի՛ր, քյաչա՛լ շուն, էս տղու մե մազը պակսի, ես քու արյունը կիսեմ, դե շուտ կորի՛ր, հասկացա՛ր: Դե շուտ դու՛րս անցիր, ինչ ինքից մի՛ հանե, թե չէ ես քո հետ ուրիշ րեսակ կիտսիմ, հայաթից դուրս կնետրվիս որպես սարկած շուն»: «Ես շատ շնորհակալ եմ, քու՛ր ջան, միևչև կյանքիս վերջը ես քեզ պարտական եմ»: Աչքս ընկավ իմ քրոջը՝ Հազարվարդին. «Դու, դու, իմ սիրելի՛ քույր, փրկեցիր եղբորս կյանքը», -ասում էր ու համբուրում Ֆաթիմային: Սիրո՞ւմ քույրիկ, սև աչեր, որքա՞ն սիրունություն ու քնքշություն կար մեր հանդեպ:

Հազարվարդ էր քրոջս անունը, ավել անունը Հազար էինք ասում: Իսկապես, որ Հազարվարդ էր, էնքան սիրում էր, մազերը՝ ոսկեգույն: Ես չիղեմ՝ ինչպես անցավ էդ օրը, ինչպե՞ս քնա, միայն առավոտը ինձ զարթնեցրին, թե՛ ե՛լ, հա՛ց կեր, որ գործի երթաս: Դուրսունը եկավ քովս. «Ինչպե՛ս ես, խո թեղ չի ցավում»: «Չանդամն եղևի թեւ, ու մ՛ է պետք, ցավում է, թող ցավի, ինչքան կուզե: Դուրսու՛ն, էսօր ես չեմ կարող գալ, շատ թույլ եմ, թեւ ցավում է, զնա՛, էսօր մեռնակ աշխարհի՛»: Ֆաթիման եկավ, հաց բերեց. «Հա՛ց կեր, գույնը գցել ես, հաց չես կերել երեկվանից, սոված ես»: Քույրս՝ Հազարը, եկավ քովս նստեց: Միտքս փոխեցի. «Վերցնեմ քրոջս, երթանք Եփրատը նետրվենք, ազատվենք, մորս նպատակը կատարվի»: Քրոջս ձեռքից բռնած՝ գնացի հորս

գերեզմանի վրա լացի, մեկ էլ երկու թուրք եկան, անցան-զնացին դեպի Եփրատը: Նորքյաղի թուրքերն էին, գնում էին, Եփրատի բերանը նստում, Եփրատի բերած հայերու դիակները հանում, ստուգում էին, թե վրեժը ոսկի կա՞, թե՞ չէ: «Արհ՛, քո՛ ը ջան, երթանք ընկնիք, ազարվիք»: Գնացինք դեպի Եփրատը, տեսանք Ֆաթիման ջուր է տանում. «Էս ո՞ր կերթաք»: Ի՞նչ ասեմ, լացս եկավ, լացի. «Գնանք Եփրատը ներսեր, ազարվենք: Շար շնորհակալ ենք քեզնից, քո՛ ը ջան»: «Էդ ի՞նչ չար բան էս մտածել, ես գիտեմ՝ դու խելոք տղա ես, լավ բան խոսիր, որ ասեմ աֆարիւ: Մեկ էլ էդպիսի բան չլսեմ, դե արհ՛, էրթանք տուն: Դու կարարյալ խելառ ես: Ի՞նչ կշահեիր Եփրատը ընկնելով: Չեզ պես օրական հազարներն են ընկնում: Դու իմ վերաբերմունքից գոհ չե՞ս: Ես որքա՛ն սիրում եմ քեզ ու քրոջդ և ցանկանում, որ մի օր ազարվեք: Ես կպաշտպանեմ ձեզ, քանի ես կամ, իսկ ինչ վերաբերում է քո ծնողների մահին, դա իմ ուժերից վեր էր, ես չէի կարող օգնել»:

Չգիտեմ՝ ինչպես շնորհակալ լինեմ էս բարի հրեշտակ աղջկան: Դժբախտության դեպքում հանդիպում ես լավ մարդու: Էդ բոլաեին կարծես աշխարհը բռնն է, մոռանում ես բոլոր ցավերդ: Երկրորդ անգամն է, որ քրոջս ու ինձ ազատում է մահից այս հրեշտակ աղջիկը: Հորս սպանեցին, մորս ու քրոջս տարան, ես բոլորովին հիասթափվա ապրելուց: Ես որոշեցի՝ լավ է մեռնել, քան ապրել, որոշեցի քրոջս հետ ընկնել Եփրատը և ազատվել այս դառը աշխարհից: Ֆաթիման օգնության հասավ այդ չար ժամին. «Քույրս ու ես շար շնորհակալ ենք, քո՛ ը ջան, ինչ որ ասես, մենք կլսենք քեզ»: Ես մորս քիչ էի տեսել, կարոտում էի թե՛ մորս, թե՛ հորս: Ես կարծում եմ, որ հարազատ մայրս Ֆաթիմայից առավել մեզ սիրել չէր կարող: Ահա երկրորդ մայրս դարձավ Ֆաթիման: Այն օրից անցել է 53 տարի, իսկ Ֆաթիմայի անմոռանալի պատկերը մնացել է իմ հոգու մեջ: Չեմ կարող մոռանալ նաև իմ հայրիկի խոսքերը, հիշեցի, որ ասում էր, որ մի օր կազատվենք

զազան թուրքերի բռնություններից.«Տղա՛ ջան, այս մրրիկն էլ կանցնի: Հայերս շատ ենք տեսել այսպիսի փորձանքներ: Հայերի փրկությունը միայն ռուսների գալով է: Էդ ժամանակ հավատա՛, բալի՛ կ ջան, որ մենք իրավունք կունենանք ապրելու»: «Իսկ ե՞րբ պետք է տեսնենք այդ օրը, հայրի՛կ»: «Ես գուցե չտեսնիմ, բալի՛ կ ջան, բայց դու՛, դու՛, անպայման կտեսնես,-իմ հայրիկը ձեռքը պարզեց դեպի արևելք,-երբ ռուս փրկարարը ձեռքը մեկնի մեզ, առանց նրա մենք ոչինչ անել չենք կարող: Ես հուսով եմ... հույս ունեմ, որ մեր ժողովրդի դարավոր իղջը կկատարվի, և մենք կազատվենք այս դահիճ թուրքերից», -հավատով լի էս սուրբ խոսքերը ասաց իմ հայրիկը, բայց ավստու, որ չտեսավ:

Ահավոր իրադարձությունները հասան Երզնկայի քաղաքներն ու գյուղերը, տեսե՛ք, թե ինչ արեցին բարբարոս բորենի թուրքերը. իսկ ուրիշ ի՞նչ կարելի էր սպասել աշխարհի ամենահետամնաց ու վայրենի ազգից: Իրենց ճանապարհիմ ամեն ինչ ոչնչացնելով (այն, ինչ հայերին էր պատկանում, ոչնչացնում էին մորեխի պես)՝ երկուտոմանի զազանները կողոպտում, գնդակահարում, ոչնչացնում էին այն, ինչ որ մեր ազգին էր պատկանում: Աչքերս բացելով ծաղիկ հասակում տեսա ահավոր կոտորած, զինված ավազակախմբերը թալանում, հրդեհում էին տները, իրենց շենքերի վրա սպանում հայերուն: Եվ էսպես հայերուն պիտի սպանեին, թալանեին միայն նրա համար, որ հայ են:

Մայնուր արքայի ժամանակ իր երեք երեխանցով գյուղից անհայտացել էր: Ի՞նչ էր արել, Եփրատի բերանը փորել էր, գնացել, էնտեղ թաքնվել էր, էնպիսի տեղ էր փորել, որ ինչքան ման գային, չկարողանային գտնել: Երբ իմանում է, որ Մրթոն իր մարդուն սպանել է, երրորդ օրը՝ գիշերը, գալիս է Մրթոյենց տուն, որ ամուսնու վրեժը առնի, բայց դուռը բանալ չի հաջողվում, շատ է չարչարվում, վերջը մեկ կճուճ եղ է վերցնում, իր մեծ տղու՝ Կարապետի հետ քիլարի մեջ ինչ որ կա, ջարդում է: Առավոտ որ էդ բոլորը տեսնում են, Մրթոն անմիջապես հասկանում է, որ էդ Մայ-

նոսի գործն է: Իրենց գյուղը ինչքան տղամարդ ու կնիկ կա, հավաքում է, գալիս է մեր գյուղը և մեր գյուղից էլ սաղին հավաքում՝ աղջիկ, տղա, տղամարդ ու կնիկ և ասում. «*Գիտե՞ք, ժողովու՛րդ, ինչ կա, էս գիշեր Մայնոսը եկել մեր տունը թալանել է: Ի՞նչ պետք է անենք: Անպարճառ պետք է գրնենք Մայնոսին: Նա արտերու մեջ պետք է էղնի: Յորենի բոլոր արտերը պետք է սրուզենք*»:

Մրթոն ժողովրդին հավաքեց և տարավ դեպի վերին հանդը: Ե՛հիշտ որ, Մայնոսը վերի հանդի կողմն էր՝ Եփրատի բերանը: Ամբողջ օրը տակնուվրա արեցին դաշտերը, Մայնոսին չգտան, փոխարենը բերին տասներկու աղջիկ Վերին Չուբլուզից: 15-16 տարեկան էին, շատերը վիրավոր էին: Մրթոյի արվավի<sup>88</sup> ժամանակ գտան, հավաքեցին, բերեցին միայն տասներկու աղջիկների, բայց Մայնոսին չգտան: Ի՞նչ էր աղջիկներու դրությունը, վրայի շորերը պատռված, կիսամերկ, մեկի վիզը կտրված էր, լաց էր եղնում: Իմ առաջ բացվեց մի ցավալի տեսարան. աղջիկները գրեթե մերկ, մի շապիկով էին, ծեծված, ջարդված, վիրավոր, մարմինները կապտած: Ինչպե՞ս ասեմ, որ հասկանաք, անհնար է բացատրելը: Մինչև հիմա ես չեմ կարող մոռանալ էդ գազաններու արարքները, որ միտս ընկնում են, էդ տասներկու ծաղիկ աղջիկները, ես կարծում եմ, թե իմ աչքի առաջն են: Բոլորն իրար վրա հավաքված դողում էին, ամաչում էին մարդկանց երեսին նայել: Կարծես թուրքերու արարքներու համար իրենք էին մեղավոր: Ես մոռացա ծնողներուս կորուստը, երբ էս վիճակում տեսա անմեղ աղջիկներուն: Տարան, լցրին էն մարագը, որտեղ որ հայրիկս էր մնում: Չիդեի՝ ինչով օգնեի էս անմեղ, հրեշտակ աղջիկներուն, վերջը որոշի՝ գոնե հացով: Ես երեք անգամ գիշերը հաց գողացա, տարա աղջիկներուն. ո՛չ ես էի խոսում, ո՛չ էլ աղջիկները: Վերջին անգամ, որ հացը տարա, նրանցից մեկը հարցրեց. «*Տղա՛ ջան, դու հա՛յ էս*»: «*Հա՛,-պատասխանեցի ես,-ես մեր գյուղի Պողոս քի-հայի տղեն եմ՝ Հովհաննեսը*»: «*Վա՛յ, Հովհաննես՛ս ջան, դուք մե-*

գի բարեկամ եք», -ասաց աղջիկներից մեկը:

Ճիշտ որ, ես նրանց տանը խաղաղ ժամանակ եղել եմ, հայրիկիս առաջին կինը էդ աղջկա՝ Աղունիկի մորաքույրն է էղնում: Այդ օրը ամբողջ գիշերը չքնեցինք, նստեցինք աղջիկների հետ մեր ծնողներու կորուստը իրար պատմեցինք ու լացեցինք: Աղունիկը թե. «Դու ասե՛, եղբա՛յր Հովհաննես, հիմա ի՞նչ անենք, որ էս փանջանքներից ազատվենք, ես գիտեմ, որ առավուրյան մեզ պիտի սպանեն»: «Հոգուդ մեռնիմ, քույրի՛կ ջան, ես էլ քեզի պես, ի՞նչ կարող եմ ասել, ինչո՞ւ՞ կարող եմ օգնել, ես էլ մի գերի եմ, ինչպես դուք»: Լաց եղանք, հանգստացանք, հարցուց մերոնց մափին, մայրիկիս, մեծ քրոջս: «Էսօր չորրորդ օրը կեղևի, ինչ հայրիկիս սպանին, մորս ու քրոջս փարսև,- ու հարցրի,- քու՛յր ջան, ինչպես եղավ, որ քարավանից եր ընկաք»:

-Ա՛խ, Հովհաննես՛ս, մի՛ հարցրու, դե հիմա լսե ինձի... Իրիկունը եկավ Մրթոն իր օգնականներով, հրամայեց, թե առավոտ պետք է դուրս գանք գյուղից: Վայնասունն ընկավ գյուղի մեջը, մեր գյուղը մեծ էր, ժողովուրդը խառնվել էր իրար, փաթաթվում էին, լաց էին էղնում: Լալով վազում էին ժամ՝ Աստծուն աղաչելու, որ մեզ փրկե: Առավոտը հավաքին գյուղացունց, տղամարդ համարյա չկար: Երբ որ ելանք տնից, մայրիկս սկսեց լացը, թե ես չեմ հեռանա իմ տնից: Մենք էլ հավաքվել էինք մոտը, լալիս էինք մեր դռան քովը, չէինք ուզում հեռանալ մեր տնից: Ջանդարմեքը ժողովրդին ծեծելով քշում էին գյուղից դուրս, մեծից փոքրը լալիս էին: Մեկ ջանդարմա մը եկավ դեպի մեզի... «Ի՞նչ եք նստել»: Մայրիկս թե. «Ու՞ր երթամ ես իմ երեխասնցով, ես դուրս չեմ գա փնիցս, գու՛զեք, սպանե՛ք, իմ մարդուս փարսևն ասկյար, ես էս երեխասնցով ու՞ր երթամ»: Ջանդարման հարձակվավ մորս վրա. «Տանում եմք, որ սպանենք,- ու սկսեց ծեծել մայրիկիս,- դու կարծում ես՝ սա՞՞ղ պիտի թողնենք, փանում եմք, որ սպանենք»: Մենք էլ խառնվանք ժողովրդին, լալով, պռռալով ձեռքներս բարձրացնում էինք վերև, աղաչում էինք Աստծուն, որ փրկե մեզի, մեծից փոքր լալիս էինք:

Գժվար է նկարագրել, եղբա՛յր Հովհաննես, թե ինչ եղավ գյուղում, բոլորը անխտիր լաց էին լինում: Բոլորին՝ տղամարդկանց, կանանց, երեխանց, ծերերին, ծեծելով ջանդարմեքը դուրս հանին գյուղից: Շատերուն, ով որ դիմադրում էր, սպանին գյուղում: Գյուղից դուրս հանին մեզի, իսկ խուժանը պատրաստված սպասում էր, հարձակվավ ժողովրդի վրա: Ով ինչ ուզում էր, անում էր, ինչ գլուխդ ցավացնեմ: Ելան գելերը ընկան ոչխարի մեջը, Հովհաննես՝ ս ջան: Սկսին մեզի ջարդելը: Քսան աղջիկներու քաշելով տարան արտերու մեջ, ինչ որ կուզեին, էրին, հետո թողին, գնացին: Մնացինք արտերու մեջ մինչև էսօր:

-Բա ի՞նչ էիք ուտում, քույրի՛կ ջան:

-Յորեն, բանջար, գարի, իրիկունն էլ հավաքվում էինք, մեկ տեղ պառկում:

-Քույրի՛կ Ադունիկ, դու ասացիր, որ քսան աղջկներուդ տարան, բա յոթը ու՞ր են:

-Յոթին դահիճները սպանին, եղբա՛յր, չէին հանձնվում, հետո մի կերպ տարանք մայր առուն, թաղեցինք: Հողը ձեռքերով լցրինք: Սպանվողներից մեկի քույրը նա է՝ Վարդուհին: Երեկ առավոտ տեսանք, դեպի մեզ ժողովուրդ է գալիս՝ հանդի մեջը տարածված: Եկան մեզի բռնեցին, Մրթոյին ձեն տվին, եկավ, մեզ նայեց, իսկական գել, մարդագազան: Հարցուց՝ դուք որտեղից եք: Մենք էս գյուղացի ենք՝ Վերին Չութլուքցի:

-Էլ ուրիշ որտե՞ղ մարդ կա, չիդե՞ք:

-Չէ՛, չիդենք ուրիշ մարդու տեղ:

-Լարադիգեցի Մայնոսին չե՞ք տեսել էստեղաները:

-Չէ՛, չենք տեսել:

Մի հոգի կանչեց մեզ մոտ ու ասաց.«Մրանց նայի՛, րեղ չերթան»,-ու ինքը նորից գնաց արտերու մեջը՝ Մայնոսին ման գալու: Մինչև իրիկուն ման եկան, բայց ուրիշ մարդ չգտան: Մեզի բերին ձեր գյուղը, տեսնինք՝ մեր վերջը ինչ պիտի էղնի: Հովհաննես՝ ս, էս

աղջիկները ինձի չեն լսում: Ասում են, արեք երթանք, թափվենք Եփրատը, ազատվենք էս տանջանքներից, ինձի չեն լսում: Մեկ է, առավոտ մեզի պիտի սպանի Մրթոն, լավ չի, թող Եփրատը սպանի: Հոգու՛ դ մատաղ, Հովհաննես՛ս, էս ի՞նչ գույում էր, որ եղավ մեր ժողովրդի գլխին: Ի՞նչ մեղք էինք արել, որ էսպես վարվեցան: Ես մտածում եմ, թե մեր գյուղի ժողովրդին ի՞նչ արին, Աստված ջան, ի՞նչ մեղք էինք գործել, որ էսպես արեցին: Քոռանա՞մ ես, ի՞նչ եղավ մայրս՝ երեք երեխանցով. փոքր եղբայրս երեք տարեկան էր: Երբ որ ելանք տնից, մայրիկս սկսեց լացը, մենք էլ հետը:

Առավոտ մենք գնացինք հանդը՝ խոտ քաղելու, մեկ էլ տեսանք Մրթոն աղջիկներուն խառնել է առաջը և տանում է Բալբակ<sup>89</sup> սպանելու: Մրթոն՝ հայերու մահուն վարպետ, ինչպես թուրքերն էին ասում, հայու դասաբ: Կատարյալ մի հրեշ էր Մրթոն: Թուրքերու առաջ պարծենում էր. «*Ես հազար հայր գյավուր եմ սպանել է՛ս չեռքերով*»: Մրթոն մեր շրջանի ամենաարյունարբու դահիճն էր: Նա էլ, իր օգնականներն էլ զբաղված էին հայերուն գնդակահարելով, խեղդամահ անելով. «*Մենք մուսուլմաններ ենք, ոչ մի գյավուրի չիևսայենք, ամենադաժան չեով սպանենք: Ես հրաման եմ ստացել հեքուլյաթից*<sup>90</sup>՝ փոքրից բռնած միևչև մեծ հայուն չիևսայել»: Մուսուլմանների արյունոտ հրամանով Մրթոն հերթական հրեշավոր հանցագործություններն էր կատարում: Օր չէդնիր, որ նա մարդ չսպաներ, վեց գյուղի դահիճ էր, երդված վրեժ էր լուծում հայերից: Մրթոն նման էր էն գիշակեր մեծ գազանին, որ գոհի արյունը խմում էր, հետո էլ ուտում, թողնում, հեռանում: Այնուհետև նորից էր սկսում որսը, գտնում էր... Ախր հարցն այն էր, որ մեր վեց գյուղերը հարևան էին Մրթոյի գյուղին. ով պահված էր, և ով թաքնված էր, նրա օգնականները հայտնաբերում էին: Երկու ամիս օր չէդնիր, որ Մրթոն մարդ չսպաներ: Բայց մե օրն նրան լավ խայտառակում է իմ եղբոր խանումը: Եղբայրս՝ Հարությունը, Բալբեկ գյուղում Հասան չաուշի մոտ էր: Եղբայրս դռան մոտ կանգնած է լինում, երբ մեկեն ձիով հայտնվում է Մրթոն, ուզում է՝ թրով սպանի եղբորս: Խանումը դուրս է վազում,

տեսնում է, որ գազանը ուզում է թրատել Հարությունին, պոռում է. «Ի՞նչ ես անում ախմախի մեկը: Էս տղուն, որ սպանել ես ուզում, ինչ է, աշխարհը էլ հայ չկա<sup>6</sup>: Էնքան հայ կա, որ վերջը քո պատրիժը կսրանաս հայերու ճեռքով»: Եվ իրոք որ, այդպես էլ եղավ:

### **Դաբախանայի<sup>91</sup> հայ զինվորներու սպանող**

Եվ այսպես, հայրենակիցներ, անընդհատ սպանո՞ւ ու սպանո՞ւ: Ահա մի ուրիշ ցավալի տեսարան: Ես եմ վկա, միայն ես, այո՛, ե՛ս, թե գազաններն ինչպես էին սվինահար անում Երզնկայի դաբախանայի հայ արհեստավորներուն, բերում, լցնում էին Մրթոյի տունը ու հետո հանում, սպանում էին: Ե՛ս եմ իմ աչքով տեսել թուրք ջարդարարներու արարքները, թե ինչպես էին սվինահար անում հայ երիտասարդ ասկյարներուն: Դուրսունի ասելով՝ մոտ երեք հազար հայ երիտասարդ արհեստավոր կեղնեին: Չորրորդ բանակի համար կոշիկ ու շոր էին կարում, մահուդ էին գործում, տեղում պատրաստում: Բոլորն էլ հայ էին, շատ քիչ թուրքեր կային: Երբ որ հայերին բանակ էին գորակոչում, նրանք քսանհինգ ոսկի էին տալիս, որ իրենց դաբախանա գցեն, նրա համար, որ արհեստ սովորեն, տնեցոնցը մոտիկ էղնին, բանակի չարչարանքներից էլ ազատվեն: Դրա համար էլ դաբախանայում շատերը հայեր էին, և բոլորն էլ՝ երիտասարդ: Հիմա նրանց ընտանիքները չկային, աքսորել էին, կոտորել: Երեք օր առաջ Էնվեր փաշան եկել էր, հրաման տվել, որ իրենց մեջից վերջ տան այլ ազգերին: Արյունոտ Էնվերը ազգային թշնամություն էր բորբոքել հայ զինվորներու դեմ: Հունիսի մեջն էր, երեք օր անընդհատ ավազակի տուն էին բերում դաբախանայի հայ զինվորներուն ու սպանում:

Խոտ էինք քաղում վարի հանդում՝ Սև ջրի մոտ: Տեսանք քաղաքից մարդ են բերում, Սև ջրի կամրջի քովից դարձրին դեպի

Մրթոյի տուն: Մի քիչ էլ մեզի մոտեցան, տեսանք, որ բոլորն էլ վարտիք-շապիկով են ու իրար կապած: Տարան դեպի Մրթոյանց տունը: Դուրսունն ու ես թողինք գործը, մենք էլ վազեցինք գնացինք: Կեղևեին մոտ 300 հոգի, լցրին մարագը: Ջանդարմեքը նստան հանգստանալու: Մի քիչ վերջը երկու ջանդարմա գնացին դեպի մարագը, դուռը բացին, տասը հոգի դուրս բերին, «Յասլլա» էրին ու սկսին դանակներով, սվիններով ծակելը: Սկսվեց վայնասունը, բայց դա բոլորովին դահիճներու վրա չէր ազդում, իսկ երբ որ վայնասունը վերջանում էր, սպանվածներուն քաշում, թափում էին Եփրատը: Եվ էդ բոլոր գազանություններն անում էին մյուս հայ զինվորներու աչքի առաջ: Ես տեսնում էի, բոլորն էլ երիտասարդ դեմքեր ունեին, որոնք չեմ մոռանա երբեք, քանի կենդանի եմ: Բոլորն էլ երիտասարդ էին, հազիվ 20-25 տարեկան: Նրանք դողում էին, պարզ լսվում էր, թե ինչպես էին չխկչխկում նրանց ատամները: Մի՞թե կարելի է խոսքով պատմել այդ սարսափելի տեսարանը: Շղթայված ձեռքերով փորը բռնած՝ հռչալով կենդանի-կենդանի խելագարվում էին, իսկ թուրքերը սկսում էին ծեծելը և այսպես սպանում էին գազանաբար: Ահա իմ տեսածս: Ո՞վ կարող է հավատալ, որ էսպիսի բան է կատարվել, և ու՞մ գլխով կանցներ այդպիսի վերին աստիճանի դժոխային միտք: Այո՛, Էնվերի և Թալեաթի գլխի մագերի փոխարեն օձեր էին դրել, որոնք խայթում էին հայերուն: Հավատա՛, գալո՛ղ սերունդ, հավատա՛, ոչ մի սուտ չկա... Մարդկային լեզվի մեջ չկան այնպիսի բառեր, որոնցով կարելի լիներ արտահայտել այդ զարհուրելի տեսարանները: Ես լալով հեռացա և մինչև այսօր էլ սարսափում եմ, երբ հիշում եմ դաքախանայի արհեստավորներու սպանողը: Մինչև այսօր էլ աչքիս առաջն են նրանց տանջահար դեմքերը: Դա եղեռնագործության ամենասարսափելի տեսարաններից էր, որ ես տեսա, գազանային անգթություն: Ես տասնվեց տարեկան անմեղ պատանի էի, երբ ականատես եղա իմ հայրենակիցներու արյունահեղությանը: Այդ գազաններու արարքը աչքիցս չէր հեռանում, այդ սարսափելի տեսարանը հիշելիս ամբողջ

մարմնով դողում էի: Կրակում էին ուղիղ հայ կալանավոր ասկյարներու վրա, փախչել չէին կարող, քանի որ ձեռքերը ամուր կապված էին, սպանում էին ու թափում Եփրատը: Այո՛, թող բոլոր եկող սերունդներն իմանան, բոլորը-բոլորը իմանան մեր թշվառ պատմությունը, քար սիրտն էլ չի դիմանա, կարտասավի:

## **Իմ փեսայի՝ Մովսեսի պատմածը, Սանսադարասի<sup>22</sup> հայ զինվորներու սպանդը**

Քսան օր էր անցել մեր գյուղի տեղահանությունից, և բոլոր գյուղերում մարդ չէր մնացել: Եփրատը լիքն էր դիակներով, որոնց ջուրը բերում էր արևելքից: Ես հարցնում էի Դուրսունին. «*Էս որտեղի՞ց էսքան դիակ, եթե գյուղերում մարդ չկա*»: «*Որտեղի՞ց... հայ զինվորներուն Սանսադարասից բերում են, որպեսզի ճանապարհներու վրա աշխարհեցնեն, հետո սպանում, թափում են Եփրատը*»: Եվ ահա վկաներից մեկն էր իմ փեսան՝ Մովսեսը, որ փախել է Սանսադարասից: Ահա տեսե՛ք, թե ինչ է պատմում նա Սանսադարասի ողբերգության մասին: Ես մե օրմ հաջողացրի, գնացի քովը: Ինձ համբուրեց, սկսեց լալը, ես էլ՝ հետը: Երբ հանգստացանք, սկսեց հարցնել, թե ինչ եղավ մեր ընտանիքը, ես էլ վերը գրածներս պատմեցի մեկառմեկ:

-Որտեղի՞ց փախար, փեսա՛,-հարցրի ես:

-Ա՛խ, ի՞նչ պատմեմ, թե որտեղից, Հովհաննե՛ս, լավ, միայն Սանսադարասու մասին կպատմեմ, թե բանակում գտնվող հայ զինվորներու հետ ինչ էին անում: Նրանց դրկում էին թիկունք՝ ճանապարհների վրա աշխատելու: Հայ զինվորները չգիտեին, թե ինչ ճակատագիր է իրենց սպասում: Ճանապարհների խոչընդոտություններին, սպանություններին չափ ու սահման չկար: Ոչնչացնում էին բոլորովին անմեղ զինվորներուն: Հավաքում, դրկում էին թիկունք՝ խարդախ ճանապարհով մասսայական ոչնչացնելու: Թե որքան էին մեռնում հիվանդությունից ու քաղցից, հայտնի էր

միայն Աստծուն, ու մեկ էլ գոհ էին դառնում անհագուրդ Եփրատին: Մի խոսքով, Սասնադարասին<sup>93</sup> վերածվել էր հայ զինվորներու՝ չարանենգ ճանապարհով կազմակերպված սպանդանոցի: Մեր հայ զինվորներուց հինգ հարյուր հոգի մե առավոտըմ ջոկեցին, բերեցին Քյորիկի քով, զինաթափ արեցին: Նույն օրը մի ուրիշ տեղից բերեցին մոտ երեք հարյուր հոգի, մեզի քշին դեպի Էրզրում, ոչ մի տեղ չհանգստացրին, տարան դեպի արևմուտք՝ Սանսադարասի Խալիլ աղայի խանը: Երկրորդ օրը սկսին ջոկել հայ զաբիտներուն և չաուշներուն՝ մոտ հարյուր հոգի: Նույն օրն էլ տարան ու հետ չեկան: Ես, դու գիտես, որ լավ երգող եմ, երգում էի զիշեր ու ցորեկ: Մե ասկյարըմ եկավ. «*Էդ երգողն ո՞վ է, յուզբաշին կանչում է*»: «*Ես եմ*», -ասի: Գնացի, թամալահ տվեցի, կայնա: «*Էդ լավ երգողը դու՞ ես*»: «*Ավա՛ղ, աֆանդիմ*»: «*Դու աշխատանքի չես երթա, իրիկունները կուզաս մեր զաբիտներուն կուրախացնես*»: «*Շար լավ, զլիխս վրա*», -ասացի ես: Եվ եղպես, Հովհաննես՝ս, էդ մարդագելերու համար երգում էի ցավալի երգեր: Դիտավորյալ էի երգում, որ գոնե մի քիչ գութ ունենան, բայց իզուր, սպասում էի, հա՛ սպասում: Մենակ մենք չէինք, բերում էին 200 հոգի, նույն օրն էլ սպանում էին, բերում էին 300 հոգի, 300-ն էլ չկային, և էսպես մի ամիս շարունակ: Սանսադարասին 30 կմ ձոր էր, երկու կողմը՝ սար, մեջտեղն էլ Եփրատն էր հոսում: Ամալիա թաբուրի<sup>94</sup> անվան տակ՝ որպես ճանապարհ շինողներ, թուրք մարդագելերը կենտրոնացնում էին հայ զինվորներուն մասսայական բնաջնջման համար: Հայ զինվորներու համար ստեղծված էին անտանելի պայմաններ: Այն, ինչ տեղի էր ունենում հայ զինվորներու հետ Սանսադարանում, մարդկության պատմության ամենասահավոր ողբերգություններից մեկն էր: Կազմակերպել էին այնպես, որ սովի, տաժանակիր աշխատանքի միջոցով քսան, երեսուն, քառասուն տարեկան զինվորներուն հասցնեն ֆիզիկական բնաջնջման, սիստեմատիկ աշխատանքի միջոցով տանջամահ անեն ու ոչնչացնեն: Հրահանգներում հետևյալն էր ցույց տրվում. այնպես անել, որ ինչքան կարելի է, այնքան շուտ բնաջնջման ենթարկեն բոլոր հայ զինվորներուն:

Թուրք մարդագեղերը հայ զինվորներու և հայ ժողովրդի համար օրենքով նախատեսված պատժի խիստ միջոցներն էին նախատեսել՝ ձևակերպելով, թե թուրքերը սեփական ազգի պարտքն են կատարում: Թուրք դահիճները, որոնց ձեռքում էր գտնվում հայ զինվորներու բախտը, վերևից եկող ցուցումներից էլ ավելի վատ էին վարվում, սվինահարում, թափում էին Եփրատը: Ահա այսպիսի հրեշավոր օրենքներ էին գործում Սանսաղարասում: Թուրքերը չէին ճանաչում ոչ մի մարդկային իրավունք հայերու համար: Տարբեր գյուղերից եկած հայ զինվորներ Սանսաղարասում իրենց մահն էին գտնում: Այն, ինչ տեղի էր ունենում Թուրքահայաստանի նահանգներում, մարդկության պատմության ամենասահավոր ողբերգություններից մեկն էր: Հայրս պատմում էր ժողովրդի հիշողության մեջ պահպանված ավանդություններ հույներու, արաբներու, թաթար-մոնղոլներու, սելջուկներու մասին, որոնք իրենց ավերիչ արշավանքներով մեր ազգի հիշողության մեջ թողել են ծանր հետքեր: Սրանք նվաճված երկրներու բնակիչների նկատմամբ կիրառում էին պատժիչ միջոցներ, բայց պատմությունը դեռևս չէր տեսել այսպիսի հրեշավոր ծրագիր, ինչպիսին կազմակերպեցին թուրք մարդագեղերը: Մեր հայ պատմաբանները երբեք չպիտի մոռանան հայ ժողովրդի ճակատագիրը: Շատ գրքեր են գրվել ու մինչև օրս էլ գրվում են, դեռ կգրվեն և պիտի շարունակեն գրվել: Թե՛ պատմաբանները, թե՛ մեծ գիրք գրողները՝ հայ ժողովրդի ճակատագիրն իմացողները, գիտեն, որ անցյալում ոչ մի կոտորած հայ ժողովրդի համար այնպիսի ճակատագրական նշանակություն չի ունեցել, ինչպիսին ունեցավ 1915թ. հրեշավոր ջարդը: Պե՛տք է գրել և գրել, ոչ մի ժողովուրդ էսպիսի անբուժելի ցավ չի տեսել:

Բինբաշու խզմատչին հոռոմ էր, մե օրըմ ինձի ասաց.«*Փահի ի՛ր, քանի շուր է, էս երկու օրս անխորհր բոլորիդ պիտի սպանեն*»: Ես և Գաբրիել աղայի տղան՝ Ավետիսը, փախանք, եկանք գյուղ. գիտեինք, թե մեր ժողովուրդը տեղում է: Գիշերը եկանք գյուղ, տեսանք՝ բոլոր տները դատարկ են: Հիմա աշխատում ենք

Հասան աղայի համար, տեսնենք վերջը ի՞նչ պիտի եղնի: Հացի քաղը պրծան, երեսունյոթ հոգու հետ նաև սպանին իմ փեսին<sup>95</sup>: Հինգ հոգին միայն մեր գյուղից էին՝ իմ փեսա Մանուկը, Ավետիսը, Անթառան, Նանան և մեր գյուղի մխթարը: Մանուկը չի վիրավորվում, ընկնում է մեռելներու տակը և վերջում ելնում, փախչում է: Մրթոյին հայտնում են, որ մե մարդը մեռելների միջից փախավ դեպի քաղաք: Էս գազանը ձիով Սև ջրի մոտ հասնում է Մանուկին, նորից բերում, սպանում է:

Մի երկու խոսք իմ փեսայի՝ Մովսեսի մասին: Մեզի հարևան էր, մի չորս տուն հեռու էին ապրում: Սուլթան Համիդի կոտորածին ծնողներուն սպանել էին, մնացել էին երկու եղբայր: Երկրի սովորության համաձայն՝ ամառը երդիկն էին քնում: Գու մի ասիլ, Մովսեսը սիրահարվել էր քրոջս՝ Սրբուհուն, և երգ էր հորինել նրա համար: Իրիկունը սկսում էր երգելը: Ես երկար լսում էի ու երգի տակ քնում: Հիմա, որ միտքս ընկնում է իմ փեսայի երգելը, մտածում եմ՝ իսկական բանաստեղծ էր: Հիշում եմ այդ երգերից երկուսը, մեկը հանել էր քրոջս վրա, իսկ մյուսը՝ քուրդ աղջկա:

***Չեր դռանը կանգնել ես, իմ սիրունիկ,  
Աչքի գալով ինչ կնայես, ի՛մ սիրունիկ,  
Դե արի՛ ինչի մոտիկ, ի՛մ սիրունիկ,  
Քեզ առնեմ, ի՛մ խուճուճիկ, ի՛մ սիրունիկ:***<sup>96</sup>

***Գու հեռու-հեռու մի՛ զնա, ի՛մ սիրունիկ,  
Ես քեզնից կարոպ չմնամ, ի՛մ սիրունիկ,  
Դե արի՛ ինչ մոտիկ, ես էղնեմ քու սրտի մոտիկ,  
Քեզնից առնեմ իմ կարոպ, ի՛մ սիրունիկ:***

Մե օրըմ հանդում հանդիպում է մի քուրդի ու նրա աղջկան. վրան է բռնում: Շատ սիրուն է եղնում քուրդի աղջիկը: Ահա քուրդի աղջկա մասին երգը.

*Մանի գյորդում, սավդաքյար օլդում,  
 Էյ փերի, քյուրդուն գյոզալի  
 Գյոզլարին չրա,  
 Մասլարենն ալթուն  
 Բոյին ֆիզան  
 Քյուրդուն գյոզալի  
 Մանի յարադդան ալահ,  
 Բիրդա յարասան,  
 Գյուզալ լարի, գյուզալի,  
 Քյուրդուն գյոզալի:*

Քուրդը գլխի է ընկնում, որ իր աղջկա մասին է երգում, ասում է՝ Գռռե բահո, և ընկնում ետևից:

1913թ. աշնանը իմ փեսայի և քրոջս հարսանիքն էր: Երանի՜ էն վախտ, ժողովուրդը հավաքվել ուրախանում էր, էն ժամանակ խաղաղ էր:

### **Իբրահամ աղայի ժամացույցը**

Իբրահամ աղան շուտ-շուտ հանում էր ժամացույցը ու նայում, թե ժամը քանիսն է: Ոսկե ժամացույց էր՝ երկար ժնջիղով... հայրիկիս ժամացույցն էր, հորեղբորս նվերն էր, Ռումինիայից որ եկավ, հայրիկիս նվեր տվեց: Ես շատ էի տանջվում ու շատ ժամանակ չէի էլ նայում Իբրահամ աղային: Լացս գալիս էր, երբ դռնից կախված էի տեսնում հայրիկիս ժամացույցը: Իբրահամ աղան ուրախությունից ժամացույցը շուտ-շուտ էր հանում և ուրախ ժպտում էր: Հայրիկս այն տվել էր Իբրահամ աղային նվեր, ի՞նչ աներ, քանի որ մի ուրիշ թուրք պիտի տաներ: Ունեցվածքի մասին ո՞վ էր մտածողը, քանի որ կյանքդ էլ քոնը չէր, չէ՞ որ դու հայ էիր: Ես շատ էի տանջվում. մտածում էի, թե ինչու այսպես եղավ ախր, մի խաղաղ ժողովուրդ էինք՝ մեր սպրուստով ապրող,

մինչև վերջին օրն էլ զբաղված էինք մեր աշխատանքով:

Իբրահամ աղան դարձել էր ինձ թշնամի, երեսին նայել չէի ուզում: Շատ ժամանակ մահանա էի անում, որպես ոտաց ճանապարհ գնում էի առվի մոտ, նստում էի առվի մեջը և սկսում լացել:

Մտածում էի, մտածում ու հետն էլ լալիս, լալիս... հայրիկս, մայրիկս աչքիս առջևից չէին հեռանում, ես կարծում էի, թե սուտ է, նրանք կենդանի են, կան, բայց իրականում չկային: Էդպես երկար նստում էի առվի մեջը, մոռանում, որ ես էլ գերի եմ ու աշխատում եմ Իբրահամ աղայի մոտը: Մեկ էլ հայտնվում էր Գուրսունը.

-Յուսու՛ֆ, ի՞նչ ես նստել, քելե՛, աղեն կանչում է:

-Ես չեմ գա, գնա՛, ասա՛, որ Յուսուֆը չի ուզում աշխատել:

-Ի՞նչ ես խելառություն անում, քելե՛ էրթանք:

-Ես չեմ ուզում ապրել, հասկացա՞ր, Գուրսուն՛ն:

-Իսկ ու՞մ պիտի վնաս տաս, որ չես ուզում ապրել, խելքդ հավաքի՛ր, քեզի պես քանի՞ հազար է մեռնում, ո՞վ է տերը, հիմա դու՞ ես մտածում մեռնելու մասին:

Իբրահամ աղան պոռում էր. «*Ի՞նչ եք անում, շա՛ն լակոյրներ, շուր արեք, օրը անցավ*»: Ես մտածում էի, որ Գուրսունը ճիշտ է ասում, ես որ մեռնեմ, ու՞մ պետքն է, ու նորից գնում էի աշխատելու: Ինձ պես քանի՞ հազարն են մեռել թուրքերու սրից, քանի՞-քանիսի՞ն են թուրքերը թափել Եփրատը: Գահիճ թուրք ժանդարմեքը որք, անտեր երեխեքին հավաքում, լցնում էին արաբեքը, տանում, ջուրն էին թափում Եփրատի կամուրջից:

Աշնան վերջին ամիսն էր, ես մտածում էի, որ մի օր ալ Մրթոն մեզի կտանի, կսպանի: Իմ հորեղբոր տղու հետ ապրում էինք Իբրահամ աղայի մոտ: Մենք փոքրուց իրար շատ էինք սիրում ու շատ էլ իրարու ատում. միմյանց ղխերիմ թշնամի էինք: Մե օրըմ էս իմ հորեղբոր տղուն ասի. «*Ի՞նչ պիտի եղևի մեր վերջը, մե օր ալ Մրթոն մեզի կսպանի*»: Ահա տեսե՛ք, թե ինչ պատասխանեց. «*Ձե՛նդ կորի, գլավու՛ր, թե չէ քեզ բռնել կրամ*»: Ես ձենս կտրի, ոչ մի ձեն չհանեցի: Առիթ էի փնտրում, որ մե օրըմ լավ ծեծեմ դրան: Պատահեց այսպես. ես կալն էի, նա մալը բաց էր թո-

ղել, զգել էր կալը, ես պոռացի. «Այ տղաս, արի՛, մալը հեռացրու՛ կայերից»։ «Ընու ի՛նչ գործդ է, որ պոռում ես»։ Ես էլ եղ էի ուզում. մի լավ ուզածիս պես ծեծեցի։ «Լավ,-ըսավ նա,-վրեղ էժան չի նսարի»։ Մեր գյուղում թուրք զինվորներ էին մնում։ Կեսօրին մոտիկ մե գինվորըմ եկավ հարցրեց. «Էսրեղ որտե՞ն է հայ տղաս կա»։ Ես հասկացա, որ Մուկուչի արած գործն է, պատասխանեցի, որ հայ տղեն գյուղ է գնացել։ Եվ անմիջապես գնացի գյուղ։ Իրիկվա կողմն էր, աղես քաղաքից եկավ, ասաց. «Էսղը քեզ պիտի տրանեն Ռ-գա փաշայի քով խզմաքքյար»։ Իմ հորեղբոր տղեն հիմա ապրում է Երևանում՝ Վերին Չեչթուն, 17 փողոցի 18 տանը։

Միրելի՛ ընթերցողներ, ինչ որ իմ աչքով տեսել եմ, իմ ճշմարիտ վկայությունն է, իմ՝ մի գյուղացի տղու։ Մեր գյուղը լուռ էր գերեզմանաքարի մման։ Հարուստ էր ցանքերով ու բարիքներով, գյուղի մոտով հոսում էր Եփրատը։ Միայն ոչ մի կենդանի շունչ չկար, անգամ՝ շան հաչոց։ Հայերու կոտորածը գրեթե լմնցած է, ամայացած էին բոլոր գյուղերն ու ավանները, դիակների անտանելի հոտը բռնել էր աշխարհով մեկ։ Ես ամեն օր լսում էի թուրքերու բարբարոսությունների ու գազանությունների մասին, չէ՞ որ թուրքերու մեջ էի, ամեն օր ականջովս էի լսում, թե ինչ հրեշային գազանություններ էին անում ու պարծենում իրարու քով։ Ականջովս կլսեի գազաններու պատմածը, որի սարսուռը մինչև այսօր ալ կզգամ։ Շատ ու անվերջ էին թուրք ջարդարարների պատմությունները։ Անշուշտ, քար չէր իմ սիրտը. ես, ապրելով ցեղիս դահիճների կողքին, կհավաքեի փաստեր ու իրողություններ՝ մի օրըմ լույս արևի հանելու և հրապարակելու հույսով։ Հազարավոր ընթերցողների ձեռքն է ընկնելու այս գիրքը, ոչ ոք չի արդարացնի թուրքերու վայրագությունները։ Եվ մենք՝ հայերս, ոչ մի բուպե էլ չպիտի մոռանանք, քանի որ ինձ պես շատ մարդիկ կան, որ տարբեր ճակատագրերով ազատվել են թուրք դահիճներու արյունոտ սրից։ Կյանքում յուրաքանչյուր մարդու բաժին են ընկնում տարբեր պայմաններ, տարբեր ճակատագրեր։ Ով տեսել է կոտորածը և ազատվել թուրքի սրից, միայն նա գիտի, թե ինչ պայմաններում

է ազատվել, ինչ ճակատագիր է ունեցել: Չկար մի տեղ, որ հայերու դիակ չեղնիր՝ տներու մեջ, արտերու, առուներու մեջ, Եփրատի կողքերը... Եվ որտե՞ղ չկար հայու դիակ, ճենճահոտը բռնել էր աշխարհը:

Վաղը պատմությունը կդատի մեզ, մենք պետք է գրենք, թե ինչ է կատարվել 1915թ. Թուրքահայաստանում: Համաշխարհային պատմության մեջ պետք է բոլոր լեզուներով գրվի, թող բոլոր, բոլոր ազգերն իմանան թուրք բարբարոսների վայրագությունների մասին: Անմոռանալի դար, ցավալի դար, տարիներ, որոնք խոր հետքեր թողեցին մարդկանց սրտերում: Ինչպիսի ցավալի թվական էր 1915թ., որ կսկիծ ու մրմնու թողեց հայերու սրտում, հայ ժողովրդի կյանքում թողեց անմոռանալի հետքեր: Թուրք «Ֆաշիստներու» չարանենգ գործողությունները ընդմիշտ կմնան մեր սերունդների սրտի մեջ ու կլինեն մեր ազգի ցավը: Դահիճներին չհաջողվեց հայ ժողովրդին բնաջինջ անել աշխարհի երեսից: Մենք՝ քո որդիներդ, ինչեր ասես, որ չենք տեսել, իմ հայրենիք: Հայերը հիմա ապրում են ամեն տեսակ բարիքների մեջ, ամեն մի հայու տան շեմից կյանք է փչում, լայնաշունչ կյանք: Ծլի՛ր, ծաղկի՛ր, իմ սիրուն հայրենիք, փարոսի պես փայլի՛ր քո թշնամու առաջ: Աշխարհում չկա քեզ նման, իմ «կարմիր», սիրուն հայրենիք: Այսօր ամեն մարդ իր բարիքներու տերն է, ամեն տեղ հիմա կյանքն ուրախ է: Աշխարհում չկա իմ հայրենիքի նման գեղեցիկ մի այլ վայր:

Այսպիսով, վերջացնում եմ իմ հուշապատումի առաջին գլուխը:

## Գլուխ երկրորդ

### Ես քաղաքում՝ Երզնկայում՝ Ռ-զա փաշայի քով

Իբրահիմ աղան ինձ կանչեց. «Գիրե՛ս՝ ինչ կա, տղա՛ս, քեզ պետք է փակենք քաղաք՝ Ռ-զա փաշայի քով: Երեք հասր կով ունի, մեկ հասր ձի»: Ֆաթիման շորերս լվաց, ես ելա, որ գնամ: Էս Ֆաթիման եկավ համբուրեց ինձի. «Գնա՛, եղբա՛յր, մեզ չմոռանաս, ես քու քրոջդ աչքի լույսի պես կպահեմ»:

Հասանք քաղաք, դուռը ծեծեցինք, մի տասներկու տարեկան աղջիկ եկավ, բացեց: Գնացինք ներս, Իբրահիմ աղան թե. «Միա, խանու՛մ, իմ տղուն բերել եմ, որ ձեր մայրերուն աշե»: «Արեք նսարե՛ք, Իբրահիմ աղա», - հաց բերեց, նստանք, կերանք: «Է՛հ, ես գնացի, մնա՛ք բարով», - ասաց Իբրահիմ աղան: Բալկոնը նստած էին չորս աղջիկ և մի հասակով կին: Դրանց մեջ մի հատ աղջիկ կար, էնքա՛ն սիրուն, որ էլ չեմ կարող ասել: Ամենքն էլ ձեռագործ էին գործում: Ես իմ մտքում ասի, որ կա-չկա էդ սիրունն է խանումը: Դու մի ասի, էդ հասակով կնիկն է խանումը՝ աչքերն էլ շղիկ: Երկու աղջիկները թուրք էին, երկուսը՝ հայ: Խանումը էն փոքր աղջկան ասաց. «Գյուլի՛, էս տղուն փա՛ր, ցույց տուր գարու, դարմանի տեղը»: Ներս մտանք գոմը. «Անունդ ի՞նչ է, ա՛յ տղա»: «Իմ անունը Յուսուֆ է»: «Միա դարմանի, գարու տեղը, ջրելու տեղը: Պառկելուդ տեղը ահա այստեղ է՝ վերևը՝ թախտի վրա»: Իրիկվա կողմը եկավ փաշան, բարևեց, ասաց՝ որն է իմ պարտականությունը, ինչ պետք է անեմ ու գնաց: Առավոտ էն սիրուն աղջիկը եկավ՝ կովերը կթելու. «Ա՛յ տղա Յուսուֆ, պրծե՛լ ես կովերից»: «Հա՛, խանու՛մ, կովերը պատրաստ եմ, կարող ես կթել»: «Տղա՛ ջան, ես խանում չեմ, հայ եմ, ծառա»: Ես զարմացած մի քիչ նայեցի, վերջը ասացի. «Քու՛ր ջան, ես էլ հայ եմ»: «Անունդ ի՞նչ է, տղա՛ ջան»: «Հովհաննէս»: «Ռ՞ր գյուղից ես»:

«Ես դարադիզեցի եմ, Պողոս ամիի փրկա Հովհաննեսն եմ»: «Ես էլ Վերին Չուքուզցի եմ, ակունս էլ Սրբուհի է, Հովհաննես՝ս, դուք մեզի բարեկամ եք, գիրտե՞ս»: «Հա՛, քույրի՛կ ջան, գիրտեմ, Աղունիկն ինչի ասաց»: «Ի՞նչ ես ասում, Հովհաննես՝ս, դու որտեղի՞ց գիրտես Աղունիկին»: Ես պատմեցի աղջիկներու մասին, ասացի, որ Մրթոն Մայնոսին ման գալու էր գնացել վերին հանդը, որտեղից տասներկու աղջիկ էր բռնել, բերել: Աղունիկն էլ մեջն էր: Սկսինք երկուսով լաց լինել, հետո Սրբուհին կովերը կթեց ու գնաց: Բավականին ժամանակ էր անցել, Գյուլին եկավ թե՛ արի՛, խանումը քեզ կանչում է: Գնացի.

-Բարի՛ լույս, խանո՛ւմ:

-Բարի՛ լույս, տղա՛ ջան, ինչպե՞ս են գործերդ, կովերդ լա՞վ են:

-Շատ լավ են:

-Դու գիտե՞ս՝ ես ով եմ:

-Հա՛, գիտեմ, դու խանումն ես:

-Որ գիտես, ես խանումն եմ, ես ասեղի ծակից Հնդկաստան սեյր եմ էրե: Գիտես՝ դու ինձ լա՛վ նայե, էստեղ օյին-մօյին չխաղաս: Ես նստած տեղից գիտեմ, թե Հնդկաստան ինչ կեղնի, հասկացա՞ր: Սրբունը որ եկավ կովերը կթելու, ինչի՞ տղքան ուշացավ, դե ասա՛ տեսնեմ, տղա՛ ջան, պետք է, որ ճշտախոս եղնիս, հա՛, էստեղ գյուղը չէ, որ ինչ ասես, հավատան: Դե խոսի՛ր, ի՞նչ ես լալկվել:

-Խանո՛ւմ ջան, եթե ճիշտը խոսեմ, խո չե՞ս նեղանա:

-Աստված թող վկա եղնի, քեզ ոչ մի վատ բան չեմ անի:

-Խանո՛ւմ ջան, Սրբուհին, որ եկավ կովերը կթելու, ինձ հարցրեց, թե որտեղացի եմ: Ես էլ պատասխանեցի, որ դարադիզեցի Պողոս ամիի տղան եմ՝ Հովհաննեսը: Նա էլ, թե ես էլ վերիջութլուզցի եմ, դուք էլ մեզ բարեկամ եք: Սկսեցինք մեր ծնողներու կորուստի մասին խոսելը, ասպա երկուսով լալ սկսեցինք: Ահա բոլորը, խանո՛ւմ ջան, կովերը կթեց ու եկավ:

-Հա, որ եղպես է, բան չկա, ես ուրիշ բան էի մտածում:

Մի երեք օր վերջը ես հարցրի.«*Քույր Սրբուն, ինչպե՞ս եղավ, որ դու այսպեղ ընկար*»:

## Սրբունի պատմածը

-Հովհաննէ՛ս, մեզ ջանդարմեքը ծեծելով հանին գյուղից, գյուղից նոր էինք հեռացել, խուժան թուրքերը մեզ էին սպասում, հարձակվան մեր վրա, ինչպե՞ս պատմեմ, որ հասկանաա: Ով ինչ կուզեր, անում էր: Գոռոց, վայնասում, մայրիկ ջան, մերը մանուկը ուրանում էր: Մեկը շոր էր հանում, մեկը աղջիկ էր քաշում, մեկը մարդ էր սպանում, ժողովուրդը խառնվել էր իրար: Աստվա՛ծ ջան, ի՞նչ ասեմ: Սրբոն ու ջանդարմեքն ալ մյուս կողմից իրանց ուզածն էին անում: Մեկ ջանդարմա ասում էր.«*Դե թող ձեր քեռիկն գա ու ձեզ օգնի, գյավուրնե՛ր, ուռուսի՞ն էիք սպասում, հա՞*»:

Թուրքերը ուռուսին համարում էին հայերու քեռին, էդ չար օրը բուլբուլին չեմ մոռացել, ամբողջը իմ աչքի առաջն է, էսօրվա պես հիշում եմ: Էդ ինչ գազանություն էր, որ արեցին մեր աշխատավոր ժողովրդի գլխին, ի՞նչ էինք արել, որ էսպես վարվեցան: Ասում ես, թե ինչպես եղավ, որ էստեղ ընկա, ո՞ր մեկը պատմեմ, ծովերը թե թանաք էղնին, չի հերիք էնե գրելու համար: Գե լսի՛, երկու թուրք ինձի քաշքշում էին, ես երեսիս ցեխ էի քսել, որ չնկատեն իմ սիրունությունը: Ես սկսեցի պոռալը, մայրիկիս օգնության կանչելը: Մայրիկս վազեց դեպի ինձի, ինձ քաշող թուրքին փետով մե հատըմ խփեց: Էս գազանը թողեց ինձի, հարձակվավ մորս վրա, սկսեց դանակով խփելը: Պառավ կնիկ, ի՞նչ կարող էր էնել գազանին: Մորս ձեռնին հայրիկս եկավ, սկսեց թուրքին փետով խփելը: Երկու թուրքն էլ հարձակվան հորս վրա, սպանին հորս էլ, մորս էլ: Իմ աչքի առաջ ինձ համար հորս ու մորս սպանին: Ես ընկա հորս ու մորս դիակի վրա, սկսի լացը, մազերս էի պոկում, համբուրում էի հայրիկիս, դառնում էի մայրիկիս դիակի վրա էի լալիս: Էդ երկու արյունախում թուրքերը սկսին ինձի քաշելը, մեկն ուզում էր

ինքը ինձ տիրանալ, մյուսն էլ՝ ինքը: Ձեր գյուղի ջանդարմա Մահմադը եկավ, էս երկու թուրքերին վռնդեց, ասաց. «*Քովիցս չհեռանաս, քեզի պիտի փաշային տրանես*»: Գողալով նրա մոտից չէի հեռանում: Որքան մարդ սպանին, Աստծուն է միայն հայտնի, մնացածին հավաքին: Քաղաքին որ մոտեցանք, նորից խուժանը վրա տվեց: Էդտեղից Մահմադը ինձի բերավ Ռ-գա փաշայի տունը՝ որպես նրան կնիկ, էլ չիդեմ՝ ինչ եղավ մեր գյուղի մնացած ժողովուրդը: Բայց խանումը Էնպիսի օյին բերեց փաշայի գլխին, որ էլ մի ասի: Ամբողջ մի օր կռվում էին ինձ համար խանումն ու փաշան, էդ երկու փոքր աղջիկներին փոքրուց խանումը բերե, իրան աղջիկ է էրե, իսկ էն մյուս փոքր աղջիկը հայ է, Բասենից: Էս բոլոր կարողությունը խանումինն է, փաշան տանփեսա է, Էնպես, որ առանց խանումի փաշան ոչ մի գործ չի կարող անել, հասկացա՞ր: Խանումի հայրը խանումին մի պայմանով էր տվել, որ փաշան ուրիշ կնկա հետ իրավունք չունեի ամուսնանալու: Եթե մի ուրիշ կնկա հետ ամուսնանա, ապա կզրկվի ամբողջ կարողությունից, քանի որ ունեցվածքը խանումի հորն է պատկանում:

Մի երկու օր վերջը Սրբունը եկավ՝ կովերը կթելու, փաշան էլ հետը: Սրբունը կթում էր կովը, փաշան հետը խոսում էր, շոյում գլխի մազերը. «*Իմ խանումնս, իմ սիրունս...*»: Ես վերևը թախտին նստել էի, ոնց որ մեկն ըսեր, թե մտիկ էրա: Վերջապես Սրբունը գործը պրծավ, ուզեց, որ երթա, փաշան բռնեց, Սրբունին դեպի իրան քաշեց, զռռով համբուրեց: Սրբունը թողեց գնաց, փաշան էլ հետը: Զսան վայրկյան չէր անցել, Գյուլին եկավ.

-Յուսու՛ ֆ, արի՛, խանումը քեզ կանչում է:

-Բարի՛ լույս, խանո՛ւմ:

-Բարև՛, տղա՛ ջան:

-Լսի՛ր, Յուսու՛ ֆ, Սրբունը որ եկավ ախոռը, փաշան հե՞տը եկավ:

-Հա՛, խանո՛ւմ, ճիշտ այդպես:

-Ի՞նչ խոսեցին իրար հետ:

-Ոչ մի բան, խանո՛ւմ ջան:

-Լսի՛ր ինձ, էս աղջկան տեսնու՞մ ես, Գյուլիին, էս աղջիկը քոնն է, եթե քեզ լավ պահես, եթե ճիշտ խոսես, երբ խաղաղություն եղնի, էս աղջիկը քեզ պիտի տամ: Ես երդվում եմ աստծու անունով, որ խոստումս կկատարեմ:

-Խանու՛մ ջան, ճիշտ որ խոսեմ, Սրբունը բոլորովին փաշայի հետ չէր խոսում: Վերջը Սրբունը գործը պրծավ, եկավ, ահա բոլորը:

-Իսկ դու որտե՞ղ էիր:

-Ես վերի թախտի վրա նստած էի:

-Դե լսի՛ր ինձի, դու պետք է միշտ հետևես Սրբունին. եթե փաշան նրա հետ խոսի, հասկացա՞ր, մարդու բան չասես, արի՛, ինձ ասա՛:

Իրիկունը խանումը փաշայի հետ լավ դալմադալ արեց: Փաշան էլ չէր գալիս գոմը, ինձ հետ էլ չէր խոսում:

Երբ գործս պրծնում էի, գնում էի քաղաք ման գալու, մալի վախտը գալիս էի տուն: Մի տասը օր չէր անցել իմ գալուց.

-Յուսու՛ փ, խանումը քեզ կանչում է:

-Արի՛ տեսնեմ, պարզերես պատմի՛, թե ինչպես դուռը բացիր:

-Ի՞նչ դուռ, խանու՛մ:

-Ինչու՞ ես քեզ միամիտի տեղ դնում:

-Ես ոչ մի բան չիղեմ, խանու՛մ:

-Իհարկե, դու ոչ մի բան չիղես, բա ո՞վ փախցրեց Փերուն, հը՞, ասե՛:

Ահա այստեղ ինձ օգնության հասավ Գյուլին:

-Խանու՛մ, էս ճիշտը պատմե՞մ:

-Դե խոսի՛ր աղջիկս, ինչպե՞ս եղավ»:

-Յուսուփը գնացել էր քաղաք, էս ու Սրբունն էլ կուխնում կարտոլ էինք մաքրում, դու էլ բաղնիքում լողանում էիր, Նազլուն էլ քեզ հետ էր: Ոտքի ձեն առա, դուրս եկա, մեկ էլ մի տղայի տեսա բոխչեն ձեռքը, մեկն էլ Փերու ձեռքն էր: Ինձ որ տեսավ Փերին,

ասաց.«Մու՛ն կաց, ես գնում եմ, էս տղեն իմ նշանածն է, ես գնում եմ, մնա՛ք բարով, արի դուռը փակի՛ր»։ Եկա Սրբունին պատմեցի, ասաց.«Ես ի՞նչ անեմ, որ ինքը փախալ»։

-Ա՛խ, էդպես հա՞, ես իրա լավն էի կամենում, իսկ ինքն ի՞նչ էրավ։

\*  
\* \* \*

Էդպես մե օրըմ գնացի քաղաք, մե փողոցով անցնում էի, տեսնեմ մե կնիկըմ, շարսավով կանգնած, Հովհաննես է կանչում։ Երեսը բացեց, տեսնեմ մեր գյուղի Հաջի ամիի աղջիկ Յաղութն է.«Ի՞նչ կենես էստեղ, Հովհաննես՛ն»։ «Ես Ռզա փաշայի մուր եմ»։ «Շու՛ր ես եկել»։ «Չէ՛, մե քանի օր կեղնի»։ «Ո՞վ կա ազարված մեր գյուղից»։ «Մեր գյուղի Ներսես ամիի տղան՝ Մուկուչը, մեկ էլ քույրս Իբրահամ աղայի մուր են, եղբայրս՝ Հարությունը, Բալբակ է»։ «Իսկ մայրիկիս տեղը չիդե՞ս»։ «Մայրիկիդ սպանեց Մրթոն»։ Սկսեց փողոցի մեջտեղը լաց լինելը, ես էլ հետըր.«Վա՛յ, գնա՛, Հովհաննես՛ն, կարող է մեզ նկատեն»։ «Ես էլ դանակ, չանգալ եմ տանում մեր տուն, էսօր քե՛ֆ կա, գրող ու ցավ ուրեն բալբիմ... Է՛, մնա՛ս բարով, Հովհաննես՛ն»։ Էլ շտեսա նրան։ Վերջերս իմացա, որ հասել է Ամերիկա, Մուկուչի եղբորն է առել։ 1970թ. հանդիպանք իրար Մուկուչենց տանը՝ Երևանում։

Էսպես շարունակ, գործս որ պրծնում էի, գնում էի քաղաք ման գալու։ Մե օրըմ ման գալով գնացի հայոց թաղը, դեպի *Տամի* մեյդանը<sup>97</sup>։ Մարդ չկար, ու՛ր էր առաջվա մեյդանը, երբ որ հորս հետ արաբով գալիս էինք Միչիկանց Գրիգոր աղայի տունը։ Քաղաքի տղեքը կախ էին ընկնում արաբից, ուրախ խաղում էին, մեյդանը լիքը երեխա կար։ Դպրոցից<sup>98</sup> դուրս էին գալիս շարքով, իսկ հիմա մարդ չկար, վերացել էին։ Էս սիրուն հրապարակը, որ հայոց ժամի մոտն էր, նման էր մեռելնոցի, ոչ մի կենդանություն չկար։ Փո-

ղոցներում հազվադեպ պատահողներ էին լինում: Տները՝ դատարկ, խանութները՝ ջարդած, գազանների թողած արյունոտ հետքերը դեռ երևում էին: Խաղաղ ժամանակ ես հայրիկիս հետ միշտ քաղաք էի գնում: Փողոցները նեղ էին, նույնիսկ անհնար էր մարդկանց միջից անցնելը, իսկ հիմա ոչ մի մարդ չկար, կուլ գնացին գազաններուն, մի պահ ինձ թվաց, թե սուտ է, որ իրականում սիրուն քաղաքը էսպես ավերված է, խաղաղ ժողովուրդը՝ դաժանաբար խոշտանգված: Ես կանգնած մտիկ էի էնում էդ տեսարանին, մարմնովս սարսուռ էր անցնում, շեն տեղով գայերու ոհմակ էր անցել: Միանգամից շատ ճարպիկ կերպով տեղահան էրին խաղաղ ապրող հայերուն և Քյամախի նեղուցում սովամահ էրին:

Ես ման էի գալիս հայոց թաղում, երկար ժամանակ մենակ թափառում էի. շրջապատում կյանքի նշույլ անգամ չէր երևում: Որոշ տեղերից հատուկեմտ թուրքեր էին երևում, ինչ-որ բան շալակած՝ դուրս էին գալիս հայոց տներից, թվում էր՝ այստեղ բոլորովին մարդ չի ապրել, ամբողջ հայոց թաղը նման էր ավերակների: Ոչնչացված էր հայ ժողովրդի կենտրոններից մեկը՝ հնագույն գանձը՝ Երզնկան, որը վերածվել էր մահվան քաղաքի: Ամեն կողմից մահվան ու մեռելի հոտ էր փչում, ամեն կողմից վայրենիներու վարմունքն էր երևում, որ կողմը նայելի, բարբարոսներու հոտն էր գալիս: Արմատից քանդեցին հայերու թաղը, սիրուն Երզնկան միանգամից հավեց ու մաշվեց, ոչինչ չկար մխիթարվելու: Անշարժ գերեզման դարձրին մեր շքեղ Երզնկան, քանդված ու վառված էին տներն ու խանութները, այլևս ոչ մի հայի ձեն ու ծայտուն չկար, իսկ գեղեցիկ հրապարակը նման էր սգո քաղաքի: Ու՞ր են քո վաճառականները, ու՞ր են քո ոսկերիչները, քո մանուկն ու երեխայքդ, ու՞ր են քո ժամերդ<sup>99</sup>, ի՞նչու չեն գնգում գանգերդ, ու՞ր է քո ժողովուրդը, ժամ չի՞ գնում: Մրտաճմլիկ ու տխուր էր էս անապատ տեսարանը: Միայն ես էի հայ մնացել: Մտիկ էի անում: Ամեն տեղ այսպես ավերակ էր, հայոց հրապարակը մնացել էր մահմեդական թուրքերուն, այն պղծված էր մահմեդականներու ձեռքերով: Պատերազմի հետևանքը այն եղավ, որ հայը իր

դարավոր հայրենիքից դուրս բերվեց, Հայաստանը հիմնովին արմատահան արվեց:

Մեյդանից անցա, գնացի Միչիկանց տունը: Նստեցի, բավականին հիշեցի անցյալը: Էս հարուստ տունը վերանա էր: Մեյդանով անցնում էի, տեսա մի պահակ կանգնած էր ժամի դուռը, տեսա՝ ներսը մարդ կար, գնացի դեպի պահակը: Պահակը թե՛ ու՞ր, ա՛յ տղա: «*Էստեղ եղբայրս է, գնում եմ՝ տեսնեն*»: «*Լա՛վ, դե գնա՛*»: Ներս մտա, ման եկա, ներսը լիքը զինվորներ էին՝ բոլորը իրենց շորերով: Դուրս էի գալիս, մեկ էլ մի մարդ թե՛.«*Ա՛յ տղա, ի՞նչ ես անում էստեղ*»: «*Եղբայրս էստեղ է, եկել եմ տեսնելու*», - ես խաբեցի, որ եղբայրս էստեղ է: «*Որտե՞ղ է եղբայրդ...Քեզ որ փող տրամ, կերթա՛ս մի քիչ թութուն, հաց ու մի հալ էլ քյալլա բերես*»: «*Հա՛, աղա՛, ինչու չէ*»: Մե ուրիշն էլ եկավ, թե՛ ինձ էլ հաց ու քյալլա բե՛ր, մի քանի հոգի էլ թե՛ մեզի էլ թութուն, հաց բե՛ր, ու փող են տալիս: Ու եղպես մոտ տասը-տասնհինգ հոգի, էլ չեն մտածում, որ էսքան պատվեր ենք տալիս էս տղուն, ինչպե՞ս պետք է բերի: Վերջապես ես ելա դուրս, մտածում եմ, թե ինչ անեմ, ես շա՛տ գիտեմ՝ ով ինչ ասաց: Կանգնած մտիկ եմ անում ֆասիս մեջի փողին: Միտքս փոխեցի, ոչ մեկին՝ ոչ մի բան, գնացի կես հոխա ֆնդիս, կես հոխա քիշմիշ առա ու գնացի տուն:

Առավոտ Սրբուհին եկավ՝ կովերը կթելու, կանչեցի.«*Քույրի՛կ, տե՛ս՝ քեզ համար ինչ եմ բերել*»: «*Ա՛յ տղա, էս որտեղի՞ց քեզ փող*»: Մեկ առ մեկ պատմեցի Սրբուհուն: «*Շատ լավ ես արել*»:

Հունվարին եղանակն այնպես տաք էր, ու երեք օր թեթև երկրաշարժ էր եղնում: Հունվա՞րն էր, թե՞ փետրվարը՝ լավ չեմ հիշում: Խանումս ելնում էր երդիկը.«*Աստվա՛ծ ջան, ի՞նչ է արել ժողովուրդը, որ բարկացել ես մեր վրա, ով որ էրել է, նրա գլխին քափի՛, աստվա՛ծ ջան, խղճա՛ մեզի: Թաց փեպը չոր փեպի՞ հեկ պետք է վառի, ինչի՞ համար, ով որ հայերին կոտորել տվավ, թող նա էլ պարասիսան տրա*»: Աստծուց խնդրում էր, խնդրում էր խա-

նունս, որ երկրաշարժը դադարի: 1916թ. փետրվարին ռուսները վերցրին Էրզրումը<sup>100</sup>:

\*  
\*   \*  
\*

Ես միշտ գործս որ պրծնում էի, գնում էի քաղաք: Մեկ օր էլ թալալը բռռալով մասն էր գալիս. «*Լսօր գերի պետք է քերեն 1000 հոգի ռուս*»: Ես վազեցի ժողովրդի հետ դեպի քաղաքից դուրս: Ժանդարմեքը տասնհինգ հոգի խառնել էին առաջները և ծեծելով բերում էին: Ասլան էին դարձել գերիների վրա: Մեկը բռնորովին չէր կարողանում քայլել, երկուսը մտել էին թևերի տակ և քաշելով տանում էին: Էնպես սիրտս մղկտում էր, կարծես հարազատներս լինեին, բայց ի՞նչ կարող էի անել: Ես կարծում էի, թե թուրք մարդակերները միայն հայերի հետ են գազանաբար վերաբերվում, բայց երբ 1916թ. տեսա, թե տանջահար ռուս գերիներին ինչպես էին ծեծում և քշում որպես մալ, որոնք ուռած ոտքերով հազիվ իրենց քարշ էին տալիս, իսկ ժանդարմեքը նրանց ծեծելով բռռում էին. «*Իշալի, գյալուրողլի գյալուր*», - ու նորից էին ծեծում խզակոթով: Գերիներից մեկը բռնորովին թույլ էր, երկու հոգի թևերից ընկած հազիվ քաշեքաշ տանում էին: Ես զգացի, որ դա գազանություն է մեկ այլ ազգի նկատմամբ: Հետները գնացի, որ տեսնեմ, թե ուր պետք է տանեն: Թուրքերը հավաքվել նայում էին իրենց թշնամուն: Ես հետևում էի. նրանց քաղաքի միջով տարան Էսկի շահարի<sup>101</sup>: Եկա տուն, արդեն մալի վախտը անցել էր, լավ է՝ մարդ չէր տեսել: Իրիկունը պառկեցի թախտին և մտածում եմ, թե ինչպես օգնեմ ռուսներին՝ մեր ազատարարներին: Առավոտ Սրբուհուն պատմեցի, թե ինչպես թալալը բռռում էր, թե 1000 հատ ռուս գերի են բերում, ու որ ես գնացի ու տեսա, որ ժանդարմեքը ծեծելով բերում էին տասնհինգ հոգու: «*Ի՞նչ տեսակ մարդիկ էին. սև՞, թե՞ շեկ*»: «*Շեկ էին, Սրբուհի՛ քույրիկ: Ես հիմա պիտի գնամ, նրանց տեսնեմ, տեղն էլ գիտեմ*»: «*Ա՛յ տղա, զգու՛յշ եղիր, կարող է տեսնեն, որ դու շար ես հեղափոխվում, ու քեզ բռնեն*»: Ես գործս պրծա, գնացի ուղիղ հին քաղաքը: Հին քաղաքը գտնվում

էր հայերի և թուրքերի թաղի մեջտեղը: Տեսա, որ գերիները ելել լվացվում էին, քավականին ժամանակ կանգնա նայեցի, ապա գնացի տուն: Ուզում եմ օգնել նրանց, բայց ինչպե՞ս. Գնամ Սրբուհուն ասեմ, տեսնեմ՝ ինչ կասի: Առավոտ Սրբուհին եկավ, պատմեցի, նա սկսեց ծիծաղել.«*Ինչպես որ օգնեցիր թուրք զինվորների՞ն. փողերը հավաքեցիր ու թողիր փահասը*»: «*Չէ՛, քույրի՛կ, սրբանց ուզում եմ մի բանով օգնել*»: «*Որ ուզում ես օգնել մեր ազատարար ռուսներին, ես էլ քեզ կօգնեմ: Մի հայկական ասացվածք կա. «Լավությունն արա, ջուրը զցիր»:* Ես քեզ հաց ու պանիր կբերեմ, դու կրանես, զգու՛յշ եղիր, հարմար տեղ գրի՛ր և այդտեղ էլ զցի՛ր, տե՛ս՝ մարդ չնկատի, որ բան ես զցում»»: «*Հա՛, քույրի՛կ, հասկանում եմ, երեխա խո չես*»: Կես ժամ չքաշեց, Սրբուհին մի մաքուր շորի մեջ փաթաթած հաց ու պանիր բերեց.«*Առ, տա՛ր, Աստված քեզ հետ, տա՛ր մեր ազատարարներին*»: Ես ելա, ուղիղ գնացի Հին քաղաքը: Լավ էր, ռուսները ման էին գալիս հայաթում, և մարդ չկար: Տեսա, որ ցածր հայաթ էր, մարդ չկար, բողջեն զցեցի: Նրանցից մեկը վազեց, վերցրեց բողջեն, նայեց ինձ, գլուխը երեք անգամ վարուվեր արավ ու գնաց ներս: Ես մի քիչ կանգնա, տեսնեմ՝ չորս-հինգ հոգի կանգնած ինձ են նայում, գլխարկները վար ու վեր արին ու գնացին ներս:

Մեկ էլ տեսնեմ՝ դահուլ-գուռնի ձեն է գալիս, վազեցի ձենի կողմը: Թուրք տղեքն էլ վազում էին դահուլ-գուռնի ձենին: Տեսանք՝ Քյամախի կողմից զինվոր են բերում, կեղնեին մի 500 հոգի, դահուլ-գուռնեն առաջնին նվազելով՝ գնացին հրապարակ և շարքով կանգնան: Դուրս եկավ մոլլեն և չորս-հինգ հոգի զարիտ: Մոլլեն սկսեց Մահմադից խոսելը՝ Մահմադ մարգարեի օրենքներից: Անհավատների վերաբերյալ ասաց.«*Չեզանից ով ինչքան շար գյավուր սպանի, այնքան Աստծու օրհնությունը նրա վրա կեղնի: Գնում եք գյավուրների հետ կռվելու, թող աստծու աչքը չեք վրա եղնի*»: Մոլլեն պրծավ քարոզը, սկսեց զեկուցել զինվորականներից մեկը: Իմ կանգնած տեղից մի քիչ այն կողմ մի մարդ կանգնած իրան-իրան խոսում էր ու գնում-գալիս: Հասակով մարդ էր,

մոտեցա, տեսնեմ՝ էս մարդը խենթ է, իրան-իրան ցածր ձայնով խոսում է. «Չեզի պեպրություն ասողի հերն եմ անիծել, չեն էլ ամաչում, ճառ էլ են ասում: Մեջին մեկն էլ չկա՝ ասի, թե էս ցրտին էս խեղճերին առանց շորի, առանց կոշիկի ու՞ր են տանում, հլա ուրեղիքը հեչ: Քանի՞ տրանցպետների տարել են սպանդանոց, անաստվածներ՝, մի հինգ-վեց քայլ էր անում, նորից էր խոսում, գոնե շոր տան: Հլա մտիկ արե օսմանցի ասկյարին, **տոնգոտոյի-տոնգուզար** ու՞ր հասցրին: Էլ որտե՞ղ պիտի կռվեն ռուսի հետ, առանց տալու էլ մեռած են: Նայեցիք, սոված, չլքախ, ռուսի հե՞տ պիտի կռվեն, քանի՞ հազարի եք սպանել էսպես»: Իսկապես, նայեցի՝ բոլորն էլ իրենց շորերով էին. մեկը՝ լավ, մեկը վատ՝ բոլորն էլ՝ չարուխով: Արդեն խոսում էր երրորդ մարդը (գաբիտը), իսկ էս մարդն էլ դեռ իրան-իրան քրֆում էր ու գնում-գալիս: Ճառը վերջացավ, կամանդ տվին և դահուլ-գուռնեն չալելով՝ գնացին: Արդեն մալի վախտն էր, էս գնացի:

Առավոտ էս նորից հացս առա ու գնացի ռուսների մոտ, տեսա, որ կեսից հետ չլքախ<sup>102</sup> թները վերուվար են անում, որն էլ լվացվում է: «Մրանք երևի խելառ են, էս ցրտին ի՞նչ են անում, մտածեցի ես: Սրբուհու տված հացը զցի ու փախա: Հաջորդ առավոտ Սրբուհին եկավ, հացը բերավ, թե՛ տա՛ր մեր ազատարար ռուսներին: «Չէ՛, քույրիկ, չեմ տանի»: «Ինչու՞, ա՛յ տղա»: «Գիտե՞ս՝ գնացի, տեսա, որ կեսերից չլքախ չեռքերը վարուվեր են անում: Հացը զցի ու փախա, երևի դրանք խելառ են, որ բռնել թերել են»: «Լավ, կարող է դրանց սովորությունը եղպես է, հլա էսօր էլ տա՛ր, տես՝ եղպես կենեն: Սպասե՛ կռվերը կթեմ, նոր քեզ ճամպու դնեն»: Մի քիչ վերջը Սրբուհին եկավ թե՛ պատրաստ է, ապահով կարող էս գնալ, խանումը քիլարն է, խնձոր է ջոկում:

Գնացի, տեսա, որ էլի երկու հոգի կեսերը բաց լվացվում են, մի քանիսն էլ ման են գալիս: Չորս կողմս նայեցի, տեսա՝ մարդ չկա, զցեցի հացը: Ինձի էին սպասում: Մեկը վազեց, վերցրեց կապոցը, դրեց շինելի տակն ու գնաց ներս: Չորս-հինգ հոգի, դռանը կանգնած, նայեցին ինձ, գլխարկները թափ տվեցին ու գնացին ներս:

Ես գնացի քաղաք, ինձ համար ման էի գալիս շորի բազարում, մեկ էլ տեսա՝ ժանդարմեքը քսան հոգի ծեծելով տանում են, լավ մոտեցա, որ տեսնեմ՝ սրանք հա՞յ են, չէ՛, տեսա՝ թուրք են: Իմ հասակի տղաները ոտաբոքիկ վագում էին հետները, ես էլ խառնըվա, գնացի նրանց կողքերով, գնում էին մեր գյուղի ճամփան: Տղոնցից մեկը թե՛ տեսնենք՝ ինչպես պետք է գնդակահարեն սրանց: «*Ի՛նչ են արել, որ գնդակահարեն, ա՛յ տղա*»: «*Չիղես՝ ինչ են արել, ֆիլար են, փախել են ֆրոնտից*»: Ես հետաքրքրվա, տեսնենք՝ ինչ կեղնի. քաղաքից դուրս ելանք, դարձրին դեպի թաբախանա: Մի քիչ էլ գնացինք, տեսանք՝ արտի մեջ երկու մոլլա և չորս զինվորական գնում-գալիս են: Հասանք նրանց մոտ, շարք կանգնեցրին, զինվորականը կանչեց ժանդարմեքի մեծին, չզիտեմ՝ ինչ ասաց, սկսին կապել թևերը, կապին պրծան, մեկ շարք կանգնեցրին: Փախստականները լալիս էին ու դողում: Տասը ժանդարմա կանգնան նրանց դիմաց: Մոլլան սկսեց քարոզել աստծո և փեխամբարի օրենքների մասին: Վերջում ասաց. «*Դուք մեղավոր եք, որ փախել եք ֆրոնտից, որպես ժողովրդի թշնամի՝ օսմանյան օրենքով չեզ գնդակահարություն է հասնում*»: Նրանք ոչ մի ձայն չէին հանում, միայն դողում էին ու լալիս: Վերջում զինվորականը դարձավ նրանց. «*Ձեր վերջին խոսքը ասացե՛ք: Ասացե՛ք, թե ինչու լքեցիք ձեր սուրբ գործը*»: Դրանցից մեկը սկսեց խոսել. «*Փաշա՛ էֆենդի, մենք մեղավոր չենք, մեզ տեսնում եք՝ սոված, չլքախ, ուրներս բոքիկ, ինչպե՛ս չփախչեցինք, մեկ է, պետք է մեռնեցինք*»: Չինվորականը դարձավ. «*Ուրեմն դուք ազի՞զ էիք մյուսներից, ձեր հաշիվը հիմա պետք է մաքրենք*»: Մեկեն զինվորականը դարձավ դեպի ժանդարմեքը. «*Պա՛րսա՛սր, ա՛թեչ*»: Գնդակահարին բոլորին, քաշին գցին փոսը, որից հետո ես թողի գնացի տուն:

Իրիկունը Սրբունը եկավ՝ կովերը կթելու: «*Գիտե՞ս, Սրբուն՝ քույրիկ, էսօր թուրք զինվորներից քսան հոգի սպանին, փախել էին ֆրոնտից*»: «*Թող իրար միս ուտեն, Յուսու՛ֆ, մի՞ թե մեր*

լացն ու շիվանը Աստված չի լսել, թող իրար միս ուրեն: Տեսա՞ր՝ ինչպես երեք օր զուլում թափեց Աստված, խանումը գիշերուզօր աղոթում էր, որ Աստված իննայե, ու իրանց տակնուվրա չէնե երկրաշարժը»: Առավոտ Սրբունը եկավ. «Գիտե՞ս, Յուսու՛ֆ, էսօր մեր ազատարարներուն հաց չկա, հացը պարթել է, էսօր մեզի չի բավականացնի, կարո՞ղ ես բազարից հաց առնել, ահա քեզ մի բանկանոտ, վաղը նորից տունից կրանես»: Ես գնացի քաղաք՝ տեսնելու, թե որտեղ են հաց ծախում: Մտա բազար, մեկ էլ տեսնեմ՝ չորս աղջիկ՝ գլուխներին սպիտակ լաչակներ կապած, կարմիր խաչը ճակատներին, մաքուր հագած, երկու ասկյար և փոքր տղեքը հետները, կառզինկեքը ձեռքներին, ման են գալիս: Ես էլ հետևեցի նրանց, լավ մոտեցա տղոնցը, որ տեսնեմ, թե ով են. «Աղջիկներն ո՞վ են, տղերք», - հարցրեցի ես: «Ալաման<sup>103</sup> են, հիվանդանոցի քույրերն են, եկել են բազար»: «Հա՛, դրանք չէ՞ որ գյավուր են, ինչպե՞ս է, որ դրանց բան չեն ասում»: «Գյավուր են, բայց մեզ օգնելու են եկել, իսկ էս երկուսը չեն, շար են, հիմա գնանք, տես: Ալաման աղջիկներ են»: «Հա՛, ալաման են, չէ՞ որ քրիստոնյա են, գյավուր չե՞ն», - ասացի ես: «Մեր օսմանցոնց բարեկամ են, մեզ օգնում են, մեր վիրավոր ասկյարներուն բուժում», - մի տղա սկսեց քրֆել հայերու օրենքին, Քրիստոսին ու Աստծուն: Ես միտքս փոխի. «Ինչպե՞ս անես, որ էս տղուն մե լավըմ ծեծես, երևում է, որ գազան տղա պիտի էղնի: Ի՞նչ միջոցի դիմես», - մտածում էի... մենք հա գնում էինք աղջիկներու ետևից: Էդ քրֆող տղեն բավականին հետ էր ընկել, իմ ուզածս էլ էր էր. «Ի՞նչ անես սրան»: Ես կարծում էի, թե սա է բոլոր հայերուն սպանողը, բավականին հետ էի ընկել: Մեկ էլ միտքս մի բան ընկավ, ոտքս գցի նրա ոտքերու արանքը, քայլած տեղը քիթուբերանի վրա էնպես վայր ընկավ սառույցին: Ես շարունակեցի աղջիկներուն հետևելը, հետն էլ մտիկ եմ անում, թե ինչ եղավ էդ տղեն: Պառկած մնացել էր, էլ չիղեն՝ ինչ եղավ, մե հարյուր հատ ծեծ արժեր: Հասակով թուրքերը կանգնում, մտիկ էին անում ու ի-

րանց-իրանց խոսում. «Ա՛խ, սրանք քաղաքից դուրս շեռքներս ընկնեհին»։ Աղջիկները գնացին կարտոլ, միս, խնձոր, բուրդոկալ առան. ինչ որ տեսնում էին, առնում էին։ Մի տասը-տասնհինգ տղա հետևում էին նրանց, ես էլ հետները։ Իրենց առուտուրը վերջացրին, դուրս եկան շուկայից։ Երկու ասկյարը տնքալով հագիվ-հագ կառզիկները տանում էին։ Հոգնել էին ասկյարները, կառզիկները ցած դրին, կանգնան։ Աղջիկներն էլ կանգնան, իրանց լեզվով խոսում ու խնդում էին։ Մեկ էլ տղեքը ասացին. «**Օլան, ուռուսս բախին հալան**»։ Ես էլ մտիկ երի, տեսա մե միջահասակ աֆիցերը՝ կայնած մեզանից մի քիչ հեռու՝ ճաշարանի չանգեն, մե ասկյարըմ էլ հետը զինվոր։ Աֆիցերը մտիկ էր էնում գերմանացունց աղջիկներուն, իսկ երկու աղջիկներն էլ իրենց հերթին մտիկ էին էնում ռուս աֆիցերին։ Աղջիկները հետեն խնդում էին, փորթուզալեն ուտում, կլեպներն էլ իրար վրա նետում, մեկ-մեկ էլ մտիկ էին էնում ռուս աֆիցերին։ Շարունակեցին ճանապարհը, գնացին դեպի հրապարակ, մտան տունըմ, տեսա սարայի միջից տերտերըմ դուրս եկավ՝ զնջիլով խաչը վզին գցած։ Էլի աղջիկներ դուս ելան՝ խաչերը թևերին, գլուխները կապած, խոսում էին ու խնդում։ Ես էլ, դուրսը նստած, մտիկ եմ անում դրանց շարժումներին ու ինքս ինձ մտածում. «*Էս ի՛նչ բան է, դրանք էլ քրիստոնյա են, ինչպե՞ս է, որ բան չեն ասում*»։ Ինչ որ տեսա, իրիկունը Սրբունին պատմեցի, Սրբունը զարմացավ։

1916 թ. ուռուսը Էրզրումը առել էր, թուրք գաղթականությունը լցվել էր Երզնկա։ Փաշան ինձ կանչեց. «*Գնա՛ գյուղ, մեր ծառա Հասանին ասե՛, թող երկու լավ սել պատրաստի, բերի, որ երթանք Սևաս, քանի որ ուռուսը շուտով էստեղ կեղնի*»։ Իսկ ուռուսը, ոչ թե 1916թ. հունվարին կամ փետրվարին եկավ Երզնկա, այլ 1916թ. հուլիսի 15-ին<sup>104</sup>։

Կեսօր էր, մալի կերը տվի պրծա, թողի, որ ջուր խմի, տեսա՝ մե թուրք տղա մը երգելեն ու հայերուն էլ քրֆելեն գալիս է. «*Բազլիկ ալղըմզը, Էրման ի լար, փոխեղիզմը Էրման ի լար, բազլիկ իսրաղիզ Էրման ի լար, փոխեղիզմը Էրման ի լար*»։ Արյունը խփեց

գլխիս: Էս տղեն, որ երգում էր, հետն էլ քրֆում էր հայերուն: Նս երկու կով էր բերում ջրելու: «Է՛յ, լսի՛ր, կովերոյ առաջն ա՛ն, կովերոյ չիսնագարեն ջուր խմելուց»: «Քո ի՞նչ գործն է, որ խոսում ես», -ասաց նա: Ես էլ մահանա ման գուկայի, որ մե լավըմ դրան ծեծեն: Էլ չսպասի, բռնի սրան մե լավըմ ծեծի, կարծես թե բոլոր հայերու վրեժը սրանից պիտի հանեի, այնպես որ ուզածիս պես մի լավ ծեծի: Էս տղեն լալով կովերը խառնեց առաջը, գնաց առանց ջրելու: Մյուս օրը եկավ կովերը ջրելու վախտը: Թողի կովերը ջրելու, բայց սիրոս անհանգիստ էր, ես էլ գնացի կովերու հետ, տեսնեմ՝ էդ տղեն մի ուրիշ մեծ տղու հետ եկավ. «Կսնզնի՛ հրլը, էս տղուն երեկ դու՞ ես ծեծել»: «Հա՛, ի՞նչ կա», -տեսա, թե միջից մի կարճիկ փետըմ հանեց, սկսեց ինձի ծեծելը: Լավ ծեծեց, ես ոչ մի շարժում չէի կարող էնել, անընդհատ զարնում էր, ուշաթափ ընկա գետնին: Մրանք ինձ թողին գնացին: Ես էլ ելա, կամաց-կամաց կովերը տարա տուն: Գյուլին հայաթն էր, տեսավ որ լավ չեմ քելում, վազեց քովս. «Ի՞նչ կա, Յուսու՛ֆ»: «Լավ չեմ, Վարդուհի՛, դու կովերը կապե՛, ես քիչըմ պառկեմ»: Կովերը կապեց, եկավ քովս. «Ասա՛, ի՞նչ է եղել, ինչի ստե՛, դուրբան քեզի»: «Ոչ մի բան, գնա Սրբունիս ստե՛, թող գա»: Սրբուհին եկավ. «Ի՞նչ է պատահել, ա՛յ տղա»: Չեռքերս տրորեց, ձեռքը դրավ ճակատիս, տաքությունս բարձր էր. «Ուրե՛ղի է ցավում»: «Բոլոր տեղերս էլ ցավում են»: «Դու մի քիչ առաջ լավ էիր, ի՞նչ եղավ քեզ, ա՛յ տղա»: «Գիտես, քույրի՛ կ շան, ինչի ծեծիս»: «Ո՞վ ծեծեց»: «Չիղեմ, մի տղա: Սպասե՛ պատմեմ, քույրի՛ կ»<sup>105</sup>...

### Թե ինչու Հուսեյնը շանը խփեց

Բայց կռիվն արդեն պրծել էր. «Հե՛յ գիտի աշխարհ, ինչե՛ր չեն անում: Պողոս քիսան ինչի հետ կովեց մի շան համար, էլ չիղեք, թե ինչ պիտի զար իրանց գլխին: Ոչ թե շնից, այլև կյանքից պիտի

*գրկվեհն: Յուսու՛ք, աշխարհի գործերը մարդ չի իմանա, չի իմանա նաև, թե վաղը ինչ պիտի գա իր գլխին: Մնա՛, քալիկ ջան, մեր փանը քու փան պես: Քու հերը լավ մարդ էր, չնայած որ անլեղի իրար վիրավորեցինք»:*

Իմ գալու երրորդ օրը չէր անցել, որ ես հիվանդացա, երկու ոտքս բռնվավ, չէի կարող ման գալ: Ես ինձ ասում էի. «*Էս ի՞նչ անխելությունն արի, որ փախա, երևի ես էսպես էլ մեռնիմ*»: Հիվանդ ոտքերս թոնիրն էի կախել, իսկ Հուսեյնը սիրտ էր տալիս. «*Շուրով դրսում գարունն կուգա, ոտքերդ կքացվին, մի՛ վախենա*»: Դժբախտաբար գարունը չտեսնված կերպով ուշացավ: Դեռ ձյուն էր գալիս, իսկ ես էնպե՛ս էի սպասում գարնանը, հաշվում էի ամիսներն ու օրերը. չմեռնե՛ի, գարունը շուտ գար: Չոքելով դուրս էի գնում, լալով չոքած հետ դառնում, միտքս էր ընկնում իմ առաջվա ժամանակը, երբ արծվի պես սլանում էի գյուղի էս գլխից մյուս գլուխը, իսկ հիմա մի հաշմանդամ էի դարձել, ի՞նչ պիտի եղնի վերջը՝ ես էլ չիղեի: Չմեռը երկարում էր, իմ միակ հույսը, որ ես պիտի լավանամ, գարունն էր: Նույնն էր ասում նաև թոփալ Հուսեյնը: Գարունը մոտ էր, ձյունը գրեթե հալվել էր, այգիները սևացել էին, դրսում զգացվում էր գարնան շունչը: Ես իմ հայրենի գյուղում էի, օրերն անցնում էին միապաղաղ, շատ դանդաղ, իսկ իմ դրությունը գնալով վատանում էր: Բոլորովին հույս չկար լավանալու, երկու ոտքերս իրար կպած սարսափելի ցավում էին, կարծես ես եղպես էլ ծնվել էի, իսկ խանումը ասում էր. «*Լավ է, չէ՞, ուրյե՞ն զ՛ աշխատար, ուրյե՞ն զ՛ ես ուրում: Դե շուր լավացի՛ր, պարսպ հաց ուրելու փարի չէ, մարդիկ իրանց գլուխն են մոլորել, ուրելիք չկա*»: Ես մտիկ էի անում խանումիս. «*Ի՞նչ ես քարս քարս մտիկ անում, քա սու՛ր եմ ասում, էսպես սուղ փարի քեզ պահելը հե՞շտ է*»:

-Ա՛խ, ի՞նչ անեմ, եթե ես վիճակում չեղնեի, ես քեզի գերի չէի մնա, ա՛խ, երանի չփախչեի, ես սևերես պիտի լինեմ մե փորըմ հացի համար: Մինչև ե՞րբ պիտի էսպես մնամ, քու մուննաթիղ

տակը: Ես կլավանամ, կաշխատեմ, պարտքիդ տակը չեմ մնա, խանութն՝ ջան:

Սիրունոտ խանութն, երբ որ մոտիցս անցնում էր, ինձ նայում էր թունավոր օձի նման, ուզում էր ինձ թույնել: Մահվան երկյուղը էնքան ամուր էր սրտիս տիրել, որ ես Դուրսունին հարցրի. «*Դու ինչ չես թողնի մեկնակ, դու ինչ հայրիկիս կողքին բաղե, եթե ես մեռնեմ, ես քեզնից շար շնորհակալ կեղնիմ*»: Անտեր, անտիրական, բախտի կամքին թողնված որբ էի: «*Մի՛ հուսահարվի, ես քեզ իմ կյանքի գնով կպահեմ, դու չես մեռնի*», -ասում էր Դուրսունը: Ես սիրտ առա, գոնե մի պաշտպան ունեմ, ես դժվար դրությունից դուրս կգամ:

Մարտի վերջն էր: Գարնան փոթորիկը ոռնում էր անասելի կատաղությամբ: Քամին ուժեղ էր, անձրևը էնպես էր գալիս, ոնց որ վեղորոյով ջուրը թափես: Կարո՞ղ եք պատկերացնել, թե ինչպես էր ձանձրացրել ինձ էդ անտանելի ցավը, ինչպիսի անհամբերությամբ էի գարնան գալուն սպասում: Ես կարծում էի, թե գարունը ինձ կփրկե, և իրոք որ լավացա: Մի անտեր հայ տղու համար երեք ամիս ասելն է հեշտ: Հիվանդանալ ուրիշի տանը, այն էլ առանց հորն ու մոր: Ես էլ շատ շնորհակալ էի իմ պաշտպաններից, չնայած ես իմ պարտքի տակից ելա (հետո էս գրքում կկարդաք): Վերջապես հիվանդանալուց մի երեք ամիս հետո, որ ոտքերս փակվել էին, ու չէի կարող ման գալ, աղաս՝ Հուսեյնը, թեքիս տակ դնելու համար երկու փայտ շինեց, սկսի կամաց-կամաց ման գալ, մի տասնհինգ օր հետո լրիվ լավացա: Ուրախության չափ ու սահման չկար, երբ ես առաջին անգամ զգացի, որ ոտքերս սկսին բացվելը. աչքերիս չէի հավատում, թե ոտքերս բացվել են: Դուրսունի հետ ման էի գալիս, երբ գալիս էր քովս: Մի օր ասի. «*Դուրսուն՛, արի էրթանք քրոջս տեսնենք*»: «*Գնա՛նք*»: Գնում ենք հայոց թաղով, անցնում ենք մեր տան մոտով, լացս գալիս էր, դրսում նստա մեր դռան մոտ ու լացի: Դուրսունը քովս նստավ:

-Ինչու՞ էդպես եղավ, Դուրսուն՛, հերոս էս ժամանակ գյուղում

լիքը մարդ կար, իսկ հիմա վերանա է գյուղը, ոչ ոք չկա: Երանի՛ հերոս էս վախտ, ժողովուրդը տեղն էր, ո՞վ էր մտածում, որ էսպիսի կոտորած կլինի, Գուրսու՛ն ջան:

-Գիտես ինչ, Յուսու՛ֆ, ես մե բանի մասին շատ եմ մտածում, մեր մեծերը ուրիշ բան են խոսում հայերու մասին, իսկ ձեր մեծերը՝ հակառակ: Մի օրինակ բերեմ, Ալջին իր շանը՝ Բուլային, փոքրուց սովորեցնում է, թե ինչպես պիտի որսա թռչունին, մնանապես նապաստակին: Եվ ի՞նչ լավ բան կարող ես սպասել էդ փոքր շան լակոտից: Մեծացել է, դառել մի ահռելի գազան: Էնվերն ու Թալեաթը նույն շան թուլեքն են, աշխարհի հայտնի գազանները, մեծացան, դարձան մարդագելեր: Իրանց որսն անհաջող անցավ, իրանց գազանությունը թափին անմեղ ժողովրդի գլխին: Մեր մեծերը մեզի փոքրուց սովորեցնում էին, թե հայերու մալը, ունեցվածքը հալավ է մեր մուսուլման ջամահաթին: Էդ մեր քյոփաք շեյխը, օղենն աստած, ի՞նչ է խոսում. գյավուրներուն մեր մուսուլմանները էսպես կոտորեցին, էսպես արեցին, էլ ուրիշ բան չիդե: Աստված ինձ էնպես շնորհք է տվել, որ ես վառած փեշքը կլիզեմ, ես հետևում եմ երկնային լուսավորությանը, ես նկատել եմ երկնային շատ երևույթներ, նախօրոք գիտեի արևի խավարման մասին, մեր աղոթքներու շնորհիվ մենք նույնիսկ թագավորին ենթարկում ենք մեր կամքին: Ես, կհավատա՞ս, չեմ ուզում էդ քյոփագի երեսը տեսնել, չե՞ որ, եթե քու մամը չէղնիր, ես չէի փրկվի մեռնելուց:

Ման գալով գնացիք Իբրահամ աղայենց տունը: Իբրահամ աղան սկսեց իմ մասին պատմելը.

-Գիտե՞ս ինչ եղավ: Մենք որ գնացինք փաշային ճամփու դնելու, դու անհայտացել էիր: Փաշան կասկածում էր իմ վրա, ասաց, թե դու ես տղուն տարել: Էն հայ աղջիկը գողտուց ինձ խնդրվավ. «*Իբրահա՛մ աղա, եթե Յուսուֆին գրնիս, ես քեզ փառ ոսկի մուժղա կուրամ, միայն թե նրան գրնիս*»: Կասկած ունեին թուրք տղոնց վրա, ասում էին, թե դու ծեծել ես մի թուրք

տղու, կա-չկա էդ տղեն էլ քու գլխուն օյին է խաղացել: Երեք օր շարունակ ման եկանք, բայց չգտանք: Եթե ես գիտենայի, թե դու գյուղում ես, կգայի, կտանեի քեզ: Վերջը որոշին մե մարդըմ վարձել, որպեսզի եզները քշի, այդպես էլ արեցին: Ահա այսպես ճամփու դրինք փաշային:

Արդեն Երզնկայի դաշտում<sup>106</sup> գարուն էր: Ես բավականին լավացել էի, ոտքերս բոլորովին չէին ցավում: Մեր գյուղի տղոնց հետ մածուն էինք տանում քաղաք՝ ծախելու: Հըլը տեսնեիք, երբ որ լավացա, աշխատում էի, քաղաքում առուտորը ես էի անում: Խանումս տան լավ-լավ բաներն ինձ էր կերցնում: Ես ինձուինձ մտածում էի. «*Ա՛խ դու, սիրուն օջ, մոռացա՞ր, որ ինչ թույլն էիր ուզում*»: Բալբակի տղեքն էլ էին գալիս քաղաք՝ մածուն ծախելու: Էս տղոնց մեջ երեք հոգի կային, որոնց ես խաղաղ ժամանակ միշտ ծեծում էի: Սրանք հիմա ուզում էին ինձ ծեծել: Խոսքները մեկ էին արել, որ ինձ ծեծեն: Այս մասին ինձ խաբար տվեց եղբայրս՝ Հարությունը, որը նույնպես մածուն էր բերում ծախելու: Մեր գյուղի և Բալբակի մածուն ծախող տղեքը կեղնեին մի քսան հոգի: Երբ որ ծախում էին մածունները, գալիս հավաքվում էին քաղաքի տակը, պատմում, թե ով ինչպես է ծախել, գովում իրենց գլուխները: Մենք էլ եկանք՝ ես ու Դուրսունը: Տեսա՝ էս տղեքը, որոնք որոշել էին ինձ ծեծել, համալները (ղանթարներ) ձեռքերը բռնած, կանգնել ինձ էին սպասում: Դուրսունը ինձ թե. «*Չվախեցնաս, զա՛րկ, եթե վրա գաս*»: Արդեն տասնվեց տարեկան տղեք էին, ես մենակ, ինքս էլ հայ, ի՞նչ անեմ, ինձ հում-հում կուտեն: Դրանցից մեկը ասաց. «*Արի՛ էստեղ, Յուսուֆ*»: Համալը ձեռքս գնացի իրենց կողմը: «*Դուք ուզում եք ինչ ծեծել, հա՞, շա՛ն որդիներ*»,-երեք հոգի էին, երկուսը անձնատուր եղան, թե իրենք չեն: Էս շան որդին ասաց. «*Արեք Յուսուֆին ծեծե՛նք, քսան լավ ժամանակն է*»: Ես էլ բռնեցի էս տղուն ու մի երկու հատ զարկի: Մեկ էլ տեսնեմ՝ քթից արյուն վազեց: Էս տղեն, թե. «*Հիմա արյունիս դեմը արյուն կուզեմ, թեզ րու՛ր*»: Կպել է ինձի, պոկ չիզա. «*Արյունիս արյուն կուզեմ*»: «*Ես քեզ երկու հար զարկի, դու էլ արի ինչ չորս*

հայր զարկե՛»։ Նա թե՛.«*Ես արյունիս արյունն կուզեմ*»։ Մյուս տղեքը մեղադրում էին ինձ, թե՛.«*Ինչու՞ խփեցիր էդ շան տղուն, տեղով փորշակե՛ք է*»։ Զովիցս չէր հեռանում, վրայի շորերը, քիթ ու բերանը արյունոտ էին։ «*Այ տղա, քովդ դանակ կա՞*»։ «*Հա՛*»։ «*Ես քեզ թույլ եմ տալիս, զա՛րկ որտեղիս որ կուզես, թող արյունն գա, մեկնակ ես քեզնից պրծնիմ*»։ «*Չէ՛, ես չեմ ուզում քեզ զարկել, արյունիս արյունն կուզեմ, հասկացա՞ր..*»։ Էսպես խոսելով, կռվելով հասանք մեր գյուղի ճանապարհին, որտեղից որ պիտի բաժանվեինք։

-Դու մյուս անգամ էսպես հեշտությամբ չես պրծնի, իսկ հիմա գնա՛, գյավուր օղի գյավուր։ Դու վայրս տաս, թե ես քեզնից վրեժ չհանեմ։

-Դու՛, Յուսուֆ, մի դիտերիմ թշնամի վաստակեցիր,-ասաց Դուրսունը։

-Դու ասացիր, թե մի՛ վախենա, խփի՛ :

-Ես շատ գիտեի, որ էսպես վատ պիտի վերջանար։

Միտս ընկան Սրբունի խոսքերը, թե մյուս անգամ էսպես կռիվ չսարքես, բայց արդեն ուշ էր։ Մենք Դուրսունի հետ փոխեցինք մեր ծրագիրը։ Առավոտ շուտ քաղաք էինք գնում, որ դրանց չհանդիպենք։ Ես մուշտարի ունեի, քանի որ իմ խանումը մաքուր գործ էր անում։

Խանումս փաշայի կին է լինում, էս թոփալ Հուսեյնը երկար ժամանակ աշխատում է փաշայի մոտ, չգիտեմ, թե ինչ լավություն է անում։ Փաշան էլ ասում է.«*Ընու լավությանդ փոխարենն ես քեզ կնությանն կուտամ իմ հարեմիս կանանցից մեկին*»։ Էդ օրենքը թուրք վերնախավի մեջ տարածված էր, թաժա աղջիկ էին բերում թե չէ, իրանց հին կանանց տալիս էին լավ ծառայողներին։ Նա միջահասակ էր, չաղիկ, սպիտակ, որ ասում եմ՝ սիրուն էր, իրոք որ սիրուն էր։ Էսպես խանումիս տալիս են թոփալ Հուսեյնին։ Շատ մաքրասեր էր խանումս, շաբաթը մեկ անգամ փոխում էր շորերս, լողացնում։ Մի չարքյազ կար, որը միշտ իմ մածունն էր առնում։ Տղեքն ասում էին.«*Չարքյա՛զ աղա, էսօր էլ մեր մածունն*

*առ, ինչ կեղևի»։ Նա էլ թե՛ «Չէ՛, տղե՛ք ջան, մի՛ք նեղանա, էս տղու մածունը համ լավն է, համ էլ մաքուր է»։*

Էսպես ես ու Գուրսունը առավոտ շուտ գնում էինք քաղաք, գործերս շուտըմ պրծնում էինք, գալիս գյուղ, որպեսզի էն արյուն պահանջող տղին չհանդիպենք։ Էսպես բավականին ժամանակ խաղաղ անցավ։ Մի օր էլ Գուրսունը թե՛ «Մեր գյուղի արարեքըն էստեղ եմ, արի նստենք, գնանք»։ Գնացինք մեյդանը, մեր գյուղացի ջանդարմա Մահմադը թե՛ «Էս ի՞նչ ման կուզաք<sup>107</sup>, տղե՛րք»։ «Գուզենք արարքով գյուղ էրթանք»։ Նա էլ թե՛ «Շատ լավ կենեք, գնացե՛ք, մի քիչ մա՛ն եկեք, մե՛ն արարա խոտ մնաց, ծախեմ, կերթանք»։ Մի քիչ չէինք հեռացել, մեկ էլ էն տղեն «Արի՛ էստեղ, ինչնից փախնում ես, որ արյունս չտա՞ս»։ Մի քիչ էն կողմը պոլիցիեն կանգնած էր «Հիմա ասե՞մ, որ դու հայ ես, հա՞, գյա՛վու՛ր»։ Ես ձեռն չեմ հանում։ «Հա՞, հիմա ասե՞մ, գյա՛վու՛ր, ինչու՞ ես լալկվել, դե՛ խոսիր, էսօր վերջին օրն է, ես քեզնից վրեժս պիտի առնիմ»։

Գուրսունը թե՛ «Արի՛ այստեղ, ա՛յ տղա, եթե մի բան պարտախի Յուսուֆին, ես քեզ կապանեմ, էս մատներով կհեղդեմ քեզ»։ Մահմադը տեսավ, որ էս տղեն մեզ հետ վիճում է, եկավ մոտիկ «Ի՞նչ կա, որ էդպես եք խոսում»։ Գուրսունը թե՛ «Եղբա՛յր, էս իշու ճագը կպել է Յուսուֆին, ուզում է պոլիցիային հայտնի, որ Յուսուֆը հայ է»։

-Ո՞վ է քեզ իրավունք տվել, որ սրան պոլիցիային հանձնես, հը՞։

-Ես չկարողացա վրեժս առնեմ, հիմա պիտի արդար դատաստանի ձեռքը տամ, որ իր պատիժը առնի, իմ խիղճս է թելադրում դա։

-Ես քու աչքերդ կհանեմ, շա՛ն որդի, չքվի՛ր էստեղից։

-Լավ, էս անգամ գնա դուրբա՛ն եղիր Մահմադ եղբորը,-ասաց նա ու գնաց։

Էդ Մահմադը, կարծեմ կհիշեք, մեր գյուղացի ջանդարմա

Մահմադն էր, որը միշտ Մրթոյի հետ գալիս էր մեր տուն՝ արաղ խմելու:

Մեր Ֆաթիմային հարս էին տարել Բալբակ՝ Գյուլ աղայենց տունը: Դուրսունը գնում է նրան տեսնելու: Եղբայրս՝ Հարությունը, Դուրսունին հայտնում է, որ էդ շան որդին գենք է ձեռք բերել ու տղոնց մոտ պարծենում է, թե. «*Էս զենքով պիտի սպանեն Յուսուֆին*»: «*Դու լավ էրիր, որ խաբար փվիր, բայց չխառնվիս էս գործին, դու էլ փորձանքի չգաս,-ասում է Դուրսունը եղբորս,-ես հիմա կերթամ, կասեմ Ֆաթիմային, րեսնենք՝ ինչ կասի*»: Դուրսունը գնում է, Ֆաթիմային պատմում է եղելությունը. «*Ա՛խ, ես աղջիկ չեղնեի, դրա հախիցը կգայի: Ի՞նչ անեմ հիմա ես: Դավիթին կհսկորեմ, որ դրա չվանը քաշի: Դա բավական չէ, շունը շնություն կենե: Հիմա լսի՛ ինչի, որքան դու ես սիրում Ուսուփին, այնքան էլ ես եմ սիրում, հասկացա՞ր: Եթե մի բան պատահի էդ փողոս, էլ չասես, թե ես քույր ունեմ: Հիմա լսե՛ ինչի: Ռուսը շուրով էսրեղ կեղնի: Էսօր իրիկուն երկուսդ էլ զնացե՛ք քաղաք, էնպես արե՛ք, որ ձեզ մարդ չրեսնի: Գնացե՛ք Ռ-գա փաշայի փունը, էնրեղ մարդ չկա: Ուսուփը փան ելքն ու մուտքը գիտե: Մի քանի օր վերջը, շար-շար փասը օր քաշե, ռուսը կուգա... Ուսուփը կազարվի: Դե հիմա զնա՛, հերկերդ մի քիչ հացը շար վերցրեք, ոչ մի մարդ էլ չիմանա, հասկացա՞ք*»: Իրիկունը Դուրսունը եկավ, ինձ դուրս կանչեց. «*Պետք է հեռանանք էսրեղից, էն շան որդին փորձանք չբերի մեր գլխին, եղբայրդ հայրենեց ինչ, որ զենք է առել, ուզում է քեզ սպանի: Ես էլ զնացի այս մասին Ֆաթիմային պատմեցի, նա էլ խորհուրդ փվեց հեռանալ, ասաց, որ այս քանի օրը ռուսը կգա, կազարվես*»: «*Ու՞ր գնանք*»: «*Ռ-գա փաշայի փունը, էնրեղ մարդ չկա, դու գիտես փան ելքն ու մուտքը: Դե զնա՛, հավաքվի՛ր, շար հաց, պանիր վերցրու՛ հետք, էնպես արա՛, որ խանունը չնկատե, թե ինչ ես անում: Ես էլ կվերցնեմ ուրելիք, ինչքան կարող եմ: Քեզ կամուրջի մոտ կսպասեմ: Դե զնա՛, շուր արի՛*»: Ես մտա հացատունը, հաց վերցրի, երկու կտոր պանիր փաթաթի շորի մեջ, ուզում էի դուրս գալ, խանունս ինձ կան-

չեց. «Արհ՛ ախարեղ, Յուսու՛ ֆ ջան, երեք հոփսս կարագ կա, առավոտը հեղդ կտանես ծախելու, էժան չտաս, կախում եմ հորը, որ չգանա, նայե՛ չմոռանաս»: «Լավ, իսկու՛մ ջան, տա՛ր, կախե՛»:

Ես մտա տուն, հացը վերցրի, ուղիղ գնացի դեպի կամուրջը: Մի քիչ սպասեցի, եկավ Դուրսունը թե՛ քելե: Արդեն մութը կոխել էր, դեռ չէինք շարժվել, մեկ էլ տեսանք՝ երեք հոգի դուրս եկան Եփրատից, գալիս են դեպի բախչեքի կողմը.

-Դուրսու՛ն, արի մտնենք կամուրջի տակը, տեսնենք՝ ովքեր են սրանք:

Եկան, համարյա մեզ հասան. «Ռ-գա՛, քեզի հետ լավ է, կանչի՛ դուրս, ասա՛, թե իրեն բան պիտի ասես, քե՛ր բախչի մոտ, մենք կեղևինք բախչի դռան մոտ, ես այնպես կանեմ, որ քեզ չի կպչի»:

-Վա՛յ, Դուրսու՛ն, էն շան որդին է, ի՞նչ անենք: Արի հարձակվենք, մի լավ ծեծենք, ճամփու դնենք:

-Չէ՛, ջանը՛մ, արի գնանք մեր ճամփեն, ով գիտե, հաջող անցնի-չանցնի:

Ուղիղ գնացինք քաղաք՝ փաշայի տունը: Կողքի հարևանի պատը ցածր էր, ելա պատից, մտա, հայաթի դուռը բացի: Դուրսունը ներս եկավ, մտանք գոմը, ես թե. «Դուրսու՛ն, արի գոմում բախարի վա պառկենք, տեսնենք՝ առավոտը ինչ կեղևի»:

Պառկանք մեռելի պես: Առավոտը զարթնա, ինձ թվաց, թե ուշացել եմ քաղաք գնալուց. երբ չորս կողմս նայի, տեսա, որ Ռ-գա փաշայի թախտի վրա ենք: Դուրսունը խոր քնի մեջ դեռ խռմփացնում էր: Ելա, կամաց ցած իջա, գնացի դեպի կուխնին, ներս մտա, թարեքը բացի, փակի, մեկ էլ տեսնեմ՝ թղթի տակ դրած մե բանըմ կա, թուղթը վերցրի, տեսա թղթի տակ երկու հատ գաթա ու մի հատ էլ գրություն. «Էս քու բաժինդ, Յուսու՛ ֆ, քու Գ-յուլի»:

Ծիրանները լավ հասել, կարմրել էին, թափած ծիրանները հավաքի, տարա գոմը, Դուրսունը դեռ քնած էր. «Ելի՛, ա՛յ տղա, էս վախար էլ մարդ քնի՞»:

Աչքերը տրորելով՝ ելավ նստավ. «Արհ՛, գաթա կե՛ր, ծիրան կե՛ր»:

Մեկ ինձ է նայում, մեկ ծիրանին ու գաթային. «Էս որդե-

դի՞ց»։ «Որտեղից գողին կասեն, մեր տնից։ Քելե՛ լվացվենք, հա-  
յաթի մեջ աղբյուր կա»։ Լվացվանք, նստանք, հացերս կե-  
րանք.«Դե արի գնանք, տունը ման գանք»։ Իրար հետ տունը  
ման ենք գալիս, բոլոր դռները՝ փակ, սենյակները՝ լիքը վեշերով։  
Մի երկու օր մնացինք, քաղաքում ման էինք գալիս, ծիրան էինք  
քաղում, ուտում և պառկում էինք։ «Դուրսու՛ն, գիրես ի՞նչ-ասի  
ես-արի գնանք փաշայի ամառանոցը, էնտեղ մեծ այգի կա, միրգ  
էլ ավելի շատ կա, ես եղել եմ»։ «Հասարար լավ ասիր»։ Ելանք,  
ուղղությամբ վերցրինք դեպի ամառանոց. փաշայի ամառանոցը  
շատ հեռու չէր, յոթ կմ դեպի արևմուտք կլիներ։ Ծանապարհի եր-  
կու կողմերում վարդերը բացվել են, տանում են ուղիղ Սարահի<sup>108</sup>։  
Առաջին հերթին մտանք այգի։ Ծիրանները, տանձերը թափած,  
թթերը, խնձորները իրանց հերթին, ծառերի տակ՝ լիքը միրգ.«Դե  
Դուրսու՛ն, ինչքան քեֆդ գուզե, կե՛ր»։ Դռները փակ էին, պատու-  
հաններից մի կերպ մտանք տունը, մեզ համար պառկելու տեղ  
պատրաստինք։ Հինգ օր մնացինք մեր փաշայի ամառանոցում։  
Ուր գնում ենք, նույնն է.«Արի գնանք գյուղում ման գանք»։  
Մտանք մի հայաթ։ Էստեղ պատկերը ուրիշ էր, հայաթը լիքը մեղ-  
րաճանճ կար, մեղունները վիստում էին.«Ի՞նչ անենք, Դուրսու՛ն,  
մեղը չուրե՞նք»։ «Հա՛, ուրենք, բայց ինչպե՛ս, մուրիկ գնալ չենք  
կարող, մեզ կզգեն»։ Ման էինք գալիս գյուղում, մարդ չկար, եր-  
կուսս էինք։ Ինչ ասես, որ չկար այստեղ։ Երզնկայի հարուստ  
փաշաների ամառանոցները մնացել էին գյուղացի երկու տղու։  
Վեց օր գյուղում մնացինք, զգվանք.«Դուրսու՛ն, արի գնանք քա-  
ղաք»։ Ելանք, գնացինք ուղիղ քաղաքի հրապարակը։ Անցնում  
էինք պոլիցիայի շենքի մոտով, մեկ էլ տեսանք պոլիցիայի մե շի-  
նելը, մե փափախը մ ու սուրըմ դուրսը՝ բախշի մեջը, դրած.«Էս  
ի՞նչ բան է, Դուրսու՛ն»։ «Վայթե մոռացել, գնացել եմ»։ «Կարող  
է եղպես էլ էղնի, ինչ կա»։ Դուրսունը գնաց, շինելը հազավ, սու-  
րը կողքից կախեց, փափախը դրեց գլխին.«Լա՛՛մ է, Յուսուֆ, սա-  
զու՛մ է»։ «Հա՛, շատ լավ եղավ»,-ասի ես։ Մեկ էլ սուրը քաշեց,

վազեց վրաս.«*Շուր քելե՛ առաջ, գյավուրողի՛ գյավուր*»: Ես չգիտեմ՝ ինչ անեմ, ծիծաղից ուշքս գնում է, իսկ ինքը պոռում է.«Թեզ ընկի՛ր առաջ, գյավուրողի՛ գյավուր»։ Մեկ էլ տեսանք՝ վերևից երեք-չորս մարդ գալիս են դեպի մեզի.«*Դուրսու՛ն, փահի՛ր*», հանեց սուրը, շորերը՝ շինելն ու փափախը, գցեց վրայից։ «*Քելե՛ Էրթանք, ջա՛նրմ, էս իսաթարալայից*»։ Գնացինք դեպի մեյդանը, այստեղ թուրքերու ամենամեծ մզկիթն<sup>109</sup> էր՝ երկու մինարայով.«*Արի գնանք մզկիթ*»։ Մտանք մզկիթ<sup>110</sup>, մարդ չկար.«*Արի բարձրանանք վերև՝ մինարեթ*<sup>111</sup>», -ասում է նա։ «*Չէ՛, ա՛յ րդա, ի՛նչ գործ ունենք*»։ «*Չէ ու չէ, արի բարձրանանք*»։ Բարձրանում ենք վերև կլոր աստիճաններով, փոքր լուսամուտներով, հա՛բարձրանում ենք։ Հազիվ հասանք վերև։ Ամբողջ քաղաքը մեր ոտքի տակն էր.«*Ի՛նչ կրսես, Յուսու՛ֆ, Էզան՛<sup>112</sup> չրա՛ մ*»։ «*Այ րդդա, իսո դու իսելառ չես*»։ Կամաց սկսեց.«*Ալլահ հեքթար, յա հիլլալի, հիլլալա...*»<sup>113</sup>։ Ես ցած մտիկ էրի, խելքս պտտվավ, մինարեն կեղմիր մի տասներկու հարկանի շենքի բարձրության.«*Յուսու՛ֆ, մրիկ էրե, ժողովուրդը ինչ-որ թալան է էնում*»։ Իջանք ցած, մենք էլ գնացինք։

Մեկը, մեշոկըմ շալակած, դուրս եկավ, մի մարդ վազեց ետևից, դանակով խփեց, մեշոկը ճղեց։ Մեշոկի միջինը կաղինի միջուկ էր, որը թափվավ գետնին, էդ մարդը շիվարած մնաց.«*Էս ո՛վ ճղեց մեշոկը*», - ու մեզ է նայում։ «*Էն մարդը, քեռի՛*»։ Սկսեց նորից հավաքելը, մենք էլ հավաքեցինք, ջեբերս լցրինք, գնացինք թալանի տեղը։ Թալանի տեղը երկուհարկանի կլոր մե շենքըմ էր՝ մեծ հայաթով, լիքը ժողովուրդ, բռռոց, իրար են ծեծում, խառնվել են իրար։ Մենք էլ դարպասի մոտ կանգնել, ժողովրդին ենք նայում։ Մե դուռըմ ջարդեցին, միջից մի մարդ փախավ.«*Օլան էլմանի դաշպր*»։ Թալանը թողած՝ ո՛վ պիտի մտիկ էնե մարդուն։ Ես հետո կասեմ, թե ով էր փախնողը։ «*Քելե՛ Էրթանք, Դուրսու՛ն, ի՛նչ ենք կանգնել*»։ Ելանք դուրս։ Գնում ենք դեպի մեր տունը.«*Դուրսու՛ն, արի գնանք, տեսնենք պոլիցիայի շորերը տե՞ղն են*»։ Մեկ

Էլ տեսնենք՝ երեք-չորս մոլլա, վեց-յոթ հոգի ուրիշ մարդ, հաց ու աղը ձեռքները բռնած, ոտաբոբիկ երեխեքը հետները գնում են ռուսին դիմավորելու: Մենք էլ խառնվանք նրանց, տղոնց հետ գնում ենք ռուսին դիմավորելու: Մենք հրապարակից դեռ չէինք դուրս եկել, մեկ էլ տեսանք՝ Տրապիզոնի կողմից ռուսաց հեծելազորը եկավ: Աժդահա մարդիկ էին՝ գլխարկներու կողքերը կարմիր, շավարներու կողքերը էլի կարմիր, գլխի մի կողմում շատ մազ թողած: Իջան հրապարակը: Էսպես բավականին ժամանակ մտիկ ենք էնում. Մի տասը հոգի գնացին դեպի տները: Մենք էլ հետևեցինք դրանց: Մտան մի տուն, դռները ջարդին, կապած շորերը քանդին, չիդես՝ ինչ են ման գալիս: Ջարդում են սնդուկները, միջի եղածը դուրս թափում: Էսպես մի քանի տուն մտան, մենք էլ հետները: Ջարդած սունդուկներից մեկին նայելով՝ Դուրսունը ասաց.

-Յուսու՛ ֆ, արի մտիկ էնենք, տեսնենք՝ ինչ կա էստեղ:

Նա սկսեց միջի եղածը դուրս հանելը. գրեթե բոլորը չկրված շորեր էին:

-Ահա մի բան գտա, Յուսու՛ ֆ:

Մի փոքր կապոց էր գտածը: Քանդիկնք, տեսնենք ի՞նչ, երկու հատ կանացի գլխի գարդ, մեկը ես վերցրի, մյուսը՝ Դուրսունը:

-Արի էրթանք, Դուրսու՛ն, հերիք է ման գանք:

Մեկ էլ մեզ հանդիպավ Ռ-գան՝ մեր գյուղի Հասանի տղեն:

-Վա՛յ, տղե՛ք, էս ու՞ր եք կորել, ձեզ են ման գալիս:

-Բա դուք որտե՞ղ եք:

-Բոլոր գյուղացիք քաղաքում են: Եկեք գնանք:

Ներս մտանք մի մեծ հայաթ.«*Եկա՛ն, եկա՛ն փղեքը*», -պռռացին փոքր երեխեքը: Բոլորը դուրս թափան, վազեցին դեպի մեզ, եկողը համբուրում է: Հարց են տալիս.«*Որտե՞ղ էիք, ի՞նչ էիք ասում*»: Վերջապես եկավ խանումս.

-Ա՛յ տղա, էս ի՞նչ օյին բերիք, որտե՞ղ էիք, վառանք ձեզ ման գալով:

Բոլոր գյուղացիք մեր գլխին էին թափվել, հարց էին տալիս, եկավ քույրիկս, բռնի լավըմ համբուրեցի: Խանումս թե. «Արի՛ գնանք Կոնստանդնուպոլս, ջաննիդ մեռնիմ, սոված կեղնիս», -սեղան դրեց, ես էլ մոտիս զարդը հանի տվի խանումիս: «Էս որսրեղի՞՞, Յուսուֆ»: «Քեզ փեշքյաշ, խանու՛մ ջան»: «Այ դու սարիս, ախպե՛ր ջան»: Թոփալ Հուսեյնը թե. «Ես որ քեզ ասում էի, թե կորած Կոնստանդնուպոլսի դուրս կգա: Լավ, կնի՛կ, լողացրու՛, շորերը փոխի՛, Կոնստանդնուպոլս կեղնիս»: Լողացրեց, շորերս փոխեց, պառկեցի, հանգրստացա: Առավոտ Իբրահամ աղան եկավ. «Հովհաննես՛ս, արի՛, բան եմ ասում: Մալերը սոված են, Գուրսունի՛ հեպ փարեք, արածացրե՛ք: Եթե՛ գան փանելու, ասե՛ք, որ հայու մալ է»: «Ախր ես հայերեն չեմ կարող խոսել, մոռացել եմ»: «Բան չկա, մոռացել ես, կամաց-կամաց խոսի՛, էլ քեզ արգելող չկա»: «Լավ, հիմա կփանեմք»: Մալը դուրս թողինք: Ուղիղ քշինք դաբախանայի կողմը, թողինք չայիրը արածելու. ոնց որ գայը ընկներ մսի վրա, խեղճ մալերը երեք օր է՛ բան չէին կերել, էնպես էին արածում, ոնց որ որևէ մեկը չայիրը պիտի խլեր իրենց ձեռքից: Ես տեսա, որ մի փունջ խոտի տակ նստել է մի սպիտակ բան՝ աչքերը բաց, ականջները երկար, ինձ է նայում. «Գուրսուն՛ս, շուր վազի՛ արի»: «Ի՛նչ է, Յուսուֆ», -հարցրեց Գուրսունը: «Չգիտեմ՝ ինչ է, նստել էր աչքերը բաց, ականջները երկար, ինչ էր նայում, թողեց փախալ»: «Վա՛յ, փնջե՛ն, նապաստակ է եղել»: «Չգիտեմ, ես առաջին անգամ եմ տեսնում»:

Արդեն իրիկվա մոտ էր, մալը լավ կշտացել էր, հավաքինք, տարանք տուն, հաց կերանք: Առավոտ դուրս եկանք, մեկ էլ եկավ Ֆաթիման, ավելի էր գեղեցկացել, չաղացել. «Արի ախպե՛ր, Հովհաննես՛ս, -արդեն իմ անունն էին փալիս, -ա՛յ Կոնստանդնուպոլս, էդ ի՞նչ բան ես արել»: «Ի՛նչ, քույր ջան»: «Դու ինչի՞՞ ոսկին Հուսեյնի կնկան փվիր»: «Ի՛նչ ոսկի, քույրի՛կ», -զարմացա ես: «Էդ գլխի կանացի զարդը, որ դու փվել ես խանումիդ, քասնիկն ոսկի արժի, հասկացա՞ր»: «Ես ինքս եմ նվեր փվել խանումին, հեպը էլ չգիտեի,

որ այդքան թանկ է, թե չէ քեզ կրայի»: «Ինչ պետք չէ, Հովհաննես՝, դու արդեն ազատվել ես, քեզ էլ փող է պետք, քսանհինգ ոսկի՛...»: «Բան չկա, քու՛յր ջան, եթե գիտենայի, քեզ կնվիրեի, ես քու լավությունը չեմ մոռանա, անպարճառ քու լավության փակից կեղնեմ»: Մեկ էլ խանումս. «Արի՛, արի՛, հա՛ց կեր, Հովհաննես՝, ջան»: Առավոտ է, մեկ էլ Ֆաթիման դարձավ խանումիս. «Լավ փողու փեր դարձար, չէ՞, հազր բարս-օղլի դառար»: «Ինչու չէ, որքան վար եմ եղել ես: Վայթե դու երեք ամիս հիվանդ պահեցիր, թող գայիր փեր դառնայիր: Ես քու փորիդ ցավը գիտեմ, գիտեմ՝ ինչի ես տրաքվում»: «Էդ ո՞ւմ ես վախեցնում, խանու՛մ բաջի, եթե ես աղջիկ էղնեի, մի օր էլ քու փունդ չէի թողնի: Ես ջանդարմայից չվախեցա, շեռքից առա, վայթե պահելու՞ ց՞ վախենայի»:

Ես տեսա, որ սրանք շատ պիտի վիճեն, ասի. «Բան չկա, քու՛յր ջան, կորած փեղ չէր»: Երկրորդ օրը՝ իրիկունը, խանումիս ու ֆաթիմայի վեճը միտքս ընկավ. «Դուրսու՛ն, արի՛ էսրեդ, գիտե՛ս ինչ երկու հասր մեշոկ պատրաստի, մութը որ ընկնի, գնանք մե հարուստ փունդ, բալքիմ մի բան քերենք»: Մութը կոխեց, Դուրսունի հետ ելանք, մի տասը տուն այն կողմ տունըմ մտանք: Դռները փակ էին. «Ի՞նչ անենք, Դուրսու՛ն»: «Արի պատուհանը ջարդենք»: Մի հարմար պատուհանի մոտ կանգնանք, կտրեցինք, մտանք ներս: Բոլոր իրերը կապած էին, խալիները իրար վրա դարսած: Մի հատ սունդուկ կար, մի կերպ ջարդեցինք, ինչ տեսակ կտոր ուզես մեջը կար, մութը կոխել էր, լավ չէինք տեսնում: Ինչ որ կար էդ սունդուկի մեջը, լցրինք մեշոկները. «Ես ուրիշ բան էի ման գալիս, Յուսուֆ, բայց չեղավ»: «Ի՞նչ կուզեիր որ»: «Կանացի գարդ»: «Իսկ սրանք ինչո՞ւմ են վար»: «Մրանք իրանց փեղն ունեն, նա՛՝ իր»: «Լավ, քելե՛ էրթանք: Ուրիշի մալի վրա խումար խաղալը հերիք է»: Ուղիղ տարանք Ֆաթիմայի տունը. «Ահա քեզի կտոր, քույրի՛կ, ինչքան կուզես, կարի՛, հագի՛»:

«Հոգու՛ ղ մաքրադ, Հովհաննէ՛ս, ես քեզնից բաւ չեմ ուզում, ինչո՞ւ ես նեղություն քաշում ինչ համար»: «Ի՞նչ նեղություն, քու յր ջան, սա էլ քեզ համար քիչ է»:

Երրորդ օրը փորձանք եղավ: Սովորականի պես մալը տարանք նույն տեղը արածելու, մեկ էլ տեսանք Մայնոսի տղեն՝ Կարապետը, մեր Մուկուչը և երեք հոգի ուրիշ. «Հովհաննէ՛ս, արի՛ ախարեդ»: «Ի՞նչ կա»: «Էս մալը պիտի տանենք»: «Ու՞ր պիտի տանենք: Ոչ մի տեղ չեք տանի, ու՛մ մալը կտանիք, իմն է մալը»: «Լավ, տե՛ս կտանենք, թե՛ չէ»: Մի ժամ չէր անցել, մեկ էլ տեսանք՝ հինգ զինվոր՝ զենքերը ձեռները, մոտեցան մեզ, մալը հավաքին, տարան: Ես վազի՛ ասելով. «Հայի մալ է, մի՛ ք տանի»: Չինվորներից մեկն ընկավ ետևիցս, ուզում էր խշտիկով ինձ սպանի: Ես էլ ստիպված թողի հեռացա. «Արի՛ զնանք տուն, ասենք, քալքիմ մի բաւ անեն»: Գնացինք տուն, պատմեցինք եղելությունը, բոլորը տխրեցին, խանումս լալիս էր. «Կովերով էինք ապրում, Հովհաննէ՛ս ջան, հիմա ի՞նչ պիտի անենք»: Էսպես մի երեք օր անցավ, ես ու Դուրսունը տնից դուրս չէինք գալիս, նստում էինք դրսի դռան մոտ: Մեզնից մի չորս տուն այն կողմ զինվորներ էին մնում: Դրսի դռան մոտ նստած՝ տեսա, որ երկու զինվորը նման էին հայի: Գնացի, մոտները նստա, խոսում էին հայերեն, ինձ նայեցին, ես երեսիս խաչ հանեցի. «Ես հայ եմ»: «Բա հայերեն ինչո՞ւ չես խոսում»: «Չեմ կարող խոսել, հայերենը մոռացել եմ»: «Լավ, էլ չխոսիս թուրքերեն, -ասաց նա ընկերոջը, -խոսի՛ հայերեն», -սկսեցին խոսելը: Ես հասկանում էի, թե ինչ էին խոսում, բայց չէի կարող պատասխանել, էդ օրը կմկմալով խոսեցի: «Լա՛ւ, վաղը արի՛»: Մյուս օրն արդեն լավ էի խոսում հետները: Հարց էին տալիս կոտորածի մասին, ես միայն մեր շրջանի մասին էի խոսում, պատմում էի, թե ինչեր են կատարվել:

-Էս ի՞նչ օրենք է, ես թուրքերը ինչ ուզում եմ, անում եմ հայերու հանդեպ:

-Միայն հայերուն չէ, ռուսներին էլ էին այդպես անում:

-Էդ ինչպե՞ս, էստեղ ռուսնե՞ր էլ էին ապրում:

-Չէ՛, ջանը՛մ, գերի բերեցին, մի տասնհինգ հոգի կեղնեին, ես իմ աչքով տեսա՝ ծեծում էին:

-Հըլը լա՛վ պատմի, տղա՛ ջան, ինչպե՞ս տեսար:

Ես սկսեցի պատմել վերևը հիշածներս. «*Ահա բոլոր պատմութ-  
յունը*»:

-Ա՛յ տղա, դու հերոս գործ ես արել, ապրի՛ս, ախպե՛ր ջան, բա հիմա էդ Սրբունը որտե՞ղ է:

-Էլ չգիտեմ, նրանք փաշայի հետ գնացին Սևագ:

-Բա դու որտե՞ղ ես:

-Էն տունը կմնամ, քույրս էլ էնտեղ է:

-Ի՞նչ ունիս:

-Ոչ մի բան, ես դեռ աղայիս մոտ եմ մնում: Էս երկու օր կեղնի, ինչ մեր մալը ռուսները տարան:

-Ինչպե՞ս թե տարան:

-Ես ու Դուրսունը մալը տարել էինք արածելու, հինգ զինվոր-  
ներ եկան, տարան, արդեն երկու օր կեղնի: Հիմա տանը ուտելու  
բան չկա, համարյա սոված ենք:

-Արի գնանք մեր պարուչիկի մոտ:

Ինձ տարավ իրենց հրամանատարի մոտ, ռուսերեն պատմեց  
ասածներս, հրամանատարը մեկ ինձ էր նայում, մեկ՝ պատմողին:  
Երբ հայ զինվորը վերջացրեց պատմելը, հրամանատարը տեղից  
ելավ, գնաց-եկավ: Հետո էլի ռուսերեն ինչ-որ բան խոսեցին, ու  
հայ զինվորը դարձավ ինձ. «*Հիմա ճաշի ժամանակն է, գնանք եր-  
կու աման ճաշ փար չեթոնց, թող ուտեն: Հեյոր կգաս, կգնանք  
գերիներու փեղը, փեսները՝ ինչ հեյոք են թողել*»:

Ես վագելով գնացի, երկու աման բերի: Գնացինք հայաթը, եր-  
կու կուխնուց<sup>114</sup> գոլորշին ֆշշալով ելնում էր, մի մեծ շերեփ ձեռքին՝  
պովրը խառնում էր: Ինձ տարավ պովրի մոտ, չգիտեմ՝ ինչ խոսեց  
պովրի հետ ռուսերեն: Պովրը ինձ նայեց, բացեց ամանների բե-  
րանները. մեկը ջրալի ճաշ էր, մյուսը՝ պինդ: Ճաշերը տարա մե-

րոնց: «*Էս որտեղի՞ց, ա՛յ տղա*»: «*Հայ զինվորները տվին*»: Նստանք, ճաշը կերանք, ես նորից զինվորների մոտ գնացի: «*Եկա՞ր, լա՛վ տղա*»: Գնացինք ներս, ապա իրենց հրամանատարի, երկու հայ և չորս ուրիշ զինվորների հետ գնացինք Ասկի շահարի: Հասանք պարսպի մոտ, ես ասացի. «*Մյ այստեղ էին, ես հացը այստեղից էի գցում*»: Գնացինք, դուռը բացին, մտան հայաթի մեջը, ման էին գալիս: Էս կողմը նայեցին, էն կողմը նայեցին, մտան սենյակները, մի երկու սենյակ իրար մոտիկ էին, սկսին նայելը: Մեկը կանչեց մյուսներին: Սկսին հետաքրքիր նայել պատի վրա գրվածներին: Դառան ինձի, հինգով թաբլին վերև, նրանք ինձ մի երեք-չորս անգամ վերև թաբլեցին, գիտեի, թե պիտի սպանեն, աղաչում եմ. «*Եղբայր, ես ոչ մի վայր բան չեմ արել, ինչու՞ եք ուզում ինձ սպանել*»: Ինձի ցած դրին, ես աֆիցեերը համբուրեց ինձի, ձեռքս թափ տվեց, նորից սկսին պատերին նայելը: Ելանք գնացինք դուրս. «*Եղբայր, եղ ի՞նչ արիք, ինչի ինչու՞ էիք վերև թաբլում*»: «*Դա ռուսական պատիվ է, դու մեծ գործ ես կատարել գերիներու հանդեպ: Պատերի վրա գրված էր. «Մի տղա հաց է բերել մեզ, երևի հայ պիտի էղնի: Թուրքերից էսպիսի բան չի կարելի սպասել: Օրհնում ենք և Գևորգի, և Ասրվաժաժնի անունով, թող բոլոր սուրբերը օգնական էղնին նրան: Նաև մեր բոլորի կողմից՝ քսան գերիների, մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում նրան*», - ու տակն էլ գրված էին գերիների անունները: Գնացինք կազարման, հրամանատարը կանչեց մեկին, չգիտեմ՝ ինչ ասաց, էդ հայ տղեն ինձ թե. «*Արի՛ գնանք*»: Գնացինք մտանք հայաթը, մի դուռ բացեց. պահեստն էր: Ներս մտանք, չորս մեշոկ այլուր դուրս գրեց, մի մեշոկ կրուպա, մի մեշոկ շաքար ու մի վեդրո էլ յուղ<sup>115</sup>...

-Հովհաննես՝ ս, սրանք մեր հրամանատարը տվեց քո արած լավության փոխարեն, բացի սրանից, ամեն օր արի՛, որքան ճաշ կուզես, տա՛ր: Էդպես էլ հրամանատարը հրաման տվեց պովրին: **Մեկ էլ քու մասին գեներալը գեկուցագիր գրեց, որ քեզ խաչ տան,** կարգադրեց, որ ձեր մալը գտնենք: Վաղը առավոտ կգաս, երևի ձեր մալը գտնենք: Էսքանը քու լավության փոխարեն: Դե՛, հիմա

քո հալալ աշխատանքի արդյունքը տանենք:

- Մեր կեցած տեղը շատ հեռու չէ:

Բոլորը հավաքվել, մեր բերած մթերքին են նայում, իրենց-ի-րենց խոսում են. «*Էս որտեղի՞ց էսքան մթերքը...*»: Վերջապես տարածա մթերքը բաժանեցինք: Առավոտ Դուրսունի հետ գնացինք հայ զինվորների մոտ, որպեսզի մալը ման գանք: «*Եկա՞ք, Հովհաննես՝ ս, - երկու հոգի գենքերն առան, - դե՛ գնանք: Հովհաննես՝ ս, որտեղի՞ց փարան մալը, ո՞ր կողմը փարան*»: «*Հա՛, եղբայր, գնանք արածելու փեղը, ես ասեմ*»: Հասանք արածեցնելու տեղը. «*Եղբայր, այստեղ էր արածում մալը*»: «*Ո՞ր կողմը փարան*»: «*Դեպի Եփրատի կամուրջը*»: Մալի հետքով գնացինք հասանք կամրջին, տեսանք՝ մեր մալը չայիրը արածում է. «*Ահա մեր մալը, եղբայր*»: Դեռ չէինք հասել մալի մոտ, հայ զինվորն ասաց. «*Շուր հավաքե՛ք մալը*»: Եկան երկու զինվոր, սկսեցին իրար հետ խոսել, մախորկա քաշեցին, հայ զինվորը թողթըմ հանեց ու ցույց տվեց սրանց, վերջը համաձայնեցին մալը տալ: Տասը մալ պակասել էր: Մալը քշինք, տուն բերինք: Հավաքվեցին գյուղացիք, ուրախությունից չգիտեին՝ ինչ ասեին, եկողն ինձ համբուրում էր: Իբրահամ աղան եկավ, համբուրեց ճակատս. «*Հալա՛լ եղևի քու ծնողիդ, Պողոս քիսայի՛ փղա, դու փրկեցիր մեզի: Վաղը փանեմ, չեզ հանչեմ հայոց շարքին*»: Շար շնորհակալ ենք մեր հանդեպ ցուցաբերած վերաբերմունքից»:

Տեսնեիք իմ սիրուն խանումիս ուրախությունը, չիդեր՝ լա՞ր, թե՞ խնդար: Ֆաթիման եկավ, համբուրեց ու ասաց. «*Եղբայր ջան, ես գիտեի, որ դու հալալ կաթնակեր ես, դրա համար ես քեզ շար եմ սիրում: Դու հալուցեցիր քու մարդկային պարտականությունը, - դարձավ - հայրի՛կ, մայրի՛կ, դուք հիմա ի՞նչ կասեք, մեղադրում էիք, որ ես շար եմ սիրում Յուսուֆին: Հիմա չե՛ր սիրած Ներսեսի փղա Մուկուչն ու՞ր է, դե հիմա՝ էս նեղ վախարը, թող գա, չեզ օգնի, ու՞ր է, չի երևում: Ուռուսները եկան թե՛ չէ, երկրորդ օրը չքվավ, գոնե գա, փեսի՛՛ մեռած ենք, թե սադ, այնինչ հե՛չ չի*

երևում: Հիմա ի՞նչ կասես, մայրիկ, ուզում էիր՝ փան փեսա աներ, չէ՞, լավ տղա էիր գրել Մուկուչին»: Ես դարձա նրանց.

-Անչափ շնորհակալ եմ ձեզանից բոլորիցդ, առաջին հերթին քեզանից, քո՛յր ջան, որ դուք մինչ օրս փրկեցիք իմ ու քրոջս կյանքը գազանների ճանկերից:

Առավոտ Իբրահամ աղան գնաց եղբորս՝ Հարությունին, բերեց: Դարձավ ինձ ու քրոջս. «Արե՛ք, հաց կերե՛ք, որ ձեզ փանեն հանձնեն հայոց շտաբը, որպե՛ղ որ հավաքում են որբերին»: Էստեղ խառնվել են իրար, մի կողմից Դուրսունը, Ֆաթիման մյուս կողմից՝ խանումս, թոփալ Հուսեյնը, չիդեն՝ ինչ էնեն: Ի՞նչ ասեմ, համբուրեցին ամենքը, իրենց համար գովեցին, քույրիկս էնպիսի մի լաց էր դրել, որ չգիտեմ՝ ինչ անեմ. «Ես չեմ բաժանվի քրոջիցս», - անընդհատ արցունքն աչքերին ասում էր նա: Վերջապես սիրտ առա. «Մնաք բարով», - ասացի, ելանք դուրս: Իբրահամ աղան առջևից, մենք էլ հետևից, գնացինք հայոց շտաբը, ներս մտանք, հարցրեց. «Ո՞վ է աշտրեղի մեծը»: «Ի՞նչ պեղք է անես», - հարցրեց մի մարդ: «Ես երեք երեխա եմ բերել, կուզեմ՝ հանձնեն»: Էդ մարդը վազեց ներս, դուրս եկավ մի միջահասակ մարդ, խոսեց Իբրահամ աղայի հետ: Նա պատմեց, թե ինչ դժվարությամբ է մեզ պահել, էս մարդը շատ շնորհակալ եղավ, խոստացավ, որ իրենք էլ իրենց հերթին կօգնեն Իբրահամ աղային: Դարձավ ինձ. «Տղա՛ ջան, անունդ ի՞նչ է»: «Հովհաննես՛ս»: «Հայերեն գիրքն ս՛»: «Հա՛»: «Արտասահման մարդ ունի՞ ք»: «Հա՛, եղբա՛յր ջան, եղբայրս՝ Հմայակը, հորեղբայրս՝ Պետրոս ամին»: «Որպե՛ր ղ՞ են հիմա ապրում»: «Ռումիկիայում»: «Հասցեն գիրքն ս՛»: «Հա՛»: «Դե՛, ասա՛ րեսնեն»: «Ֆոթիշեն քաղաք, Սնդիեյի 55, Թշունյան Պետրոս»: Էս մարդը դարձավ ինձ. «Ինչ ոսկի տղա ես, որ ձերոնց հասցեն գիրքես»: «Հայրիկս որ նամակ էր գրում, ես միշտ մոտրն էի, դրա համար էլ հասցեն հիշում եմ»: «Լավ, Իբրահա՛մ աղա, ես ասի, որ քեզ կօգնենք, էսօր գնա՛, վա՛ղն արի»:

Մռռացա ասել, որ էն մարդը, որ մեզ ընդունեց, եղբորս ասաց,

որ այսօր հեռագիր կտան հորեղբորս, որ գան, մեզ տեր դառնան.«*Իսկ հիմա ձեզ կրասնենք որբանոց, էնրեդ ձեզ լավ կնայեն, մինչև որ ձերոնք գան, րդա՛ջան*»:

Իբրահամը մեզ բոլորիս համբուրեց, մնաք բարով ասաց ու գնաց: Քույրիկս՝ Հազարնիկը, ձենով մեկ լալիս էր: Ես փորձում էի հանգստացնել.«*Ինչու՞ կուլաս, քույրի՛կ ջան*»: «*Չգիտեմ, եղբայր ջան, թե ինչու եմ լալիս*»: Խեղճի սրտին վկայում էր, որ գլխին փորձանք պիտի գա: Մեզ տարան հայոց թաղի Ժամի հրապարակի արևմտյան կողմում՝ Քյամախի ճանապահի վրա գտնվող մեծ շենքը, որի առջևում պարտեզ կար: Ներս մտանք, մայրապետները եկան, մեզ տարան, մազերս խուզեցին, աղջիկներին տարան երկրորդ հարկ, մեզ՝ առաջին: Իրոք որ որբանոցում մեզ լավ էին նայում. թե՛ ուտելիքն էր լավ, թե՛ մաքրությունը: Մի թուրքական օֆիցեր կար՝ ազգությամբ հայ, Ղարբեդից<sup>116</sup>, մեզ մարզանք էր սովորեցնում, նշան բռնել, երգեցողություն: Պատի վրա մի կլոր շրջան էր գծում ու ասում.«*Ամենքդ քսան քար հավաքե՛ք ու աշխատե՛ք իսկեւ զձի մեջրեղը: Դա հավասար է զենքից կրակելուն*»: Մի տասը օր անցավ, օր օրի վրա որբերի թիվն ավելանում էր: Գրեթե ամեն օր քրդերը բերում էին նորերին ու փող ստանում: Դերսիմից<sup>117</sup> մի հայ աղջիկ բերին՝ տասնչորս տարեկան, անունը Եվա: Էս աղջիկը հայոց կոտորածի մասին քրդերեն երգ էր երգում: Էնպես լացով էր երգում, որ մենք ու մայրապետները, նրա շուրջը հավաքված, հետը լալիս էինք: Որքան էլ քարսիրտ մարդ էղնիր, այնտեղ լաց կլիներ: Նա երգելով բողբոլում էր աստծուն.«*Դա-լիկո-դա-լիկո քյա.ֆուր խողեդա գուլում է օաման*»:

Մեզ դաս տվող խարբերոցի օֆիցերը մի իրիկուն եկավ ու տեսավ, որ որբերը հավաքվել են աղջկա շուրջը, աղջիկը երգում է, մենք էլ, մայրապետներից բռնած, հետը լալիս ենք: «*Էս ի՞նչ բան եք անում, էլ գործ չունե՞ք*»,-նեղացավ մայրապետների վրա: Մյուս օրը՝ առավոտ, էս օֆիցերը դարձավ մեզ.«*Արե՛ք, րդե՛րք, ձեզ բան եմ սովորեցնելու, Բազազ Հարությունի թարրոնը պիտի սորվիք*»: Բոլորին պաշտոններ<sup>118</sup> տվեց, մի մեծ քթով տղա մը

կար, նրան սուլթան Համիդի պաշտոնը տվեց, մեկին՝ ռուս թագավորի, մյուսին՝ Բագազ Արտեմի, ինձ էլ աղջկա պաշտոն տվեց, սկսինք խաղալու համար պարապելը: Երբ թատրոնը ներկայացրինք, նորից մի ուրիշը սկսինք պարապելը, այն էր՝ «**Սաբանան, փերփերը և մարդը**»: Շատ խնդալու թատրոն էր, ես սատանայի դերը տարա: Երեքն էլ վագում են. սատանան՝ առջևից, տերտերը՝ նրա հետևից, մարդն էլ՝ տերտերի հետևից, վագում են, մեկը մյուսին չի հասնում. կլոր ֆռռում ենք: Այս թատրոնը դուրսը ներկայացրինք, սաղ որբերը ծիծաղում էին:

Մի օր էլ ասին, որ շատ մարդ են բերել Գերսիմից, ես էլ գնացի՝ տեսնեմ, թե ովքեր են: Գնացի մտա հայաթը, տեսնեմ՝ մի կինըմ, մի շատ սիրուն աղջիկըմ, որը կլիներ իմ հասակին, հարցրի. «*Որ փեղացի՞ եք, քույրի՛կ*»: «*Մենք Փթառեշցի ենք*»<sup>119</sup>: «*Վա՛յ, քույրի՛կ, իմ մայրիկն էլ Փթառեշցի է*»: «*Ո՞վ է, փղա՛ ջան*»: «*Բուրիկը՝ Դալիկ մամի աղջիկը*»: «*Վա՛յ, փղա՛ ջան, չեքոնցից ո՞վ կա*»: «*Ես եմ, եղբայրս, փոքր քույրիկս*»: «*Հիմա դուք որտե՞ղ եք*»: «*Որբանոցում, հապա դուք ու՞ր պիտի երթաք*»: «*Հըլը չիդենք, փղա՛ ջան, նոր ենք եկել*»: «*Ես հիմա կերթամ չեզ համար շոր կերերեմ, կգնաք բաղնիք*»: Վագեցի, հայաթի մեջը ռաստ եկավ<sup>120</sup> էդ մարդը, որը մեզ ընդունեց. «*Եղբա՛յր ջան, մայրիկս, քույրիկս եկել են, շուր շոր փվեք, որ փանեն բաղնիք*», - ես խաբեցի այս մարդուն: Էս մարդը ոչ մի բան չասաց. «*Արի՛, փղա՛ ջան, գնացինք մտանք ներս, մեկին կանչեց, - էս փղային երկու կանացի հագուստ փու՛ր, երկու հար էլ սարոն*»: Երկու հատ մեծ շալ տվեց, մնացածն էլ չիդեմ՝ ինչ տվավ: Հավաքի, շալակի ու վագեցի: Կանայք, որ տեսան, զարմացան: Աղջկա անունը Նոյեմ էր (Հիմա Նոյեմ քույրիկս ապրում է Երևանում, Արաբկիր, Շիրվան-զադեի դպրոցի մոտ, ամուսնու անունն էլ Միշա է). «*Էդ ի՞նչ արեցիր, եղբա՛յր ջան...*»: «*Ի՞նչ, դե քելեք բաղնիք*»: «*Շար շնորհակալ ենք, մոռացանք անունդ հարցնել*»: «*Անունս Հովհաննես է*»:

Էսպես մի ամիս մնացինք որբանոցում: Մի օր՝ առավոտ, տաս-

ներկու ֆուրգոն բերեցին, մեզ էլ լցրին ֆուրգոնները. վեց ֆուրգոն՝ տղա, վեց ֆուրգոն՝ աղջիկ: Էսպես հանկարծակի ելանք ճանապարհ, դեպի Էրզրում: Ես ճանապարհին սովորեցի ձի քշել: Մեր ֆուրգոնը չորս ձիով էր, խազեինը ինձ սովորեցրեց, թե ինչպես պիտի պահեմ վոժերը: Վերջապես հասանք Էրզրում, մեզ լցրին մի մեծ շենքըմ<sup>121</sup>, միտքս փոխեցի, ասացի.«*Չզևս՞մ Երզնկա, տեսնեմ, թե ինչու մերոնք չեկան*»: Հարությունին ասացի.«*Գևսմ Երզնկա, տեսնեմ, թե ինչու մերոնք չեկան*: Ազարովիկք էս որբաւնցից»): Մյուս օրը ելա ճանապարհ, գնում եմ Երզնկա. երեք օրվա ճանապարհ պիտի գնամ: Բավականին գնացի, մեկ էլ տեսնեմ՝ ութ ձիավոր են գալիս, ձիերից մեկն էլ՝ դատարկ: Եկան, մոտեցան, երեսիս խաչ հանեցի, ձեռքով նշան արեցի դեպի Երզնկա: Մի ջահել տղա իջավ ձիուց, ինձ նստեցրեց դատարկ ձիուն, երգելով գնում ենք: Հասանք Մամախաթուն, հասանք Եփրատի կամուրջը: Էստեղ Եփրատի մի մասը գալիս է Թերջանից<sup>122</sup>, մի մասն էլ գալիս է Քղի կողմից, ու Մամախաթունի կամրջի տակ իրար են միանում<sup>123</sup>: Մենք կանգ առանք Եփրատի մոտ՝ կանաչ չալիրի վրա: Օջախ շինեցին, սկսեցին չայ եփելը: Հացերս կերանք պրծանք, մութը բավականին կոխել էր: Մեկ էլ շոշի կողմից երևացին մարդիկ, էս դազախները վազեցին էդ կողմը. մի վեց-յոթ հոգուց բաղկացած թուրք ընտանիք էին: Ղազախները մի աղջկա քաշելով բերին, երեսը բացին, ուզում էին բռնաբարել, բայց աղջիկը չէր հանձնվում, շատ չարչրվան, բան դուրս չեկավ, մե դազախը գենքով խփեց գլխին, ջարդուփշուր էրավ: Էս գազանները սրերը քաշին, վազին, մնացածին էլ ջարդին թափին Եփրատը: Ես կարծում էի, թե միայն թուրքերն են գազան, այնինչ ռուսներն էլ պակաս չէին:

Առավոտ կամուրջն անցանք, մտնում էինք Սանադարասի ձորը, Էդտեղ դիմացը մի գյուղ երևաց. կլիներ մոտ քսան տուն: Ջրի ձախ կողմում էր այս գյուղը: Էս դազախները իրար հետ խսեցին, ձիերը դարձրին դեպի գյուղ, անցանք Եփրատը, մտանք գյուղ: Մի երկու տուն անցանք, ցած իջան ձիերից, մտան մի հայաթ: Միջահասակ քուրդըմ դուրս եկավ, դազախները հասկացրին, որ կաթ ու ձու են ուզում, հանեցին էս քրդին փող տվեցին:

Մեկ էլ էս քուրդը բռռաց.«*Կյաչե հառե, կյաչե հառե, դազախ է*»: Տնից դուրս գնաց, մեկ էլ էն տեսանք, որ էս քուրդը դազախի վրա նշան է բռնել: Քուրդը կրակեց ու փախավ, դազախն ընկավ: Խառնվել էին իրար, մեկը վազեց դուրս, կրակեց, մյուսներն էլ դուրս վազեցին, զենքի ձայնն էր գալիս: Ես նստած նայում եմ թավալվող դազախին, արյունը հոսում է, չգիտեմ՝ ինչ անեմ, որ օգնեմ: Նստա մոտը, խոխոսացնում է, մտածում եմ.«*Ասրվա՛ծ ջան, ես մեհնակ ի՞նչ անեմ*»: Ելա դուրս. ձիերը կանգնած են, մարդ չկա, հայաթից դուրս մեկը ընկած խոխոսացնում էր, լավ նայեցի, ճանաչեցի. տան քուրդն էր: Սի քսան բուպե հետո եկան դազախները, վիրավոր քուրդը դեռ կենդանի էր, սրանցից մեկը զենքով էնպես խփեց, որ էլ չչարժվեց: Մտան ներս, վիրավոր դազախին բարձրացրին դրին սաքուն, շորերը հանին, դարձրին այս ու այն կողմ, տեսան՝ մահացել է: Ելան դուրս, մի լապատկա բերեցին, փոս փորեցին, թաղեցին, մե խաչըմ էլ տնկին գերեզմանին: Նորից գնացին գյուղի մեջ, հետ եկան, էդ տան մեջ ինչ կարչկար, հավաքին վառին: Նստանք ձիերը, ելանք անցանք Եփրատը, շոշով գնում ենք, դարձա նայեցի գյուղի կողմը. տները վառվում էին: Խեղճ տղու գլուխն էին ծարվցել: Տղու փոխարեն շորերն ու զենքը ձիուն կապած՝ տխուր-տրտում գնում ենք, ոչ մի խոսք չենք փոխանակում: Հասանք Խալիլ աղայի խանը, էդ իրիկուն մնացինք, առավոտ ելանք, գնում ենք Երզնկա: Վերջապես հասանք մեր գյուղին, ես ձեռքով հասկացրի, որ մեր գյուղն է, իջա ձիուց, մնաք բարով ասի ու գնացի գյուղի ուղղությամբ:

## Մեր գյուղը

Հասա մեր գյուղի գերեզմանոցի հովիկը, էստեղ մի մեծ հողե աման կար, խաղաղ ժամանակ գյուղացիք հերթով ջուր էին լցնում: Հիշեցի, որ երբ հերթը մեզ էր հասնում, առավոտ շուտ գալիս էինք քրոջս հետ, Եփրատից ջուր էինք լցնում: Մեր գյուղը շոշին մոտիկ էր, ով անցորդներից ծարավնում էր, խմում էր ու օրհնում մեռել-

ներին: Նստա, երկար նայեցի, կուրը ջարդված էր, ո՞վ պիտի ջուր կրի, հայ չկա: Նայում էի չորս կողմս, հիշում մանկությունս, ամեն մի անկյուն, ամեն մի քար անցածն էր հիշեցնում: Նստած երկար լաց եղա: Իմ ծննդավայրում ամեն ինչ տեղում էր, Եփրատը հոսում էր սովորականի պես: Ա՛խ, Եփրա՛տ, Եփրա՛տ, սրբազան գետ, գիրկդ առար քո հազարավոր զավակների դիակները ու անշունչ դիակները հեռավոր ծով հասցրիր: Ծաղկուն Երզնկան իր շրջակայքով վերածեցին ավերակների կույտի: Գնում եմ ուղիղ մեր գյուղ, որքան մոտենում էի մեր գյուղին, այնքան սիրտս ճնկվում էր: Չկար ոչ մի կենդանի շունչ իմ շրջակայքում: Ա՛խ, իմ հայրենի՛ գյուղ, ի՛նչ անուշ ես քո շրջապատի ծաղկուն բնությամբ, բայց ու՞ր եմ, ու՞ր եմ քո մարդիկ: Որքան հնարավոր էր, ուժերս լարեցի, որպեսզի շուտ գյուղ հասնեմ, կարծես ոչ մի բան չէր պատահել: Մտա մեր գյուղը, այն նման էր նոր թաղված մեռելի. ոչ մի ձայն, ոչ մի կենդանի շունչ, սիրտս տրոփում էր, չգիտեմ՝ վախի՞ց, թե՞ տխրությունից: Իմ առաջ բացվեց մի տխուր տեսարան, շուն ու կատու անգամ չկար: Ահռելի գազանը սրբել տարել էր ամեն ինչ: Գնացի մեր տունը, ներս մտա, ոչ մի բան տեղում չէր: Նստա, սկսեցի նայել չորս կողմս, ամեն մի անկյուն մանկությունս էր հիշեցնում: Ծիծեռնակը միշտ մեր տան մեջ բույն էր դնում, նայեցի տեսնեմ՝ կա՞րողյոք ծիծեռնակ, չէ՛, չկա՛ր: Հայրենի՛ հող, հայրենի՛ տուն. կա՞րողյոք ուրիշ սրբազան, նվիրական անուն: Սիրում եմ ձեզ, իմ հարազա՛տ հայրենի տուն և իմ ծննդավայր: Ելա գնացի հորս գերեզմանի մոտ, նստա, կուշտըմ լաց եղա. «*Ելի՛ր հայրի՛կ, տե՛ս, ռուսները եկել են, գազան թուրքը պարտվել է, դե վե՛ր կաց, հայրի՛կ ջան... Ելի՛ր հիմա, նայի՛ր, տե՛ս...*»: Ուրքերս թուլացան, ելա կամաց-կամաց գնացի Ֆաթիմայենց տուն, ներս մտա հայաթը, հիշեցի՝ այստեղ էր, որ Ֆաթիման գոռաց ջանդարմայի վրա. «*Ու՞ր ես տրանում էս տղուն ու փոքր աղջկան...*»: Ամեն, ամեն ինչ հիշեցի՝ թե՛ մայրիկիս լացը մեզանից բաժանվելիս, թե՛ հորս սպանելը, մինչև հիմա էլ դեռ հի-

շում եմ եղ ահավոր պատկերը: Ման եմ գալիս գյուղի մեջ. ոչ մի մարդ՝ ո՛չ հայ, ո՛չ էլ թուրք: Ահա խելառ Ղազարի սուրբ բարդին:

## Մի երկու խոսք մեր գյուղի խելառ Ղազարի մասին

Էս Ղազարն ապրում էր մեր քիլարում, հայրիկս խղճացել տվել էր նրան. մարդ ու կին էին: Ես շատ լավ եմ հիշում Ղազարի արկածներից մի երկուսը:

1913թ. գարունն էր: Ղազարը մի օր բոլորին հայտարարում է, որ ինքը երագին խաչ է տեսել: Գյուղի ջահել տղեքը նրանից հարցնում են խաչի տեղը ու սկսում են փորելը: Փորում են, փորում, բայց խաչը չկա ու չկա. «*Ու՞ր է խաչը, Ղազար՛ր*»: «*Էս կողմն է*»: Նորից են սկսում փորելը: Մինչև իրիկուն չարչարում է խեղճ տղեքին, իսկ խաչը չի գտնում: Փոսի մոտ մի մեծ բարդի ծառ կար, վրան էլ՝ արագիլի երկու բույն: Այս դեպքից հետո բարդին դարձավ սուրբ ծառ, կանայք նրա վրա կարմիր, կանաչ շորեր էին կապում, իսկ աղջիկները սրբից խնդրում էին, որպեսզի իրենց մուրազը կատարվի: Մի օր էլ չոբանի այծը և ուլը ման գալով գալիս են Ղազարի դուռը: Ղազար դու Ղազար, բռնում երկուսին էլ ներս է տանում, լավ լողացնում է, կոտոշները ներկում, առավոտյան էլ գյուղով մեկ հայտարարում, որ Աստված իրեն մատաղ է տվել: Դուրսը մի փայտ էր խփել, այծին կապել այդ փայտից: Ժողովուրդը հավաքվել նայում էր. «*Աստու փված մատրաղն է Ղազարին*», վախով սելով շշմջում էին գյուղացիք: Այդ օրը շատ գյուղացիք՝ թուրք թե հայ, հավաքվել էին մեր տան մոտ, որպեսզի լավ տեսնեին հրաշքը՝ Աստծո տված մատաղը:

Առավոտյան՝ ժամը տասին, մեր տանը և հարևանների տանիքներին հավաքվել էին անհամար թվով մարդիկ: Շատերը եկել էին ձիերով, նույնիսկ արաբաներով հարևան գյուղերից: Երեխեքը խմբերով կտուրներին էին նստել, մարդիկ ինքնամոռաց, կլանված նայում էին հրաշք այծին: Պառավ կանայք ծնկաչոք գնում

էին, ձեռքերը դեպի վերև պարզած՝ շշնջում էին. «*Տե՛ր իմ, մեռնիմ քու գորությանը*»: Մայրերը բարձրացնում էին իրենց երեխաներին<sup>124</sup>, որ Աստված նրանց հեռու պահի ամեն մի փորձանքից: Կանայք՝ հայ թե թուրք, չոքեչոք գնում պաշտում էին այծին: Այնքան մարդ էր հավաքվել, որ ասեղ գցելու տեղ չկար: Հավաքվել էին միայն հրաշք այծին տեսնելու համար: Չոբանն էլ է գալիս, տեսնում ու ճանաչում է իր այծին: Գնում տերտերին ու մխթարին ասում է, որ այդ այծը իրենն է, սակայն տերտերը խնդրում է չոբանին ոչ ոքի ոչինչ չասել, խոստանում է իրիկունը այծը տալ տիրոջը: Չոբանն ասում է. «*Այդ այծը իմն է, երկու օր է, ինչ կորել է*»: Տերտերը նորից հանգստացնում է չոբանին՝ ասելով. «*Թող իրիկունը գա, կտանես*»:

Ղազարը ամառը աշխատում էր գյուղացունց մոտ, ով կուզեր, աշխատանքի դիմաց ցորեն էր տալիս կամ ուրիշ ուտելիք: Մեր գյուղում Եփրատի վրա կամուրջ չկար, գարնանը, երբ ջրերը վարարում էին, շատ դժվար էր անցնելը, միայն Ղազարն էր մարդկանց անցկացնում՝ վերցնելով տասը փարա մարդագլուխ մի կողմից մյուսը տանելու համար: Լինում է այնպես, որ մի մարդ ու երեք տարեկան երեխա ուզում են անցնել: Շալակում է մեծ մարդուն, իսկ փոքր տղուն Ղազարն առնում է գիրկը: Էսպես հասնում են ջրի մեջտեղը, մարդը թե. «*Ղազար՛, ուրքերս թրջվալ*»: Ղազարն էլ փոքր տղուն ցած է գցում, որպեսզի մեծին բարձրացնի: Երեխայի հայրը գոռում է. «*Ղազար՛, Ղազար՛, ջուրը երեխիս փարալ*»: «*Տարա՛վ, փարա՛վ, ի՞նչ անես, փարալ փասը փարաս, փարալ*»: Մի կերպ տղային ազատում են խեղդվելուց, երեխայի հայրը Ղազարին մի լավ ծեծում է: Ու այսպես դառնում է սովորություն. որտեղ տղայի եղբայրները Ղազարին տեսնում են, այնտեղ էլ ծեծում են: Այն օրը, որ Ղազարին չէին ծեծում, չգիտեր, թե ուրախությունից ինչ աներ, իրան-իրան ասում էր. «*Այսօր էլ ծեծից լավ պրծա*»: Հիշում եմ՝ երբ Ղազարը գալիս էր մեզ համար աշխատելու, հայրիկս հարցնում էր. «*Ղազար՛, ինչի՞ համար են Գյուլի աղայենց փղեքը քեզ ծեծում*»: «*Ես շատ գիպեմ, Պո-*

*դո՛ւ ամի, ջուրը իրանց փոքր եղբորը փարսավ, կարծես ես եմ մեղավոր»*: Հայրիկս ծիծաղելուց թուլանում էր: Ա՛խ, իմ սիրու՛ն հայրիկ, հիմա էլ, որ հիշում եմ, ինձ թվում է, թե դեռ ծիծաղում է հայրիկս: Մի օր Ղազարը եկավ մեզ համար խուրձ կապելու, հայրիկս թե. «*Քանի՞ սայլ կլինի, Ղազար՛*»: «*Եթե մանր կապենք, կլինի չորս սայլ, իսկ եթե խոշոր կապենք՝ երկու սայլ*»: Հայրիկս նորից ծիծաղից թուլացավ, ես լավ եմ հիշում: Հիշում եմ նաև, որ երբեմն մայրիկս գործով ինձ ասում էր. «*Գնա՛, Ղազարի փնից այսինչ քանը քե՛ր*»: Ամառը Ղազարը տանը չէր մնում, աշխատում էր, իսկ ձմեռն էլ տնից դուրս չէր գալիս: Հացի սեղանը առաջը դրած, երկու գդալ էլ ձեռքին՝ տուր թե կտաս սեղանին դիտլի պես: Չմեռը Ղազարի ամբողջ օրը էսպես էր անցնում: Երբ հոգնում էր սեղանին խփելուց, մի ուրիշ գործ էր սկսում. տեսակ-տեսակ ջարդած ապակիներ՝ ինչ գույն որ կուզես, լցնում էր սեղանի վրա, սկսում էր ջոկելը ու լավ փայլեցնում էր: Հիմա ես զարմանում եմ, թե էդ տեսակ-տեսակ ապակիները որտեղից էր գտնում: Ես գիտեմ, որ մեր ամբողջ գյուղը իրար խփեիր, մի ապակե աման չէիր գտնի, քանի որ ճաշի ամանները կա՛մ պղնձից էին, կա՛մ հողե, նույնն էին նաև ճաշ եփելու ամանները: Ես որ Ղազարենց տուն էի գնում, նա կա՛մ երկու գդալով էր սեղանին խփում, կա՛մ էլ ապակիների հետ էր հաշիվ անում: Ես երկար կանգնում էի, նայում էի տարօրինակ մարդուն. նա բոլորովին մարդկանց չէր վիրավորում: Աքսորի ժամանակ ջանդարմեքը գալիս են Ղազարի տունը. «*Դու՛րս արի, Ղազար՛*»: «*Ինչի՞ համար գամ, ես ոչ մի քան չունեմ փալու, ինչ կուզեք ինչանից, հեռացե՛ք*»:

Ջանդարմեքից մեկը բռնում է Ղազարին, քաշում դուրս, էս Ղազարը վերցնում է համալը, խփում ջանդարմին, մյուս ջանդարմը կրակում է Ղազարի վրա ու իր տան մեջ սպանում:

Անցա մեր գյուղի միջով. ահա մեր դպրոցը, հիշեցի, որ նոր վարժապետ եկավ, սկսեց մեզ աշխարհի մասին, ուսումի մասին բան հասկացնելը, բայց, ափսո՛ս, բախտ չունեցանք սովորելու:

1915թ. ապրիլն էր<sup>125</sup>, այսօրվա պես հիշում եմ. առաջավոր

մարդկանց սկսին հավաքելը, առաջին հերթին ջանդարմեքը մեր վարժապետին ծեծելով տարան: Ես լավ եմ հիշում նրա խոսքերը. «Մնա՛ք բարով, քալիկեն՛ր, ես գնացի, թող Աստուծո օրհնությու-  
նը չե՛ր վրա լինի»: Երեսունհինգ<sup>126</sup> աշակերտներով մնացինք ան-  
տեր. ինչպես թուխսը գողանաս, մնան ձագերը, այնպես էլ մենք  
մնացինք: Միտս եկավ մանկությունս, դարձա, գնացի Եփրատի  
կողմը, որտեղ որ լողանում էինք. նորից դատարկություն, մարդ-  
կային կյանքի ոչ մի նշույլ չկար, բավականին ժամանակ նստած  
մտածում էի. «Էս ի՞նչ օրենք էր, ինչու՞ թուրքերը ժողովրդին վերջ  
տվին, և հիմա ամայացել է ամեն ինչ»: Միայնակ նստած՝ խո-  
սում եմ, իմ մտքերը կիսում Եփրատի հետ: Տխրությամբ նայում  
եմ ճանապարհի երկու կողմի տներին, մեր գյուղի գեղեցիկ տե-  
սարաններին, ու սիրտս ճնշվում է մի անդառնալի ցավից: Ելա,  
ուղիղ գնացի քաղաք: Գնացի այնտեղ, որտեղ մեզ ընդունել էին,  
տեսա այն մարդուն, հարցրի. «Եղբա՛յր, ինչու՞ մերոնք չեկան»: Էդ  
մարդը նայեց ինձ. «Տղա՛ ջան, մենք հեռագիր ավեցինք, իսկ  
ինչու չեկան՝ չեմ կարող ասել, կարող է, ճանապարհին եմ»: Այդ-  
տեղ մի մարդ կար, նայեց ինձ. «Որտեղացի՞ ես, տղա՛ ջան»: «Ես  
դարադիզեցի Պողոսի տղան եմ՝ Հովհաննեսը»:

-Ես էլ քո հորաքրոջ տղան եմ՝ Արտաշեսը (Արտաշեսը հիմա  
Երևանում են ապրում՝ Խարբերդում): Արի գնանք, հորաքույրդ  
կենդանի է, ձայն չհանես, տեսնենք՝ քեզ կճանաչի՞: Գնացինք,  
ներս մտանք, նա թե. «Մայրի՛կ, արի տեսնեմ՝ կարո՞ղ ես այս  
տղային ճանաչել»:

Եկավ հորաքույրս, ինձ լավ նայեց. «Քեզ նման է, Արտա՛շ,  
երևի Պողոսի տղան է»: «Հա՛, հորաքույր, հսկեցիր»: Ինձ մի  
լավ համբուրեց: «Արի՛, հոգու՛դ մատառ, տրևից դուրս չելնիս,  
մինչև որ չերոնք գան»: Քիչ էր մնում ինձ ուտեր, այնքան որ սի-  
րում էր: Իրիկունը պառկել էինք, հորաքույրս թե. «Դե պատմի՛ր,  
ինչպե՞ս չե՛րոնց սպանին՝ հորդ, մորդ»: Պատմում էի, ու հետն էլ  
լալիս էինք: Էսպես երկու օր տրտում նստում էինք, դուրս չէինք

գալիս: Երրորդ օրը՝ երեկոյան, հավաքվել էինք Արտաշենց տանը, հորաքույրս ասաց.

-Գիտե՞ս, Հովհաննէ՛ս, էսօր քեֆ ենք անելու, որ հայոց թաղում խորոզն է երգել, մեկ էլ Մրթոյի՜ն են սպանել, սպանողին **քոռ Հսւմն** կասեն: Երկրի երեսից պակասեց հայտնի հայակեր Մրթոն, իր կատարած չարագործությունների համար արժանի պատիժ ստացավ: Հիմա այստեղ է, գնանք ցույց տամ, սենյակում նստած է (ցույց տվեց քոռ Համոյի՜ն), էն կողքինն էլ **Սև Հակոբն** է, Մաղարայում<sup>127</sup> ազատվել են քառասուն հոգով:

Սրանք խոսում, վիճում էին չգիտեմ ինչի մասին: Հինգ օր է՝ այստեղ են՝ հորաքրոջս մոտ, իսկական տնային բանտ, չի թողնում, որ գնամ, մի քիչ ման գամ.«*Հորաքույր, այսօր պիտի գնամ հայոց շրաքը, տեսնեմ՝ Ռումիկիայից հեռագրի պատասխանը եկե՞լ է, թե՞ չէ*»: «*Լավ, գնա՛, միայն թե շուր արի*»: Ելա դուրս, ուղիղ գնացի Իբրահամ աղայենց տունը՝ Ֆաթիմայենց տեսնելու: Հենց որ Ֆաթիման ինձ տեսավ, վազեց, փաթաթվեց.«*Էս որտե՞ղ ես, անաստիվա՛ծ, չես երևում*»: Դուրսունը եկավ, մի լավ համբուրվեցինք.«*Էնպես եմ կարողել քեզ, Հովհաննէ՛ս: Ես քու հոգուդ մատրադ, դու ապերախար չես, մեզ չես մոռանա*»: «*Մեզ տարան Էրզրում, ես նորից հետ եկա, տեսնեմ՝ մերոնք չեկա՞ն*»: «*Լավ, կննաս մեզ մոտ, միևնչև որ չերոնք գան Ռումիկիայից*», -ասաց Ֆաթիման: «*Տեսնեմ, քույրի՛կ ջան*»: «*Դուրսուն՛ն, տես քեզ փող, գնա՛, մի հոիս տավարի միս քե՛ր, մի լավ ճաշ եփեմ Հովհաննէսի համար*»: «*Հա՛, գիտե՞ս, քույրի՛կ, Մրթոյի՜ն սպանել են*»: «*Գիտեմ, եղբայր ջան, գիտեմ: Դա քիչ է, հարկավոր է նրա օգնականներին էլ սպանել, հասկացա՞ր: Դու միևնչև հիմա չգիտես, թե ովքեր են նրանք*»: «*Ես ի՞նչ գիտեմ, քույրի՛կ*»:

-Դե հիմա իմացի՛ր, թե ովքեր են: Մեկը մեր Դավիթի եղբայր մխթարը՝ հայերի արյունախումը, քյաչալ Փաշիկը, մոլլայի մեծ տղեն՝ Հասանը: Էս երեք գազանները պետք է անպայման իրենց արժանի պատիժը կրեն. որտեղ մի հայ էր լինում, սրանք հայտ-

նում էին Մրթոյին ու գալիս անմեղ մաղկանց տանում էին, սպանում: Մի անգամ էս մխթարը եկավ մեր տուն.

-Գիտե՞ք՝ ինչու եմ եկել, որպեսզի Պողոսի երեխանցը տանեմ, շատ ենք հավաքել հայ երեխանցը, եկա սրանց էլ տանեմ, որ սպանենք:

-Շատ լավ ես արել, թաղեմ քաչալ գլուխդ, եկար, որ գառնուկների՞ն ուտես, կե՛ր, դեռ չե՞ս կշտացել,-դանակն առա, ուզում էի խփել, մայրիկս թևիցս բռնեց,-հեռացի՛ր, քանի շուտ է, թե չէ այն գողի պես քեզ էլ կխփեմ:

Գողի հետ դեպքը այսպես է պատահում. Ֆաթիման տատիկի տանն է լինում, երբ պառկում են քնելու, դրանից բավականին անց Ֆաթիման լսում է, որ ինչ-որ մեկը խաղում է դռան կողպեքի հետ.«*Տարի՛, տարի՛, որտե՞ղ է դանակը*»,-հարցնում է Ֆաթիման: «*Աղջի՛, ի՞նչ, ինչի՞ն է պեղք դանակը, գդալնոցի մեջ է դանակը*»: Իսկ գողը ձեռքը արդեն ներս է մտցրել և ուզում է դռան փակը բացել: Էդ բուպեին Ֆաթիման դանակով կտրում է ձեռքը, գողը, ուժեղ ճչալով, թողնում փախչում է: Կարծում եմ՝ այս աղջկա մյուս հերոսությունների մասին, որոնք գրված են այս գրքում, դուք հիշում եք:

-Քեզ կենդանի-կենդանի կթաղեմ, չասես, թե ես աղջիկ եմ,-ասում է Ֆաթիման մխթարին:

-Էս քյաչալը ապշել, մնացել էր,-իսկ մայրիկս ասաց.

-Գիտե՞ք ինչ, քանի որ մեր տանն են ապրում, ուրեմն մեր երեխեքն են: Մենք պահում ենք, չենք նեղանա, դուք բոլորովին դրա մասին չմտածեք:

-Մեկ էլ ոտքդ այս տունը չկոխես, հասկացա՞ր: Հովհաննե՛ս, այսքան բանը լսելուց հետո էդ շունը այլևս մեր տուն չեկավ: Հիմա լսի՛ր՝ ինչ եմ ասում, քանի որ փոքր ես, կարող ես ինձ մոտ բերել Մրթոյին սպանողին, ես նրանց բոլորը կպատմեմ, թե ով ինչ գործ է կատարել: Այնպես կբերես, որ մեր տնից ոչ ոք չտեսնի, թե այդ մարդը եկել է մեր տուն, հասկացա՞ր: Մարդու էլ բան չասես,

թեկուզ Դուրսունին: Ոչ մի մարդու ոչ մի խոսք մեր այս խոսակցությունից:

-Իմ լավ քույր, սիրուն քույր, աշխարհի կանանց մեջ ամենալավը, իմ անգի՛ն քույր, չգիտեմ, չգիտեմ, թե ինչով քո լավության տակից դուրս գամ, եթե հորեղբայրս գա, քեզ համար մի անգին նվեր պիտի առնեմ: Հոգու՛դ մատաղ, ինչքա՛ն անուշ ես, իմ քա՛ղցր քույրիկ, շատ շնորհակալ եմ քեզանից:

Էդ միշտ զվարթ, խելոք աղջիկը դարձել էր եղնիկի պես կին, կարմիր, ոնց որ վարդ, անչափ գեղեցիկ. «*Թու՛յլ րուր՝ համբուրեմ քեզ*»: Ոնց որ հարազատ քույր ու եղբայր՝ երկուսով համբուրվում ենք իրար հետ: «*Լավ, կշտացա՞ր*»: «*Չէ՛, քու՛յր ջան, մի՛ թե քեզանից կշտանալ կլինի, անգին ոսկի՛ քույրիկ*»: «*Ես գիտեմ, թե միայն կողքերս են ոսկի, Հովհաննե՛ս*»: «*Չէ՛, քու՛յր ջան, դու անգին գանձ ես, հոգուդ մարտը, եթե քեզ նման հազարները լինեին, կազարվեին երկու-երեք հազար անմեղ երեխաներ*»: Դուրսունը եկավ, միս բերեց, Ֆաթիման եփեց ճաշը. «*Հովհաննե՛ս, այսօր մեր տանը կմնաս*»:

Առավոտ ելա, ուղիղ գնացի հայ զինվորների մոտ: Ինձ տեսան թե չէ, վազեցին. «*Ա՛յ րդա՛, որտե՞նք ես, չես երևում*»: Ես պատմեցի, որ որբանոցում էի, հետո էլ գնացիմք Էրզրում: «*Մի բան հարցնեմ, դու կարո՞ղ է իմանաս՝ այդ գերիների հետ օֆիցեր կա՞ր*»: «*Չէ՛, եղբայր, բայց ես օֆիցեր ուրիշ տեղ եմ տեսել: Հրապարակի անկյունում մի ճաշարան կար, այնտեղ եմ տեսել: Օֆիցերը դուրսը կանգնած էր, նրա մոտ էլ՝ մի հար զինվոր՝ ասկյար*»: «*Լավ, գնանք, հիմա պառադ է: Հեղոն կպարմես: Մեր պարույհիկը շար էր ուզում քեզ տեսնել, որպեսզի մի լուր առնի այդ օֆիցերից: Հիմա խոսելու ժամանակ չէ: Գնում ենք դիմավորելու Նիկոլայ թագավորի հորեղբորը՝ Նիկոլայ Նիկոլանիչին: Դու էլ արի՛ հերկերս, միայն թե մեր մոտից չհեռանաս*»:

Չորքը պատրաստված գնում է, փողոցների տների վրա կախված են կարմիր, սպիտակ, կանաչ, դեղին դրոշակներ: Միշտ դե-

պի հյուսիս ենք գնում քաղաքի միջով: Դուրս եկանք դեպի Տրապիզոն տանող ճանապարհը: Ինձ համար մեծ ուրախություն էր տեսնել Նիկոլայ թագավորի հորեղբորը:

«*Ուռա՛, ուռա՛, մայի առլի*», -ասելով, մոխրագույն ձի հեծած, երաժշտության հնչյունների տակ, զինվորների առջևից քայլելով՝ գալիս էր «երկրորդ» թագավորը, իսկ հետևից գալիս էր դրագունների<sup>128</sup> հեծելագործ՝ մեծ-մեծ գլխարկներով, կողքերն էլ բավականին մազ թողած: Անչափ ուրախ էր զինվորների տեսքը: Երաժիշտը ծմբա-ծմբա էր խփում, փոխարքան ասում էր.«*Ուռա՛, ուռա՛, զոռասավույրե մայի առլի*», -նորից ծմբա-ծմբա խփելով՝ քայլում էին: Հասան մեր ուղղությանը, նորից փոխարքան ձեռքը բարձրացրեց.«*Ուռա՛, ուռա՛, զոռասավույրե մայի առլի*»: Երբ հասանք հրապարակ, նա իջավ ձիուց, սկսեց խոսելը, իսկ ես թողի գնացի հորաքրոջս տուն.«*Էս որսե՛ն՞ էս, Հովհաննե՛ս, էս քեզ չասի՝ շուր կգաս*»: «*Այս գիշեր էս քեզ կսպարմեմ, թե որսեղ էի, հորաքրո՛յր*»: Հորաքրոյրս շատ էր հորս նման, կարծես մի խնձոր լինեին՝ մեջտեղից կիսած: Նա ինձ երեք տարի առաջ էր տեսել, երբ տասներեք տարեկան էի, իմ պատկերը մնացել էր նրա հոգու մեջ: Ես չեմ կարող նկարագրել հորաքրոջս ուրախությունը. ժամերով նայում էր, գրկում ինձ, ամուր-ամուր սեղմում կրծքին, ուրախանում.«*Իմ եղբայրը սևրախար չէ, հորդ ծուխը չի մարի, քանի որ քեզ պես տղա ունի: Հիմա միայն դու էս մնացել, Հովհաննե՛ս, քո հոր տան միակ սյունը դու էս: Դու պիտի քո հոր տան ծուխը ծխացնես*»: «*Ես քեզ մի բան խնդրեմ, հորաքրո՛յր*»: «*Ասա՛ տեսնեմ*»: «*Այդ քոռ Համոն, որ կա, որսե՛ն՞ կարող եմ տեսնել, շար կարևոր գործ կա*»: «*Ես մեռնեմ Համոյի չեռներին, հազարավոր հայերի դիմաց վրեժ լուծեց էդ գազանից: Այսօր կարող է մեր տուն գա, Հովհաննե՛ս*»: Այդ օրը Համոն չեկավ: Երեկոյան շատ մարդ եկավ, նստեցին, խոսեցին, բայց Համոն չեկավ: Առավոտ Արտաշ քեռուս հետ գնացինք Համոյին մասն գալու: Շատ մասն եկանք, բայց չգտանք: Արտաշ քեռիս դարձավ ինձ.«*Հովհաննե՛ս,*

ես հայոց շիրաբում գործ ունեմ, գևամ րեսնեմ՝ ինչ եղավ: Դու րուն՛ն գևա, կարող է երեկոյան Համոն գա»: Ես դարձա, որ տուն գևամ, Մրթոյի տղեն՝ Յաշարը, որն ինձ հասակակից էր, կանչեց. «Հովհաննէ՛ս, Հովհաննէ՛ս, տեսա՞ր՝ ինչ արին ձեր հայերը, հորս սպանեցին»: «Է՛, ես ի՞նչ անեմ, որ սպանեցին», - աչքս ընկավ, տեսա Հարություն երբորս, ես զարմացած նայեցի, տեսնեմ՝ իրոք որ Հարությունն է: Էս Յաշարն ինձ. «Չես էլ ուզում հեղուս խոսել, հա՞: Ազարվար, շան որդի գլավուր», - մի հատ խփեց երեսիս ու փախավ: Ես մոտեցա Հարությունին. «Ինչու՞ եկար»: «Ինչ անեի, որ չգայի»: «Դու որ եկար, բա Հազարն ուր է»: «Գողացան»<sup>129</sup>: «Ինչպե՞ս թե գողացան», - զարմացած հարցրի ես: «Մի մարդ եկավ մեզ մոտ: Մենք որքանցից մի քիչ հեռու խաղում էինք: Այդ մարդն հարցրեց. «Այս աղջիկը քո ի՞նչն է»: «Քույրս է», - պատասխանեցի: Նա թե. «Ես աղջիկ չունեմ, րուն՛ր, րանեմ ինչ աղջիկ անեմ»: Ես պատասխանեցի. «Ի՞նչ ես ավել-պակաս խոսում, հեռացի՛ր, ես քրոջս չեմ րա: Մյուս օրը նորից դրսում խաղում էինք, այդ մարդը էլի եկավ, ինչ խոսքի բռնեց, մի ֆայրոն էլ քիչ հեռու կանգնած էր: Երբ այդ մարդը գևաց, մի քիչ էլ կանգնա, նայեցի, րեսնեմ՝ քույրս մոլրս չկա: Վազեցի, որքանց մոլրս, կանչում եմ՝ Հազար, Հազար..., նա չկա, էլա դուրս, սկսեցի բղավելը, նորից չկա: Խելազարի պես վազեցի, սկսեցի որքանցի քույրերին հարցնելը, նրանք թե. «Չենք րեսել Հազարին»: Այդ օրը, ինելազարի պես վազում եմ ներս, դուրս գալիս, բոլորին հարցնում եմ, նրանք թե. «Չէ՛, չենք տեսել Հազարին»: Հայրնեցի որքանցի րեսուչին, որ քրոջս մի մարդ գողացել է, նրան մանրամասն պարմեցի, ինչ որ եղել էր: Տեսուչը հասակով երեք կնոջ կանչեց, որ գևան ու րևորեն Հազարին: Երեք օր անընդհար րևորում էին, ես էլ եկա, որ քեզ հայրնեմ»:

Ի՞նչ անեմ. Ֆաթիմայի հանձնարարությունը, Յաշարի ինձ խփելը, մյուս կողմից էլ Հազարի կորչելը: Կանգնեցի, սկսեցի մտածել, թե որն անեմ: Հազարի կորստի ցավը սիրտս ծակում էր,

ի՞նչ անեն: Խեղճ աղջկա սիրտը վկայել էր, որ իր գլխին փորձանք պիտի գա, դրա համար էլ լաց էր լինում:

-Հարություն, գնա՛ հորաքրոջս տուն, ասա՛, որ ես գնում եմ Էրզրում՝ Հազարվարդին փնտրելու, հետո էլ կգնաս, նույնը կասես Ֆաթիմային: Հասկացա՞ր: Դե՛, ես գնացի:

Ես ինձ կորցրի, քրոջս կորստի խոր կսկիծը կրծում էր սիրտս: Համարյա վազելով գնում եմ Էրզրումի ճանապարհով: Ուրիշները եթե ինձ տեսնեին, կծիծաղեին, բայց ես ուզում էի թոշուն դառնալ, մենակ թե շուտ գնայի, գտնեի իմ սիրուն քույրիկին: Հասա Ջանբալա Քյորփուսի մոտ, տեսնեմ՝ չորս ֆուրգոն լծում են, որ պիտի գնան: Գնացի, նրանց հարցրի. «*Եղբա՛յր, ու՞ր եք գնում*»: «*Էրզրում*»: «*Ինչ էլ կտանե՞ք, ես էլ եմ գնում Էրզրում*»: «*Արի՛ գնանք, տղա՛ ջան*»: Նստել ֆուրգոնը գնում ենք շատ դանդաղ, իսկ ես ուզում եմ, որ թռչենք, շուտ հասնենք Էրզրում: «*Տու՛ր, ես քշեմ ձեռքը, եղբա՛յր*»: «*Դու ի՞նչ գիտես ձի քշել*»: «*Երբ մեզ՝ որբերիս, տանում էին Էրզրում, ես սովորեցի ձի քշել*»: «*Էլի՞ ես Էրզրում գնացել*»: «*Հա՛*»: «*Բա հիմա ի՞նչ ես անում այստեղ*»: Պատմեցի, թե ինչի համար էի եկել և ինչի համար եմ նորից գնում:

-Դու լավ տղա ես երևում: Թող աստված քո գործը հաջողացնի, գտնես քո քրոջը: Տղա՛ ջան, լավ բան չի երևում քրոջդ անհայտանալը:

-Ինչի՞ համար ես այդպես ասում, եղբա՛յր:

-Նրա համար, որ այդ տանողը ավազակի մեկն է երևում, եթե լավ մտքով տարած լինեք, անպայման որբանոցի տեսուչին կհայտնեք, որ էս որբ աղջկան տանում է, դեռ հասցեն էլ կտար, կասեք, որ պետք է օրինավոր որդի դարձնի: Արի տե՛ս, որ խեղճ աղջկան ավազակ շան որդին գողացել է, որպեսզի վաճառի:

-Ինչպե՞ս թե վաճառի, եղբա՛յր:

-Այո՛, վաճառում են, այն էլ ինչ թանկ գնով: Սրիկա շա՛ն որդիք, տե՛ս, թե ինչ են անում: Այն էլ թուրքի սրից ազատված աղջկան: Բո քույրը քանի՞ տարեկան կլինեք:

-Ես տասնվեց տարեկան եմ: Ես եմ, *Մուկուչը* ու նոր Հազար-վարդը:

-Ուրեմն քույրդ տասներեք տարեկան է:

-Այդպես էլ կա:

-Ինչ որ ես մտածում եմ, ճիշտ է:

-Ի՞նչ ես մտածում, եղբայր ջան, ասա՛ տեսնեմ:

-Ի՞նչ ասեմ, տղա՛ ջան, աշխարհի չարն ու բարին դեռ չգիտես, չասվելու բան է, ի՞նչ ասեմ:

-Լավ, ասա՛ տեսնեմ, եղբայր ջան, խո չե՞ն սպանել:

-Սպանելուց էլ վատ են վարվում շան որդիք:

-Վա՛յ, եղբայր, այդ ի՞նչ ես ասում,-սիրտս լցվեց, սկսեցի լացել:

Խեղճ քրոջս սիրտը վկայում էր, որ փորձանք պիտի գա գլխին. երբ Ֆաթիմայից բաժանվում էինք, հա՛ լաց էր լինում: Ես էլ չէի խոսում այդ մարդու հետ, վախենում էի, որ մի չար բան պիտի ասի: Տխուր-տրտում գնում էինք: Ֆուրզոնչին էլ տեսնելով, որ ես լալիս եմ, այլևս քրոջս մասին չէր խոսում: Հասանք այնտեղ, որտեղ սպանել էին դազախին: Ես պատմեցի ֆուրզոնչուն եղելությունը, ցույց տվեցի դիմացի փոքրիկ գյուղը: «*Ա՛յ տղա, այդ ի՞նչ ես ասում: Բա վերջը ի՞նչ արին*»: «*Մեռած դազախին քաղեցին, վրան էլ մի խաչ փակեցին ու թողին գնացին*»: Չորրորդ օրը հասանք Էրզրում: Վազեցի որբանոց.«*Սոնա՛ քույրիկ, գրա՛ք քրոջս*», -հարցրի ես: «*Որտեղի՞ց, երեք կին փնտրում են, բայց գրնել չեն կարող*»: «*Սոնա՛ քույրիկ, գրե՛ք քույրիկիս, ես կմեռնեմ, եթե չգրնեք*»: «*Հա՛, բալի՛կ ջան, կաշխարենք գրնել, հսկադարացի՛ր*»: «*Տվե՛ք քույրիկիս, ես չեմ կարող առանց քրոջս, ես ի՞նչ պարասիսան փամ հորեղբորս*»: Ես ինձ կորցրել էի, այնպես եմ լալիս, հավաքվել են մայրապետները, բոլորը մեկը մեկին հարցնում էին.«*Սա Հազարվարդի եղբայրն է, Հովհաննեսը... Լա՛վ, հսկադարացի՛ր, տղա՛ ջան, կաշխարենք գրնել, արի մի*

քիչ հա՛ց կեր»։ «Ա՛խ, քույրե՛ր, եթե իմանաք, թե ես ինչպես եմ սիրում քույրիկիս, հասկանո՞ւ մ եք»։ «Դու ճիշտ ես ասում, որ սիրում ես։ Մենք հասկանում ենք»։ «Երզնկայից չորս օրվա ճանապարհ եմ կորել էկել քրոջս երեկից»։ «Լա՛ւի, տղա՛ ջան, հիմա ի՞նչ անենք, դու ասա՛, մենք էլ անենք»։ «Ես չգիտեմ, տղե՛ք քրոջս... Ես կմեռնեմ..., հավատացե՛ք, Սոնա՛ քույրիկ, եթե չգտնեք քրոջս, չգիտեմ, թե ինչ կպատահի ինձ հետ», -ու հետըն էլ լաց եմ լինում։ «Ի սեր Աստուծո՛ւ, հանգստացի՛ր, պահպանի՛ր քեզ, դու եղբայր, հորեղբայր ունես, դու քեզ մի՛ դժբախտացնի, երանի՛ ամեն եղբայր քեզ նման լինեք»։ «Ասա՛, ասա՛, Սոնա՛ քույրիկ, սովորեցրո՛ւ, թե ինչով կարող եմ այս սարսափելի ցավից ազատվել, կամ ինչով միտքս արվեմ, երբ իմ անգին քույրիկը չկա, չկա, հասկանո՞ւ մ եք, գիտե՛ք՝ ինչ տանջանքով ենք թուրքի սրից ազատվել...»։

Առավոտ Սոնա քույրիկն ինձ կանչեց. «Ահա այս երկու տղանք քեզ օգնական։ Գնացե՛ք, փնտրե՛ք քույրիկիդ, մարդու բան չասեք, թե ինչի եք մասն գալիս։ Ինչքան կիև կրեսնեք, թաքուն կնայեք, ոչ ոքի ոչ մի խոսք չեք հետախուզության մասին, դե գնացե՛ք, Աստուծո՛ւ չեք հետ»։ Էս տղեքից մեկը բասենցի էր, մյուսը՝ թեժանցի<sup>130</sup>, երկուսն էլ իմ հասակին՝ Մանուկն ու Սիմոնը։ «Մանու՛կ, գնանք, քրոջս որոնենք, եթե կարողանանք գտնել քրոջս, ուրեմն ես ամենաբախտավոր տղան կլինեմ»։ «Շա՛տ ես սիրում քրոջդ, Հովհաննե՛ս»։ «Շա՛տ... ես կիսելազարվեմ, եթե քրոջս չգտնեմ»։ «Էրզրումը շատ մեծ է, ի՞նչ իմանանք՝ որտեղ է։ Ես ու դու որոնելով չենք գտնի»։ «Երեք մայրապետներն էլ են որոնում»։ «Ինչպես չէ, որոնում են երեք մայրապետները»։

Ման ենք գալիս քաղաքում, ինչքան կիև ենք տեսնում, վազում ենք, ես կարծում եմ, թե Հազարնիկն է։ Այսպես շարունակեցինք մի տասնհինգ օր։ Ի՞նչ անեմ, Հազարնիկը չկա, մտքիցս չի գնում նաև Ֆաթիմայի պատվերը ու Մրթոյի տղա Յաշարի ինձ խփելն ու փախնելը։ Կուզեմ՝ թռչեմ գնամ Երզնկա, վրեժս առնեմ Մրթոյի

տղայից ու մյուս ավազակներից, բայց այստեղ էլ չգտանք Հազարին: Մտածում եմ, մտածում, չեմ կարող մի բան որոշել: Այսպես մտքամոլոր մնացել եմ, մի օր էլ ասի.«*Տղե՛ք, եկեք գնանք կայարանում փնտրենք*»: Գնացինք կայարանի կողմը, ման էինք գալիս, մեզանից մի քիչ այն կողմ բանվորները հող էին փորում, ձեռքի կաշկայով էլ կրում, ելանք գնալու, տեսնենք՝ մի տղա՝ մոտ քսանհինգ տարեկան, ձեռքին թղթի մի կտոր մոտեցավ մեզ.«*Հա՛յ եք, փղե՛ք*»: «*Հա՛*»: «*Հապա ի՞նչ եք ման գալիս*»: «*Հենց այնպես շրջում ենք, որբանոցի փղա ենք, պարսապ-սարսապ շրջում ենք*»: «*Որբանոցում չեզ ի՞նչ ես սովորեցնում*»: «*Ոչ մի բան: Հացերս ուտում ու շրջում ենք*»: «*Լավ բան չեմ անում, որ չեք պես փղեքին թամբալություն ես սովորեցնում: Իմ անունը Նիկոլ է, եկեք լսե՛ք ինչ: Ես փեխնիկի մոտ դեսյարնիկ<sup>131</sup> եմ, եկե՛ք, ինչ մոտ աշխատե՛ք, չեզ լավ կվարչատրեմ: Այնպես կանեմ, որ աշխատանքից չնեղանաք, ամեն ինչ իմ ձեռքին է: Վաղվանից կարող եք գալ ու փորձել, ես այստեղ կլինեմ: Բոլորովին չքաշվեք, որ բանվորություն եք անելու: Աշխատելը պարսապ թրև գալուց հազար անգամ լավ է, ձեռքներիդ փող կունենաք, ինչ ուզենաք, կգնեք, չե՞ որ դուք փղա եք*»:

## Բանվորություն

Այդ օրը երկար շրջեցինք, երեկոյան պատկել ենք քնելու, բայց մտածում ենք՝ ինչ անենք, գնա՞նք, թե՞ չէ, վերջը որոշեցինք գնալ: Առավոտ շուտ գնացինք, չսպասեցինք անգամ, որ թեյ խմենք: Գնացինք «Կուկուշկայի» կայարանը<sup>132</sup>, տեսանք այդ տղային.«*Բարև՛, եղբա՛յր*»: «*Հա՛, եկա՞՞ք, շատ լավ եք արել: Եկեք գրեմ անուններդ, այսօրվանից բանվոր եք: Եկեք փանեմ աշխատանքի վայրը,-երկու հար կաշկա փվեց, բահ, քլունգ,-սրանք էլ չեք գործիքները*»,-ցույց տվեց, թե որտեղից ենք հողը փորելու, որտեղ ենք թափելու, ու գնաց: Այսպես սովորեցինք աշխատել, այլևս որբա-

նոց չէինք գնում, Սոնա քույրիկին ասացինք, որ մենք կայարանում ենք աշխատում, եթե քրոջս գտնեն, թող հայտնեն ինձ. «*Քուրի կ ջան, եթե Երզնկայից մարդ գա, ինչ հարցնե, նորից կասեք, որ կայարանում ենք աշխատում*»: Այսպես աշխատեցինք մի ամիս, արդեն աշխատավարձ ենք ստացել՝ տասնհինգական ռուբլի յուրաքանչյուրս, ձեռքներս փող ունենք, ինչ ուզենանք, կարող ենք գնել: Մի օր էլ առավոտյան վեր կացանք, որ գնանք աշխատանքի, տեսնենք՝ բանվորները պալատկեքը քանդում են, Նիկոլը թե. «*Տղե ք, շար քիչ ժամանակով պետք է գնանք Սարիղամիշ, նորից հետ ենք գալու Էրզրում, այնպես որ չմտածեք, շուր կվերադառնաք: Այսրեղից «Կուկուշկայով» ենք գնալու*»: Հենց այդ առավոտ էլ գնացինք, լցվանք վագոնները: Առաջին անգամ է, որ «Կուկուշկա» ենք նստում: Վերջապես հասանք Սարիղամիշից 15 կմ դեպի արևմուտք գտնվող «Խանդարա» կայարանը: Մեզ իջեցրին, հինգ վերստ անտառի միջով դեպի արևելք գնացինք: Այստեղ բանվորներ շատ կային, մեզ տեղավորեցին գեմլյանկայում: Այստեղ ինչ ազգի մարդիկ ասես կային՝ վրացի, թուրք, հայ, հույն: Նիկոլ եղբայրը մեզ նշանակեց խոհանոցի համար փայտ կրող. օրական պետք է կրեինք երկու կաշկա փայտ, իսկ շաբաթ օրերը բերելու էինք նաև բաղնիքի համար: Լողանում էինք շաբաթը մեկ անգամ: Մենք խոհանոցից էինք օգտվում, երբեմն բարյացակամ խոհարարը մի մեծ կտոր միս էր տալիս՝ ասելով. «*Նա կուշայրե, պուպուսովյայրես*<sup>133</sup>»: Սարիղամիշի օդը լավն էր, կարծես օր օրի վրա մեծանում էինք, իսկ առավել շատ էր մեծանում բասենցի Մանուկը՝ թիկունքով, բոյով, բեղերն էլ համարյա զարթնել էին: Նա շատ գեղեցիկ էր, կատարյալ տղամարդու տեսք էր ստացել: Այստեղ մենք նոր գործ գտանք: Փայտից ածուխ պատրաստող հույները մեզ ասացին. «*Եթե օրակասն մեկ կաշկա չոր փայր բերեք, չեզ մեկ ռուբլի փող կպասնք*»: Անտառի մեջ բանվորները՝ մոտ հինգ հարյուր հոգի, տեսակ-տեսակ շալալներ, մեծ գերաններ էին կտրում, չորս-հինգ դազգահների վրա տախտակ էին կտրում<sup>134</sup>: Կիրակի օրերը գնում էինք Խանդարա, մի տան հետ էինք ծանոթացել,

տնվորների հետ խոսում էինք թուրքերեն, սրանցից գնում էինք մածուն, կաթ, ձու: Այնպես էր լինում, որ կիրակի օրերը գնում էինք Սարիղամիշ, այսպես օրերս ուրախ էին անցնում: **Մի օր էլ՝ 1917թ. էր, հայտարարին, որ քազավորին օգել են: Մեզ մոտ միտինգ արեցին, բանվորների ուրախությանը չափ ու սահման չկար<sup>135</sup>: Փողը փոխվել էր, ուրիշ տեսակ փող էինք ստանում՝ Կերիմսկու<sup>136</sup> փողը՝ քսաննոց, քառասուննոց: Մեզ մոտ անընդհատ ժողովներ էին լինում»** «Թազավորին օգել են, պետք է շայն փաթ հինգ համարին»»: Ամեն մարդ մի բան էր խոսում, չգիտես թե ինչ, իսկ մենք աշխարհից անտեղյակ էինք: Ժողովներին խոսում էին հեղափոխության մասին, երկու պարզամտավոր ընկերեցին, որ գնան ժողովի: Այսպիսի խառը ժամանակներ էին, երեք ամիս էր, ինչ աշխատավարձ չէինք ստացել: Արդեն 1917թ. աշունն էր, ռուսաց զորքը հեյր էր քաշվում: Էլ բանվորները չէին աշխատում, գնացողն էլ հեյր չէր գալիս: Նիկոլը թե.«Տղե՛ք, եկեք գնանք Սարիղամիշի շրջաօր, տեսնենք՝ ինչ է լինելու»»: Հասանք Սարիղամիշի կայարանը, այստեղ լիքը ռուսաց զորք կար, մի սաստավ<sup>137</sup> էր կանգնած, կռիշներից<sup>138</sup> բռնած նորից զինվորներ էին նստած: Մի սպանված մարդ օգած էր կայարանի առաջը, ոչ որ ուշադրություն չէր դարձնում: Վերջը իմացանք, որ նահանջող զորքից զենք է գողացել, դրա համար էլ սպանել են: Հետո գնացինք շտաբը, ասացին, որ սպասենք, շուտով փող կլինի, կստանանք: Մի տասը օր քարշ եկանք. **սեզողնյա, զավորս** լսելով՝ բեզարել էինք:

### Կամավոր զինվոր

Նիկոլ եղբայրը թե.«Տղե՛ք, եկեք, չեզ բան եմ ասելու, տեսնեմ՝ ինչ կասեք: Այստեղ հայոց գունդ են կազմավորում, որ գնան Էրզրում, եկեք մենք էլ գնանք, ինչո՞ւ ենք պակաս, զորք է հարկավոր, որպեսզի պաշտպանի ֆրոնտը: Ի՞նչ կասեք, ես պիտի կամավոր գրվեմ»<sup>139</sup>: «Մենք էլ ենք գալիս կամավոր դառնալու», -

ելանք գնացինք հավաքման կայան. **Գուրինակի** կազարմեքն էին: Նիկոլը ներս գնաց, դուրս եկավ մի օֆիցերի հետ, մեզ տեսավ ու ասաց. «*Շա՛ր լավ*»: Կանչեց մի *ֆեյրֆեբիլի*<sup>140</sup>. «*Էս տղեքին տա՛ր, զինվորական շո՛ր տուր*»: Մեր շորերը հանեցինք, հագանք զինվորականի շորեր, գնացինք կազարմեն, կառավատ հատկացրին, գենք տվեցին: Իմ ու ընկերներիս ուրախությանը չափ ու սահման չկար. չէ՞ որ դարձել էինք մայր հայրենիքի զինվոր: Մեր տասնապետը Նիկոլ եղբայրն էր, շատ քաջ տղա էր, առավոտ մեզ հանում էր, հետներս պարապում, սովորեցնում էր կրակել: Այսպես քսան օր մնացինք **Գուրինակի կազարմեքը**, բավականին գորք հավաքվեց՝ մոտ հազար հոգի: Մի առավոտ էլ հրամայեցին, որ պետք է գնանք Էրզրում: Գնացինք լցվանք «Կուկուշկայի» վագոնները, շարժվում ենք դեպի Էրզրում: Ճանապարհին շատ դժվարությամբ հասանք Հասանդալա: Այլևս առաջ չգնացինք, քանի որ ճանապարհը փակ էր. շատ ձյուն էր եկել: Վագոններից իջանք, մեզ տարան մի մեծ շենք, որպեսզի առավոտ գնանք Էրզրում: Առավոտյան նորից ուժեղ ձյուն էր գալիս, մի երկու օր մնացինք, սպասում էինք, որ եղանակը լավանա: Երրորդ օրը մեր բասենցի Մանուկը թե. «*Շղթա՛յր Նիկոլ, գիրեն՞ս՝ այստեղ մի մեծ որս կա անելու, մեր շրջանի հայերի արյունահոսում ուսրիկանապետն է*<sup>141</sup>, *անունը Ռաշիդ բեկ էր, փոխել Մահմադ բեկ է դարչրել, մորուք է թողել, որպեսզի իրեն չճանաչեն, և իր օգնականը: Ես լավ հետախուզել եմ, իր մնացած տունը Սարի թաղում*<sup>142</sup> է»: Էս մեր Մանուկին մի բարի թուրք է հանդիպում. «*Տղա՛ ջան, դու հա՛յ ես*»: «*Հա՛*: «*Որտեղացի՞ ես*»: «*Այստեղից եմ՝ Բասենից՝ Բաղիջավանից*<sup>143</sup>»:

-Ա՛խ, տուն քանդողի տունը քանդվի, բալի կ, էս ինչ օյին էր, որ խաղացին հայ ժողովրդի գլխին մեր թուրք ղեկավարները, ես քեզ ցույց կտամ մեր՝ Բասենի միդյուրի տունը, հայերի արյունահոսմի տունը: Նրա օգնականն էլ հետն է: Կարո՞ղ ես մի գործ կատարել:

-Վա՛յ, քո հոգուդ մատաղ, հայրի՛կ ջան, միայն դու տունը ցու՛յց տուր:

-Հիմա դու ինձ հեռվից հետևի՛ր, որտեղ որ ես դռան մոտ կանգ կառնեմ, հենց դա միղյուրի տունն է: Շատ հեռու չէ, նաև իր օգնականն էլ հետն է:

Նիկոլ եղբայրն ասաց.

-Սու՛ս, մարդու բան չասես, եկ գնանք, տեսնենք, թե որտեղ է ապրում:

Երկուսով գնացին, բավականին ուշ եկան: Իրիկվա ժամը տասներկուսին Նիկոլը՝ հետը հինգ հոգի, մեկ էլ ես զինված ելանք գնացինք: Բասենցի Մանուկը՝ առջևից, մենք էլ ետևից գնում ենք: Հասանք տան մոտ, Մանուկը պարսպից ներս թռավ, բացեց հայաթի դուռը, ներս մտանք, նորից հայաթի դուռը փակեցինք: Սոտեցանք տան դռանը, ծեծեցինք, ձայն չկա, նորից ծեծեցինք, էլի ձայն-ծպտուն չկա: Կանգնեցինք մոտ քսան լոպե, բայց դուռը չէին բացում: Նիկոլը թե. «Մանու՛կ, եկ այսպեղ»: «Ինչ է, եղբայր»: «Այս պարուհանը պետք է ջարդենք, ուրիշ ելք չկա»: Այդպես էլ արեցինք, ներս մտանք, գնացինք դահլիճ, տղաները հետները բերած մոմերը վառեցին, տան լույսերը նույնպես վառեցին, ինձ կանգնեցրին դրսի դռան մոտ. «Լավ կնայես, որ մարդ չփախնի, Հովհաննե՛ս»: Ես զենքը ձեռքիս գնում-գալիս եմ, մեկ էլ մի կին՝ եղբա՛յր: Ես լավ վախեցա: «Ինչ բա՛ց թող, ես այս տան ծառան եմ, ոչ մի մեղք չեմ գործել, հակառակը, ես էլ այս տան վրա ոխ ունեմ»:

Ես զարմացել էի, թե որտեղից դուրս եկավ այս կինը: Ես կասկածեցի. չլինի՞ թե տղամարդ է, ուզում է ինձ խաբել. «Երեսդ բա՛ց, որ տեսնեմ՝ դու կին մարդ ես»: «Սիս, տես»: Տեսա՝ իսկապես կին է. «Ինչ կասես, քեզ բա՛ց թողնեմ»: «Հա՛, եղբայր ջան, ես քեզ լավ բան կասեմ, միայն թե ինչ թող»: «Լավ, ասա՛ տեսնեմ»: «Էս տան զազանը մալի գոմի մսուրի տակին է, վրեն էլ խուշկիով ծածկել եմ, իսկ երկու ամսան ոսկեղենն էլ թրիքի մեջն է: Դե ինչ թող, եղբայր, թե չէ տղեքը, որ տեսնեն, կսպանեն»:

բաս չի ասի: Դու որտեղի՞ց դուրս եկար»: «Այս քախրի փակից»: «Լավ, դու ի՞նչ ոխ ունես»: «Ես փասը փարեկան էի, երբ ինչ քե-  
րեցին որպես ծառա, հետո, երբ մեծացա, խոսք փվեցի հարևանի  
փղային, որ նրան կառնեմ: Էս գազանը իմանալով, որ այդ փղան  
ինչ հետ կապ ունի, նրան ասկյար ուղարկեց, իսկ ինչ էլ փրա-  
ցավ: Ես երբորդ կիճն եմ, դեռ երկու հար էլ հայ աղջիկ էր պա-  
հում: Ռուսի գալուն մտրիկ աղջիկներին փվեց ասկյարներին,  
նրանք էլ փարան, էլ չգիրեմ՝ ինչ եղավ, ասա բոլորը, եղբայր:  
Դե թո՞ղ գնամ»: «Գնա՛, քո՛յր ջան»: «Հա՛, մի բան էլ, նրա անու-  
նը Ռաշիդ է, փոխել Մահմադ է դրել, կարող է ձեզ խաբի, չհավա-  
րար»:

Ես դրսի դռան մոտ գնում-գալիս եմ, Մանուկը եկավ ինձ  
մոտ. «Ի՞նչ անենք, գազանը չկա: Ամբողջ փունը փակնուվրա ա-  
րեցինք, բայց չգրանք»: «Գնա՛, կանչի՛ փղեքին, ես ասեմ, թե որ-  
տեղ է»: «Ի՞նչ ես ասում, ես քո հոգու՞ն մաքար, հիմա կկան-  
չեմ», -գնաց, Նիկոլի ու տղերքի հետ եկավ: Ես բացատրեցի գոր-  
ծի եղելությունը: «Հիմա ես դրա հոգին կառնեմ, թող փեսնի  
դժոխքի թագավորությունը», -ասաց Մանուկը:

Գնացինք գոմը: Ձեռքով նշան արեցի մսուրի տակի ուռած  
խուշկիին: Էս Նիկոլը խշտիկով մի հատ կամաց խփեց, բոլորո-  
վին չշարժվեց: Նորից խփեց, բայց այս անգամ ուժեղ, այնպիսի  
մի բռոռոց լավեց, ոնց որ ասլան լիներ:

-Դու՛րս արի, մուղյուր էֆենդի, երեսդ տեսնենք, այստեղ քեզ  
հարմար տեղ չէ: Մուղյուրը մսուրի տա՞կ, այն էլ քեզ նման բարձր  
պաշտոնյա, բա ամոթ չէ՞:

-Ես, ես մուղյուրը չեմ, դուք սխալվում եք, ջանք, ուրիշի տեղ  
եք դրել, ես բոլորովին անմեղ մարդ եմ, -ասաց նա դողալով:

-Բա որ անմեղ ես, անունդ ինչու՞ ես փոխել: Քո անունը Ռաշիդ  
է, ինչի՞ համար ես Մահմադ դարձել, որ Մահմադ դարձար, քեզ  
կօզնի՞ք գազանությունների համար, դեռ մորուք էլ թողել ես, որ  
տեսնողները քեզ չճանաչեն, -ասաց Նիկոլը:

-Չէ՛, ճիշտ չէ, ես Մահմադն եմ, երդվում եմ ալլահի սուրբ անու-  
նով:

-Հիմա ես վկա կբերեմ, որ դու իսկապես Ռ-աշիդ բեկն ես, մուդ-  
յու՛ր էֆենդի:

-Մանու՛կ, եկ այստեղ: Հը՞, ճանաչու՞մ ես այս տղային:

-Բոլորովին:

-Քո թրի տակից է ազատվել, ինչու՞ չես ճանաչում: Դու չէի՞ր  
մտածում, որ մի օր էլ քո բուրդը քամուն կտան: Մանու՛կ, ճանա-  
չու՞մ ես այս մարդուն:

-Ինչու՞ չէ, մեր Բասենի ամենալավ մարդը՝ Ռ-աշիդ էֆենդին է՝  
չաթարների միդյուրը:

-Լավ, մոտիկ երկու հայ աղջիկներին ի՞նչ արեցիր:

-Ես ոչ մի հայ աղջիկ չգիտեմ, ես ասում եմ, որ դուք սխավում  
եք: Խնդրում եմ, ինձ մի՛ սպանեք, ես ձեր ասած մարդը չեմ: Ոսկի  
շատ ունեմ, դուք տարե՛ք, վայելե՛ք, միայն թե ինձ օգնե՛ք:

-Մենք քո ոսկիների տեղն էլ գիտենք, ուզու՞մ ես ասենք, թրիքի  
մեջն է երկու աման:

Էս մարդը հանկարծակիի եկավ.

-Ջա՛նրմ, այդ տեղեկությունները ձեզ ո՞վ տվեց: Այստեղ քա-  
ղաքում ոչ մի հայ չկա, ոչ էլ ինձ ճանաչող: Է՛հ, ալլա՛հ, այս ի՞նչ  
բան է, ո՞վ է ձեզ այս բոլորն հաղորդել:

## **Նիկոլ եղբայրը՝ դատավոր**

-Ես կարծում եմ, որ դու դատաստանիցդ չպիտի փախչես,  
մուդյու՛ր էֆենդի: Ես տեսնում եմ, որ Աստված քեզ պիտի պատ-  
ժի, անմեղ մանուկների, ծերերի, կանանց արյունը խմում էիր, դե  
հիմա պատասխան կտաս, մուդյու՛ր էֆենդի: Չէի՞ր մտածում, որ  
մեկ օր էլ դու արդար դատաստանի առաջ պիտի պատասխան  
տաս քո դաժան վերաբերմունքի համար: Որքա՞ն անմեղ մարդ-

կանց ես սպանել, դե խոսի՛ր, քո վարքագծից մի՛ ամաչիր, ես թույլ եմ տալիս, որ խոսես, կարո՞ղ է ես սխալ եմ:

Մուղյուր էֆենդին ինքն էլ շատ լավ հասկացավ, թե ինչի համար են իրեն մեղադրում: Իր մեղքից փախչելու հնարավորություն չունեցավ, մտածում էր խորամանկ սատանայի նման: Հույս ուներ ինչ-որ մի ձևով իր գործած մեղքից ազատվելու, քանի որ երկար էր մտածում: Ինձ էր նայում դիսակալ աչքերով, երևի գիտեր, որ ես եմ տեղը ցույց տվել, այն տեղը, թե որտեղ էր ինքը թաքնված: Մանուկը թե.

-Եղբա՛յր, այս մարդը հանցագործ է, հայ ժողովրդի նենգ արյունախում, որի ձեռքերը մինչև արմունկները հայի անմեղ արյունով են թաթախված: Եղբա՛յր Նիկոլ, քանի որ մեր թշնամին բռնված է, նրան պետք չէ խնայել, արդար հատուցումն է սպանելը:

-Դե խոսի՛ր, մուղյու՛ր էֆենդի, կարո՞ղ է՝ դու մեղավոր չես, մենք ժամանակ չունենք:

-Ի՞նչ խոսեմ, աղա՛ջան, ես արել եմ, դուք մի՛ արեք: Ինչ ուզում եք, տարեք, միայն թե ինձ մի՛ սպանեք, ընտանիքի տեր եմ:

-Տեսնում ես, մուղյու՛ր, կյանքն ինչքան թանկ է, մանավանդ ընտանիքի կյանքը, իսկ հայ ժողովրդի կյանքն ու ընտանիքը ձեզ համար ոչ մի բան չարժեր: Սենք քեզ ներել չենք կարող, դու պետք է կրես քո արդար պատիժը:

Մուղյուր էֆենդին ծունկի չոքած լալիս էր, աղաչում էր երեխայի պես՝ ինձ մի՛ սպանեք: Հիմա հազիվ թե մեկը ճանաչեր, որ սա այն մուղյուրն<sup>144</sup> է, որը, ձիու վրա նստած, հրամայում էր իր *չաքարներին*. «Սպանե՛ք, գյավուրներին, չիւնայեք ոչ մեկին»:

-Մանու՛կ, ի՞նչ կարող ես ասել մեր մուղյուրին:

-Ես ասի, նորից կասեմ այսքանը, քանի որ այս հանցագործ գայլը հայ ժողովրդի անմեղ գոհերի՝ հայրերի, մայրերի, երեխաների, քույրերի արյունով է ներկված, պետք է այս րոպեին պատժվի: Ես եմ մնացել մեր գյուղից: Ոտքի՛ ել, մուղյու՛ր էֆենդի,

հապա ինձ նայի՛ր, ճանաչում ես, չէ՞ ...

Նիկոլը դարձավ Մանուկին. «*Դու քո հարազատների վրեժը ա՛ն*»: Այս անաստվածը հետևից երեք-չորս անգամ սվինահարեց, նոր Ռաշիդը վայր ընկավ, տան բոլոր անդամներին էլ սվինահար արեցին:

-Գե՛ գնանք, ժամանակը կարճ է, հարկավոր է օգնականին էլ վերջ տալ,-ասաց Նիկոլը:

Ես ասացի, որ չեմ կարող գալ, որ սիրտս խփում է:

- Լավ,-ասաց Նիկոլը,-դու գնա՛ կազարմա, Սիմո՛ն, դու էլ Հովհաննեսի հետը գնա: Այս իրերն էլ՝ ոսկու ամանները, տարե՛ք:

Մեկը ես վերցրի, մյուսը՝ Սիմոնը: Գնացինք կազարմա, ես պառկած երկար ժամանակ մտածում էի. «*Այս ի՞նչ բան է, ինչու՞ մարդիկ զազանների պես իրար են սպանում*»: Աչքերս չէին փակվում: Չգիտեմ՝ որքան ժամանակ էի քնել, տղերքը մոտյուրի օգնականի գործն էլ վերջացրել, եկել էին: Մեկ էլ ինձ արթնացրին. «*Հովհաննես, վե՛ր կաց, քո բաժինը վերցրո՛ւ*»: Ինձ բաժին էր հասել մի կանացի բավականին մեծ ոսկյա ցեպ, քսան թուրքական ոսկի, մի հատ էլ «Սարգիսով»<sup>145</sup> ժամացույց: Ես բոլորովին չնայեցի, պառկա: Առավոտյան գնացի հաց ուտելու, բացեցի պայուսակս, տեսա իրերը: Ես շատ ուրախացա, մտածում էի, որ ոսկյա ցեպը կնվիրեմ Ֆաթիմային: Այնքան էի ուրախացել, որ Սիմոնը զարմացավ. «*Այս ի՞նչ ուրախ ես, Հովհաննես, գիշերը բռնորովին ուրիշ տեսակ էիր*»: «*Ի՞նչ իմանամ, թե ինչու, մարդ է էլի, կպատրասի*»:

Կեսօրին մոտիկ ես ու Մանուկը շրջում էինք քաղաքում: Տեսանք՝ չորս-հինգ թուրք գնում են դեպի բերդի կողմը, ուրիշ թաղերից էլ էին գալիս չորս-հինգ հոգով. «*Հովհաննես, ե՛կ մենք էլ գնանք տեսնենք սրանց փորի ցավը*»: Մենք էլ գնացինք մյուսների հետևից, հավաքվեցինք մի շենքի մեջ, եկավ մոլլան. «*Է՛՛, ջա-*

մահա՞ք, այս գիշեր քաղաքում մեծ հանցագործություն է եղել, Մահմադ աղայի ողջ ընկրանիքին սպանել են, Հասան չաուչի ընկրանիքին նույնպես: Մեր քաղաքում դեռ այսպիսի դեպք չէր եղել, հարկավոր է միջոցներ ձեռք առնել, որպեսզի այլևս նման դեպք չկրկնվի: Այսպիսի փորձանք այսօր նրանց եկավ, վաղն էլ մյուսին կգա: Հարկավոր է, որ մենք մեզ պաշտպանենք, ու մ կարող ենք բողոքել, քանի որ րեր ու րհրական չկա: Միս քե ինչ եմ առաջարկում. յուրաքանչյուր թաղի բնակիչ պետք է իր թաղը պաշտպանի, օրական վեց հոգի յուրաքանչյուր թաղից պետք է մյուս թաղերի պահակների հետ կապ հաստատի: Եթե մի թաղում վրանգ պատահի, ապա մյուս թաղի պահակները պետք է անմիջապես օգնության հասնեն»:

Մենք կանգնած էինք դռան մոտ.«Հովհաննես՛ս, եկ գնանք, սրանց միրքը հասկացանք», -ասաց Մանուկը: Ելանք դուրս գնացինք: «Հովհաննես՛ս, եկ գնանք բերդում»<sup>146</sup> մաս գանք»: Ելանք բերդի ճանապարհով, գնում ենք դեպի վերև: Նայում ենք, որ բավականին մարդ է գնացել դեպի բերդը, բավականին նոր հետքեր կային ձյան վրա.«Մանու՛կ, երևի բերդում զինվորներ կան, գնանք րեսնենք», -հասանք բերդի վերևը, մեր առջև բացվեց մի հիանալի տեսարան: Արևը ձյան վրա շողշողում էր, երևում էին տեսակ-տեսակ գույներ, որ կողմը նայում էիր, հարթ տարածություն էր, ոչ մի բան չկա, աչքիդ կտրածի չափ հարթ է Բասենի հովիտը, միայն, երբ նայում ես դեպի արևմուտք, երևում են Էրզրումի սարերը: Մանուկը կանգնած նայում ու չէր հագեցնում իր հայրենիքի գեղեցկությամբ.«Հովհաննես՛ս, աշխարհում հայրենիքից քանկ ու գեղեցիկ բան չկա: Արի՛ ցույց տամ մեր գյուղը՝ Բաղիջավանը»: «Այդ ի՞նչ անուն է, Մանուկ»: «Ամենալավ անունը, մի շատ հին պատմություն կա: Հույները Պաս պազավորին մեր գյուղում են սպանել, մեր թագավորին սպանողները ստացել են իրենց պարիժը: Ոչ մի հույն զինվորի կենդանի չեն թողել, հենց

այդ օրվանից էլ մեր գյուղը կոչվել է Պարիժավան: Հովհաննես՝ս, գիրե՞ս՝ ինչ հարուստ էր մեր գյուղը, իսկական ցորենի զանչարան: Չտեսնված ցորեն էր աճում: Մեր գյուղում կային նաև նավթի հանքի հեղքեր: Թուրքերն ասում էին՝ այնքան չենք բացի մեր հանքերը, մինչև ռուսների նավթը պրծնի, նոր կբացենք մեր հանքերը... Գնանք բերդի ներսը շրջենք»: Գնում ենք հետքերի ուղղությամբ, մեկ էլ հետքերը միանգամից դեպի ձախ դարձան: «Մանուկ, եթե այստեղ զինվորներ կան, ապա ինչու՞ պահակ չկա: Արի տեսնենք, չորս կողմերս ամայի է, ոչ մի կենդանի շունչ չկա: Գնանք այս հեղքերով, երևի ցուրտ է, դրա համար էլ չեն երևում»: Նորից Մանուկը կանգնեց, նայում է իրենց գյուղին, իր հայրենիքի գեղեցկությանը: Ամբողջ Բասենը մեր ոտքերի տակ էր, կարծես այս բերդը պահակ կանգնեցրած լինեին, որ Բասեն մարդ չմտնի: Բերդի մեջ բավականին գորանոցներ կային, բայց ոչ մի մարդ չկար: Երբ բերդից նայում էիր դեպի Բասենի դաշտավայրը, տեսնում էիր հարթ, սպիտակ տարածություն, սքանչելի տեսարան էր, որտեղ իշխում էր խաղաղությունը: Ամայի էր այն, ոչ մի կենդանություն չկար: Բոլոր կողմերից բերդը ահռելի կերպով իշխում էր ամբողջ շրջանի վրա:

«Կարելի է անվերջ դիտել Բասենի այս գեղեցիկ պարկերը, ասաց Մանուկը, -մեր դաշտային Բասենը<sup>147</sup> աշխարհի ամենաբերրի երկրներից մեկն է: Էրզրումի թուրքերը ասում էին, թե ինչու պիտի մտածենք, քանի որ Բասենի պես հարուստ ամբար ունենք: Թուրք դահիճները ծանր վերքեր հասցրին մեր հայրենիքին: Տե՛ս, երևում են մեծ-մեծ գյուղերը, բայց ոչ մի ծուխ չի երևում, և ոչ մի կենդանի շունչ չկա: Հայերս աշխարհի որ մասում էլ լինենք, երբեք, երբեք չպիտի մոռանանք մեր անցյալը: Թուրք բարբարոսները ամբողջ հին Հայաստանը վերածեցին ավերակների: Բասենի հովիտը, որ Հայաստանի շրեմարանն է եղել, այժմ ավերվել և ավերակների մի կույտ էր դարձել: Աշխարհը դեռ այսպիսի չար գազանություն չէր տեսել: Այո՛, օսմանցիք լրիվ

գիշարիչ զազանների շարքին են պարկանում: Միավասիկ մեր ազգի փրկությունը աննշմարելի է, մեր անբախարացած ազգը թշվառության մեջ է: Միանգամից վառեցին, մոխրի վերածեցին մեր պապերից մնացած հազարամյա Հայաստանը: Մենք՝ հայ զինվորներս, պետք է վրեժխնդիր լինենք, թնամու կողմից անմեղ հայերի թափված արյան համար, մեր հայրերի, մայրերի, եղբայրների, քույրերի համար: Միրուն, հարուստ Հայաստանը վերածեցին ավերակների, կարծես ավերվել էր ուժեղ երկրաշարժի հետևանքով: Որքա՞ն խաղաղ բնակիչներ կային, որոնք կուլ գնացին թուրք բարբարոսներին: Արդար քրտինքով սրեղծված ի՞նչ հարստություն է կորել: Բարսիլոս մարդու սիրտն էլ լաց կլիներ: Երբ հարց ես Կալիս, թե ինչն է այս բոլորի պարճառը, աչքիդ առաջ կանգնում է բարբարոս թուրքերի՝ մարդագայլերի պարկերը: Մարդու մարմինը դողում է, երբ նայում է Բասենի ավերված գյուղերին: Պարերազմը պայթեց հայերի համար ու հայ ազգին էլ մահ բերեց, աշխարհի հայ մայրերի արցունքը քամվեց: Ուր որ նայում եմ, ամենուր իմ հայրենիքն է, սրբազան մեր գյուղն ու սրբազան հովիտները. ինչ համար վառ է ամեն ինչ՝ իմ մանկությունը հայրենի գյուղում: Սրտանց սիրում եմ, սիրում եմ իմ հայրենիքը՝ Բասենը: Հիշում եմ նրանց՝ իմ հարազատներին, մեր գյուղացիներին, ովքեր ապրում էին մեր երկրում. ափսո՛ս, որ չկան, զոհ գնացին զազանին»:

Մանուկը, ախուվախ անելով, ինքն իրեն խփելով, հազար ու մի ցավակցություն անելով, նստած նայում էր դեպի իրենց գյուղը: Այո՛, չկան ու չկան: Ինչ խոսք, որ աստվածային երկիր էր Բասենի հովիտը: Ես երբեք չեմ մոռանա Մանուկի վիշտը, այն ինձ վրա զարմանալի տպավորություն թողեց: Այո՛, զարմանալի երկիր էր Բասենը: Մեր առջև բացված էր Բասենի ամբողջական տեսարանը: Ինձ վրա անջնջելի տպավորություն թողեց հնագույն Հայաստանից մնացած բնության այս մասնիկը: Հասանդալան հարմար դիրք ուներ. բարձունքից և միաժամանակ բերդի վրայից հիանալի երևում էր Բասենի ամբողջ դաշտավայրը: Երևում էին գյուղերը, բերդերը, ամրոցները, միայն արևմուտքից կար մի ճանա-

պարհ բերդ բարձրանալու համար: Հիմա հիշում եմ, որ բարձրությունը կհասներ 500-600 մետրի, չորս կողմը բնության չտեսնըված ժայռերն էին, բերդը՝ կարծես որպես ահռելի սյուն, տնկել էին Բասենը հսկելու համար: Շրջակայքում թաքնվելու հարմար տեղ չկար, ամեն ինչ մաքուր երևում էր: Ես շատ տեղ եմ եղել, բայց սրա պես հարմար բերդ չեմ տեսել ոչ մի տեղ: Տաթևի ժայռը արևելքից շատ քիչ նման է սրան:

*«Հե՛յ գիտի աշխարհ, այս Հասանդալան Էրզրումի բանալին է, Հովհաննէս: Գիտե՞ս, թե որքա՞ն մարդ է մահացել կովի ժամանակ: Այստեղից ռուսական զորքի վրա օսմանցիների ամենատուժեղ թնդանոթներն էին կրակում: Հերաքրքիր է, թե արդյոք այդ թնդանոթները հիմա կա՞ն, Հովհաննէս»:* Բերդի վերևում մի մեծ տարածություն էր. հասանք բերդի արևելյան կողմը: Իսկապես որ այստեղ՝ քսան քայլի վրա, մոտ քսան ահռելի թնդանոթներ կային՝ բերանները դեպի արևելք, բայց զատվոռները չկային, միայն դատարկ լուլքն էին: *«Արի՛, Հովհաննէս, արի՛, պստակ կանգնի՛ հզոր օսմանցիների թնդանոթների, որ չփչացնեն: Կար ժամանակ, որ այստեղից անգամ թռչուն չէր կարող թռչել, իսկ հիմա մնացել են ակրեր»:*

*«Չի կարող ակրեր լինել, Մանուկ, գնանք այս հերքերով»:* Գնում ենք հետքերով: Մանուկը՝ առջևից, ես՝ հետևից, հասանք մի քարանձավի: Ուղքե՞ր են, որ մտնում են այստեղ: Մտածում ենք. *«Ի՞նչ անենք, մրնե՞նք ներս, թե՞ ոչ, կարող է հայեր չլինեն»:* Ծլկտում ենք դեպի քարանձավը: Բավականին կանգնեցինք, չգիտենք՝ ինչ անենք, վերջում սիրտ արեցինք ու անվախ ներս մտանք: Ի՞նչ տեսնենք. 500-600-ից ավելի կանայք, մի անկյունում կույ եկած, սարսափահար մեզ են նայում: Մեծ մասը կանայք, ջահել աղջիկներ ու փոքր տղեք էին: Այնպիսի հայացքով էին մեզ նայում. ես երբեք չեմ մոռանա նրանց վախվորած, կյանք աղերսող հայացքները: Մի քիչ էլ մոտեցանք, հանկարծ մի այնպիսի վայնասուն բարձրացրին: Մանուկը դարձավ նրանց.

-Մի՛ վախեցե՛ք, մենք հայեր ենք, ձեզ ձեռք չենք տա:

Մեկ էլ երկու մայրեր (միջահասակ կանայք էին) շնչակտոր

ընկան մեր ոտքերը:

-Մեզ տարե՛ք, ուր ուզում եք, ինչ ուզում եք, արե՛ք... խնայեցե՛ք մեր բալիկներին: Մենք ոչ ոքի վնաս չենք տվել, ալլահը վկա: Այստեղ միայն աղջիկներ ու փոքր երեխաներ են, ձեռք մի՛ տվեք, նրանք դեռ երեխաներ են:

Մանուկը սկսեց ծիծաղելը.

-Դուք ձեր մարդագայլերի՝ օսմանցիների արշինով եք մեզ չափում: Տե՛ս, թե ինչեր են մտածում, մենք հա՛յ ենք, հա՛յ, մարդասպաններ չենք,-Մանուկը դարձավ նրանցից մեկին,-վե՛ր կացեք, կանգնե՛ք, մայրիկ, ինչի՞ մասին եք խոսում, ի՞նչ է պատահել,-ելան, հևալով կանգնեցին,-դե՛, խոսի՛ր, անա՛, ի՞նչ է պատահել:

-Ի՞նչ պիտի պատահի, բալիկներ՛ր, աշխարհում ամեն ինչ փոխվել է, ով ինչ ուզում է, այն էլ անում է, ո՛չ ալլահից վախ կա, ո՛չ էլ փեխամբարից<sup>148</sup>, մարդիկ գազանացել, իրար միս են ուտում:

-Հա՛, հասկացանք, անա՛, դուք այստեղ ի՞նչ եք անում: Ինչի՞ համար եք եկել բերդը:

-Եկել ենք, որպեսզի թաքնվենք, որ մեզ զինվորները չվնասեն: Բոլորը փոքր աղջիկներ ու երեխաներ են, ի՞նչ մեղք են գործել, որ կոտորեն: Թացն էլ չորի հետ պիտի վառվի, ով որ հայերին սպանում էր, ստացավ իր արժանի<sup>149</sup> պատիժը: Մնացած ժողովուրդն ինչո՞վ է մեղավոր, որ պիտի կոտորեն: Դուք ասեք, բալիկներ՛ր, ես ճի՞շտ եմ ասում:

-Այո՛, ճիշտ է, պետք է այդպիսի մարդագայլերին դատեն ու սպանեն, դեռ միդյուրի նման հազարները կան, որոնք պետք է պատժվեն:

-Ո՞վ պիտի ձեզ կոտորի, անա՛:

-Նոր եկող գորքը:

-Ո՞վ է ձեզ այդպիսի անհիմն բաներ ասել, մենք այդ գորքից ենք, բայց այդպիսի հրաման չունենք:

-Ի՞նչ ես ասում, որդի՛ ջան, աստված ձեզ թող պահի չար վտանգից, ես ձեզանից մի բան եմ խնդրում, տղե՛րք ջան, ձեր

տղերքին չասեք, թե բերդում կանայք կան: Դուք դեռ փոքր եք, չզհտեք չար մարդկանց միտքը: Մենք երեկոյան գնալու ենք Թորթումի կողմը, որպեսզի այս աղջիկները ազատվեն փորձանքից, ահա իմ խնդրանքը, տղե՛ք ջան: Հիմա ի՞նչ կկամենաք, ասե՛ք ինձ, որ ես ձեզ տամ ձեր լավության փոխարեն:

-Մենք ոչ մի բանի կարիք չունենք,-ասաց Մանուկը, ոչ էլ ձեզ վնաս կտանք, մենք եկել ենք բերդը ման գալու, ոչ թե չար մտքով, հասկացա՞ր, անա՛, բայց մի բան ունեմ ձեզ ասելու, անա՛, ճշմարտությունը: Լսի՛ր, անա՛, չէ՞ որ մեր հայ կանայք էլ ձեր ասկյարներին խնդրում էին, որ իրենց չսպանեն, չսպանեն անմեղ երեխաներին, բայց ձեր ասկյարները չէին խնայում ո՛չ կանանց, ո՛չ էլ երեխաներին, կոտորեցին անխնա, անա՛, չլսեցին հայ մայրերի լացը: Արի՛ մի քիչ առաջ, անա՛, տեսնու՞մ ես Բասեյնի օվանը<sup>150</sup>, որքա՛ն հայի գյուղ կա, դատարկ են, հիմա չկա ո՞չ մի, ո՞չ մի բան, հասկանու՞մ ես, անա՛ ջան: Լա՛վ նայիր, ուշադիր, ոչ մի գյուղից ծուխ չի բարձրանում, չկան այնտեղի բնակիչները: Մոտ հարյուր գյուղ հայություն կար<sup>151</sup>, իսկ հիմա ամայացել են գյուղերը, ձեր օսմանցիները ողջ երկիրն ամայացրին, ավերակների վերածին: Դու ճիշտ դատավոր ես, անա՛, մի քիչ առաջ ասացիր, թե թացն էլ չորի հետ ինչու՞ պիտի վառվի, ով որ մեղավոր է, թող նա էլ իր պատիժը կրի: Ախր ձեր օսմանցիք այդպես չմտածեցին, աշխարհն իր գոյության ընթացքում դեռ այդպիսի գազանություն չէր տեսել, չէր տեսել այնպիսի դաժանություն, որպիսիք ձեր օսմանցիք արեցին: Ո՞վ էր մեղավոր, թող նրան պատժեին, ինչու՞, ինչու՞ անխնա սպանեցին անմեղ ժողովրդին՝ փոքրից մինչև մեծը: Եթե ձեզ կես ժամվա մեջ ոչնչացնենք, կախենք ձեր խանում դիակները այս բերդի չորսբուրդը, ոչ ոք մեզ չի մեղադրի, խանու՛մ անա, քանի որ դուք երկու տարի առաջ հազար-երկու հազար անգամ ավելին արեցիք: Մեր մայրերն ու երեխաներն էլ էին լալիս, ողջ

հայությունն էր լաց լինում, բայց ոչ մի զիջում, ոչ մի փրկություն չէր կարողանում, կոտորեցին անխնա: Ծի՛շտ է, անա՛:

-Ծի՛շտ է, բալի՛կ ջան, անողին չի մնա, անկարելի է:

-Ես քեզ մի հարց կտամ ամբողջ մեր հայ տղեքի անունից: Որտե՞ն է մեր մայրերը, անա՛, ես, ես եմ քեզ հարցնում, որտե՞ն է մեր հայրերը, քույրերն ու եղբայրները մեր, դե՛ ասա, անա՛:

Անան, հայացքը գետնին ուղղած, շրթունքներն էր կրծոտում: Երկու թուրք մայրեր խոնարհել էին գլուխները:

-Դուք ինձ հավատացե՛ք, որդի՛ք, այստեղ գտնվողները ոչ մի բան չգիտեն կոտորածից:

Մանուկը ոտքերը խփեց գետնին.«*Հասցա ո՞վ է տեղյակ, դա պարսասիանաբանությունից խուսափելու մի խաբուսիկ միջոց է*»:

Անա մայրիկը ամեն կերպ փորձում էր ապացուցել, որ այստեղ գտնվող կանայք ոչ մի մեղք չունեն:

-Ծի՛շտ է, անա՛, դուք գայլերի մայրերն եք, դուք ոչ մի մեղք չունեք:

-Ես իմ ասածն ասացի, որդի՛, մարդկության հանդեպ մեղավոր մայր եմ:

-Լա՛վ, գնացե՛ք, մեզանից ոչ մի վնաս չի գա ձեզ:

Մանուկը նստած նայում էր դեպի իրենց գյուղը, ոչ մի շարժում չէր անում: Ես նայում էի այս երիտասարդին, մտածում նրա խելքի մասին, նա կարծես մեծացել ու փոքրացել էր: Ես զարմացել էի, թե Մանուկը որտեղից գտավ այդքան բառեր ու կարողացավ անային ասել այդքան երկար մտքեր, ինձ թվաց, թե քննում է գլխավոր թուրք մեղավորների դատավճիռը: Ես էլ Մանուկին հասակակից էի, բայց ոչինչ էի նրա համեմատ: Այսպես նստած, ձեռքերը երեսին դրած՝ մտածում էր Մանուկը: Ես տեսնելով, որ շատ է տանջվում, հարցրի.

-Մանու՛կ, լսի՛ր ինձ, Թորթումն ի՞նչ բան է:

-Չգիտե՞ս՝ ինչ է,-մի տեսակ նեղանալով՝ ասաց նա, դարձավ ու աչքերը սրբելով՝ ինձ նայեց,-հայերը Թորգոմաց երկիր են ասում, իսկ Թորթում թուրքերեն է: Մի հիանալի աշխարհ է Թորգոմաց երկիրը, մրգի աշխարհ: Թորգոմցիք մեր Բասեյն էին բերում ամեն տեսակի մրգեր, թուրքացել էին այստեղի հայերը, սակայն մինչև այժմ էլ դեռ իրենց պապերի ազգանունով են՝ Քյաշիչօղլի, Դանիելօղլի... Դա էլ մեր Բասեյնի պես մի շրջան է. հայոց թագավորության ժամանակ երկիրը իշխանի անունով կոչվել է Թորգոմաց երկիր: Այսպես, սիրելի՛ Հովհաննես, այսօր Հասանդալայի իշխանը ես ու դու ենք, չէ՞, ինչ ուզենանք, կանենք մեր հպատակներին: Մեկը դու էլ ես ազատվել թուրքի սրից, ինչպե՞ս վարվենք այդ թուրք կանանց հետ: Ես ուզում եմ վրեժս հանել, քանի որ այս բուպեին մեր կործանված գյուղը աչքիս առաջն է, ես մի անբուժելի ցավ ունեմ, նայի՛ր, մեր գյուղից ոչ մի ծուխ չի բաձրանում: Ինձ համար ամենաթանկագինի՛ իմ հայրենիքի, ծնողներիս վրեժը ուզում եմ հանել, ահա սա է իմ գլխավոր պահանջը. որ թուրք դահիճները պիտի հատուցեն:

-Ուրեմն քո ասելով ես բոլորովին վիշտ չունե՞մ, Մանուկ ջան: Ես էլ քեզ նման վիրավոր եմ, դու կարծում ես՝ միայն քրո՞ջս եմ կորցրել:

-Աշխարհի դրվածքն է այդպես, Հովհաննես՛ս, ինչպես ասում են՝ **«Վերը տիրոջը ցավ կրա»**: Այսքան ժամանակ իրար ընկեր ենք, բայց դեռ չգիտենք, թե ինչպես ենք ազատվել: Ես պատմեմ իմ ազատվելու մասին, հետո՝ դու: ...Մի թուրք ծանոթ ունեիմք Ալախթար<sup>152</sup> քաղաքում՝ անունը Մահմադ: Կովից առաջ մեր գյուղն էր գալիս՝ ցորեն, գարի հավաքելու: Դրանք հավաքում էր մեր տանը. հայրիկիս հետ լավ հարաբերությունների մեջ էր: Զսան օր գաղթից առաջ այս թուրքը նորից մեր գյուղում էր, գարի, ցորեն էր հավաքում: **«Մահմա՛դ աղս,-ասաց հայրիկս,-մի բան եմ ուզում խնդրել**

*քեզանից: Տղայիս քեզ եմ հանչնում, փա՛ր, որպես թուրքի տղա՝ թող քեզ մոտ մնա: Երկու փարվա ուրելիքն էլ հեւրն եմ փաշիս: Ահա իմ խնդրանքը, վերնն Աստված, ներքեւը՝ դու, խաղաղություն լինի, ես քո լավությունը չեմ մոռանա»:* Հայրիկս հեռատես մարդ էր, Մահմադ աղայի հետ էր խոսում կովի մասին ու ասում. «Այս դրությունից վար հոտ է գալիս»: «Ես ուրախությամբ կրանեմ տղայիդ, Մարտիրոս՝ս քիհա»: Ես Էրզրում տեղափոխվեցի 1915թ. մարտին: Մահմադ աղայի մոտ մնացի այնքան ժամանակ, մինչև որ ռուսները Էրզրումն առան: Բոլորովին էլ տեղյակ չեմ, թե կոտորածին ինչ պատահեց մեր գյուղի հետ, միայն տեսել եմ, թե ինչպես աքսորեցին քաղաքում գտնվող հայ ժողովրդին՝ երեխաներից սկսած մինչև մեծը: Ահա այսքանը իմ փրկվելու մասին:

Հետո ես պատմեցի Մանուկին իմ գիտեցածը կոտորածի մասին:

-Ուրեմն այսպես, Հովհաննես՝ս, նորից եմ ասում, այսօր մենք ենք բերդի տերը, ես էլ իմ հպատակների իշխանն եմ, ինչ ուզեցեմ, կանեմ: Խոտորնակին՝ խոտորնակ: ***Գահիճների սպանած հազարի դիմաց գոնե մեկը լինի***<sup>153</sup>: Ես քեզ ինչ որ ասում եմ, պիտի կատարես: Մենք մեր պարտքը պիտի կատարենք, մեր հայրերի, մայրերի, քույրերի վրեժը պիտի հանենք: Ոչ մի ներում, Հովհաննես՝ս, հարկավոր է հենց այսօր էլ կատարել ամեն ինչ, քանի դեռ չեն հեռացել: Հիմա լսի՛ր ինձ, քանի մութը չի ընկել, շուտ գնա՛. հարկավոր է լույս աչքով կատարել, Նիկոլ եղբորն ասա՛, թող մի տասը զինվոր իր հետ վերցնի ու գա, կասես՝ որքան կարող է, թող շուտ գա: Ես կսպասեմ ձեզ: Ես սրանց բոլորին պիտի կոտորեմ՝ փոքրից բռնած մինչև մեծը, Հովհաննես՝ս:

-Ես էլ եմ այդպես մտածում, Մանուկ, բայց չենք կոտորի: Հիմա, որ մենք զայրացել ենք, այդպես ենք ասում, մարդ մեծահոգի պիտի լինի, Մանուկ՝ս:

Մանուկը մեկից հարձակվեց ինձ վրա.«*Ես քեզ հարց եմ րահալիս, քո մայրը, քույրերը, չէր գյուղի մայրերը, երեխաները մեղավոր էի, որ անխնա ջարդեցին, դե պատասխանիր*»։ Ես քիչ հեռու կանգնած դիտում էի Մանուկի հետ կատարված փոփոխությունը, ինքս ինձ որոշում եմ, մայրում եմ դեմքին, չափազանց լուրջ է, երբեք այսքան կտրուկ հրաման դեռ չէր տվել։ Ինձ ասածը ցավոտ խոսքեր էին։ Չգիտեի՝ ինչ անեի, որ Մանուկը հանգստանա։ Մեկ էլ միտքս ընկան հայրիկիս խոսքերը.«*Հարկավոր է Մրթոյից և իր օգնականներից վրեժ հանել, ինչ որ մեզ անում են սրանք, այն էլ դուք արեք*»։ «Մանու՛կ, մի բան ունե՞ս ասելու, լսի՛ր ինչ էլի»,-իսկ Մանուկը, որ կանգնել էր իր որսը կուլ տալու պատրաստ առյուծի պես, զայրացած ասաց.«*Դե ասա՛, լսում եմ*»։

-Գիտես, հայրիկս էլ էր քեզ պես ասում, որ հարկավոր է սրանցից վրեժ հանել, բայց թե ումի՞ց...Մրթոյից ու իր օգնականներից, ոչ թե անմեղ երեխաներից ու կանանցից, հասկացա՞ր, Մանու՛կ ջան։ Ինչո՞վ եմ այս կանայք ու երեխաները մեղավոր, որ մենք կոտորենք։ Ես՝ որպես քեզ մոտ ընկեր, խնդրում եմ, եկ թողնենք, գնանք, իբր թե ոչինչ էլ չենք տեսել։ Մենք զինվոր ենք, պետք է զինվորների հետ գործ ունենանք, ոչ թե կանանց ու երեխաների։ Արի մի քիչ շրջենք այս զարմանալի բերդում, ինչո՞վ եմ կանայք ու երեխաները մեղավոր։

-Ես բոլորովին համամիտ չեմ քեզ հետ, քո վճիռն ինձ չի համոզում, Հովհաննե՛ս, իսկ ես քեզ հարցնում եմ, մի՞ թե մեղավոր էին մեր մայրերը, քույրերն ու երեխաները, որ թուրքերը գազանաբար կոտորեցին։ Ոչ մի ներում, պետք է պատժվեն օձի ծնունդները, հարկավոր է գործել։ Մենք ոչ մի բույս չպիտի մոռանանք, թե մեր անմեղ ժողովրդի հետ ինչպիսի դաժան դատաստան արեցին թուրքերը։ Ես երբևէ չեմ մոռանա թուրքերի դաժանությունները։ Դու մեղադրում ես ինձ ու իմ վճիռը, վաղը պատմությունը մեզ կմեղադրե։ Մենք՝ հայ զինվորներս, պիտի անենք այն, ինչ հայ

ժողովրդի հետ արեցին թուրք զինվորները: Բավական է վզներս ծռենք, թե՛ սպանենք մեզ, թուրքեր, պետք է օրինակ դառնանք ապագա սերունդներին, որոնք մեզ գնահատելու են: Իմ դատավրճիռն արդարացի է, պետք է սրանց խիստ կերպով պատժել: Իմ սիրելի ընկեր Հովհաննես, դու ինձանից շատ ես տեսել ցավալի, կսկծալի դեպքեր, ինչու՞ ես այդպես մեղմ մոտենում մեր պարտականությունը:

Որքան շատ էր խոսում Մանուկը, այնքան տխուր փաստեր էր բերում, որոնք արդարացնում էին նրա վճիռը: Մանուկը՝ իբրև իսկական հայրենասեր զինվոր, իրոք որ, անգնահատելի էր, իսկ ես այն ժամանակ ոչ բավական գիտելիքներ ունեի, ոչ էլ Մանուկ կարող էի դառնալ: Ես զարմացած էի ամբողջ այն ժամանակահատվածում, երբ Մանուկը խոսում էր անայի հետ (իսկ այդ խոսակցությունը տևեց բավականին երկար), այդ ժամանակ ինձ թվաց, թե նա գիտնական է:

...Արդեն մութը կոխել էր:

-Մանուկ, քո վճիռը թող մնա առավոտյան, եկ գնանք, դու ինքդ Նիկոլ եղբոր հետ խոսի՛ր, ես քեզ օգնել չեմ կարող, դա ինձ համար բավական դժվար հարց է:

Այս հերոս տղային սպանեցին Շուրազյալի<sup>154</sup> Բաշ<sup>155</sup> գյուղում: Այս գրքում շատ հերոսություններ ունի արած: Ես մինչև այժմ էլ չեմ մոռացել Մանուկի գեղեցիկ պատկերը, ուրիշ հայրենասեր էր Մանուկը, ափսո՛ս, ափսո՛ս, հագա՛ր ափսոս, որ անտեղի սպանվեց:

Հինգերորդ օրն է, որ Հասանդալայում ենք, առավոտյան շարքի կանգնեցրին, գնում ենք Էրզրում<sup>156</sup>: Շարժվեցինք, հասանք Գարվաբոյնի<sup>157</sup>, իսկապես, որ Գարվաբոյնի էր՝ երկու ծուռուծուռ կողմերով սար, բերդերով: Հասանք Գարսի երկաթյա մեծ դռանը<sup>158</sup>, մեզ տարան մի մեծ շենք, հետո բաժանեցին, տասը հոգու տարան Երզնկայի դռան մոտ<sup>159</sup>: Բերդի տակը պահեստներ կա-

յին, որտեղ էլի պահակներ կային, մենք չորսս միասին էինք, չբաժանվեցինք:

Զգիտեմ՝ մեր գալու որ օրն էր, Մանուկն առավոտվանից անհայտացավ, ուշ երեկոյան նոր եկավ. «Այ տղա, ու՞ր էիր չքացել, ի՞նչ գործի էիր»: «Իմ աղայի տանն էի՝ նշանածիս մոտ», -ասաց ու ծիծաղեց: «Դե պատմի՛ր, իմանանք՝ ինչ նորություն է»:

-Առավոտ միանգամից միտքս ընկան աղաս ու իր աղջիկը, որի հետ շատ մոտիկ էի: Ահա այս էլ իմ նշանածի նվերը, -ասաց նա՝ գրպանի մի զենք՝ ռևոլ<sup>160</sup>, ցույց տալով: -Ես ուղիղ գնացի աղայիս տունը, ինձ որ տեսան, վախեցան, նույնիսկ չճանաչեցին: «Ես եմ, ես, Նազիմը», -ասացի նրանց: «Վա՛յ, անա՛, չճանաչեցինք»: Նազլուն վազեց, սկսեց ինձ համբուրելը, հետո էլ լաց էր լինում: Անան էլ մյուս կողմից էր ինձ իր կողմը քաշում ու համբուրում. «Ասրվա՛ծ ջան, այս ի՞նչ հրաշք է, ինչքա՛ն ես փոխվել, բա՛լի՛կ ջան, կարգին տղամարդ ես դարձել»: «Աղջի՛, թո՛ղ, հերի՛ք է, թող մի քիչ էլ ես առնեմ կարոտս, տնա՛նն, գնացիր ու գնացիր, մենք էլ գիշեր-ցերեկ քո մասին ենք մտածում, խոսում»:

Ա՛խ, ես լավ գրագետ լինեի, ավելի լավ կբացատրեի Մանուկի պատմածը:

-Խանումս թե՛. «Ես գնամ, աղայիդ կանչեմ, ջանը՛մ, մեր հարեանի տանն է»:

Մանուկի ուրախությանը չափ ու սահման չկար, ուրախ-ուրախ խոսում էր:

-Իսկ մենք աշխարհի ամենաքաղցր համբույրներն էինք փոխանակում Նազլուի հետ: «Տնա՛նն, ես կարծում էի, թե դու այդպես ապերախար չես լինի, որ մեզ մոռանաս»: «Ախր, սիրելի՛ս, ժամանակ չեք տալիս, որ ես խոսեմ, որ իմ բացակայության համար ինչ չմեղադրեք»: «Լա՛վ, լա՛վ, հեղո կպատմես, հիմա ժամանակը չէ, թող կարոտս առնեմ, ինչքա՛ն ժամանակ է՝ իրար

չենք րեսել»։ «Նազլու՛, դու էլ լավ փոխվել, կարգին օրհորդ ես դարձել, մարմինդ փոխվել է, գեղեցկացել ես»։ «Քեզ համար, սիրելի՛ս, քեզ համար»։

-Ներս մտավ աղաս, ոչինչ չհարցրեց, հարձակվեց վրես, համբուրում է, հետն էլ լաց լինում։ Խանումս էլ մյուս կողմից. «Աղա՛ ջան, հանգարացի՛ր, ես ձեզանից շար շնորհակալ եմ»։ «Լավ, նարե՛ք խոսենք, բալի՛կ ջան, այսպես էլ միանգամից փոխվե՛լ կլինի»։ «Ես սկսեցի պարամելը, ինչ որ վերևում դուք գիրեք»։ «Լավ, ա՛յ իսկում, էլ ինչու՞ ես նարել մնացել, աշխարհի ամենալավ, ուզածդ մարդը եկել է»։

-Նազլուն նստել էր ինձ մոտ, չէր էլ ուզում տեղից շարժվել. «Ա՛յ աղջի, վե՛ր կաց, մորդ օգնի, ի՞նչ ես սառել, մնացել»։ «Հայրի՛կ ջան, չնեղանաս, ես շար էի կարոպել, դեռ չեմ կշրացել կարոպիցս»։ «Խանում մայրիկի սեղանին դրածից հասկացա, որ համարյա ուրելու ոչինչ չկար։ Ես զգացի, որ այն այլևս առաջվա րունը չէ»։ «Դե պարամի՛ր, ջանը՛ս, բան չհասկացանք, ինչպե՛ս և ու՞ր գնացիր, Ասրծու աչքը թող միշտ քեզ վրա լինի։ Բալի՛կ ջան, մարդ էլ մեկից այսպե՛ս փոխվի, ես ուղղակի ապշել եմ»։ «Թող խոսենք, ջանը՛ս,-ասաց իսկումս,-մեր կարոպներն առնենք»։

-Ինձ պաշարել էին Նազլուն ու խանումս, հարցնում էին, թե բացակայության ժամանակ որտեղ էի, ինչ էի անում։ Այսպես խոսում էինք, չզգացվեց, թե ինչպես մթնեց։ Ահա ես էլ եկա։ Աղաս ապրուստի կողմից շատ ծանր վիճակի մեջ է, Նիկոլ եղբորն ասեմ, տեսնենք՝ կարո՞ղ ենք ուտելիքով օգնել։

-Տնաշեն, այնքան ուտելիք կա, որ... տասը տարի էլ հայ զինվորներն ուտեն, չի վերջանա,-ասացի ես,-այս ահռելի պահեստներին վերջանա՞լ կլինի, ինչ ուզես, կա։

Մանուկը եղբայրը Նիկոլին պատմեց իր աղայի ծանր վիճակի մասին. «Առանց մի խոսքի, մի հարս արարա քե՛ր ու ինչքա՛ն ու-

գում ես, քո աղայի համար ուրելիք փա՛ր»։ Մանուկն առավոտ-յան ուրախ-ուրախ գնաց մի կաշկա բերեց և վրան մի պարկ շաքար, չորս պարկ ալյուր, մի բաք յուղ, արկղներով օֆիցերսկի պեչենի, պահածոներ բարձավ։ Չիու տերը թե.«Ախպե՛ր, հերիք է բարձես, չին այդքանը փանել չի կարող»։ «Մի՛ նեղանար, ախպե՛ր ջան, քանկագին րեղ ենք փանում։ Հովհաննե՛ս, արի գնանք ծանոթացնեն աղայիս և քո եղբոր նշանածի հետը»։

Շարժվեցինք, հասանք ու անցնում էինք մի դայֆայի<sup>161</sup> մոտից, այստեղից բարձր խոսակցության ձայներ էին գալիս՝ գյավու՛ր, գյավու՛ր... Այս Մանուկը թե.«Տղե՛ք, կանգնե՛ք,-գնաց դայֆեն մտավ, բավականին ուշացումով գույնը գցած դուրս եկավ՝ ինքն իրեն ասելով,-ա՛խ, ես ինչպե՛ս էի մոռացել»։ Ես հարցրի.«Ի՞նչ եղավ, Մանու՛կ»։ «Ե՛կ այսպեղ, չեռքդ դի՛ր սրտիս, րե՛ս, թե՛ ինչ առագությամք է սիրտս խփում»։ Իրոք որ Մանուկի սիրտը չափից դուրս արագ էր խփում։ «Արի մի քիչ ջու՛ր խմիր, սիրտդ կհանգրստանա»։ Աղբյուրը մոտիկ էր, լավ լվացվեց, ջուր խմեց, իրոք որ հանգստացավ։ «Հովհաննե՛ս, շատ շնորհակալություն»։ «Ի՞նչ պատահեց քեզ հետ, Մանու՛կ»։

-Հովհաննե՛ս, մեր թաղի պոլիցիեն էր, քաղաքի հայերին Երզրնկա սավգյաթ<sup>162</sup> տարավ, քսան օր չկա, ես բողոքովին մոռացել էի այդ գազան հրեշին։ Ես ձայնից միանգամից ճանաչեցի, երբ ներս մտա, տեսա՝ իրոք որ նա է։ Մի թուրքի հետ վիճում էր, ինչ-որ բանի համար հայերին մեղադրում։ Ի՞նչ անենք հիմա, Հովհաննե՛ս։

-Քանի որ ձեր թաղի պոլիցիեն է, չի փախչի, արի ապրանքը տանենք ձերոնց հասցենք, հետո կմտածենք, թե ինչ անենք։

-Դու շատ ճիշտ ես ասում, գետնի տակն էլ լինի, ես նրան կգտնեմ, լավ, գնանք։ Բավականին գնացինք։ «Հասանք», -ասաց Մանուկը։

Դուռը բացեց Նազլուն.«Ի՛նչ եղար, րևաշե՛ն, առավորվանից աչքս դռնից չի հեռանում»։ «Ձինվոր ենք, սիրելի՛ս, մի՛ նեղանա, մեր զինվորական պարտքն ենք կատարում»։ Ես նայում էի այս չքնաղ աղջկան. կարծես մի հրեշտակ լիներ։ «Ահա, ծանոթացի՛ր իմ թանկագին ընկերոջ՝ Հովհաննեսի հետ»։ «Քո ընկերոջն էլ քեզ էլ մտառդ, դե՛ ներս հրամեցեք»։ «Դարպասը բա՛ց, մի քիչ ուրելիք ենք բերել, դատարկենք»։ Խանումն ու աղան եկան, ապրանքը դատարկեցինք։ Մանուկն ինձ ծանոթացրեց իր աղայի ու խանումի հետ։ «Ա՛յ բալամ, այս ի՛նչ նեղություն էք քաշել, չե՞ն նեղանա ձեր մեծերը»։ «Աղա՛ ջան, մի՛ նեղանա, բերածս մի մեծ բան չի, կարծես դու ավելին ես արել ինչ համար»։ «Ապրե՛ս, ապրե՛ս, բալի՛կ ջան,-ասաց խանումը,-դու քո կյանքում ոչ մի վարօր չարեսնես, գիշեր ու ցերեկ միշտ քեզ համար եմ աղոթում երկինք-գետին սրեղծող ալլահին»։ Ապրանքը դատարկեցինք պրծանք։

-Աղա՛ ջան, կներեք, մի փոքր գործ կա, գնանք ու շուտ էլի հետ կգանք։ Մի փոքր պարան է հարկավոր, կարո՞ղ եք տալ։

-Այս բոպեխ,-ասաց Նազլուն ու բերեց պարանը։

-Ի՞նչ պիտի անես պարանը,-հարցրի ես։

-Հիմա կտեսնես, թե ինչ պիտի անենք։

-Շուտ կգաք, չուշանաք,-ասաց Նազլուն։

Հասանք դայֆախսանան, ներս մտանք, Մանուկը ուղիղ գնաց այնտեղ, որտեղ նստած էր Ռ-աշիդ պոլիցիեն։ Նրանք նորից տաք-տաք ինչ-որ բանի մասին էին խոսում։ Մանուկը ռնովերը հանեց.«Ձեռքերդ վե՛ր, Ռ-աշի՛դ բեկ»։

-Ես, ես Ռ-աշիդը չեմ, ձեր կարծիքը սխալ է։

-Հովհաննես՛ս, կապի՛ր դրա ձեռքերը։

Ես մոտեցա, հանգիստ կապեցի դրա ձեռքերը։ Այդտեղ

գտնվող մարդիկ հետաքրքրությամբ մեզ էին նայում: Միանգամից դալֆախանեն դատարկվեց մարդկանցից: «*Դե մե՛զ հեղուհիր*», - հրամայեց Մանուկը: Ես առջևից էի գնում, մեջտեղից՝ բռնավորը, հետևից էլ՝ Մանուկը: Հասանք կազարմա, ներքևի հարկում հարմար մի փոքր սենյակ կար. «*Այս էլ քո սենյակը, Ռաշի՛ դ էֆենդի*»:

-Ես, ես...նորից եմ ասում, ձեր ասած մարդը չեմ, դուք սխալ եք, ջանը՛ մ...

-Ես սխալ չեմ, դու մեր թաղի պոլիցիա Ռաշիդ էֆենդին ես, հասկացա՞ ր:

-Իսկ ո՞վ ես դու, ես քեզ չեմ ճանաչում:

-Մահմադ աղա Ալավդարին ճանաչո՞ւմ ես:

-Այո՛, ճանաչում եմ:

-Իսկ նրա մոտի ռդադին ճանաչո՞ւմ ես:

-Ախր նա մի փոքր տղա էր:

-Այդ տղան ես եմ, հիմա հասկացա՞ ր:

-Է՛յ ալլահ, մի՞ թե դու ես:

-Հիմա դու ճշմարտությունը պիտի ասես, ինչ որ քեզ հարց կտանք, հասկացա՞ ր: Ինչպե՞ս քաղաքի հայերին տարաք սավզյաթ, ինչպե՞ս սպանեցիք մարդկանց, և ովքեր են քո հետի ջանդարմեքը: Եթե ճշմարտությունը ասես, ես երդվում եմ Աստծո անունով, քո կյանքին վտանգ չի սպառնա միայն մի պայմանով, եթե ասես քո հետի ջանդարմաների անունները:

-Ա՛յ աղա, ճիշտ եմ ասում, դու սխալվում ես, ես քո ասած մարդը չեմ, հավատա՛ :

-Ես աղա չեմ, մի հայ տղա եմ, որը ձեր սրից է ազատվել:

-Այդ Մահմադ աղան քեզ պես դարիդայնի խզմատքար<sup>163</sup> չուներ:

-Իսկ մոտը տասը-տասնչորս տարեկան տղա ունե՞ ր:

-Այո՛, ուներ:

-Այդ տղան ես եմ, հիմա հասկացա՞ր: Ուզու՞մ ես ձեր տան մարդկանց անուններն էլ ասեմ, թե քանի հոգի էիք: Հիմա հավատացի՞ր, որ դու ես իմ փնտրածը, Ռաշի՛դ էֆենդի: Առաջինը քո հետի ընկերների տեղն ասա՛, թե քանի հոգի էիք սավոյաթ տանող ջանդարմեքը:

-Ես որ ճշմարտությունը խոսեմ, ինձ չե՞ք սպանի:

-Ապահով կարող ես լինել, չե՞ որ ես երդվեցի, որ քեզ ոչ մի վտանգ չի սպառնա, եթե ճշմարտությունը խոսես: Գե սկսի՛ր խոսելը, Ռաշի՛դ էֆենդի: *«Ուրեմն այսպես, մեզ՝ ջանդարմաներիս՝ որպես սպահով պաշտպանների, կարգադրված էր Էրզրումից առաջին քարավանը հիսուն-վաթսուն սայլերով Երզնկա հասցնել, բայց իրականում հրամայված էր արգելք չհանդիսանալ մահմեդականներին, պեքք է բողոնեինք, որ ճանապահին ով ինչ ուզում էր, աներ: Այդպես հասանք Մամախաթուն՝ Եփրատի մոտի կամուրջը<sup>164</sup>: Մեր միդյուրը կանչեց բոլոր ջանդարմաներիս, հրամայեց, որ վաղը այսպեղ վերջացնենք փասներեք փարեկանից սկսած միևչե վերջին ծեր փղամարդուն, քանի որ Մանսադարասին շար հարմար րեղ է. «Քարավանի մարդկանց կհավաքեք, կսպանեք չորի մեջ ու կքափեք Եփրատը: Հեյրո մնացածին կհասցնեք Երզնկա: Ես կարծում եմ, որ դայրման<sup>165</sup> կլինեք, չեք խնայի չեք ուժերը»: Ես ասացի. «Ներողությո՛ւն, մի հարց եմ ուզում փայ, միևչե Մամախաթուն հասնելը դուք՝ ջանդարմաներդ, ինչ ուզեցեղ, արեղ եք ժողովրդի հեյր, ճի՞շտ է, չեղ ուզած կանանց, աղջիկների հեյր վարվել եք չեղ ցանկությունը: Ինչքան փող որ ունեցեղ եմ, հավաքեղ եք չեղ ուժի, ծեծի միջոցով, ճի՞շտ է: Ահա այսպիսի բաներ եք արեղ»: «Այո՛, ճիշտ է, դարչապ ինչ, -իսկ դու որպեղի՞ց գիպես, որ այդպիսի բաներ ենք արեղ»:*

-Ես շատ լավ գիտեմ, թե ինչ եղավ Էրզրումի ժողովրդի հետ,

քանի որ ինքս եմ ականատես եղել: Հիմա լսի՛ր ինձ, դուք ինչքան որ կոտորեցիք Մամախաթունի մոտ, մնացածին հավաքեցիք բերեցիք Երզնկա: Նորքյաղի մոտ թուրքերը հարձակվեցին ու նորից կոտորեցին, իսկ մնացածին բերեցին քաղաքի տակը՝ Ջամբալաք: Երեկոյան սկսեցին ջարդելը, ճի՞շտ է:

-Տղա՛ ջան, դե ասա՛ տեսնեմ՝ որտեղից գիտես այդ բոլորը, որ ես էլ հավատամ:

-Ես ինքս երզնկացի եմ, դարադիգեցի: Մեր գյուղը Երզնկայից հինգ կմ դեպի արևելք է. երբ որ ժողովրդին երեկոյան սկսեցիք ջարդելը, մենք, կտուրին պառկած, լավ լսում էինք անմեղ ժողովրդի վայնասունը, լացն ու գոռոցը: Առավոտյան էլ ես ու իմ ընկեր Գուրսունը եկանք ու ականատես եղանք ձեր չարագործությանը՝ մորթոտված ոչխարի պես ընկած դիակներին: Մի օր առաջ ես խոսել էի մի կնոջ հետ, որը այս քարավանից էր: Գուրք՝ ջանդարմեքդ, արաբաների մեջ ինչ ուզել, արել եք, ճի՞շտ է, և տղամարդկանց էլ Մամախաթունի կամրջի մոտ կոտորել... և՛ խուժանը, և՛ թուրքերն ու քրդերը, և՛ դուք...

-Ճիշտ է, ճիշտ է, տղա՛ ջան,-ասաց Ռաշիդ էֆենդին՝ մատները տրորելով, ախուվախ անելով,-հրամայված էր, մենք էլ կատարում էինք, այդպիսին էր եղելությունը:

Մանուկը դարձավ նրան. «Դե հիմա շարունակի՛ր քո պատմությունը, ինչ արեցիք, ինչքա՞ն ոսկի հավաքեցիք քարավանից: Օրինակ դու, ինչքա՞ն հավաքեցիք»:

-Ինչ որ հավաքում էինք, տալիս էինք միդյուրին, որպեսզի վերջում հավաքված գումարը բաժանի մեր՝ ջանդարմաներիս վրա:

-Հետո բաժանեցի՞ք, ինչքա՞ն հասավ քեզ:

-Ինձ հասավ 500 ոսկի, 100 փանկնոտ<sup>166</sup>, կանացի 30 մատանի, 20 հատ էլ վզի ցեպ, ահա բոլորը:

-Լավ, շարունակի՛ր պատմությունդ, ինչպե՞ս կոտորեցիք:

-Մենք դեռ որևէ գործողության պատրաստ չէինք, երբ տեսանք, որ Դերսիմի քրդերի մի ահագին բազմություն գալիս էր ճանապարհով, իսկ Մամախաթունից էլ մեր կողմի թուրքերը հարձակվեցին, սկսեցին թալանելը, սպանելը: Մենք բոլորովին չմասնակցեցինք, նայում էինք, թե ով ինչպիսի «*բաջուբյուն*» է անում: Բավականին երկար տևեց կոտորածն ու թալանը, ինչ գլուխներդ ցավացնեմ, կեսօրին մոտիկ վերջացավ խուժանի գործողությունը: Ապրանքով լիքը ոչ մի արաբա չէր մնացել: Մնացել էին անպետք կանայք ու երեխաները: Մենք դրանց հասցրինք Երզնկայի տակ՝ Ջամբալա քյորպուսի մոտ: Նորից խուժանը վրա տվեց, մնացածին էլ այստեղ սպանեցին: Ահա իմ՝ Էրզրումից սավգյաթ տարած ողջ հայ ժողովրդի ճակատագիրը:

-Եվ դու պնդում ես, թե դուք՝ ջանդարմաներդ, ոչ մի մարդ չե՞ք սպանել, չե՞ որ իմ ընկերը վկա է. նախքան Ջամբալա քյորպուսի մոտ կոտորելը նա խոսել է սովգյաթ մի կնոջ հետ, որը ասել է, որ տղամարդկանց դուք՝ ջանդարմներդ եք կոտորել: Լավ, հիմա դու այս ջանդարմաների և միդյուրի հասցեները տո՛ւ՛ր, կպարզենք:

-Ինչ որ ես գիտեմ, թե ով որտեղ է, կասեմ, մնացածի տեղը չգիտեմ:

-Լավ, գրի՛ր քո գիտեցած մարդկանց տեղը:

Մի յոթ մարդու հասցե տվեց. «*Ահա ինչ հետք եղած ջանդարմաների հասցեները*»: «*Մի հարց, Ռաշի՛ղ էֆենդի, ինչու՞ դուք չփախաք, երբ ռուսը Էրզրումը գրավեց, չվախեցա՞ք*»:

-Վախենալիք, չվախենալիք, ի՞նչ կարող էինք անել, երբ ռուսները Էրզրումը հանկարծակի վերցրին: Չմեռն էլ շատ սաստիկ էր, մեկ է, եթե փախչեինք էլ, ճանապարհին պիտի մեռնեինք: Որոշեցինք, որ ավելի լավ է՝ մնանք, քանի որ տեղի հայ էլ չկար, որ ինձ ճանաչեր, եկողներից էլ ո՞վ գիտեր, որ ես պոլիցիա եմ:

-Տեսնու՞մ ես, Ռաշի՛ղ էֆենդի, «*Նախախ դան երդա դալմազ*»

ժողովրդի ասած առակը ճիշտ է դուրս գալիս: Հիմա մի ուրիշ հարց, հայերից քո կողոպտած դրամն ու իրերը պետք է մեզ վերադարձնես, այդ դրամը մենք կհանձնենք հայ որբերին խնամող շտաբին: Կարծում եմ՝ դու դեմ չես:

-Ես ուրախությամբ կտամ:

-Դե հիմա գրի՛ր քո խանութին, թող վերադարձնի հայերին պատկանող ոսկին:

- Չեզ մոտ թուղթ ու մատիտ կա՞:

-Այս բուպեիս, ասաց Մանուկը,-ու գնաց բերեց թուղթն ու մատիտը:

-Ահա, խնդրեմ, իմ գրությունը, կարող եք գնալ ստանալ:

-Իսկ հիմա դու կմնաս, մինչև քո ընկերներին հավաքենք: Դուռը փակեցինք ու գնացինք, հասանք Ռաշիդենց տուն.«*Ահա սա է*», -ասաց Մանուկը և դուռը ծեծեց: Դուրս եկավ մի կին: «*Ներողություն, դուք Ռաշիդ էֆենդու խանութն եք*»: «*Ավա՛ղ (ա՛յո): «Խնդրեմ, ահա չեզ մի գրություն, չեք ամուսնու կողմից է*»: Կարդաց, գայրացավ, հետն էլ.«*Այս ի՛նչ հանելուկ է, ես չեմ հավատում*»: «*Չե՞ք հավատում, խնդրում եմ, եկեք միասին գնանք չեք ամուսնու մոտ, կհոստենք, կհավատարաք, մենք գոռով չենք սրիպի չեզ*»: «*Չանր՛ւմ, անհարմար է, որ ես չեք հեյր գամ: Լավ, լավ, ես հիմա,-գնաց, քավակահանին ուշացումով դուրս եկավ, մի փոսրակ մեզ հանչնեց,-ահա այն ամենը, ինչ գրության մեջ գրված է: Տղե՛ք ջան, իսկ հիմա որբե՛ն ղ է ամուսինս*»: «*Մեզ մոտ է, ուզու՛մ ես, գնանք, րե՛ս*»: «*Չէ՛, ես ուզում եմ ասել, որ հիմա էլ չե՞ք նեղացնի, կգա՞ փոսրակ, հույսով լինեմ, չէ՞*»: «*Անպարճառ, ոչ մի վրանիզ չկա, երեկոյան կգա: Հիմա, Հովհաննես՛ս, այս իրերը փանենք իմ աղայի փունը, մինչև որ այս հանելուկը վերջացնենք*»: Հասանք տուն, Նազրուն անհամբեր մեզ էր սպասում, խանութն էլ սեղանը պատրաստել ու մեր ճամփին էր նայում.«*Չանր՛ւմ, ի՛նչու*

շար ուշացաք»,-խանութումը մի կողմից, աղան մյուս կողմից խնդրելով, դուրքան լինելով, նստեցինք: Լավ քաղցած էինք, ախորժակով կերանք, հետն էլ անուշ-անուշ խոսեցինք: Հետո Նազլուն սեղանը հավաքեց, Մանուկը թե.«*Խա՛նու՛մ մայրիկ, ահա քեզ մի քանկագին պահուստ, երբ որ ուզենք, նորից մեզ կհանչենու, սրանք ուրիշի իրեր են*»: Խանութումը թե.«*Բա՛ց տեսնենք՝ այդ ինչ բան է*»: «*Ճիշտ որ, լավ ասացիր, մայրի՛կ, մենք սրացանք, բայց չմտածեցինք էլ բացել տոպրակը*»: Մանուկը բացեց տոպրակը: Կարմիր թուրքական ոսկյհները պսպղացին, խանութումը լրիվ մեզ էր հանձնել այն, ինչ որ Ռաշիդը մեզ ասել էր, թե հայերից է կողոպտել: Մանուկը դարձավ իր խանութին.«*Խա՛նու՛մ մայրիկ, այս ցեպը իմ կողմից քեզ նվեր՝ որպես լավ մայրիկի: Ես իմ շեռքով քո վզին եմ գցում, բարով վայելես, մայրի՛կ ջան,-մի հար էլ ցեպ վերցրեց,-աս էլ, Նազլու՛ ջան, քեզ նվեր իմ ընկերոջ կողմից,-, մի հար էլ կանացի մարանի իր կողմից նվիրեց ու ասաց,-մնացածը կպահես, մայրի՛կ ջան, եր կտաս, երբ որ պահանջենք*»: Երեքն էլ՝ աղան, խանութն ու Նազլուն, զարմացել, մնացել էին այդ օրվա ուտելիքի, ոսկեղենի համար: Միայն աղան ասաց.«*Այս ի՞նչ բան է, երա՞զ է, թե՞ իրականություն, աչքերիս չեմ հավատում*»:

-Աղա՛ ջան, ասաց Մանուկը,-հետո կպատմեմ իրականությունը, գնանք, Հովհաննե՛ս, ես դեռ անելիք շատ ունեմ, առայժմ մնացե՛ք բարով:

Նազլուն թե.«*Այսօր կգա՞ս, Մանու՛կ*»: «*Մի կարևոր գործ կա, եթե այսօր վերջացրինք, կգամ, չնեղանաս, Նազլու՛ ջան*»: Գուրս եկանք: «*Գիրե՛ս, Հովհաննե՛ս, ես աղային եղելությունը չասացի, վախենում էի՝ լուր հասցներ: Գնանք Նիկոլ եղբոր հետ խորհրդրդակցենք, թե ինչպես շերքակալենք այդ յոթ-ութ հոգուն*»: Հասանք մեր կազարմեն, եղբայր Նիկոլն այնտեղ չէր, սպասեցինք, բավականին ուշ եկավ: Մանուկը մեկ առ մեկ եղելությունը պատ-

մեց: «*Լավ,-ասաց Նիկոլը,-մնա առավոտյան, էլ հիմա ուշ է*»: Առավոտյան հինգ զինվորով գնացինք մարդագայլերին ձերբակալելու: Անցնում էինք մի դայֆախանայի մոտով, Նիկոլ եղբայրը ասաց.«*Եկեք մեկ-մեկ հասր դայֆա խմենք*»: Մտանք ներս, նստեցինք մի դատարկ սեղանի շուրջ: Ղայֆաջին հայ էր, Նիկոլը ասաց.«*Հինգ հասր դայֆա՛ք քեր*»: Նստած խոսում ենք: Մեր կողքի սեղանին էլ երեք հոգի նստած խոսում էին Երզնկայի նահանջի մասին, թե ինչ դժվարությամբ հասել են Էրզրում, թե ինչպես էին քրդերը Եփրատի կամուրջը այրել, սակայն ինչ դժվարությամբ իրենք կարողացել են անցնել գետը:

### Անապասելի հանդիպում

Ես դարձա.«*Ներողություն, եղբայրներ՛ր, դուք Երզնկացի ե՞ք*»: «*Հա՛, արհա՛ջան*»: «*Ո՞ր գյուղացի եք*»: «*Ես փառռեղջի եմ, սա էլ իմ մորաքրոջ արհան է՝ դարադիզեցի, իսկ մյուսն էլ գյուլիջանցի է*»: «*Ներողություն՛ն, դու դարադիզեցի ու՞մ արհան ես*»: «*Ես Պողոսի արհան եմ*»: «*Վա՛յ, եղբա՛յր Հմայակ, դու՞ ես, ես Հովհաննեսն եմ՝ քո եղբայրը*»: «*Տեսա՞ր, րեսա՞ր, ես որ ասում էի՝ փնդրելով չենք կարող գրնել, գուցե պարսահի*»: «*Իսկ ես էլ մորաքրոջդ արհան եմ՝ Գարեգինը*»: Ես փաթաթվեցի եղբորս, համբուրում եմ, հետն էլ լաց եմ լինում.«*Այսպիսի՛ հանկարծակի հանդիպում էլ լինի*»: «*Տնաշենի՛ արհա,-ասաց Գարեգինը,-մեռանք քեզ փնդրելով*»: «*Լա՛վ, արդե՛րք,-ասաց եղբայրս,-գնանք մեր րուն, այսօր լավ քեֆ անենք*»: «*Ես չգիտեմ, մեր տասնապետը գիտե, Նիկոլ եղբորն ասացե՛ք*»,-ու ցույց տվեցի Նիկոլին: Մանուկը չգիտեմ ինչ փսփսաց Նիկոլ եղբոր ականջին: «*Շատ շնորհակալ ենք ձեր հրավերի համար, մի կարեոր գործ կա, պետք է այսօր անպարճառ կարարենք: Հովհաննեսին րարե՛ք ձեր հեյր, մենք մեր գոր-*

*ծը կվերջացնենք, նոր միասին մի լավ քեֆ կանենք: Դե հիմա մնա՛ք բարով, մենք գնում ենք մեր գործին»*,-ասաց Նիկոլը, ու նրանք գնացին: Գնացինք հասանք մորաքրոջս տղայի՝ Գարեգինի տունը, կինը՝ Մարիամը, մեզ ուրախությամբ դիմավորեց: Եղբայրս՝ Հարությունն էլ հետն էր: Ես Հարությունին հարցրի.«*Հագարվարդին չգրա՞ք*»: «*Ո՛չ*», -պատասխանեց նա: Եղբայրս՝ Հմայակը, սկսեց ինձ հարցուփորձ անել.«*Որտե՞ղ էիր, ախարան ժամանակ մեռանք քեզնից հարցուփորձ անելով*»: Ես մեկ առ մեկ սկսեցի պատմել այն, ինչ որ դուք արդեն գիտեք, վերջում հարցրի.«*Ինչու՞ ախարան ուշացումով եկար Ռումինիայից, եղբայր*»:

-Հովհաննես՝ս ջան, ես էլ ճանապարհին փորձանքի պատահեցի, դրա համար էլ ուշացա: Հորեղբայր Պետրոս ամին ինձ երկու հազար ռուբլի տվեց, թե շուտ գնա՛, հասի՛ր, երեխաներին բե՛ր: Հասա Օդեսա<sup>167</sup>, հանդիպեցի մեր երկրացիներին, ես էլ մի օր փորձեցի նրանց հետ խումար խաղալ<sup>168</sup>, հազար ռուբլի կրվա և այդպես մի քանի օր շարունակեցի, որպեսզի տանուլ տված գումարս հետ դարձնեմ: Բայց միանգամից մնացածն էլ տարվեցի, մնացի առանց կոպեկի: Վերջը որոշեցի քաղցից չմեռնելու համար մի արկղ գնել ու կոշիկ մաքրել, սակայն ի՞նչով գնեի, քանի որ փող չունեի, ստիպված կոստյումս մի կոշիկ մաքրողի վաճառեցի: Այսպես սկսեցի կոշիկ մաքրելը, վաստակաժու փողով նորից գնում խումար էի խաղում այն հույսով, որ կրվածս գումարը հետ վերադարձնեմ: Եվ այսպես չորս-հինգ ամիս շարունակեցի, բայց ոչ մի արդյունքի չհասա, վաստակաժու փողերն էլ էի կրվում, վերջը մի օր էլ Ռումինիայից երկու մարդու պատահեցի, որոնք պետք է Երզնկա գային՝ իրենց ընտանիքներին փնտրելու: Ես արկղս վաճառեցի ու դրանց հետ հասա Երզնկա: Գտա Հարությունին, նա պատմեց եղելությունը, թե ինչպես Էրզրումից տարել էին Հա-

զարվարդին: Դու գնացել էիր Հագարվարդին փնտրելու:

-Եղբա՛յր, դու հին արհեստիցդ դեռ չես հրաժարվել, մեզ մոտ էլ էիր խաղում, ես հիշում եմ հայրիկս դրա համար քեզ ծեծում էր:

Մի քանի օր այսպես ուրախ անցկացրի: Մի առավոտ էլ արագ շորերս հագա, գնացի մեր կազարմեն, որպեսզի տեսնեմ՝ ինչ արդյունքի հասան տղեքը, ձերբակալեցի՞ն բոլորին, թե՞ ոչ: Առավոտ էր, տղեքը դեռ չէին վեր կացել, Մանուկն էլ չկար: Տղեքին հարցրի.«*Որտե՞ն է Մանուկը*»: Նրանք պատասխանեցին.«*Հիմա երբեմն Մանուկը գիշերը չի գալիս*»: Նիկոլ եղբայրը քնից նոր էր արթնացել.«*Բարի՛ լույս, եղբա՛յր, քանիսի՞ն բռնեցիք*»: «*Ոչ մեկին, Հովհաննեսն*»: «*Ինչպե՞ս թե*»: «*Մենք էլ չգիտենք, թե ինչպես: Քեզանից որ բաժանվեցինք, գնացինք առաջին հասցեով: Դուռը ծեծեցինք, բայց ոչ ոք չպատասխանեց*»: Մանուկը թե.«*Երկա՞ն պիտի սպասենք*»: Թռավ, բակի դուռը բացեց, մտնեք սենյակները. *ամեն ինչ իր տեղում էր, բայց տանը ոչ ոք չկար, ամբողջ տունը տակնուվրա արեցինք, մարդ չգտանք: Նստել մտածում էինք, թե ինչ պիտի անենք: Ամեն ինչ քարոտքանդ արեցինք, տան բոլոր իրերը հայի ապրանքներ էին, նորից սկսեցինք սենյակները ստուգելը, բայց ոչ մի հետք չգտանք: Մանուկը մեզ ասաց.«*Եկե՛ք, մի հետք եմ գրել*»: Հավաքվեցինք այնտեղ, որտեղ որ պատր մի մարդու անցնելու չափ քանդված էր ու տանում էր դեպի մի ուրիշ սենյակ: Մտնեք նոր հայրնաբերած սենյակը. դու մի ասի, այդ անցքը իրար էր միացնում այս և հարևանի սենյակները: Այս սենյակն էլ ստուգեցինք. *ամեն ինչ տեղում էր, բայց մարդ չկար: Վերջը որոշեցինք գնալ տուն: Այսպես փոր ու փոշման դարչանք ետ, Մանուկը բռնավորին ուրելիք տարավ և իմ ասածով հարցրեց, թե այդ մարդկանց հասցեները, որ տվել էր, հիմա այստե՞ն են: Մանուկը հետ եկավ և գիտես՝ ինչ հաղորդեց, որ դայֆախանայում իր հետ սեղանի շուրջ նստած են եղել ու տես-**

նելով, որ իրեն շերքակալում են, գլխի են ընկել, որ իրենց էլ շուրով կշերքակալեն ու իրենց գլխի չարեն րեսել են: Մենք որոշեցինք գիշերը գնալ: Գնացինք, սակայն նորից ոչ մի մարդ չկար, րները դարարկ էին: Միս եղելությունը, մեր անփորձ լինելու պարճառով փախցրինք մարդագայլերին, Հովհաննես՛ս: Հիմա Մանուկը որտեղ որ է կգա: Տեսնես՛ շես ճանաչի, թուրքի շորեր է հագել, գիշեր-ցերեկ քուն չունի, հա հեղևում է, որպեսզի մի հեղք գրնի, բայց չի հաջողվում, րեսնենք՝ այսօր ինչ լուր կբերի»:

Մանուկը տխուր-տրտում եկավ, բարևեց: «Ի՞նչ է, Մանու՛կ, նորից ոչ մի բան չնկարեցի՞ր»: «Ոչ մի բան»: «Հեղաքրքիր է, րները թողել փախել է՞ն», - հարցրի ես: «Ի՞նչ կա այդտեղ շիսվարալու, շար հավանական է: Մի քանի անգամ էլ ես եմ Մանուկի հեղ խուզարկությանը մասնակցել, բայց շիսն ու շիսն»:

Մի օր Մանուկը դիմեց Նիկոլ եղբորը.

-Դու ինձ մի խրա՛տ տուր, ես ի՞նչ անեմ այդ աղջկա հետ<sup>169</sup>: Ինձ ստիպում է թե. «Ինչ րա՛ր, քանի շուր է, սիրրս լավ բան չի խոսրանում»: Ի՞նչ անեմ, ես մոլորվել եմ: Այստեղ երեք տնվոր բասենցի կա, մոտ օրերս պիտի քոչեն դեպի Ղարս<sup>170</sup>, ուզում եմ հանձնել դրանց, պահեն, մինչև որ խաղաղություն լինի, փողն իրենց ուզածի շափ հերիք է: Ի՞նչ ես ասում, եղբայր:

-Շատ լավ ես մտածել, այդպես էլ արա՛:

Ու այդպես էլ Մանուկը Նազլուին հանձնեց իր հայրենակիցներին. ճիշտ որ Նազլուի սիրտը լավ բան չեր գուշակել. Մանուկին սպանեցին 1918թ. Շորագյալի Բաշ գյուղում, իսկ Նազլուին 1919թ. հանդիպեցի Սիսիանի Ղալաջա<sup>171</sup> գյուղում: Այս գրքում կկարդաք այդ մասին:

Ուտելու ամեն բան կար: Մի թուրք ամեն օր երկու դույլ կաթ էր բերում, իսկ դրա դիմաց մեր տասնապետը տալիս էր ալյուր, կրուպա, պեչենի, ու այսպես ապրում էինք:

## Էրզրումի անկումը

Մի օր՝ առավոտյան, զինվորները հավաքվել էին բերդի վրա և նայում էին դեպի արևմուտք. «Այս ի՞նչ քան է, տղե՛ք, թուրքը գալիս է»: Մենք էլ վազեցինք, ելանք բերդի վրա, տեսանք, որ, իրոք, մի սև կետ շարժվում է: Հիմա ես ինչ որ պիտի ասեմ Էրզրումի նահանջի մասին, գիտեմ, որ դուք չեք հավատալու, քանի որ ինչպես կարելի է առանց կռվի քաղաքը հանձնել թշնամուն: Հավատացե՛ք, իմ պատմածի մեջ ոչ մի սուտ չկա, կան մարդիկ, որոնք կհաստատեն, որ, իրոք, այդպես էլ եղել է: Կանգնել ենք բերդի վրա, նայում ենք, թե ինչ է տեղի ունենալու: Մանուկը վազեց կազարմա, տեսնեմ՝ իմ ու իր զենքը բերել է. «Վերցրո՛ւ, տես քո զենքը»: Մի քար բերեց, խշտիկը հանեց, սկսեց սրելը: «Ի՞նչ ես անում, Մանուկ»: «Չգիտե՞ս՝ ինչ եմ անում: Պատրաստվի՛ր, հիմա կռիվը կսկսվի, դու էլ խշտիկդ սրի՛ր, հարկավոր է մեր հարազատների վրեժը հանել: Երբ մեր զորքը սկսի հարձակվելը, մենք էլ պիտի մասնակցենք»:

-Մանուկ, լսի՛ր ինձ, ու՛ր է մեր կողմից չկա ոչ մի պատրաստություն թշնամուն դիմադրելու համար:

-Ի՞նչ ես ասում, Հովհաննես՛ս, երեխա խո չես, որ այդպես ես խոսում, փախչելու տեղ էլ չկա, երևի ուզում եմ, որ լավ մոտենան, որպեսզի կրակի տակից մարդ չազատվի:

Ես նորից հարցրի. «Մանուկ...»: «Ի՞նչ է»: «Ախր մեզնից առաջ զորք չկա, մենք ենք՝ պահեստի տղերքը և Երզնկայի դռան պահակները: Ու՛ր է, ուրիշ զորք չկա, ո՞վ պիտի կռվի, քանի որ ոչ մի պատրաստություն չկա մեր կողմից: Հիմա այստեղ պետք է լիքը զինվորներ լինեին, որպեսզի գնդացիներով, թնդանոթներով դիրքավորվեինք, պատրաստվեինք կռվին: Տե՛ս, թշնամին հա՛մ մոտենում է»: «Դու շարձիչը ես ասում, Հովհաննես՛ս, չէ՞ որ եթե կռիվը սկսվի, հենց այստեղից պիտի սկսվի»: Մանուկը սառեց, մնաց զենքը ձեռքին, զարմացած նայում է թշնամու շարժվելուն:

Նիկոլ եղբայրը գոռաց. «Հովհաննես՛ս, Մաևու՛նի, շուր եկե՛ք այս-  
տեղ»: «Ես չեմ գա, Մաևու՛նի, գնա՛, տե՛ս, թե ինչ է սառում»: Տեսա՛՝  
մեր տղերքը բոլորը գնացին դեպի քաղաք: Քսան բուպե չէր անցել,  
հետ եկան, յուրաքանչյուրի ձեռքին՝ մեկ-մեկ փթանոց երկու ժեշ-  
տից աման: Հիսնապետը խմբերի բաժանեց, ես նայում եմ, թե ինչ  
են անում մեր տղերքը: Սիմոնը վազեց. «Շուր արի՛, նահանջում  
ենք, ես չեմ պայուսակները պատրասարել եմ՝ սուխարի, պահա-  
ծո եմ դրել, հիմա պահեստները պիտի վառենք»:

Մենք նայում ենք, թե ինչպես թուրքը դանդաղ առաջ է շարժ-  
վում, բերդի վրա լիքը զինվորներ նայում էին: Երբ ուրիշ գյուղից  
հարս էին բերում, դուրս էին գալիս նայելու, հիմա էլ մենք էինք  
թշնամուն նայում: Իսկ թշնամին գալիս էր ուղիղ ճանապարհով.  
ոչ մի վախ, երկու շարքով հանգիստ գալիս էր: Հիսնապետը գո-  
ռաց. «Եկե՛ք, ճանապարհի համար ուրելիք վերցրե՛ք»: Ես նորից  
տեղիցս չեմ շարժվում, հիմա ուր որ է կսկսվի կռիվը, բայց մեր  
կողմից չկա և ոչ մի պատրաստություն, չորս կիլոմետր էլ չի մնա-  
ցել, թշնամին կմտնի քաղաք: Բերդի վրա դեռ լիքը զինվորներ են,  
նայում են, կասկածում, քանի որ նահանջի ոչ մի նշան չկա<sup>172</sup>:  
Դաշտի մեջ կանգնեցին. մեր հիսնապետը հրամայեց. «Բոլոր  
պահեստները հրդեհե՛լ»: Ամանների բեռնզինը լցրեցին պահեստ-  
ների վրա, սկսեցին վառելը: Քաղաքը տարբեր կողմերից վառվում  
էր, կարծես թե ողջ քաղաքն էր վառվում: Իսկ ես ու Մանուկը դեռ  
նստած կռվին ենք սպասում, թե ինչպես պիտի այն սկսվի: Սիմո-  
նը վազեց եկավ. «Ի՞նչ եք նստել, վե՛ր կացեք, նահանջ է»: «Ինչ-  
պե՞ս թե նահանջ է, կռիվ չպիտի՞ լինի»: «Կլինի թե ոչ՝ չգիտեմ,  
իսկ հիմա նահանջ է, մերոնք շարժվում են»: Գնացինք հասանք  
մերոնց, պայուսակներս վերցրինք, շարժվում ենք: Քաղաքի բոլոր  
կողմերից գորքը շարժվում է դեպի արևելք՝ Ղարսի դռան կողմը:  
Վերջապես հասանք Ղարսի դուռը, այստեղ լիքը զինվոր էր, քա-  
ղաքի բոլոր կողմերից դեպի այս կողմ էին շարժվում: Մեր պահես-  
տի զինվորները մոտ հարյուր հոգի կլինեին: Դռնից դուրս գալն

անհնար էր, իրար էին ջարդում: «*Եկե՛ք այս կողմ*», -ասաց Նիկոլ եղբայրը. բերդի տակը կանգնեցինք: Մանուկը թե. «*Հովհաննէ՛ս, եկ բարձրանանք վերև, տեսնենք՝ թուրքը մտա՞յլ քաղաք*»: «*Ա՛յ տղա, ի՞նչ գործ ունես, դարդը քե՞զ ես տվել*»: «*Ահա ճանապարհ կա վերև բարձրանալու, գնանք բարձրանանք, ևորից հետ կգանք, մի բուպե չի քաշի*»: Երկուսով ելանք բերդի վրա, նայում ենք դեպի արևմուտք. չնայած որ պայծառ արև էր, ոչինչ չէր երևում, ողջ քաղաքը ծխի մեջ էր: «*Նայի՛ր, Հովհաննէ՛ս, - ասաց Մանուկը, -ինչպես ես ոչխարի նման իրար ջարդում, որպեսզի դռնից դուրս գաս*»: «*Ծիշո՛ր որ, Մանու՛կ, իսկական ևույն պարկե-րը, երբ ոչխարին դռնից բաց ես թողնում՝ խոտ ուտելու, իրար են ջարդում*»: «*Այսպես էլ բան լինի, այսքան զինվոր կա, ու առանց կռվի բերդաքաղաքը թողնում ես, այսպիսի դավաճանություն էլ լինի*»: «*Ե՛կ իջնենք ներքև, Հովհաննէ՛ս, մերոնք պատրաստվում են դռնից դուրս գալ*»: Իջանք ներքև, չորս-հինգ ձիերի վրա բարձած՝ եկան ծանր գնդացիները, հետևից էլ՝ հետևակը՝ բոլորն էլ երիտասարդ, բայց ինչու՞ ենք նահանջում՝ մենք էլ չգիտենք: «*Վա՛՛յ, աղայիս մնաս բարով չասացի*», -ասաց Մանուկը: Ես էլ թե. «*Եղբայրներս, վա՛՛յ, եղբայրներս մնացին*»: «*Չեն մնա, մի տեղ կհանդիպեք... Վա՛՛յ, Ռաշիդը, Ռաշիդին մոռացանք, մնաց բանտում, չպատժեցինք*», -ափսոսանքով ասաց Մանուկը: Ես զարմացա. «*Ի՞նչ ես ասում, Մանու՛կ, մի՞ թե մոռացար Ռաշիդին*»: «*Այո՛, մոռացա, մի կես ժամ չտեսեց այս բոլորը, անսպասելի կերպով նահանջի հրաման տվեցին*»:

Հարգելի՛ ընթերցողներ, որպեսզի դուք հավատաք, որ այս բոլորը իսկություն է, ես մի վկա ունեմ, նա կհաստատի: Հիմա ասքում է Երևանի Կոնդ թաղամասում, տունը «Ծիծեռնակ» ճոպանուղու մոտ է: Վկաս Գաբրիել աղայի տղան է՝ երզնկացի Մուկուչը:

Քաղաքից բավականին հեռացել էինք, մեկ էլ տեսնենք. «**Խա-**

**քարդա՛, խարքարդա՛**<sup>173</sup>»,-մի տասը ձիավոր, պլետները ձեռքներին, գոռում են աչ ու ձախ նահանջող զորքի վրա: Մենք քաշվեցինք, կանգնեցինք մի կողմի վրա, որպեսզի տեսնենք, թե ինչ բան է: Երեք սահնակ անցավ, մեջն էլ լիքը, շուրթերի մեջ փաթաթված, սպիտակ փափախներով մարդիկ էին նստած: Ամեն մի սահնակին երեք ձի էր լծված, որոնք հևալով հազիվ քաշում էին սահնակները:

Ես հարցրի.«*Ուլքե՞ր ն ես, Նիկո՛ ի եղբայր*»: «*Չգիտե՞ս ուլքեր ես, մեր ազգի դավաճանները,-ասաց Մանուկը,-սատրանան ասում է, խիհի այս շներին, րեն՛ս, թե առանց ամոթի ինչպես ես փախչում, քաղաքն էլ հանձնին թշնամուն*»:

Վերջապես հասանք Հասանդալա, հավաքվեցինք մի տեղ, կրակ վառեցինք, թեյ դրեցինք, հաց կերանք: «*Նիկո՛ ի եղբայր,-ասաց Մանուկը,-ես մի բան եմ ուզում իմանալ, դու մեծ ես, ավելիև գիտես, քան մենք, ինչի՞ համար առանց կոպի թողեցինք քաղաքը*»: «*Ես էլ քեզ պես, Մանու՛կ ջան: Բոլորիս համար էլ ցավալի է*»: Մանուկը թե.«*Եկեք գնանք մեր Բասեյնի բաղնիքում*<sup>174</sup> լողանանք, ես գիտեմ, որ այլևս չենք տեսնելու մեր հայրենիքը»:  
«*Ու՛մ դարդն է կորել,-ասաց Նիկոլ եղբայրը,-որ քեզ համար բաղնիք վառի, դու էլ լողանաս*»: «*Բւ՛մ ասածը հանքային տաք ջուր է, հեռու չէ, եկե՛ք գնանք*»: Գնացինք, այնքան էլ հեռու չէր, մի գեղեցիկ շենք էր: Մտանք, տեսանք զինվորները լողանում են, մենք էլ լողացանք: Գետնի տակից դուրս էր գալիս ո՛չ տաք, ո՛չ էլ սառը հանքային ջուրը:

Երեկոյան մեր կազարմեն մտան մի տասը-տասներկու մարդ, սկսեցին տրորվելը.«*Այս ինչ անասարվածություն է, որ սրանք արեցին, առանց նահազգույացնելու հանձնեցին քաղաքը, եթե այդպես պիտի լիներ, ինչու՞ վիրավոր, հիվանդ զինվորներին ժամանակին չուղարկեցին թիկունք*»: Նրանցից մեկն ասաց.«*Ա՛խ, ես կիսելագարվեմ, իմ աչքի առջև է, թե ինչպես բոլոր հիվանդներ-*

րը լաց էին լինում»։ Այդ տասներկու մարդն էլ լալիս էին՝ խփելով իրենց ծնկներին։ Մենք մոտեցանք, որպեսզի իմանանք իսկական եղելությունը, եղբայր Նիկոլն հասցրեց. «Ի՞նչ է պատահել»։ «Ի՞նչ ես ասում, ի՞նչ ես հարցնում, երեք շենք լիքը վիրավոր հիվանդ թողեցինք, որ թուրքը գա, սպանի»։ «Ա՛խ, դուք, ազգի՛ դավաճաններ,-ասաց սրանցից մեկը,-եթե ես գիրենայի, թե ով էր նահանջի հրաման փոխը, փուն ու փեղը կայրեի, գոնե սիրտս կհանգստանար»։ «Պարսներ, գոնե մի բան հասկանանք»։ «Այդպես, չե՞ս հասկանում»։ «Չէ՛, չեմ հասկանում»։

«Այս փաստերկու մարդս հիվանդանոցի աշխատողներն ենք, սովորականի նման այսօր էլ հիվանդանոցում աշխատում էինք, առավոտվա գործերս պրծանք, սկսեցինք ճաշվա պատրաստությունը։ Մեկ էլ փեսներ՝ գորք է գնում դեպի Ղարսի դուռը։ Դեռ դրանք չէին հեռացել, փեսներ՝ ուրիշ փեղից է գորք գնում էլի նույն կողմը, քաղաքը մի քանի փեղից սկսեց վառվելը, մենք ոչ մի փեղեկություն չունեինք նահանջի մասին։ Քսնի գնաց, գորքի շարժը շարացավ, մեր բժիշկները հայրենցին, որ նահանջ է։ Այս անսպասելի լուրը լսելով՝ վիրավոր զինվորները, հիվանդները խառնվեցին իրար, այնպես էին լալիս. «Մեզ ու՞ր եք թշնամունքողնում, լավ է՝ դու՛ք սպանեք»։ «Խառնվել ենք իրար, չգիրենք՝ ինչ անենք։ Մեր պալատի բժիշկը թե՛. «Շո՛ր բերեք, ով կարող է, թող հագնի, հեռանա քաղաքից, ուրիշ միջոց չկա, ով ծանր է, մնում է, մենք ի՞նչ կարող ենք անել»։ «Եվ այդպես էլ հիվանդներին թողեցինք հիվանդանոցում։ Լալով, ողբալով թողեցինք հիվանդներին ու հեռացանք։ Հիմա հասկացա՞ք մեր դավաճան դեկավարների արածը, օջի ծնունդները թուրքից հազար անգամ վար չէի՞ն»։

Ու այդպես այդ գիշեր մնացինք Հասանդալայում, առավոտյան ելանք, ճանապարհ ընկանք։ Վերջապես հասանք Ղանդարա։ Գնացինք մեր ծանոթ Թերենդի տունը. «Բարև՛, հազար բարի, Թերենդի՛»։ «Վա՛յ, բարև՛, հազար բարի,-մեզ էր նայում զարմա-

ցած,-այս որտեղի՞ց եք գալիս»: «Էրզրումից»: Այդ օրը մնացինք Ղանդարա, մյուս օրը հասանք Սարիղամիշի կայարանը. «Տղե՛ք,-ասաց Նիկոլը,-ոչ մի տեղ չգնաք, հիմա ես գնամ, իմանամ մեր գնդի տեղը»: Շատ չսպասեցինք, Նիկոլ եղբայրը հետ եկավ. «Տղե՛ք, մեր գունդն այստեղ չի, Սեյիմ<sup>175</sup> գյուղում է»: Քայլելով հասանք Սեյիմ գյուղը, այն մալականի գյուղ էր: Տները դասավորված էին շոշի երկու կողմերում, մոտ երեք կիլոմետր երկարությամբ: Չգիտեմ՝ ինչքան մնացինք, ես հիվանդացա, ոտքերս նորից ուժեղ ցավում էին: Մի օր՝ առավոտյան, մեր գունդը չգիտեմ, թե ուր էր պատրաստվում գնալ: Մեր օֆիցերի դեմչիկին՝ Վանոյին, հարցրի. «Ու՞ր ենք գնում»: «Հովհաննես՛ս, գունդը գնում է կովելու Սեյիմ գյուղից դեպի արևմուտք՝ Երիթիլիսա<sup>176</sup>, ես էլ պիտի գնամ, պարոն պորուչիկն ինչ որ ունի, քեզ մոտ եմ թողնում, լսվ նայիր, որ չգողանան, ով գիտի, կռիվ է, ամեն ինչ կպատրաստի: Դե՛ մնաք բարով, ես գնացի: Դու կմնաս գումակում»: Ելա նայեցի, ափսոս, որ հիվանդ էի, չէի կարող գնալ: Երեք ջորիների վրա ծանր գնդացիները բարձած՝ կանգնել են շարքով, ստուգում են, թե ինչ է պակաս: Դքսում կանգնած՝ նայում էի մեր տղեքին: Շարժվելու հրաման տվեցին: «Մնա՛ս բարով, Հովհաննես՛ս, մենք գնացինք»: «Գնա՛ք բարով, տղե՛ք ջան», Մանուկը, Նիկոլն ու Սիմոնը թափահարում էին թաշկինակները: Սեյիմ գյուղի գումակում ես մնացի քսան օր: Հինգ ֆուրգոն էր մեր գումակը: Մի երեկո էլ գնդից մարդ եկավ, թե շուտ պատրաստվե՛ք, գումակը պետք է Ղարս<sup>177</sup> մեկնի: Արագ կերպով հավաքվեցինք, ձիերը լծեցինք, գիշերով մոտեցանք Ղարսին, մենակ մեր գումակը չէր, ուրիշներն էլ կային, որոնք նույնպես Ղարս<sup>178</sup> էին գալիս: Բերդից մեր վրա լուսարձակ էին գցում, մեկ այս, մեկ մյուս կողմն էին դարձնում: Վերջապես մտանք Ղարս: Առավոտյան մեր գումակը կանգնեց Ղարսի արևելյան կողմում, որը «Մալի մեյդան» էին ասում: Ուժեղ անձրև էր տեղում, ոտքերիս ցավը շատացել էր, պառկել էի ֆուրգոնի մեջ: Անձրևը գնալով ավելի էր ու-

ժեղանում: Ղարսում մնացինք մոտ տասը-տասներկու օր: Նորից հրաման եկավ, որ գումակը մեկնելու է Ալեքսանդրապոլ<sup>179</sup>: Նորից ձիերը լծեցինք, գնում ենք... Ես դարձյալ ֆուրգոնի մեջ պառկած էի, ոտքերս սաստիկ ցավում էին: Շուտով հասանք Ալեքսանդրապոլ, մեր գումակը կանգնեց Ալեքսանդրապոլի արևելյան կողմում գտնվող գարեջրի գործարանի մոտ, որտեղ քյարայիճե մի մեծ խողովակ կար: Ինձ տեղափոխեցին բերդի՝ Սև դուլի<sup>180</sup> հիվանդանոցը, պառկեցի մեկ ամիս: Արդեն բավականին լավացա, օրերը տաքացել էին, ու ինձ դուրս գրեցին: Եկա մեր գումակը, մեր գունդն արդեն եկել էր: Իմ զինակից ընկերները եկան, ուրախ-ուրախ ինձ բարևեցին, նրանց տեսնելով՝ կարծես թե ես բոլորովին լավացա: Չգիտեմ՝ ինչքան մնացինք Ալեքսանդրապոլում, նորից սկսեցինք նահանջի պատրաստվել. վերջապես իմացանք, որ գնալու ենք Ադիև<sup>181</sup>: Հրամանատարները ստուգում էին զինվորներին, տասնապետները զեկուցում էին, որ ամեն ինչ պատրաստ է: Չորքը պատրաստ կանգնած է, երեք ծանր գնդացիները, ջորիների վրա բարձած, շարժվում ենք դեպի Ադիև: Անցանք քաղաքը, անցանք «Կազաչին»<sup>182</sup> ու այսպես գնում ենք, մեկ էլ տեսա՝ այդտեղ կովեր էին արածում. մեկը դեպի մեզ էր գալիս, քայլվածքը ծանոթ էր, ինքն էլ կարճ, բաղի քայլվածքով. կարծես մեր Հարությունը լիներ, մեջքին էլ կուզ կար, հիշում եմ դեռ փոքր ժամանակից: Ինձ հետ Սիմոնն էր. «Սպասի՛ր, Սիմոն՛ն ջան, այս եկողը կարծես ծանոթ լինի»: Մենք կանգնեցինք, լավ նայեցինք, տեսնեմ՝ իրոք որ եղբայրս է՝ Հարությունը: Վազեցի դեպի նա, համբուրեցինք իրար, հուզմունքից չէինք կարող խոսել: Վերջապես ես հարցրի. «Ի՞նչ ես անում այստեղ, Հարություն՛ն»: «Ես Ղարաքիլիսայում<sup>183</sup> կով եմ արածեցնում մի խազեիկի մոտ»: «Իսկ Հմայակը որտե՞ղ է»: «Քաղաքում է»: Մանուկի խոսքը ճիշտ դուրս եկավ, որ մի տեղ կհանդիպեմ եղբայրներիս: «Լսի՛ր, Հարություն՛ն, մենք գնում ենք Ադիև, կարո՞ղ ես՝ Հմայակին գրի՛ր, եկե՛ք ինչ մոտ, րեսնենք՝ ինչ պիրի անենք... Մնաս բարով, Հարություն՛... Հարություն՛ն, Ադիևը շատ հեռու՞ է»: «Ես էլ

*չգիտեմ*»: «*Լավ, գևացի՛նք*»: Գնացինք Աղին գյուղի ուղղությամբ: Մենք մնացել էինք բոլորից վերջում: Չորքը մեզանից բավական հեռացել էր, որին հազիվ հասանք Աղինում: Չորքին տեղավորեցին Աղինի տներում: Ես էլ դարձա մի թիֆլիսեցի օֆիցերի՝ պարուչիկի դենչիկ, Վանոյին օգնական: Մի հարուստի տանն էինք մնում, այստեղ սիրամարգ կար: Միտքս ընկավ Ղարսի ճակատամարտը, որին չէի մասնակցել...

### **Ղարսի ճակատամարտի<sup>184</sup> մասին պատմում է Նիկոլ եղբայրը**

-Նիկո՛լ եղբայր, պատմի՛ր՝ ինչպես կովեցիք, խոսի՛ր Ղարսի նահանջի մասին:

-Ես էլ չգիտեմ՝ ինչ խոսեմ, Հովհաննես՛ս:

-Խոսի՛ր, ինչ որ եղել է:

-Ինչ որ պատահեց, բոլորն էլ տխուր է, լավ բանի չսպասես, այս պատճառով էլ խոսել չեմ ուզում... Մեկիմ գյուղից որ գնացինք, հասանք Ետիքիլիսա, դիրքավորվեցինք, սպասում էինք կովելու հրահանգին: Այստեղ միանգամից մի քսան հոգի երևացին, ուզում էինք կրակել դրանց վրա, մեր պարուչիկը թե.«*Սպասե՛ք, տղե՛ք, տեսնե՛նք՝ ովքեր են, քսան հոգին մեզ չեն ուտի*»: Իսկապես որ, շատ խելացի դուրս եկավ պարուչիկի խոսքը, քսան հոգին եկան հասան մեզ: «*Ի՛նչ մարդիկ եք*»: «*Մենք՝ քսան երիտասարդներս էլ օլթեցի<sup>185</sup> ենք*»: «*Բա ձեր ընտանիքնե՛րը...*»: «*Մեր ընտանիքների մասին խոսելը ցավալի է: Տեղի թուրքերը բոլորին ջարդեցին*»: Օլթեցիների պատմությունը կկարդաք այս գրքում, թե ինչպես տեղի թուրքերը ջարդել էին հարևան գյուղի հայերին: Այս մասին պատմեցին այդ քսան օլթեցի երիտասարդները: Հիմա դառնանք Նիկոլ եղբոր պատմածին:

-Մենք Ետիքիլիսայում սպասում էինք թշնամու երևալուն, բայց արի տես, որ թշնամին բոլորովին մեր կողմից չանցավ, քա-

նի որ առաջ էր շարժվում Սարիղամիշի գծով, իսկ մենք անտեղի սպասում էինք Ետիքիլիսայում: Նորից Մելիմ գյուղ հետ եկանք, մի տասը օր այստեղ մնացինք, անցանք Ղարսի պաշտպանությանը: Մեզ հանձնարարեցին պահել Ղարսի ճանապարհի ուղղությամբ մի մալականի գյուղ, այդ գյուղը Վլադիկարս<sup>186</sup> էին ասում, իսկ թուրքերը երևի հարձակման էին պատրաստվում: Թուրքը սկսեց հարձակումը, այստեղ մենք տասը օր դիմադրեցինք, թշնամին առաջ չէր շարժվում: Հետո լուր ստացանք, որ թշնամին առաջ է շարժվում Ալաջայի<sup>187</sup> ուղղությամբ, որպեսզի կտրի Ղարսի նահանջի ճանապարհը՝ Ղզլչաղչաղը<sup>188</sup>: Ու նորից սկսվեց նահանջ ամբողջ ճակատով, առանց կռվի թողեցինք Ղարսը: Հովհաննեսն՝ ս ջան, մեր հրամանատարները միայն առաջն են տեսնում, չեն տեսնում, թե ինչ է կատարվում կողքերն ու հետևները: Ահա մեր գնդի մասին այն բոլորը, երբ դու բացակա էիր:

Ես նորից ընկա մտածումներքների մեջ, ինչ է լինելու, այսպես անընդհատ՝ նահանջ, հա նահանջ: Թշնամին, որ տեսնում է՝ չի կարող դիմադրությունը հաղթել, գտնում է մի թույլ տեղ, այդ գծով առաջ է շարժվում, ու գործն արդեն ավարտված է: Ես նորից հարցրի Նիկոլ եղբորը. «*Ես չգիտեմ՝ դեռ շա՞տ փեղ ունենք գնալու*»:

-Չէ՛, Հովհաննեսն՝ ս, եթե թշնամուն հաջողվի Երևանը գրավել, Թուրքահայաստանի պես բոլորին կջարդի, մենք կորած ենք, հայության վերջը կլինի:

-Սի հարց էլ, եղբայր: Հիմա մենք ինչու՞ ենք եկել Ադիգում կանգնել:

-Ինչու՞ ենք Ադիգն եկել... շատ լավ հարց է, նրա համար, որ եթե կռիվ լինի, թշնամին չկարողանա երկաթգիծը կտրել: Հետո էլ, որ թույլ չտանք, որ այս ուղղությամբ թշնամին առաջ շարժվի:

Այսպես անցնում էին օրեր: Սի օր էլ տեսնեմ, որ մեր Հմայակն ու Հարությունն են գալիս: Եղբայրներիս ընդառաջ գնացի, բավական նստեցինք, խոսեցինք: «*Գնանք հրամանատարներից թուղթ վերցնենք, որպեսզի գնանք Ռումիլիս*», -ասաց եղբայրս: Գնա-

ցինք, եղբայրս մեր պարուչիկին բացատրեց, թե ինչքան ժամանակ են ինձ փնտրել, որպեսզի գնանք Ռուսիինիա, բայց չեն գտել: Իմ մասին շատ խոսեցին, բայց պարուչիկը չհամաձայնեց, որ ես գնամ, քանի որ զինակոչի էի ենթարկվել: Դուրս եկանք: «*Ի՛նչ անես, եղբայր, որ չեն թողնում, դուք գնացե՛ք, եթե կենդանի մնամ, ես էլ կգամ*»: Մոտիս քսան ոսկին, կանացի ոսկե ցեպը, Սարգիսով ժամացույցը, մի հատ էլ աղիալ տվեցի եղբայրներին: «*Դե գնացե՛ք քարով*», - համբուրվեցինք: Դա 1918թ. մայիսի 5-ն էր, եղբայրներս գնացին Ռուսիինիա:

Մի երեկո օֆիցերները նստած խոսում էին ներկա դրության մասին, թե ինչ պիտի լինի, քանի որ թուրքը անընդհատ առաջ է շարժվում: Օֆիցերներից մեկն ասաց. «*Եղբայրներ՛ր, 1905թ. ռուս-ճապոնական պատերազմի ժամանակ ճեկնճուր ճապոնացիք էլ Սախալինում առաջ էին շարժվում*»:

### **Մի երկու խոսք այս օֆիցերի հուշերից 1905թ. ռուս-ճապոնական պատերազմի մասին**

«Ես քսան տղեքով Թիֆլիսից դուրս եկա, գնում էինք Թուրքիա՝ այնտեղի հայերին լուսավորություն քարոզելու, ես էլ այս տղեքի պետն էի: Հասանք Քյորփի մոտ, ռուս սահմանապահ պահակները ուզում էին մեզ բռնել, բոլորը փախան, միայն ինձ բռնեցին, բերեցին Գարս, դատեցին, տվեցին տասը տարի ու քշեցին Սախալին<sup>189</sup>: Մի օր ինձ տարան գեներալի համար փայտ ջարդելու: Ես ինձ համար աշխատում էի, մեկ էլ տեսնե՛մ՝ եկավ գեներալը իր ընտանիքի հետ, նստեցին պատշգամբում, սկսեցին խոսելը. «*Վերջը ի՛նչ է լինելու այս մեր տպարանի դրությունը, միշտ տարին երկու-երեք հազար վնասով ենք փակում*», - ասաց գեներալը: Ես թողեցի գործս, գնացի, գեներալին ասացի. «*Տպարանը ինչ հանձնի՛ր, ես երկու-երեք հազարի օգուտով փակե՛մ տպարանի տարին*»: Գեներալը նայեց ինձ և հարցրեց. «*Որտե՞ղ ես աշխատել,*

ի՛նչ կրթություն ունես», - հետո քննեց գրավորս<sup>190</sup>, ինչ գլուխներդ ցավացնեն, տպարանը հանձնեց ինձ, ես ինձ արդարացրի, երկու հազար օգուտով փակեցի տարին: Գործս բավականին հաջող էր գնում, ամուսնացա, շատ լավ ապրում էի, ունեցա երկու տղա: Երրորդ տարին էր, որ շատ հաջող աշխատում էի, մեկ էլ մեր հարևանի տանը չորս-հինգ ճապոնացի հայտնվեցին, հետո դարձան տասը-տասնհինգ հոգի, հետո դրանց թիվը հասավ քսանի: Չարչու տեսքով էին, կարգիկաները ձեռքներին՝ գնում էին տարբեր վայրեր, մեկ էլ տեսնես՝ հայտնվում էին: Մի օր, իմ ընտանիքով դրսում նստած, մեր ապրուստի մասին էինք խոսում, մեզ սոստեցան երկու ճապոնացի. «Մի բան եթե խնդրենք, չե՞ք մերժի»: «Ինչու՞ մերժեմ, եթե հնարավոր է», - իմ հերթին ասացի ես: «Եկեք մեզ երեկոները ռուսերենի դասեր տվեք, վարձի մասին չմտածեք, որքան ուզեք, կբանք»: Ես ընկա մտածմունքների մեջ, չգիտեմ՝ ինչ պատասխանեմ: Կինս ասաց. «Ի՛նչ կլինի, փողով բան չի՞, ինչու՞ չի կարելի»: Ես և այս ճապոնացիք համաձայնեցինք. «Վաղվանից կարող ես գալ, մեզ մեր տանը դասեր տալ»: Ես երեկոները սկսեցի ճապոնացիներին դաս տալ, շատ լավ էին սովորում, գերազանց: Մի օր էլ խմբով նկարվեցինք, ես՝ որպես ուսուցիչ՝ մեջտեղում, քսան հոգին էլ՝ շուրջս կանգնած: Այսպես ուրախ անցնում էին օրերը: Հետո այս ճապոնացիք քիչ-քիչ գնացին Ճապոնիա ու այլևս հետ չեկան: Եկավ աշունը: Հանկարծ իմացանք, որ Ճապոնիան Ռուսաստանին պատերազմ է հայտարարել: Սախալինում տասը հազար զինվոր կար, իսկ բռնավորների թիվը կհասներ քսանհինգ հազարի: Թագավորից հրաման եկավ. «Ով որ կամավոր զինվոր գրվի, մի ամիսը կհաշվվի մեկ տարի, բացի դրանից, ում ունեցվածքը բռնագրավվել է, կամ ով իր ունեցվածքը կորցրել է, պատերազմից հետո լրիվ երկարամյա»: Բոլոր բանտարկյալները սկսեցին կամավոր գրվելը, մյուս կողմից էլ պատերին կպրած էին այսպիսի հայտարարություններ. «Ով որ կամավոր գրվի, կզնդակահարվի»: Իհարկե, այս

հայտարարությանը բանի տեղ դնող չեղավ, բոլորը կամավոր էին գրվում, Սախալինում հավաքագրվեց 35000 ռուս զինվոր, որը մի հզոր բանակ էր: Ու այսպես պատրաստ սպասում էինք թշնամուն: Մի օր տեսնենք՝ մի ճապոնական ռազմանավ եկավ, կանգնեց մեր ծովածոցում<sup>191</sup>, քսան վայրկյան չանցած՝ մի ուրիշը եկավ, կանգնեց սրա կողքին: Ինչ ասեմ, մի տասը նավ իրար կողք կողքի կանգնեցին: Ճապոնացիք սկսեցին այս նավերից ռմբակոծելը, մերոնք էլ վեց թնդանոթով ռմբակոծեցին ցամաքից: Ճապոնացիք սկսեցին ծովից դեպի ցամաք կամուրջ գցելը: Մեր զեներալը հրամայեց. «*Նահաւնջե՛լ դեպի հարմար դիրքերը*»: Սակայն արի ու տես, որ մենք դեռ չէինք հավաքվել, իսկ ճապոնացիք արդեն մեր ճանապարհը փակել էին, մեզ բոլորիս գերի վերցրին: Ես մի կերպ մեր տուն գնացի, տեսնեմ՝ վերջը ինչ է լինելու: Երկրորդ օրը հայտարարություն տվեցին. «*Ով որ զենք ունի, թող բերի հսկօնի, ով որ պետական ծառայող է, թող շրաք ներկայանա*»: Չորրորդ օրը սկսեցին տները խուզարկելը: Մեր հարևան բժիշկը զենքը հանձնել էր, բայց մի քառասունհինգ փամփուշտ սնդուկում էր մնացել: Խեղճ բժշկին տան մեջ գնդակահարեցին: Գողը պատել էր մեզ, թե տեսնես ինչ է լինելու մեր վերջը: Վեց զինվոր և մի կապիտան եկան մեր տուն: Կապիտանը շատ սիրով ինձ բարևեց: Սկսեցին տունը ստուգելը, կապիտանը վերցրեց խմբակային նկարը (կարծեմ հիշում եք). «*Այս ովքե՞ր են*»: Ես ասացի. «*Դրանք չարչի ճապոնացիք էին, որոնց ես ռուսերենի դասեր էի փալիս*»: «*Եթե սրանց փեսնես, կճանաչե՞ս*»: «*Ինչու չէ, շարլավ*»: Սկսեց մատով ցույց տալը. «*Սա ո՞վ է...*»: Ես մեկ առ մեկ ասացի բոլորի անունները, միայն մեկի անունն էի մոռացել:

-Լա՛վ,-ասաց,-կհիշես, երեկոյան մենք կգանք, թեյ կդնես:

Ես սկսեցի մտածելը, թե ինչ գործ ունի այս կապիտանը նկարի հետ: Սպասում էինք նրա գալուն: Իրիկունը այս ճապոնացին եկավ: Նստած թեյ էինք խմում: Նա մաքուր խոսում էր ռուսերեն. «*Միրքդ բերեցի՞ր այդ մարդուն*», -հարցրեց նա: «*Ո՛չ, հիշողությունս ինչ դավաճանել է*»: «*Լավ, որ չես հիշում, ես կասեմ, ես*

եւ այդ մարդը՝ Սաքսեկեն»։ «Ինչպե՞ս թե դու ես», -ես վեր թռա տեղիցս։ «Այո՛, լավ նայիր, ես եմ։ Մենք ոչ թե չարչիներ, այլ բռնորս էլ պաշտոնապար մարդիկ էինք, չեք քթի փակ չեք կոզին, չեք ճանապարհները նկարեցինք... չարչու քողի փակ էինք ծածկվել։ Տեսա՞ք՝ ինչ օյիս բերեցինք չեք գլխին»։ «Շատ ճիշդ է», -ասացի ես։ «Հիմա չեք բոլոր ճանապարհները փակ են։ Ռուսաստանից ոչ մի օգնություն չեք կարող սրանալ, Սախալինն էլ մեքն է։ Դե՛ գիշեր բարի, մենք գնացինք»։

Մյուս օրը երկու ճապոնացի եկան, ինձ տարան. ինձ մատնել էին, քանի որ որպես պետական ծառայող չէի ներկայացել։ Ինձ ներս կանչեցին քննելու։ Դռնից ներս մտա, իմ բարեկամն ինձ տեսավ, հարցրեց. «Ի՞նչ ես անում այստեղ»։ «Զգիտեմ, թե ինչի համար չեք զինվորները ինչ այստեղ բերեցին»։ Սա գնաց, չգիտեմ ինչ փսփսաց ճապոնացի գեներալի ականջին, գեներալը նայեց ինձ, հետո ինձ բաց թողեցին, գնացի տուն։ Այնուհետև հաշտության պայմանագիր կնքեցին, Սախալինի արևելյան մասը անցավ ճապոնացիներին, արևմտյան մասը մնաց ռուսներին։ Հայտարարություն տվեցին. «Ով ուզում է, թող մնա, ով չի ուզում, կարող է հեռանալ»։ Տուն եկա. «Ա՛յ կին, քանի շուր է, եկ հեռանալ»։ Փախանք մինչև Թբիլիսի։ «Ահա թե ինչպես ձեռնորոգ ապոնացիք հաղթեցին ռուսներին, եղբայրներ՛ր։ Հիմա էլ սարկած թուրքը հա՛ առաջ է շարժվում։ Տեսնենք՝ ինչ է լինելու այս բոլորի վերջը»։

Շարունակենք մեր պատմությունը։

\*  
\*   \*  
\*

Առավոտ պահակը եկավ. «Պարո՛ն պարուչիկ, դիմացի սարի վրա թուրքերը չգիտեմ ինչ են անում, վազում են այս ու այն կողմ, երևում ու նորից անհետանում են»։ Մենք էլ պարոն պարուչիկի հետ գնացինք։ Հեռադիտակը վերցրեց, նայեց. «Այո՛, թուրքերն

*ինչ-որ բան են պատրաստում*», -ասաց պարուհիկը:

Չգիտեմ 1918թ. մայիսի 14<sup>o</sup>-ը, թե<sup>o</sup> 15-ն էր<sup>192</sup>, Երևանից առավոտյան իննի-տասի կողմ գնացքով ուղևորներ եկան Ադիմի կայարան: Դեռ ուղևորները չէին կանգնել, թուրքի թնդանոթը արկ արձակեց դիմացի սարից: Ուղևորները այլևս Ալեքսանդրապոլ չգնացին, նորից հետ դարձան Երևան: Տազնապ տվեցին: Պատրաստ գորքը հավաքվեց գյուղի մեջ, շարժվեցինք դեպի կայարան: Երեք ծանր գնդացի դիրքավորեցինք գծի վերևում, հրամանատարները դիրքավորեցին գորքին: Գյուղացիները փախան դեպի արևելյան կողմում գտնվող սարը: Կով, ոչխար ու մարդ խառնվել էին իրար, իսկ թշնամին ռմբակոծում էր գյուղացիներին: Մի ժամի չափ սպասեցինք, մեկ էլ տեսնենք՝ երեք ձիավոր առջևից, հետևից՝ հետևակը՝ մոտ հինգ հարյուր հոգի, երկու շարքով դասավորված, կարմիր դրոշակը պարզած, շարժվում են առաջ: Իջան ներքև, հասան ջրի ափին: «*Ինչ լավ կլինի, թող գան, եղբա՛յր Հովհաննես, -ասաց Մանուկը, -մի լավ դաս տանք այդ ավազակներին, մենք բարձունքին ենք, իրենք՝ ներքևում: Վերջապես հասավ արեւի թշնամու հետ հաշիվ տեսնելու ժամը, -գնդացիքը ուղիղ թշնամու վրա ուղղելով՝ ասաց Մանուկը, -Հովհաննես՛ս, նայի՛ր, լավ սովորել են գնդացիքով կրակել*»: Մանուկն այնպես էր ոգևորվել, կարծես միանգամից ուզում էր իր վրեժը հանել բարբարոս գազան թուրքերից: Գնդացիքը պատրաստ պահած՝ սպասում էր կռվելու հրամանին: Բայց կռվելու փոխարեն նահանջի հրաման տվեցին: Գնդացիքների հրամանատար տասնապետ Թումասը հրամայեց. «*Զանդե՛ չ գնդացիքները*»: «*Ես չեմ քանդի գնդացիքները, ով ուզում է, թող քանդի, -ասաց Մանուկն ու քրեց հեռացավ, -ինչի՞ համար ենք նահանջում*»: «*Մեզ Ալեքսանդրապոլից հրամայել են նահանջել դեպի Համանլու*<sup>193</sup>», -խոսեց Թումասը: Ես կանգնած նայում էի Թումասի ծուռ քթին, կարծես մեկն ինձ ասելիս լիներ. «*Լա՛վ գնկիր Թումասի ծուռ քիթը, որ հետագայում պատմես քո գնդի ճակատագրի մասին*», թե ինչպես պոլսեցիները<sup>194</sup> թուրքերին հանձնեցին մեր գնդի ութսուն

զինվորներին, որպեսզի թուրքերը նրանց սպանեն. այս ութսուն զինվորներից մեկը հենց մեր Թումասն էր, որ ազատվել էր: Երեք տարի հետո՝ 1922թ., Կրասնոդարի նոր շուկայում պատահեցի մեր գնդացիների տասնապետ ծուռքիթ Թումասին, որը պատմեց մեր գնդի ճակատագրի մասին, այդ մասին կկարդաք քիչ հետո:

Եվ այսպես մեր ռազմական ուղին ուղղված էր դեպի արևելք, թշնամին կրնկոխ մեր հետևից էր գալիս, չնայած որ մեր բոլոր զինվորները ուզում էին իրենց կյանքի գնով էլ վրեժ լուծել ռիսերին թշնամուց: Ախր չէ՞ որ մեր հետևակ գունդը գծի երկայնքով մեկ էր դիրքավորված, երեք ծանր գնդացիները նույնպես արդեն դիրքավորել էինք, եթե թշնամին մեզանից շատ էլ լիներ, դա ոչ մի արժեք չուներ, քանի որ մենք բարձր տեղում էինք, ունեինք ամեն հարմարություն: Ով անցնում է Ադիմի մոտով, թող լավ նայի դեմ ու դեմ: Բավական էր՝ կռվելու մի հրաման տալին, ոչ ոք չէր կարող ազատվել մեր հետևակի ու գնդացիների կրակից: Սակայն ցավալի դրություն էր. նահանջում էինք առանց կռվի ու առանց կրակոցի: Իսկապես կրկնվում էր Էրզրումի պատկերը, բոլոր ճակատներում էլ նույն դրությունն էր: Այն ժամանակվա դեկավարները դավաճանաբար բռնել էին դասալքության ճանապարհը, ուրիշ ոչինչ: Նահանջում էինք ու նահանջում, գոնե մի քանի ժամ կռվեինք, որ թշնամին զգար, թե դեմը զինվորներ կան:

Գնդացիները հավաքեցին, բարձան ձիերին, զորքը դիրքերից դուրս եկավ: Գնդացիները՝ առջևից, մենք՝ հետևից՝ գյուղից դուրս եկանք: Թուրքական հրանոթը սկսեց մեզ ուժեղացնել: Նահանջում էինք դեպի արևելք: Ամո՞թ, հազա՞ր ամոթ այն ժամանակվա մեր հրամանատարներին, որոնք չէին կռվում, այլ բռնել էին նահանջի ճանապարհը: Նրանք շատ լավ գիտեին թուրքական զորամասերի նպատակը, որոնք, մտնելով Հայաստան, իրենց հետ մահ ու կոտորած էին բերում: Աշխարհի ամենահայտնի բորենին Թուրքիան էր, մարդագայլերի ոհմակը թուրքական բանակն էր: Մաքուր դավաճանություն, ուրիշ ոչինչ, թուրքերը երևի ուզում էին Տաճկահայաստանի պես միանգամից ոչնչացնել

արևելքի հայությանը: Գյուղից դուրս ելանք:

-Նիկոլ՝ եղբայր, այս ի՞նչ խաղ է,-վրդովված հարցրեց Մանուկը,-իսկական էրգրումի պատկերը, ինչի՞ համար ենք նահանջում, գոնե մի քանի ժամ կռվեինք, չէ՞ որ թշնամին մեզանից քիչ էր, մեր տեղն էլ հարմար էր: Երեք գնդացիք ունեինք, այսքան զորք, էլ ի՞նչ, ի՞նչն է պատճառը, հոգու՞ղ մատաղ, Նիկոլ՝ եղբայր, որ նահանջում ենք:

-Ես էլ չգիտեմ, քե՛զ մատաղ, ինձ որ մնա, բոլոր այժմյան հրամանատարները կախաղանի են արժանի: Դրանց ուրիշ ոչինչ պետք չէ: Այսպես էլ ստորություն, որ դրանք են անում ժողովրդի գլխին:

Թուրքը գյուղի արևելյան սարի տակ սկսեց շարակներ գցել մեզ վրա:

-Իսկականն է,-ասաց Միմոնը,- քանի որ անպետք ենք կռվելու համար, ու՞ր է թե մի երկու գնդացիք էլ լինեք դիմացի սարում, թուրքերը մեզ լավ կջարդեին:

Ալազյազի<sup>195</sup> տակով գնում ենք դեպի արևելք: Հասանք մի գյուղ, այստեղ լիքը մեղր կար, որ կողմը նայում էիր, փեթակներ էին: Այստեղ մի քիչ հանգստացանք, հետո շարժվեցինք առաջ: Հասանք Արթիկ<sup>196</sup>, այստեղից նորից առաջ գնացինք, հասանք Բաշ գյուղ<sup>197</sup>: Հանգիստ տվեցինք մեզ. նոր էինք պատրաստվում հանգստանալու, որպեսզի հաց ուտենք, մեկ էլ գենքի ձայն լսեցինք: Ջինվորները վազեցին ձայնի ուղղությամբ: Ես էլ գնացի: Մեկ էլ տեսնեմ՝ մի զինվորի՝ արյունլվիկ, սպանված, դուրս բերեցին դարմանի տակից:

-Այս ի՞նչ բան է, ինչու՞ են սպանել:

-Իտեղճ տղան գնացել էր, որ ձիերի համար մի քիչ դարման բերեր: Մտել էր մարազը՝ պարկի մեջ դարման լցնելու, տանտերը եկել տեսել էր, այլևս ձայն չէր հանել, գենքը վերցրել ու մարազի մեջ սպանել էր զինվորին:

Ես անմիջապես ճանաչեցի. իմ ընկեր Մանուկն էր: Իմ աչքին Մանուկը ավելի մեծ մարդ էր թվում, աչքիս երկու Մանուկ էր

երևում: Ես սարսափած սկսեցի լացել: Լացով, գոռալով ընկա Մանուկի դիակի վրա: Այնպես էի ճշում, ուշքս անցավ: Չգիտեմ՝ երբ ուշքի եկա, բոլոր զինվորները հավաքվել էին, ով ինչով կարող էր, փորձում էր ինձ մխիթարել: Չուր բերեցին, ստիպեցին լվալ երեսս, մի քիչ դեղ տվեցին, հանգստացա: Կանգնեցի ոտքի, բայց քայլելու համար բոլորովին ուժ չունեի: Հասնողը ծեծում էր այդ դահիճ մարդասպանին, կարծես ռեզինից լիներ: Չեռքերը հետևը կապած՝ հա՛ ծեծում էին, բայց սրա պետքը չէր, կարծես ուրիշին էին ծեծում: Ես հիշում եմ՝ այդ մարդու տունը գյուղի արևմտյան կողմում էր, դեպի ձախ: Եկան մեր հրամանատարները, նայեցին այս մարդուն. «*Լսի՛ր, հերո՛ս, ինչու՞ սպանեցիր խեղճ զինվորիկ, - հարցրեց պարուչիկը, - դարմանի համա՞ր էլ մարդ սպանե՞ն*»: Ես ձայն չէի հանում: Ոնց որ գազան լիներ, կատաղած նայում էր պարուչիկին: Մեզ հրամայեցին հեռանալ այստեղից. «*Թող թուրքը գա, սրանց մի լավ դաս տա*»: Շարժվում ենք այդ գյուղից. ինձ նստեցրել են ձիու վրա, մեկ էլ աչքս ընկավ ձեռքերը հետևը կապած այդ մարդուն: Թռա ներքև, այնպես եմ ծեծում, ինչքան ուժ ունեմ, չեմ խնայում, իսկ այս դահիճի պետքը չէր, կարծես քարից լիներ: Նորից շարժվում ենք դեպի արևելք: Անցանք մի ուղղությամբ վրա գտնվող, իրար մոտիկ երեք գյուղ, այս դահիճն էլ մեզ հետ էր, հասնողը ծեծում էր սրան: Այսպես հասանք Համամլու:

Հարգելի՛ ընթերցողներ, ես երկու անգամ եղել եմ Բաշ գյուղում, բայց ինձ չի հաջողվել այս մարդու ազգանունն իմանալ, երրորդ անգամ 1971թ. փորձեցի. ես էի, իմ մեծ տղան՝ Աշոտը, և նրա ընկերը՝ Շիրակը, սակայն ոչ մի արդյունքի չհասանք:

Մանուկին մոռանալ չէի կարող, աչքերիցս չէր հեռանում, միշտ լաց էի լինում, երկու օր է՝ ոչինչ չէի կերել: «*Հովհաննես՛ս, եկ քեզ տանեն մեր գյուղը՝ Շահառլու*<sup>198</sup>, *մի քանի օր մնա՛, վիշտդ թեթևանա, գուցե թե մոռանաս*», -ասաց ընկերս՝ Վանոն:

Երրորդ օրն է՝ Համամլուում ենք: Մեր Վանոն թե. «*Ես պարուչիկից թույլտվություն կվերցնեմ, որ գնանք մեր գյուղը, չորս-հինգ օր հերոս հետ կգանք: Պարուչիկը մեզ հետ լավ մտորիկ է, գիտե՞ս, ա-*

մառը միշտ իր ընտանիքով գալիս է մեր տուն, մնում են երեք-չորս ամիս: Շատ լավ մարդ է»: Վանոն ութ օր մնալու իրավունք վերցրեց: Հասանք Ղարաքիլիսա<sup>199</sup>, ժամի մոտ Վանոյենք մի բարեկամ ունեին, մի քիչ հանգստացանք այստեղ, հաց կերանք: Ղարաքիլիսա մի ասա, մի գեղեցիկ հարս ասա: Գյուղը ծաղիկների մեջ չէր երևում, կարծես ծաղիկների աշխարհ լիներ, իմ առջև կանաչ անտառներով մի չքնաղ տեսարան էր: 1918թ. մայիսի 20-ն էր<sup>200</sup>: Շարունակեցինք երկաթգծով քայլել դեպի Շագառլու: Երկաթգծի մոտ մի սարսափելի տեսարան էր: Երկու կողմի վրա յուրաքանչյուր քայլափոխին հանդիպում էին չլերով ծածկված դիակներ:

-Այս ի՞նչ բան է, եղբայր Վանո, ո՞վ է այսպիսի գազանություն արել:

-Ոչ մի մարդ, գնացքի խփածն է, գաղթական ժողովուրդ է:

Հասանք Վանոյենք տունը՝ Շահառլու: Մեզ որ տեսան, կարծես ուզում էին հում-հում ուտել:

Իսկույն լողացանք, հաց կերանք ու ես պառկեցի քնելու: Վանոյենք երեք եղբայր էին, հայրն էր, մայրը, երկու քույրը: Մի լավ մեծ այգի ու փեթակներ էլ ունեին: Երրորդ օրն է, որ Վանոյենց տանն ենք, չորրորդ օրը Վանոն թե.«Դե՛ եկ գնանք Քոլագիրան<sup>201</sup>, Անդրանիկի գորքը Ջալալօղլիից<sup>202</sup> է գալիս»: Իջնում ենք Քոլագիրան, այնտեղից բարձրանում ենք Դսեղ<sup>203</sup>: Գնացինք կայարան: Շրջում էինք, մեկ էլ մի Էրզրումից ծանոթ զինվոր պատահեց.«Ի՞նչ ես մասն գալիս, Հովհաննես՛ս»: «Եկանք ձեզ տեսնելու»: «Հիմա որտե՞ղ ես»: «Մեր գունդը Համամլուում է, ութ օրով եկել ենք Շահառլու՝ Վանոյենց տունը, հետո պիտի գնանք»: «Էլ ի՞նչու պիտի գնաս: Չորքը, գորք է, եկ գնանք մեզ հետ, իզուր մի՛ գնա, մեր գնդում լավ տղեք կան՝ Սիբիրսկի<sup>204</sup> պոլկն է»: «Ի՞նչ ես ասում, Վանո՛, չմնա՛մ»: «Դու գիտես, ուզում ես՝ մնա»: «Լավ, գնա՛, Վանո՛ ջան, իմ կողմից տղեքին կբարեես»: Ու այսպես ես բաժանվեցի իմ գնդից:

## Անդրանիկի բանակում<sup>205</sup>

1918թ.: Իմ պատմությունը Անդրանիկի<sup>206</sup> բանակում կատարած ծառայությանս մասին հարուստ է անհայտ տվյալներով, որոնք կմնան ընթերցողների հիշողության մեջ: Կպատմեմ տասնութ տարեկան պատանու երկար ճանապարհորդությունը Անդրանիկի բանակի հետ:

«*Եկ մի քիչ մասն գաևր կայարանում,-ասաց Տիգրանը,-հեղրնոր գևանք*»: Մտանք կայարան, գևացիք ներքև, խոհանոցում չգիտեմ ինչ էինք փնտրում, մեկ էլ Տիգրանը թե.«*Եկ այստեղ, Հովհաննես՝ս,-մի փոքր փուռի դուռը բացեց, ութ լիսր եփած պեչենի ներսից հանեց, լցրեցիք պայուսակներս,-դե՛ եկ հիմա գևանք Դսեղ՝ մեր գորքի մուր*»: Բարձրացանք սարն ի վեր, հասանք գորքին, պալատկաները խփած էին: Տիգրանը գևաց հիսնապետի մոտ, գեկուցեց իմ մասին: «*Լա՛վ, Հովհաննեսը թող ինչ մուր մնա*»: Չգիտեմ՝ ինչքան մնացիք Դսեղում... մի օր պատրաստվեցիք, որ անտառի միջով Դսեղից<sup>207</sup> գևանք Դիլիջան<sup>208</sup>: Սև ամպերը կուտակվել էին Դսեղի վրա, զգացվում էր, որ անձրև պիտի գա: Օրը մթնում էր, ամբողջ երկնքով լողում էին սև ամպերը: Առավոտից փչող սառը քամին դադարեց: Մեր գորամասը անտառի միջով դեպի արևելք էր շարժվում: Անտառում լռություն էր, իսկ սև ամպերը լողում էին դեպի արևելք: Անտառը խորհրդավոր էր, վիթխարի կաղնիների ու հացենիների տերևներն անգամ չէին շարժվում, կարծես թե անտառը սգի մեջ լիներ, քանի որ մենք նահանջում էինք. հինգ-վեց հազարանոց բանակը՝ հայրենիքի հարազատ զինվորները, հայրենիքը թողնում էին բարբարոս թշնամու ձեռքում: Անտառը մեկից ահավոր փոխվեց, սև ամպերը հավաքվեցին անտառի վրա, կարծես ուզում էին մեզ պատժել: Ով որ եղել է Դսեղի անտառում, նա գիտե: Այստեղից անտառի միջով մինչև Դիլիջան քառասուն կմ է: Մա մի չտեսնված անտառ էր, չգիտեմ՝ որքանով էր ճիշտ, բայց այդպես էին ասում: Միայն հիշում եմ, որ երկրորդ օրվա կեսին նոր միայն հասանք Դիլիջան: Մի ուժեղ անձրև սկսվեց... կարծես զինվորներին մեկ-մեկ ջուրը

մտցրել, հանել էին, այդպես որ թրջվել էինք: Մի բաց տարածութ-  
յուն կար անտառում, այստեղ դադար տվեցինք, կրակ վառեցինք,  
չորացրինք հագուստներս: Գիշերը մնացինք անտառում: Առա-  
վոտյան նորից շարունակեցինք ճանապարհը, հասանք Դիլի-  
ջան: Մեզ տեղավորեցին կազարմաների մեջ: Երկրորդ օրը մեր  
վաշտը տարան Դիլիջանի մալականի գյուղերից մեկը, ճանա-  
պարհը հսկելու համար հերթապահ նշանակեցին:

Չգիտեմ՝ երրո՞րդ, թե՞ չորրորդ օրն էր, մի ֆայտոն, սպիտակ  
դրոշակը տնկած, ճանապարհով եկավ դեպի Դիլիջան: Անմիջա-  
պես կանգնեցրինք: Ֆայտոնի մեջ նստած էին երկու թուրք փա-  
շաներ: Մեր հիսնապետը հարցրեց. «*Ու՞ր եք գնում*»: «*Մի կարևոր  
գործի համար ուզում ենք Անդրանիկ փաշային տեսնել*»: «*Սպա-  
սե՛ք, ես փաշային զեկուցեմ, տեսնենք՝ ինչ կասի*»: Ես նայում էի  
այդ գազաններին, որքա՞ն անմեղ հայի արյուն կա դրանց փորի  
մեջ: Նստել ֆայտոնի մեջ, բացել էին քարտեզները ու մեկը մյու-  
սին ցույց էր տալիս, թե ինչպես են Կովկասը կուլ տալու:<sup>209</sup> Մոտե-  
ցավ մեր Մխիթար եղբայրը. «*Ծո՛ր Օնիկ՝<sup>210</sup>, քանի՞ արբասի՞<sup>211</sup> վերց-  
րիր, որ այս շներին բերեցիր այստեղ հասցրիր*»: «*Այո՛, չայնդ  
տաք տեղից է գալիս չէ՞, չեռքիդ զենք կա*»: «*Բա լա՞վ էր, որ մի  
սևզամ մեզ կայարանից քաղաք տարար, երկու արբասի վերցրե-  
ցիր, բայց մի արբասի արժեք: Հիմա սրանց չրի ես պտտեցնում,  
չէ՞, լա՞վ է*»: «*Հերիք է, ա՛յ օղու: Քեզ պես հերոս զինվորներ ու-  
նենք, դրա համար էլ սրանք այստեղ են հասել*»: Եկավ հիսնա-  
պետը և ասաց. «**Փաշան չեզ չի ընդունում, ասաց, որ ինքը  
նրանց հեղ բոլորովին գործ չունի, թող հեղ գնան**»:

Այդ օրը ես երբեք չեմ մոռանա. ինձ հետ մի անապատելի դեպք  
պատահեց: Դեռ մեր հիսնապետը իր զեկուցումը չէր վերջացրել,  
մի զենք կրակեց: Թուրք փաշաները սկսեցին ֆայտոնջու վրա գո-  
ռալը. «**Թեզ, թեզ դոնդար, բարբամ, թեզ դոնդար**»: Ֆայտոնջին մի  
կերպ դարձրեց ֆայտոնը, սկսեցին փախչելը, սրանք կարծեցին,  
թե իրենց վրա են կրակել: Մեր հիսնապետ Հովսեփը վազեց մեզ

մտա: «Այդ *n'վ էր կրակողը*»: Բոլորս զարմացել էինք, մեկս մյուսին էինք նայում, թե ով կարող էր լինել: Կլոր շարքով տասներկու հոգի նստել էինք, մեր դասակի Մխիթարը ծիծաղաշարժ դեպքեր էր պատմում, մենք էլ ծիծաղում էինք: Հիմա Մխիթար եղբայրը ութսուն տարեկան է և ապրում է Լենինականում, մեզ հարևան է: Մեր հիսնապետը սկսեց զենքերը ստուգել: Հերթն ինձ հասավ, պարզվեց, որ իմ զենքից է եղել կրակոցը: Ես զենքի գատվոռը չէի փակել, խաղացել էի թաթիկի հետ, ու միամիտ կրակել էր: Մեր հիսնապետը սկսեց ինձ ծեծելը, Տիգրան եղբայրը թե. «*Բնչու՞ ես փրկային ծեծում, հազիվ մի լավ քան արեց, փաշաները վախեցան, փախան, լավ է, որ մարդու չկապավ*»: Իսկապես որ, կլոր նստել էինք, ու ոչ մի փորձանք էլ չպատահեց: Թուրք փաշաները այդպես էլ վախեցան ու գնացին: Արդյոք ի՞նչ էին ուզում փաշայից դահիճները: Քանի որ մենք փակել էինք **Ղարաքիլիսա-Դիլիջան-Աղստաֆա** ճանապարհը, երևի ուզում էին խնդրել, որպեսզի Անդրանիկը թույլ տար թուրքական գործառնաերին Աղստաֆայով<sup>212</sup> անցնել Բաքու: Չգիտեմ՝ ինչքան մնացինք Դիլիջանում, դրանից հետո այլևս թուրք փաշաները չերևացին:

Դիլիջանից շարժվում ենք դեպի Ելինովկա<sup>213</sup>, ա՛յն հետ գնան ու չգան այդ դաժան օրերը: Խեղճ ժողովուրդը, գաղթականները, ոտքից գլուխ թրջված, թաղված ցեխի մեջ կամ արաբաների մեջ լցված, նահանջում են չգիտես ուր: Դիլիջանից մինչև Ելինովկա երեխաները լալիս էին, գորքն ու գաղթականությունը իրար էին խառնվել, որք երեխաները լալիս ու անվերջ թափառում էին, չգիտեմ՝ ինչ խոսքերով բացատրեմ ժողովրդի սոսկալի դրությունը: 1918թ. գարնանը Դիլիջանից սկսած մինչև Չիբուխլի<sup>214</sup> անչափ շատ էին չտեսնված տանջանքի մեջ գտնվող որբերը, գաղթականներն ու զինվորները: Կարծես բնությունն էլ իր հերթին էր ուզում մեզ պատժել: Երկինքը մառախլապատ էր, ձյունաշողախ անձրև էր գալիս, քամին էլ փչում էր դիմացից՝ հնարավորություն չտալով շարժվել: Եղանակն էլ իր հերթին էր ուզում մեր ազգին հարվածել թիկունքից: Բարձրանում էինք վերև՝ Դիլիջանի ոլո-

րաններով դեպի Սևան<sup>215</sup>: Անընդհատ տեղատարափ անձրևներ էին գալիս: Հասանք Չիբուխի, այստեղ չգիտեմ՝ ինչքան կանգնեցինք, ես նորից հիվանդացա, պառկել էի պալատկայի մեջ, տաքությունն ինձ տանջում էր: Եղբայր Տիգրանը կանչեց գնդի բժշկին՝ *Տոնափարթի*<sup>216</sup>, որը քննեց ինձ.«*Ոչի՜նչ,-ասաց,-վրան-գավոր ոչինչ չկա,-դեղ տվեց,-խաի՛ր, փաքությունդ կիջնի*»: Իսկ ես անվերջ մտածում էի անտեր-անտիրական որբերի մասին, ինքս ինձ հարցնում էի.«*Ինչո՞ւ այսպես սրացվեց, ինչո՞ւ մեր դեկավարները չկարողացան ժամանակին հարվածել թշնամուն, այդ ժամանակ այսպես չէր սրացվի*»: Մոսկալի էր որբ երեխաների ու գաղթական ժողովրդի դրությունը:

«*Հովհաննես՛ս,-ասաց Տիգրան եղբայրը,-մենք երկու օրով նորից Դիլիջան պիրի գևանք՝ որբերի համար ինչ-որ բան բերելու*»: Վեցերորդ օրը նորից շարունակեցինք շարժվել դեպի արևելք, հասանք Քյավառ<sup>217</sup>: Այստեղ մեզ տարան ծովի կողմում գտնվող մի գյուղ, զինվորներին բաժանեցին առանձին տների վրա<sup>218</sup>: Իմ մնացած տունը մի չտեսնված խոնավ տուն էր: Ես առաջին անգամ էի տեսնում աղքատության վերին աստիճանի սոսկալի պատկերը: Երկու երեխա, կիսամերկ պառկած գետնին փռված անկողնի մեջ, հիվանդությունից մրմնջում էին: «*Քույրի՛կ, չէր փունը երևի թուրքերը թալանե՞լ են*»: «*Չէ՛, եղբայր ջան*»: «*Հապա ինչո՞ւ էք այսքան աղքատ*»: «*Այս է մեր ունեցվածքը: Նայրի՛ր, եղբայր ջան, նայրի՛ր, քեզ համար ճաշ լցնեն*»: Իսկապես, որ քաղցած եմ, մի կլոր գարի հաց դրեց, մի աման էլ ջուր: «*Ի՞նչ է այս ջուրը, քույրի՛կ ջան*»,-հարցրի ես: «*Չէ՛, եղբայր ջան, ջուր չէ, չկից սուպ՝<sup>219</sup> է*»: Գրդալով սկսեցի խառնելը, միայն ձկան ոսկորներն էին երևում: Գարի հացով խմեցի ձկան ջուրը: Լավ էր, որ այստեղ միայն մեկ օր մնացինք, երկրորդ օրը ճանապարհներս շարունակեցինք դեպի Դարալագյազ<sup>220</sup>: Երբ տեղ հասանք, մեր առջև վերևից բացվեց չտեսնված գեղեցկության հսկայական մի ձոր: Երկու կողմում՝ անտառ, մեջտեղից էլ գետն էր հոսում: Եթե ժամերով էլ կանգնեիր,

նայելի Դարալազյազի<sup>221</sup> այդ չքնաղ տեսարանին, դարձյալ չէիր հագենա բնության հիասքանչ տեսարանից:

Իջանք ձորը, սկսեցինք ձորով շարժվել դեպի արևելք: Մեր գունդը գնում էր Անդրանիկի հետևից, նրա թիկնապահներն էին տասնհինգ ձիավոր, հետո էլ՝ մենք: **Մեր տղերքը բոլորն էլ սիբիրցի էին, Մարիդամիշի կովում գերի էին ընկել, այսպեղից էլ հայ տղերքին ուղղակի քշել էին Սիբիր, դրա համար էլ «Սիբիրսկի պոլկ» էին ասում**<sup>222</sup>: Երբ հեղափոխությունը հաղթանակում է, բոլորին ազատում են, սրանք էլ գալիս են Հայաստան, կամավոր գրվում և միանում են Անդրանիկի զորքին: Թիկնապահներից մեկը եկավ.«Տղե՛ք, փաշան խնդրում է, եթե «Հեղափոխություն»<sup>223</sup> երգը գիրեք, երգե՛ք»: Մեր հիսնապետը ասաց.«Ինչու չէ, շատ լավ գիրեմք, հիմա սկսենք»: «Ինչ լավ ուրախ եք, տղե՛ք»: «Ընկե՛ր Ջափա՜ն, հայրենիքը պաշտպանող զինվորները իրավունք չունեն տիրապետելու», -ասաց մեր հիսնապետը: Սկսեցինք երգելը.

*Ելի՛ր, ում կյանքը անիծել է,  
Ով ճորտ է, մերկ է և սարրուկ:  
Արդեն վառվում են մեր սրտերը,  
Արդեն կռվի ենք մենք չգրում:  
... Սա է վերջին կռիվը,  
Եվ պայքարը մեր մեծ  
Ինտերնացիոնալը աշխարհը կփրկե՞...<sup>224</sup>*

«Սիբիրսկի պոլկի» մեր զինավարժ հայրենասեր զինվորները երգելով անցնում էին Քյաշիշքյան<sup>225</sup> գյուղի մոտով: Սրանք բոլորն էլ քաջ տղաներ էին, թեև եկել էին Սիբիրից, քանի որ հայրենիքը վտանգի մեջ էր: Ա՛յս, ինչքա՛ն լավ է հայրենիքի համար լավ ընկերների հետ կովելը, կովել ու թեկուզ մեռնել հայրենիքի համար, որքան քաղցր է: Մի տան պես էինք, ամեն ինչ՝ քաղցր, անձրևը, ծարավը, անքուն գիշերները, տանում էինք միասին:

Քյաշիշքյանդը բավականին մեծ գյուղ էր, բայց դադար չտվե-

ցինք, նորից շարունակեցինք շարժվելը դեպի արևելք: Հասանք Նախիջևան: Չգիտեմ՝ ինչքան մնացինք զինվորական կազարմաների մեջ, մեզ **սուխոյ պայոկ** տվեցին: Կլոր, մեծ ակի չափ պանիր բերեցին, բաժանեցին մեզ: Պետք է Բաքու<sup>226</sup> գնանք: Նորից շարժվում ենք դեպի արևելք: Ես դեռ այսպիսի փոշոտ տեղերում չէի եղել<sup>227</sup>, փոշին կարծես դիտավորյալ շաղ էին տվել Նախիջևանից<sup>228</sup> մինչև Ջուլֆա: Փոշու մեջ մեկս մյուսիս չէինք տեսնում, կարծես փոշու երկիր լիներ Նախիջևանը<sup>229</sup>: Հասանք Ջուլֆա, այստեղ բնությունն ավելի վատ էր, քամին փչում էր փոշու հետ, ոչինչ չէր երևում: Կանգնեցինք հայի Ջուլֆայում<sup>230</sup>:

-Եկեք գնանք, Արագում<sup>231</sup> լողանանք,-ասացին տղաները:

Ես ուրախացա՝ լսելով լողանալ բառը, կարծում էի Արագը մեր Եփրատի պես խաղաղ ու գուլալ է. որ չտեսա Արագի ցեխոտ ջուրը, արագ հոսելը, զարմացա.«*Այս ի՞նչ գեղ է*», -մտածեցի ինքս ինձ:

### **Խոյի<sup>232</sup> ճակատամարտը**

Բերեցին արկղերով քիչմիչ բաժանեցին<sup>233</sup>, հաց տվեցին: Չգիտեմ՝ ինչքան մնացինք Ջուլֆայում, նորից շարժվեցինք Բաքվի փոխարեն դեպի Պարսկաստան՝ Խոյ<sup>234</sup>: Ճանապարհին ջուր չկար, քիչմիչը կերել էինք, սրտներս վառվում էր: Հասանք մի գետի, ուրախացանք, տղաները թափվեցին գետը՝ ջուր խմելու, սարսափելի բան. ջուրը անչափ աղի էր<sup>235</sup>: Սառել մնացել էինք, այսպես էլ բան լիներ, աղի գետ, այն էլ այսքան մեծ: Աղի գետի մոտից գնում ենք դեպի Խոյ: Հասանք աղի գետի կամուրջին, այստեղ թուրքի գյուղ կար: Մի մարդ, պատի տակ նստած, բողբոջովին չէր շարժվում: Մոտեցանք: Թուրքի ասկյար էր, ո՛չ վիրավոր էր, ո՛չ էլ կենդանի, այսպես սառած նստել էր: Մի քիչ էլ առաջ շարժվեցինք, ճանապարհի երկարությամբ ընկած էին թուրք վիրավոր զինվորներ, մեծ-մեծ պղնձե ամաններ, սպանված ձիեր: Զինվորներից մեկը հայերեն սկսեց խոսել.

«*Ես հայ եմ, մեր գնդում շատ հայեր կային, բայց անունները փոփոխել էին, որպեսզի չմտնան, թե հայ եմ ու մյուս հայերի պես կոտորեն*»: Հասանք Խոյի տակ գտնվող մի հայկական գյուղ<sup>236</sup>: Այստեղ լավ ջուր շատ կար, բոլորս էլ խմեցինք: Երեք օր առաջ բոլոր գյուղացիներին օսմանցիները սպանել էին, միայն երեք տղա էին ազատվել, որոնք պատմեցին, թե ինչպես էին օսմանցիները բոլորին աղի գետի մոտ սպանել<sup>237</sup>:

Մոտ օրերս այստեղ հայեր էին ապրում, ինչպիսի՞ դժբախտություն, այժմ այստեղ հավիտենական լռություն էր տիրում, քրիստոնեությունն էլ հայերի հետ խեղդված էր: Աշխարհի հայտնի գազանների՝ բարբարոս օսմանցիների սուրը այստեղ էլ էր հասել: Այլևս անմարդաբնակ այս գյուղում ոչ մի ձայն ու ծպտուն չկար, կոտորել էին պարսկահպատակ Խոյի տակ եղած հայությանը: Անցանք ավերված հայոց գյուղը, գնում ենք դեպի Խոյ: Նորից ճանապարհին ամենուր սպանված թուրք զինվորների դիակներ էին: Այդ գյուղից դեպի Խոյ կլիներ երեք վերստ: Հեծելագործ, որին ղեկավարում էր Սմբատը<sup>238</sup>, աղի գետի մոտ կռվի էր բռնվել թուրքերի հետ, հետապնդել մինչև Խոյ: Խոյի ճակատամարտում գերի բռնեցին պարսից ռազմական ավարով վեց ուղտ և մեկ ուղտապանի: Մեր գորամասին կանգնեցրին, իսկ մյուս գորամասերը շարժվում էին առաջ: Երեք թնդանոթները դասավորեցին Խոյի տակ, մեզ էլ թողեցին այստեղ որպես պահակ: Աջ ու ձախ կողմերում ցեպ տված՝ պառկել էինք ճահճի մեջ, իսկ թուրքական թնդանոթը ուղիղ մեզ վրա էր կրակում, սակայն արկերը մեզանից բավականին հեռու էին ընկնում, խրվում ճահճի մեջ: Այդ վայրկյաններին սարսափը պատում էր մեզ, ոտքից գլուխ ցեխի մեջ կորչում էինք, իսկ ռումբը չէր պայթում: Մեր կողմից էլ երեք թնդանոթներն էին ռմբակոծում, չգիտեմ թե ուր էին ուղղված հարվածները: Գրեթե խլացել էինք, ստիպված ականջներս չուլ էինք կոխում: Այս բոլորը, կարծեմ, տևեց մինչև երեկո: Միանգամից բերեցին ծանր գնդացիները, հետն էլ հետևակը եկավ. «*Շուր, թնդանոթները լծե՛ք ձիերին, հե՛տը շարժվե՛ք, նահանջ է՛ք*»: Եկավ Անդրանիկը, հրամայեց. «*Արագացնե՛լ նահանջը*»: Գրեթե կիսա-

վագ գնում ենք հետ:

**Վարդանանց գերեզմանի կողմից**<sup>239</sup> համարյա կիսավագ մի մեծ գորամաս էր շարժվում դեպի արևելք. դա թուրքական հետևակն էր: Պարզ երևում էր, որ մեր ճանապարհը փակելու և մեզ գերի բռնելու համար ուզում էին աղի գետի կամուրջին հասնել: Այսպես արագ կերպով հասանք թուրքի գյուղի կամուրջին: Թուրքական հեծելազորը, որ կլիներ հազար զինվոր, փակել էր աղի գետի կամուրջը՝ մեր նահանջի ճանապարհը: Սրանք ձիերից ներքև էին իջել, մեզ էին նայում, իսկ մեր գորքը հավաքվել էր թուրքի գյուղի մոտ: Կամրջի արևմտյան մասում մենք էինք, իսկ արևելյան մասում թուրքական հեծելազորը: Փակել էին մեր նահանջի ճանապարհը և իրենց հետևակին էին սպասում: Ահա այստեղ Անդրանիկը ցույց տվեց իր հմուտ դեկավարությունը: Նա հրամայեց, որ գնդացիների հրամանատարն ու հետևակի հրամանատարը ներկայանան իրեն: Չգիտեմ՝ ինչ կարգադրեց: Անմիջապես գորքի մի մասը գետի աջ, մյուսը ձախ կողմից համարյա վազելով գնաց: Գնդացիները սկսեցին կրակելը, մեզ ևս հրամայեցին կրակել այն բոլորի վրա, ինչ տեսնում էինք՝ ձի լինել թե մարդ: Սկսեցինք կրակելը, գնդացիներն էլ մաղում էին անընդհատ: Թուրքերը մեր կողմից այսպիսի բան չէին սպասում, քանի որ իջել էին ձիերից, նստել էին ջրի մոտ ու մեզ էին նայում: Իրոք որ, այսպիսի հարձակման չէին սպասում, ուզում էին մեզ գերի վերցնել: Թուրքերի մոտ ամեն ինչ իրար էր խառնվել, ձիերը փախչում էին՝ թողած իրենց տերերին, սպանվողներն ու վիրավորներն էլ իրար էին խառնվել: Չանցած տասը րոպե՝ մեր ճանապարհին արդեն բաց էր, այլևս թշնամու զինվորներին չէինք տեսնում, այնուամենայնիվ միմյանց շատ մոտիկ էինք, մեջտեղը աղի գետն էր, եթե լավ քար նետող լինել, կհասցներ նրանց, այնպես որ մոտ էինք: Հեռախոսով նորից հաղորդեցին.«Շուր անցնել կամուրջի մոտ»: Թնդանոթները մեզանից շուտ անցան: Հետևակին հրամայեցին.«Ինչքան թուրք վիրավոր զինվոր կա, ոչնչացնել»: Մենք արդեն բարձր տեղում էինք՝ այնտեղ, որտեղ մի քիչ առաջ թշնամին էր: Պարզ երևում էր, որ թուրքական հետևակը

արդեն մոտեցել էր: Մեր երեք թնդանոթները սկսեցին թուրքական հետևակին խփել: Մենք էլ սարի տակ թուրք վիրավորներին էինք սպանում: Ինձ պառկած մի ջահել տղա պատահեց, ուզում էի խփել, նա թե. «*Ես հա՛յ եմ, եղբա՛յր ջան*»: Ես հարցրի. «*Որտեղացի՞ ես, որ հայ ես*»: «*Սկյուրարցի*<sup>240</sup>, *պոլսեցի եմ, ապրում էիևր հայոց ժամի մուր, ինչ որ բռնեցին, անունս փոխեցի, մեր մեջ շար հայեր կային: Ինչ և մյուս ընկերներիս՝ կլինեիևր երկու հազար հոգի, հավաքեցին Պոլսից և տեղափոխեցին Վանի ուղղությամբ*»: «*Դու՞ էլ ես մասնակցել այս հայի գյուղի ջարդին*»: «*Չէ՛, մեևր Ուրմիայից*<sup>241</sup> *եկանք այս գիշեր: Ուրմիայում պաշարել էին վանեցիներին, մեզ հանկարծակի Խոյ բերեցին, վանեցիների բախարը բերեց, ազարվեցին պաշարումից: Վանից*<sup>242</sup> *հեյրևում էին ժողովրդին, բայց թուրքերը շհաջողացրին կարարել իրենց սև գործը, դուք փրկեցիք Վանի ժողովրդին*»<sup>243</sup>: «*Եղբա՛յր ջան, այդ ի՞նչ վանեցիներ են*»,-հարցրի ես: «*Վանի ժողովուրդը դեպի այս կողմն էր գաղթում, թուրքերը հեյրևում էին, որ կուրորեին անմեղ ժողովրդին, չէր հաջողվում, շար լավ էին պաշտպանվում, և՛ նահանջում էին, և՛ կռվում: Վանից այսպես հասանք մինչև Ուրմիա, թուրքերը բաղաքի բոլոր ճանապարհները փակել էին, բայց դուք փրկեցիք վանեցիներին, բավականին ժողովուրդ կլինեիր*»: «*Որտեղի՞ց ես վիրավոր*»: «*Աջ ուրքս չեմ կարող շարժել, չգիտեմ՝ ինչ է եղել*»: Շավարը վերև բարձրացրի, արյունը հոսում էր. «*Ահա դաբադայիս մեջ թութուն կա, դի՛ր վերքի վրա,-մուրիցս հանեցի քննրն ու կապեցի,-դե՛, մնաս բարով*»: «*Մի բուպե ինչ լսի՛ր: Մեր բինբաշին*<sup>244</sup> *վիրավոր է, կարո՞ղ ես, գրի՛ր ու սպանի՛ր: Չիւնայես, Ուրմիայի շրջանի հայ գյուղացիների ջարդարարն է*»: «*Հիմա տեսնեն*»,-վազելով գնացի, փնտրում եմ, ամենուր սպանված դիակներ են, մի քիչ էլ առաջ գնացի, փնտրում էի բինբաշուն, մեկ էլ տեսնեմ՝ մեկի գանգը փշրած, հագին կարմիր սապոգներ: Շավարը, շորերը ասում էին, որ հենց սա է բինբաշին:

Մեկ էլ իրար հաղորդում են. «*Արագ հե՛ր գալ, թողնե՛լ ամեն*

*ինչ*»։ Ի՞նչ պատահեց արդյոք։ Նորից են հաղորդում. «*Արս՛գ, արս՛գ թնդանոթների մուր*»։ Ես էլ վազելով գնացի։ Տղաների մեծ մասը դիրքավորվել էր սարի վրա, ցույց էին տալիս Խոյի ուղղությամբ։ Նայեցի, տեսնեմ՝ այնպիսի մի փոշի էր, կարծես մրրիկ լիներ. ճանապարհից դեպի մեզ էր շարժվում փոշու հոյակապ կույտը։ Երևի թշնամու հեծելագորն է։ Պատրաստ պահեցինք գնդացիները՝ ուղղելով դեպի ճանապարհը։ Մենք էլ դիրքավորվեցինք ու սպասում ենք։ Թնդանոթները թողեցինք ճանապարհի վրա, բարձրացանք սարի վրա, այնպես էին գալիս, չգիտեմ՝ ինչ պատկերացնեմ։ Առջևից երևում էին, բայց փոշու ծայրը չէր երևում, չգիտեմ՝ որքան կլիներին։ Մրրիկի նման այնպես անցան, նույնիսկ չնայեցին, թե ով կա ճանապարհին, կլիներին հինգ հարյուր հոգի։ Մշեցիները քաղաքում թալանի հետևից էին ընկել, բայց իմանալով, որ նահանջ է, չգիտեին, թե ինչպես էին փախչում։

Արևն արդեն մայր էր մտել։ Նորից թնդանոթները լծեցին ձիերին, գնդացիները՝ առջևից, մենք էլ՝ հետևից, սկսեցինք շարժվել դեպի Ջուլֆա։ Տիգրանը մի ձի էր բռնել, որի վրա ճանապարհի պայուսակներս, զենքերս կախեցինք, ես էլ վրան նստեցի, ու այսպես գնացինք։ Բավականին գնացինք, նա թե. «*Իջի՛ր, Հովհաննես՛ս, մի քիչ էլ ես նստեմ*»։ Այնքան մութ էր, չգիտեմ՝ ինչքան գնացինք, Տիգրան եղբայրը թե. «*Հիմա էլ դու՛ նստիր*»։ Ինձ էլ այդ էր պետք. նստեցի, չգիտեմ՝ ինչքան գնացինք, քունս տարավ, մեկ էլ, շրթխկ, ընկա ներքև։ «*Ի՞նչ եղավ, Հովհաննես՛ս, որքե՞ղ դժգուշեց*», - հարցրեց Տիգրան եղբայրը։ Ես ողջ հասակով պառկել եմ առվի մեջ։ Ձին չկար, ինձ թողեց, սկսեց ձիուն փնտրելը, խեղճ մարդը շատ փնտրեց, բայց չկարողացավ ձիուն գտնել։ «*Ի՞նչ անենք, զենքերը չկան, մնացածը՝ ջհանդամը*»։ Իսկ ես պառկել եմ, չեմ ուզում շարժվել։ «*Վե՛ր կաց, Հովհաննես՛ս, կարող է թուրքի հեծելագորը մեզ հետրապնդի, այն ժամանակ գերի կընկնենք*»։ Մի կերպ հասանք Ջուլֆա։

## Մի երկու խոսք էլ Խոյի ճակատամարտի մասին

Ուրեմն այսպես. Սմբատը թուրքի գյուղի մոտ հանդիպում է թշնամու հեծելագործին, որը շարժվում էր դեպի Ջուլֆա<sup>245</sup>: Թուրքերը դեպի Խոյ են փախչում: Սրանց հետևակը փախչելով լցվում է Խոյի բերդը<sup>246</sup>, իսկ հեծելագորը շարժվում է դեպի արևմուտք: Անդրանիկն ուզում էր բերդում գտնվող թուրքական հետևակին զինաթափ անել, ու այսպես միանգամից դրությունը փոխվում է: Ուրմիայից նորից թուրքական հեծելագոր ու հետևակ են գալիս: Սմբատը նահանջում է Վարդանանց գերեզմանի ուղղությամբ: Նրա ձին վիրավորվում է, ինքն էլ գերի է ընկնում երեք թուրք հեծյալի մոտ. «**Թասլի՛ն, քասլի՛ն**», - գոռում են թուրք զինվորները: Սմբատն իբրև թե հանձնվում է, հանում է սուրը, դեն գցում, գլխի լավ փափախն էլ հետը: Թուրք զինվորները վազում են ավարը վերցնելու, այստեղ Սմբատը ատրճանակը հանում է, սպանում երեքին էլ ու փախչում՝ նստելով սրանցից մեկի ձին: Եվ այսպես թուրքական հեծելագորը, հետևելով Սմբատին, գալիս է մինչև աղի գետի կամուրջն ու մեր ճանապարհը փակում<sup>247</sup>: Այստեղ լավ գորավարի ղեկավարության շնորհիվ ազատվեցինք թուրքի սրից: Եվ ո՞րն էր Անդրանիկի՝ Պարսկաստան անցնելու նպատակը. որպեսզի այդտեղից միանար անգլիական զորքին ու կռվեր թուրքերի դեմ: Ահա մեր Խոյ գնալու նպատակը: Այս է բոլորը, ինչ ես գիտեմ Խոյի ճակատամարտի մասին:

Ջուլֆայում էնպիսի քամի էր, որ էլ մի ասի, աչքերդ չէիր կարող փոշուց բացել: Երկրորդ օրը՝ առավոտյան, ես իջա Արագը, որ երեսս լվանամ, մեկ էլ տեսնեմ՝ մեր գյուղի Մայնոսը իր մեծ տղու՝ Կարապետի հետ կանգնել մտիկ է անում Արագին: Չգիտեմ՝ ինչպես ասեմ, ես էնպես ուրախացա, վազեցի փաթաթվեցի Մայնոս մայրիկին, էնպես եմ համբուրում ու հետն էլ լալիս: Ես ուրախությամբ չէի կարող խոսել. «Վա՛յ, դու՞ ես, Հովհաննե՛ս, էս ինչ լավ տղաս ես եղել: Հանգստացի՛ր, Հովհաննե՛ս ջան: Լսի՛ր, մեր Հարությունին չե՛ս տեսել»: «Ի՛նչ է եղել որ, մայրի՛կ»: «Էս երկու օր է՛ չկա, չգիտենք՝ ինչ եղավ, վայթե եկավ լողացավ, խեղդվեց, ինչ

*եղավ՝ չգիրենք, էսպիսի փորձանք եկավ մեր Հարությունին: Յավալի է, Հովհաննես՝ ս, դու գիրես՝ ինչպիսի տանջանքով պահեցի, հիմա անլրեղի կորավ, էսօր երրորդ օրն է»:*

Իսկապես որ, էս կնիկը մեր գյուղի հերոս կնիկն էր: Մայնոսը արքայ չգնաց, իր երեք երեխանցով մնաց Եփրատի բերանը, պահեց, մինչև ռուսը եկավ: Գիշերները գնում էր թուրքի գյուղը գողության, մթերք բերում: Ոչ մի հերոս տղամարդ չարեց այն, ինչ որ նա՝ Մայնոսը. նա իր ընտանիքը ազատեց: «*Լավ, մնա՛ս բարով, Հովհաննես՝ ջան, մենք էլի կհանդիպենք, գնանք Հարությունին ման գալու*»:

Չորրորդ օրը հայտնեցին, որ պետք է գնանք Աբուլիս<sup>248</sup> Յայջի<sup>249</sup> վրայով. «*Առաջինը թուրքի գյուղ է, չեղևի մի բանի չեռք տաք...*»:

### Կարևոր տեղեկություն

Հարգելի՛ ընթերցողներ, հայ և ադրբեջանցի՛ հայրենասերներ և իսկակա՛ն կոմունիստներ, էս ձեզ հաղորդում եմ Նախիջևանի և Չանգեզուրի<sup>250</sup> 1918թ. դեպքերի մասին մի կարևոր տեղեկություն: Ես՝ Հովհաննես Հովհաննիսյանս, միացա Անդրանիկի բանակին 1918թ. Քոլագիրան կայարանում<sup>251</sup>: Ես, ամսագրի մայիսի առաջին համարում Անդրանիկի մասին Շուշինսկու<sup>252</sup> գրապատությունը կարդալով, ստիպված եմ գրել իրականությունը, ինչ տեղի էր ունեցել բանակում՝ սկսած Քոլագիրանից մինչև Դիլիջան, Չիբուխլու, Բյավառ, Դարալագյազ, Նախիջևան, Չուլֆա, Խոյ, նորից Չուլֆա, Աբուլիս, նորից Նախիջևան, Պիսո, Քաջարան, Տաթև, Գորիս, Սիսիան, Դավալու, վերջում Էջմիածին: Հիմա էս ձեզ կպատմեմ իրականությունը, ոչ թե Շուշինսկու պես կգրապարտեմ: Ես տասնութ տարեկան էի այդ ժամանակ, մեկ առ մեկ միտքս է այն բոլորը, ինչ որ կատարվել էր՝ Խոյի, Նախիջևանի ճակատամարտերը, Գորիսի Ղաբուզ ձորի ճակատամարտը<sup>253</sup>, Յայջիի, Ադուտի<sup>254</sup>, Վադուտի<sup>255</sup> դեպքերը<sup>256</sup>: Կպատմեմ ի-

րականությունը այնպես, ինչպես որ եղել է, էսօրվա պես միտքս է:

Ամո՞թ, հազա՞ր ամոթ Շուշինսկու պես գրպարտիչին, չի էլ ամաչում, իրեն պատմաբան է համարում՝ պնդելով, թե իբր Անդրանիկը աղբբեջանցունց գյուղերը կոտորել է: Այդպիսի մրող մարդկանց պետք է դատեն ժողովրդի առաջ, որ բոլոր ազգերը իմանան, որ այժմ խաղաղ ապրող եղբայր ժողովուրդների միջև՝ հայ, աղբբեջանցի, թուրք, ուզում են թշնամություն սերմանել: Ես մի գյուղացի կիսագրագետ տղա եմ, զարմանում եմ, որ էս ժամանակ էլ Շուշինսկու պես գրպարտիչ մարդիկ դեռ գոյություն ունեն: Ամո՞թ, հազա՞ր ամոթ, ես կենդանի մարդ եմ ու եղ բոլոր-բոլորը հիշում եմ այսօրվա պես: Ես յոթանասունի շեմին եմ, դեռ հիշողությունս լրիվ տեղն է, և հիշում եմ, թե ինչ տեղի ունեցավ 1918-1919թթ. Անդրանիկի բանակում: Երևի գրպարտիչ Շուշինսկին երկուերեսանի է, կարծում է՝ մարդ չի մնացել, որ իրականությունը պատմի, բոլորը գոհ գնացած կլինեն 1920թ., երբ թուրքական զորամասերը Էրզրումից սկսին արշավել դեպի Հայաստան՝ բերելով մահ և ավերածություն: 1920թ. գոհ գնաց հիսուն հազար հայ<sup>257</sup>, նորից չտեսնված քանակով ավելացավ հայ որբերի թիվը, սովն ու հիվանդությունն էլ իրենց հերթին: Ահա հեռու անցյալի տարիների հետքերը լրիվ դրոշմվել են հիշողությանս մեջ, կիիշեմ ողջ իրողությունը մեկ առ մեկ, այն, ինչ որ եղել է: Իբր թե Անդրանիկը աղբբեջանցունց գյուղերը ջարդելով հասել է Ղարաբաղ<sup>258</sup>: Սրտի ցավով եմ խոսում այդ մասին, այդ ամենը բոլորովին էլ ճիշտ չէ և չի համապատասխանում իրականությանը: Ահա մեկը ես՝ Հովհաննես Հովհաննիսյանս՝ Անդրանիկի զինվորներից մեկը. եթե իմ վկայությունը քիչ է, ապա Լենինականում Անդրանիկի զինվորներ էլի կան ու կարող են հաստատել իրականությունը: Թանկագին ընթերցողներ, եթե դուք երբևիցե կարդաք այս պատմությունը, ապա հավանաբար ավելի շատ հարցեր կտաք ինձ: Ինչպե՞ս կարող է Շուշինսկու պես պատմաբանը սուտ գրել: Այո՛, իսկապես որ զարմանալի սուտ է: Ես կենդանի վկա եմ, և ինչ որ եղել է, հիմա կպատմեմ: Սակայն եթե դուք ինձ հարցնեք, թե մեղավո՞ր է Շուշինսկին, ապա ես կպատասխանեմ, որ հարյուր տո-

կոտավ մեղավոր է:

Չուլֆայից շարժվանք դեպի Աքուլիս: Շարքով գնում էինք Յայջի գյուղի վերևից. մեզ հրամայված էր, որ գյուղ չմտնենք: Մեկեն երկու թնդանոթ զցին<sup>259</sup>, մենք շարունակեցինք գնալ դեպի հայի գյուղը: Էս Յայջիի ժողովուրդը խառնվավ իրար, սկսին անցնել Արագի մյուս կողմը<sup>260</sup>: Մենք բոլորովին գյուղ չմտանք, հասանք Աքուլիս, Էդտեղ իմացանք, որ թնդանոթ զցողը ռուս է եղել, ու գլուխը կտրել են, որպես թե լավ չի կրակել<sup>261</sup>: Իսկ կնոջը սաղ բերեցին, կլիներ մոտ երեսունհինգ տարեկան: Իրար մոտ էին Յայջին ու Աքուլիսը, երեք կմ չէր եղնի՝ Արագի բերնի հետ: Աքուլիսում մեզ մեծ փորձանք եղավ, զորքի մեջ հիվանդություն ընկավ, չգիտեմ՝ ինչ հիվանդություն էր: Աքուլիսում թթենի շատ կար, զինվորներին բաժանեցին թթենիների տակը, մեկ զինվորին՝ մեկ ծառ, իրարից հեռու: Գնդի բժիշկ **Տոնապարտը**<sup>262</sup> զիշերուզօր հետևում էր հիվանդ զինվորներին: Մեզանից բավականին զոհեր եղան<sup>263</sup>: Էսպես չգիտեմ՝ ինչքան. մեռնողը մեռավ, մնացողը մնաց, հսկայական բանակը լրիվ սնանկացավ: Մնաց մի քիչ բան: **Խոյի ճակագրամարտից հեկո Սմբարը մոյր հազար հինգ հարյուրանոց հեծելազորով մեզնից բաժանվեց**<sup>264</sup>: Չգիտեմ՝ որքան մնացինք, մի օր էլ սուրհանդակ եկավ, որ թուրքը շարժվում է Նախիջևանի վրա<sup>265</sup>, ու մեզ օգնության են կանչում: Մենք հասանք Նախիջևան, առավոտ արդեն թուրքը լցվել էր քաղաք: Մյուս կողմից էլ տեղական խաներն իրենց խմբերով քաղաքն իրենց ձեռքին էին պահում: Մենք դիրքավորվեցինք Նախիջևանի արևելյան մասում, իսկ թուրքերը քաղաքում էին, մեր մեջտեղեն անցնում էր մի փոքր գետ: Կռիվը սկսեցին թնդանոթները: Թուրքերը երեք-չորս թնդանոթով քաղաքի այգիների միջից ռմբակոծում էին մեր դիրքերը: Մենք էլ պատասխանում էինք երեք թնդանոթից<sup>266</sup>: **Թուրքական արկերը նորից չէին պայթում և մեզ էլ վնաս չէին փայխ, բավական հեռու էին ընկնում, մենք կարծում էինք, թե Խոյում ճնջլուխի մեջ էին ընկնում, դրա համար էլ չէին պայթում, բայց այսրեղ էլ՝ Նախիջևանում, չոր հողի վրա էլ չէին պայթում: Կռիվը շարունակվեց մինչև իրիկուն:** Նա-

խիջևանցիները չեկան մեզ օգնության: Մենք էլ քիչ էինք, մեզ նահանջելու հրաման տվին: Ինչ պիտի անեինք, քանի որ տեղական խաները թուրքին օգնում էին, իսկ մեզ օգնող չկար, և մենք ավելի էինք թուլանում: Վերջապես հասանք Պիսո<sup>267</sup>, մի երկու օր մնացինք Պիսոում, թնդանոթները թաղեցինք գետի բերանը, գետի աջ կողմում: Երեք թնդանոթն էլ թաղեցինք: Նորից շարունակեցինք ճանապարհներս դեպի Ղափան<sup>268</sup>, բարձրացանք դեպի սարը<sup>269</sup>, նորից իջանք ցած. շուրջը կանաչ էր, իսկական դրախտավայր: Քաջարանով<sup>270</sup> հասանք Ղափան:

Հարգելի՛ ընթերցողներ, էստեղ մի շատ կարևոր բան հիշեցնեմ Ղափանի դեպքերի մասին: Երկու թուրք մեզ հարցնում էին. «**Փաշա հարդա՞**»: «*Ի՞նչ պիտի էնեք փաշային*»: «*Չեր ասկյարները մեր չիուն յայլայից բռնել են, փաշային պիտի գանգալվենք*»: Ես մանրամասն չեմ կարող գրել, թե ինչ էին թուրքերը բողոքել փաշային, բայց ձին գողացող հայ զինվորին Անդրամիկը գնդակահարեց:

Ղափանում մնացինք երկու օր, Ղափանը բոլորովին դուրան տեղ չունեք, չորս կողմը անտառ էր: Ղափանից գնացինք Տաթև<sup>271</sup>, այստեղ մնացինք մեկ օր և նորից շարժվեցինք դեպի Գորիս<sup>272</sup>: Գորիսը շատ սիրուն քաղաք էր, այգիներով. մենք հանգստանում էինք քաղաքի այգում: Այստեղ նորից տեսա մեր գյուղի Մայնոսին, բարևեցի և հարցրի, թե գտե՞լ են Հարությունին: «*Չէ՛, ինչ գտնել, այդպես էլ կորավ*: *Հովհաննես՛ս, արի գնանք մեր տունը, մի քանի օր մնա, գյուղի կարրորն առնենք*»: Ես ուրախությամբ գնացի Մայնոս մայրիկենց տուն: Մայնոսի աղջիկը ինձ չճանաչեց. «*Աղջի՛, լավ նայիր, կճանաչես*»: «*Վա՛յ, մայրի կ՛, Հովհաննես՞սն է*»: Լավ ճաշ եփեց էդ օրը Մայնոս մայրիկը, իրիկունը նստել ենք և խոսում ենք մեր գյուղի մասին:

-Հովհաննես՛ս, ինչպե՞ս եղավ, որ դուք աքսոր չգնացիք:

-Մայնո՛ս մայրիկ, Մրթոն իր երդումը չէր մոռացել, հայրիկիս հետ եղբայր էր եղել, իրիկունը եկավ հայրիկիս ասաց, որ առավոտ շուտ գնանք Իբրահամ աղայի մարագը, մինչև տեսնենք, թե

վերջը ինչ պիտի էղնի: Առավոտ շուտ գնացինք Իբրահիմ աղայենց մարագը, մի երկու ժամ չքաշեց, սկսին գյուղից ժողովրդին հանել: Լացն ու վայնասունը աշխարհ էր բռնել, թուրքերն ու քրդերը լցվել էին գյուղը և տակնուվրա էին անում տները: Երկու օր մնացինք մարագում: Քույրիկիս ութ ամսական երեխան ձենով այնպես էր լալիս: Քույրս երկու-երեք օր հաց չէր կերել: Ու՞մ միտքն էր հաց ուտելը, քանի որ մահը ավելի մոտ էր, բոլորովին կուրծքը չորացել էր, իսկ երեխան ձայնով մեկ լալիս էր, մյուս կողմից Դերսիմի քրդերը լցվել էին գյուղը, չգիտեմ՝ ինչ էին ման գալիս: Մեկ էլ քույրս՝ Սրբուհին, ասաց.«*Հովհաննես՛ս, գնա՛, կանչի՛ Մուկուչին*»: Ես գնացի Մուկուչին կանչեցի՝ ասելով.«*Քույրիկ Սրբուհին քեզ կանչում է*»: Միասին եկանք, ճամփին հանդիպավ Դուրսունը, հասանք մեր նոր տունը՝ մարագը: Քույրիկս թե.«*Մուկու՛չ, վերցրու՛ այս երեխային, փար թարփի՛ Եփրատը*»: Ես ու Դուրսունը զարմացած մեկս մեկիս ենք նայում: Էս մեր Մուկուչը առանց խոսքի վերցրեց երեխային և շարունակեց ճանապարհը դեպի Եփրատ: Ես ու Դուրսունն էլ հետևում էինք Մուկուչին, սուսուփուս հասանք Եփրատին: Էս անխիղճը մեկեն երեխուն թարփեց Եփրատը: Մենք սառել մնացել էինք, իսկ էս մեր Մուկուչը բոլորովին չզարմացավ իր չարագործության վրա: Էսպես մտիկ էինք անում, իսկ Եփրատը մեծ սիրով գրկել ու տանում էր երեխին: Երեխան մեկեն ուժեղ ճչաց ու սուզվեց ջրի տակ...

Ես սկսի մեկառնեկ պատմելը մեր գյուղի հետ կապված այն ամենը, ինչ որ էս գրքում գրված է: Մայնոս մայրիկը սկսեց ախուժախ էնել, վերջում ասաց.

-Հովհաննես՛ս, արի քեզ նշանեմ իմ աղջկա հետ, ես ձեզ պաշտպան կեղնիմ, քանի դեռ կենդանի եմ:

-Ես, մայրի՛կ, խռով եմ Հովհաննեսի հետ:

-Էդ ի՞նչ նորություն է, ա՛յ աղջի:

-Ես լավ ծեծ եմ կերել իրա երեսից:

Ես թե.

-Ես չեմ հիշում, ի՞նչ ծեծ:

-Չե՞ս հիշում, Թեյր մամի<sup>273</sup> ծեծը:

-Հա՛, հիշեցի, ես մեղավոր էի, որ քեզ ծեծեց Թեյր մամը:

-Հլա պատմի՛ր, Հովհաննե՛ս, էդ ինչպե՛ս է եղել:

-Մայնո՛ւ մայրիկ, ես գնում էի գաղլա<sup>274</sup>, մեկ էլ հանդիպավ ինքր, թե.«Հովհաննե՛ս, արի փանջ գողանանք»: «Որորեղի՛ց»: «Թեյր մամի փանջերից»: «Հասանք բահիչի քովը, ինքը ինչնից շուր մրավ բահիչեն, իսկ Թեյր մամը լոբի էր հավաքում, ես էլ թողի ու փախա, իսկ նրան մի լավ ծեծեց: Ես մեղավոր էի, որ նրան իր բլիկկություն համար ծեծեցին: Ահա բոլորը, մայրիկ՛»:

-Լավ, կնշանեն, կբարիչեք, դուրբան էղնի քեզ պես տղուն:

Գորիսում մեզ հանգստություն չտվին<sup>275</sup>, տեղական մուսուլմանները ոտքի էին ելել, բոլոր ճանապարհների հաղորդակցությունը կտրվել էր: Հայ գաղթականներին սպանում էին, Շուշին վառել էին, հայերին ջարդել<sup>276</sup>: Շարժվում էին Գորիսի վրա: Միսիանի<sup>277</sup> և Գորիսի մեջ հաղորդակցություն չկար: Վաղուդի վերևից անցնող գաղթականներին սպանում էին: Մեզ չթողեցին, որ մի քանի օր հանգստանայինք: Թուրքերը արդեն մոտեցել էին Ղաբուզ գյուղի մոտ գտնվող հայկական գյուղին, սկսել էին հարձակվել և վառել գյուղի ջաղացները: Մեր հարվածին չդիմացան ու նահանջեցին Ղաբուզ ձորը<sup>278</sup>: Թուրքերը դիրքավորվել էին արևելքից դեպի ձախ՝ անտառի մեջ: Ղաբուզ ձորը լիքն էր սպանված հայ գաղթականներով: Մի շաբաթ կռվանք, թուրքերը թողին գնացին, մենք էլ ետ եկանք: Կամուրջից այն կողմ չենք անցել: Ահա ողջ իրողությունը: Մենք Ղաբաբաղ բոլորովին ոտք չենք դրել: Մեզ բաժանեցին գյուղերի վրա: Մեր հիսունյակին տարան Խնձորեք<sup>279</sup>: Չարմանալի գյուղ էր Խնձորեքը<sup>280</sup>, քարե տներ էին: Այն ինձ վրա ճնշող տպավորություն թողեց: Ես առաջին անգամ էի տեսնում այսպիսի հայ ժողովուրդ: Կանայք բոլորովին ուրիշ ձևի էին հագնված և խոսում էին անհասկանալի լեզվով, շատ հեռու էին մեր Երզնկայի ժողովրդից թե՛ խոսելով, թե՛ հագուստով, թե՛ մաքրությամբ: Գյուղի տներն էլ նման չէին մեր Երզնկայի տներին, դրանք քարից էին, բայց փորած էին ձորի դռի վրա,

գետնափոր էին: Կանայք բերանները ծածկում էին, կեղտոտ, պատռված շորերով երեխասները քոսոտ էին: Ծուռուծուռ փողոցներում շան հաչոց էր գալիս: Մեծ մարդիկ ման էին գալիս երկուերեք մետրանոց կոպալները ձեռքերին: Տգեղությունը չափից դուրս էր: Այն տունը, որտեղ ես էի մնում, գտնվում էր գյուղի արևելյան կողմում, որտեղ որ ծովում էր ճանապարհը: Առաջին օրը զարմացա տան վրա: Ապրողները մեծ կնիկըմ էր, երեք-չորս երեխա, մի փոքր՝ տասներկու-տասներեք տարեկան հարս էլ կար: Ես հարցրի. «*Էս ինչ օրենք է, մայրիկ, էսպես փոքր աղջիկներին հարս եք անում*»: «*Շար շուրուց կա եղ օրենքը, քանի որ թուրքերի թարաքյմեքը*<sup>281</sup> *տանում են հայ աղջիկներին, դրա համար էլ էսպես շուր ենք ամուսնացնում*»:

Մի տասը օր չէինք հանգստացել, նորից գնացինք Գորիս, այետք է գնայինք Սիսիան<sup>282</sup>, Սիսիանի թուրքերը երեսուն հոգու սպանել էին՝ հայերի, որոնք Սիսիանից ուզեցել էին գալ Գորիս. հասել էին Վաղուտ<sup>283</sup> գյուղի ուղղությամբ գտնվող սարի տակը, զինված թուրքերը հարձակվել էին խեղճ գաղթականների վրա ու բոլորին սպանել: Մեր հիսունյակին դրկեցին, որպեսզի պաշտպանենք ճանապարհը: Առավոտ հաց կերանք և գնացինք դեպի արևմուտք: Հասանք մի չափի երեք բլուրների, որոնք իրար նման էին: Բավականին գնացել էինք, երբ երևաց Սիսիանի դուրանը: Մեկ էլ սկսին քարերի տակից մեր վրա կրակելը: Թուրքերը տեսան, որ մենք շատ ենք, քարերի տակից ելան ու սկսեցին փախչել, մի տասը հոգի կլինեին: Բոռալով գյուղացիք էլ իրենց հերթին սկսին փախչել դեպի ձորի կողմը: Քայլում էինք շոշով, սպանված գաղթականները ուռել էին, ճենճահոտը բռնել էր աշխարհը: Սպանվածներին թաղեցինք կամրջի տակ, իսկ Աղուտի-Վաղուտի թուրքերը փախան դեպի արևելք՝ դեպի ձորը: Մենք բոլորովին գյուղ չմտանք, հասանք Բռնակոթ<sup>284</sup>: Մեզ բաժանին տների վրա, ես մնում էի ջաղացի քովը գտնվող մի տանը: Հետաքրքիր տեղ էր: Մի մեծ քարի ճեղքից ջուրը դուրս կուտար, տակն էլ երկու-երեք ջաղաց կար ջրի վրա: Մի տասը օր մնացինք: Բավականին գաղթականներ եկան լցվեցին Աղուտի և Վաղուտի գյուղերը:

Արդեն 1919թ. գարունն էր: Մի անգլիական գեներալ էր եկել Գորիս<sup>285</sup>, ասում էր. «*Էլ աշխարհում ոչ մի տեղ կռիվ չկա, խաղաղություն է ամեն տեղ*»:

Մենք պետք է շարժվեինք դեպի արևմուտք: Մեր հիսունյակը Խալաջա<sup>286</sup> գյուղում էր, որտեղից որ սկիզբ էր առնում Ռոտտանը<sup>287</sup>:

Հարգելի՛ ընթերցողներ, դուք կարծեմ հիշում եք մեր Նազլուին՝ Մանուկի նշանածին: Ահա տեսե՛ք, թե սերը մարդուն ուր է հասնում: Նազլուին ես տեսա Սիսիանի Ղալաչա<sup>288</sup> գյուղում: Ղալաչան մի փոքր գյուղ էր Սիսիանից դեպի արևմուտք: Ռոտտանը սկիզբ էր առնում ձորի միջից: Իմ եղբայր Տիգրանը թե. «*Եղբա՛յր, մարդիկ խելոռել են, իրանց հային չեն նայում, որ սոված քիչ է մնում մեռնեն, ամուսնանալու մասին են մտածում*»: Ես հարցրի. «*Ի՞նչ է եղել*»: «*Էստեղ մի բասենցի ընտանիք կա, Հովհաննես՛ն, մի թուրքի էլ աղջիկ, զոռով ամուսնացնում են էդ բասենցի տղայի հետ*»: Ես մեկեն հասկացա, որ դա Նազլուն կեղնի, սիրտս էլ սկսեց թարտալ, ասի՝ արի գնանք, տեսնենք էդ աղջկան: Ինչպե՛ս պիտի տեսնեմ իմ հարսին: Ներս մտանք այնտեղ, որտեղ մնում էր Նազլուն: Ես տեսա, մեկեն շշմեցի, դուրս ելա՝ Նազլուն է, Նազլուն: Ես ինձ ասում էի. «*Գիտեմ, իրոք նա է*»: Ես ինձ լրիվ կորցրեցի: Ելա դուրս, ի՞նչ անեմ. գնամ խոսեմ, ոտքերս թուլացել էին, առաջ չէին գնում, ի՞նչ անեմ, հայտնեմ, որ Մանուկը սպանված է, նորից ցավ պիտի պատճառեմ: Պառկել եմ, միտքս ընկավ Մանուկը, լալիս եմ:

Առավոտ շուտ հավաքվեցինք, որ շարժվենք դեպի արևմուտք, գնում ենք դեպի Քյաշիշքյան<sup>289</sup>, Քյաշիշքյանդից՝ դեպի Դավալու<sup>290</sup>: Այստեղ առաջին անգամ մենք տեսանք անգլիական և հնդիկ զինվորներին<sup>291</sup>, մեծ-մեծ ջորիների: Մի օր սպասինք Դավալուում<sup>292</sup>, հաջորդ օրը գնացք եկավ, լցվանք մեջը, հասանք Էջմիածնի<sup>293</sup> ստանցին: Ցած իջանք, գնացինք Էջմիածին: Երկրորդ օրը ես ու Տիգրան եղբայրս սկսինք ման գալ Էջմիածնի վանքի

բոլորը, այսինքն՝ ոչ միայն ես ու Տիգրան եղբայրը, այլև բոլոր զինվորները ման էին գալիս՝ տեսնելու համար Էջմիածնի հրաշքները<sup>294</sup>։

## Էջմիածնում

Հասանք մի ընդարձակ բակ, վանքի բակում<sup>295</sup> առաջներս բացվեց մի չտեսնված սարսափելի տեսարան։ Լսվում էր սոված, կիսամեռ երեխանց ձայնը, կանանց տնքոցը։

-Ե՛տ դարձիր, եղբա՛յր, ես չեմ կարող դիմանալ էս սարսափելի դրությամբ, էս ի՞նչ բան է, մի՞թե չեն կարող մի բանով օգնել էս խեղճ ժողովրդին, էլ ինչի՞՞ համար է էս Էջմիածինը, եթե իրենց քթի տակ մեռնում է ժողովուրդը,-կանգնել մտիկ ենք անում,-գնանք, եղբա՛յր։

-Ապասի՛ր, Հովհաննե՛ս, մի՞թե ոչ մի օգնություն չեն տալիս, չեն հավատում,-մոտեցավ մի կնկա, հարցրեց,-քույրի՛կ, շուտու՞նց է, որ էստեղ եք։

-Հա՛, լա՛ն։

-Բա ձեզ ո՞վ է կերակրում։

-Ոչ մի մարդ, կանաչով ապրում ենք։ Սոված կոտորվեցինք, մեր տնից մնացել ենք չորս քյուֆլաթ, քսան ջան էինք։ Էսօր մեռավ զիմ տեքրը։ Առավոտ հավաքին, արաբով մեռելների հետ տարան։

-Ահա քեզ փող,-ասաց Տիգրան եղբայրը,-ինչ որ կա քովս։

Մի մեծ հայաթ էր, ոնց որ հիմիկվա գարաժ լիներ՝ փոքր-փոքր կտրտած։

-Էս ինչի՞՞ համար է էս մեծ հայաթը։

-Խաղաղ ժամանակ ուխտ էին գալիս ուրիշ տեղերից, նրանց համար է, որ գիշերեն<sup>296</sup>։

Հեռացանք Էդտեղից.«Արի գնանք, վանքի լիճը տեսնենք»<sup>297</sup>։

Վանքի լիճը բավականին մեծ էր: Վարդապետները մասն էին գալիս՝ թագրահները ձեռքներին չխկչխկացնելով: «*Էս ի՞նչ լիճ է, եղբայր*»: «*Ամառը վանքի հողերն են ջրում*»: Մենք շարունակեցինք լճի կողքով մասն գալը: Էս վարդապետները իրանց կազմվածքով ոնց որ մեկ-մեկ քոռ բուղա էղնեին: «*Տեսնու՞մ ես, եղբայր, մեր հոգևորականները միայն իրանց մասին են մտածում*»: «*Գիրե՞ս, Հովհաննէ՛ս, որ ասում են երեխա չունեցողը խիղճ չունի, դա ճիշտ է, ահա քեզ օրինակ: Մեր սուր վարդապետները հարուստ վանքի տերերն են, էլ ի՞նչ է հարկավոր իրենց: Աչքերի առջև հայ ժողովուրդը կոտորվում է սովից, ոչ մի օգնություն ցույց չեն տալիս: Մի՞թե, եղբայր, ուրիշները պետք է հասկացնեն, որ քո ազգը մահանում է: Չիղեմ, չիղեմ, Հովհաննէ՛ս ջան, ի՞նչ ասեմ*»:

-Սրանց գլուխներին ինչու՞ է պոպոլոզ դրված:

-Վարդապետների նշանն է, որ տարբերվեն տերտերներից, երևի տերտերները խղճով լինեն սրանցից:

Վանքի բակում սոված մեռնող մարդկանց ողբը մինչև հիմա ականջներումս է: Էջմիածնի զարհուրելի տեսարանը գնա ու հետ չգա, էդ դաժան օրերը՝ նույնպես: Մենք շատ տեղեր եղանք՝ Ղափան, Գորիս, Դարալագյազ, ապրում էին լավ ու վատ, գոնե չէին մեռնում սովից: Լավ, թուրքին ասում են էսպես վարվեց, էնպես վարվեց հայերի հետ, մեր թշնամին է: Մեր հայրենիքի կենտրոնում՝ Էջմիածնում, սովից մեռնում են մեր հայերը, և ոչ ոք տեր չի լինում: Բա ո՞վ է մեղավոր, եթե ոչ Էջմիածնի կաթողիկոսը՝ հայերի Աստծո հավատարիմ ծառան: Ես չեմ կարող մի բառով արտահայտել Էջմիածնի կողմից էսպիսի անհանդուրժելի վերաբերմունքը հայ ժողովրդի հանդեպ: Ես բոլորը չեմ ասում, կան մարդիկ, որ կասեն՝ ես ճիշտ եմ: Ես մի փոքր հուշ եմ գրում, սակայն շատ բան կարելի է գրել Էջմիածնի վերաբերյալ: Մարդիկ սոված մեռնում էին, իսկ Էջմիածինը անտարբեր էր, կարծես չէր տեսնում, թե ինչ է կատարվում իր քթի տակ: Մի՞թե մեր գյուղի Մայնո-

սի չափ չկային, որ 1915թ. ձմռանը մեծ ամանով պոչով ապուր էր եփում և բաժանում թուրք վիրավոր ասկյարներին: Չգիտեմ՝ ինչ ասեմ, միայն այսքանը կասեմ, որ մի գյուղացի կնոջ գութ անգամ չունեին Էջմիածնի վարդապետները: Դա 1919թ. մայիսն էր<sup>298</sup>: Միաժամանակ էդ մեռնող մարդիկ չէին ափսոսում իրենց ունեցվածքը Էջմիածնի սուրբ աթոռին նվիրաբերելու համար: Ես էսօրվա պես լավ հիշում եմ. գալիս էին մեր գյուղ, Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի համար փող էին հավաքում: Էսբան է մեր հոգևոր մարմինների վերաբերմունքը մեր ժողովրդի հանդեպ:

Ես՝ Հովհաննես Հովհաննիսյանս, մեր ընթերցողներին համառոտ պատմեցի եղելությունը: Դուք ինքներդ դատեցե՛ք: Շուշինսկին գրպարտությունը ժառանգել էր իր նախորդներից, նա իր գրիչը ուղղել էր գրպարտությանը: Շուշինսկին սուլթանական ժառանգության արձագանքն է, որ հնչում է հայերի մասին: Արյունոտ սուլթանական ժառանգություն, որի հիման վրա դաստիարակվել են սերունդներ, որոնք 1915թ. ցույց տվին իրենց հրեշավոր գազանությունը հայ ժողովրդի հանդեպ, որը մինչև օրս էլ շարունակվում է առանց ամոթի: 1918թ. դեպքերը Արևելյան Հայաստանում և էդ ամբողջ իրականությունը կատարվել է այնպես, ինչպես դուք կարդում եք գրքում: Ուրմիայի, Խոյի, Նախիջևանի, Շուշիի<sup>299</sup>, Բաքվի հայերի սպանողը<sup>300</sup> մի կողմ թողնելով՝ Շուշինսկին պատմական և քաղաքական բնույթի սխալներ է թույլ տալիս, այս սխալների մասին խոսելը կարևոր հարց է: Բավական է, որ մեր ընթերցողները հասկանան ճշմարտությունը: Մեր պատմաբանները պարտավոր են խորությամբ լուսաբանել մեր ժողովրդի անցյալը: Չնայած գաղտնիք չէ, որ Շուշինսկին շատ լավ գիտեր, որ մուսուլմանները ոտքի էին ելել և Բաքվի ու Շուշիի կոտորածներից հետո շարժվում էին դեպի Գորիս՝ թալանելու և ջարդելու հայերին: 1918թ. ճանապարհները փակ էին բոլոր հայերի համար: Ահա ամբողջ ճշմարտությունը Չանգեզուրի և Ղարաբաղի անցքերի մասին: Ինչու՞ է պատմաբանը գրպարտում հայ գորավար Անդրանիկին. եթե չլիներ Անդրանիկը, Գորիսն էլ Շուշի քաղաքի բախտին պիտի արժանանար: Հին մուսուլմանական սովո-

րություն է հայերին զրպարտելը: Իմ պատմությամբ ընթերցողը կստորագրի Շուշինսկու վերջնական դատավճիռը: Ես մեր ընթերցողների համար փորձեցի պարզել իրողությունը այնպես, ինչպես տեղի է ունեցել իրականում: Գուք, հարգելի՛ ընթերցողներ, հասուն մարդիկ եք, ինքներդ իմ պատմածից հանգե՛ք եզրակացության: Պատմությունս կարդալով՝ կարող եք ինքներդ համոզվել, որ ես երկար ճանապարհ եմ անցել Անդրանիկի բանակում 1918թ.: Հայրենակիցնե՛ր, ես կարող եմ լրիվ կերպով արդարացնել Անդրանիկին: Նա ոչ մի գյուղ չի ջարդել: Դա պնդողները սուլթանի ժառանգներն են, որոնք այժմ էլ գոյություն ունեն մեր սիրուն, խաղաղ երկրամասում: Արդարացնել Շուշինսկու հայտարարությունը անհնար է, թող խոստովանի բոլոր ընթերցողներին, որ սխալ է: Եթե դուք կարծում եք, թե ես զրպարտում եմ Շուշինսկուն, այդպես չէ, ես գրում եմ միայն ճշմարտությունը:

Առաջին գիրքը վերջացնում եմ Անդրանիկի բանակում ծառայածս ժամանակով:

## ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

Տասնհինգ օր մնացինք Էջմիածնում, զենքերս հանձնեցինք, մեզ թողթ տվին, որ ռազմաճակատում մասնակցել ենք կռվին, ով ուր ուզում էր, կարող էր գնալ, նաև բաց թողեցին գերի ուղտապանին՝ իր վեց ուղտերով: Մենք չորս ընկերներով գնացինք Ալեքսանդրապոլ: Առաջվա Ալեքսանդրապոլ<sup>301</sup>ն էր, ա՛յն, որ ամեն մի ճաշարանից ուրախության ձայն էր լսվում: **Հիմա համարյա մարդ չկար, տխուր էր քաղաքը. գազան թշնամին իր արյունուր հեպքն էր թողել: Մի երեք օր մնացինք Ալեքսանդրապոլում, գնացինք Ղարս<sup>301</sup> ման գալու: Հասանք, այսպեղ էլ պատկերը ուրիշ էր, համարյա մարդ չկար քաղաքում:** Անցնում էինք քաղաքի միջով, մեկ էլ տեսնենք՝ մի խումբ թուրք կանայք հավաքվել, լացի ձայն են հանում ու իրանց-իրանց խոսում են, մի քիչ էլ կանգնանք, վերջը ես մոտեցա մի կնկա, հարցրի. «*Էս ի՞նչ բան է, բաջի՛, որ հավաքվել էք*»: «*Ի՞նչ պիրի լինի, եղբայր, մեր տղամարդկանց տարան սակյար, ոչ մեկը ետ չի եկել: Հիմա Ղարսը տվել են հայերին, մենք էլ մնացել ենք անտեր, չգիրենք՝ ինչ անենք: Եկել ենք բողոքելու միշուրիին (քաղաքագլուխ), տեսնենք՝ ինչ կասի*»: Մի հաստափոր մարդ բալկոն դուրս եկավ. «*Ինչի՞ եք հավաքվել էստեղ, ես չեզ երեկ սաի, որ գնաք Սարիդամիշ, էն տեղից էլ կուկուշկայով կգնաք Էրզրում, էս հողերը հայերին են տվել, հասկացա՞ք*»: «*Իսկ ուրեղիքի համար ի՞նչ անենք, հո սոված չենք կարող գնալ*»: «*Դա իմ գործը չէ*»,-ասաց հաստափոր մարդը ու ներս գնաց: Ղարսում մնացինք տասնհինգ օր, ման եկանք, նորից եկանք Ալեքսանդրապոլ, մեզ կանչին, պահակ նշանակեցին: «*Արի գնանք, տեսնենք՝ քեզ ինչ կասեն*»,-ասաց ընկերս: Առավոտ գնացինք Կազաչի<sup>302</sup>, Մեզ ընդունողի անունը Հաջո էր: Մեր գնդի արգոլի նաչալնիկն էր: «*Ահա էս մեր ընկերն է, Հաջո՛ եղբայր, ընդունի՛ր*»: «*Դու եղել ես մեր Անդրանիկի բանակու՞մ,-մի քանի հարցեր տվեց, ես պատասխանեցի,-լա՛մ, ես հի-*

մա րեսնեմ, թե որտեղ քեզ նշանակեմ»: Էդ մոմենտին մի մարդ եկավ թե.«Տղե՛ք, Աճեմյանն եկավ»: Հաշոն էլ ելավ Աճեմյանին դիմավորելու.«Բարո՛ւյ, հագա՛ր բարով, պարո՛ն Աճեմյան»: Աճեմյանը խոսում էր վանեցոնց լեզվով.«Մի շիապան րու՛ր, շիե-րուն նայող չկա»: «Մի շիապան րդա կար, էն էլ հիվանդացել է,-ինչ ցույց րվավ ու ասաց,-էս լավ րդուն րար, պարո՛ն Աճեմյան»: Գարձավ ինձ.«Արի՛ զնանք, րդա՛ջան, արի՛, զնանք ճաշարան»: Կանչեց վարիչին.«էս րդուն քո ճաշարանից միշտ ճաշ կրաս: Օրը երեք անգամ: Էս քո հաց ուրելու րեղը, արի՛ զնանք պահեսարը,-պահեսարի պերին կարգադրեց,-էս րդեն ինչ որ կգա կուզե, կրաս: Հա՛, քո անունն ի՛նչ է»: «Հովհաննեա»: «Արի՛ զնանք շիերի րեղը,-զնացիք, ցույց րվեց շիերին, գարու րեղը, շիերը երեքն էին, ու բանալին ինչ րվեց,-գիրե՛ս, րդա՛ջան, շար մաքրասեր պիրի լինես, շիերի վրան մաքուր պիրի պահես, թամբերն<sup>303</sup> էլ միշտ մաքու՛ր պահես, էս րբիչները դրա համար են: Առավուրները շիով զնում են քաղաք՝ աշխարանքի: Էս շին կապիրան Հեքմանինն է, էս մի շին էլ՝ կապիրան Յարոյինը<sup>304</sup>, էս մեկն էլ միարթ Թոմսինն է, հասկացա՞ր, ամենքն իրենց համար շի ունեն, դու միշտ էսրեղ կլինես: Էսրեղ մի հայ կա՛՝ շիու բժիշկ, նա քեզ կասի՝ ինչ անես, առայժմ մնաս բարով»: Աճեմյանը ամբողջ Կազաչի պոստի պահեստների, որբերի ճաշարանների ղեկավարն էր: Ես շուտով ծանոթացա բոլորի հետ, ճանաչեցի կապիտան Հեքմանին, Յարոյին<sup>305</sup>:

Իմ աշխատանքի երրորդ օրն է, իրիկունը ձիերին մաքրում էի, մեկ էլ մի շուն՝ պոչը կտրած, մտավ գոմը: Չիերը խրտնան, ես էլ մի քար առա ու խփեցի շանը, էս շունը սկսեց վնգստալը: Մի ամերիկացի եկավ ինձ կանչեց դուրս.«**Քոմ ան, քոմ ան**»: Ես ելա գոմից դուրս: Էս ամերիկացին սկսեց խոսել.«**Կապիրամ յու, սանրմա քիչ**», -շանը ցույց տալով. էս անտեր շունն էլ մախսուս ավելի էր վնգստում: Սկսեց ինձ ծեծելը, ես ձայն չէի հանում, մի լավ ինձ ծեծեց: Գարձավ ինձի.«**Արմեն կապիրամ յու**», - ասաց ինձ ու

գնաց: Մտիկ արեք էս անաստվածին, մի շան համար ինձ ծեծեց: Ծեծելուն մնա՝ էս քեզ հում-հում կուտեն, բայց արի ու տես, որ արևը մութ տեղ էր մտել, ու՞ր գնայի, գորացրվել էի, ո՛չ տուն, ո՛չ էլ ուտելիք ունեիք: Քաղաքում սով էր տիրում, ամեն օր երկու-երեք սել մեռել էին հավաքում: Եկավ մեր ձիու ֆերշելը<sup>306</sup>, էս պատմեցի եղելությունը, էս մարդը սկսեց ծիծաղելը. «Ինչու՞ էս խնդում, լավ բա՞ն է արել, որ խնդում էս, հա՞»: «Ես խնդում եմ նրա համար, որ խելառի չեռք էս ընկել, ա՛յ տղա, մի՛ նեղանա: Էդ ամերիկացին հիմար բժիշկ է, ինչ ուզում է, այն էլ անում է»: «Լա՛վ, որ խելառ է, ինչի՞ համար է եկել էսրեղ»:

Անցավ բավականին ժամանակ, էս մեր ֆերշելը կանչեց ինձ թե. «Արի՛, Հովհաննես՛ս, նորություն լսի՛ր»: «Ի՞նչ է, Համբարձու՛մ եղբայր»: «Էդ խելառ ամերիկացի բժիշկը հիմա հարձակվել է հիվանդանոցի որբերի վրա, հիվանդ երեխոց սկսել է ծեծելը, քույրերը հասել են երեխանց օգնության, դառել է քույրերին ծեծել: Հիմա տարել են քաղաք՝ ամերիկացիների շտաբը՝ կապիտան Հեքմանի մոտ»<sup>307</sup>: 1920թ. ամերիկացիների շտաբը գտնվում էր հիմիկվա սպիտակ<sup>308</sup> հիվանդանոցի տեղում: Էդ նույն օրը մի ցավալի դեպք պատահեց, հիշում եմ՝ մի ուժեղ ցնցում եղավ, և ուժեղ ձեն ելավ: Ժողովուրդը խառնվել էր իրար. Էլի թուրքն եկավ: Չէ՛, թուրքը հետքն է թողել, ստանցին բոմբ է թաղել, գաղթականները հակառակի պես էդտեղ կրակ են վառել, բոմբը տրաքել է և մարդկանց բավականին վնասել<sup>309</sup>:

Գնում էի քաղաք՝ ման գալու, ժողովուրդը հավաքվել էր, մի աշուղ էլ նվագում էր, մի քանիսն էլ լաց էին լինում: Ես էլ մոտեցա՝ տեսնեմ՝ ինչ է երգում, հիշում եմ երգի մի տունը.

**Շուն տաճիկը Արփաշայն անցավ,  
Քանդեց ավանները Շորագյալ,  
Չարկեց այծյամներդ, կերավ գառներդ,  
Մարտը հորթ չննաց Շորագյալ..**

Էսպես աշխատում էի լավ ու վատ, եկավ 1920թ. մայիսը<sup>310</sup>: Ես միշտ նամակ էի տանում ստանցին, Էնտեղից էլ կապոցներ էի բերում կապիտան Հեքմանին: Մի օր գնացի մեր տղեքի քովը, նրանք խոսում էին. «*Բոլշևիկները եկել են, վերջապես ազատվանք թուրքի սարսափից, էլ վախ չկա*»: Մի տասը օր հետո ես գնացի ստանցին, տեսա մի տասնհինգ-քսան հոգի՝ զինվորներով շրջապատված, ու մի պաշտոնյա՝ շապկեն ուրիշ տեսակ, որը գնում էր դրանց կողքից ու հրաման տալիս, բռնավորների մեջն էլ մի ռուս կար, մի կին էլ խոսում էր բռնավոր ռուսի հետ, մի վեց տղա էլ կողքերով գնում էին դեպի ստանցին: Ես մոտեցա մի տղու ու հարցրի. «*Էս ովքե՞ր են սրանք*»: Նա պատասխանեց. «*Բոլշևիկներ են*»: «*Իսկ էդ մարդն ո՞վ է*»: «*Դա էլ միլյետրն է, ֆրանսիայից է եկել, հայ է*»: Բա էս ու՞ր պիտի տանեն սրանց»: «*Սրանք ասում են, թե բոլշևիկները եկել են*»: «*Բա էս ի՞նչ բան է*»: Մի տղա էլ թե. «*Եկել են, հիմա էլ կերթան*»: Ես հետևեցի մինչև ստանցին: Էստեղ եկան դեպոյի բանվորները և իրար հետ լեզվակոխի սկսեցին ֆրանսիայից եկած էս հայ միլյետրի հետ: Բռնավորները բավականին ժամանակ կանգնել էին, վերջը եկավ վագոնը, նրանց լցրին վագոնը: Ես գնացի իմ գործին, հաջորդ օրը գնացի տղոնց քովը և պատմեցի, թե ինչպես բոլշևիկներին տարան ստանցին, ու բանվորները կռվան էդ ֆրանսիացու հետ. «*Բա էս ի՞նչ բան է, ասում էին՝ բոլշևիկները եկան, մենք ազատվանք*»: Ամենքը մի բան ասում էին, մեր Աբեթը թե. «*Գիտեք ինչ, եթե Ռուսաստանից գոնե մի գունդ էղնիր Էսրեղ կազմակերպության հետ, արդեն գործը ուրիշ կերպ կլիներ: Շրապեցին, Էսրեղ են ասում, որ շրապողին Կոնստանտին, դրա համար էլ գործը գլուխ չեկավ*»:

Էսպես անցնում էին օրերը: Մի օր թարգմանիչը կանչեց. «*Հովհաննես, կապիտան Հեքմանն ասաց, որ առավուր երեք շիերն էլ պատրաստ լինեն: Լա՛վ մաքրի, որ ամերիկացոնց աղջիկները նստեն զնան, իսկ մենք ավրոյի երկից կհասնենք, շիերին նորից*

*եր կրեռես»*: Առավոտ շուտըմ պատրաստեցի, որ գնան: Լույսը բացվեց, աղջիկները եկան՝ տղամարդու շորեր հագած, կապիտանն էլ հետներն էր, օգնեց, նստեցին ձիերին, աղջիկները գնացին: Գնում էին ման գալու Դիլիջան, Սևան: Մի երկու ժամ վերջը ավտոն եկավ, նստանք. ես եմ, թարգմանիչը, կապիտան Հեքմանը: Հասանք Նալբանդ<sup>311</sup>, աղջիկները, ձիերը բռնած, նստել էին գյուղի արևմտյան մասում: Ավտոն կանգնավ, մոտ եկան: Աղջիկները նստան ավտոն, ես ձիերը առա ու ետ դարձա Ալեքսանդրապոլ: Հանգիստ մի ձիուն եմ նստել ու քաշում եմ երկուսին, ուղղություն վերցրի դեպի Ջաջուռ<sup>312</sup> գյուղը: Էստեղ մի ցավալի դեպք եղավ: Մեկ էլ էնպիսի մի որոտ լսվեց, ձիերը առաջ չեն գնում, իջա ցած, քաշում եմ ձիերին, չեն գալիս: Մեկ էլ տեսա վերևից մի սելավ<sup>313</sup> է գալիս, ցածը գյուղի երեխեքը լողանում էին, կեսօր էր, հորթերը ջրի բերանն էին: Էս անտեր սելավը բոլորին քշեց տարավ, հավարն ընկավ գյուղը, գյուղացիք թափան սելավի հետ: Նայում եմ՝ սաղ դուրանը սելավ էր: Մտիկ եմ անում՝ ո՛չ անձրև կա, ո՛չ էլ ամպեր երկնքում, որտեղից էր էդ անտեր սելավը, չգիտեմ՝ ինչ ասեմ: Բավականին սպասեցի, սելավը պակասեց, շարժվա առաջ, մտիկ արեցի՝ սելավը ոնց որ վագող ցեխ լիներ: Կամրջի վրա համարյա մեկ մետր ցեխ էր նստել: 1920թ. էր, էլ չեմ հիշում մայիսի՞ն էր, թե՞ հունիսին:

Մյուս օրը եկան ամերիկացիք՝ մի արջի քոթոթ հետները, էս փոքր արջին տվին ինձ, որ պահեմ: Էս քոթոթն էնքան օյիմներ էր անում, որ ինչքան էլ տխուր մարդ լիներ, կուրախանար: Ճաշարանից օրական երեք անգամ հատուկ դրա համար ճաշ էի ստանում: Մի օր էլ ճաշարանից գալիս էի, մեկ էլ տեսա՝ էս արջի քոթոթը գոմից դուրս եկավ, մտավ կուխնին: Դա ամերիկացունց կուխնին էր: Դուրս թափան աշխատող աղջիկները, ընպես են ծիծաղում, մի ամերիկացի աղջիկ էլ կար, խնդալուց ուշքը գնում էր, իսկ գլխավոր վարիչը հայ էր. «Այ տղա Հովհաննես, գորում էր նա, շուր արի՛, ճաշերը փչացան, էդ անրերը, ով գիրի, հիմա սաղ խառնեց իրար, ճաշի ժամանակն է, հիմա ամերիկացիք կգան:

*Մի իշա՛ջ արա, Հովհաննե՛ս, էդ անտերին դու՛րս հանի»*: Ես գնացի ներս, տեսա՝ էս քոթոթը լպստում է յաշիկի մեջ լցրած քաղցր կաթի ամանները: Քոթոթը որ ինձ տեսավ, վազեց վրես, ես մի կերպ հաջողացրի շոթայից բռնեցի, դուրս քաշեցի: Ես աղջիկները դուռը փակիմ, ելան սեյրի, տեսնեն՝ ինչ պիտի անեն ես: Ես վազի, քոթոթը վազեց հետևիցս, կլոր գոմի քովը մի երեք-չորս անգամ պտտվանք: Վերջը ես նստա, քոթոթը վազեց վրես, սկսեց ինձ գզելը: Աղջիկները սկսեցին պատուհանից ճչալը, իսկ ես խնդում եմ ուզածիս պես: Մի քիչ ինձ գզեց, ականջից բռնեցի, տարա գոմը կապեցի: Կապիտան Հեքմանը, լավ էր, գնաց Երևան, արջի քոթոթին էր հետը տարավ:

### 1920թ. պատերազմը Հայաստանում

Մեկ էլ մի օր՝ 1920թ. աշնանը, տավարնի վագոնով Ղարսի<sup>314</sup> կողմից լիքը գաղթականներ եկան: «*Էս ի՞նչ բան է, ջանը՛ն,- հարցրի մեր Նոյեմի մարդուն՝ Հարությունին*»: «*Ի՞նչ պիտի էղնի, թուրքը նորից հարձակվել է Հայաստանի վրա, տեսնենք՝ վերջը ինչ պիտի էղնի*»: Մի երեք օր վերջը սովորականի պես նամակ էի տանում ստանցի, մեկ էլ տեսա՝ իմ մորաքրոջս տղեն՝ Հարությունը, զինված մի երկու հոգի էլ հետը, կանգնել էին: Վազեցի, բարև տվի, հարցրի.«*Հարություն՛ն եղբայր, էս ու՞ր եք գնում*»: «*Գնում ենք Ղարս՝ կռվելու, թուրքը նորից հարձակվել է Հայաստանի վրա*»: «*Ես էլ կգամ, եղբայ՛ր Հարություն*»: «*Արի՛ գնանք, Հովհաննե՛ս*»: «*Բա, հիմա ի՞նչ վախար գամ*»: «*Կարող ես հիմա էլ գալ, կամ էլ առավոտը շուր, զինամթերքի ենք սպասում*»: Էլ չսպասեցի առավոտվան, եկա հայտնեցի, որ ես գնում եմ բանակ: Մեր Նոյեմին մնաս բարով ասի.«*Թույրի՛կ, ես գնացի*»: «*Ա՛յ տղա, էդ ու՞ր ես գնում*»: «*Կամավոր բանակ եմ գնում*»: «*Դե՛ լավ, սպասի՛ր ես քեզ մի քիչ ուրելիք թերեմ*»: Մի սումկի մեջ դրած՝ բավա-

կանին բան բերավ: «*Է՛հ, մնաս բարով, քույրի՛կ, ես գնացի*»: «*Գնա՛ւ բարով, Հովհաննե՛ս ջան*»: Գնացի ստանցի, գտա մորաքրոջս տղային՝ Հարությունին. նա հիսունապետ էր: Ինձ տարավ, վագոնի մեջ տեղավորեց: Անգլիական շորեր ու կոշիկներ էին ստացել, ինձ շոր, կոշիկ ու զենք տվեց, պատկեցինք վագոնի մեջ, առավոտ շուտ շարժվեցինք: Հասանք Ղարս, ստանցին մնացինք մի երկու օր, պետք է գնայինք Գյուլա<sup>315</sup>, շարժվում ենք դեպի արևմուտք: Մալականի գյուղի քովեն անցանք, բարձրանում ենք դեպի վերև: Հասանք Գյուլա, որի բնակիչները քուրդ էին: Բնակիչները փախել էին: Գյուլան գտնվում էր բավականին դուրան տարածությունով մի կյոր տեղում, կանաչ էր, ոնց որ գարուն էղներ: Ովքեր որ չէին կարողացել փախչել, նրանց մի տեղ հավաքեցին և պահակ կարգեցին, որ չէղնի՝ գորքը վնաս տա, կամ նրանք գորքին վնասեն: Տները լիքը կարագ, պանիր կար, տիկերով մածուն, որ տունը կուգես մտի, թողել էին ու փախել: Երկրորդ օրը ման էինք գալիս գյուղում, մտանք մի տուն. մեկ էլ մի ցավալի պատկեր բացվեց մեր առջև: Մի սիրուն հարս՝ տասնինը-քսան տարեկան, մի փոքր երեխա էլ կրծքի վրա, պառկած էր թախտի վրա: Մենք կարծեցինք, թե քնած է, ձեն տվինք, ոչ մի պատասխան: Մոտեցանք, մտիկ ենք անում, կարծեցինք, թե քնած է, լավ զննեցինք, տեսանք, որ մեռած են ինքն էլ, երեխան էլ: Մտիկ ենք անում, ինքն էլ, երեխան էլ՝ առողջ, թե ինչու են մեռել: Սկսինք ստուգել մարմինը: Գնդակի ոչ մի հետք չկար, մեկ էլ մեր եղբայր Հարությունը թե. «*Տղե՛ք, խաչ է ծեծած երկու կրծքի արանքը*»: Հիմա հասկացանք եղելությունը: Էս հարսը հայ է եղել, երևի չի ուզեցել փախնել իր բռնակալի հետ, բռնել են թույնել թե՛ իրեն, թե՛ երեխուն: Որոշեցինք, մի հարմար տեղ թաղեցինք: «*Ես քու վրեժը կհաննեմ, քու՛յր ջան, հայ էիր, հայ էլ մեռար,-ասաց եղբայր Հարությունը,-արե՛ք էարեղ, տղե՛ք, ինչքան շորեղեն կա, հավաքե՛ք տան մեջտեղը,-մի երեք-չորս զինվորի էլ կարգադրեց,-գնացե՛ք, դրսից խուր բերե՛ք,-խուրը բերին, լցրին տան մեջտեղը,-ինչքան*

*եղ կա տիկերի մեջ, բերե՛ք, շարե՛ք խորի վրա: Դաժա՛ն քուրդ, սպանեցիր մի հայ գերի աղջկա, ես էլ քեզ կպատասխանեմ դաժանությամբ»:*

Մի տասնհինգ օր մնացինք: Պահակ էինք: Առավոտվա մոտ տեսանք վեց հոգի արևելքից գալիս են դեպի Գյոլա, հայտնեցինք, որ վեց մարդ է գալիս դեպի մեր դիրքերը: «*Թող գան, չեն մի՛ք հանի»:* Եկան հասան մեր պահակակետին, վրացի էին, տարան հրամանատարների քովը, տեսնենք՝ ինչ կասեն: Հայտնեցին, որ թուրքը իրենց կողմերում բոլորովին չի երևում, և եկել են իմանալու, թե մեր կողմերում՞ էլ չի երևում: Թողին գնացին:

Երկու օր վերջը մութը կոխել էր, շուտ հավաքվավ ողջ գորքը, դուրսը ստուգում էին ամեն ինչ: Գիշերը շարժվեցինք չգիտեմ՝ ուր: Առավոտ հասանք Ղարսա Բուղաթաբասի<sup>316</sup>: Մալականի մեծ գյուղ էր: Բարձրից երևում էր Մերդենիքը<sup>317</sup>, որտեղ ուժեղ կռիվ էր: Թնդանոթները երկու կողմից էլ ռմբակոծում էին, աշխատում էին գնդացիները, պարզ երևում էին կռվողների դիրքերը: Բավականին կանգնանք, հեռադիտակով մտիկ արինք, վերջը իջանք մալականի գյուղը, մեզ տարան ու ճաշի կանչեցին գյուղի մի մեծ հայաթում. պիտի կռվի մասնակցենք: Մի ջահել քսան տարեկան տղա՝ տասը տարեկանը կողքին, ասում էր. «*Ես էլ պիտի գամ կամավոր չեզ հեյր, տղե՛ք ջան: Կամավոր եմ եկել Ալեքսանդրապոլից: Գեներալնի բոյ պիտի գնանք, հերիք եղավ էդ գազանները մեր արյունը խմեն. կա՛մ մահ, կա՛մ ազատություն»:* Մի տերտեր կար, ասում էր. «*Տղե՛ք, չվախենաք, խիե՛ք շուն փամիկին: Ղարսը մեր կռնակն է, ամեն ինչ ունենք»:* Մի քիչ վերջը մեր հայաթը վիրավոր բերին, տղեքը հարցնում էին կռվի մասին, էս վիրավորներից մեկը թե. «*Մեր դեմ կռվողը թուրքը չէ, բուլղևիկներն են»:* Իմ մորաքրոջ տղեն՝ Հարությունը թե. «*Ա՛յ տղա, թուրքին բուլղևիկ դարձրիր»:* «*Ես միշտ եմ խոսում, Ղարսա տերտերի տղեն է իր խմբով, կանգնել գոռում է. «Մենք բուլղևիկներ ենք, չկռվեք: Ես Ղարսա տերտերի տղեն եմ՝ բուլղևիկ»:* Հարությունը թե. «*Հլա տեր-*

*տերին քերե՞ք էսրեդ... Տե՛ր հայր, դու մեզ ասում էիր՝ լա՛վ կռվեք, իսկ քո տղեն մեր դեմ է կռվում»։ «Չէ՛, որդի՛, դա ուրիշ տերտերի տղա է, ես տղա չունեմ»։*

Բուպե առ բուպե սպասում ենք հրամանի, որ կռվին մասնակցենք, բայց արի տես, որ կռվին մասնակցելու ոչ մի հրաման էլ չեղավ։ Նորից իրիկունը շարժվում ենք չգիտենք ուր, ամբողջ գիշերը ճանապարհի գնացինք, իսկ առավոտը նորից Գյուլա հասանք։ «Հարությունն եղբայր, ինչու՞ չմասնակցեցինք կռվին, եկանք Գյուլա՝ մածունն ու կարագ ուտելու՞, էլ ինչի՞ ենք եկել, որ կռվին չսխրի մասնակցենք»։ «Մեզ չթողին նրա համար, որ թշնամին կարող է նկատի, որ Գյուլայի գիծը ազատ է, նա կարող է փակի Լարսի ճամփան, դրա համար մեզ նորից շուտ տեղափոխեցին Գյուլա»։ Նորից տասնհինգ օր մնացինք Գյուլայում, թշնամին չեր երևում։ Մեկ էլ հայտնեցին, որ թուրքը նորից գրավել է Ղարսը։ Նահանջում ենք, թողնում ենք Գյուլան։ Գյուլայում եկավ առաջին ձյունը։ Ամբողջ գիշերը ետ ենք գալիս։ Մի երկու գյուղ ետ ենք գալիս դեպի մալականի գյուղ, մալականի գյուղով անցանք, հասանք Ղզլչաղչաղ։ Ղզլչաղչաղից դեպի արևմուտք՝ ջրի էն կողմում, մի տափակ սար կար, վրեն գլուխը դեպի արևելք, քարից մեծ պոզերով խոյ էր քանդակված։ Դեռ մեր գորքը չէր հավաքվել, մեկ էլ բավական հեռվից հեծելագոր երևաց։ Մեր Հարությունը թե՛. «Մրանք թուրք են»։ Հրամանատարները հավաքվան, հեռադիտակով լավ գննեցին, հավատացին, որ իրոք թուրք են։ Անմիջապես դիրքավորվեցինք, էսպես սպասում ենք թշնամու մոտենալուն. «Դատարկ չկրակեք, թող թշնամին լավ մտրենա»։

Թշնամին մոտեցավ, սկսինք կրակել, թշնամին էլ իր հերթին դիրքավորվավ, և սկսեց կռիվը։ Բավականին ժամանակ Հարություն եղբայրը գալիս էր, խրատ էր տալիս զինվորներին, թե ինչպես լավ կրակեն, իրենց լավ պահեն, որ չվիրավորվեն։ Էսպես մեկ էլ ասին, որ Անդրեասյան Հարությունը վիրավորվել է։ Ես վազեցի այնտեղ, որտեղ որ եղբայր Հարությունն էր, բայց չհասա,

նա արդեն մեռել էր, չար գնդակը սրտին էր կայել: Դիակը փռված էր, նա ոնց որ մի ածդահա լիներ՝ թիկունքը լայն, բոյով: Նստալացի, ձեռքերը առի ձեռքերիս մեջ, լալիս եմ, երեսը պաչում ու լալիս: Ի՞նչ անեմ, եկան հրամանատարները, երեք զինվոր Բզլադչադի կամուրջի աջ կողմը մի փոս փորին, էդտեղ թաղին: Ես ինձ բոլորովին կորցրել էի, մի հարազատ ունեի, նրան էլ կորցրեցի: Արդեն մութը կոխել էր, նահանջինք դեպի Ալեքսանդրապոլ: Ես երկու ամսվա ռոճիկ չէի ստացել, գնացի աշխատանքիս տեղը, մեկ էլ ամերիկացիք ինձ տեսան, սկսին. «**Հեյրո՛ու, հեյրո՛ու, Հաննես**»: Հարցրին. «Ինչու՞ է երեսդ մազոտ, չե՞ս թրաշվում»: Պատասխանեցի. «Պատերազմ էի գնացել, ինչպե՞ս թրաշվեմ»: Կապիտան Յարոն հարցրեց. «Գալողը թու՞ ըքն է, թե՞ բոլշևիկը»: Ես պատասխանեցի. «Ի՞նչ բոլշևիկ, թուրքն է, դահիճ»: Յարոն թե. «Եթե թուրքն է, **օլ ռայդ**, միայն բոլշևիկ չէղնի»: Ես զարմացա մնացի, մի՞ թե բոլշևիկները էդքան վատ են, որ թուրքից էլ վատը եղան, էս ի՞նչ է ասում էս կապիտան Յարոն, էս բան չեմ հասկանում, աշխարհի երեսին Թուրքիայից էլ վատ պետություն կա՞, մի՞ թե կարելի է մռռանալ օսմանցիների արարքը՝ հայոց կոտորածը, երկու միլիոն հայի արյուն խմեցին, հիմա թուրքը «**օլ ռայդ**» եղավ, իսկ բոլշևիկները՝ վատ: Թուրքը նորից սկսել է Հայաստանում մնացած հայերի կոտորածը, հլա թուրքը լավ է, էս ի՞նչ է ասում էս կապիտան Յարոն: Ես զարմացած կանգնել եմ, չգիտեմ, թե ինչ ասեմ: Չե՞ որ երեկ մորաքրոջս տղան՝ Հարությունը, ընկավ թուրքի գնդակից, էստեղի որբերի հայրերին ու մայրերին սպանել է թուրքը, նորից որբերի թիվը պիտի կրկնապատկվի, էլի մայրեր ու հայրեր սպանվեն, և էս բոլորից հետո էլի թուրքերը «**օլ ռայդ**» են, իսկ բոլշևիկները՝ վատ: Էստեղ մի առակ հիշեմ՝ քռռի շատ պետքն է, թե մոմը թանկ է, ուզում է՝ մի մոմը մի ոսկի էղնի: Հիմա կապիտան Յարոյինն է, նրա շատ էլ պետքն է, թե Արևմտյան Հայաստանում երկու միլիոն հայ է սպանվել, հիմա էլ թուրքը Արևելյան Հայաստանում մնացած հայերին է սկսել ու-

տել, կապիտան Յարոյի շատ էլ պետքն է. թող մնացած հայերին էլ ուտի: Էս կապիտան Յարոն մեջքիս զարկեց. «**Թորքը օլ թայդ, օլ թայդ, Հանն, օլ թայդ,-ես շշմել մնացել էի, չգիտեմ՝ ինչ ասեմ էս Յարոյին,-թորքը լավ է, միայն թե բոլշևիկները չգային**»: Ոնց որ դանակը զարկես սրտիս, էլ չկանգնա, դառա ու գնացի, մեկ էլ տեսա իմ ընկեր Աբեթին. իմ տեղն էր աշխատում, դարձա գնացի դեպի Աբեթը, բարևեցի, խոսեցինք: Էս Աբեթը թերջնցի էր՝ Խնձորեկ<sup>318</sup> գյուղից: Արդեն ամուսնացել էր: «**Գիտե՞ս, Հովհաննես՝ս, քո մորթությունի Գարեգինը մեր փանն է, ուզում են՝ գնան, արի գնանք, րե՛ս**»: «**Գնանք**»: Գնացինք, Թորքի թաղ<sup>319</sup> էին մնում: Ինձ տեսավ Գարեգինը, վազեց, համբուրեց. «**Ո՞ր գծում էիր կռվում, Հովհաննես՝ս**»: «**Գյուլա**»: «**Մեր Հարությունին չրեսա՞ր, նա էլ այդ կռվում էր, չգիտեմ՝ ինչու չեկավ**»: «**Չգիտեմ, չեմ րե-սել**»: Իմ սիրտը լցվավ, գնացի արտաքնոց, լացի, եկա լվացվա, նստեցինք, խոսեցինք, թե ինչ պետք է էնենք: Մտիկ եմ անում. Գարեգինը մի կիստուկի մեկն է, իսկ եղբայր Հարությունը հաղթանդամ էր. երկուսն էլ մի մորից էին: Չասի, որ մեր եղբայր Հարությունը սպանվեց Ղզլադչաղ գյուղում: Էդպես էլ չասի մինչև 1966թ.: 1966թ. ես եղա Երևանում և պատմեցի, թե ինչպես սպանվեց եղբայր Հարությունը:

Վերջը եղբայր Գարեգինն ասաց, որ իրենք ուզում են գնալ Ադրբեջան. «**Բոլշևիկները վերցրել են Ադրբեջանը, գնանք, ազատվենք էս ցավից: Էս դաշնակցականները էսպիսի բան չի էդնի, որ ասում են: Հայաստանի դաշնակցական կառավարությունը հաշտվել է թուրքերի հետ, էսպիսի ստորություն չի էդնի, որ սրանք են ասում, մոռացան իրենց մորիկ անցյալը, նորից հաշտվում են թուրքերի հետ, որ միասին կռվեն բոլշևիկների դեմ: Մենք չենք ուզում մնալ թուրքերի մեջ**»: «**Ես էլ զինվոր եմ, չեմ ուզում կռվել բոլշևիկների դեմ**»: «**Ուրեմն էսօր իրիկունը մեկնում ենք**»: Գարեգինի ընտանիքը մեծ չէր. կինը՝ Մարիամը, նա և նրա մեծ տղան՝ Հակոբը, ու մեկ էլ ես, չորս հոգի: Մենք և մի էրզրումցի

ընտանիք իրիկունը ճանապարհ ելանք: Չյուն էր գալիս: Հակոբին, չգիտեմ՝ ինչքան կեղնիր, բարուրով կապեցինք Գարեգինի մեջքին, ելանք ճանապարհ: Գարեգինը ութ հատ ոչխար ուներ, խառնեցինք առաջներս, գնում ենք:

Ալեքսանդրապոլում<sup>320</sup> տեղում էր առաջին ձյունը: Քաղաքից դուրս ելանք, գնում էինք: Շոշի երկու կողմերում լիքը զինվորներ կային, թնդանոթներով, գնդացիներով զինվորներ՝ հետևակ: Հասանք վերջը, մեկ էլ երեք զինվոր ինձ թե. «Մե՛ր տղա, էս ու՛ր, դու զինվոր չե՛ս»: «Հա՛, զինվոր եմ»: Մեր Գարեգին եղբայրը թե. «Գալիս է մեզ ճանապարհ դնելու: Իրա գունդը հետևում է»: «Ինչո՞վ հավատարմե՞ք»: «Ուզում եք՝ մի՛ հավատացե՞ք, բայց սուր չենք ասում»: Էս զինվորները դարձան. «Եղբա՛յր, քեզնից մի բան ենք խնդրում, եթե կարելի է»: «Ի՛նչ եք ուզում, տղե՛ք ջան»: «Մեզի մի ոչխար տու՛ր, սոված ենք»: «Չեզի մատրաղ էղնի, տղե՛ք, առե՛ք, տարե՛ք»: Գարեգին եղբայրը մի հատ ոչխար տվավ տղոնցը, և մենք շարունակեցինք ճանապարհը: Ելանք Ջաջուռ, որտեղ որ սելավ էր եղել, պատմեցի մեր քարավանին: Ասի. «Եղբա՛յր Գարեգին, մի հարց տամ քեզ էդ բոլշևիկների մասին, ինչո՞վ են վատ, որ կապիտան Յարոն ասաց, որ թուրքը «օլ բայդ» է, քան էդ բոլշևիկը»: «Ա՛յ տղա, նույն ռուսներն են, որ եկան, ազատիկ քեզ, միայն տարբերությունն այն է, որ առաջ Ռուսաստանը դեկավարում էր թագավորը, իսկ հիմա՛՝ աղքատ դասակարգը, ուրիշ ոչինչ: Հասկացա՞ր, դրանով ինչո՞վ են վատ ռուսները»: «Ուրեմն ես էլ չեմ մնում: Էսօր մեկնում ենք Բաքու»: Էս Գարեգինը դարձավ. «Եղբա՛յր, գոռով ապրում ենք, ո՛չ մարդիկ են մեզ սիրում, ո՛չ էլ Աստված: Երզնկան՝ որտե՛ղ, մենք՝ որտե՛ղ»:

Ամբողջ գիշերը ճանապարհ գնացինք, հասանք Համամլու, մի օր մնացինք Համամլու, նորից շարունակեցինք ճանապարհը, հասանք Դշլաղ<sup>321</sup>: Էստեղ մեր քարավանի մեծերը, չգիտեմ ինչի, մտքները փոխին, գնացինք դեպի Գյառզյառ<sup>322</sup>: Մեր քարավանը

ենթարկվում էր եղբայր Գարեգինին ու էրզրումցի Սարգիսին. որ կողմը ասեին, էն կողմն էլ պիտի գնալինք: Դավալիով /?/ հասանք Գյառգյառ, մի օր մնացինք Գյառգյառում, նորից ճանապարհը շարունակեցինք դեպի Վարդաբլուր<sup>323</sup>: Գյուղի տակը կանգնել էինք, մեկ էլ մի մարդ ձիով եկավ, բարև տվավ.«*Ու՛ր եք գնում, տղե՛ք*»: Մենք էլ չգիտենք, թե ուր ենք գնում: Էս մարդը անտառապահ էր, անունը **Արամ Քալաշյան** էին ասում: «*Արե՛ք մեր տուն, կուզե՛ք չմեռը մնացե՛ք, տեսնենք՝ վերջը ինչ կէղևի*»: Գնացինք էս բարի մարդու տունը, բալկոնով մի մեծ սենյակ հատկացրեց, սենյակում վառարան դրեց: Էս բարի մարդը օգնում էր մեզ ամեն ինչով: Տասը գաղթականներով էս Արամի տանը մնացինք տասնհինգ օր: Խոսք եղավ գնալու մասին, թե ինչպես պետք է գնանք, որ հասնենք Աղստաֆա: «*Լավ, երբ որ գնալու լինեք, ես կասեմ՝ ինչ անեք, որ հասնեք Աղստաֆա*»: Մյուս օրը հայտնեցինք Արամին, որ գնում ենք.«*Գոնե՛ շուր հասնենք Բաբու, աշխարհանքի անցնենք, որ սովից չմեռնենք, էսպես ման գալով բան դուրս չի գա*»: Էս բարեսիրտ Արամը ինչ որ ձեռքից գալիս էր, արեց, ուտելիք դրեց հետներս, մի նամակ գրեց, տվեց ու ասաց.«*Երբ որ հասնեք Շնող*<sup>324</sup>, *կտաք Էդտեղաց ... (մոռացա անունը), ինքը բոլշևիկ է, չեզ կօգևի Աղստաֆա հասնել*»: Առավոտ ելանք, Արամ եղբորը մնաս բարով արինք ու գնացինք Ուզունլար<sup>325</sup>, ապա Ալավերդի<sup>326</sup>, էնտեղից էլ երկաթգծով գնացինք Շնող: Էդ մարդուն գտանք, նամակը տվինք, նա պատասխանեց.«*Ճանապարհները լավ չեն, սպասե՛ք, ես չեզ կհայրենեմ*»: Մնացինք մի կես ամիս, գնում ենք սարը, գլեռ ենք բերում, աճար ենք հավաքում, մի կերպ ապրում ենք: Վերջը էս մարդը եկավ.«*Պատրաստվե՛ք, առավոտը գնում ենք*»:

Էս լավ մարդը՝ առաջից, մենք էլ՝ հետևից, գնում ենք դեպի արևելք: Մեր բախտից օրերը լավ են, ճանապարհները՝ չոր: Էսպես շարունակում ենք ճանապարհը, մեկ էլ ճանապարհի աջ կողմից չորս-հինգ մարդ գլուխները հանեցին, նայում են մեզ:

Յույց են տալիս ինձ.«**Դա է սքրա, դա**»-սկսին քրֆելը: Էս մեր առաջնորդը ետ դարձավ, բռնաց դրանց վրա.«*Ի՞նչ էք ռեխներիցդ քաք թափում,-իսկ մեզ դարչավ,-մե՞ք կանգնի, գնացե՛ք, սրանք վրանկավոր մարդիկ են*»: Ափսոս այդ մարդու անունը չեմ հիշում, մնաց դրանց հետ, բավականին խոսեց, եկավ հասավ մեզ.«*Տղա՛ ջան, քո անունն ի՞նչ է*»: «*Հովհաննես՛ն*»: «*Դու էս կողմերում եղե՞լ ես*»: «*Չէ՛, եղբա՛յր, ես երազումս էլ չեմ եղել էս կողմերում*»: «*Էդ շան որդիքը հասարարում են, որ դու եղել ես Սև Մուրոյի խմբում և եղել ես սրանց գյուղում, ու որպես թե մի մարդու ծեծելով սպանել եք*»: Ես պատմեցի.«*Ամերիկացունց քովը շիապան եմ եղել, ես գնացի բանակ՝ Գյուլա, նահանջիկ սրանք Ալեքսանդրասպոլ: Ես էս կողմերը բոլորովին չեմ եղել, տես բոլորը*»: Էս բարի մարդը թե.«*Լավ է, որ էդ շների շեռքից ազատվանք, որոնք հասարարում էին, որ դու եղել ես Մուրոյի խմբում և իրենց գյուղում, նրանք պարմում էին, թե որպես բոլշևիկ ինչպես եք թալանել իրենց գյուղը, ծեծելով մարդ սպանել: Ահա էսպիսի բաներ, մե՛ր տղա, լավ է, էժան պրծանք*»: Էդ օրը հասանք թուրքի գյուղը, որտեղ կարմիր հեծելազոր կար: Շնորհից չգիտեմ՝ քանի օրում հասանք Ադատաֆա<sup>327</sup>: Այստեղ լիքը գաղթականներ էին, մեզի լցրին մի վագոն, վագոնում մնացիկք երկու օր: Էստեղ վագոնների ճակատներին մեծ-մեծ աստղեր էին նկարած, զինվորներն էլ պոլոզ գլխարկներով էին, որոնց վրա էլի կարմիր աստղեր էին: Մեզ մթերքով ապահովեցին: Ադատաֆայից դեպի արևմուտք՝ մի կես կմ-ի վրա, կամուրջ կար, կամուրջի էս կողմը բոլշևիկներն էին, մյուս կողմը՝ վրացիները: Երրորդ օրվա վերջը շարժվանք դեպի Բաքու<sup>328</sup>: Մեր վագոնի ժողովուրդը վանեցի, քվեցի<sup>329</sup>, օլթեցի էին: Կանգնել էինք ստանցին, մի թուրք տղա անցնում էր մեր ստամով, մեր վագոնից մեկը հարցրեց.«**Յուղաշ, բուրդա հարդա սուվար**»: Էս թուրքը սկսեց քրֆելը.«**Սանրմ մանա յուղաշ էդանին, դինինի մուսաբինի յունի քիթաբնր սան բանրմը նա յուղաշ սան մանի յա մուսուլման**»: Էսպես քրֆեց ու գնաց, մենք զար-

մացած նայում ենք. երևի խելառ է:

Էսպես մնացինք վագոնի մեջ մի քսան օր: Մեկ էլ մի մարդ եկավ. «Ով կուզե աշխատի, թող գա մուրս, ցուցակագրվի չուկ բռնելու համար»: Ես գրվա<sup>330</sup>, վեց-յոթ ընտանիք գրվան, իսկ մեր Գարեգինը չգրվավ: Էդտեղից ես բաժանվա մերոնցից: Մյուս օրը մեր աշխատողներին տարան ուրիշ վագոն, Էնտեղ էլ կային մարդիկ, որ պիտի գնային ձուկ բռնելու: Բերին մթերք տվին ճանապարհի համար: Իրիկունը շարժվանք, առավոտ հասանք Ղաչմազ<sup>331</sup>: Էդտեղ խնձորը լիքն էր, ոնց որ խնձորի դեզ լիներ դուրսը դարսած: Ամենքը իր համար խնձոր առավ, նորից գնում ենք արևմուտք: Պոեզը<sup>332</sup> գնում էր անտառի միջով, մեկ էլ վեց-յոթ գոմեշ պոեզի գծի հետ փախան դեպի առաջ: Մեծ գոմեշները անցան, իսկ մի փոքր գոմեշի ձագ ընկավ վագոնների տակը: Երեք վագոն գծից դուրս ընկավ: Շպալ հավաքին, մեկ հատ էլ ռելս բերին, սկսին վագոնները դասավորել գծերի վրա, իսկ մեր հայերը գոմեշի ձագին թաթարի<sup>333</sup> քերթեցին, գցեցին վագոնը: Գծից ընկած վագոնները արդեն պատրաստ էին, նորից շարժվում ենք դեպի առաջ, հասանք Գերբենդ<sup>334</sup>: Գերբենդից<sup>335</sup> շարժվում ենք դեպի արևմուտք: Չգիտեմ՝ որքան էինք գնացել, մեկ էլ գնացքը կանգնեց, մեզ իջեցրին ցած: Էդտեղ չեչենները աղ էին բարձում սեղերը: Մեզ ասին. «Չեր վեշերը բարձեք սեղերը»: Մի հինգ կմ գրնացինք, հասանք ձուկ բռնելու տեղը, երկու օր մնացինք, նոր գործի անցանք: Տարան, ծանոթացրին գործերին. մեկը ձկան հորն է մաքրում, մյուսը աղ է կրում, հին ձկները դասավորում են բոչկաների մեջ: Ինձ գցին աղջիկների հետ. ութ աղջիկ սիլյուտկեքը դասավորում էին բոչկեքի մեջ, մի վարպետ էլ բերանը փակում էր, իսկ ես պետք է դրանք՝ պատրաստի բոչկեքը, գորելով տանեի դուրս, որ արաբեքը տանեն ստանցին: Ինձ օգնական մի աղջիկ տվին, անունը Լյուբա էր, էսպես աշխատում էինք: Սկսին ձուկ բռնելը, ձկների հետ շնաձուկ էլ էր լինում, առաջի մասը՝ գլուխը, առաջին թաթերը՝ իսկական շուն, իսկ հետևի մասը՝ ձուկ: Էդտեղի պահակ չեչենները շնաձկներին տանում էին սապուն

պատրաստելու, իսկ կաշին<sup>336</sup>, ասում են, շատ թանկ էր: Ես բոլորովին ռուսերեն չգիտեի, էստեղ լավ սովորա, ինձ հետ ռուսերեն խոսողը միայն Լյուբան էր: Աշխատանք երկու ամիս: 1921թ. մա՞րտն էր, թե՞ ապրիլը...

Ահա թե ինչպես էր կատարվում ձուկ բռնելու գործը. էստեղ մի հորը հազար փութ ձուկ էր տանում: Հորերը բոչկի նման թաղած էին գետնի մեջ: Սարայների գետնի մեջ հորերը թաղված էին երկու շարքով: Մեջտեղը ազատ էր աշխատելու համար: Բոչկաների քանակը չեմ կարող ասել, բայց ծովի եզրին չորս-հինգ սարայ կար: Բռնած ձուկը տաչկով լցնում էին հորի մեջ: Մեկ տաչկա ձկին մեկ ձեռքի սավոկ աղ էին լցնում: Վարպետը կանգնած անընդհատ աղում էր սիլյոտկեն, իսկ բանվորները անընդհատ կրում էին բռնած ձուկը: Տասնհինգ օր հետո<sup>337</sup> աղած սիլյոտկեն արդեն պատրաստ էր ծախելու համար. մալասուլնի էր կոչվում: Էսպես աշխատում էինք: Մի օր Լյուբան ինձ ասաց. «*Ինչու՞ չեք գալիս լողանալու, մեզնից շար հեռու չէ, հանքային ջուր կա, փա՞ք, որքան կուզեք, լողացե՛ք*»: Ես հայտնեցի մեր հայ տղամարդկանց, որոշեցինք կիրակի օրը գնալ: Կիրակի օրը, քար գցելով ծովը, գնում ենք ծովի բերանով, մեկ էլ մի ցավալի տեսարան բացվեց մեր առաջ, մի երկար փոսի մեջ՝ լիքը մարդու գանգ, ոտքերի, կողերի ոսկորներ, ինչ ասեմ, փոսի երկարությունը հարյուր մետր, լենքը քսան մետր կէղներ: Ես մոռացա լողանալը, մտիկ եմ անում, մի թե էստեղ էլ են հասել թուրքի գազանությունները: Քարացել ենք, չենք խոսում, նայում ենք էդ սարսափելի տեսարանին և մնացել ենք կանգնած: Գլուխներս կախ շարունակեցինք ճանապարհը, գնում ենք լողանալու, գնացինք հասանք էմտեղ, որտեղ հանքային ջրերն էին: Մի մեծ բասեին էր շինած, էդտեղից ջուրը բաժանվում էր առանձին վաննաների մեջ, առանձին շինած մի տասը-տասնհինգ վաննա կար: Բոլոր ջրերն էլ հավասար վազում էին՝ ո՛չ շատ տաք, ո՛չ շատ պաղ: Էդտեղ մի տեղ կար, վառում էին գիշերուզօր, մի տասը-քսան մետր բարձրությամբ բոց էր ելնում, հետո մեր մնացած տեղի դիմաց սարըն կար, էդտեղից

սև ծովի էր բարձրանում, ոնց որ մի մեծ նավ եղնիր կանգնած: Մենք էլ լողացանք, դարձանք գնում ենք տուն.«*Տղե՛ք, սրակնք հա՛յ կէղնին, ի՛նչ կասեք*»: «*Տեսնենք*», -ասին տղերքը:

Ես անմիջապես պատկեցի, տաքությունը ինձ գիշերը տարել էր, առավոտ չէի կարողանում աշխատանքի գնալ: Խաբար արին, քույրը եկավ տաքությունս չափեց, դեղ տվավ, էսպես պատկել էի, քույրը գնում-գալիս էր, տաքությունս չափում: Յոթ օր քաշեց հիվանդությունս: Աչքիս առաջ էր եղ մարդկանց պատկերը, մտքիցս չէր ելնում, ինչպե՞ս էին սպանել եղ խեղճերին: Վերջապես ութերորդ օրվա վերջը մի քիչ լավացա, գնացի գործի: Լյուբան չեր թողնում, որ ես պատրաստի բոչկեքը գլորեմ, ասում էր.«*Վա՛նյա, մի՛լի մոյ, յա սամա ուսպեյու*»: Էդ բարի աղջիկը համարյա չեր թողնում, որ ես աշխատեմ, ասում էր.«*Լավ լավացի՛ր, քեզ մի՛ ճնշիր, ես կհասցնեմ գործը, դու հսկզի՛սր եղիր*»: Էսպես կամաց-կամաց լավացա և սկսեցի աշխատել, բայց չէի կարողանում մոռանալ մարդկանց զանգերը, կարծես ես էի մեղավոր, ես ինձ տանջում էի:

Իսկապես որ, էս հանքային ջուրը շատ օգտավետ էր, իմ ծոծրակին փոքր ժամանակից մի վերք կար, որը հանկարծ շատ մեծանում էր և մեկեն անհետանում, էսպես իրան-իրան լավանում էր և նորից շատանում: Մայրիկս խոստացել էր ինձ Ս. Կարապետ տանել, որ վերքս լավանա, բայց եղավ 1915թ. կոտորածը, և մորս ուխտը մնաց: Ես մի տասը անգամ էդտեղ լողացա, էս վերքս լրիվ անհետացավ, մորից մեկ եղա:

Ես ուզեցի եղ մարդկանց մասին իմանալ մեր պահակ չեչենից, մեկ էլ միտքս փոխվավ, մտածում էի՝ ասե՞մ, չասե՞մ, վերջը հարցրի ռուսերեն.«*Դուք վաղու՞ց եք էստեղ աշխատում, ընկե՛ր Հասան*»: «*Էնքան էլ չէ*»: «*Մի բան հարցնեմ, չե՞ս նեղանա*»: «*Ինչի՞ պիրի նեղանամ*»: «*Բարաքների կողմը, մեկ կմ ու կես կէղնի, էն կողմը մարդ են սպանել, ի՛նչ մարդիկ են, ո՞վ է սպանել*»: Էս Հասանը էնպես զայրացավ իմ վրա.«*Կակո՞ն ցվայո դեյո*», -ու

թողեց գնաց: Ես կասկածեցի, կա-չկա էս ավազակը գիտի եղելությունը, ի՞նչ անեմ, ինչպե՞ս իմանամ: Ես պատմեցի վարպետ Միքայելին, որ մարդկանց սպանել են: Էս վարպետը զարմացավ և ասաց. «*Գործը պրծնենք, գնանք տեսնենք էդ ի՞նչ բան է եղել, որտե՞ղ է, որ էսպես բան է եղել*»: Աշխատանքից պրծանք, վարպետ Միքայելի հետ գնացինք, ես ցույց տվի այն տեղը, որտեղ որ սպանել էին մարդկանց: Որ չտեսավ էդքան զանգեր իրար վրա, շատ զարմացավ. «*Էս ի՞նչ է եղել, էս ի՞նչ գազանություն է եղել այստեղ, վոտր ի գվերինսպոլ: Ինչպե՞ս իմանանք, թե ինչ է կատարվել էստեղ*»: Ես ասի. «*Վարպե՛ր Միխայլ, էդ պահակ Հասանից կարելի է իմանալ, ես հարցրի, հլա մի բան էլ վրաս նեղացավ ու չպատասխանեց*»: Նստանք, աշխարհի վերաբերյալ բավականին զրույց արինք, ենթադրություններ արինք: «*Գնանք, ես կիմանամ էս գազանության մասին*»: «*Ումի՞ց իմանաս, գազան չեչենների՞ց, չեն էլ ուզում հետդ խոսել, վարպե՛ր Միխայել*»:

...Միայն էսքանն ասաց վարպետ Միխայելը. «*Օսմանները հասել են մինչև Դերբենը, էդտեղի հայերին հավաքել և բերել են էստեղ ու բոլորին սպանել են*»: Ես տեղս պառկած մտածում էի, ամբողջ գիշերը չէի կարողանում աչքերս փակել: Ինձուինձ խոսում էի. «*Էս ինչ անբախտ ժողովուրդ ենք, 1915թ. թուրքը ամբողջ արևմտահայությանը կոտորեց, 1918թ. նորից Արևելյան Հայաստանը ուրքի տակ գնաց, 1920թ. կոտորածը նորից կրկնվեց, չկշտացա՞մ գազանը: Մի կարճ ժամանակում երեք անգամ էլ էս ինչ տանջանք է, որ բաշում է հայ ժողովուրդը*»: Մտածում էի էն ցավալի ու դաժան տեսակի ճակատագրի մասին, որ բաժին էր ընկել հայ ժողովրդին, բազմաթիվ հայեր թողել են իրենց հայրենի աշխարհը, ցրվել աշխարհով մեկ, էս գազան թուրքի սուրը հասել է նաև էստեղ: Ինչու՞ էսպես ստացվեց հայ ժողովրդի ճակատագիրը, մի ամբողջ ժողովուրդ ողբերգական կերպով կոտորվեց թուրքական դահիճների, աշխարհի անհազ բորենիների կողմից:

Մի ցավալի պատմություն ունի հայ ժողովուրդը, էսօրվա՛ սերունդ, կոտորվել է Միջերկրական ծովից մինչև Դերբենդ, կործանվել են հազարավոր գյուղեր ու քաղաքներ, կործանվեց հայ ժողովուրդը, և ինչքա՞ն գոհ գնաց. Աստծուն է հայտնի: Ո՞վ գիտե, ի՞նչ է հիմա նորից կատարվում Հայաստանում, ու՞մ են սպանում, որքա՞ն գերի տարան, ինչքա՞ն որբերի թիվ ավելացավ: Ա՜խ, խեղճ ժողովուրդ, անբախտ ժողովուրդ, էս ի՞նչ տանջանք է, որ դու քաշում ես: Դժբախտությունը այն է, որ դաշնակցականները հաշվի չառան թուրք բարբարոսների արարքները՝ հայ ժողովրդի բնաջնջման նախորդ բոլոր փորձերը 1915-1918թթ. և ավելի ծանր վտանգի ենթարկեցին հայ ժողովրդի ճակատագիրը: Դաշնակցում էին թուրք զավթիչների հետ, հաշտվում, որ Հայաստանը փրկեն: Սոված հավը երազում գարի է տեսնում, էնպես էլ դաշնակ ավազակները: Դաշնակցականները շատ լավ էլ զգում էին, որ իրենց իշխանության տակ հայ ժողովուրդը անդունդն է գլորվում: Ժողովուրդը ձգտում էր դեպի Ռուսաստանը, որը փրկության ձեռք էր մեկնում: Հայ ժողովուրդը իշխանություններից լավ էր հասկանում դա, նա չէր կարող իրեն ապահով զգալ, քանի դեռ դահիճ թուրքը Հայաստանում էր: Գելի հետ գառը չէր կարող ապրել: Ժողովուրդը ճիշտ էր կանխատեսել իր ապագան: Դաշնակները չէին մտածում թուրքի ճիրաններից հայ ժողովրդին պաշտպանելու մասին: Ամեն անգամ, երբ հիշում եմ 1915-1918թթ. Հայաստանում կատարված դեպքերը, եզրակացնում եմ, որ դաշնակները բռնել էին դավաճանության ճամփան, ուրիշ ոչինչ: Դաշնակցականները շատ լավ էին հասկանում, որ իրենց բռնած ճանապարհը ոչ մի օգուտ չի տալիս՝ բացի անպատվությունից և խայտառակությունից: Հիմա դաշնակցական ավազակների ոհմակը թող ամաչի իր արարքների համար, հազար տարի էլ, որ անցնի, մեր սերունդները չպետք է մոռանան այդ ամենը: Դաշնակցականները մի մեծ սև բիծ թողին հայ ազգի վրա, չմտածեցին հայ ազգի ապագայի մասին, ցավալի վերք թողին Հայաստանի սրտում: Ամբողջ մի նահանգ՝ Վարսի նահանգը<sup>338</sup>, թողին

թշնամուն: Մեր հայրենիքի մայրաքաղաք Անի<sup>339</sup>, որը համարվում էր աշխարհի ամենասիրուն քաղաքներից մեկը, մեր հայրենիքի ամենասիրուն սարը՝ Արարատը<sup>340</sup>, և էսպես հայերի շատ հարուստ գանձեր թողին թշնամուն: Թողին մի անբուժելի, անմոռանալի վերք ու կսկիծ, ցավալի վերք թողին ամեն մի հայի սրտում: Թունավոր սև օձերը չմտածեցին ապագա սերունդների մասին: Չարանենգ ձևով վերաբերվեցին հայ ազգի ապագային, ահա այսպես վարվեցին դաշնակցական «մերուժաններն ու վասակները», օձի ծնունդները հայի հողերը թողին հեռացան:

Մեր վարպետ Միխայելը ռուսական թերթ էր կարդում. «*Ռուսական տասնամեկերորդ քանակը մտել է Հայաստան*<sup>341</sup>, հիմա Հայաստանը փրկվեց, տասնամեկերորդ քանակը Հայաստանում է: Հայաստանի հայրենասեր կոմունիստները փրկին Հայաստանը կործանումից: Հայ ժողովուրդը աքսորի և կոտորածի ժամանակ ևս ապրում էր մի լույս հավատով, որ այսօր կամ վաղը հայ ազգի համար հավիտյան կրացվեն ազատության դռները: Այո՛, Կարմիր Հոկտեմբերը<sup>342</sup> հավիտյան ցրեց սև ամպերը, կարկուտն ու դաժանությունը»:

1921թ. թուրքական զորքերը հեռանում էին Հայաստանից<sup>343</sup>, գլուղերում կողոպտում էին հայերի ունեցվածքը, անասուն չէին թողնում, տանում էին: Տեսե՛ք, թե ինչ էին ասում դահիճները. «**Տումազդ** թողեք տները, չէ՞ որ մենք նորից պիտի գանք»: Եվ այդպես էլ սպասում են արյունախում դահիճները: «Ֆաշիստ» թուրքերը Հայրենական մեծ պատերազմի ժամանակ ատամները սրած սպասում էին, որ իրենց հարազատ ալամանը հաղթի ռուսներին, որ հետո էլ իրենք հարձակվեն, գրավեն հարուստ Կովկասը: Բայց դահիճի մուրազը փորը մնաց: Կործանվեց ալամանը, թուրք ֆաշիստները, իրենց անհագուրդ բերանը բացած, նպաստավոր պայմանների էին սպասում, գլուխների պոզերը սրած, վայրի խոզի պես ատամները իրար խփելով՝ չխկչխկացնում էին ու սպասում հարմար վայրկյանին՝ Ռուսաստանի պարտվելուն, որպեսզի իրենք էլ հարձակվեն: Այդ հույսով էլ մինչև այժմ ապ-

րում են:

Արդեն ձուկ բռնելը վերջացավ, հորերը լիքն էին, բացի դրանից՝ բռնած ձուկը թռռի մեջ տաքությունից հոտում էր: Մեր հայ տղեքին բոլորին կրճատել էին, մնացել էի միայն ես: Մտածեցի՝ ի՞նչ անեմ, չէ՞ որ միայնակ եմ այստեղ, գնացի խնդրեցի, ինձ էլ ազատեցին աշխատանքից: Լյուբան էլ կրճատվեց, եկավ մեզ հետ: Գնացիմք Պետրովսկ<sup>344</sup>, մեր շտաբն այնտեղ էր: Մեր հայերը ինձանից նեղացել էին, հետս չէին խոսում, պատճառը ի՞նչ էր... Այն, որ Լյուբան հետևիցս էր եկել, կարծում էին, թե ուզում եմ ռուս աղջկա հետ ամուսնանալ: «*Հայ աղջիկ չկա՞, որ դու ուզում ես ռուս աղջիկ առնել, մեր մեջ երկու հայ աղջիկ կա, որին ուզում ես, նրան էլ հոժարությամբ քեզ կտանք*»: Վեց-յոթ ընտանիք հայեր էին, բոլորն էլ ինձանից նեղացել էին, ում հետ խոսում էի, ինձանից երես էին թեքում<sup>345</sup>: Իսկ ես ու Լյուբան խոսում էինք միմյանց հետ որպես ընկերներ, ամուսնության մասին խոսք անգամ չէր եղել մեր մեջ: Միասին էլ աշխատում էինք:

Ով ուր ուզում էր գնալ, այնտեղի համար թուղթ էին տալիս, աշխատանքի դիմաց տալիս էին, ինչ որ հասնում էր՝ փող, կտոր: Ես մոլորվել էի, չգիտեի ինչ անել, հայերը հետս խռովել էին, ու՞ր գնամ, ո՛չ ծանոթ ունեմ, ո՛չ բարեկամ, ի՞նչ անեմ: Մտածեցի, մտածեցի մի չար միտք մտավ գլուխս. «*Գնամ ընկնեմ ծովը, ազարվեմ այս չարչարանքից, միևնչևե՞րբ տրանջվեմ, կոտորածից հեկոթ թուրքացա, այնուհետև՝ որբանոց, հեկոթ՝ զինվոր, բանվոր դարձա...*»: Ու այսպես տանջվում եմ, կյանքն ինձ հարկավոր չէ, գնամ ընկնեմ ծովը, ազատվեմ ամեն ինչից: Այդպես էլ որոշեցի, ելա գնացի ուղիղ դեպի ծովը: Առջևս հարթավայր էր, հասա ծովի մոտ, իմ դիմաց մի մեծ ժայռ բացվեց, սարսափից ցնցվեցի, նայեցի աջ ու ձախ. մարդիկ լողանում էին ծովում, դեպի արևելք ահագին նավեր էին կանգնած: «*Այս ինչ խելագարությունն էմ մտածել*», -ասացի ինքս ինձ, հետ դարձա, փոր-փոշման գնացի շտաբ: Լյուբան շատ էր փնտրել ինձ, բայց չէր գտել: «*Որտե՞ղ էիր, Վան-*

յա՛, քեզ շար փնտրեցի, չգրա: Այսօր լավ կտոր եմ տալիս, գնանք սրանանք»: «Իսկ ի՞նչ անեմ կտորը»: «Կտորն ի՞նչ կանեն, չգիտե՞ս, գոնե կծախես, փողը կուտես: Ինչո՞ւ ես գույնդ աղյակս գցել, հալից ընկել: Լսի՛ր ինչ, Վանյա՛, գնանք սկզբից փողը սրանանք, հետո էլ կտորը: Թուղթ էլ կսրանանք Կրասնոդարի՝<sup>346</sup> վրա, այնտեղ ինչքան էլ ուզես գործ կա, չէ՞ որ Կրասնոդարը՝<sup>347</sup> մեծ քաղաք է, վախենում ես չկարողանա՞ս ապրել, մենք Կրասնոդարում ենք ապրում»: Ինձ ուրիշ ոչինչ չէր մնում անել. հայերը հետս չէին խոսում, մնում էր Լյուբայի օգնությունը, ուստի համաձայնեցի նրա առաջարկին: Գնացինք, ստացանք մեր հասանելիքը, գնացինք կայարան, տոմս վերցրինք, գնացինք ուղիղ Կրասնոդար: Հասանք Կրասնոդարի կայարանը: Լյուբան քե՛.«Շուր արի՛, Վանյա՛, տրամվայը կանգնած է, նստենք, գնանք մեր տուն»: Գնացինք դուրս, ես առաջին անգամ էի տրամվայ տեսնում: Լյուբան ինձանից բավականին առաջ նստեց տրամվայ, հետո մեկ ուրիշը եկավ գնզգնզացնելով: Ես մնացի այս կողմը, տրամվայը մեր միջից եկավ անցավ: Մինչև այս տրամվայի անցնելը առաջին տրամվայը գնաց: Ես մնացել էի կանգնած, նստեցի այս տրամվայը, որպեսզի հասնեմ Լյուբային: Նստել եմ տրամվայը, նայում եմ, տեսնեմ՝ Լյուբան չկա: Ժողովուրդը իջնում է, բարձրանում է, այսպես չգիտեմ, թե ուր ենք գնում, քանի գնում ժողովուրդը քչանում էր, իսկ տրամվայը գնում էր Կուբանի՝<sup>348</sup> բերնով դեպի արևմուտք: Ես, մենակ նստած տրամվայի մեջ, մտածում էի, վերջը տոմս վաճառող աղջկան հարցրի, թե ուր է գնում այս տրամվայը: «Գնում է սոսնձի գործարան, այնտեղից նորից հետը է դառնում կայարան, իսկ դու ու՞ր ես գնում»: «Ես էլ չգիտեմ, թե ուր, ինչ հետը մի աղջիկ կար՝ անունը Լյուբա, միասին աշխատում էինք շուկ բռնելու տեղում, իրար հետը էլ եկանք Կրասնոդարի կայարանը, դուրս եկանք, որ տրամվայ նստենք, բայց չէր տրամվայը մեզ բաժանեց: Մինչև դուրս անցաք իմ դիմացից, մյուս տրամվայն արդեն գնացել էր, Լյու-

բան էլ մեջը»: «Հինա Լյուբայիդ հասցեն գիրքն օ»: «Չէ՛, որդե-  
րի՛ ց...»: «Ուրեմն այլևս չես գրնի Լյուբայիդ, այս քաղաքում այն-  
քան Լյուբա կա, առանց հասցեի դժվար թե կարողանաս գրնել»: Հասանք սոսնձի գործարան, տրամվայը հետ դարձավ, գալիս  
ենք քաղաք: Միանգամից ժողովուրդը լցվեց տրամվայ: «Այս որ-  
դե՛ն է՞նք»: «Սեմբազ շուկայում ենք»: «Լավ, ես իջնեմ շուկա-  
յում»: Իջա, շուկայում ման եկա, գյուղացիք հաց էին ծախում,  
ֆուրգոնները շարվել կաթ, հավ, ձու էին ծախում: Հաց գնեցի,  
նստեցի, կերա, մի հատ էլ դատարկ բուտկա գտա, մտա մեջը,  
դուռը փակեցի, քնեցի մինչև առավոտ: Այս բուտկայի մեջ մնացի  
հինգ օր:

### Ես լավ մարդկանց գրկում

Մի երեկո պարապ նստել էի աթոռների վրա, մեկ էլ  
միջահասակ մի մարդ, կարակուլից փափախը գլուխը, լավ  
վերարկուն հագին, պայուսակը ձեռքին, հաց վաճառողներից  
փող էր հավաքում: Հասավ իմ ուղղությանը, նայեց, եկավ ինձ  
մոտ.«Հա՛յ ես, արդա՛ ջան»: «Այո՛»: «Զինվո՛ր ես»: «Ժամանակին  
եղել եմ», -պատասխանեցի: Ես դեռ անգլիական զինվորական  
շորերով էի: «Իսկ ինչու՞ ես նստել այստեղ»: «Ի՞նչ անեմ»: «Որդե՛ն է՞ ես ապրում»: «Այս բուտկայի մեջ»: «Այստեղ ոչ ոք  
չունն օ»: «Ոչ մի մարդ»: «Կուզե՞ս աշխատել»: «Ինչու չէ»: «Դե՛  
վե՛ր կաց, գնանք ինչ հեյր, կաշխատես ֆռում, հեյրո տեսնենք՝  
ինչ կլիհի»: Այս բարի մարդը Նարինենց Վաղինակն էր, ապրում  
էր Սադովի փողոցի քսանհինգ տանը: Նստանք տրամվայ,  
հասանք Սադովի, ցած իջանք, Վաղինակն՝ առջևից, ես՝  
հետևից... հանկարծ մի շուն կպավ շինելիցս, սկսեց կծել շինելս,  
ես քաշում եմ ինձ, շունը՝ իրեն: Մեկ էլ Վաղինակ եղբայրը մի  
փայտ ձեռքին վազեց, սկսեց շանը խփելը: Շունը ինձ թողեց,  
գնաց: Ներս մտանք ֆուռը: Նրա եղբայր Բարդուխը հաց էր

վաճառում: Հենց ինձ տեսավ, հարցրեց.«Այս ո՞վ է, եղբա՛յր»:  
 «Մարդ է, էլի»: Ֆոֆի դուռը տրամվայի կանգառի մոտ էր: «Արի՛  
 գնանք փուն: Հա՛, փղա՛ ջան, մոռացա անունդ հարցնել»:  
 «Անունս Հովհաննես է, եղբա՛յր»: Ֆոռֆի միջով անցանք, դուրս  
 եկանք բակ, մեկ էլ տեսա Լյուբային, նա էլ ինձ տեսավ, վազեց  
 եկավ, սկսեցինք իրար համբուրելը: Այսպես կպել ենք իրար, պոկ  
 չենք գալիս, Վաղինակն էլ զարմացած կանգնել մեզ է նայում:  
 «Լա՛վ, Հովհաննե՛ս, դու ասում էիր, թե այսօրեղ ոչ ոք չունես, բա  
 այս աղջկան որբեղի՞ ց՞ գիրես»: Տանից դուրս եկավ Վաղինակի  
 կինը՝ Սոնան, մոտեցավ մեզ, հարցրեց.«Ո՞վ է այս մարդը,  
 Վաղինա՛կ»: «Ես շատ գիրես, որ քեզ ասես, թե ով է»: «Լավ,  
 եկե՛ք փուն»:  
 Գնացինք տուն, նստեցինք, Վաղինակը թե.«Հիմա  
 պատմի՛ր՝ ինձանկը, այս ի՞նչ բարբոն էր, որ դու սարքեցիր»:  
 Ես սկսեցի պատմել.«Միասին աշխատում էինք Պետրովսկում՝  
 չուկ բռնելու պլանորացիայում, միասին եկանք Կրասնոդար,  
 փրանվայ նարելու ժամանակ մեր միջից մի ուրիշ փրանվայ  
 եկավ անցավ, միևնչև սրա անցնելը Լյուբայի նստած փրանվայը  
 շարժվեց: Ահա այսպես իրար կորցրինք, արդեն վեց օր է, ինչ  
 իրար կորցրել էինք»: Վաղինակը ծիծաղից թուլացել էր:  
 Ծիծաղից ծիծաղավարդ թշնեթի վրա փոսիկներ էին առաջանում,  
 որից նա ավելի դուրեկան էր դառնում.«Դուք հիմա ամուսիննե՞ր  
 եք, թե՞ նշանված եք»: «Ո՛չ մեկը, ո՛չ էլ մյուսը»: «Իսկ միմյանց  
 խոսք փվե՞լ եք, որ ամուսնանաք»: «Համարյա չէ»: «Միմյանց  
 սիրո՞ւմ եք»: «Ես չգիրես»: «Լյուբա՛, իսկ դու սիրո՞ւմ ես»: «**Я  
 не знаю**»:

Լյուբան այսօր երրորդ օրն է, ինչ մեզ մոտ է աշխատում: Սո-  
 նան հիվանդ է, առաջին երեխան ունի, օգնող չկա, Լյուբային բե-  
 րել ենք, որ օգնի Սոնային:

-Հովհաննես՝ ս,-Վաղինակը դարձավ ինձ,-ուրեմն Աստծու մատը  
 մեջն է, դուք իրար սիրում եք, այդ երևում է ձեր վերաբերմունքից:

Աշխատենք, աշնանը ձեզ կամուսնացնենք:

Նարինյանները երկու եղբայր էին. մեծը Բարդուխն էր, փոքրը՝ Վաղինակը: Բարդուխը երեխա չուներ, ինքն ու կինն էին՝ Արուսյակը՝ միջահասակ, գեղեցիկ, մեծ-մեծ աչքերով: Ես մնում էի եղբայր Վաղինակենց մոտ: Երկրորդ տարին էր, ինչ նրանք ամուսնացել էին: Երկու եղբայրները նույն բակում էին ապրում, բայց առանձին-առանձին: Ես գրեթե Բարդուխ եղբայրենց տուն չէի գնում: Սոնայի առաջին երեխայի անունը Ասյա էր, անչափ չար էր:

Վեցերորդ օրն էր, որ ես եղբայր Վաղինակենց մոտ էի, օրը կիրակի էր, կեսօրն արդեն անց էր: Մեկ էլ տեսնեմ՝ մի մեծ մարդ՝ մորուքով, սպիտակ երեսով, գլուխը երեսից չէիր տարբերի, այնքան որ մազոտ էր, երկու տղա, մի աղջիկ և մի կին՝ կլիներ մոտ քառասուն տարեկան, սկսեցին Սոնային համբուրելը: Լյուբան դուրս եկավ, ես հարցրեցի, թե ովքեր են: «Սոնայի ծնողներն են»:  
Ծանոթացա Սոնայի եղբայրների հետ, մեծի անունը Մուկուչ էր, փոքրինը՝ Կոլա, իսկ քրոջ անունը Լյուբա էր: Եկավ Վաղինակ եղբայրը, սկսեցինք խոսելը: «Գիրե՛ս, Վաղինա՛կ, ինչու՞ ենք եկել»:  
«Ես ի՞նչ գիրեմ»:  
«Սոնային փվինք, հարկավոր է փեղը լրացնել: Եկողը կիրակի է, Ասրված նասիք անի, Մուկուչին նշանենք: Մի լավ աղջկա փեղ եմ արել, Վաղինա՛կ ջան: Դու ես մեր հույսը, մեր կողմից դու պետք է գլուխս քերես»:  
«Լա՛վ, մայրի՛կ ջան, որ ասում ես, կամոսնացնենք»:

Ես աշխատում էի ֆռում: Եղբայր Վաղինակի օգնականն էի, այլուր էի մաղում, դասավորում էի հացերը, իսկ խմորը երկու եղբայրներն էին շաղախ անում: Իմ գալու ութերորդ օրն էր, Բարդուխը չկար, որ խմոր շաղվեինք.«Հովհաննե՛ս, եկ միասին շաղվենք»:  
«Հիմա, եղբա՛յր»:  
Ես գիտեի, թե հեշտ գործ է, նա սկսեց ինձ սովորեցնելը.«Մա ախալեն՛ս արա, նա ախալեն՛ս արա»:  
Իսկ իմ հալը հարցրա, ես գիտեի, թե աշխարհում սրանից դժվար գործ չկա, ամբողջ խմորը կպել էր թևերիցս, չեմ կարող շարժվել, ամոթից չգիտեմ ինչ անել, իսկ Վաղինակ եղբայրը հանգիստ խաղում

Է խմորի հետ, հեշ պետքը չէ: Երկու-երեք փութի չափ խմորը կտրում է, գցում վերև, հեշ պետքը չէ: Վերջապես շաղվեցինք պրծանք: Ես մտածում էի. «Այս ինչ դժվար գործ է, երևի չկարողանամ գլուխ հանել, իսայրառակվեմ»: Բայց մնացած գործերը հանգիստ անում էի, մեր խելառ Ղազարի խոսքերը միտքս ընկան. «Այսօր էլ պրծա էս փակցանքից»: Լյուբան եկավ մոտս. «Այս ինչ դժվար գործ է խմոր շաղվելը, Լյուբա՛»: Լյուբան ծիծաղելով ասաց. «Կսովորես, Վանյա՛»: Իսկապես որ, սովորեցի, տասը փութ խմորը միայնակ էի շաղվում:

Հարգելի՛ ընթերցողներ, շարունակությունը թողնում ենք երկրորդ գրքի մեկ այլ հատվածում...

## **Իմ գինակից ընկերոջ պատմածը մեր գնդի ճակատագրի մասին**

Ես գրող չեմ, բայց հարկադրվեցի գրել: Գրել ու ցավել մեր անցյալի մասին: Հուշերս գրում եմ հայերի ու նրանց համար, ովքեր հավանաբար ուրախ կլինեն՝ մի օգտակար գիրք կս ընթերցելու:

1922թ. ես շրջում էի Կրասնոդարի նոր շուկայում, մեկ էլ տեսնեմ՝ երեք-չորս տղայի ծեծելով տանում են: Ես էլ կանգնեցի նայելու, եկան իմ մոտից անցնելու, մեկ էլ տեսնեմ՝ մեր գնդի տղաներից մեկը՝ միլիցիայի հագուստով, քիթն էլ ծուռ: Աղինում երկուսս իրար հետ շատ մոտ էինք: Վազեցի, բռնեցի թևից, մեր գնդացորդների տասնապետն էր՝ Թումասը: Այս միլիցիան դարձավ ինձ նայեց. «Վա՛յ, դու՞ ես, Հովհաննես՛ս»: «Այո՛, ես եմ»: «Եկ գնանք»: «Ես շուկայի կամենդանյուն եմ, այս փղաների գործը վերջացնեմ, կխոսեմք»: Վերջապես նստեցինք մի առանձին սենյակում, սկսեցինք խոսելը: «Դե հիմա դու պարսմի՛ր, Հովհաննես՛ս, հետք էլ ես կպարսմեմ, դու, որ 1918թ. գնացիր Շահառլի, ինչու՞ եր չեկար»: Ես սկսեցի պատմելը, թե ինչպես պատահեց, որ

միացա Անդրանիկի բանակին: Այնուհետև մանրամասն պատմեցի վերը հիշածներս՝ երկար ճանապարհորդությունս, իմ ճակատագիրը:

-Դե հիմա էլ դու՛ ինձ լսիր, Հովհաննես՛ս: Հիշու՛մ ես՝ Ադինից նահանջելուց հետո մեզանից մեկին Շուրազյալ գյուղում սպանեցին:

-Շատ լավ եմ հիշում, իմ ընկեր Մանուկն էր:

-Դե հիմա ավելի վատ բաներ լսի՛ր մեր գնդի մասին: Ես կարճ կպատմեմ: ...Մեր գունդը Համամլուում մնաց չգիտեմ յո՞թ, թե՞ ութ օր: Ալեքսանդրապոլից բավականին զորք եկավ մեժ թնդանոթներով ու ծանր գնդացիներով: Համամլիից սկսեցինք շարժվել դեպի Ղարաքիլիսա, կանգ առանք Ղշլաղում: Ղշլաղից բավականին հեռու սկսեցինք դիրքեր փորել ու սպասել թշնամուն: Վերջապես երևացին թուրքերը, գալիս էին շատ հանգիստ, ինչպես Էրզրումում էին գալիս, առանց վախի: Լավ մոտեցան... մերոնք սկսեցին ռմբակոծելը: Սկսեցին աշխատել գնդացիները: Թշնամին մոլորվել էր, այսպիսի բանի չէր սպասում, թուրքը առաջ շարժվելու հույսը կորցրեց: Վեցերորդ օրը Վարդանլուի<sup>349</sup> կողմից ուժեղ զենքի ձայն էր գալիս: Դու մի ասի, տեղական թուրքերը, որոնք տեղանքին շատ լավ ծանոթ էին, կլինեին հազար հոգի, սարերով Վարդանլուից իջնում էին մեր թիկունքը: Խուճապն ընկավ զորքի մեջ՝ նահա՛նջ: «Ո՛վ էր լսողը: Ամբողջ ճակատով նահանջում ենք: Թուրքերը Վարդանլուի կողմից լցվեցին Ղարաքիլիսա: Հասանք Ղշլաղ, գնդացիները զցեցինք ջուրը, որ հեշտ նահանջենք, ուզածիդ չափ էլ զինվոր ենք: Հասանք Մանահին<sup>350</sup>, մեր պարուչիկը Թբիլիսիից էր. «Տղե՛ք, ո՞վ է ուզում ինչ հետք գալ Թբիլիսի»<sup>351</sup>: Ութսունի չափ տղա, մեկն էլ ես էի, առավոտյան պատրաստվեցինք գնալ Թբիլիսի<sup>352</sup>: Հասանք Ջոջկան<sup>353</sup>, այնտեղից էլ մի մարդ մեզ տարավ Խաչեն Պոլիս<sup>354</sup>: Ահա տես, թե ինչ օյին բերեցին մեր գլխին խաչենցիները: Ո՛վ էր հայ գյուղացուց այսպիսի բան սպասում: Մի վեց հոգի՝ բավականին տարիքով մարդիկ, եկան մեզ խնդրեցին, որ մեր զենքերը տանք իրենց. «Մեր գյու-

դում,-ասում էին նրանք,-գենք չկա, չորս կողմերս էլ թուրքերն են, գոնե գենքով մենք թուրքերից պաշտպանվենք, փոխարենը չեզ ապահով թրխիսի կհասցնենք»: «Շար լավ եք մտածել»,-ասաց մեր պարուչիկը, ու գենքերս հանձնեցինք գյուղացիներին: Իսկ խաչենցիները ահա թե ինչ էին մտածել.«*Եկեք սրանց հանչնենք թուրքերին, թուրքերի մուր մենք լավ մարդ կլինենք*»: Ու այդպես էլ արեցին: Իրենց հարևան թուրքերին հայտնել էին, որ իրենց մոտ ութսուն հայ զինվոր կա, որոնց կբերեն այսինչ տեղը, թող թուրքերը այդտեղ սպանեն հայ զինվորներին:

Երկրորդ օրը՝ երեկոյան, մեզ ասացին, որ պատրաստվենք, քանի որ շուտով պիտի գնանք: Մութը բավականին ընկել էր: Ելանք: Գնում ենք Վալադի հետևից: Չգիտեմ, թե ինչքան գնացինք, մի ձորի մեջ Վալադն անհետացավ: Մեկ էլ տեսնենք՝ բոլոր կողմերից մարդիկ են մոտենում մեզ: Սկսեցին մեր վրա կրակելը, մենք իրար էինք խառնվել: Լսվեցին վիրավորների ճիչերը: Իմ վրա եկողներին ես կրակեցի. ատրճառակը մոտս էր: Երկուսին սպանեցի: Ես ու մեր զինվորներից մեկը սկսեցինք դեպի անտառ փախչել: Մեզ հետապնդող չեղավ, երկուսով բարձրացանք սարնիվեր: Յերեկները թաքնվում էինք, իսկ գիշերները՝ քայլում: Ութ օր հետո հազիվ թրխիսի հասանք, իսկ մեր ընկերները բոլորը գոհվեցին դավաճան հայերի երեսից: Ահա այսպես, Հովհաննես՝ս, մյուս ազգերը իրենք իրենց ազգին օգնում են, որ բազմաճան, իսկ մերոնք սեփական ազգին դավաճանում են, որպեսզի աշխարհի երեսից ոչնչանան: Ու այդպես, Հովհաննես՝ս ջան, մինչև այսօր էլ այդ մութ գիշերը չեմ կարող մոռանալ, ինչ օյին խաղացին մեր գլխին խաչենցիները: Մարսափելի բան արեցին պոլսեցիք, ոչ մի գյուղացի դեռ այդպիսի բան չէր արել իր ազգի հանդեպ, ինչ արեցին խաչենցիները:

...Հասանք թրխիսի, լիքը գաղթականներ էին, որոնք գնում էին Ռուսաստան: Մենք էլ նրանց խառնվեցինք: Մարերով գնում ենք Վալադիկավկաս<sup>355</sup>: Հասանք Կազբեկի<sup>356</sup> մոտերը, չաչանները վրա տվին: Իմ ընկերը հենց առաջին կրակոցից սպանվեց: Մենք էլ

սկսեցինք կրակելը, մեր մեջ գենք ունեցողներ շատ կային, չաչանները թողեցին գնացին: Այնուհետև շարունակեցինք ճանապարհը, հասանք Վլադիկավկաս<sup>357</sup>, իսկ այստեղից գնացինք Արմավիր<sup>358</sup>: Տե՛ս, թե ինչ պատահեց Արմավիրում<sup>359</sup>, Հովհաննե՛ս: Գաղթականությունը հա գալիս էր, հավաքվում էին կազարմաների մեջ: Այստեղ էլ լիքը գորք էր, բայց կազակներ էին՝ սպիտակ գվարդիականներ<sup>360</sup>: Մեկը մեկին ասում էր. «*Այս գիշեր կազակները մտել են կազարմաները, փախցրել երկու աղջկա*»: Այսպիսի մի երեք-չորս դեպք պատահեց, հետո մի գիշեր էլ հրացանի կրակոց լավեց, նորից եկել էին աղջիկ տանելու, բայց աղջկա երկու եղբայրները դիմադրել էին: Կազակները երկուսին էլ սպանել էին: Աստծու բանն է, դրանցից մեկը թուրքերեն ասում է. «*Որ փախաք, եկաք այստեղ, կարծու՞մ եք՝ պիտի ազատվե՞ք... մեկ է, բոլորիդ կջարդեն, սպասում ենք, որ նահանջ լինի*»: Դու մի ասի, դրանք թուրք գերիներ են, Դենիկինի<sup>361</sup> բանակում կամավոր են գրվել ու կռվում են բոլշևիկների դեմ: Բոլորն էլ դազախի շորերով, բոլորովին դազախներից չես տարբերի, և ով կկարծի, թե սրանք թուրքեր են, կլիմեին վեց հարյուր հոգի: Մենք զարմանում էինք, թե ռուսները ինչու պիտի այդպիսի բան անեն: Առավոտյան սպանվողների տերերը գնացին, հայտնեցին բանակի շտաբը, հինգ օֆիցեր եկան, ստուգեցին, տեսան, որ ճիշտ է, արձանագրություն կազմեցին դեպքի մասին, գրեցին սպառնալիքների մասին՝ **Մեկ է, բոլորիդ կսպանենք**» խոսքերը: Արձանագրության տակ ստորագրեցին տասնյոթ հոգի: Գնացին, հետո նորից եկան, ստուգեցին, խոսեցին դեպքերի մասին: Այդպիսի դեպքեր եղել էին չորս-հինգ անգամ, սպանել էին երկու հոգու: Ստուգող հանձնաժողովի ղեկավարը դարձավ մեզ. «*Դուք էլ մի՛ վախեցեք, հանցավորները վաղը իրենց արժանի պատիժը կսրանան*»: «*Եվ իրոք որ, երկրորդ օրը բոլորին Կուրանի մոտ գնդակահարեցին, թափեցին Կուրանը: Ու այդպես էլ հանցագործությունը վերջացավ, ոչ ոք այլևս չէր կարող ասել՝ դու քոռ ես կամ թուխալ ես:*

...*Չգիտեմ՝ ինչքան մնացինք, կարմիրները գրավեցին Արմա-*

վիրը: Ես մտա կարմիրների բանակը, կռվեցի Դենիկինի դեմ: Սպիտակները պարսվեցին: Հասանք մինչև Նովոռոսիյսկ<sup>362</sup>: Մեր դիվիզիան պատրաստվում էր տեղափոխվել Հայաստան, բայց, չգիտեմ ինչ պատճառով, դա հետաձգվեց: Չկարողացա իրագործել իմ նպատակը՝ իսաչենցիներից ընկերներին վրեժը հանել: Չորացրվեցինք, եկանք Կրասնոդար, այժմ ծառայում եմ միլիցիայում: Ահա իմ գլխին եկածը, Հովհաննես՝ ս: Հիմա դու ասա՛, թե ինչ գործ ես անում»: «Ես աշխատում եմ Նարինենց մոտ, Սահովի, քսանհինգ տարեկան»: «Ուզո՞ւմ ես, քեզ տեղափոխեմ օֆիցերների դպրոցը»: «Ուրախությամբ», - ասացի ես: «Լավ, վաղը կգաս, ես քեզ պատասխան կտամ՝ հա՞, թե՞ չէ»: Ինձ տարիքի համար չընդունեցին, քանի որ ես քսաներկու տարեկան էի, իսկ այստեղ հաճախում էին տասը տարեկան տղաները: Մեծերի համար դպրոց չկար: Իմ այս ընկերոջը դեռ կհանդիպենք երկրորդ գրքում, նա ինձ փրկեց մեծ փորձանքից: Իմ զինակից ընկերոջ պատմածին ես մի երկու վկայություն էլ բերեմ:

1967թ. Լենինականի շուկայում խնձոր էի գնում մի մարդուց: Սա գովում էր իր խնձորը. «Կիրովականի Արչուրի<sup>363</sup> իսկոռն է, լավն է, լավը»: «Ներողություն, ընկե՛ր, Դուք հա՞յ եք», - հարցրի: «Չէ՛, ես ադրբեջանցի եմ, 14թ. դոքրավոլնի<sup>364</sup> կռվել եմ Գիկի դիվիզիայում»: «Բանի՞ տարեկան ես, ախպե՛ր»: «Իննսուն տարեկան եմ»: «Չեր Արչուրի մարդիկ լավ մարդիկ չեն, գիտե՞ս»: «Ինչի՞ համար, եղբա՛յր»: «1918թ. Ղարաքիլիսայի ճակատամարտում<sup>365</sup> դուք օգնել եք օսմանցիներին: Սարերով իջել եք Վարդանլու, խուճապ եք գցել հայ զորքի թիկունքում, ու օսմանցիները այս ճակատամարտում հաղթել են: Այս բարի մարդը միանգամից խոստովանեց. «Շատ ճիշտ է, եղբա՛յր, քո ասածը, մենք մեղավոր ենք, մեզ սրիպեցին, որ այդ սև գործը անենք»: Ես ուզում էի Ղարաքիլիսայի ճակատամարտի մասին երկար խոսել այս մարդու հետ, բայց չհաջողվեց: Սրա թոռը՝ աչքի մեկը կույր, կլիներ տասնհինգ-տասնվեց տարեկան, ասաց. «Շուր արա, պա-

*այի՛, քսան թույն մնաց գնացքի շարժվելուն*»։ Մրանք հավաքեցին իրենց ունեցած-չունեցածը, գնացին, ես երկար ժամանակ նայում էի նրանց ետևից. չնայած այդ տարիքին՝ նա բոյով ու առողջ էր։

Նույն օրը մի ուրիշ դեպք էլ պատահեց։ Ես թթու բիբար էի գնում դարձյալ Լենինականի շուկայում, մի ուրիշ գնող վաճառողին հարցրեց. «*Այս որսրեղի՞ց է քո բիբարը*»։ «*Ես Խաչեն պոլսեցի եմ, Վրաստանից*»։ Ես փշաքաղվեցի՝ լսելով այդ։ Բիբար վաճառողը մի գեղեցիկ երիտասարդ էր՝ քսանչորս-քսանհինգ տարեկան։ «*Լա՛ւ՛լ՛ տղա, դու պոլսեցի՞ ես*»։ «*Հա՛, ի՛նչ կա*»։ «*Գիրեն՛ս, որ ձեր գյուղացիք լավ մարդիկ չեն, տղա՛ ջան*», -ասացի ես։ «*Դու՛ք լավ մարդիկ չեք*», -կոպիտ-կոպիտ իմ հարցին պատասխանեց նա։ «*Ա՛յ տղա, հասկացի՛ր իմ ասածը, նոր պատրաստանի՛ր, թե ով է լավ, ով է վատ։ Ձեր գյուղացիք 1918թ. վատ գործեր են արել, ութսուն զինվորի սպանել են տղվել։ Հենց սրա համար եմ ասում, որ ձեր գյուղացիք լավ մարդիկ չեն*»։ «*Վա՛ր քան են արել, սպանել են, -ասաց այս տղան, -դրանով ի՛նչ ես ուզում ասել*»։ Ես այլևս չհամբերեցի, միտքս ընկավ ջահելությունս, հարձակվեցի այս տղայի վրա, կարծում էի իմ ընկերներին սպանողը հենց այս տղան է, երկու ուժեղ ապտակ հասցրի, այնպես խփեցի, որ այսօր ես մենել, թե վաղը, այս տղան փովեց գետնին, ուշքը գնաց։ Թիվ երեք կոպտորգի Վարդուշը սկսեց գոռալ. «*Բռնե՛ք, բռնե՛ք, բիչեն իւեղձ տղուն սպանեց, յաման սպանեց էս քյոփազ շունը։ Այս տղան իր համար բիբար էր ծախում, էս քյոփազ բիչեն եկավ սպանեց իւեղձին, բռնեցե՛ք*», -գոռում էր ձայնով մեկ։ Ժողովուրդը հավաքվեց, ջուր բերեցին, այս տղային ուշքի բերեցին։ Եկավ շուկայի միլիցիան՝ Շահվալադը։ Այս տղայի ժամացույցը չկար, փողերն էլ հանել էին։ Ես էլ զարմացել էի խփելուս համար, սառել կանգնել էի։ «*Լա՛ւ՛լ՛, գնանք, կպարզենք*», -ասաց միլիցիան։ Կոպտորգի աշխատող կինը՝ Վարդուշը, նորից ձայնով մեկ գոռում

էր. «*Բիշուն չքողներ, իսեղճ տղուն սպանեց, յաման բռնեցէ՛ր...*»:

Գնացիւք միլիցիա: Այստեղ բոլորը ինձ էին նայում, որ բիճա հալով ծեծել եմ այս երիտասարդ տղային: Լեյտենանտ Հմայակն էր շուկայի պետը: Մեզ բերող միլիցիան զեկուցեց, թե կովի ժամանակ ինչ էր պատահել: Այս տղայի ժամացույցն ու փողերը գրպանից հանել են, ուշքը կովի ժամանակ գնացել էր: «*Է՛, բիշա՛ ջան, մի պատմի՛ր տեսները, թե այս ինչ հաշիվ է չէր մեջ*»: Ես պատմեցի, որ 1918թ. հաշիվն է իրենց գյուղացիների հետ, ոչ թե իր հետ: «*Հլա պատմի՛, բիշա՛ ջան, այդ ի՞նչ վայր բան են արել*»: Ես մեկ առ մեկ պատմեցի մեր գնդի տղաների ճակատագրի ու խաչենցիների գազանությունների մասին. «*Ահա բոլորը, ընկե՛ր լեյտենանտ: Ես իրեն միայն ասացի, որ չէր գյուղացիք լավ մարդ չեն, վայր գործ են արել, իսկ այս տղան թե՛*»: «*Ուրեմն վայր են եղել, որ սպանել են*»: «*Ես այլևս չհամբերեցի, միտքս ընկավ ջահելությունս, ընկերներիս անխիղճ սպանությունը... հարձակվեցի մի երկու հար խիեցի, կարծում էի՝ ինքն է սպանողը, ահա բոլորը*»: «*Ձեր դեպքի մասին ճի՞շտ է ասում բիշեն, տղա՛ ջան*»: Այս տղան շշմել մնացել էր, չէր էլ ուզում խոսել, գանգուր մազեր ուներ, գեղեցիկ, միջահասակ չաղլիկ տղա էր: «*Դե խոսի՛ր, ի՞նչ ես լիկվել*»: «*Ես ինչո՞ւ րե՛մ մեղավոր, որ մեր գյուղացիք վայր բան են արել*»: «*Այս բիշան քեզ չէր մեղադրում, ճի՞շտ է, դու ինչո՞ւ քեզ վրա վերցրիր գործի եղելությունը*»: Միլիցիա Հմայակը դարձավ ինչ. «*Բիշա՛, հիմա կարող ես այս տղային նորից մի լավ ծեծել*»: «*Չէ՛, ջանը՛ն, մի բան էր, եղավ: Ես ի՞նչ գործ ունեմ այս տղայի հետ*»: «*Հալալ լինի քեզ, որ ծեծել ես: Գնա՛, բիշա՛, դու ազար ես*»: Ես երբեմն հանդիպում եմ այդ տղային. «*Ո՞նց ես, Ռազմի՛կ...*»: «*Դե լավ, է՛...*»:

Ահա բոլորը, մնացածը թողնում եմ երկրորդ գրքի հաջորդ գլուխներին, հարգելի՛ ընթերցողներ<sup>366</sup>....

## Վերջաբանի փոխարեն

Հովհաննես Թռչունյան-Հովհաննիսյանի անավարտ հուշապատումը կենսագրական համառոտ տվյալներով համալրելու համար մեջբերում ենք մի փոքր հատված Գ. Ստեփանյանի «Երզնկա» աշխատությունից.«1924թ. Եկատերինոդարում Հովհաննեսը ամուսնացել է Տրապիզոնի հայտնի ընտանիքներից մեկի շառավիղ Վարդանուշ Լուսապրյանի հետ: Այս ժամանակ է, որ ի պատիվ իր Հովհաննես պապի՝ ընդունել է Հովհաննիսյան ազգանունը, իսկ ավագ եղբայրը՝ Հարությունը, շարունակել է կրել Թռչունյան ազգանունը: 1920-ական թթ. վերջերին Հովհաննեսը տեղափոխվում է Հայաստան և մշտական բնակություն հաստատում Լենինական քաղաքում: Հայրենի հողի վրա դարձյալ հառնում է երիցս ոչնչացված ընտանիքի ոգին՝ աշխարհին ավետելով նոր երզնկացիների հարությունն ու վերընձյուղումը: Իր անտիպ հուշերում Հովհաննեսը ոչ առանց հպարտության գրել է.«*Ես Հովհաննես պապիս գերազանցեցի. ունեցա յոթ փղա և երկու դուստր*»: Յոթ տղաներն ու դուստրը նրան պարգևել են 21 թոռ և 42 ծոռ, բոլորը միասին՝ 72 հոգի: Այսպես է ցեղասպան թուրքից իր ընտանիքի վրեժը լուծել 1899թ. Երզնկայում ծնված Հովհաննես Հովհաննիսյանը: Իսկ եղբայրը՝ Հարությունը, որ բնակություն է հաստատել Կիրովականում (Վանաձոր), ունեցել է չորս դուստր:

1941թ. հուլիսին Հովհաննես Հովհաննիսյանը (ունեցել է արտոնություն) մեկնել է ռազմաճակատ և մասնակցել Հայրենական մեծ պատերազմին: Ծառայել է 390-րդ Հայկական հրաձգային դիվիզիայում: Մասնակցել է Կերչի պաշտպանական մարտերին: 1942թ. մայիսին ծանր վիրավորվել է ու գորացրվել:

Յեղասպանությունը վերապրած, համաշխարհային երկու պատերազմներին մասնակցած, Լենինականում հարգված ու ճանաչված վարպետ Հովհաննեսը կյանքի գլխավոր նպատակն է համարել զավակներին (Աշոտ, Լևոն, Վոլոդյա, Անիկ, Պետրոս,

Հայկ, Գրիգոր, Սամվել) դաստիարակել Երզնկայի ավանդույթներով ու սովորույթներով, իր ընտանիքին հատուկ անսահման աշխատասիրությամբ, համեստությամբ, կամքով ու համառությամբ, դաստիարակել որպես ճշմարիտ ու խոհուն հայրենասերների՝ փարված հողին ու ոգուն: Ի դեպ, ավագ որդու անդրանիկ զավակը կրում է Հովհաննես անունը, երրորդ Հովհաննեսը հարյուր տարվա ընթացքում: Մահացել է 97 տարեկան հասակում՝ 1996թ., Լենինականում»<sup>367</sup>:

## Резюме

Существуют многочисленные научные работы, посвященные геноциду армян в Западной Армении в 1915 г. Все исследования подобного рода основаны на официальных источниках и документах. Они представляют масштабы этой страшной трагедии начала прошлого века. Публикация серии воспоминаний непосредственных свидетелей и жертв геноцида - дополнение к этой картине. Подготавливаемая к изданию серия воспоминаний непосредственных свидетелей и жертв геноцида 1915 г., открытая воспоминаниями Каджуни Торосовича Карагезяна “По пути в Тер Зор”, дополнена еще тремя воспоминаниями, читая которые представляешь, каким ужасом и страхом были объята чудом спасшиеся и какой незаживающей раной остались эти воспоминания в невинных душах свидетелей самого большого злодеяния начала 20-ого века, сотворенного против всего человечества. В 2006 г. были изданы воспоминания Айрапета Айрапетовича Тонояна “Из прошлого”, которые ценны тем, что он и его семья пережили три резни, первую в Муше (Западная Армения), две другие в Восточной Армении в 1918 и 1920 гг.. В 2008 г. издаются воспоминания Миграна Казаровича Казаряна “Трагедия из биографии. Турция 1915г.”, где автор на историческом фоне событий 1914-16гг. описывает взятие русскими войсками города Битлиса, во время которого во главе казачьих войск и армянского народного ополчения стал генерал Андраник (Андраник паша). Однако самой ужасной частью воспоминаний М.К.Казаряна мы считаем описание концлагеря, где содержались депортированные армяне города Битлиса и окружающих его сел до полного истребления в одном из ближайших ущелий Битлисских гор, и то, каким неимоверным страданиям и насилию подвергались женщины и дети в этом лагере под названием “Арабу камурдж”. К столетию Великого геноцида армян мы издаем еще одно воспоминание “Отступление нашего полка (мемуары Оганеса Погосовича Оганнисяна-Трчуняна)”. Мемуары содержат очень ценную историческую, этнографическую, социально-экономическую, культурную информацию. Переживший Великий геноцид вспо-

минает важные сведения о резне армян Эрзрумского вилаета, вспоминает взятие Ерзнгана русскими войсками, о параде русских войск на площади Заман, который принимал великий князь Николай, описывает древние крепости Западной Армении (крепости Эрзрума, Гасан-кала), вспоминает походы генерала Андраника, в отряде которого он сам служил, передает редкую информацию о сиротских приютах Ерзнгана, Эрзрума, Александрополя (Казачий пост), пишет о русско-японской войне, Владикавказской республике Деникина, о резне армян в Петровске (Махачкала), которую организовали чеченцы. Ценность мемуаров заключается в том, что переживший вспоминает сведения своих родных, близких и друзей. Эти сведения многозначны и относятся не только к 1915 г., а также к турецко-армянским войнам 1918 и 1920 гг. Личность его настолько эрудирована, что он не раз признается, что несет ответственность за все написанное в своих мемуарах. Однако определенной нерешенной задачей на протяжении всей жизни переживших Великий геноцид остается проблема тяжелого душевного состояния-глубокий психологический стресс, который заставляет переживших написать мемуары, но не решает глобальной проблемы тяжелого душевного состояния.

## Summary

There are many scientific works devoted to the Genocide of Armenians in Western Armenia, in 1915. All the investigations of this kind are based on official sources and documentations. They present the scales of this terrible tragedy in the beginning of the previous century. The publication of series of recollections of direct witnesses and victims is an addition to that picture. A series of recollections of direct witnesses and survivors of the Genocide in 1915 is prepared for the publication by us. The recollections of Kadzuni Karagozyan became known through "On the Way to Der Zore", has been completed by two other recollections. Reading these lines one can visualize how horror-stricken were the innocent people who survived by a miracle and what incurable wounds has left in the souls of the witnesses of the heinous crime of the 20th

century committed against the whole humanity.

In 2006 Hayrapet Tonoyan's recollections were published "From the Past" which are priceless from the point of view that he and his family survived three massacres, first in Mush (Western Armenia), and two others in the

Eastern Armenia in 1918 and 1920. In 2008 Mihran Ghazaryan's recollections were published "Tragedy from the Biography; Turkey in 1915" in which the author depicts on the background of the historic events.

(1914-1916), the capture of the town Bitlis during which Andranik (Andranik Pasha) was the head of Kazak Army and the Armenian National Volunteer Corps. However, the most outrageous part of Ghazaryan's recollections we consider the depiction of the Concentration Camp where the deported Armenians of the town Bitlis were kept and the extermination of the population of the neighboring villages at the adjoining caves of Bitlis Mountains. And what unimaginable violence and tortures were subjected the women and children in.

In the given book we publish the bitter recollections of Hovhannes Trchunyan-Hovhannisyan "The retreat of our regiment". The memorial includes various dialogues, quotations, folklore (song, epic literature, stories, proverbs and sayings, blessings, curses, prayers, oaths and ashug songs), oral traditions. It consists of eight note-books (totally 369 pages). During the Genocide the eye-witness was 16-17 year old teenager. Having a narrow escape he settled down and for a long time lived in Leninakan (Gyumri). The memorials of Hovhannes Hovhannisyan-Trchunyan was written in 1968 after 53 years of 1915 Genocide. The person who has had the Genocide recalls all the bad memories of Erzurum area, the revival of Erznka by the Russian army, the parade in the Zaman Square of Erznka that was welcomed by a great lord Nickolay. The person describes Armenian castles (Erzurum, Hasan-kala) and mentions the campaigns of general Andranik and his army where he has served. He gives the description of the orphanages in Erznka, Erzurum and Aleksandrapol (Kazachi Post), Russian- Japanese war, the Vladica-

casian Republic established by Denikin, the massacres of the Armenians organized by the Chechens in Petrovsk (Makhachkala). The value of the memorials is that he remembers the facts concerning his relatives, close friends. The facts are polysemanitic and refer not only to 1915 but also the Armenian- Turkish war in 1918 and 1920. He is so well- informed that is responsible for his writings. In parallel to the above mentioned things he has severe unsolved problems, i.e his stress that makes him create this memorial but it does not overcome all his inner difficulties.

## Համառոտագրություններ և հապավումներ

**անգլ.**-անգլերեն

**արբ.**-արաբերեն

**Արլ**-արևելք, արևելյան

**Արմ**-Արևմուտք, արևմտյան

**բարձր**-բարձրություն, բարձրությունը

**բրբ.**-բարբառային

**գ.**-գործ

**գր.**-գրամ

**ԵՀ**-Երևանի համալսարանի

**ԵՊՀ**-Երևանի պետական համալսարան

**Եր.**-Երևան

**թ.**-թերթ

**թրթ.**-թուրքերեն

**ԺՀԲ**-Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան

**ժող.**-ժողովրդական

**իտ.**-իտալերեն

**լատ.**-լատիներեն

**խոր**-խորանարդ

**հ.**-հատոր, **հատ.**-հատորով

**ՀԱԱ**-Հայաստանի ազգային արխիվ

**ՀԱԲ**-Հր. Աճառյան, Հայերեն արձատական բառարան

**ՀՀՀ**-Հայկական համառոտ հանրագիտարան

**ՀՍՀ**-Հայկական Սովետական հանրագիտարան

**հզ.**-հազար

**ՀՀԳԽ**-Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն

**ՀՀՀ**-«Հայկական հարց» հանրագիտարան

**հս**-հյուսիս

**հվ**-հարավ

**հուն.**-հունարեն

**ՀՏԲ**-Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան

**ՀՅԹԻ**-Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ

**Նշվ.** աշխ.-նշված աշխատություն

**ՊԱԿ**-Պետական անվտանգության կոմիտե

**պրսկ.**-պարսկերեն

**ռուս.**-ռուսերեն

**ց.**-ցուցակ

**քառ**-քառակուսի

**քրդ.**-քրդերեն

**օսմ.**-օսմանյան

**ֆ.**-ֆոնդ

**ֆր.**-ֆրանսերեն

**БРЭС**-Большой Российский энциклопедический словарь

**БСЭ**-Большая Советская Энциклопедия

**гос.**-государственное

**Եր.**-Երևան

**Изд.**-издательство

**М.**-Москва

**Ред.**-редакция

**СВЭ**-Советская военная энциклопедия

**т.**-том

## Ծանոթագրություններ

<sup>1</sup> Հուշապատումների նման վերլուծություն կատարել է Վ.Սվազյանը, ուստի և մենք առաջնորդվում ենք նրա առաջադրած սկզբունքներով և օրինաչափություններով: *Տե՛ս Վ.Սվազյան, Հայոց ցեղասպանությունը և պատմական հիշողությունը, Եր., 2003, էջ 14:*

<sup>2</sup> *Տե՛ս Վ.Սվազյան, էջ 14:*

<sup>3</sup> *Տե՛ս Վ.Սվազյան, էջ 15:*

<sup>4</sup> *Տե՛ս Վ.Սվազյան, էջ 17:*

<sup>5</sup> *Գ.Ստեփանյան, Երզնկա (Հնագույն դարերից մինչև մեր օրերը), Պ.Հ. Հովհաննիսյանի և Ա.Գ. Տեր-Ստեփանյանի խմբագրությամբ, Եր., 2005, 680 էջ, էջ 607-610:*

<sup>6</sup> *Եղիշե Քաջունի, Ջորավար Անդրանիկ Հայկական առաջին հարուածող զորամասը, Եր., 2015:*

<sup>7</sup> *Կ.Ալեքսանյան, Միհրան Խաչատրյանի հուշերը զորավար Անդրանիկի, Հայկական առանձին հարվածող զորամասի գործունեության մասին, Հայկազեան հանդես, հ. 36, Բեյրութ, 2016, էջ 527-555:*

<sup>8</sup> *Թ.Խ. Հակոբյան., Ստ.Տ. Սելիք-Քախչյան, Հ.Խ. Բարսեղյան, ՀՏԲ, 5 հատորով, ՀՏԲ, հ. III, Եր., 1991, 992 էջ, հ. III, էջ 542:*

<sup>9</sup> Տարածք:

<sup>10</sup> Վերապարծը հավանաբար ի նկատի ունի Աբդուլ Համիդ II-ին:

<sup>11</sup> **Սեֆերիլիքից՝** համընդհանուր զորահավաքից հետո:

<sup>12</sup> Հավանաբար չաթաներ, չեթեներ, չետեներ՝ չետնիկների գնդեր (Բալկաններում՝ տասնապետ):

<sup>13</sup> Ղարադեզին, Ղարադիզին, Ղարատիկին, Գարատիկին, Կարադիզին, Կարադիքին, Ղարատեկին-գյուղ Արմ Հայաստանի, Երզրումի նահանգի Երզնկա գավառում՝ Երզնկա քաղաքի մոտ: 1872-73 թթ. ուներ 15 տուն հայ, 13 տուն քուրդ, 1914թ.՝ 70 տուն հայ բնակիչ. զբաղվում էին երկրագործությամբ և արհեստներով: Եկեղեցին՝ Ս.Յրեշտակապետ (կառուցված 1255թ.), որին կից մինչև 1915թ. գործում էր հայկական վարժարան 14 (?) սաներով: Ավերվել է 1915թ.: Բնակիչների մեծ մասը զոհ գնաց թուրքական յաթաղանին: *ՀՏԲ, հ. III, էջ 542:*

<sup>14</sup> Բնագրում՝ ֆալաքխան:

<sup>15</sup> Ջիֆթլիկ Վերի, Ջիֆթլիկ Վերին, Չիվլիկ Վերին, Չիֆլիկ Վերի-գյուղ Արմ. Հայաստանի Երզրումի նահանգի Երզնկայի գավառի Երզնկայի գավառակում: 1914թ. ուներ 45 տուն՝ 500 հայ բնակչով, զբաղվում էին երկրագործությամբ, անասնապահությամբ, արհեստներով: Ուներ եկեղեցի և երկսեռ վարժարան՝ 60 աշակերտով: Ջիֆթլիկ Ներքին, Չիֆթլիկ Ստորին, Չիֆթլիկ Վարի-գյուղ Արմ Հայաստանի Երզրումի նահանգի Երզնկայի գավառում, Երզնկայի գավառակում, Երզնկա քաղաքից 6-7 կմ արլ.: 1914թ. ուներ 35 տուն՝ 400 հայ բնակչով, Ս.Աստվածածին անվամբ եկեղեցի և երկսեռ վարժարան՝ 40 աշակերտով: Ավերվել է 1915թ.: *ՀՏԲ, հ. IV, Եր., 1998, 812 էջ, էջ 255:*

<sup>16</sup> Խաչի պաշտամունքը Հիսուսի խաչ բարձրանալուց հետո է, որ դարձել է քրիստոնեության կարևոր դրսևորումներից մեկը, և խաչակնքելով բժշկության որևէ նկարագրություն Աստվածաշնչում չկա: Այս արտահայտությամբ ի հայտ են գալիս վերապարծի կրոնական պատկերացումները, որոնք բավականին տուժել են կրոնաինստական գաղափարախոսության ազդեցությունից:

<sup>17</sup> Բնագրում՝ ճակտին դիզված:

<sup>18</sup> Թարգի՝ դերձակ:

<sup>19</sup> Կ.Պոլիս՝ այժմ Ստամբուլ, Օսմանյան կայսրության մայրաքաղաքը 1453-1923 թթ.: Հայերը այստեղ բնակվել են վաղ միջնադարից: 1461թ. այստեղ ստեղծվել է Կ.Պոլսի Հայոց պատրիարքությունը: XIX դ. սկզբին այստեղ ապրում էր 150000 հայ, XIX դ. II կեսին՝ 250000 հայ: Հայ բնակչության սոցիալական կազմը խայտաբղետ էր՝ խոշոր առևտրական բուրժուազիա, արհեստավորներ, մտավորականներ, հոգևորականներ: Հայկական բնակչությունը անընդհատ համալրվում էր Արմ Հայաստանից եկած պանդուխտներով: 1844թ. համայնքը ուներ ներքին ինքնակառավարման մարմին՝ «Ազգային ժողով»: *Армянский Вопрос, Главная редакция Армянской энциклопедии, Ер., 1991, с. 208-209:*

<sup>20</sup> Բնագրում՝ Գառնուկը անմիջապես բազմապատկեց. «Օրական ամեն մի ամալի հասնում է հարյուր դուրուշ»:

<sup>21</sup> Սպա:

<sup>22</sup> Ժողովուրդ, շրջապատ:

<sup>23</sup> Հայկական Բարեկենդան-Աբեղաթող ժողովրդական ներկայացումներն ու խաղերը, ինչպես և տոնը, ուրախության, գվարճության տոներ էին, որի ընթացքում խաղում էին այնպիսի խաղեր և ներկայացումներ, որոնք զավեշտ, կոմեդիա, սատիրա, շարժ ժանրերին էին պատկանում... Բարեկենդան-Աբեղաթող ժողովրդական ներկայացումներին, խաղերին մասնակցում էին բազմաթիվ մարդիկ, գլխավորապես երիտասարդներ: Յուրաքանչյուր գյուղում, քաղաքում Բարեկենդանի օրերին իրենց տաղանդն էին ցուցաբերում հազարավոր ընդունակ, ճարտարախոս, սրամիտ, համարձակ մտքի թռիչք ունեցող մարդիկ: Քանի որ ներկայացումների և խաղերի գլխավոր դերակատարները նշանակվում կամ ընտրվում էին ինքնագործ թատրոնի բոլոր մասնակցողների կողմից, պարզ էր, որ տեղի էր ունենում մրցում, պայքար: *Ա.Արշարունի, Հայ ժողովրդական թատերախաղեր, Եր., 1961, էջ 80, 82:*

<sup>24</sup> Վերապրածը նկատի ունի բուսական յուղը:

<sup>25</sup> Կարտոֆիլ:

<sup>26</sup> Պոպուկ:

<sup>27</sup> Փետուրները լինում էին երկու գույնի. երեքը՝ սպիտակ, չորսը՝ սև: Սկզբից հանում էին սպիտակ փետուրները, ապա՝ սևերը: Սպիտակ փետուրները խորհրդանշում էին այն շաբաթները, երբ գետնին ձյուն կար, սև փետուրները՝ այն շաբաթները, երբ գետնի ձյունը հալվում էր, և երևում էր հողը: Փետուրներով զարդարված սոխը պահքի շրջանում տան մեջ էին կախում և կոչում Ակլատիզ: Շիրակում Ակլատիզի թևերից քարեր էին կախում և երեխաներին վախեցնում, որ պատը չպահելու դեպքում այդ քարերը կընկնեն պատը չպահողի գլխին:

<sup>28</sup> Բնագրում՝ «Կամ ֆրանկ պիտի էղնի, կամ կաթոլիկ»: Կաթոլիկներին խոսակցական լեզվում նաև անվանում են ֆրանկներ:

<sup>29</sup> Բնագրում՝ չյարքազ:

<sup>30</sup> Սև ջուր՝ Եփրատի վտակներից մեկը:

<sup>31</sup> Աբրուլ Համիդի կոտորածները տեղի են ունեցել 1894-96 թթ.: Կազմակերպվել են Աբրուլ Համիդի կառավարության կողմից ազգային շարժումը ճնշելու և Հայկական հարցը վերացնելու համար: Արդյունքում ոչնչացվեցին 300000 հայեր, հազարավոր հայեր բռնի մահմեդականացվեցին և հազարավորները լքեցին հայրենիքը: *Армянский вопрос, с. 263, 266:* 1895թ. հոկտեմբերին կոտորածներ տեղի ունեցան նաև Երզնկայում: *Գ.Ստեփանյան, Երզնկա, էջ 607:*

<sup>32</sup> Բնագրում՝ 1898թ.:

<sup>33</sup> 1895թ.: *Գ.Ստեփանյան, Երզնկա, էջ 607:*

<sup>34</sup> Հավանաբար ի նկատի ունի Ռումինիայի հայկական Բուտիշին-Բուտոշան գաղթօջախը, չնայած հին հայկական գաղթավայր է ունեցել նաև Ռումինիայի

Ֆոկլանի քաղաքը: Բոտոշանուն հայերը հիշվում են XIV դ.: Ջբաղվել են առևտրով, արհեստներով, երկրագործությամբ, ունեցել են դատարան, եկեղեցի, «Կտրիճ-վորաց եղբայրություն»: XIX դ. կեսին ունեցել է 250 հայ բնակիչ: Պահպանվել են Ս.Աստվածածին, Ս. Երրորդություն եկեղեցիները: Գործել են արական և իգական դպրոցներ, ընդօրինակվել են հայերեն ձեռագրեր: 1860-80 թթ. Բոտոշանի հայերը նյութապես օժանդակել են զեյթունցիներին և արևմտահայերին: 1926թ. այստեղ եղել է Ռումինահայ որբախնամ կենտրոնական վարչության մասնաճյուղ: **Չ.Ս.Այվազյան, «Չայ սփյուռք» հանրագիտարան, 2003, էջ 444:**

<sup>35</sup> Գյուլուջա, Գյուլլիջա, Գյուլիջա, Գյուլիջե, Գյուլլիջան, Գյուլլիջե, Գյուլյունե, Գյուլլունջա, Գյուլյունե, Կյուլիճե, Կյուլլիճան, Կյուլլիճե, Վարդունակ-գյուղ Արմ Չայաստանի, Երզրումի նահանգի Երզնկայի գավառում, Երզնկայից ոչ հեռու: 1872թ. ուներ 39, 1909թ.՝ 66, 1914թ.՝ 150 տուն հայ, Ս.Գևորգ եկեղեցի և տղաների ու աղջիկների վարժարան: **ՉՏԲ, հ. I, էր., 1986, 992 էջ, էջ 908:**

<sup>36</sup> Տրախտմա՝ խշրուկ, կոպերի բորբոքային, վարակիչ հիվանդություն:

<sup>37</sup> Կաթիլներ:

<sup>38</sup> Նոր Քաղ, Նորքյաղ գյուղը, ըստ վերապրածի պատմածի, ունեցել է քրդաթրքական բնակչություն և հավանաբար պատկանել է նույն գյուղախմբին, ինչ-որ Ղարադեզին, Պալբեկը և Ջիֆթիկը: Գյուղի հայերեն անվանումը վկայում է այն մասին, որ այն նաև պիտի հայկական բնակչություն ունենար:

<sup>39</sup> Վերապրածը հիշում է արևի խավարումը:

<sup>40</sup> Մամախաթուն, Դերջան, Թերջան, Մանավազ, Տերջան-գյուղաքաղաք (ավան, քաղաք, գյուղ) Արմ Չայաստանի Երզրումի նահանգի Երզրումի գավառում, Արմ Եփրատի ձախակողմյան Դերջան (Թուզլու) վտակի աջ ափին, Երզրում-Երզնկա ճանապարհին, 1510 մ բարձրության վրա: Համանուն գավառակի կենտրոնն էր: Այստեղ էր նստում գավառակի (կազայի) գայմագամը: 1877-78 թթ. ուներ 430 տուն հայ և թուրք բնակչություն: Հայերն ունեին դպրոց և եկեղեցի: Այստեղ կար մեծ կայագոր՝ զորանոցներով, առաջնորդարան: Համանուն իջևանատունը, Քյատիթ Չելեբիի վկայությամբ, շինված էր մի փաշայի Մամա-խաթուն աղջկա ջանքերով: **ՉՏԲ, հ. III, էջ 665-666:**

<sup>41</sup> Չեթներ:

<sup>42</sup> Հասանկալա, Բուրապահակ, Գալե, Գալիգալա, Դեբոյնու, Դորոնք, Դրունք, Հասանաբերդ, Պատիր Ջավան, Ջավանկալե-գյուղ, ավան, բերդ, գյուղաքաղաք, բերդաքաղաք, քաղաքավան, քաղաք Արմ Չայաստանի Երզրումի նահանգի Երզրումի գավառում, Հասանկալայի (Բասենի) գավառակում: Հնուն հայտնի էր Բուրապահակ անունով: Գտնվում է Երզրումից մոտ 30-35 կմ արլ Տրապիզոն-Թավրիզ ճանապարհին, Ծիրանաց (Հասանկալա) լեռների խոտավետ ստորոտին, լեռան վրա գտնվում է քաղաքի բերդը: Երկունս էլ իշխող դիրք ունեին շրջակայքի նկատմամբ: **ՉՏԲ, հ. III, էջ 368:**

<sup>43</sup> Սարիղամիշ, Սարըգամըշ, Սարըղամըշ, Սարըղամիշ, Սարիկամիշ-գյուղաքաղաք, քաղաք Կարսի մարզի Կարսի օկրուգում, Կարս քաղաքից մոտ 50 կմ հվ-արլ, Կարս-Երզրում երկաթուղու վրա: Տեղադրված է Մեծրաց լեռների հվ ստորոտին, Կարսի գետի վերին հոսանքի Սարիղամիշ (Եղեգնուտ) գետի ափին: Շրջակայքում կան սառնորակ և հանքային աղբյուրներ, ճոխ և փարթամ արոտավայրեր: Ուներ երկու թաղեր՝ Վերին և Ներքին, որոնք անցյալում երկու առանձին գյուղեր էին: Բուն գյուղաքաղաքը գբաղեցնում էր Վերինի տարածքը: 1878թ. Բեռլինի պայմանագրով անցավ Ռուսաստանին և մտցվեց Կարսի մարզի Կարսի օկրուգի մեջ: 1913թ. ավարտվեց Կարս-Սարիղամիշ երկաթուղու կառուցումը: XX դ. սկզբին ուներ մոտ 3000 բնակիչ, մեծ մասը հայեր էին, կային թուրքեր, մուսուլմաններ: Ջբաղվում

էին երկրագործությամբ, անասնապահությամբ, փայտանշակությամբ, անտառահատությամբ, հայերը՝ նաև արհեստներով և առևտրով: Ուներ եկեղեցի և վարժարան: 1878թ. Ներքին թաղում տեղավորվեց ռուսական կայագորը և բնակեցվեց մոլոկան-ռուս վերաբնակիչներով: 1918թ. ապրիլի 5-ին թուրքերը կրկին գրավեցին Սարիղամիշը, հայերը վերաբնակեցվեցին Երևանի նահանգում: Ապա Սարիղամիշը ազատագրվեց և մտցվեց ՀՀ մեջ: 1920թ. սեպտեմբերի 29-ին քենալական զորքերը գրավեցին քաղաքը: Այժմ էլ քաղաքը ունի 20000 թուրք, մոլոկան և ղուխթեր բնակչություն, գործում են յուղի, պանրի արտադրամասեր, աղացներ և սղոցարան: **ՀՏԲ, հ. IV, էջ 535-536:**

<sup>44</sup> 1914թ. դեկտեմբերի 26-ից-1915թ. հունվարի 18-ը տեղի ունեցավ Սարիղամիշի օպերացիան՝ թուրքական երրորդ բանակի, հայ կամավորների և ռուսական զորքերի միջև (էնվեր փաշայի և Մըշյախանու միջև): **ՀՏԲ, հ. IV, էջ 536**

<sup>45</sup> **Дивизия**-от латинского деление, разделение в сухопутных войсках, тактическое соединение в сухопутных войсках, ВВС и ВМФ различных государств. Различают пехотные, стрелковые, мотострелковые, моторизированные, механизированные, кавалерийские, артиллерийские, зенитные, танковые, авиационные дивизии. Дивизионная организация войск появилась в России и Франции в начале XVIII в., а в XIX в. прочно закрепилась в армиях других государств. Перед Первой мировой войной в состав пехотной дивизии входили четыре пехотных полка, 1-2 эскадрона конницы, от 36 до 72 орудий дивизионной артиллерии. Личный состав состоял из 15000-16000 человек. **БСЭ, т. 8, М., 1972, с. 245.**

<sup>46</sup> Խանդարա, Խանդերե, Խանտերե-գյուղ Կարսի մարզի Կաղզվանի օկրուգում, Սարիղամիշից մոտ 13 կմ հվ-արմ, Կարսի գետի ձախակողմյան Իսկենդեր վտակի աջ ափին, տափարակ, անտառապատ վայրում: 1907թ. ուներ 659 հույն բնակիչ և եկեղեցի: Հետագայում թրքաբնակ էր: Մեր կարծիքով՝ խոսքը այս Խանդերե գյուղի մասին է, չնայած Խանդերե գյուղ կար նաև Երզնկայի գավառում՝ Խանդերե գետի աջ կողմում՝ Երզնկայից հս-արլ, Դադիանդաղ լեռներից հվ-արմ: XX դ. սկզբին ուներ 14 տ բնակիչ: **ՀՏԲ, հ. II, եր., 1988, 992 էջ, էջ 645:**

<sup>47</sup> Հույներ:

<sup>48</sup> Հավանաբար վերապրածը ի նկատի ունի Քեոփոյությունը-գյուղ (գյուղաքաղաք, ավան) Արմ Հայաստանի Երզրումի նահանգի Երզրումի գավառի Վերին Բասեն գավառակում, Բասենի դաշտում, Արաքս և Մուրց գետերի միախառնման վայրից քիչ արմ, համանուն լեռան հվ-արմ կողմում, Հասանկալայից 12 կմ արլ, հավանաբար պատմական Վաղարշավանն է: Տեղանվանական վերլուծությունը ցույց է տալիս, որ գյուղն ունեցել է նաև այլ անվանումներ, որոնք բավականին մոտ են վերապրածի հիշատակած գյուղանվանը՝ Քյոփրի, Քյոփրյու, Քյոփրու: Գյուղը 1877-78 թթ. ուներ 30 տուն (280 հայ): 1909թ.՝ 90 տուն հայ, 1915թ.՝ 250 տուն, որից՝ 150 տուն հայ: 1878թ. և I աշխարհամարտի տարիներին Արլ Հայաստան է գաղթել 150 հայ ընտանիք: 1895թ. կողոպտվել է թուրքերի կողմից, իսկ 1915թ. ենթարկվել է բռնագաղթի: **ՀՏԲ, հ.V, եր., 2001, 992 էջ, էջ 409:**

<sup>49</sup> Բայղարա, Բայկարա, Բայկորա, Պայգարա-գյուղ Կարսի մարզի Կարսի օկրուգում, Կարսից մոտ 30 կմ արմ, Սողանլուի շրջանում, 2350 մ բարձրության վրա: 1893թ. ուներ 37 տուն, որից 32-ը՝ հայկական (456 բնակչով), 1907թ.՝ 457 բնակիչ, 1910-ական թթ. Բասենից այստեղ է գաղթում 9 տուն հայ ընտանիք: **ՀՏԲ, հ. I, էջ 589-590:**

<sup>50</sup> Սեբաստիա, Դիոսպոլիս, Կաբիրա, Կապիրա, Մեգապոլիս, Սեբաստիա, Սավաստ, Սեբաստ, Սեբաստե, Սեվազ, Սեվաս, Սվաս, Սուազ-քաղաք պատմական Փոքր Հայքում, Ալիս գետի վերին հոսանքի աջ կողմում, Մարագում լեռան ստորոտում

փռված ընդարձակ հովտում, 1348 մ բարձրության վրա: Քաղաքի մոտ է գտնվում նույնանուն փոքրիկ լճակը: Գետերի վրա կան մի քանի քարաշեն կամուրջներ, որոնցից մեկը՝ 15 կամարով, որը կառուցել է Վասպուրականի Սենեքերիմ քաղաքի ղուստր Շուշանիկը XI դդ.: Քաղաքի տարածքում պահպանվել են Վերին և Ստորին բերդերը: Դնում ունեցել է 12000 բնակիչ: XIX դ.-XX դ. սկզբին՝ 60000-90000 բնակիչ, կեսը հայեր էին: 1895 թ. սպանվեց 1500 հայ: 1915թ. հունիսի 25-ին հայությունը տեղահանվեց և քվեց Տեր-Չոր: 1918թ. 1500 հոգի վերահաստատվեց Սեբաստիայում: 1920թ. սեբաստիայերը գաղթեցին ԶԶ և հաստատվեցին Երևանի Նոր Սեբաստիա թաղամասում: **ԴՏԲ, հ. IV, էջ 553:**

<sup>51</sup> Кавказ-территория между Черным, Азовским, Каспийским морями, простиралась от Кумо-Манычской впадины на Севере до границы СССР с Турцией и Ираном на Юге. Площадь 440000 км<sup>2</sup>. Часто делят на Северный Кавказ и Закавказье, границу между которыми проводят по Главному или Водораздельному хребту Большого Кавказа. **ԵՇՁ, տ. 11, Մ., 1973, с. 113.**

<sup>52</sup> Բասեն, Բասենյան, Բասյան, Բասյանք, Փասյան, Փասյանք-գավառ Մեծ Հայքի Այրարատ աշխարհում: Տարածվում է Արաքս գետի վերին հոսանքի ու նրա ձախակողմյան վտակ Մուրցի ավազանում: Գավառի մի մասը կատարյալ հարթավայր է, իսկ մյուսն ունի ավազավորված մակերևույթ՝ «հովիտ մեծ», «ընդարձակ դաշտ»: Ունի արգավանդ հողեր և հայտնի է եղել հացահատիկով: Բուն Բասենը բաժանված է Վերին Բասենի և Ստորին Բասենի: Համանուն գյուղը (ավան) այժմ Քյոփրիկքյոյն է: **ԴՏԲ, հ. I, էջ 609-610:**

<sup>53</sup> Տեղահանությունը:

<sup>54</sup> Հավանաբար վերապրածը ուշագնաց է եղել:

<sup>55</sup> Ըստ ԴՏԲ-ի՝ Մահմուդ, Մահմուտ, Մայմուդ, Մահմուտան- անունով բնակավայրեր հայտնի են և՛ Արլ Հայաստանում, և՛ Արմ Հայաստանում, սակայն այս բնակավայրերը գտնվել են Երզրունի վիլայեթից դուրս՝ Վանի և Ելիզավետպոլի նահանգներում: **ԴՏԲ, հ. III, էջ 655:**

<sup>56</sup> Երիտթուրքական իշխանությունը 1915թ. մայիսի 5-ին գաղտնի հրաման արձակեց Երզրունի վիլայեթի ամբողջ հայ բնակչության բռնագաղթի և ոչնչացման մասին: Գաղտնի ժողովի ժամանակ, որին մասնակցում էին գերմանացի սպաները, կազմվում է հայ բնակչության ոչնչացման մանրամասն ծրագիր: Մայիսի 13-ին թուրքական զորքերը շրջափակում են Երզրունի դաշտավայրի գյուղերը: **Արմյանսկի վոբրոս, с. 279.**

<sup>57</sup> Չեռագրում բացակայում է 48 էջը:

<sup>58</sup> Կամախ, Պողոզ, Պողոզ, Քենախ, Քենախ պողոզ-ծոր, կիրճ Հայկական լեռնաշխարհում, Երզրունի նահանգի Երզնկայի գավառում, Կամախի գավառակում, Երզնկայից 50 կմ հվ-արմ: Այստեղով է անցնում Ակն-Արաբկիր-Խարբերդ տանող ճանապարհը: Այստեղ 1915թ. մայիսի 28-ին խալիլ բեյը կոտորեց Երզնկա քաղաքից տեղահանված 25000 հայ բնակիչների՝ կիրճի ամեն մի թիզ հողը ներկելով անմեղ մարդկանց արյունով: **ԴՏԲ, հ. II, էջ 914:**

<sup>59</sup> 1915 թ. մայիսին թուրքական կառավարության հրամանով Երզնկայի բանտերից բաց թողնվեցին քրեական հանցագործները, որոնցով համալրվեցին չետնիկների զնդեր: Պոլիցիայի կողմից առանց դատ ու դատաստանի զնդակահարվում են բազմաթիվ մտավորականներ: «Դաշնակցություն» կուսակցության ջանքերը՝ ընդհանուր ինքնապաշտպանություն կազմակերպելու հետ կապված, ապարդյուն էին: Երզնկայից աքսորյալների առաջին քարավանը դուրս եկավ մայիսի 27-ին, երկրորդը՝ 28-ին: **Արմյանսկի վոբրոս, с. 173.**

<sup>60</sup> Տրապիզոն, Դրապոն, Տրաբզն, Տրապեզոն-քաղաք և նավահանգիստ Փոքր Ասիայում, Սև ծովի հվ. ափին, համանուն նահանգի, գավառի կենտրոն: Տեղադրված է սեղանաձև սարավանդի վրա, և այդ պատճառով կոչվել է Տրապիզոն՝ հունարեն «տրապեզա»՝ սեղան, բառից: 1872-73 թթ. քաղաքում կար 800 տուն հայ, 1915թ. նախօրյակին՝ 14000-15000 հայ: Համանուն գավառում, ըստ Լեպսիուսի, ապրել է 32700 հայ, իսկ համանուն նահանգում՝ 53000 հայ, որոնց մեծ մասը բռնագաղթվեց և բնաջնջվեց 1915թ.: **ՀՏԲ, հ. V, էջ 128-129:**

<sup>61</sup> Բայբուրթ, Բաբերդ, Բայբերդ, Պայպուրթ-գավառ Արմ. Հայաստանի, Էրզրումի նահանգում, վերջինիս հս.-արմ. մասում՝ ճորոխի վերին հոսանքի շրջանում: Կազմվել է 1882թ. Բաբերդի գավառակի և հարակից շրջանների միացմամբ: 1880 թ. ուներ 141 գյուղ՝ 18710 հայ, թուրք և հույն բնակիչներով: Հայերի թիվը հասնում էր 4472 մարդու: 1898թ. գավառի գյուղերի թիվը 180-ն է, հայաբնակ են 29 գյուղ: 65000 խառը բնակիչից հայեր էին 13000-ը: Հայերի ընդհանուր թիվը 1915թ. 17000-19000 էր, մեծ մասը զոհվեց Եղեռնի ժամանակ: 1914թ. նախօրեին գավառում գործում էին հայկական 2 վանք և 30 եկեղեցի: **ՀՏԲ, հ. I, էջ 526:**

<sup>62</sup> Խարբերդ-նահանգ Արմ Հայաստանում: XX դ. սկզբին զբաղեցնում էր 32900 քառ. կմ տարածություն, որից մշակելի էր 15000 քառ. կմ: Կենտրոնական մասում Խարբերդի արգավանդ դաշտն էր, որը ոռոգվում էր Եփրատի ջրերով: 1882թ. նահանգը ուներ 270000 հայ բնակիչ: XX դ. սկզբին հայերը կազմում էին բնակչության 50%-ը: 1912թ., ռուսական աղբյուրների վիճակագրությամբ, նահանգն ուներ 450000 բնակիչ, որից 168000-ը հայեր էին: 1895թ. կոտորածների ժամանակ նահանգում սպանվել է 12708 հայ: Եղեռնի նախօրեին նահանգի հայ բնակչությունը 204000 էր, որից 180000 զոհվեց, թալանվեց 68 եկեղեցի, 12 վանք, 83 դպրոց: **ՀՏԲ, հ. II, էջ 701:**

<sup>63</sup> Խարբերդի այս գյուղը հավանաբար տեղադրված է եղել Կասրկաչայ գետակի ափին, որը հոսում էր Խարբերդի շրջանով, Բարջանց գյուղի մոտով և պատկանում է Արևելյան Եփրատի՝ Արածանիի ավազանին: **ՀՏԲ, հ. II, էջ 963:** Հնարավոր է նաև, որ վերապրածի հիշատակած Քասիրան լիճի Կարսրին՝ Կարմրե, Կարմրի-գյուղ Արմ Հայաստանի Խարբերդի նահանգի Խարբերդի գավառում, Խարբերդից 10-12 կմ հվ: 1914թ. ուներ 100 տուն հայ բնակիչ, Ս.Թորոս անունով եկեղեցի և 30 սաներով վարժարան: Ձբաղվում էին երկրագործությամբ և արհեստներով: Ավերվել է, բնակիչները կոտորվել ու տարագրվել են 1915թ. Մեծ եղեռնի ժամանակ: **ՀՏԲ, հ. III, էջ 63-64:**

<sup>64</sup> Ըստ «Յուշամատեան Մեծ եղեռնի»՝ Խարբերդի և շրջակա գյուղերի տարագրությունը տեղի է ունեցել հունիսի 15-18-ից: Այս մասին են վկայում քարոզիչ Եոհաննես Էնմանի հեռագրերը՝ ուղղված Կ.Պոլսի գերմանական դեսպան ֆոն Վանկեն-հայմին: **Գ.Ահարոնեան, Յուշամատեան Մեծ եղեռնի, 1915-1965, Պեյրուք, 1965, էջ 393-396:**

<sup>65</sup> Եփրատի վրա կառուցված կամուրջներից մի քանիսը հայտնի են և կանգուն են մնացել բազում դարեր: **ՀՏԲ, հ. II, էջ 253:**

<sup>66</sup> Հավանաբար, Դեր-Ձոր անապատի արաբական անվանումներից մեկն է:

<sup>67</sup> Տեքստում հանդիպում է նաև Իբրահիմ ձևով:

<sup>68</sup> 1895թ. հոկտեմբերի 25-ին սկսված համիդյան ջարդերի ժամանակ զոհվում է 1000 մարդ: 1915թ. հունիսի 14-15-ին և հուլիսի 26-ին թուրքերը կոտորեցին հայերին: **ՀՏԲ, հ. III, էջ 45:**

<sup>69</sup> 1915թ. հունիսի 17-ին տարհանված հայերի առաջին քարավանը ուղարկվում է Երզնկայի ուղղությամբ և չհասնելով Խարբերդ՝ ոչնչացվում: Երկրորդ քարավանը, որը տարհանվում է 400 ոստիկանների ուղեկցությամբ, Բաբերդում ենթարկվում է չտնհիկների հարձակմանը: Կենդանի մնացած հայերը զոհվում են Կամախ-Ակն-

Արաբկիր-Սօսուկ ճանապարհին: Երրորդ քարավանը (3000 մարդ) կոտորվում է Կամախ չհասած: Չորրորդը (9000 մարդ) կոտորվում է Աշկալա գյուղի և Եփրատի Կամախ-Բողազի կիրճում: Հուլիսի 18-ին տեղահանված հինգերորդ քարավանը ունենում է նույն ճակատագիրը: 1915թ. Էրզրումում կար ընդամենը 50 հայ: *Армянский вопрос, с. 345:*

<sup>70</sup> Ջանբալա-քյորպուս՝ հավանաբար Եփրատի կիրճերից մեկը, ինչպես Կեմախի և Սանասարա կիրճերը:

<sup>71</sup> *Հաջը* կամ ուխտագնացությունը նույնպես ավարտվում է տոնակատարությամբ, որը կոչվում է *իդ ալ-արհա կամ կուրբան-բայրամ*: Դա մուսուլմանական անենամեծ տոնն է: Այդ օրը ողջ մուսուլմանական աշխարհում կատարվում է զոհաբերություն, մարդիկ չեն աշխատում և վայելում են Ալլահի տված բարիքները՝ փառաբանելով նրան և նրա զորությունը: *Ն. Հովհաննիսյան, Արաբական երկրների պատմություն, հ. 1, Արաբները VII դարից մինչև 1516թ., եր., 2003, էջ 33:* Հաճախ հանդիպում ենք «Կուրբան բայրամ» ձևով: Այս բառը «կորբան» ձևով հանդիպում է նաև Աստվածաշնչում. «*Կորբան, այսինքն՝ Աստծուն նվիրված ընծա*»: *Նոր կտակարան, Սարկոս 7.11:*

<sup>72</sup> Ջանբարակ՝ նույնը ինչ Ջանբալա-քյորպուս:

<sup>73</sup> Քաղաքը՝ 1829թ. ուներ 130000 բնակիչ՝ 30000 հայեր էին, 1909թ.՝ 60000-ից 15000 հայեր էին: Հայերը ապրում էին հս և հս-արմ թաղամասերում, այստեղ էին գտնվում ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի հյուպատոսությունները: ՀՏԲ, հ. III, էջ 44: 1915թ. հունիսի սկզբին հայկական բնակչությանը հրամայում են լքել քաղաքը: Միայն ամերիկյան հյուպատոս Ռ. Սթեբլզի միջամտությամբ գաղթը 15 օրով հետաձգվում է: Հունիսի 16-ին թուրքական զինվորական ստորաբաժանումը բռնի ուժով հայերին դուրս է հանում տներից և ստիպում թողնել քաղաքը: Գերմանական հյուպատոս Շոյբները բողոք է հայտնում, սակայն ստանալով թուրքիայում Գերմանիայի դեսպանի հրամանը, նպաստում տարհանմանը: *Армянский вопрос, с. 345:*

<sup>74</sup> Ֆուրգոններ:

<sup>75</sup> Ըստ Գ. Ստեփանյանի՝ Ղարադեզինը Երզնկայից 8 կմ հվ-արլ էր գտնվում: *Գ. Ստեփանյան, Երզնկա, էջ 607:*

<sup>76</sup> Վերապրածը ի նկատի ունի 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմը, որի ժամանակ Ալեքսանդրապոլ-Կարս ուղղությամբ հիմնական հարվածող ուժը հայազգի զեներալ Միխայիլ Լոռիս Մելիքովի (Լոռու Մելիքյան) հրամանատարությամբ գործող 52000 Կովկասյան կորպուսն էր: Երևանյան ջոկատը գործում էր ռազմաճակատի ծախ թևում՝ հայազգի զեներալ՝ Արշակ Տեր-Ղուկասովի հրամանատարությամբ:

<sup>77</sup> Խոսքը Էրզրումի արլ մասում գտնվող Դավաթյոյնու լեռնաշղթայի մասին է:

<sup>78</sup> Թորթում, Թորթոմ, Ոտոզ, Տորտում-ավան, գյուղ Արմ Հայաստանի Էրզրումի նահանգի Էրզրումի գավառի Թորթումի գավառակում, վերջինիս վարչական կենտրոնը: Գտնվում է Ծորոխի օժանդակ Թորթում գետի վերին հոսանքի շրջանում: Հայտնի էր յուրահատուկ համ ու հոտ ունեցող կարմիր, սպիտակ գույնի տանձ ու խնձորով: Ավանը XIX դ. սկզբին ուներ 8000 բնակիչ, որից 5000-ը՝ հայեր: Թուրքիայի հայահալած քաղաքականության պատճառով հայերի մի մասը մահմեդականացել է, շատերը հեռացել են այլ վայրեր: XX դ. սկզբին ավանը վերածվել է 20-25 տուն բնակչությամբ մի գյուղի: *ՀՏԲ, հ. II, էջ 476:*

<sup>79</sup> Իլիջա, Իլիճե, Իլիճա-գյուղ Արմ. Հայաստանի Էրզրումի նահանգի Էրզրումի գավառում, Էրզրումից 10-12 կմ հս-արմ, Եփրատի ձախակողմյան սարահարթում, Իլիջա վտակի ափին: Գտնվում էր Տրապիզոն-Էրզրում-Պարսկաստան առևտրական

բանուկ ճանապարհի վրա, ուներ իջևանատուն, սրճարաններ, խանութներ, արհեստանոցներ, կրպակներ: 1872-73 թթ. ուներ 33 տուն հայ, 1909թ. 80 տուն հայ բնակիչ, որոնք զբաղվում էին երկրագործությամբ, անասնապահությամբ, պտղաբուծությամբ, արհեստներով և առևտրով: Գործում էր Ս.Աստվածածին եկեղեցին և 15 սաներով վարժարան: Մեծ եղեռնի ժամանակ հայերը ոչնչացվեցին Կամախի կիրճում: Փրկվածները հաստատվել են Ախալցխայի շրջանի Ծուղղուր գյուղում: **ՉՏԲ, հ. II, էջ 513:**

<sup>80</sup> Կազակը:

<sup>81</sup> Խոսքը Սան Ստեֆանոյի զինադադարի և հաշտության պայմանագրի մասին է, որով Կարսի, Կաղզվանի, Օլթիի, Արդահանի, Ալաշկերտի և Բայազետի գավառները և Բաթումի նավահանգիստը անցնում էին Ռուսաստանին:

<sup>82</sup> Գերմանիա:

<sup>83</sup> Ըստ Քինեի տվյալների՝ Երզնկան 1890 թթ. ուներ 23000 բնակիչ, որից 7500 հայ: 1880թ. քաղաքում կար 6000 տուն, որից 1800 հայկական: Առաջին աշխարհամարտի տարիներին բնակչության թիվը 24000, որի 1/3 հայեր էին: **ՉՏԲ, հ. II, էջ 236:**

<sup>84</sup> Երզնկան գտնվում է հաճախակի կրկնվող կործանիչ երկրաշարժերի գոտում: Շուրջ 800 տարվա ընթացքում երկրաշարժերի հետևանքով գոհվել է մի քանի հարյուր հազար մարդ: Միայն 1045-1784թթ. ընթացքում երկրաշարժերի թիվը հասնում է 25-ի: Ուժեղ երկրաշարժեր էին՝ 1045, 1165, 1236, 1251, 1254, 1268 (15000 զոհ), 1281, 1458 (32000 զոհ), 1462, 1482 (30000 զոհ), 1583 (15000 զոհ), 1682, 1784 (հիմնահատակ ավերվել են քաղաքը և 3 գյուղեր), 1939, 1966 երկրաշարժերը: Երկրաշարժի պատճառով է ավերվել նաև Անահիտի հեթանոսական տաճարը: **ՉՏԲ, հ. II, էջ 235-236:**

<sup>85</sup> Ենվեր փաշան 1921թ. հայտնվում է Միջին Ասիայում և զլխավորում է բասմաչների շարժումը Խորհրդային իշխանության դեմ, սպանվում է 1922թ. Յակոբ Մելքունովի զլխավորած Խորհրդային զորամասի դեմ մղված մարտերում: **Արմյանսկի վոպրոս, ց. 344.**

<sup>86</sup> Թալեթ Մեհմեդ փաշան սպանվել է Սողոմոն Թեհլերյանի կողմից 1921թ. մարտի 15: **Արմյանսկի վոպրոս, ց. 310, ԳԳԵ, Եր. 1996, էջ 137-138, էջ 125:**

<sup>87</sup> Սախսուզ:

<sup>88</sup> Խուզարկություն:

<sup>89</sup> Բալբակ՝ հնարավոր է *Բալարա* /-/ Գյուղ Արմ Յայաստանի Երզրումի նահանգի Երզնկայի գավառում, Երզնկա քաղաքից 8 կմ հր-արլ: **ՉՏԲ, հ. II, էջ 550.**

<sup>90</sup> Յյուլբյումետ-կառավարություն:

<sup>91</sup> XIX դ. II կեսին Երզնկայում գործող կաշենչակման պետական «գործարանը» ավելի շուտ հասարակ մանուֆակտուրա էր, քան կապիտալիստական ձեռնարկություն, **ՉՏԲ, հ. II, էջ 236.**

<sup>92</sup> Սանսայի կիրճ, Սանսար, Սանսարա կիրճ, Ճիպիճե, Սանսարդարա, Ջեբեջե-լեռնանցք, կիրճ, ձոր Անտիպոնտական լեռնաշղթայում, Երզնկայի գավառի Բոլոմերի շրջանում, Երզնկա քաղաքից մոտ 42 կմ հր-արլ, Սանսա գետի մոտ: Այստեղով էր անցնում Երզնկա-Դերջան ճանապարհը: **ՉՏԲ, հ. IV, էջ 494, 498:**

<sup>93</sup> Սանսարարասի:

<sup>94</sup> Ամենամտանելին այն էր, որ 45-ից բարձր տարիք ունեցող արու բնակիչները պետք է շալակով Մուշից մինչև Յասան Դալե, Քեփրի Քյոյ, տասն օրվա ճանապարհ անցնելով, պարեն փոխադրեին թուրքական բանակի համար: Թուրքերը այդ ջոկատներն անվանում էին *հանալ թաքուրի* (շալակով փոխադրություն կատարող վաշտեր): Յայ գյուղացիներից կազմված շալակավորների այդ քրաավանները դեպի ռազմաճակատ են քշվել ծեփի և խարազանների ուժով... Ականատեսը գրում

եր, որ նրանցից «ճամբան մեռնողներ եղան, իսկ մեծ մասը կը վերադառնար հյուծված և հիվանդ»։ Սակայն սկսած 1915թ. փետրվարից՝ թուրքական իշխանությունների հայաջինջ գործունեության հետևանքով շալակավորները «սկսան անհետանալ նախ՝ անհատապես ու ապա անհետ կորչիլ խումբերով»։ **Յ.Ս. Պողոսյան, Սասունի պատմություն (1750-1918), Եր., 1985, էջ 307-308: Տես՝ Մարգա Թումանյան, Армяне, Краткий очерк их истории и современного положения "Литературная Армения" (Приложение), Ер., 1990, с. 115.**

<sup>95</sup> Խոսքը Հովհաննեսի փեսա Մովսեսի փեսա Մանուկի մասին է։

<sup>96</sup> Առաջին տունը։

<sup>97</sup> Երզնկան անբարեկարգ քաղաք է։ Նրա բոլոր շենքերը աղյուսակերտ, կավակերտ կամ փայտաշեն են, մեծ մասամբ հողածածկ կտուրով։ Փողոցները նեղ են ու ծուռունուռ, փոշոտ ու ցեխոտ։ Քաղաքի կենտրոնում շուկան է՝ շրջապատված անշուք խանութներով ու արհեստանոցներով։ Համեմատաբար բարեկարգ ու մաքուր էին հայկական թաղերը, որոնք չորսն էին, ու յուրաքանչյուրն ուներ իր եկեղեցին։ Դրանց կենտրոնում գտնվում էր «ժաման» կոչված մեծ հրապարակը։ Բոլոր բակերում կային ջրհորներ, ինչպես և ջուր էր բերված մոտակայքից՝ հատուկ ջրմուղով։ **ԴՏԲ, հ. II, էջ 236:**

<sup>98</sup> 1850 թ. Երզնկայում գործում էր հայկական միայն մեկ վարժարան, 1872-73 թթ.՝ 5 դպրոց, 1886 թ.՝ 8 դպրոց, որոնք ունեին 1500-1600 տղա և աղջիկ աշակերտ։ XX դ. սկզբին երկսեռ վարժարանների թիվը հասնում է 10-12-ի։ 1914 թ. նախօրեին քաղաքն ուներ 2500 աշակերտ, 100 ուսուցիչ։ **ԴՏԲ, հ. II, էջ 237:**

<sup>99</sup> Անահիտի հեթանոսական տաճարի տեղում կառուցվել է Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին։ Կային ևս հինգ հայկական եկեղեցիներ՝ Ս.Նշան (որը հիմնադրել էր Գր. Լուսավորիչը), Ս. Երրորդություն, Ս. Սարգիս, Ս. Փրկիչ և Ս. Աստվածածին։ **ԴՏԲ, հ. II, էջ 236:**

<sup>100</sup> Բնագրում՝ 1916թ. հունվարին։

<sup>101</sup> Եսկի շահարի, Ասկի շահարի- *Հին քաղաք*։ Երզնկան գտնվում է Արմ Եփրատի միջին հոսանքի շրջանում, Երզնկայի դաշտի արմ-ում՝ Գայլի (Երզնկա) գետաբերանի մոտ։ Հնում այն գտնվում էր ուղղակի Եփրատի ափին, իսկ այժմ երկրաշարժերի հետևանքով գետի ողողումներից խուսափելու նպատակով քաղաքը մոտ 2 կմ «շարժել» են դեպի հս։ Քաղաքի գրաված տարածքն ու շրջակայքը հարթավայրային է, որի բարձր մոտ 1300 մ է։ Նրա ավերված թաղը անմիջականորեն տարածվում է Եփրատի ափին, և տեղացիների կողմից ստացել է *Հին քաղաք* անունը։ Այս մասում Եփրատի օդն անմաքուր է, խմելու ջուրը՝ ցածրորակ։ Կլիման բարեխառն է, բայց ամռանն այստեղ սաստիկ շոգ է լինում։ **ԴՏԲ, հ. II, էջ 235:**

<sup>102</sup> Հավանաբար վերապրածին զարմացրել է կիսամերկ զինվորների առավոտյան մարզանքը։

<sup>103</sup> Գերմանացի։

<sup>104</sup> Բնագրում՝ հունիսի 15-ին։ 1915 թ. հուլիսին քաղաքը վերցնելուց հետո Մուրադ Սեբաստացու, Կայծակ Առաքելի, Շախպազ Վարդանի ջանքերով հարյուրավոր հայեր հետ վերադարձվեցին իրենց տները։ Գավառի հայության թիվը հասավ 3000-4000։ **Армянский вопрос, с. 173.**

<sup>105</sup> Ձեռագրում բացակայում են 133-148 էջերը։ Բովանդակությունից կարելի է ենթադրել, որ վերապրածը թուրք տղային ծեծելու պատճառով ստիպված փախել էր Երզնկայի տնից և հետ եկել իր հայրենի գյուղը՝ Ղարադեկին։

<sup>106</sup> Երզնկայի դաշտը գտնվում է Արմ Եփրատի միջին հոսանքում։ Երկարությունը 40-45 կմ է, լայնությունը՝ 13-15 կմ, բարձր՝ 1200-1400 մ։ Կլիման տաք բարեխառն է,

հողերը՝ արգավանդ: Այստեղ կարող են աճել հացահատիկային (նաև բրինձ), այգեգործական և բանջարաբուստանային կուլտուրաներ, խաղող, բամբակ: **ՉՏԲ, հ. II, էջ 237:**

<sup>107</sup> Բնագրում գուրքաք:

<sup>108</sup> Հնարավոր է խոսքը հին երգնկա քաղաքի՝ Եսկի շահարիի մասին է: Մեր կարծիքով՝ ընդունելի է Սահարի>Շահարի հնչյունափոխությունը:

<sup>109</sup> Երգնկան ուներ մի բանի մզկիթներ, որոնցից համեմատաբար հայտնի էր Իզդեթ փաշայի կառուցածը: **ՉՏԲ, հ. II, էջ 236**

<sup>110</sup> Մզկիթը (արաբերեն՝ մասջիդ) իսլամի աստվածաբանության արտահայտման ամենաակնառու նշանն է: Մզկիթը պաշտամունքի վայրն է: Մզկիթները բաժանվում են երկու խմբի՝ տարածքային և գլխավոր մզկիթներ (ջամի), որ կոչվում է նաև «մեծ» կամ «մայր» մզկիթ, ուր ամեն ուրբաք հանդիսավոր աղոթք է մատուցվում: **Ա.Պայտեան, Իսլամ և Ավետարան. բարեկարգյալ հայեցակետ, Գյումրի, 2006, էջ 204-207:**

<sup>111</sup> Մզկիթի մոտ կառուցված աշտարակ՝ մինարա: Մինարե, մինարեթ (արաբերեն մանարա, բառացի՝ փարոս), մզկիթներին կից կամ շինության հետ ամբողջություն կազմող աշտարակ: Եգիպտոսի, Իրաքի, Իրանի, Կենտրոնական և Միջին Ասիայի երկրներին բնորոշ են բարձր, դեպի վեր նեղացող, կլոր կամ բազմանկյուն հատակագծով մինարեները՝ զարդարված աղյուսի ձևավոր շարվածքով, փորագրություններով, ջնարակած խեցեղենով, ցանցկեն պատշգամբների հարկերով: Հատակագծում քառակուսի մինարեները բնորոշ են Սիրիային և Հյուսիսային Աֆրիկայի երկրներին: Թուրքական մինարեները առանձնանում են բազմանկյուն, բարակ բնով ու սայրածև ավարտով: **ՉՄԴ, հ. 7, եր., 1981, էջ 556-557:**

<sup>112</sup> Աղոթքի ժամը հնչեցնում է մուեզինը՝ մինարեի զագաթից: Աղոթքի կանչի մեղեդին հորինել է ինքը՝ մարգարեն, **Ա.Պայտեան, Իսլամ և Ավետարան, էջ 215:**

<sup>113</sup> Դուրանի առաջին տողերն են: Ն. Հովհաննիսյանը իր «Արաբական երկրների պատմություն» աշխատությունում գրում է. «*Կորանը բաղկացած է 114 սուրահներից՝ գուլխներից, որոնք բաժանվում են այթքների՝ ֆրագների կամ խոսքերի և արտահայտությունների*»: Սուրահների դասավորությունը կատարվել է ըստ ծավալների, մեծից փոքր: *Բացառություն է կազմում միայն առաջին սուրահը, որը, կոչվում է ֆաթիհ, այսինքն՝ Բացող կամ Սկիզբ: Սիհ այն. «Հանուն զթառատ, զթասիրտ Ալլահի: Փառք Ալլահին, աշխարհների Տիրոջը զթառատ, զթասիրտ, դատաստանի օրվա թագավորին: Զեզ ենք մենք պաշտում և խնդրում օգնել: Տար մեզ ուղիղ ճանապարհով, նրանց ճանապարհով, ում որ Դու բարերարություն ես արել, բայց ոչ նրանց, ովքեր զանվում են զայրույթի ներքո, և ոչ մոլորյալների*»: **Ն. Հովհաննիսյան, Արաբական երկրների պատմություն, հ 1, էջ 34-35:**

<sup>114</sup> Դաշտային խոհանոց:

<sup>115</sup> Չեռագրում բացակայում են էջ 176-177-ը:

<sup>116</sup> Խարբերոլ:

<sup>117</sup> Դերսիմ, Տերսիմ, Տորոս-գավառ, նահանգ, ծորապետություն Արմ Հայաստանում, Խարբերդի նահանգում: Մինչև XIX դ. 70-ական թթ. նահանգ էր, որտեղ գոյություն ուներ քրդական ծորապետություն (հյուլքյունեթություն): 1878թ. Սուլթանի հրամանագրով միացվում է Խարբերդի նահանգին իբրև գավառ: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին Դերսիմի բնակչության թիվը հասել էր 200000, որի 45 % հայեր էին, իսկ մնացածը՝ քրդեր, որոնք հայերի հետ ապրում էին հաշտ ու խաղաղ: Դերսիմցիները խիզախ են, անվեհեր, երբեմն՝ ավազակաբարո: Դերսիմը հայաբափ եղավ Առաջին համաշխարհայինի տարիներին: Մագապուրծ եղածները հարկադրաբար ընդունեցին մահմեդականություն: Քրդերն այստեղ փրկեցին հա-

գարավոր հայերի՝ նրանց հատուկ հսկողությամբ բերելով ու հանձնելով ռուսական զորքերի հրամանատարությանը: *ՉՏԲ, հ. II, էջ 93-94:*

<sup>118</sup> Դերեր:

<sup>119</sup> Փթառեշ հավանաբար Բթառիճ, Բգառիճ, Բդառիճ, Փիթառիճ, Փթառիճ-գյուղ Արմ Չայաստանի Էրզրումի նահանգի Երզնկայի գավառում, Երզնկա քաղաքից մոտ 20 կմ հվ-արլ, Քեշիշղաղ ձորի մուտքի մոտ՝ Սըր լեռան հվ ստորոտին: Գյուղի միջով հոսում է Բաղնիք կոչված սառը ջուր ունեցող առվակը, որի վրա 2-3 ջրաղաց էր աշխատում: XX դ. սկզբին ուներ 150 տուն բնակիչ, որից 50 տունը հայեր էին: Բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, այգեգործությամբ և արհեստներով: Գյուղում գործում էին Ս.Սարգիս եկեղեցին և հայկական երկսեռ վարժարանը՝ 40-50 աշակերտով: Գյուղից 2-3 կմ հվ գտնվում էր Ս.Նիկողայոս վանքը: Գյուղի տակ կար գետնափոր եկեղեցի՝ հայերեն արձանագրություններով: Հայերը բնաջնջվեցին Եղեռնի ժամանակ, փրկվածները տեղահանվեցին: *ՉՏԲ, հ. I, էջ 682-683:*

<sup>120</sup> Հանդիպեց:

<sup>121</sup> *Տե՛ս Արմյանսկի վոբոս, с. 268-269. Յուշանատեան Մեծ եղեռնի, էջ 926-953:*

<sup>122</sup> Դերջանի դաշտ, Սամախաթունի դաշտ-Արմ Եփրատի վերին հոսանքում: Տարածվում է Էրզրումի և Երզնկայի դաշտերի միջև՝ Եփրատի երկու ափերին և նրա ձախակողմյան վտակ Թուզլուի հովտում: Երկարությունը՝ 90 կմ, լայնությունը՝ 35-40 կմ, բարձրությունը՝ 1400-1700 մ: *ՉՏԲ, հ. II, էջ 93:*

<sup>123</sup> Քղի Ստորին, Քղի Ներքին, Գեղի Ներքին-գավառամաս, շրջան Արմ Չայաստանի Էրզրումի նահանգի Էրզրումի գավառի Քղիի գավառակում: Այսպես է կոչվել գավառի կամ գավառակի ցածրադիր մասը: Տարածվում էր Առյուծ լեռան հս լանջերից մինչև Կարակալգան գյուղը: Վերին Քղիից, որը զբաղեցնում էր Քղի գավառի կամ գավառակի բարձրադիր մասը, Ներքին Քղին բաժանվում էր Առյուծ լեռով և Շեյթանդերեսի գետակով: Վերին Քղին տարածվում էր Կարգալի գյուղից մինչև Առյուծ լեռան հարավային լանջերը: *ՉՏԲ, հ. V, 383-384:* Շեյթանդերեսի, Շեյտանտերեսի-գետակ Եփրատի ավազանում, Արմ Եփրատի աջակողմյան վտակն է, հոսում է սարավանդով և մայր գետին միանում Սամախաթուն գյուղաքաղաքից 19 կմ հս-արմ: Ամռանը ցամաքում է և մայր գետին չի հասնում: Նշանակված է Կովկասի 5-վերստանոց բարտեզում Շեյտանդերեսի ձևով: Հոսում է համանուն ձորով: *ՉՏԲ, հ. IV, էջ 102:*

<sup>124</sup> Այս դեպքում վերապրածը հիշում է հին մի սովորույթ՝ երեխաներին անփորձանք պահելու համար վեր բարձրացնելը: Այս ծիսական սովորույթները այժմ էլ կրկնվում են: Օրինակ՝ ամբողջ տարին ամուր և առողջ լինելու համար հայերը զարնանը՝ առաջին ամպոսը լսելիս, թիկունքը պատին են քսում: Այս սովորույթը մայրերը անում են փոքր երեխաներին գրկելով և վեր բարձրացնելով:

<sup>125</sup> Չնայած հայոց ցեղասպանությունը Օսմանյան կայսրության հայաբնակ վայրերում, Արմ Չայաստանում և Կիլիկիայում իրականում տևել է շուրջ 30 տարի (1894-1923թթ.), այնուամենայնիվ ապրիլի 24-ը ընդունվեց որպես Մեծ եղեռնի զոհերի հիշատակի օր, քանի որ հենց այս օրը՝ 1915թ. ձերբակալվեց և արտոլվեց Կ.Պոլսի հայ մտավորականների ծաղիկը: *Տե՛ս Արմյանսկի վոբոս, с. 160-161.*

<sup>126</sup> *Ըստ ՉՏԲ-ի (հ.III, էջ 542)* Ս.Հրեշտակապետ եկեղեցուն կից գործող վարժարանի սաների թիվը եղել է տասնչորսը, սակայն վերապրածի հուշերում պահպանված տվյալները թույլ են տալիս ճշտել սաների թիվը՝ այն հասցնելով 35-ի:

<sup>127</sup> Մաղարա անունով գյուղեր եղել են թե՛ Արմ Չայաստանում, թե՛ Արլ Չայաստանում: Այս դեպքում, կարծում ենք, խոսքը գնում է Մաղարա, Մագարա գյուղի մասին, որը տեղայնացվում է Էրզրումի նահանգի Երզնկայի գավառի Կամախի գավառակում՝ Կամախ գյուղաքաղաքից մոտ 13 կմ արլ՝ Եփրատի աջ ափին՝ բարեբեր

վայրում: Գյուղի մոտ էր գտնվում Արմ Եփրատի կամուրջներից մեկը: Նաև նշենք, որ Մաղարա, Մագարա, Մուզիրա անունով մի գյուղ էլ եղել է երզրումի գավառի Բաբերդի գավառակում՝ Բաբերդ գյուղաքաղաքից մոտ 20 կմ հվ, որը ռուսական քարտեզներում նշանակված է Մագարա, Մուզիրա ձևերով: **ԴՏԲ, հ. III, էջ 660:**

<sup>128</sup> Драгуны (от латинского draco-дракон на знаменах драгунов)-вид кавалерии, которая действовала как в конном, так и в пешем строю. Наименование происходит от драгона (короткого мушкета). Появились во Франции в XIV в., так называлась пехота, посаженная на коней и спешивавшаяся при встрече с противником. XVIII-XX вв. существовали в большинстве европейских армий и относились к тяжелой или к средней кавалерии, составляя до 1/3 всей конницы, были вооружены пистолетами, мушкетаму (позже-карабинами, винтовками), саблями, палашами, шашками. В России первый драгунский полк сформировался в 1631 г. В 1681 г. было 25 копейнорейторских полков, близких по назначению к драгунским. В начале XVIII в. вся кавалерия формируется по драгунскому типу, в 1700-08 создано 34 полка. С 1917 г. формируются гарнизонные драгунские полки для несения полицейской службы. В середине XVIII в. количество полков резко сокращается и увеличивается в начале XIX в. (18-в 1825 г.). В конце XIX в. различия между видами кавалерии стираются, в 1882 г. все армейские кавалерийские полки были переименованы в драгунские. В 1907 г. были восстановлены гусарские и уланские полки. К 1917 г. существовали 1 гвардейский и 21 армейский драгунские полки. Упразднены в 1918 г. **БСЭ, т. 8, М., 1972, с.476-477.**

<sup>129</sup> Առևանգվում տեղի է ունեցել 1917թ.: **Գ.Ստեփանյան, երգնկա, էջ 607:**

<sup>130</sup> Դերձանցի:

<sup>131</sup> Տասնապետ:

<sup>132</sup> 1856-71 թթ. կառուցվում է Տրապիզոն-Բաբերդ-Կարին 300 կմ երկաթուղային խճուղին, ապա ավարտվեց Կարին-Հասանկալա ճանապարհի կառուցումը: 1915թ. Կարինը երկաթուղային հաղորդակցություն ուներ Սարիղամիշի հետ: **ԴՏԲ, հ. III, էջ 44:**

<sup>133</sup> Բնագրում *На, кушайте поправляйтесь.*

<sup>134</sup> Սարիղամիշի շուրջը տարածվում են անտառներ, որոնք հնուց հայտնի են եղել մայրի և խեժատու լավագույն ծառատեսակներով, ինչի պատճառով տեղի բնակչությունը զբաղվում էր փայտանշակությամբ և անտառահատությամբ: **ԴՏԲ, հ. IV, էջ 535-536:**

<sup>135</sup> Բանվոր-ծառայողները ակտիվ մասնակցություն են ցույց տվել հեղափոխական և քաղաքական շարժումներին: 1917թ. հիմնվել է սոցիալ-դեմոկրատական բոլշևիկյան կազմակերպություն՝ Ս.Ալավերդյանի, Գ.Հայկունու գլխավորությամբ, ապա զինվորների, գյուղացիների պատգամավորների խորհուրդ: 1918թ. հունվար-մարտ ամիսներին այստեղ գործում էր Սարիղամիշի ռազմահեղափոխական կոմիտեն: 1920թ. մայիսին ռազմահեղափոխական կոմիտեն այստեղ խորհրդային կարգեր հռչակեց (ղեկավարներ՝ Ս.Գուրդյան, Լ. Մշյան, Ս. Ոսկանյան), ինչը, սակայն, ճնշվեց մայիսի 17-ին: **ԴՏԲ, հ. IV, էջ 535-536:**

<sup>136</sup> Керенский Александр Федорович (22.4.1881 г. Симбирск-11.6.1970 г. Нью-Йорк) русский политический деятель, глава Временного правительства. Из дворян. Окончил юридический факультет Петербургского университета (1904), был адвокатом. Депутат 4-ой Государственной думы (1912-17 гг.), возглавлял фракцию трудовиков. 1914-18 гг. оборонец. После Февральской революции 1917г. заместитель председателя Петроградского совета, член

Временной комиссии Государственной думы. С марта 1917 г. эсер. Инициатор Июльского наступления 1917г. на фронте. В день Октябрьского вооруженного восстания в Петрограде 25 октября бежал из столицы на фронт и возглавил Керенского-Краснова мятеж 1917г., 1 ноября после разгрома мятежа бежал на Дон. В 1918 г. эмигрировал во Францию, с 1940 жил в США, редактировал газету “Дни” (1922-32 гг.). *ԵՏՅ, տ. 12, Մ. 1974, Ը. 58.*

<sup>137</sup> Շարապուն:

<sup>138</sup> Տանիքներից:

<sup>139</sup> «1917թ. դեկտեմբերին 17-ամյա Հովհաննեսը կամավոր զինվորագրվել է նոր կազմակերպված Հայկական կորպուսին՝ ծառայել բանակային առաջին բրիգադի երզնկայի գնդում»: *Գ.Ստեփանյան, Երզնկա, էջ 608:*

<sup>140</sup> Բնագրում Ֆետմեթիլ: Фельдфебель (от немецкого фельд – поле, фебель – служитель при суде) воинское звание – чин унтер – офицерского состава и должность в армиях России до 1917 г. Чин соответствует старшему сержанту Советской армии. Տես *ԵՐՅՏ, Ը. 1658.*

<sup>141</sup> Բնագրում՝ միլպետը:

<sup>142</sup> Հասանկալայի տները քարակերտ կամ աղյուսաշեն են, զանգվածորեն երկհարկանի: Շարքերով տեղադրվում են բերդակիր լեռան լանջերին ու ստորոտում կազմելով մի հսկայական գեղատեսիլ ամֆիթատրոն: Չի ունեցել հատուկ հատակագծում: Քաղաքը Կարինին էր կապված առաջնակարգ սայլային ճանապարհով, որը խճապատվել էր անցյալ դարի կեսերից: XIX դ. սկզբներին ուներ 1700, 1880թ.՝ 1500, 1909-13թ.՝ 2500 տուն բնակիչ՝ մեծ մասը հայեր: 1828-29 թթ. պատերազմից հետո հայերի մեծ մասը արտագաղթում է Արլ Հայաստան: 1877-78 թթ. պատերազմից հետո թուրք բնակչությունը փախչում է Երզրում: XIX դ. վերջ-XX դ. սկզբին քաղաքի բնակչությունը աճում է (մոտ 2500 ընտանիք): *ՀՏՔ, հ. III, էջ 369:*

<sup>143</sup> Բնագրում՝ Բաղիջ ավան: Բաղիջվան, Պատիճվան, Պատիժվան, Պատոժվան, Պատիժվան-գյուղ Արմ. Հայաստանի Երզրումի նահանգի Երզրումի գավառում, Բասենի գավառակում, Օկունի գյուղից ոչ հեռու: Հնում մտել է Այրարատ աշխարհի Բասեն գավառի մեջ և եղել է բազմամարդ գյուղ, ունեցել է շուրջ 1500 բնակիչ: XIX դ. 70 թթ. այստեղ կար 30-50 տուն հայ և թուրք բնակիչ: Հայտնի էր մեղրավ, ուներ դպրոց: Պահպանված էին միայն մեծ եկեղեցու ավերակները և կարմիր քարով կառուցված կանգուն եկեղեցին, որը գտնվում է գերեզմանոցում: Եկեղեցու դռան վերևում կար 1658թ. արձանագրություն, որտեղ հիշատակված է կառուցողի անունը: Առաջին համաշխարհայինի տարիներին այստեղի հայերը ցրվեցին այլ վայրեր: Գյուղին մոտ գտնվել է Պատիժվան դղյակը: *ՀՏՔ, հ. IV, էջ 310:*

<sup>144</sup> Բնագրում միոյուր:

<sup>145</sup> Բնագրում՝ «Սարգիսոպ»:

<sup>146</sup> Բերդը գոյություն է ունեցել Ք.ա. IX-VI դդ.: Բերդը և քաղաքը պարսպապատ էին, պարիսպների բարձրությունը 5 մ էր, լայնությունը՝ 1,4 մ: Բերդը շրջանաձև էր և ուներ կրկնակի պարիսպներ ու աշտարակներ: Գտնվում էր քաղաքի հս-արմ կողմում, 2650 մ բարձր էր, բոլորածև լեռան վրա: Պարիսպների արտաքին և ներքին շարքերին զուգահեռ փորված էր 6 մ լայնություն և 2,1 մ խորություն ունեցող խրամ, որը լցվում էր ջրով: Բերդն ուներ երկու դուռ. Արլ՝ Բասենի դուռ, Արմ՝ Երզրումի դուռ: Դռների դիմաց՝ գետի վրա կառուցված էին ջրամբարներ, որոնց մոտից ստորերկրյա ճանապարհով իջնում էին գետի եզրը ջուր բերելու համար: Բերդը վերականգնվել է XVI դ.: 1885թ. վերանորոգել են անգլիացիները, ապա գերմանացիները: Քաղաքն ուներ մզկիթներ, որոնցից երեքը նախկին հայկական եկեղեցիներ էին և հայկական փոքրիկ գեղատեսիլ միակ եկեղեցին: *ՀՏՔ, հ. III, էջ 369:*

<sup>147</sup> Բասենի դաշտը: Բնագրում վերապրածը օգտագործում է տեղանվան Բասենյն ձևը:

<sup>148</sup> Փեխամբար՝ մարգարե, մուսուլմանները այսպես են կոչում Մուհամմեդին: «Մարգարեն և մարգարեական կրոնը» գրքում Սեյիդ Յուսեյն Նասրը գրում է. «Մարգարեն՝ որպես իսլամի հիմնադիր և աստծո հայտնության պատգամախոս, աստծո գրքի գերագույն մեկնիչն է...» «Մարգարե» ասելով՝ նկատի է առնվում իսլամի մարգարեն: Նա նախակերպարն ու կատարյալ մարմնացումն է մարգարեության, այդպիսով՝ մարգարե՝ խորը իմաստով: Հայտնության որևէ ձև իսլամում փաստորեն դիտարկվում է որպես մարգարեություն»: *Ա. Պայանան, Իսլամ և Ավետարան, էջ 193:*

<sup>149</sup> Այստեղ հուշապատումը ընդհատվում է, ձեռագրում բացակայում է 233 էջը, սակայն երկխոսության իմաստը չի աղճատվում:

<sup>150</sup> Դաշտ:

<sup>151</sup> XIX դ. 20-ական թթ. Վերին Բասենում կար 63 հայկական բնակավայր 25000 բնակիչով, Ներքին Բասենում՝ 24 բնակավայր՝ 10000 բնակիչով: *Армянский вопрос, с. 74.*

<sup>152</sup> Ալախբար-մյուս դեպքում վերապրածը օգտագործում է Ալավգար տեղանվանաձևը: Սակայն ՀՏԲ-ում խոսքը Արմ Հայաստանի Երզրումի նահանգի Բայազետի գավառի Դիադին գավառակում գտնվող Ալավգարա գյուղի մասին է: *ՀՏԲ, հ. I, էջ 67:*

<sup>153</sup> Վերապրածների հուշապատումներում հաճախ վրեժ լուծելու ձգտում է առաջանում: Վրեժ լուծելու այս ձգտումը ծնում է տարբեր գաղափարներ, որոնք, բանաձևի տեսք ստանալով, կարմիր թելի նման անցնում են հիշողությունների հիմնական առանցքով: Այս հուշապատումի մեջ բանաձև կարելի է համարել. «*Ղահիճների սպանած հազարի դիմաց գոնե մեկը լինի*» և «*դուք պետք է վրեժ-նիդ առնեք սրանցից, հասկացա՞ր, մարդասպաններու և դահիճներու նկատմամբ*»: Միհրան Ղազարյանի հուշապատումի մեջ այդ բանաձևը հետևյալն է. «...*Նեղն ընկած դեպքում հիշիդ մեր ուխտը*» «*Սպանիր, հետո նոր սպանվիր*»: *Ի. Ավագյան, Բիթլիսյան ողբերգություն (Միհրան Ղազարյանի հուշապատումը), Գյումրի, 2008, էջ 60, 114:*

<sup>154</sup> Շորագյալ, Շորեկել-դաշտ, բարձրավանդակ, հարթավայր, սարահարթ, տափաստան, ֆիզիկաաշխարհագրական շրջան Հայկական լեռնաշխարհում Ախուրյան գետի միջին հոսանքի շրջանում՝ Շիրակի դաշտ: *ՀՏԲ, հ. IV, էջ 151:* Այսպես է կոչվել նաև Կարսի մարզի Կարսի օկրուգի արլ մասում գտնվող տեղամասերից մեկը: 1880թ. ուներ 77 բնակավայր, որտեղ հաշվվում էր 5437 տնտեսություն: Կենտրոնը Շուրագել գյուղն էր: *ՀՏԲ, հ. IV, էջ 150, տե՛ս ՀՏԲ, հ. I, էջ 603:*

<sup>155</sup> Բաշ Շորագյալ, Բաշ Շյորակալ, Բաշ Շորակալ-գյուղ, ավան, բերդ, Կարսից 50 կմ հս-արլ, Արաքսի ձախակողմյան վտակ Ախուրյանի միջին հոսանքի շրջանում, նրա աջակողմյան վտակ Կարախանջայ վտակի վրա, այժմյան Գյումրուց 13 կմ հվ-արմ: Պատմական Շիրակավան կամ Երազգավոր: XIX դ. վերջերին ուներ 86 տուն՝ 730 հայ, 1907թ.՝ 180 տուն՝ 1532 հայ բնակիչներով: Զբաղվում էին երկրագործությամբ, անասնապահությամբ և արհեստներով: 1877 թ. գործում էր Սահակյան վարժարանը՝ 25 աշակերտով: Կանգուն էր Ս. Հովհաննես եկեղեցին: *ՀՏԲ, հ. I, էջ 602-603:* Սակայն վերապրածը հավանաբար ի նկատի ունի Արթիկի շրջանի Բաշգյուղը՝ Սարալանջը:

<sup>156</sup> Կարին, Ազոուն, Արգան Ար-Ռուն, Երզերում, Քարին-քաղաք Մեծ Հայքի Բարձր Հայք աշխարհի Կարին գավառում, Կարինի սարահարթում, Եփրատ գետի ձախ կողմում, Այծպտկունք լեռան հս-արմ լանջերին, ծովի մակերևույթից 2000 մ բարձրության վրա: Հվ Հավասանք լեռնաշղթան է, արլ՝ Դավաբոյնու, հս և արմ՝ Կարնո

դաշտը: XIX-XX դդ. ռուսական զորքերը երեք անգամ ագատագրել են քաղաքը թուրքերից և երեք անգամ էլ ետ վերադարձրել: 1829թ. Ադրիանապոլսի հաշտության պայմանագրով, երբ Կարինը վերադարձվեց թուրքերին, ռուսական զորքերի հետ քաղաքից հեռացան 20000 հայեր, որոնք բնակություն հաստատեցին Ախալցղ-խայի, Ախալքալակի, Լոռիի և Փամբակի շրջաններում: 1877-78 թթ. պատերազմից հետո, երբ քաղաքը կրկին թողնվեց, 2000 ընտանիք գաղթեց Անդրկովկաս: Առաջին աշխարհամարտի տարիներին Կարինի հայ բնակչության զգալի մասը կոտորվեց: **ՉՏԲ, հ. III, էջ 43-44:**

<sup>157</sup> Դեվերոյնի, Դովորոյնի-Լեռնաշղթա Կարին քաղաքից արլ:

<sup>158</sup> Հավանաբար վերապրածը ի նկատի ունի Ախալցխայի դուռը /'':

<sup>159</sup> Թուրքերի կառուցած բերդն ու քաղաքաներձ ամրությունները (Մեջիդիե, Եի-խախ, Սևիշլի) կանգուն էին մինչև Առաջին համաշխարհայինը և պահում էին իրենց ռազմաստրատեգիական նշանակությունը: Միջնաբերդը Կարին քաղաքի կենտրոնում էր, գտնվում էր երեք բլուրների վրա՝ շրջապատված կրկնակի պարիսպներով: Ուներ խրամ, որը լցվում էր Սուրտառ գետակի ջրերով: Կային գաղտնի գետնուղիներ, զինանոցներ, պահեստներ ու զորանոցներ: Քաղաքն ուներ շրջապարիսպներ, որոնց վերահսկում էին 72 աշտարակները: Ուներ չորս գլխավոր դարպասներ՝ Ախալցխայի (Վրացական), Երզնկայի, Թավրիզի, Խարբերդի: **ՉՏԲ, հ. III, էջ 44:**

<sup>160</sup> Ունովեր՝ ատրճանակ:

<sup>161</sup> Ղայֆախանա՝ սրճարան:

<sup>162</sup> Աքսոր:

<sup>163</sup> Երիտասարդ բանվոր:

<sup>164</sup> *Տե՛ն Армянский вопрос, с. 345:*

<sup>165</sup> Հերոս:

<sup>166</sup> Թուրքական թուրք փող:

<sup>167</sup> Одесса-город, центр Одесской области УССР. Порт на северо-западном берегу Черного моря, вблизи Хаджибейского и Куяльницкого лиманов, узел шоссейных и железных дорог, на линии Львов, Измаил, Брянск. Основан в 1415г. на месте татарского поселения Качибей, в 15 в.был разрушен, затем возник под названием Хаджибей. В 1795г. был переименован в Одессу. В1870 гг. центр народовольческого движения на Южной Украине. В 1875г. был создан "Южно-российский союз рабочих", в 1900г. комитет РСДРП. По Ясскому мирному договору 1791г. Хаджибей вошел в состав России. В 1901г. сформировалась "Южная революционная группа социал-демократов". После февральской революции 1917 г. создаются Советы рабочих депутатов, Румчерод. В июне 1917г. организационно оформился комитет РСДРП(б). Советская власть установлена 17 января 1918г. С марта по ноябрь 1918г. Одесса была оккупирована австро-германскими войсками, с января 1918г. по апрель 1919г.-англо-французами. В августе 1919г. захвачена денкинскими войсками, освобождена от белогвардейцев 7 февраля 1920г. В подполье действовали обком КП(б) Украины и "Иностранная коллегия", проводившая работу среди войск интервентов. **БСЭ, т. 18, М., 1974, с. 300-301.**

<sup>168</sup> Առաջին բնակիչները Օդեսա վերաբնակվել են XIX դ. 30 թթ. Աքերմանից և Գրի-գորիուպոլսից (30 ընտանիք): XIX դ. վերջին այստեղ բնակվում էր 1200 հայ, զբաղվում էին առևտրով, Մեծ եղեռնի տարիներին հայերի թիվը աճել է: 1880թ. կառուցված հայկական եկեղեցին ավերվել է Երկրորդ աշխարհամարտի տարիներին: Մինչև 1930թ. գործել է հայկական դպրոց: Հրատարակվել են «Արմյանե ի վոյնա» (1916-17 թթ.) ռուսերեն հանդեսը, «Հոսանք» (1918-19), «Աստղ» (1920)

թերթերը: 2003թ. տվյալներով հայերի թիվը 30000 է: **«Հայ Սփյուռք» հանրագիտարան, էջ 594:**

<sup>169</sup> Խոսքը Նագլուխ մասին է:

<sup>170</sup> Ղարս, Կարս-քաղաք, բերդաքաղաք Կարսի մարզում, նրա կենտրոնը գտնվում է Ախուրյանի աջակողմյան վտակ Կարսագետի ափին, բլուրներով շրջապատված բարեբեր դաշտում, 1850 մ բարձրության վրա: Բեռլինի 1878թ. հուլիսի 13 պայմանագրով Ռուսական կայսրությունը նոր նվաճած տարածքից կազմեց Կարսի մարզը՝ Կարս կենտրոնով: Կարսում տիրեց կարգուկանոն, գույքը և անձը երաշխավորված էին, կյանքը՝ խաղաղ և անդորր: Քաղաքը չուներ կոմունալ պայմաններ, զուրկ էր կանաչից: Տները քարաշեն էին, երկհարկանի, փայտյա պատշգամբներով: Մի մասը դասավորված էր լեռան լանջերին: Ռուսները վերակառուցեցին Ղարսի դաշտային մասի հվ կողմի արվարձանը: Այն շրջապատված էր աշտարակավոր պարիսպներով: Կառուցվեցին ռուսական եկեղեցի, միահարկ, ընդարձակ, թիթեղյա տանիքներով տներ և խանութներ: **ՀՏԲ, հ. III, էջ 68-69:**

<sup>171</sup> Ղալաջա, Ղալաճա, Խալաջ, Խալաճի, **ՀՏԲ, հ. II, էջ 621:** Հավանաբար խոսքը այս գյուղերից մեկի մասին է:

<sup>172</sup> 1918թ. թուրքական զորքերը, օգտվելով Կովկասյան ռազմաճակատի փլուզումից, անցան հակահարձակման: 1918թ. փետրվարի 18-ին էրզրում մտավ Անդրանիկի փոքրաթիվ ջոկատը, սակայն նա չկարողացավ ընդդիմանալ Վեիիբ փաշայի 25000-անոց բանակին: Սակայն նրա ջոկատի շնորհիվ կոտորածից փրկվեց և Անդրկովկաս նահանջեց խաղաղ բնակչությունը: Էրզրումում մնացած հայ բնակչությունը կոտորվեց: 1930թ. տվյալներով քաղաքում կար 250 թրքալեզու հայ: **Армянский вопрос, с.345:** 1918թ. փետրվարի 26-ին քաղաքը նորից անցնում է թուրքերի ձեռքը: **ՀՏԲ, հ. III, էջ 44:**

<sup>173</sup> ճանապարհ տվեք:

<sup>174</sup> Արաքսի ձախակողմյան վտակ Մուրցը (Հասանկալա) հոսում է Հասանկալայի միջով: Քաղաքից ոչ հեռու բխում են երկաթային և ծծմբային հանքային ջրեր՝ 35-40 աստիճան ջերմությամբ: Այդ աղբյուրներից երեքը վաղ ժամանակներից տեղացիներն օգտագործել են բուժման նպատակով: Հին ժամանակներից ի վեր քաղաքում եղել են բնական տաք ջրերով գործող բաղնիքներ: Նոր ժամանակներում քաղաքից մոտ 2 կմ հեռավորությամբ կային այդպիսի 2 քարաշեն բաղնիքներ, որոնցից մեկը գտնվում էր Մուրց (Հասանկալա) գետի աջ կողմում, իսկ մյուսը՝ ձախ: **ՀՏԲ, հ. III, էջ 368-369:**

<sup>175</sup> Սելիմ-գյուղաքաղաք, երկաթուղային կայարան Կարսի մարզում, Կարս-Էրզրում երկաթուղու վրա, Կարս քաղաքից 20 կմ հվ-արմ, Նովո-Սելիմ գյուղից 4 կմ հվ: Նշանակված է Կովկասի 5-և 10-վերստանոց քարտեզներում: **ՀՏԲ, հ. IV, էջ 563:**

<sup>176</sup> Ետիքիլիսա, Եդդիքիլիսե, Ետիգիլիսե, Ետիքիլիսե-գյուղ Կարսի օկրուգում, նրա արմ մասում, Սողանլուղի տեղամասում, Սարիղամիշ գյուղաքաղաքից հս-արլ, Սարիղամիշի գետի ձախ ափին: XX դ. սկզբներին ուներ 30 տուն հայ բնակիչ, զբաղվում էին երկրագործությամբ և անասնապահությամբ: Համանուն հովտի սահմանային լեռների վրա կան ամուր շենքերի կրաշաղախ հիմքեր, իսկ հովտում պահպանվում էին յոթ եկեղեցիների ավերակներ, (այստեղից էլ անունը), որոնցից չորսի պատերը մինչև XX դ. սկիզբը դեռևս կանգուն էին: **ՀՏԲ, հ. II, էջ 167:**

<sup>177</sup> Կարսը 1800-1830 թթ. ուներ 15000 բնակիչ, որից 10000 հայեր էին, 1830-1850 թթ.՝ 14000, որից 6000՝ հայեր, 1897թ.՝ 20805, որից 10332՝ հայեր, 1914թ.՝ 30086, որի 84% հայեր են: Քաղաքի տնտեսական կյանքը բավական աշխուժացավ XX դ. սկզբին՝ Ալեքսանդրապոլ-Կարս (1899թ.) և Կարս-Սարիղամիշ (1915թ.) երկաթուղագծերի կառուցման ու խճուղային ճանապարհների բարեկարգման շնորհիվ:

Ստեղծվեցին սննդի և թեթև արդյունաբերության մի քանի ձեռնարկություններ, սպանդանոց, որտեղ տարեկան մորթվում էր 1000 գլուխ խոշոր եղջերավոր անասուն: Ուներ 800 խանութ և կրպակ: Կազմակերպվում էին տոնավաճառներ: Բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, քաղաքապատկան էր 4000 դեսյատին հողը: XIX դ. սկզբին ուներ տարբեր կարգի 3000 տուն, 18 եկեղեցի և մի քանի մզկիթ, որոնց զգալի մասը ավերված ու լքված էր: **ՉՏԲ, հ. III, էջ 69:**

<sup>178</sup> 1880թ. բացվում են քաղաքի տարրական արական և իգական ուսումնարանները: 1909թ. գործում էր իգական գիմնազիան: Բոլորն էլ ռուսական դպրոցներ էին: Կային եկեղեցուն կից տարրական ուսումնարաններ (Ս.Մարիամ եկեղեցի): Կային մասնավոր խալֆայական տիպի ուսումնարաններ: 1910թ. սովորողների թիվը 1376 էր: 1883թ.՝ այստեղ հրատարակվում էին «Կարս», 1917թ.՝ «Բանվոր» շաբաթաթերթերը, «Աշխատավորի ձայն» (1920), «Դիրքերում» (1920) օրաթերթերը: **ՉՏԲ, հ. III, էջ 70:**

<sup>179</sup> Ալեքսանդրապոլ-քաղաք Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառում: ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության 27.01.1924թ. հրամանագրով վերանվանվել է Լենինական: **ՉՏԲ, հ. I, էջ 75:**

<sup>180</sup> Համաձայն Ալեքսանդրապոլի բերդի հին նախագծերի՝ վերապրածի հիշատակած Սև դուլի հիվանդանոցը գտնվել է Սև ամրոցի մեջ՝ Ս.Ալեքսանդրայի անունը կրող եկեղեցու դիմացը գտնվող կառույցում, որտեղ այժմ տեղակայված է գինվորական բազայի շտաբը: Ռազմական հիվանդանոցը ունեցել է 150 մահճակալ: Ըստ ՀՏԲ-ի՝ 1820 թթ. Ռուսաստանը Գյումրիում պահում էր բազմամարդ, մարտունակ կայազոր, որն էլ ավելի ամրապնդվեց 1837թ. հիմնադրված բերդով: Մինչև Կարսի շրջանի միացումը Ռուսաստանին Գյումրիի բերդը ամենախուսալի սահմանային ամրությունն էր համարվում: 1837թ. Նիկոլայ I-ը այցելում է Գյումրի, և կայսեր կնոջ՝ Ալեքսանդրայի անունով քաղաքը վերանվանվում է Ալեքսանդրապոլ: **ՉՏԲ, հ. II, էջ 572:**

<sup>181</sup> Աղին-ավան համանուն երկաթուղային կայարանին կից ՀՍՍՀ Անիի շրջանում: Գտնվում է Երևան-Լենինական երկաթուղու վրա, Ախուրյանի ձախ ափին, Մարալի-կից արև, ալիքավորված հարթավայրում: 1926թ. ուներ 60 բնակիչ: Բնակիչները եկել են հիմնականում Աղին գյուղից, որը գտնվում էր Լենինականից 22-23 կմ հվարմ, դարձյալ Լենինական-Երևան երկաթուղու վրա, շրջապատված է արգավանդ դաշտերով: Բնակիչների նախնիները եկել էին 1829-30 թթ.՝ Մուշից, Ալաշկերտից, Բասենից և 1877-1878 թթ.՝ Կարսից: 1897թ. ուներ 1004 հայ բնակիչ: Կանգուն է 1878թ. կառուցված Ս.Հակոբ եկեղեցին: **ՉՏԲ, հ. I, էջ 177:**

<sup>182</sup> Աղբյուրների հավաստմամբ 1804թ., երբ ռուսական կազակային առաջին խմբերը մտան Գյումրի, գյուղի շրջակայքն ամայի էր: Այստեղ տեղակայված կազակային սահմանապահ կայազորի գինվորների համար բնակավայրի հարավային կողմում կառուցվեց բնակելի թաղամաս, որը հայտնի է «Կազաչիյ պոստ» անվամբ: Կարճ ժամանակ անց այստեղ ստեղծվեց լավ ամրացված սահմանային կայան, որում տեղակայված էր ռուսական բավականին մեծ մի կայազոր: **Կ.Քաղեյան, Գ.Աղանյան, Ալեքսանդրապոլ. Ազգագրական էսքիզներ (պատմաազգագրական ուսումնասիրություն), Եր., 2015, էջ 10:**

Մինչ օրս Գյումրու «Կազաչիյ պոստ» թաղամասում պահպանվում են ռուսական եկեղեցին, Ամերկոմի որբանոցի շենքերը, որոնք կառուցվել են 1907թ., և Հայաստանի խորհրդայնացումից հետո կառուցված մասնաշենքերը:

<sup>183</sup> Խլի-Ղարաքիլիսա, Ազատան, Գաղեմա, Գանդնա, Խլի-Ղարաքիլիսա Ներքին, Խլի-Ղարաքիլիսա Փոքր, Ղարաքիլիսա-գյուղ ՀՍՍՀ Ախուրյանի շրջանում, Մանթաշ գետի աջ ափին, Լենինական քաղաքից հր, Երևան տանող խճուղու վրա, հարթա-

վայրում՝ շրջապատված արգավանդ դաշտերով: Ազատան է կոչվել ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության 1945թ. հունվարի 7-ի հրամանագրով: Բնակիչների նախնիները եկել են 1829-1830 թթ. Կարսից, Ալաշկերտից: 1831թ. ուներ 1450 հայ բնակիչ, 1922թ.՝ 2940: 1826թ. գյուղի մոտակայքում ռուսների և պարսիկների միջև տեղի է ունեցել ճակատամարտ: **ՀՏԲ, հ. I, էջ 39-40:**

<sup>184</sup> 1918թ. ապրիլի 25-ին Կարսը, որ համարվում էր դժվարամատչելի ամրոց և ուներ լավ զինված կայազոր, Անդրկովկասյան սեյմի դավադիր քաղաքականության պատճառով առանց դիմադրության հանձնվում է թուրքերին, հայ բնակչությունը ստիպված գաղթում է Շիրակ: Մնացողները կոտորվում են: **Армянский вопрос, с. 193.**

<sup>185</sup> Օլթի-օկրուգ Կարսի մարզում, նրա արմ մասում: Կազմվել է 1878թ.՝ Կարսի մարզի ստեղծման ժամանակ, նախկին Օլթիի գավառի և Նարիմանի, Բանակի, Բարդուսի ու Տայոցքարի գյուղախմբերի տարածքներից: Համապատասխանում էր Մեծ Հայքի Տայք աշխարհի Ուխթեք կամ Ոքաղե գավառին: Ընդգրկում էր Օլթիի գետի հովիտը և կտրատված էր լեռներով ու ձորերով: Կենտրոնը Օլթի քաղաքն էր: Ընդգրկում էր 3050 քառ. կմ տարածք: 1870թ. մտնում էր Երզրումի մարզի մեջ: 1878թ. Բեռլինի համաձայնագրով ռուս-թուրքական սահմանի անցկացման ժամանակ օկրուգի հվ-արմ գյուղերը մնացին Թուրքիային: 1878թ. մարտ ամսվա վիճակագրությամբ օկրուգն ուներ 203 գյուղ, 17276 բնակիչ, որի կեսից ավելին հայեր էին, 1912թ. վիճակագրությամբ՝ 38094 բնակիչ, որից՝ 4709 հայ: Բնակիչները զբաղվում էին անասնապահությամբ, երկրագործությամբ, հայերը՝ նաև արհեստներով: **ՀՏԲ, հ V, էջ 463:**

<sup>186</sup> Բնագրում՝ Վլադիկարսկայա: Վլադիկարս-գյուղ Կարսի մարզի Կարսի օկրուգում, Կարս քաղաքից մոտ 10 կմ հվ-արմ, Կարս-Սարիղամիշ ճանապարհին, Կարսի գետի ձախ ափին: 1907թ. ուներ 870 բնակիչ՝ մեծ մասը ռուս մոլդկան վերաբնակիչ: Լինչը հիշատակում է Վլադիկարս ձևով: **Линч Х.Ф.Б., Армения, Путевые очерки и этюды Х.Ф. Б. Линча, переводъ съ английскаго Елизаветы Джунковской, томъ I, Русскія провинціи, Тифлисъ, 1910, с. 384.** Համանուն երկաթուղային կայարանը գտնվում է գյուղից 2 կմ հվ-արլ, Կարս քաղաքից 11 կմ հվ-արմ, Կարս-Սարիղամիշ երկաթուղու վրա: **ՀՏԲ, հ. IV, էջ 807:**

<sup>187</sup> Ալաջա, Ալաճա-գյուղակ Արմ Հայաստանում, Երզրումի նահանգի Երզրումի գավառում, Հասանկալայից մոտ 23 կմ հվ-արլ, Արաքսի ավազանի փոքրիկ գետակներից մեկի ափին, սարահարթի վրա: XIX դ. վերջին ուներ 23 տուն բնակիչ: **ՀՏԲ, հ. I, էջ 65:**

<sup>188</sup> Դզըլչաղչաղ, Կըզլչախչախ-գյուղ Կարսի մարզի Կարսի օկրուգում, Շորագյալի տեղամասում, Կարս-Ալեքսանդրապոլ երկաթուղու ձախ կողմում, նրանից 3 կմ հեռու, Կարս քաղաքից 47 կմ հս-արլ, Կարայալ երկաթուղային կայարանի հս կողմում, Ախուրյանի աջակողմյան Կարախան վտակի ափին, նրա Մոքյուզչայ օժանդակի միախառնման վայրում: XX դ. սկզբներին ուներ 283 տուն՝ 2243 հայ բնակիչ և եկեղեցի (կառուցված 1866թ.): Բնակիչների մի մասը եկել էր Ալաշկերտի գյուղերից: Ավերվել է 1926թ. հոկտեմբերի 23-ի ահեղ երկրաշարժից: Բնակիչները զբաղվում էին երկրագործությամբ, անասնապահությամբ, արհեստներով: 1920թ. բնակիչները գաղթել են և բնակվել Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի գյուղերում: **ՀՏԲ, հ. II, էջ 121, 559:**

<sup>189</sup> Սախալին-կղզի Հեռավոր Արևելքում, Ասիայի արլ ափի մոտ: Ողողվում է Օխոտի և ճապոնական ծովերի ջրերով: Մայրցամաքից բաժանված է Թաթարական, իսկ Հոկայդո կղզուց՝ Լապրուգի նեղուցով: Միջօրեականի ուղղությամբ ձգվում է 948 կմ, տարածությունը 76, 4 հզ. քառ. կմ: Հայտնագործվել է XVII դ.: 1855թ. ճանաչ-

վել է որպես Ռուսաստանի և Ճապոնիայի տիրապետություն, 1875թ.՝ Ռուսաստանի սեփականություն: 1904-05 թթ. ռուս-ճապոնական պատերազմից հետո Պորտանուտի հաշտության պայմանագրով Սախալինի հարավային մասը անցավ ճապոնիային: 1945թ. սովետական բանակը ազատագրեց կղզու հվ մասը, և Ղրիմի կոնֆերանսի որոշմամբ այն վերադարձվեց ՍՍՀՄ-ին: **ՉՄԴ, հ. X, էջ 129-130.**

<sup>190</sup> Գրագիտություն:

<sup>191</sup> Բնագրում՝ դիմաց:

<sup>192</sup> 1918 թ. մայիսի 15-ին թուրքերը գրավեցին Ալեքսանդրապոլը: Իրենց կատարած գործողություններին օրինական տեսք տալու համար նրանք օգտագործում էին տեղական ինքնակառավարման մարմինները: **Կ.Ալեքսանյան, Տեղական կառույցների օգտագործման թուրքական քաղաքականությունը Ալեքսանդրապոլի գավառում 1918-1921 թթ., Գիտական աշխատություններ, հ. 8, Գյումրի, էջ 49-52:** 1918թ. մայիսի 17-ին թուրքական զինվորական իշխանության կարգադրությամբ քաղաքացիների ընդհանուր ժողովն ընտրում է 29 հոգուց բաղկացած քաղաքային խորհուրդ, որն ընտրում է 15 հոգուց բաղկացած վարչություն: **Կ.Ալեքսանյան, Փաստաթղթեր՝ 1918թ. մայիսին թուրքական բանակի կողմից Ալեքսանդրապոլի գրավման և քաղաքային ինքնավարության նոր մարմինների ստեղծման մասին, Բանբեր Չայաստանի արխիվների, Եր., 2011, թիվ 1, էջ 24-37:**

<sup>193</sup> Համամյու, Համամլի-գյուղ, ավան քաղաքատիպ ավան և երկաթուղային կայարան ՉՍՄ Սպիտակի շրջանում, Սպիտակ: **ՉՏԲ, հ. III, էջ 323:** Սպիտակը վարչական շրջան էր ՀՀ հս-արմ կողմում, Փամբակ գետի վերին հոսանքում: 1995թ. մտել է Լոռու մարզի մեջ: Տարածքը՝ 544 քառ. կմ, բնակչությունը՝ 42800 մարդ (1983թ. տվյալներով): Շրջանը կազմվել էր 1937թ., Ալեքսանդրապոլի գավառի տարածքից: Կենտրոնը Սպիտակն էր, բնական անտառային պուրակները զբաղեցնում են 600 հա տարածություն: Արհեստական անտառանուկումները կատարվել են 2500 հա վրա: 1831թ. ուներ 4000, 1893՝ 23513, 1926՝ 29086 հայ բնակիչ: Տնտեսության զարգացմանը նպաստում են Երևան-Թբիլիսի երկաթուղու 45 կմ հատվածն ու Երևան-Սպիտակ-Վանաձոր և Վանաձոր-Սպիտակ-Գյումրի ավտոմայրուղիները: Հաղորդակցություն ունի Ստեփանավանի և Թբիլիսիի հետ: 1801թ. հայկական հս շրջանների ու վրաց թագավորության հետ միացվեց Ռուսաստանին և Համամյուի գավառակ անվամբ սկզբում մտնում էր Լոռի-Փամբակի, հետո Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի մեջ: 1804թ.օգոստոսին ռուսական զորքերը հաղթանակ են տանում պարսիկների դեմ: Նոր Խաչակապ գյուղի մոտ Չայաստանի խորհրդայնացումից հետո Համամյուի գավառակը մտավ Լոռի-Փամբակի գավառի մեջ: **ՉՏԲ, հ. IV, էջ 677-678.**

<sup>194</sup> Բոլնիսիաչեցիներ:

<sup>195</sup> Ալազյազ, Ալազյոզ-Արագած լեռնագագաթ 4096 մ:

<sup>196</sup> Արթիկ, Արդիկ, Արթիկ Մեծ, Արթիկ տուֆ-քաղաք, գտնվում է Արագած լեռան հս-արմ ստորոտին, մեղմաթեք սարահարթի վրա, բարձրությունը՝ 1750 մ: Երկաթուղային կայարան էր Մարալիկ-Լենինական երկաթուղու վրա: Ավտոմոբիլային ճանապարհներով կապված է Երևան-Գյումրի և Երևան-Սպիտակ խճուղիների հետ: Ֆ.Գանը տեղանունը ստուգաբանում է հայերեն «այր» և պարսկերեն «թիկ»՝ բարձունք բառերով: 1918թ. ենթարկվել է թուրքական ավազակաբարո զորքերի հարձակումներին և թալանին: Մարդաշատ էր, 1831թ.ուներ 647 բնակիչ, 1873թ.՝ 2359, 1897թ.՝ 2950 հայ բնակիչ, որոնց հիմնական մասը ներգաղթել էր 1829-1830 թթ. էրզրումից և Կարսից: **ՉՏԲ, հ. I, էջ 438-439:**

<sup>197</sup> Աարալանց, Բաշ, Բաշգյուղ, Բաշգյուղ Մեծ, Բաշգյուղ Նոր, Բաշքենդ, Բաշքենդ Առաջին, Բաշքենդ Փոքր-գյուղ ՀՀ Արագածոտնի մարզում (04.02.1995թ.), նախկին

Արթիկի շրջանում, Արագած լեռան հս-արմ ստորոտին, Հառիճ գյուղից փոքր-ինչ հս-արլ: Սարալանջ է վերանվանվել 31.05.1946թ.: Ունի արգավանդ հողեր և փարթան արոտավայրեր: Կլիման ցուրտ է, առողջարար: Տները քարաշեն են հարմարավետ, ունեն պարտեզներ: Խմելու ջուրը բերված է 9 կմ հեռավորությունից: 1831թ. ուներ 139, 1897թ.՝ 903, 1926թ.՝ 1182 բնակիչ, որոնց մի մասի նախնիները 1828-29թթ. գաղթել են Արմ. Հայաստանի Երզրումի, Մուշի, Կարսի մարզի շրջանների գյուղերից: Բնակչությունը զբաղվում էր անասնապահությամբ, հացահատիկի, կերային կուլտուրաների և ծխախոտի մշակությամբ: **ՀՏԲ, հ. 4, էջ 513:**

<sup>188</sup> Շահառլու, Շագառլու, Շագալի, Շահալի, Վահագնաձոր, Վահագն-գյուղ, ավան ՀՀ Լոռու մարզում, նախկինում Գուգարքի շրջանում, Վանաձորից 10-12 կմ հս-արլ, Փամբակ գետի ափին, անտառապատ լեռնալանջի վրա: Նախկինում երկաթուղային կայարանին կից ավան էր: 1926թ. ուներ 342 հայ բնակիչ: Համանուն Վահագնի գյուղը գտնվում է Վահագնի գետի ստորին հոսանքի շրջանում: Գյուղը ամբողջությամբ թաղված է մրգատու այգիների և բանջարանոցների մեջ: 1831թ. ուներ 113, 1897թ.՝ 913, 1926թ.՝ 1688 բնակիչ: Ձբաղվում էին անասնապահությամբ, պտղաբուծությամբ, հացահատիկի, կերային կուլտուրաների մշակմամբ և բանջարաբուծությամբ: Ուներ մեկ անշուք կանգուն եկեղեցի՝ Ս.Սարգիս: **ՀՏԲ, հ. IV, էջ 735:**

<sup>189</sup> Դարաքիլիսա, Կիրովական, Վանաձոր-քաղաք ՀԽՍՀ հս կողմում, Փամբակ գետի նեղ հովտում, որտեղ վերջինիս մեջ է թափվում Տանձուտ վտակը: Քաղաքի տարածքը բաժանվում է երկու կաթսայածև հովիտների, որոնցից մեկում տեղադրված է բուն քաղաքը, մյուսում՝ Դարբաս-ժղանով թաղամասը: Հովիտը հս շրջապատված է Բազումի, հվ՝ Փամբակի լեռնաշղթաներով: 1831թ. ուներ 494, 1873թ.՝ 2017, 1897՝ 3917 բնակիչ: Գտնվում է Երևան-Թբիլիսի երկաթուղու վրա: Խճուղային ճանապարհների հանգույց է, կապված է Ստեփանավանի, Գյումրու, Դիլիջանի, Սպիտակի հետ: Քաղաքի երկարությունը 11 կմ է, լայնքը՝ 3 կմ: 1639թ. քաղաքի տարածքը մտավ Պարսկաստանի տիրապետության մեջ, իսկ 1801թ.՝ անցնում է Ռուսաստանին: Ուներ փոստակայան, իջևանատներ: Բնակչությունը զբաղվում էր անասնապահությամբ, արհեստներով և առևտրով: 1911թ. կար շուրջ 60 խանութ, 6 պանդոկ, 3 ճաշարան, բաղնիք, 4 ջրաղաց, կղմինդրե 3 գործարան, հացի 12 փուռ, 3 հյուրանոց, 4 իջևանատուն, 17 պահեստ, բնակչությանը սպասարկող 40 կառք: 1853թ. հիմնվում են առաջին հայկական, 1901թ.՝ ռուսական դպրոցները: 1831թ. սև քարով կառուցվել են Ա.Աստվածածին եկեղեցին (այստեղից էլ Դարաքիլիսի անվանումը), 1895թ.՝ ռուսական եկեղեցին: **ՀՏԲ, հ. III, էջ 149-152:**

<sup>200</sup> Հավանաբար վերադարձը չի մասնակցել Երևան-Թբիլիսի երկաթուղու ճակատամարտին հոգեկան ծանր վիճակում հայտնվելու պատճառով:

<sup>201</sup> Քուլագիրան, Քուլագերան-գյուղ Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառում, հիմնադրվել է 1870թ.: 1886թ. ուներ 223, 1914 թ.՝ 470, 1926թ.՝ 539 հայ բնակիչ: Այժմ Անտառամուտ, ՀՀ Լոռու մարզում, նախկին Գուգարքի շրջանում, Վանաձոր քաղաքից հս-արլ: **ՀՏԲ, հ. V, էջ 428, հ. I, էջ 283:**

<sup>202</sup> Ջալալօղլի-գյուղ, ավան Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառում: Այժմ Ստեփանավան: Մոտակայքում էր գտնվում Ջալալօղլի ռուսական գյուղը, որը 1907թ. ուներ 585 բնակիչ, հետագայում մտել է Ստեփանավանի շրջագծի մեջ: Ցարական չինովնիկների ամառանոցավայրերից էր: 29.11.1920թ. մտավ Լոռվա գավառի մեջ, իսկ 1930թ.՝ Ստեփանավանի կենտրոնն էր: **ՀՏԲ, հ. IV, էջ 376, 685:**

<sup>203</sup> Դսեղը գավառակ էր ՀԱՍՀ Լոռի-Փամբակի գավառում (1920-29 թթ.): Տարածքը 4945 կմ էր: Ուներ 14599 բնակիչ (1929թ.): Համանուն Դսեղ, Դիսիգի, Դիսիս գյուղը, ավանը, գյուղաքաղաքը 1938թ. վերանվանվեց Թումանյան, սակայն 1969թ.նորից

վերանվանվեց Դսեղ: Գտնվում է Ալավերդուց 16 կմ հվ, Դեբեդ գետի բարձրադիր աջ ափին, Փամբակի գետաբերանի մոտ, երեք կողմից անտառապատ լեռներով օղակավոր գեղատեսիլ սարավանդի վրա, որի արմ կողմում Դեբեդի խոր կիրճն է: Իր գեղեցիկ առանձնատներով ու շախմատաձև հատակագծով արտաքնապես փոքրիկ քաղաքի տպավորություն է թողնում: Հրաշալի ամառանոցավայր է: Խմելու ջուրը բերված է 2 կմ հեռավորությունից: Թաղված է մրգատու ծառերի և բանջարանոցների մեջ: Ստուգաբանվում է «դուզ տեղ», «դուզ գեղ» իմաստով: Հին ժամանակներից գուտ հայաբնակ է: 1831թ.ուներ 473 բնակիչ, 1897թ.՝ 1231, 1926թ.՝ 2655: **ՀՏԲ, հ. II, էջ 143:**

<sup>204</sup> Վերապրածը 1918թ. մայիսին Դսեղում զինվորագրվել է գեներալ Անդրանիկի հրամանատարության ներքո գործող Հայկական առանձին հարվածային զորամասին: Գ.Ստեփանյան, Երզնկա, էջ 608:

<sup>205</sup> Անդրանիկի հրամանատարության տակ 1918թ. ապրիլի 10-ին Ալեքսանդրապոլում թուրքահայ 1400 կամավորներից ձևավորվում է Հայկական առանձին հարվածող զորամասը: **Եղիշե Քաղունի, Աշխ. աշխ., էջ 19: Ըստ Գյումրու Իսահակյան փողոցի 84, 86 տան բնակիչ Սամվել Սարգսի Գևորգյանի պատմածի՝ 1918թ. Անդրանիկը իր քառասուն զինվորներով երեք օր ապրել է այս տանը: Տան մի մասնաբաժինը՝ Իսահակյան 84-ը, կառուցվել է 1895 թ., իսկ երկրորդ մասնաբաժինը՝ Իսահակյան 86-ը՝ 1914թ.: Տունը կառուցել և այստեղ բնակվել են Ալեքսանդրապոլի նշանավոր որմնադիրներ Մամփրեն և մրա հայրը: Մամփրեն, 1946թ. տունը վաճառելով Գևորգյանների ընտանիքին, տեղափոխվել է Երևան: Անդրանիկին տանը ապաստան է տվել Մամփրեի հայրը: Ուշագրավն այն է, որ տան վերանորոգումների ժամանակ տան պատերից դուր է բերվել մեծ քանակությամբ զինամթերք: 1961թ. տան վառարանը ապամոնտաժելու ժամանակ վառարանի տակից դուրս է հանվել մի ջվակ, որի մեջ դրված էր քսանյոթ թմբուկավոր ատրճանակ: 1982-1983թթ.՝ տան խոհանոցի աջ մասում պատը փորելու ժամանակ, գտնվել է 200-250 փամփուշտ: 1988թ. երկրաշարժից տուժել էր տան հյուսիսային պատը, որը քանդելու ժամանակ պատից դուրս է հանվում երկու-երեք դուլլ փամփուշտ: Շատ հավանական է, որ զենքը չեն հասցրել տանել, և այդ պատճառով Մամփրեի հայրը այդ ամենը թաքցրել է:**

<sup>206</sup> Առաջին համաշխարհայինի սկզբին Անդրանիկը մեկնել է Թիֆլիս, նշանակվել հայկական կամավոր. 1-ին ջրկատի հրամանատար, որը Կովկասյան ռազմաճակատի ռուսական բանակի կազմում աչքի է ընկել Վանի, Բիթլիսի, Մուշի գրավման ժամանակ, Դիլմանի ճակատամարտում (1915թ. ապրիլ): Հետագայում վրդովմած հայ. կամավոր. ջրկատների նկատմամբ ռուս. հրամանատարության անվստահությունից՝ 1916թ. մարտին հրաժարական է տվել և հեռացել ռազմաճակատից: 1916-17 թթ. Թիֆլիսում և Հս Կովկասում մեծ աշխատանք է կատարել հայ գաղթականներին բազմակողմանի օգնություն կազմակերպելու գործում, մասնակցել արևմտահայերի I համագումարին, նախաձեռնել է «Հայաստան» թերթի (1917-1918 թթ.) հրատարակումը: 1918թ. հունվարին Երզրումի ամրացված շրջանը թուրքական հարձակումից պաշտպանելու համար նշանակվել է նոր ձևավորված հայկական բանակային կորպուսի երկրապահ դիվիզիայի հրամանատար: Նույն ամսին Կովկասյան ռազմաճակատի հրամանատարությունը նրան շնորհել է գեներալ-մայորի կոչում: Կովկասյան ճակատի փլուզման, ռուսական զորքերի հեռանալու, թուրք. գերիշխող ուժերի հարձակման պայմաններում Անդրանիկի դիվիզիան հարկադրված նահանջել է Կարս-Ալեքսանդրապոլ-Վորոնցովկա ուղղությամբ, դիրքավորվել Ջալալօղլիում խնդիր ունենալով արգելել թուրքական զորքերի առաջխաղացումը դեպի Երևան: Ապրիլին Անդրանիկը նշանակվեց Հայ-

կական առանձին հարվածային ջոկատի հրամանատար, որը հունիսին նահանջել է Դիլիջան-Սևան-Նոր Բայազետ-Սելիմի լեռնանցքով դեպի Ջուլֆա և Խոյ (Իրան)՝ Հս. Իրանում կուտակված հայ գաղթականներին, Վանի հայությանը օգնելու նպատակով: Հանդիպելով թուրք զորքերի դիմադրությանը՝ ջոկատը վերադարձել է Նախիջևան այն հայտարարելով Խորհրդային Ռուսաստանի անբաժան մաս: Անդրանիկը Բաքվի կոմունայի ղեկավար Ա.Շահունյանին հեռագրել է, որ իր ջոկատը դնում է Խորհրդային Ռուսաստանի կենտրոնական կառավարության տրամադրության տակ: Բարդ իրավիճակում անցել է Գորիս, ապա Սիսիան, որտեղ տեղավորել է իր զորամասն ու նրա հետևից եկող հայ գաղթականներին: 1918թ. նոյեմբերին իր ջոկատով անցել է Ղարաբաղ՝ թուրքերից և մուսավաթականներից այն պաշտպանելու համար, բայց Կովկասում անգլիական հրամանատարության պահանջով, որը խոստանում էր հարցերը լուծել խաղաղ ճանապարհով, Անդրանիկը հետ է դարձել: Հուսախաբվելով Անտանտի քաղաքականությունից և գժտվելով Հայաստանի Հանրապետության կառավարության հետ՝ 1919թ. ապրիլին իր զորամասը բերել է Էջմիածին, զորացրել այն, իսկ ինքն անցել արտասահման: Գտնվելով Ֆրանսիայում, ապա՝ Անգլիայում ծրագրեր է մշակել Կիլիկիայի հայերի պայքարին օժանդակելու համար: 1922թ. ապրել է ԱՄՆ-ում, շարունակել օգնությունը սփյուռքահայերին: Մահացել է Չիկո կուրորտային վայրում, թաղվել Ֆրեզնոյում: 1928թ. Անդրանիկի աճյունը տեղափոխվել է Փարիզ, ամփոփվել Պեր Լաշեզ գերեզմանատանը: **ԳԳԳ, էջ 36-37:**

<sup>207</sup> Թուրքական զորքերի շրջափակումից խուսափելու համար Հարվածող զորամասը Դսեղից ուղղվում է Դիլիջան: Ձորավար Անդրանիկի գրագիրը՝ Եղիշե Քաջունին գրում է. «Իսկ Ձորամասը թողուց Դսեղը եւ այդ խորտուրբորտ, ցեխոտ, երկրամասին մէջ անձրեւի, կարկուտի տակ ու դառն սրտով սկսաւ ուղղուիլ դէպի Դիլիջան... ճամբուն, երկրին անհարմարութիւնները չափազանց կը դանդաղեցնէին զօրամասին շարժումը: Հարկ եղաւ գիշերը, Մայիս 25ը անցընել արը, անձրեւի տակ,ցուրտ քամիին տակ եւ գաղթականութեան հոծ բազմութեան մէջ»: **Եղիշե Քաջունի, նշվ. աշխ., էջ 32:**

<sup>208</sup> Դիլիջան, Դիլիժան, Դիլի, Դիլի Փոքր, Դիլիջան Հին-գյուղ, ավան, հանրապետական ենթակայության քաղաք ՀՍՄՀ-ում: Գտնվում է Աղստև գետի ափին, Երևանից 106 կմ, Վանաձորից 42 կմ հեռավորությամբ: 1300-1330 մ բարձրության վրա: Փռված է նեղ գետահովտում և դրան հարակից անտառապատ լեռնալանջերի ընդարձակ բացատներում՝ առաջացնելով բնական մի քանի հարկեր: Կլիման մեղմ է և հաճելի: Տեղանունը ստուգաբանվում է «դելե» հիմար և ջան՝ հոգի» կամ «քաղցր լեզու» ձևով: XIX դ. 40-ական թթ. վարչական նոր վերափոխումներից հետո Դիլիջանը մտցվում է Ելիզավետպոլի նահանգի Ղազախ գավառի մեջ: Պաշտոնական փաստաթղթերում հիշատակվում է որպես երկու թաղ ունեցող գյուղ կամ ավան. Հին թաղը հայաբնակ էր, Նոր թաղը՝ ռուսաբնակ և համապատասխանում էր սովետական շրջանի Պատանիճո գյուղին: Նրա բաղկացուցիչ մասն է կազմել Ձ. Տարեկանովի պղնձածուլարանի փոքրիկ ավանը՝ մի քանի տասնյակ բնակիչներով: Դիլիջանը գտնվել է Թիֆլիս-Երևան պետական խճուղու վրա, նրա այն կետում, որտեղից մի այլ ուղի ձգվում է դեպի Ալեքսանդրապոլ: XIX դ. վերջ-XX դ. սկզբին ուներ ծխական դպրոց: **ԳՏԲ, հ. II, էջ 110:**

<sup>209</sup> Նույն դեպքին վերաբերող փաստեր է բերում Ձորավար Անդրանիկի գրագիրը՝ Եղիշե Քաջունին. «...Դրութիւնը այս կերպ էր, երբ 28ին թիւրքական գժն սպիտակ դոշակաօր պատգամաւորութիւն մը մօտեցաւ. օթօծսպիլով հայկական գիծերուն: Պատգամաւորները բերած էին նամակ թիւրքական զորամասի հրամանատար

րութենէն՝ Վեհիպ Փաշայէն՝ ուղղուած Հայկական Կորպուսի հրամանատարին: Այս նամակով թիւրքերը կը բանակցեին Հայկական Ջօրամասի հրամանատարութեան հետ տնտարքասիօնի մասին մինչեւ որ հաշտութեան բանակցութիւնները վերջանային: Մայիսի 30ին, դարձեալ թիւրք բանագնացները երեւեցան հետերմին բերելով նամակ մը ուղղուած Կորպուսի հրամանատարութեան եւ Դիլիջանը պահող Հայկական Ջօրամասի հրամանատարութեան (առանց գիտնալու, թէ այնտեղ Անդրանիկն էր), որով կը հաղորդէին, թէ հայկական կառավարութեան եւ թուրք կառավարութեան միջեւ հաշտութիւն կնքուած է, հետեւաբար, երկու կողմէն ալ դադրած են զինուորական գործողութիւնները: Նամակին կից կար նաեւ հաշտութեան պայմաններու պատճէնը թիւրքերէն եւ ռուսերէն լեզուներով... Տեղեկանալով հաշտութեան այս պայմաններուն՝ Ջօրավար Անդրանիկ անհաշտելի գտաւ: Իր խառնուածքին, իր համոզումներուն, Ազգին եւ Դաշնակիցներուն հակառակ: Ինչպէ՞ս թույլ տար, որ երբ ինք զինուած կեցած է, թշնամին իր քովէն անցնի երթայ Պաքու կամ Պարսկաստան՝ հարուածելու հայ ոյժ մը կամ Դաշնակից ուժ մը»: **Եղիշե Բաջունի, նշվ. աշխ., էջ 35-35:** Բանագնացների՝ մեքենայով այստեղ հայտնվելը միակ փաստն է, որ հակասում է վերապրածի պատմածին: Կարծում ենք՝ վերապրածի տեղեկությունը ավելի ստույգ է, քանի որ գորավար Անդրանիկը չի տեսել բանագնացներին և չի ընդունել նրանց, Հովհաննես Թռչունյանը բանագնացների ժամանելու և «մեկնելու» պահին եղել է պահակագործուն և ավելի ստույգ գիտեր մանրամասները: Պատահական կրակոցի պատճառով Անդրանիկ փաշայի մոտ եկած թուրք փաշաների փախուստը վկայում է այն մասին, որ եկողները կռահում էին, թե ում մոտ են եկել:

<sup>210</sup> Ինտքը նշանավոր գյոււնրեցի ֆայտոնցի Օնիկի մասին է:

<sup>211</sup> Աբբաս-արծաթ դրամ, որ շրջանառության մեջ դրվեց Մեֆյան Շահ Աբբաս Ա-ի օրոք: Մեկ աբբասին հավասար է 200 դինարի : XVII դ. 30-ական թթ. մեկ աբբասին պարունակում էր 4,66 գր. արծաթ, մինչդեռ Շահ Աբբասի օրոք այն կշռում էր 7,7 գր.: **Միրզա Յուսուֆ Ներսեսով, Ճշմարտացի պատմություն, թարգմանությունը Բ.Պ. Կոստիկյանի, Եր., 2000, էջ 150:**

<sup>212</sup> Աղստևի հովտով: Աղստաֆան գետ է Հայկական լեռնաշխարհում, Կուրի ավազանում, նրա աջակողմյան վտակը: Այդպես է կոչվում Աղստև գետի ստորին հոսանքը աղբրեջանական տարածքում: **ՀՏԲ, հ. I, էջ 193:**

<sup>213</sup> Սևան, Ելինովկա, Սառցաշեն-քաղաք ԴՅ-ում, Գեղարքունիքի մարզում (04.12.1995թ.): Նախկին Սևանի վարչական շրջանի կենտրոնը: Սևան է վերանվանվել 3.1.1935: Գտնվում է Երևանից 48-50 հս-Արլ, Երևան-Դիլիջան ավտոմայրուղու վրա, Սևանա լճի հս-արմ ափին, ալիքավորված սարահարթում: Բարձրությունը՝ 1925մ: Կլիման բարձրլեռնային է, ձմեռը ցուրտ, ձյունառատ և արևոտ օրերով հարուստ, ամռանը՝ հաճելի զով, իսկ աշնանը և գարնանը՝ սովորականից ցուրտ: Մշտապես լինում են քամիներ՝ երբեմն հասնելով մեծ արագության: 1873թ. ուներ 944, 1897թ.՝ 1371, 1926թ.՝ 1032 գերազանցապես հայ, ապա նաև ռուս, ուկրաինացի բնակիչ: XIX դ. 40-ական թթ. Սևանում զգալի թիվ էին կազմում Ռուսաստանից գաղթած մոլդկաները, որոնք զբաղվում էին դաշտավարությամբ, անասնապահությամբ և սայլապանությամբ: **ՀՏԲ, հ. IV, էջ 576:** Նախապես մոլդկաններով է բնակեցված եղել նաև Սեմյոնովկա, Սիմոնովկա, Սեմեոնովկա, Սիմոնովկա գյուղը-ԴԳ Գեղարքունիքի մարզում (04.12.1995թ.), նախկին Սևանի շրջանում, Սևանի լեռնանցքի մոտ՝ Երևան-Թբիլիսի ավտոմայրուղու վրա, լեռնային բարձրադիր վայրում: Առանձնատները մեկ-երկու հարկանի են, քարաշեն և հարմարավետ: Կլիման ցուրտ է, ձմեռը՝ երկարատև և ձյունառատ: Խնելու ջուրը տեղից է, սառնորակ ու հորդաբուխ: 1873թ. ուներ 298, 1897թ.՝ 509, 1926թ.՝ 232, 1931թ.՝ 508 գերազանցա-

պես ռուս բնակիչ, որոնք 1950 թթ. տեղափոխվել են Հյուսիսային Կովկաս: Այժմ հայաբնակ է: 1991թ. հորը սեփականաշնորհվել է: Ունի 8-ամյա դպրոց (հիմնադրված 1903թ): **ՀՏԲ, հ. IV, էջ 567:**

<sup>214</sup> Չիրուխլի, Չիրուխլու-գյուղ Արլ Հայաստանի Ելիզավետպոլի մահանգի Ջանգեզուրի գավառում: **ՀՏԲ, հ. IV, էջ 241:**

<sup>215</sup> Սևան-լիճ: **ՀՏԲ, հ. IV, էջ 577-578:** Այժմյան Սևան քաղաք. հուշապատումի մեջ՝ Ելիզովկա-Ելիմովկա:

<sup>216</sup> Ըստ Եղիշե Քաջունու՝ բժիշկ Խ. Պօնափարթեան: **Նշվ. աշխ. էջ 65:**

<sup>217</sup> Քյավառ, Քավառ-ավան Երևանի խանության Գյոզչայի մահալում: Խորհրդային շրջանում Կամո՝ հանրապետական ենթակայության քաղաք ՀԽՍՀ Կամոյի շրջանում, որը 04.12.1995 թ. վերանվանվել է Գավառ: Այժմ հանրապետական նշանակության քաղաք է: Գտնվում է Սևանա լճի հր ափից 7-8 կմ հեռավորությամբ, Գավառագետի ընդարձակ հովտում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1965 մ: Հեռավորությունը Երևանից 98 կմ է, «Սևան» երկաթուղային կայարանից՝ 36 կմ: Քաղաքի միջով հոսում է Գավառագետը: Արլ Հայաստանը Ռուսաստանին միացնելուց հետո՝ 1829-30 թթ., այստեղ բնակություն հաստատեցին Բայազետ քաղաքից գաղթած 240 ընտանիք, որոնք բնակավայրը կոչեցին Նոր Բայազետ: 1831 ուներ 1346, 1897թ.՝ 8486, 1926թ.՝ 8447 բնակիչ, մեծ մասամբ՝ հայեր: Նոր Բայազետը սայլային ճանապարհով կապված էր Երևան-Աղստաֆա խճուղու հետ: 1850թ. ցարական տեղական մարմինները կենտրոնանում են քաղաքում, այն վերածվում է Նոր Բայազետ գավառի կենտրոնի: Բնակչությունը զբաղվում էր դաշտավարությամբ և կիսաքրչվորական անասնապահությամբ, առևտրով, արհեստներով: Բայազետցիների ձեռքում էր կենտրոնացած իշխան ձկան որսի մենաշնորհը: XIX դ. վերջին քաղաքում գործում էին երկու ծխական Ս.Աստվածածնին կից երկսեռ դպրոցներ և մեկ քաղաքային երկդասյան ուսումնարան, որը Սևանի ավագանի առաջին դպրոցն էր: 1890թ. բացվում է առաջին տպարանը: Տները միահարկ էին, խարխուլ և քառաթյան դասավորություն ունեին: Իրավիճակը փոխվեց Հայաստանի խորհրդայնացումից հետո: **ՀՏԲ, հ. II, էջ 920-922:**

<sup>218</sup> Եղիշե քաջունին գրում է. «Յունիս 8: Բանակը Աղջիպիոնէ շարժելով կուգայ Նոր Բայազետ գաւառին կեդրոնը՝ լիճեն քիչ դեպի մերս: Խճողումէ խուսափելու համար Չօրամասը կըցրուի շրջանին մօտակայ գիւղերը, ուր անոնք կ'ընդունուին հայկական հիւրասիրութեամբ»: **Նշվ աշխ., էջ 38:**

<sup>219</sup> Սուլա-ապուր, այստեղ՝ ձկնապուր:

<sup>220</sup> Դարալագյազ-գավառ, շրջան Արլ Հայաստանում (և ՀՍՍՀ-ում): Գոյություն է ունեցել XVIII դ. մինչև 1929թ.: Ուներ 2425,4 քառ. կմ տարածք և 30000 բնակիչ (1929թ.). զբաղվում էին անասնապահությամբ, երկրագործությամբ, մեղվաբուծությամբ: Բաժանված էր երկու գավառակի՝ Քեշիշքենդի և Փաշալուի: Համապատասխանում է պատմական Սյունիք աշխարհի Վայոց ձոր կամ Եղեգիս գավառին: 1929թ. հետո նրա տարածքից կազմվեց Ազիզբեկովի շրջանը, 1956թ. մասնատվեց երկու շրջանի՝ Ազիզբեկովի և Եղեգնաձորի: **ՀՏԲ, հ. II, էջ 50:**

<sup>221</sup> Դարալագյազի դուռ-լեռնանցք Սյունյաց լեռնահամակարգում, Դարալագյազի (Վայքի) լեռնաշղթայի կենտրոնական հատվածում, Ջահրի գետի միջին հոսանքում: Նշանակված է Կովկասի 5-վերստանոց քարտեզում: **ՀՏԲ, հ. II, էջ 51:**

<sup>222</sup> Խոսքը թուրքական բանակում կռվող հայ զինվորների մասին է, որոնք հանձնվել կան գերի էին ընկել ռուսական բանակին, գերեվարվել և աքսորվել Սիբիրի երկուտակ: Տես *Ռ. Սիմոնյան, Անդրանիկ, Սիբիրյան վաշտի ողիսականը, Եր., 2006: 4. Ալեքսանյան, Սիիրան խաչատրյանի հուշերը...», էջ 532:* Ետ դառնալով աքսորից այս զինվորները Արևմտյան Հայաստանում գտել էին իրենց ավերված ու դատարկ

չեները: Մեծ եղեռնի փաստը ցնցել էր նրանց հոգեկան աշխարհը՝ մղելով անասելի քաջագործությունների:

<sup>223</sup> Ուշագրավ է, որ Է.Պոստիեի և Պ.Դեզեյտերի «Ինտերնացիոնալ»-ը՝ վերապրածի հիշատակած «Չեղափոխություն» երգը, երգել են Անդրանիկ գնդում, որտեղ մեծ մասամբ դաշնակցականներ էին ծառայում:

<sup>224</sup> Բնագրում՝ կցնցե:

<sup>225</sup> Քյաշիշքյանը, Քեշիշքյանը-գյուղ Երևանի նահանգի Շարուր-Ղարալագյազի գավառում: Այժմ՝ Եղեգնաձոր՝ քաղաք ՀՀ Վայոց ձորի մարզում, նախկին Եղեգնաձորի շրջանում: Համանուն վանքը գտնվում է Մեղրի քաղաքից 15 կմ հս՝ բարձր լեռան լանջին: **ՉՏԲ, հ. V, էջ 349:** Եղեգնաձորը տարածվում է Արփա գետի աջ կողմում՝ Երևանից 115 կմ հր-արլ՝ Երևան-Սիսիան ավտոմայրուղու վրա: Եղեգնաձորի տեղը հնում կոչվել է Տանձաթաղ: 1831թ. ուներ 332, 1897թ.՝ 1307, 1926թ.՝ 1583 բնակիչ, որոնց նախնիների մի մասը եկել է Խոյից և Սալմաստից՝ 1829-30 թթ.: Ձբաղվում էին խաղողագործությամբ, պտղաբուծությամբ, անասնաբուծությամբ: **ՉՏԲ, հ. II, էջ 184-185:**

<sup>226</sup> Բաքու-Ադրբեջանի մայրաքաղաքն է (պարսկերեն՝ բաղ կուբե բառից՝ քանահարված): Տեղադրված է Ապշերոնյան թերակղզում: Առաջին անգամ հիշատակվել է Վդ. աղբյուրներում: 1723թ. գրավել է Պետրոս Մեծը, վերջնականապես միացել է Ռուսաստանին 1806թ.: 1897-1907 թթ. կառուցվել է Բաքու-Բաթում նավթամուղը: XIX դ. վերջերից դարձել է Անդրկովկասի բանվոր դասակարգի հեղափոխական շարժումների կենտրոնը: XX դ. սկզբին ուներ 60000 բանվոր: 1898-99 թթ. առաջանում են սոցիալ-դեմոկրատական առաջին խմբակները: 1901թ. առաջանում է իսկրայական խումբը, ապա ՌՄԴԿ Բաքվի կոմիտեն: 1904թ. Բաքվի կոմիտեն կից ստեղծվում է սոցիալ-դեմոկրատական «Հունմեթ» («Եռանդ») խումբը: Բանվորները մասնակցում են 1905-07 թթ. հեղափոխությանը: 1917թ. հոկտեմբերի 31-ին (նոյեմբերի 13) Բաքվում հռչակվում է սովետական իշխանություն, կազմվում է Բաքվի ժողովրդական կոմիսարների խորհուրդը՝ Ս. Շահումյանի ղեկավարությամբ: 1918թ. ապրիլի 25-ին ստեղծվում է Բաքվի ժողովրդական խորհուրդը: 1918թ. հուլիսի 31-ին հակահեղափոխությունը Բաքվում ժամանակավորապես տապալում է սովետական իշխանությունը: 1918թ. սեպտեմբերի 20-ին Բաքվի 26 կոմիսարները գնդակահարվեցին: 1920թ. ապրիլի 28-ին բանվորները 11-րդ կարմիր բանակի օգնությամբ տապալում են մուսավաթական բուրժուա-նացիոնալիստական կառավարությունը: **ՉՄԳ, հ. 2, էջ 343, 346, 347-348:**

<sup>227</sup> Եղիշե Քաջունին գրում է «Յունիս 20: Կանուխ ճամբայ կ'ելլենք: Ամբողջ ճանապարհին, մինչեւ ճուլֆա, խոտ, կանաչ չկայ, հետեւաբար հանձնարարուած է որ ամեն մկ ծիաւոր իր ծիուն հանար կեր վերցնէ: Ձօրամասը կշարժի տաքուն, փոշիի մեջն ու առանց ջուրի»: **Նշվ. աշխ., էջ 49:**

<sup>228</sup> Նախիջևան, Նախճավանի դաշտ-հնում այդպես էր անվանվում Բոյուքբուզ դաշտը Նախիջևանի ԽՍՄ-ում: **ՉՏԲ, հ. III, էջ 956:**

<sup>229</sup> Նախիջևան, Նախճավան-քաղաք Նախիջևանի ԻՍՄ-ում, նրա մայրաքաղաքը (1924թ.): Հանրապետական քաղաք՝ 1937թ. սեպտեմբերի 18-ից: Գտնվում է Նախիջևան գետի ստորին հոսանքի աջափնյակում՝ Ղարաչուղ լեռան զառիվայրին: Երկաթուղային կայարան Երևան-Բաքու երկաթգծի վրա, ճանապարհային կարևոր հանգույց: 1828-29 թթ. ուներ 3641 ադրբեջանցի և 1819 հայ բնակիչ 1873թ.՝ 6877 բնակիչ, որից 2500-ը՝ հայ, 1906թ.՝ 9739 բնակիչ, 2800-ը՝ հայ: Քաղաքի տասը թաղերից երեքն էին հայաբնակ, դրանք էին Ս.Գևորգ եկեղեցու (քաղաքի կենտրոնում), Ամբար, Երեք խորանի թաղերը: Քաղաքն ուներ ծածկած մեծ շուկա, 15 իջևանատուն, 20 ցրաղաց, 3-4 բաղնիք, 450 խանութ և կրպակ: Հայերը հիմնականում

առևտրականներ և արհեստավորներ էին՝ խեցեգործներ, կաշեգործներ, թիթեղագործներ, շալագործներ, ներկարարներ: XIX դ. II կեսին գործում էին տղաների երկու, աղջիկների մեկ ծխական և աղրբեջանական մեկ դպրոց: 1870թ. կառուցվում են պետական ու հասարակական շենքեր, փոստ-հեռագրատուն, կառավարչատուն, մաքսատուն, կայարանի շենքը, ռուսական եկեղեցին, ոստիկանատունը: **ԴՏԲ, հ. III, էջ 951-953:**

<sup>230</sup> Հայի Ջուլֆա, Եսկի Ջուլֆա, Լահո, Չուլիա, Ջուլֆ-քաղաք Նախիջևանի ԻՂ-ում, Նախիջևան քաղաքից 30-32 կմ հր-արլ, Արաքսի ձախ ափին, հարթավայրում: Ջուլֆայի վարչական շրջանի կենտրոնն էր, երկաթուղային կայարան և ավտոճանապարհների հանգույց: 1929-32 թթ. ուներ հայ և թուրք բնակչություն: Հայերից շուրջ 300 հոգի նույն թթ. Պարսկահայաստանի գավառների գյուղերից գաղթածներ էին: Այժմ գերազանցապես աղրբեջանաբնակ է: Հնություններից պահպանվել են ավերակ հայկական եկեղեցին և մուսուլմանական դամբարանը (XIII դ.): **ԴՏԲ, հ. IV, էջ 424-425:** Եղիշե Քաջունին գրում է. «*Ի՛նչ օրեր են տեսած ճուլֆան, Արագի կամուրջը: Քաղաքը հայերու ձեռքն է, որոնք ունին փոքրաթիւ գօրամաս մը: Կան նաեւ մի քանի ռուս պաշտօնեաներ երկաթուղիի ծառայողներ, որոնք ընդհարումներու սկիզբէն ճամբաները զոցուած լինելով՝ մնացել են... Արագի կամուրջը սահման է. ան կը բաժնէ Կովկասը Պարսկաստանէն: Կամուրջին երկու կողմը կան երկու ճուլֆաները՝ ռուսականը եւ պարսկականը. ռուսականը հայոց ձեռքն է, իսկ պարսկականը՝ թիւրքերու, որոնք այնտեղ դրկած են պահակախումբ կամուրջը պահելու համար: Այնպէս որ ճուլֆայի կամուրջին մեկ կողմը հայերը պահակ ունին, իսկ միւս կողմը թիւրքերը՝ կանոնաւոր զորք»: **Նշվ. աշխ. էջ 49:***

<sup>231</sup> Արագ, Արաքս, մայր Արաքս: **Տես՝ ԴՏԲ, հ. I, էջ 400:**

<sup>232</sup> Խոյ-գավառ Պարսկահայաստանում, Ուրմիա լճից հս-արմ, Կոտուր գետի հովտում: Կենտրոնն էր Խոյ քաղաքը: Պատմական Պարսկահայաստանի Հեր գավառն է: Հվ սահմանակից էր Սալմաստին, հս՝ Մակուի խանությանը, արլ՝ Ղարաղաղին, արմ՝ Վանի նահանգին: Ոչ շատ բարձր լեռկ լեռներով շրջապատված խոր գետահովիտ է՝ ջրառատ և կանաչապատ: Մշակում էին ցորեն, գարի, բամբակ, պտուղներ: Մինչև 1826-28 թթ. ռուս-պարսկական պատերազմը բնակչությունը հիմնականում հայ էր: 1828թ. հաշտությունից հետո հայերը գաղթեցին Արարատյան դաշտ: XIX դ. I-ին կեսին ուներ 60 գյուղ, 1898թ.՝ ութ հայաբնակ գյուղ՝ 308 տուն՝ 1836 բնակիչ, ութ եկեղեցի և մեկ ուսումնարան: Նշանավոր է գավառի Դաղբաղին այգեստանը: 1918թ. Պարսկաստան ներխուժած թուրքերը բնաջնջեցին այստեղ մնացած հայությանը: **ԴՏԲ, հ. II, էջ 768:**

<sup>233</sup> Եղիշե Քաջունին գրում է. «*Ճուլֆայի մէջ հաց գտնելու ալ հնար չկայ: Ատոր փոխարէն սակայն, երկաթուղիի պահեստներուն մէջ մեծ քանակութեամբ նուշ եւ չամիչ կայ: Չօրավար Անդրանիկ անմիջապէս բանալ տալով պահեստը, մաս մը չամիչ ու նուշ վերցուց ու բաժանեց Չօրամասին»: **Նշվ. աշխ., էջ 51:***

<sup>234</sup> Համանուն քաղաքը տարածվում էր 5-6 կմ երկարությամբ՝ արմ, արլ շրջապատված է այգիներով: XIX դ. վերջին ուներ լայն փողոցներ, աղյուսաշեն բարեկարգ տներ, մոտ 25000 բնակիչ: Քաղաքի արլ ծայրում բերդ էր, որը XX դ. սկզբին թրջաբնակ էր: Քաղաքը բաղկացած էր երկու մասից՝ Ղալա և հր-արմ Մահլա կոչված արվարձանը, որն ուներ երեք թաղ՝ Վերին կամ Աղայի թաղ, Փոս թաղ և Ցածր թաղ կամ Քոչաբաղ: Սրանցում 1893թ. ապրում էր 100 տուն հայ: 1905թ. գործում էր գերմանացիների բացած հայկական որբանոցը: 1915թ. ուներ 2000 հայ բնակիչ, որոնք զբաղվում էին արհեստներով և այգեգործությամբ: **ԴՏԲ, հ. II, էջ 768:**

<sup>235</sup> Եղիշե Քաջունին գրում է. «Յունիս 22: Բայց ջուրը հեռուն է, ծարաւը սարսափելի է: Վերջապես կը հանդիպինք կարմրագոյն ջուրի մը Տղմուտի մէկ թելը: Ծարաւը այնքան ուժգին է որ բոլորն ալ կը խմեն այդ ջուրէն՝ առանց ուշադրութիւն դարձնելու գոյնին ու համին»: **Նշվ. աշխ., էջ 52:**

<sup>236</sup> Խոսքը հավանաբար Սէյիտավար հայկական գյուղի մասին է: **Եղիշե Քաջունի, նշվ. աշխ., էջ 53-54: Տե՛ս Կ.Ալեքսանյան, Միհրան Խաչատրյանի հուշերը... , էջ 545:** Ուսումնասիրելով Եղիշե Քաջունու աշխատութիւնը, որն առաջին անգամ հրատարակվել է Բոստոնում 1921թ. և այն համեմատելով Հովհաննես Թռչունյան-Հովհաննիսյանի գրածի և Միհրան Խաչատրյանի հուշապատման հետ (Արխիվում հուշապատման գործը կազմվել է 1920թթ.) զուգահեռ դիտարկում ենք իրական դեպքերի պատմական ընթացքը:

<sup>237</sup> Եղիշե Քաջունին գրում է. «Դժբախտաբար թիրքերը, Սնկոն լՊարսկական Թիւրքիստանի ավագակապետներէն, այդ գիւղը խաբէութեամբ կոտորեց են: Արտերու մէջէն մէջտեղ ելան միայն տասներկու վերապրող հայեր, որոնք յայտնեցին Սէյիտավարի կոտորածը եւ այն, որ Սալմաստի շրջանի՝ թիրքերու հետ ընդհարման մէջ գտնուող հայերը, Վանի հայ գաղթականութիւնն ու ասորի կռուողները, չկոնսուլով դիմադրել թիրքերու մեծ ուժերուն, չորս օր առաջ նահանջել են դէպի Ուրմիա... Ցերեկուան պապակին փոխարէն, որու պատճառաւ զինուորները ստիպուած էին խմել մինչեւ իսկ կենդանիներու ոտքի հողին վրայ շինուած փոսերուն մէջ լծացած ջուրերը, հիմա կը գտնուէին վճիտ, պաղ ջուրի եզերքին»: **Նշվ. աշխ., էջ 53-54:**

<sup>238</sup> Տե՛ս Կ.Ալեքսանյան, Միհրան Խաչատրյանի հուշերը... էջ 547: Սմբատ Բորոյանը մեծ գործունեություն է ծավալել նաև Ալեքսանդրապոլի գավառում գաղթականության տեղաբաշխման խնդիրները լուծելով, եղել է ՀՀ խնամաստարության և վերաշինության Կարս-Ալեքսանդրապոլ շրջանի հատուկ ներկայացուցիչ: ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 830, թ. 1-12 պահպանվել են Սմբատ Բորոյանի և Օնիկ Մխիթարյանի գեկուցագրերը նախարարին իրենց գործունեության վերաբերյալ: **Տե՛ս Կ.Ալեքսանյան, Արևմտահայ գաղթականությունը Ալեքսանդրապոլի գավառում 1914-1922 թթ., Փաստաթղթերի ժողովածու, եր., Հայաստանի ազգային արխիվ, 2012, էջ 325-334:**

<sup>239</sup> Խոյ քաղաքից մոտ 3 կմ հեռավորությամբ, գետակին բլրի վրա, կա մատուռ, որն ըստ հայերի, Վարդան Մամիկոնյանի գերեզմանի տեղն է: **ՀՏԲ, հ. II, էջ 768:** Եղիշե Քաջունին գրում է. «Յունիս 23, Կիրակի: Այսօր վճռական օր պիտի ըլլայ: Շատ կանուխ, ամբողջ Ջօրանասը կեդրոնացած է Սէյիտավարի մէջ: Դիրքերը որոշուած են. Ա. պաթալիոնը՝ 3 վաշտ եւ 400 ծիաւոր պիտի բռնէ ձախ թելը՝ խոյի արեւմուտքը եւ դէպի Դիզաւտիզ, Սալմաստ տանող ճամբան. Բ. պաթալիոնը՝ աջ թելը՝ խոյի արեւմտեան մասը եւ բարձրութիւնը, իսկ Գ. պաթալիոնը՝ աջ թելը՝ խոյի արեւմտեան մասը եւ բարձրութիւնը: Իսկ Դ. պաթալիոնը կը մնայ իբր պահեստ: Բայց կէսօրէ քիչ վերջ թշնամին ստացաւ խոշոր օգնական ուժեր, Շեյթան-Ավայէն եւ Դիզաւտիզէն, հետեւակ, ծիաւոր թէ արթիւերիա: Կռուէն կարեւոր վայրը մեր ձախ թելն էր, ուր կը գտնուէր Ա. պաթալիոնը Սմբատի ղեկավարութեամբ: Փիլոսի եւ Շաւարշի ծիաւորները պիտի բռնէին Վարդանանց բլուրին քովի կամուրջը, որ կ'իջիւտ Սալմաստի ճամբուն, ուրկէ պիտի գար թշնամիին օգնական ուժը: Չիաւորները, փոխանակ այդ կամուրջին դիրքը պահելու, կը բարձրանան Վարդանանց բլուրը, այնպէս, որ թշնամին անարգել կը մոտենայ այդ դիրքերուն: Յանկարծ Դիզաւտիզ տանող ճամբուն վրայ փոշին սկսաւ բարձրանալ, թշնամի արթիւերիան սկսաւ արելի ուժեղանալ: Յայտնի եղաւ, որ թշնամին կ'ուզէ ձախ կողմէն ծիաւորներով անցնիլ Ջօրանասին կռնակը: Ամսիցայպէս ծիաւոր եւ հետեւակ ուժեր դրկուեցան անոնց դէմ: Եւ տեղի ունեցաւ գարնանալի բան՝ ծիաւորները խառնուեցան իրար: Թիւրք ծիաւորները արաբ տիգաւորներ էին, որոնց միացած էին տեղացի

թիրքեր... Երբ գաղթականութիւնը տեսաւ թիրքերու պաշարման փորձը, մատնուեցաւ խուճապի. ամէն մէկը սկսաւ անկարգ կերպով փախչիլ: Գաղթականութեան այս շարժումը անդրադարձաւ նաեւ զինուորի վրայ, եւ յանկարծ ձիաւորներուն մէկ մասը սկսաւ անկարգ կերպով ետ քաշուիլ: Թշնամին, քաջալերուած, սկսաւ աւելի ուժեղ կերպով բնդանօթի, միթրայեօզի եւ հրագանի կրակ բանալ: Փանիքան հետզհետէ մեծցաւ եւ ամբողջ զորքը սկսաւ ետ քաշուիլ: Թէեւ թիրքերը փորձեցին շոտի վրայ իշխող դիրքերը բռնել, բայց չյաջողեցան, եւ իրիկուան մութին հետ մէկտեղ Ջօրամասին վերջի մնացորդները քաշուեցան յոգնած, լքուած... Յոգնած, ուժասպառ զինուորը դարձեալ բռնեց ճուլֆայի ճանապարհը, եւ զիշերն ի բուն քալելով, քաղցած ու յոգնած, հասավ նորեւն ճուլֆա»: **Նշվ. աշխ., էջ 55-56: Տես Կ.Ալեքսանյան, Միհրան Խաչատրյանի հուշերը..., էջ 545-547:**

<sup>240</sup> Սկյուտար՝ Ստամբուլի Ոսկյուղար մասի նախկին անվանումը: **ՉՄԳ, հ. X, էջ 443:**  
<sup>241</sup> Ուրմիա, Որմի, Ռեզայե, Ռումի, Ուռումի-քաղաք, գյուղաքաղաք, բերդաքաղաք, ավան Պարսկաստանում, Ուրմիա լճի արմ կողմում, լճափից 22 կմ արմ, Շահեր գետի ձախ ափին: Շրջապատված է այգիներով, բրնձի ընդարձակ ցանքերով: Ունեցած բնակչության համեմատությամբ բավականին լայն տարածքի վրա փռված քաղաք է: Կոչվել է լճի անունով: Նոր ժամանակներում Ուրմիայի խանության և գավառի կենտրոնն էր: Ուներ Նանա-Մայրան (Մայր Մայրամ) հայկական թաղամաս: XIX դ. սկզբին ուներ 1500 տուն, մեծ մասը ասորիներ, պարսիկներ, թուրքեր, փոքրաթիվ մասը՝ հայեր և հրեաներ: XIX դ. վերջին ուներ 20000 բնակիչ: 1906թ. ուներ 60 տուն, իսկ Առաջին աշխարհամարտի նախօրեին 70 տուն հայ բնակիչ: Զբաղվում էին արհեստագործությամբ և առևտրով: Քաղաքն ուներ մի քանի շուկա և քարավանատներ: Դս-արմ Բաշկալեի (Աղբակ) վրայով կապված էր Վանի, դեպի հս ձգվող ճանապարհով՝ Դիլմանի (Սալմաստի) ու խոյի հետ: Արտահանում էր խաղող, տանձ ու բրինձ: XIX դ. վերջերից գործում էին բեթև և սննդի մանր ձեռնարկություններ: Պահպանվել է հողէ կրկնակի պարիսպներով պատած բերդը՝ իր հոյակապ դռներով և ներսի մի քանի կառույցներով: 1889-91 թթ. կառուցված մի հոյակապ եկեղեցու բակում կար հայկական երկհարկանի դպրոց: Գործում էին ասորական վեց եկեղեցի, կրթարաններ, «Արեգակի ճառագայթներ» լրագիրը: Ամերիկյան միսիոներները այստեղ բացել էին դպրոց, որը գործում էր XIX դ. վերջ-XX դ. սկզբին: Շրջակայքում էին գտնվում հայաբնակ Գյուրդաբաղ, Բաբառու, Նախճավան, Իսալու, Ռահվա գյուղերը: Քաղաքը բաղկացած էր երկու մասից: Բուն քաղաքը բերդն էր՝ իր շրջակայքով՝ Ղալա, XX դ. սկզբին թրքաբնակ էր: **ՉՄՔ, հ. V, էջ 214:**

<sup>242</sup> Վան-տեսն **ՉՄՔ, հ. IV, էջ 750-751:**

<sup>243</sup> 1918թ. դեկտեմբերի 2-ին Ջանգեզուր եկած ֆրանսիացի կապիտան Գասֆիլը Անդրանիկի կազմակերպած պարսկական արշավանքը նույնպես որակել էր Վանի նահանգից գաղթած 25000 հայ բնակչության և ասորիների փրկության հիմնական արդյունք: Թուրքերը Անդրանիկի դեմ պաշտպանություն կազմակերպելու համար Սալմաստից խոյ են տեղափոխում բավական մեծ ուժեր, հետևաբար թուլացնում են վանեցիների հետապնդումը: **Տես, Եղիշե Քաջունի, Նշվ. աշխ., էջ 131:**

<sup>244</sup> Դագարապետը:

<sup>245</sup> Ջուլֆա իրանական-քաղաք Իրանում, Արաքս գետի աջ ափին, Նախիջևանի ԻԴ Ջուլֆա քաղաքի դեմդիմաց, հարթավայրում: Երկաթուղային և խճուղային կարևորագույն հանգույց է: Թավրիզի և Արաքսի վրայի կամրջով կապված է Ջուլֆա-Երևան ճանապարհների հետ: Բնակիչները պարսիկներ և ադրբեջանցիներ են, որոնք աշխատում են քաղաքի առևտրական և արտադրական ձեռնարկություններում: **ՉՄՔ, հ. IV, էջ 424-425:**

<sup>246</sup> Խոյի բերդ-բերդ Պարսկաստանում, Խոյի գավառում, Խոյ քաղաքում: Ավերակները գտնվում էին քաղաքի արլ ծայրամասում, որի պարիսպների ներսում ընկած էր քաղաքի Բերդ (Ղալա) անվանվող թաղը կամ բերդաքաղաքը: Կառուցվել է XVII դ.: Ուներ հողե կրկնակի հաստ և բարձր պարիսպներ, որոնք դրսի և ներսի կողմից շրջափակված էին խրամատներով: XIX դ. սկզբին Աբբաս Միրզան ֆրանսիացի ռազմական ինժեներների աջակցությամբ բերդը ամրացրել է նոր աշտարակներով և պարիսպներով: Եղել է Խոյի խանության պաշտպանական և վարչական կենտրոնը: **ՉՏԲ, հ. II, էջ 769:**

<sup>247</sup> Այս դեպքերի ականատես Սիրիան խաչատրյանը գրում է, որ Ապրակունիսում եղած ժամանակ զորավարը չի կարողանում զսպել զայրույթը և նահանջի պատճառը հանդիսացող Բոնապարտյանին [Պոնափարթեան] ստակալի ծեծի է ենթարկում, իսկ Սմբատին, որին շատ սիրում և հարգում էր, երեք շառաչուն ապստակ հասցնում: **Կ.Ալեքսանյան, Սիրիան խաչատրյանի հուշերը... էջ 551:**

<sup>248</sup> Աբուլիս Վերին, Ակուլիս, Ազուլիս, Ազուլիք-գյուղաքաղաք (ավան, գյուղ) Մեծ Հայքի Սյունիք աշխարհի Գողթն գավառում: Նույնանուն գյուղ Նախիջևանի Օրդուբադի շրջանում: Գտնվում է Օրդուբադ քաղաքից հս-արմ, Ազուլիս գետի միջին հոսանքում, այգեվտ վայրում: Եղել է գավառի ամենանշանավոր ավանը: Նշանակում է «այգիներով լի», «ակն ի լույս»: Տները երկհարկ և եռահարկ էին: Ջուղայի ավերումից հետո դարձավ բարեկարգ քաղաք: XVII դ. վերջին բնակչության թիվը հասել է ավելի քան 10000 մարդու: 1829թ. ուներ 122 տուն հայ, 50 տուն ադրբեջանցի, 1873թ.՝ 170 տուն հայ, 54 տուն ադրբեջանցի, 1904թ.՝ 256 տուն՝ 2205 հայ և 68 տուն՝ 731 ադրբեջանցի բնակիչ: XIX դ. վերջերին գյուղն ուներ 100 կրպակ և խանութ: Հայտնի էին կտավագործները: Ուներ 11 եկեղեցի, 10 թաղ, 8-ը՝ հայաբնակ: Ուներ խմելու ջրի խիտ բաժանարար ցանց, սալահատակված փողոցներ, դպրոց (նաև իգական գիմնազիա), դեղատուն, 17 աղբյուր, 2 բաղնիք, գրադարան-ընթերցարան: 1918թ. ավերվել է թուրքական զորքերի կողմից: Որոշ ժամանակ անց այստեղ հաստատվում են ադրբեջանցիներ: Օրդուբադ քաղաքից 4 կմ արմ, Ազուլիս գետի ափին, Վերին Ազուլիսից 2 կմ հվ, պատմական Դաշտ գյուղի տեղում է գտնվում Երեքին Ազուլիս գյուղը: 1820թ. Վերին ազուլեցիք այն զնել էին Աբբաս Միրզայից: 1829-32 թթ. ուներ 459, 1897թ.՝ 990, 1906թ.՝ 1254 բնակիչ: Ավերվել է 1919թ.: Ուներ երեք եկեղեցի, դպրոց, խանութներ: Բնակիչները զբաղվում էին երկրագործությամբ, այգեգործությամբ, առևտրով, արհեստներով: Այժմ ադրբեջանաբնակ: **ՉՏԲ, հ. I, էջ 27:**

<sup>249</sup> Յայջի, Յայժի-գյուղ Երևանի նահանգի Նախիջևանի գավառում Ջուլֆայի ոստիկանական շրջանում: Այժմ՝ Նախիջևանի ԻՍՍՀ Ջուլֆայի շրջանում: Ջուլֆա քաղաքից 7 կմ արլ, Արաքսի ձախ ափին, հարթավայրում: Ունի առանձնատներ և արգավանդ հողեր: 1829-32 թթ. ուներ 358, 1974թ.՝ 2862 ադրբեջանցի բնակիչ: **ՉՏԲ, հ. III, էջ 922:**

<sup>250</sup> Չանգեզուր-գավառ Սյունիքում, հնում համապատասխանել է Սյունիքի Հաբանդ գավառին: 1868թ. մինչև սովետական կարգերի հաստատումը մտնում էր Կովկասի վոյսարքայության Ելիզավետպոլի նահանգի մեջ և ընդգրկում էր այժմյան ՀՀ Մեղրու, Ղափանի, Գորիսի, Սիսիանի շրջանները, Դարալագյազի արլ մասերը, Ադրբեջանի Չանգեզանի, Ղուրաթլուի, Լաչինի շրջանների որոշ մասեր: Չանգեզուրի գավառը մասնատված էր Մեղրի, Ղափան, Գորիս, Սիսիան գավառակների: Կենտրոնը Գորիս քաղաքն էր: Բնակչության թիվը 1900թ. հասնում էր 219313, իսկ 1912թ.՝ 323977 մարդու: Նման վարչական բաժանումը մնաց մինչև 1930թ.: **ՉՏԲ, հ. II, էջ 265:**

<sup>251</sup> Բնագրում՝ ստանցին:

<sup>252</sup> Фидурин Мамед оглы бей Шушинский (1925, Шуша-1987)-музыковед и “знарок” историей Шуши и всего Карабаха. В студенческие годы обожествлял мусаватиста Наримана Нариманова. Из-за националистических пробуждений был удален из Азербайджанского Государственного университета. Первый секретарь Коммунистической партии Азербайджана М.Д. Багиров по этому поводу заявил, что студент А курса исторического факультета АГУ Гасанов-Шушинский заразился наримановщиной. Гасанов-Шушинский издал энциклопедическую книгу о музыкантах Азербайджана. В 1968 г. в Баку издал книгу “Шуша” на русском языке, после чего на публикацию его научных изданий на некоторое время был наложен запрет. Подписывался псевдонимаму Гасанов, Шушинский, Шумалы. В книге “Шуша” он якобы описывает “достоверную” историю, имея цель исказить погромы в Шуши, организованные мусаватистами в марте 1920 г., во время которых погибло 35000 армян. 1980-ых гг. пользовался покровительством Г. Алиева. Мечтал поехать в Турцию.

**Տե՛ս [www.trend.az](http://www.trend.az)**

<sup>253</sup> Հավանաբար Ձաբուլիի ծոր:

<sup>254</sup> Աղուտի, Աղուդի, Աղուդ-գյուղ Սիսիանի շրջանում, Սիսիան քաղաքից 5 կմ հվ-արլ, Որոտան գետի բարձրադիր ձախ ափին, գեղատեսիլ լեռնալանջի վրա: 1831 թ. ուներ 60, 1873 թ.՝ 450, 1914թ.՝ 1070 բնակիչ, մեծ մասամբ՝ աղրբեջանցիներ: **ԴՏԲ, հ. I, էջ 200.**

<sup>255</sup> Վաղուդի, Վաղատին, Վագուդի-գյուղ ՀՀ Սյունիքի մարզում, Սիսիան քաղաքից 9-10 կմ արլ, Որոտան գետի ձախափնյա մասում, հս-արլ գյուղը եզերող գեղատեսիլ զոգավորությունում: Թաղված է այգիների և բանջարանոցների մեջ: Հնուն Շղուկ գավառի մեջ էր մտնում, Տաթևի վանքին տալիս էր 12 միավոր հարկ: Գյուղի մոտ էր գտնվում Ծործորի հորդաբուխ աղբյուրը: 1831թ. ուներ 44, 1897թ.՝ 1286, 1926թ.՝ 527, 1939թ.՝ 783 բնակիչ: 1988-99 թթ. գյուղի աղրբեջանցիները արտագաղթել են Աղրբեջան: Փոխարենը Աղրբեջանից գաղթած 42 տուն (150 հայ) հաստատվել է այստեղ: 1992թ.ուներ 224 տուն (637 անձ): Ուներ երեք եկեղեցի՝ Ս.Ստեփանոս, Ս. Կարապետ, Ս.Լուսավորիչ, որոնցից մեկը բուժում է օձի խայթոցը: Երեքը միասին կոչվում են Վարդանի վանք: **ԴՏԲ, հ. IV, էջ 740-741:**

<sup>256</sup> Տիգրան Պողոսի Հուրմուզյան-Սիմոնյանը իր թոռանը՝ Սամվել Սիմոնյանին, պատմել է, որ ունեցել է հինգ եղբայր, բացի իրենից և կրտսեր եղբորից՝ Հարությունից, մյուս եղբայրները գերեզմաններ չունեն և գոհվել են մարտի դաշտում: Տիգրանը ծնվել էր Մուշում, նրա հայրը բիբլիսեցի էր: Տիգրանը ազգանունը փոխել էր այն պատճառով, որ ֆիդայական շարժման մասնակից լինելով՝ գտնվել էր Օսմանյան իշխանության ուշադրության կիզակետում և ոստիկանության որոնման մեջ (1917-1918թթ.): Տաճկահայաստանում Տիգրանը զինվորագրվել էր Անդրանիկի կամավորական ջոկատին և նրա հետ անցել ողջ ճանապարհը մինչև Բաթում: Աղուտի և Վաղուտի դեպքերի մանրամասների մասին Տիգրանը պատմել է հետևյալը. «Աղուտի և Վաղուտի դեպքերից առաջ Անդրանիկ փաշան կազմակերպել է սուտ նահանջ: Մինչ այդ նա կանգնեցրեց գործը և ասաց. «Հիմա անցնելու ենք թուրքական Աղուտի և Վաղուտի գյուղերի միջով: Ձեզ հայիդյելու են, թրելու են ձեզ վրա: Ձեզանից որը պատասխանեց, թրիս հետ գործ կունենա»: Անցնելիս ոչ ոք չի պատասխանում: Թուրքերին համոզում են, որ նահանջում են: Թուրքական հետախուզությունը թուրքական գործի հրամանատարությանը հայտնում է Անդրանիկի գործի նահանջի մասին: Թուրքական գործը ընդհարվում է Անդրանիկի կամավորական ջոկատի հետ: Թուրքերի քանակական առավելությունը և Անդրանիկի ջոկատի ռազմանթերթի

սակավորությունը Անդրանիկին ստիպում են նորից ետ քաշվել: Սակայն գիշերը նա ետ է նահանջում, հասնում Աղուտի և Վաղուտի գյուղերին, երեք օղակով շրջափակում դրանք և կոտորում՝ ասելով. «Հիմա երեք շրջանով շրջապատում ենք Աղուտը և Վաղուտը, և եթե թեկուզ մի հավ դուրս պրծնի գյուղերից, ապա իմ սրի հետ գործ կունենաք»: Անխնա բուրդին կոտորեցինք: Ես և իմ ընկեր Տիգրանը կանգնած էինք: Մի թուրք պառավ՝ բարուրը ձեռքին, և մի տասներկու տարեկան դեռահաս փորձեցին անցնել մեր մոտով: Ես Տիգրանին խնդրեցի, որ չկրակի և ձեռքս դրեցի հրացանի վրա: Նա ասաց. «Եթե ձեռքդ չքաշես, ես քեզ կգնդակահարեմ»: Նա գնդակահարեց պառավին, ծիով հասավ և մորթեց տղային»:

Տիգրան Պողոսի Յուրնուզյան-Սիմոնյանը էջմիածնում Անդրանիկի Հայկական առանձին հարվածող զորամասի լուծարումից հետո Անդրանիկի հետ Բաթում է հասնում: Այստեղ նա հանդիպում է ընկերոջը, որից իմանում է, որ կինը՝ Արշանուշը, և ավագ որդին՝ Արտաշեսը, գտնվում են Թիֆլիսում՝ զազբականների մեջ: Տիգրանը մոտենում է փաշային և Թիֆլիս գնալու համար թույլտվություն խնդրում: Անդրանիկը պատասխանում է. «Օղուլ, գնա՛, զենք-զինամթերքդ հանձնիր ու գնա՛»: Տիգրանին քսորով են 1933թ.՝ որպես Անդրանիկի զինվոր: Ա.Խանջյանը գնդակահարությունը փոխարինել է տալիս քսորով միայն այն բանից հետո, երբ Տիգրանի երեխաներից Գրիգորը լաց լինելով մի նամակ և լուսանկար է տալիս նրան ասելով. «Աղասի՛ դյաղա, ձեզ մոտ են եկել խնդրելու»: Նամակում մանրամասն գրված էր, որ Տիգրանը պահում էր չորս սեփական և եղբոր երկու երեխաներին: Խանջյանի միջնորդությամբ նրան քսորում են տասը տարով, սակայն նա ետ է վերադառնում՝ հինգ տարի անց՝ 1938թ.: «Նա լավ արհեստավոր էր, ենթադրում են, որ սա էր շուտ ետ գալու պատճառը», - ասում է թոռը՝ Սամվել Սիմոնյանը: Վերադառնալով Հայաստան՝ նրան թույլ չեն տալիս բնակվել Լեռնիականում: 1938-39 թթ. Տիգրանը բնակվում է Դուկասյանում, ապա նոր հաստատվում Լեռնիականում: Տիգրանի քաջակորով եղբայրների սերունդները հաստատվել էին Լիբանանում: Աքսորից հետո, ՊԱԿ-ից Եղվելով, Տիգրանը ընդհատում է մամակագրությունը՝ նրանց խնդրելով այլևս չգրել:

<sup>257</sup> *Տե՛ս Բրայանսկիի հարց, ս. 273-274.*

<sup>258</sup> Ղարաբաղ, Սև այգի-բնապատմական շրջան, երկրամաս, գավառ, վարչատարածքային միավոր պատմական Հայաստանի հս-արլ մասում, Կուր և Արաքս գետերի միջև: Տարածքով համապատասխանում է Արցախ և Ուտիք աշխարհներին միասին: Հետագայում Ղարաբաղ ասելով հասկացվել է Արցախ աշխարհի այն մասը, որը համապատասխանում է այժմյան ԼՂԻՄ-ին, Միլիի դաշտին, Շահումյանի, Աղդամի, Բարդայի վարչական շրջաններին և Կասում-Իսմայիլի շրջանի հվ մասին: 1813թ. Գյուլիստանի դաշնագրով միացել է Ռուսաստանին, 1840թ. իբրև օկրուգ՝ գավառ, մտել է Կասպիական մարզի մեջ: Հայաբնակ էր: **ՉՏԲ, հ. III, էջ 520-521:**

<sup>259</sup> Հավանաբար՝ կրակոց արձակեցին:

<sup>260</sup> Յայցիի ընդհարման մասին եղիչե Քաջունին գրում է. «Քիչ մը առաջանալ է վերջ ճամբուն վրայ կը հանդիպի Եայճի թիրքական գիւղը, որ այս շրջանին մէջ ամենաուժեղ գիւղն է. այստեղ կը գտնուին 40ի մօտ թիւրք ասկերաներ, որոնք կը դեկավարեն գիւղը եւ կը կազմակերպեն զայն: Գիւղը ունի նաեւ երկու լեռնային թնդանօթ... Զօրավար Անդրանիկ կ'առաջարկէ՝ իրեն ճանապարհ տան, քանի որ ինք խաղաղ կերպով պիտի անցնի: Թիւրքերը, սակայն, ծամբայ տալու համար 10000 ռուպլի կը պահանջեն եւ միաժամանակ կը սկսին համազարկը... Մէկ ժամ հազիւ անցած էր, երբ ամբողջ գիւղը գրաւուեցաւ եւ երկու թնդանօթ ու երկու հարիւր ըսնարեաւտ (թնդանօթի ռումբ) գրաւուեցաւ մեր կողմ: Մեր արթիւերիայի կրակով պայթեցաւ գիւղին մէջ գտնուած ահագին ռազմամթերքի պահեստ մը:

Բնակչութիւնը փախած էր, մաս մը զհնուածներ Արագը մտնելով փորձեցին անցնիլ պարսկական մասը: Ոմանք յաջողեցան, իսկ շատեր այլ քշուեցան ջուրէն: ...Չօրամասը գիշերը մնաց էայժի գիւղին բացը, արտերու մէջ»: **Նշվ. աշխ. էջ 57-58:**

<sup>261</sup> Այս դեպքի կապակցութեամբ Սիիրան խաչատրյանը գրում է, որ Յայքի թուրք ենիսարները գեների ուժով ստիպուած էին երկու ռուս թնդամորթածիգներին կրակ բացել հայերի վրա: Նրանք մահական վտանգի առաջ այնպէս էին նշան բռնուած ու կրակուած, որ արկերը շատ հեռու էին ընկնում և չէին վնասուած Անդրամիկի զորքին: **4. Ալեքսանյան, Սիիրան խաչատրյանի հուշերը ..., էջ 532:**

<sup>262</sup> Խ. Պօսնափարթեան:

<sup>263</sup> Չորամասուն խլերայի առաջին դեպքերի մասին Եղիշե Քաջունցի գրում է. «Յունիս 26: Վատ երեւոյթներ սկսած են արդէն. քոլերան, կամ աւելի ճիշդը՝ խոլերինման լաւեր կը գործէ: 2-3 զհնուորներ յանկարծակի կերպով ինկան գետին: Սովածութեան, տաքի, յոգնածութեան եւ պղտոր ջուրներու արդիւնք է ուղղակի, մանաւանդ որ զհնուորը մինչեւ հիմա չամիչ-նուշ կերած է եւ խմած է միայն պղտոր ջուր... Յոգնած, ուժասպառ, քայքայուած զհնուորը սկսաւ ուտել խակ պտուղ: Դաց չկայ: Եւ ահա քոլերան սկսաւ թափ ստանալ: Բժշկական, առողջապահական միջոցները անբաւարար, անզօր են, կան միայն մեկ բժիշկ եւ երկու-երեք ֆելտշէրներ՝ առանց դեղի»: **Նշվ. աշխ. էջ 58-59:**

<sup>264</sup> Եղիշե Քաջունցի գրում է. «Յունիս 7: Այսօր Նախիջեանէն Յղնա կու գայ տեղւոյն Ազգային Խորհուրդի լիագոր Աշոտ Մելիք-Մուսեանը, որ բերած է անթել հեռագրով երեւանէն՝ Չօրավար Սնբատէն ստացած հեռագիր մը, որ կը հարցնէ Անդրամիկի ուր գտնուելուն մասին...»: **Նշվ. աշխ., էջ 61:**

<sup>265</sup> Եղիշե Քաջունցի գրում է. «Յունիս 9: ...Դեպի Նախիջեան մեկնիլը պէտք է արագացնել որովհետեւ այնտեղ դեկավարներու զհնուորական եւ վարչական անհամաձայնութեան հետեւանքով ցրուած է հայկական պաթալիոնը, որը անցեալ զարման ինքնապաշտպանութեան կռիւներու ընթացքին հրաշալիքներ գործած էր: Այնպիսի պարագայի մը, երբ թրքական վտանգը անմիջական էր, եւ Նախիջեանի հայութիւնը որոշած էր դիմադրել, ամենամեծ կարծատեսութիւնն էր այդ քայլը դեկավարներու կողմէ, մինչդէռ միւս կողմէ կը հրաւիրէին Անդրամիկը՝ Նախիջեանի շրջանի ինքնապաշտպանութեան գործը վերցնելու»: **Նշվ. աշխ. էջ 62:**

<sup>266</sup> «Յունիս 19: ...Նախիջեանէն լուր եկաւ, թե՛ «Անմիջապէս հասիր, ապա թէ ոչ՝ կորած ենք»: Թիւրքերը թնդանօթներով կը ընթացնէին հայկական դիրքերը եւ քաղաք մտնելու վրա են: Այս պատճառով, տեղական փոքրաթիւ ուժեր միայն թողելով Նեիրամի դիմաց, Չօրամասը եւ արթիւրհան եւ արթիւրհան ուղղուեցան դեպի Նախիջեան: Չօրամասը, Եարրմեայէն անցնելով, դիրք բռնեց քաղաքին եւ գիւղին մէջտեղ գտնուող առուի փոսի եւ պարտզներուն մէջ: Թշնամին կզործածէր 12 թնդանօթ եւ բազմաթիւ միթրայտօգներ: Աջ կողմէն Ա. պաթալիոնը եկած էր արդէն քաղաքին դիմաց, բայց չկրնալով դիմանալ թշնամիի կրակին քաշուած էր ետ: Բուն Չօրամասին հետ զացող երկու հարիւրեակ ձիարորներ այլ հետեւած էին անոր: Իսկ Գ. պաթալիոնի ունեցած անխոհեմ շարժում մը պատճառ եղաւ թշնամիի քաջալերութեան եւ աւելի յանդուգն դառնալուն: Չօրամասը մինչեւ գիշերուան ժամը 10ը մնաց ընթացնելով թրքական արթիւրհան եւ թրքական թաղը: Թիւրքերը սխալմամբ փոխանակ հայկականի, թրքական թաղերը կը ընթացնէին: Մենք հոս ունեինք երեք լեռնային և մեկ դաշտային թնդանօթ: Քաղաքը արդէն գրաւուած էր թշնամիին՝ նախքան Չօրամասին քաղաք կարենալ մտնելը, եւ ահա գաղթականութեան ծայրը սկսաւ փրթիլ դեպի Կզնուտ, Ակրակունիս: Չօրամասը սկսաւ ետ քաշուիլ, եւ կէս գիշեր էր, [երբ] հասաւ Կզնուտ: Թշնամին հետզհետէ կը սաստկացնէր իր հետապնդումը:

*Քաղաքին մեջ հերոսական դիմադրություն կատարուած էր, բայց թշնամին թիւով եւ տեխնիկայով գերազանց էր»։* **Եղիշե Քաջունի, նշվ. աշխ. էջ 67-68:**

<sup>267</sup> Պիսղ, Պուստ, Բուստ, Բիստ, Փիստ-գյուղ Նախիջևանի ԻՅ Օրդուբադի շրջանում, Վասպուրական աշխարհի Գողթն գավառում: ՀՏԲ, հ. IV, էջ 340, 371: Եղիշե Քաջունին գրում է. «*Դեհինի ձորը անցնելով կը մտնենք ուրիշ ձոր մը, որու մեջ կայ 70-100 տունէ բաղկացած հայկական Բիստ գիւղը: Զօրամասը կը մնայ այդտեղ»։*

**Նշվ. աշխ., էջ 63:**

<sup>268</sup> Ղափան, Մաղան, Մատան, Կապան-քաղաք ՀՍՍՀ ԿԿ-արլ, Ղափանի վարչական շրջանի կենտրոնը և երկաթուղային կայարան: Երևանից հեռու է 320 կմ: Գտնվում է Ողջի գետի ափին, Խուստուկի լեռան հս ստորոտին, 705 մ բարձրությամբ վրա: Հր և հս շրջափակված է Մեղրու և Բարգուշատի լեռնաշղթաներով: Ռելիեֆը կտրատված է: Քաղաքի շրջակայքում կան բանջարանոցներ, պարտեզներ, թթաստաններ, ընկուղեզիններ, մոշուտներ: 1831թ. ունեց 196, 1897թ.՝ 2272, 1926թ.՝ 2658 բնակիչ, 1991թ.՝ Կապան: **ՀՏԲ, հ. III, էջ 548-551:**

<sup>269</sup> Ըստ Եղիշե Քաջունու հայտնած տվյալների՝ Ղափան զնացող երեք ճանապարհներից Անդրանիկն ընտրում է ամենադժվարանցանելին, որ անցնում է Նազրվան հայկական գյուղով և Ողջիի ձորով հասնում Ղափան:

<sup>270</sup> Քաջարան, Գեջան, Քջարան-քաղաք ՀՀ Սյունիքի մարզում, նախկին Կապանի շրջանում, Կապան քաղաքից 32 կմ հր-արմ, Ողջի գետի ափին: Գտնվում է 2000 մ բարձրության վրա, շրջապատված է Ջանգեզուրի և Մեղրու լեռնաշղթաների ճյուղավորություններով, արմ՝ Քաջարան (3403), Կապուտջուղ (3904) լեռնագագաթների հարևանությամբ: Քաղաքում Ողջիին է խառնվում նրա Ծակքար վտակը: 1831թ. ունեց 50, 1897թ.՝ 394, 1926թ.՝ 431 հայ բնակիչ: ՀՏԲ, հ. V, էջ 301-302: Եղիշե Քաջունին գրում է. «*Ձորով կ'անցնինք դեպի Քաջարան հայկական գիւղը: Վերին Ղափանի 40ի մօտ գիւղերն միայն 4ը հայ են, մնացածները թրքական են: Քաջարանի մեջ թրքական գիւղերու ներկայացուցիչները կուզան, կը ներկայանան Զօրավարին եւ կը յայտենն իրենց անկեղծ բարեկամութիւնը հայերու: Շրջանին բոլոր թրքական գիւղերը բարեկամական վերաբերմունք ցոյց տուին թէ՛ Զօրամասին եւ թէ՛ եկող գաղթականութեան»։* **Նշվ. աշխ., էջ 72:**

<sup>271</sup> Տաթև, Ստասև, Տատիվ-գյուղ ՀՀ Սյունիքի մարզում, նախկին ՀԽՍՀ Գորիսի շրջանում, նրա հր-արմ կողմում, Գորիս քաղաքից 10-12 կմ հր-արմ, Որոտան գետի աջ կողմում, բարձրադիր սարահարթի վրա: Ունի գեղեցիկ դիրք, լեռնային կլիմա, քարաշեն մեկ-երկու հարկանի հարմարավետ առանձնատներ: Խմելու ջուրը բերված է 12 կմ ձգվող ջրատարով: Նախկինում մտնում էր Ելիզավետպոլի նահանգի Ջանգեզուրի գավառի մեջ: 1831թ. ունեց 313, 1873թ.՝ 1326, 1897թ.՝ 1971, 1926թ.՝ 1958 հայ բնակիչ: Զբաղվում էին անասնապահությամբ, հացահատիկի, կերային կուլտուրաների, կարտոֆիլի, ծխախոտի մշակությամբ, բանջարաբուծությամբ ու պտղաբուծությամբ: Հիմնադրվել է IV դ.: Բնակիչները ըմբոստ և ինքնասեր մարդիկ էին: XIX դ. 80-ական թթ. պայքարել են ցարական չինովիկների կամայականությունների դեմ: XVI-XIX դ. սկզբները պարսկական տիրապետության ժամանակ մահալի կենտրոնն էր: Նշանավոր է Տաթևի վանքով: **ՀՏԲ, հ. V, էջ 10:** Տաթև զորամասը հասնում է օգոստոսի 2-ին, իսկ ճամփա ելնում օգոստոսի 3-ին կեսօրից առաջ: **Տն՛ս Եղիշե Քաջունի, նշվ. աշխ., էջ 75-76:**

<sup>272</sup> Գորիս, Գեյրուսի, Գերուսի, Գորիս Հին, Ջանկիզուր-քաղաք ՀՀ ԿԿ-արլ-ում, Որոտանի ձախակողմյան վտակ Գորիս գետի ափին, մոտ 1400 մ բարձրության վրա: Քաղաքի տարածքը ունի բավականին մեծ թեքություն և խիստ կտրտված մակերևույթ: Քաղաքի արլ մասում Գորիս գետի ձախ ափին է գտնվում Հին Գորիսը: XIX դ. 70-ական թթ. ցարական վարչական բաժանմամբ Գորիսը դարձավ

Ձանգեզուրի գավառի կենտրոնը: 1876թ. Հին Գորիսի մոտ Ստարազկի գավառապետի նախաձեռնությամբ, Մանուչար-բեկ-Մելիք-Հուսեփյանի խորհրդով և գերմանացի ճարտարապետի կազմած նախագծով հիմնադրվեց Գորիս քաղաքը, որը կառուցվել էր շախմատաձև հատակագծով, տները 1-1,5 հարկանի էին, բակերում ունեին պարտեզներ և բանջարանոցներ: Տնտեսական կյանքի վերելքին նպաստեցին Ղափանի և Սիսիանի կողմերից դեպի Շուշի և Եվլախ տանող ճանապարհները: Քաղաքը մեծ հարված ստացավ Առաջին աշխարհամարտի տարիներին: XIX դ. 70-ական թթ. ուներ 1000 բնակիչ, 1897թ.՝ 2400 հայ բնակիչ: 1910թ. այստեղ հրատարակվել են «Գավառ», 1921թ. «խորհրդային Ձանգեզուր», 1922-23 թթ. «Երիտասարդ ռանչպար» լրագրերը: ՀՏԲ, հ. I, էջ 952-953: Ըստ Եղիշե Քաջունու հայտնած տվյալների՝ հարվածային զորամասը Գորիսում մնացել է օգոստոսի 4-27-ը: **Նշվ. աշխ., էջ 76, 80:**

<sup>273</sup> Բնագրում մամայի ծեծը:

<sup>274</sup> Բնագրում մեծատառով՝ Գաղլա:

<sup>275</sup> Եղիշե Քաջունին գրում է. «Օգոստոս 15: Գորիսէն դէպի Շուշի ճանապարհը փակ է. թիւրքերը բռնած են: Միայն սուրիանդակներով է, որ յարաբերութիւնը կը պահուի...»: **Նշվ. աշխ. էջ 79:**

<sup>276</sup> Անդրանիկը թուրքերի կողմից սեպտեմբերի 25-ին Շուշիի գրավման մասին իմացել է հոկտեմբերի 11-ին Շուշիից եկած պատվիրակների կողմից, որոնք ֆայտոնով, սպիտակ դրոշակ պարզած, անցել էին թուրքերի միջով և հասել Գորիս: **Եղիշե Քաջունի, Նշվ. աշխ., էջ 102:**

<sup>277</sup> Սիսիան, Գարաքիլիսե, Ղարաքիլիսա Առաջին, Ղարաքիլիսա Հին, Ղարաքիլիսա Նոր-շրջանային ենթակայության քաղաք ՀՀ-ում, Սիսիանի վարչական շրջանի (Սյունիքի ենթամարզ) կենտրոնը: Երևանից 217 կմ հեռավորության վրա, Որոտան գետի աջ ու ձախ ափերին: Երևան-Գորիս ավտոմայրուղուց աջ: Հս Իշխանասարն է, հվ՝ Բարգուշատի լեռնաշղթան և նրա Սարվանդ գագաթը: Ունի 16000 հա տարածք: Արլ և Արմ տարածված են կանաչ մարգագետիններ և արգավանդ հողատարածություններ: Կլիման ցուրտ է: 1831թ. ուներ 116, 1897՝ 1266, 1926՝ 1186 հայ բնակիչ: Համենատաքար մարդաշատ է դառնում Արլ. Հայաստանի Ռուսաստանին միանալուց հետո (1828 թ.): Խոյից և Սալմաստից գաղթած հայերը հաստատվեցին Սիսիանում: Տնտեսությունը զգալիորեն քայքայվեց Առաջին համաշխարհային տարիներին: 1988-99 թթ. Ադրբեջանից մազապուրծ հայ 177 ընտանիք (555 անձ) հաստատվում է Սիսիանում: **ՀՏԲ, հ. IV, էջ 616-617:**

<sup>278</sup> Նման ընդհարում տեղի էր ունեցել նաև սեպտեմբերի 17-ին. «Երեկոյեան դարձեալ լուր կըստացուի՝ աննպաստ. Ջաբուղի վրայ արդէն լուրջ կռիւ է, ձորէն անդին գտնուող հայկական մեծ գիւղը՝ Ղարաղշաղը, կ'այրի»: **Եղիշե Քաջունի, Նշվ. աշխ., էջ 93:**

<sup>279</sup> Խնձորեք-գյուղ Ելիզավետպոլի նահանգի Ձանգեզուրի գավառում, այժմ Խնձորեսկ՝ Գորիսի շրջանում, Գորիս քաղաքից 8 կմ արլ, Գորիս-Ստեփանակերտ խճուղուց աջ, խոր ձորի գառիթափ լանջերին և սարահարթի վրա: Հին Խնձորեսկը, որը Մեծ Հայքի Սյունիքի Հաբանդ գավառի շեն գյուղերից էր, գտնվում է արմ-արլ 3 կմ ձգվող լեռնահովտի աջ և ձախ լանջերին, որոնք կտրտված են խոր ձորահովիտներով: Ստուգաբանվում է որպես «խնձո՞ր ես»: Նախապես եղել է խոր-ձորեսկ: Տները քարանձավային էին: Այժմ անբնակ է: Երբեմնի նոր թաղամասը դարձել է գյուղի բնակելի միակ մասը: 1831թ.՝ 1342, 1939թ.՝ 2980 բնակիչ: Տաթևի վանքին տալիս էր 10 միավոր հարկ: 1728-30 թթ. գյուղի բերրը եղել է Մխիթար սպարապետի զորակայանը, որտեղ էլ նա դավարաբար սպանվել է և թաղվել հին Խնձորեսկի «Անապատ» եկեղեցու բակում: 1735թ. Աբրահամ Կրետացու նկարա-

գրության համաձայն բնակիչները 20-30 մ բարձրության վրա գտնվող այս քարայրները՝ «քրատակներ», բարձրացել են պարաններով: Ինչ հսկայական տները դասավորված էին դարավանդաձև՝ խորխորատների զառիթափ լանջով դեպի վեր. մեկ տան կտուրը ծառայում էր որպես բակ մյուս տան համար և հեռվից նման էր բազմահարկ շենքի: Արլ Գայաստանի ամենամեծ գյուղը էր: XIX դ. վերջին ուներ 4200 բնակիչ, XX դ. սկզբին՝ 8300 բնակիչ: 1913թ. ուներ 27 խանութ, 7 դպրոց՝ երկուսը ծխական, մյուսները՝ մասնավոր-տնային: Շրջանում առաջին կոմունիստական կազմակերպությունը ստեղծվել է այստեղ 1919թ.: **ՉՏԲ, հ. II, էջ 748-749:**

<sup>280</sup> Եղիշե քաջունին գրում է. «*Դոկտեմբերի 21: Քիչ [նր] հանգստանալ է վերջ, խումբը կը շարժի դեպի Խնձորեակ հայկական մեծ գիւղը... Ճառաշատ ծոր մը անցնել է վերջ, կը սկսինք բարձրանալ: Քիչ յետոյ այդ շրջանի ամենաբարձր դիրքին վրայ ենք, ուր հայոց դիրքերն են, խրամատները՝ փորոլած, պահակները՝ կազմ ու պատրաստ: Քիչ անդին, ձորին մէջ, տարածուած է Խնձորեակ հայկական գիւղը՝ 1000 տունէ աւելի: Տուներուն մէկ մասը կանոնաւոր է, իսկ մեծ մասը քարանձաւներ [են] Յաջորդ օրը կը վերադառնանք Գորիս»: **Նշվ. աշխ., էջ 114:***

<sup>281</sup> Խաչնարած:

<sup>282</sup> Աղուղի և Վաղուղի գյուղերուն տեղի են ունեցել մի քանի ընդհարումներ Եղիշե քաջունին գրում է. «*Օգոստոս 27: Կէսօրէ վերջ անէն ինչ պատրաստ է մեկնելու համար, յոյս կա որ երեկոյեան, մութը չկոխած, կը հասնինք Միսիանի հայկական գիւղերէն մէկը: Ջօրամասի հետ միասին կը շարժի մաւէ Գորիսի շրջանը գտնուող գաղթականութիւնը... Ձանգեզուրէն դեպի Միսիան տանող շոտ ճանապարհի վրայ գիւղ չկա, բայց շոտ ճանապարհէն ոչ շատ հեռու, Որոտան գետին եզերքը, փոս դիրքերու մէջ, կան թրքական Աղուղտի, Վաղուղտի և Ուռուտ գիւղերը: Այս գիւղերուն մէջի թիրքերը աւազակաբարոյ են եւ առանի՛ շրջանին մէջ իրենց ըրած ավազակութիւններով: Ռուսական յեղափոխութենէն ի վեր աւելի յանդուգն դարձած են եւ փակած են շոտ ճամբան Միսիանի եւ Գորիսի միջեւ, տասնեակներով հայ ճամբորդներ կողոպտած, դէպի տուն վերադարձող զինուորներու զէնքերը գրաւած եւ սպանած են, այնպէս որ ոչ մէկ հայ, ոչ մէկ նոյնիսկ զինուած խումբ կը համարձակէր շոտով անցնիլ Միսիանէն Գորիս կամ Գորիսէ Միսիան երթալու համար: Շատ ստիպողական պարագաներու մեջ ստիպուած էին Դարպասի լեռնային, վտանգաւոր ճամբով անցնիլ Տաթև-Շնիէր եւ Գորիս, այսինքն Որոտան գետի միւս ափով: Ջօրամասը իհարկէ չէր կրնար այդ փախստական ճամբով երթալ, որովհետեւ անհնար է այդ ճամբով թրանսփորթ փոխադրել: Ջօրամասը հազիւ եայլայէն մտած էր այդ թիրքական գիւղերուն շրջանը, երբ դիրք մտած թիրքերը սկսան կրակ բանալ զինուորներուն վրայ: Լաւագոյն դիրքերը գրաւած էին արդէն: Կռիւը սկսած էր: Ստիպուած գիշերը պիտի մնայինք եայլան, բացօթեայ, ցուրտին: Կռիւը հետզհետէ տաքցաւ: Բայց թիրքերը ի վերջոյ տեղի տուին եւ նախ ապաստանեցան իրենց գիւղերու մէջ եւ ապա՝ լեռները: Բայց Ջօրամասը մնաց բաց դաշտի մէջ, գիւղերը չմտաւ»: **Նշվ. աշխ., էջ 80-81:***

<sup>283</sup> «*Մեպտեմբերի 26-27: Դրութիւնը Գորիսի շրջանի[ն] մեջ հետզհետէ սպառնալից կը դառնայ: Դրութիւնը բարդ է. նախ Գորիսի եւ Միսիանի միջեւ գտնուող թրքական Աղուղտի-Վաղուղտի գիւղերը դարձեալ Միսիան-Գորիս ճանապարհը փակած են, ճանապարհը նորէն Դարպասի լեռնային ճամբով է... Այս ամէնը ցոյց կուտան, թէ Գորիսը վտանգի մէջ է: Պետք է օգնութեան հասնիլ եւ ամէն ինչ նախատեսելով պետք է անվնաս դարձնել Աղուղտի-Վաղուղտին, ապահովել շոտէն եւ Միսիանը... Նախքան դէպի Գորիս մեկնիլը Ջօրական Անդրանիկ կոչ կ'ընէ Միսիանի ժողովուրդին՝ յայտարարելով, որ կ'երթայ Գորիսի օգնութեան, որ իր երթալը ժամանակաւոր է եւ կոչ կ'ընէ կատարել բոլոր հրամանները, ամէն գնով պաշտպանել Միսիանը:*

*Սեպտեմբեր 28: ...Ջորջը կը շարժի: Ղարաքիլիսէն ձորի մէջ է, շոտն ու դաշտը բարձր են: Չիարուն ու հետեւակը կը բարձրանան ու կը հասնին շոտն: Աղուտի-Վաղուտիի թիւրքերը դարձեալ դիմադրութիւն ցույց կուտան: Ուրեմն կռիւր կը կեդրոնանայ այդ երկու գիւղերուն վրայ: ...Թնդանոթի մի քանի հարուածէ վերջ թիւրքերը թողուցին իրենց գիւղերը եւ քաշուեցան ձորն ի վար՝ Ուռուտի վանքը: Սեպտեմբերի 29: ...Իրիկուան դէմ կհասնինք Գորիս»: **Եղիշե Քաջունի, Նշվ. աշխ. էջ 95-98:***

<sup>284</sup> Բռնակոթ, Բռնակուտ-գյուղ ՅՍՄՀ Սիսիանի շրջանում, Սիսիանի շրջանից 6 կմ հվ-արմ, Որոտան գետի աջ կողմում, գեղադիր սարահարթի վրա, հնում մտել է Ծղուկ գավառի մէջ: Ոչ բարձր լեռնաճյուղով բաժանվում է երկու թաղամասերի: Շուրջը տարածվում են արգավանդ ու մշակվող դաշտեր: Շրջանի ամենամեծ գյուղն է: 1831թ. ուներ 263, 1873թ.՝ 1213, 1922թ.՝ 2200 հայ բնակիչ, որոնց մեծ մասը տեղաբնակներ էին, մյուսի նախնիները եկել էին Ղարաբաղի շրջաններից: Գյուղի անունը առաջացել է բուն՝ բունեցիներ և կոթ՝ կոթեցիներ անունների միացումից: Հարկատու է եղել Տաթևի վանքին (12 միավոր): Ունեցել է երեք եկեղեցի, ունեցել է դպրոց, որը հիմնադրվել է XIX դ. կեսին: **ՀՏԲ, հ. I, էջ 738-739:** Ըստ Եղիշե Քաջունու՝ հարվածային զորամասը Բռնակոթից մեկնում է սեպտեմբերի 18-ին և ուղղվում Սիսիանի կենտրոնը՝ Ղարաքիլիսե (այժմ Սիսիան):

<sup>285</sup> Եղիշե Քաջունիի գրում է. «*Դեկտեմբեր 1: Դէպի Շուշի արգելքները վերացած էին: Պէտք էր միայն հրամանը տալ... Յառա՞ջ: Բայց լուր բերին, թէ Հարարով Կոռնիձոր է եկած սուրհանդակ լնը, որը բերել է հեռագիր Ջօրավար Անդրանիկին՝ Պաքուի անգլիացի հրամանատարին եւ ուրիշ հեռագիր մը Ատրպէջանի նախարարապետ Խան-Խուսէյսկիէն: Առաջինով անգլիացի զօրավարը կը հեռագրէ Անդրանիկին եւ Շուշիի հայկական ուժերու հրամանատարին, որ յառաջխաղացութիւնը դադարեցնեն, որ վաղը արդէն ճամբայ կը հանէ երկու օֆիսերներ՝ գալու Անդրանիկի մօտ: Իսկ երկրորդը կը հեռագրէ Շուշիի ընդհանուր նահանգապետին, քաղաքագլուխին, Ազգային Խորհուրդին ու հայկական զինուորական հրամանատարին՝ անգլիացի Ջօրավարին հեռագիրը անյայտը հասցնել Անդրանիկին... Ցանկացած լուրը եկաւ: Շոտով դէպի Աւտալլար կու գայ սպիտակ դրօշակով օթօմօսիլ մը: Կասկածները հեռացան: Ուրեմն, հեռագիրները իրական էին: Լուր տրուեցաւ կանուրջը պահող զինուորներուն թուլ տալ օթօմօսիլին անցնիլ և ընկերակցիլ անոր: Եկողները կներկայանան Ջօրավարին: Անգլիացի Captain Y.F.Square, Gloster Regiment-էն եւ Ֆրանսիացի Capitaine Gasfield, 6-eme Regiment des Hussards... Հետերնին բերած են նամակ, թէւ անթուակիր, առանց թիւի, ուղղուած Անդրանիկին և ստորագրուած Պաքուի Ղաշնակից ուժերու ընդհանուր հրամանատար Ջօրաւար Թոմսընէն... Դեկտեմբեր 21: Ամբողջ Գորիսը ուրախութեան եւ պատրաստութեան մէջ է: Անգլիացի Ղաշնակից ներկայացուցիչ պիտի գայ... Եկողներն են. Մայրո Կիպոն անգլիացի զինուորական... Կապիտան Սիրայտ՝ անգլիացի, Ապտուլֆաթթահ բէկ Հասանբէկով-թիւրք ներկայացուցիչ մը Պաքուի կողմ: Գուրգէն Չիլիմկարեան Պաքուի Հայոց Ազգային Խորհրդին կողմ: Դեկտեմբեր 22: Մայրո Կիպոնը կը յայտէ իր միսիայի գլխավոր նպատակը: 1. Շուշի-Գորիս-Ղափան ճամբաները բանալ... 2. Գտնել եւ գծել ազդեցութեան շրջանակ Անդրանիկի եւ Ատրպէջանի միջեւ... Ջաբուղէ ասդին Ջանգեզուր, Ղափան ու Սիսիան շրջանին համար՝ Անդրանիկը: Ուրեմն, Անդրանիկին պարտականութիւնը պիտի լինի այդ շրջանին մէջ. ա) պահել կարգը բ) երաշխաւորել իր շրջանին մէջ գաղթականութեան համար ուտեստեղէնի փոխադրութեան ապահովութիւնը»: **Նշվ.աշխ., էջ 128-136:***

<sup>286</sup> Հավանաբար Ղալաճուղ:

<sup>287</sup> Որոտան, Բարգուշատ, Ծղուկ գետ-գետ Արաքսի ավազանում, նրա ձախակողմյան վտակը: Սկիզբ է առնում Սյունիքի բարձրավանդակի հվ-արմ մասից.

Ձանգեզուրի լեռների արլ լանջերից, հոսում ԳՅ Սիսիանի և Գորիսի շրջաններով, ծայր ստորին հոսանքում միանում է Գագարի գետին և դրա հետ միասին թափվում Արաքսը: Միջին հոսանքի շրջանում ձորի խորությունը 700 մ է: Գետի երկարությունը՝ 175 կմ, ավազանը՝ 2020 քառ կմ, տարեկան միջին ծախսը՝ 21,5 խոր մ/վ: Տարեկան հոսքի ծավալը՝ 0,67 խոր կմ: **ԳՅՔ, հ. IV, էջ 185:**

<sup>288</sup> Սակայն առաջնորդվելով Եղիշե Քաջունու թողած տեղեկություններով՝ խոսքը կարող է գնալ Բագարչայ գյուղի մասին, մանավանդ որ վերապրածը գյուղը տեղադրում է Որոտանի ակունքներում <sup>1</sup>/, կամ Ղալաճուղ հայկական գյուղի մասին: **ՏնՆ Եղիշե Քաջունի, նշվ. աշխ., էջ 160:** Բագարչայը գերազանցապես բնակեցված է եղել մոլոկաններով, հետևաբար ավելի հավանական է, որ խոսքը Ղալաճուղ հայկական գյուղի մասին է: Ղալաճուղ, Ղալաջուղ, Կալաջըկ, Կալաչըր, Կալաջիխ, Կալաջիկ, Կալաջուխ, Ղալաջըղ, Ղալաջիխ, Գալաջուգ, Ղարաքիլիսա երկրորդ-գյուղ ելիզավետպոլի նահանգի Ձանգեզուրի գավառում, այժմյան Սիսիանի շրջանի հս-արմ մասում, Սամնակունք գյուղի մոտակայքում: 1897թ. ուներ 407, 1926թ.՝ 131 բնակիչ, հետագայում ապաբնակեցվել է՝ կապված գյուղերի խոշորացման հետ: **ԳՅՔ, հ. III, էջ 506:**

<sup>289</sup> «Ապրիլ 8: ...Չիաուրներու, հետեւակներու, Ջօրամասին եւ տեղական թրանսփորթին սեւ գիշը կարգով կը շարժի Դարալակեագի դարուփոս ճամբաներով», **Եղիշե Քաջունի, նշվ. աշխ., էջ 167:**

<sup>290</sup> Դավալու-ոստիկանական շրջան Երևանի նահանգի Երևանի գավառում, որը համապատասխանում է ԴՍՍԳ Արարատի շրջանին: XX դ. սկզբին ուներ ութ գյուղ, 759 տուն՝ 7000 բնակչով, մեծ մասը՝ հայեր: **ԳՅՔ, հ. II, էջ 41:** Արարատ վարչական շրջանը 1930թ. սեպտեմբերի 9-ին անվանվել է Վեդի: Վեդի գավառակը կազմվել է ավելի վաղ՝ 1920թ. Երևանի նահանգի Երևանի գավառի Վեդիբասարի ոստիկանական շրջանների տարածքում և գոյություն է ունեցել մինչև 1.10.1929թ.: 1930թ. սեպտեմբերի 9-ին անվանվել է Վեդի: **ԳՅՔ, հ. II, էջ 41:**

<sup>291</sup> «Ապրիլ 11: Գնդիկ գինուորներու մասին լսել էինք, բայց դեռ չէինք տեսած. առաջին անգամ այստեղ կը տեսնենք հնդիկ գինուորները, որոնք պարտականութիւններ կատարած՝ զբաղուած են արեւի դէմ տարածուած հանգիստով կամ կերակուրով: Բարակ, երկար, սեւ, փայտի պէս սրունքներ ու բազուկներ ունին, ճարպիկ շարժումներով, ճկուն իրանով եւ փաթթուած գլուխներով: Գրեթէ բոլորովին մերկ են, ունին միայն մէջքերին կապած ճերմակ գոգնոց մը: Դաւանաբար իրենք ալ մեր վրայ կը գարմանան, փոշոտած, զանազան տարազներով: Յարաբերութիւններու հայ գինուորներու հետ սերտ է», **Եղիշե Քաջունի, նշվ. աշխ., էջ 169:**

<sup>292</sup> «Ինչ որ պիտի յանձնուէր երկաթուղիին՝ տեղադրուեցաւ վակոններու մէջ: Դարալակեագէ վերցուած թրանսփորթի ձիերն ու ջորիները վերադարձան. իսկ Ջօրամասը շարժեցաւ Դաւալու՝ այնտեղ գիշերելու համար: Դաւալուն շրջանի հայկական ամենամեծ գիւղն է եւ այսօր վերջին կայանը Հայկական Հանրապետութեան... Ապրիլ 12: Դետեւակները այլեւս պիտի չբալեն: Պետք է վակոն գար, զանոնք փոխադրելու համար... Կայարան չկայ: Թիւրքերը այրած ու քանդած են: Անոր պաշտօնը կը կատարէ գիծին վրայ գտնուած վակոն մը: Վերջապէս, կառաչարը կ'երեւայ... Ողջագուրուներէ վերջ, հետեւակները կը նստին վակոնները, իսկ ձիաւորները, առաջնորդութեամբ Ջօրավարին սրարչաւ կ'ընթանան Երեւանեան դաշտի միջով, շոտով», **Եղիշե Քաջունի, նշվ. աշխ., էջ 170:**

<sup>293</sup> Էջմիածին, Ավան Վարդգեսի, Արտեմեղ, Նոր Քաղաք, Վարդգեսավան, Ուլքիլիսա-քաղաք Արարատյան դաշտում, Երևանից 18 կմ արմ: Մոտակայքով հոսում է Քասաղ գետը: Ընդհանուր տարածքը 15 քառ. կմ է: 1831թ. ուներ 2175, 1873թ.՝

2787, 1914թ.՝ 5755, 1919թ.՝ 16886, 1926թ.՝ 8400 բնակիչ: Քաղաքի գլխավոր հատակագիծը հաստատվել է 1939թ.: Հրատարակվել են թերթեր և ամսագրեր. 1868-1918թթ.՝ «Արարատ», 1913թ.՝ «Շողակաթ», 1919թ.՝ «Արարատյան աշխատավոր», 1920թ.՝ «Էջմիածին», 1921թ.՝ «Կարմիր թերթիկ», 1921-22թթ.՝ «Կարմիր գյուղացի», «Բանբեր», «Կարմիր աքլոր», 1921թ.՝ «Դեպի խորհուրդները», 1922թ.՝ «Կարմիր երիտասարդ»: Մայր աթոռին կից 1874թ. գործում է հոգևոր ճեմարանը: 1921թ. այստեղ բացվել է կուլտուր-պատմական ինստիտուտը, որը 1939թ. փոխադրվել է Երևան: **ՀՏԲ, հ.1, էջ 350-351:**

<sup>294</sup> «Ապրիլ 27: Այսօր կառախուսմբը պիտի գայ թիֆլիս-Պաթուն փոխադրելու Ջորավարը եւ երթալիք զհնուորները: Բոլոր զէները կը յանձնուին Վեհափառ Կաթողիկոսին ու երեկոյեան դէմ բոլորը միասին կը մեկնին կայարան», **Եղիշե Քաջունի, նշվ. աշխ., էջ 176:**

<sup>295</sup> Հիմնադրվել է 301թ., վանքի սկզբնական ձևը չի պահպանվել: Ավերվել և վերանորոգվել է տարբեր ժամանակներում: 1441թ.Սսից կաթողիկոսանիստը տեղափոխվել է Էջմիածին: XVII դ. սկզբներին Շահ-Աբասի ավերիչ արշավանքների ընթացքում, վանքի որոշ բաղադրամասեր քանդվում տարվում են Նոր Ջուղա: Վանքի և նրա շրջապատի հիմնական ճարտարապետական վերանորոգումը, բարեկարգումը, վերակառուցումը սկսվել է 1955թ. Վազգեն Ա-ի օրոք: **ՀՏԲ, հ.1, էջ 350.**

<sup>296</sup> Եկեղեցու կենտրոնական գմբեթը ավելացվել է XVII դ.: Սովսես Գ Տայեցի կաթողիկոսը (1629-1632թթ.) վերանորոգում է և կառուցում արտաքին պարիսպները, հյուրանոցի շենքը, խուցերն ու սեղանատունը: 1763թ. Սիմեոն Ա Երևանցի կաթողիկոսի ժամանակ վանքի տարածքը պարսպապատվել է և անջատվել քաղաքից: Վանքի պարիսպներն ունեին բերդի պարիսպների ձև, որոնց հիմքերը շարված էին քարով, արտաքին մասերը՝ աղյուսով: Պարիսպների մեջ կային բարձր աշտարակներ՝ թվով 16 և դարպասներ՝ Գյուղի, Ղազարապատի, Մսրի, Կալի, Բաղնիքի դռներ: 1771թ. հիմնադրվում է տպարան, 1776թ.՝ թուղթ պատրաստելու արհեստանոց: Ուշագրավ է տիբեթերեն արձանագրություն ունեցող զանգը: **ՀՏԲ, հ.1, էջ 350.**

<sup>297</sup> Քաղաքին մի առանձնակի տեսք են տալիս վանքից ոչ հեռու գտնվող փոքրիկ լճակն ու անտառակը, որը կառուցել է Ներսես Ա Աշտարակեցի կաթողիկոսը (1843-57 թթ.): Նրա օրոք են կառուցվել նաև շաքարի և մետաքսի փոքրիկ գործարանները: **ՀՏԲ, հ.1, էջ 351:**

<sup>298</sup> Ըստ «Հայկական հարց» հանրագիտարանի՝ Անդրանիկը իր ջոկատը Էջմիածին է բերել 1919թ. ապրիլին և լուծարելով հեռացել արտասահման: **Армянский вопрос, с. 28.** «Ապրիլ 13: Հետեւակները նոր հասեր են Էջմիածնայ կայարանը՝ երկաթուղիով: ...խումբը կ'առաջնորդուի Էջմիածնայ վանքը եւ կը տեղաորուի վանքի «թավա»ն, իսկ Ջորավարը՝ վանքին հիւրանոցը: Ջորավարը իր Էջմիածին հասնիլը կը տեղեկացնէ թիֆլիս...եւ ապա կը ներկայանայ Ն.Ս.Օ. Վեհափառին», **Եղիշե Քաջունի, նշվ. աշխ., էջ 173:**

<sup>299</sup> Շուշի, Կալա, Ղալա, Շոշի, Շոշի բերդ, Քարագլխի սղնախ-քաղաք ԼՂՀ-ում, Շուշիի վարչական շրջանում, նրա կենտրոնը: Գտնվում է Գորիս-Ստեփանակերտ ավտոճանապարհի աջ կողմում, 1238-1533 մ բարձր լեռան գագաթին, Ստեփանակերտից 8 կմ հվ.: 1885թ. ուներ 27783 բնակիչ, 15188-ը՝ հայեր, 1895թ.՝ 33252 մարդ, 20584-ը՝ հայեր: Նախիջևանի շրջանից Ազուլիս և Ղազանչի գյուղերից հայերը վերաբնակվել են այստեղ: Շուշիի առաջին հատակագիծը կազմել են ռուսական զինվորական ինժեներները 1820թ., հատակագիծը վերանայվել է 1837թ., 1844, 1855 թթ.: XVIII դ. սկզբին բերդը վերակառուցվել է ու ամրացվել Ավան հարյուրապետի ջանքերով: 1805թ. նվաճվել է Ռուսաստանի կողմից և 1813թ. Գյու-

լիստանի հաշտության պայմանագրով միացել Ռուսաստանին: 1838թ. բացվել է թեմական դպրոց և գրադարան: XIX դ. վերջ-XX դ. սկիզբ այստեղ գործում էին ռեալական դպրոցը և երկու տպարան: Քաղաքը՝ որպես մշակութային կենտրոն, կոչվում էր «Կովկասի Փարիզ»: 1920թ. մարտին այստեղ խցկված թուրքական զորապետներ Նուրի և Խալիլ փաշաները արդրեջանական մուսավաթական բաշխոգուկների հետ կազմակերպեցին Շուշիի հայկական թաղերի (Ղազանչեցոց, Ազուլեցոց, Մեղրեցոց, Թավրիզեցոց) կողոպուտը, հրկիզումն ու ավերումը, հայ բնակչության զանգվածային կոտորածը, որին զոհ գնաց 35000 մարդ: Այս նախճիրը 1988-89 թթ. շարունակեցին Ադրբեջանի «ինտերնացիոնալիստները», որի պատճառով 2000 հայեր Շուշիից փախան Ստեփանակերտ: **ՉՏԲ, հ. IV, էջ 161-162:**

<sup>300</sup> Համարելով հայ ազգաբնակչության թվաքանակը նախապատերազմյան և 1922թ. տվյալների հետ՝ պարզորոշ երևում են կորուստների այն մեծ չափերը, որ պատճառել էին թուրք-թաթարները: Մոտավոր հաշվարկներով Գյոքչայի, Շամախու, Ղուբայի, Բաքվի, Լենքորանի և Ջևաթի գավառներում կոտորածներին զոհ եր դարձել ավելի քան 70.186 մարդ, որից միայն 48.673-ը Բաքու քաղաքում: Այլապես, բնականոն աճի պայմաններում ազգաբնակչության թիվը 1922թ. վերջերին պետք է կազմեր մոտ 140000 մարդ (նախքան կոտորածներն առկա 127.318 մարդու դիմաց): **Գ.Ստեփանյան, Հայերի կոտորածներն ու ինքնապաշտպանական մարտերը Բաքվի նահանգում 1918-1920 թթ. <http://asj-oa.am>**

<sup>301</sup> Ղարսը սկզբում եղել է բերդ: Պարսկա-թուրքական տիրապետության ժամանակ հայկական բերդը, որը գտնվում էր քաղաքի արլ մասում, շարքից դուրս է եկել: Բերդի հիմնավոր վերակառուցումը սկսվել է 1578թ.: Հետագայում ամրակայվող աշխատանքները շարունակվել են այն աստիճան, որ Կարսը XIX դ. կեսին հավասարագրեր էր Վերդենի բերդին: Ուներ կրկնակի պարիսպ՝ 26 աշտարակներով: 17-ը հվ կողմում էին, 9-ը՝ արմ: Բերդի անկյունների 4 աշտարակները մյուսներից ավելի խոշոր ու բարձր էին: Պարիսպների բարձրությունը 10-12 մ է, լայնությունը՝ 1,5: Բերդի ընդհանուր երկարությունը 1000 մ էր, լայնությունը՝ 500 մ: Բուն միջնաբերդը տեղակայված էր Կարսի գետի աջակողմյան ժայռի վրա: Միջնաբերդը, որ շրջապատված էր կրկնակի պարիսպներով, հավանաբար կառուցված էր հայկական բերդի տեղում: Բերդը բնակեցված էր թուրքերով և բաժանված էր 17 թաղերի: Կառուցվել էր անմշակ քարից: Տեղավորում էր 30000-40000 զինվոր: **ՉՏԲ, հ. III, էջ 70:**

<sup>302</sup> Ալեքսանդրապոլի ամենամեծ կառույցը բերդ-ամրոցն էր, որի հիմնավոր վերակառուցումը սկսվել էր 1834թ: Նոր բերդը կառուցվել էր սև և կարմիր տուֆով, ընդարձակ էր և հարմարավետ, օժանդակ շինությունների հետ միասին ի վիճակի էր իր մեջ տեղավորել 16000 մարդ: Քաղաքի երեք հատվածներում՝ Կազաչի պոստ, Պոլիզոն և Սևերսկի, գտնվում էին զորանոցները: **ՉՏԲ, 7. էջ 569-572:** Այս զորանոցներում էլ 1915թ. հետո գործում էր ՀՀ ամենամեծ որբանոցը, որին հովանավորում էր Ամերիկյան նպաստամատույցը:

<sup>303</sup> Թամբեր:

<sup>304</sup> **Տե՛ս 4. Ալեքսանյան, Արևմտահայ գաղթականությունը Ալեքսանդրապոլի գավառում 1914-1922 թթ., էջ 346-348, 351, 355, 436-438:**

<sup>305</sup> Պահպանվել են Յարոյի լուսանկարները: **Տե՛ս** N. Nercessian, The City or orphans, Relief Workers, Commissars and the “Builders of the New Armenia” Alexandropol/Leninakan 1919-1931, New Hampshire, 2016, p. 13, 481:

<sup>306</sup> Ֆելդշեր:

<sup>307</sup> Հայաստանի ազգային արխիվում պահպանվել է Ալեքսանդրապոլի բժիշկների միության ՀՀ վարչապետին ուղղված գրությունը՝ թիվ 142.«Ալեքսանդրապոլի Բժշկական միությունը և «Կարմիր խաչի» Վարչության անդամները, մասնակ-

ցույթյամբ Հայաստանի «Կարմիր խաչի» Կենտրոնական վարչության փոխնախագահ Կ.Արծրունու, 1920թ. օգոստոսի 15-ի արտակարգ նիստում քննության առնելով ամսոյս 13-ին Կազաչի Պոստում տեղի ունեցած քստմնելի դեպքը և գտնելով, որ 1.ամսի 13-ին Ամերիկյան Նպաստամատուց Կոմիտեի Ալեքսանդրապոլի բժշկական մասի բժիշկ **Հոտորը** անխնա ձևով ծեծել է հիվանդանոցի որբերին յուր ծեռքի մտրակով, շատերին անելով արյունլվա... նա նման վերաբերմունք միշտ ցույց է տվել ինչպես Պոլիգոնի, այնպես էլ Կազաչի Պոստի հիվանդանոցներում, անգույք կերպով ենթարկելով ծեծի 2. որ նույն դեպքի ժամանակ ենթարկվել են անարգանքի և լպիրշ վերաբերմունքի հիվանդանոցի մի քանի գթութեան քույրեր, միայն նրա համար, որ կամեցել են պաշտպանել ծեծվող երեխաներին և կապիտան Դինջիրֆիլդի ուշադրությունն են հրավիրել այդ տխուր և վայրենի վարմունքի վրա, իսկ քույրերից մեկին նույնիսկ ուզեցել են միլիցիաների ձեռքով բանտարկել պ. Դինջիրֆիլդի հրամանով 3. որ նույն հիվանդանոցի բժիշկ Ալթունյանը, որը ենթարկվել էր մտրակով խիստ ծեծի նույնպես որբ երեխաներին պաշտպանելու համար ճակատից վերք ստանալով... ժողովն որոշեց. ա. որ բժիշկ Հոտորը՝ որպես հոգեպես անհավասարակշիռ մի պաշտոնյա, չի կարող մնալ այդ աստիճանի պատասխանատու պաշտոնի մեջ՝ արատավորելով ամերիկյան մեծ և մարդասեր ժողովրդի անունը բ. որ պ. Դինջիրֆիլդը յուր կոպիտ ու անքաղաքավարի վարմունքով դեպի գթության քույրերը վիրավորել է գթության քույրերի ամբողջ կորպորացիան, որ այնքան անձնվիրաբար իր կյանքի գնով աշխատել է հայ որբերին խնամելու և դաստիարակելու ծանր գործում գ. ժողովը յուր զայրույթն է հայտնում որբանոցի մյուս բժիշկների վերաբերմունքին այն քար անտարբերության համար, որ ունեցել են նոքա դեպի որբերը և նոցա տանջող բժիշկը, որպես հիվանդ մարդու: ժողովը վճռեց ուղարկել սույն որոշումը Ամերիկայի միսիսյայի ներկայացուցիչ պ. Եարոյին, Հայաստանի կառավարությանը և եթե նոցա ձանը չսսվի, նաև Վաշինգտոն Ամերիկյան մարդասեր կառավարությանը: **4.Ալեքսանյան, Արևմտահայ գաղթականությունը Ալեքսանդրապոլի գավառում 1914-1922 թթ., էջ 346-348:**

<sup>308</sup> Այժմ պաշտոնական անվանումն է «Ճերմակ» հիվանդանոց, հաճախ խոսակցական լեզվում օգտագործվում է «սիպտակ հիվանդանոց» ձևը և ոչ թե սպիտակ, ինչպես օգտագործում է վերապրածը:

<sup>309</sup> Իր հուշերում նույն միջադեպի մասին հիշում է մեկ այլ վերապրած՝ Հայրապետ Տոնոյանը, որ դարձյալ հաստատվել էր Գյումրիում: Նա պատմում է. «*Երբ հասանք Ալեքապոլ, թուրքերը նոր էին քաղաքից ետ քաշվել: Կայարանից դուրս եկանք և այժմյան Գորկու փողոցով բավականին ներքև էինք իջել, երբ կայարանում պայթեց թուրքերի թաքցրած ռումբը: Այդ ռումբի պայթյունից կայարանում և նրա շրջակայքում մեծ ավերածություններ եղան, իսկ քաղաքի շենքերի պատուհանների գրեթե բոլոր ապակիները ջարդվեցին»:* **Ի.Ավագյան, Գուշեր անցյալից. Հայրապետ Տոնոյանի հիշողությունները, Մեծ եղեռնը վերապրածները, Գյումրի, 2006, էջ 17:** Արխիվային փաստաթղթերում այս դեպքի վերաբերյալ նույնպես պահպանվել են որոշ տեղեկություններ. «1918թ. դեկտեմբերի 28-ի այս պայթյունը խլեց 300-ից ավելի մարդկային կյանքեր, 500 վիրավորներ, տվեց 10-15 մլն. ռուբլու վնաս...»: **4.Ալեքսանյան, Հայաստանի Հանրապետության կենտրոնական և Ալեքսանդրապոլի տեղական իշխանության մարմինների հարաբերությունները 1918-1920 թթ., Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտի հանրապետական գիտական նստաշրջանի նյութերի ժողովածու, Գյումրի, 2008, էջ 121:**

<sup>310</sup> Վերապրածը հիշում է 1920թ. Մայիսյան ապստամբության հետ կապված դեպքեր: Դեռ XIX դ. հենց սկզբից Ալեքսանդրապոլում գործում էր նորաստեղծ բուշկիկ-

յան կազմակերպությունը, որի ղեկավարությամբ անցավ 1905թ. մեծ գործադուլը: **ՉՏԲ, 3, էջ 572:**

<sup>311</sup> Նալբանդ-ավան ԴևՍԴ Սպիտակի շրջանում, համանուն երկաթուղային կայարանին կից, Երևան-Թբիլիսի երկաթուղու վրա, Նալբանդ (այժմ՝ Շիրակամուտ) գյուղի մոտ: 1926թ. ուներ 15 հայ բնակիչ: 30-ական թթ. ծուլվել է այժմյան Շիրակամուտ գյուղին, որը տեղակայված է Փամբակ գետի ձախափնյակում, Սպիտակից 7 կմ հվ-արմ, արգավանդ սևահողային հարթավայրում: 1978թ. վերանվանվել է Շիրակամուտ: Երկաթուղային կայարան է, այստեղով է անցնում Գյումրի-Վանաձոր ավտոճանապարհը: 1831թ. ուներ 161, 1897թ.՝ 1030, 1926թ.՝ 1545 հայ բնակիչ: Զբաղվում էին անասնապահությամբ, ճակնդեղագործությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ, պտղաբուծությամբ: 1988թ. երկրաշարժի ժամանակ զոհվել է 313 մարդ, ավերվել են տներ: 1995թ. մտել է ԴՅ Լոռու մարզի մեջ: **ՉՏԲ, հ. III, էջ 949, հ. IV, էջ 130-131:**

<sup>312</sup> Ջաջուռ, Շատուր-գյուղ ԴՅ Ախուրյանի շրջանում, Գյումրի քաղաքից 9 կմ հարև, բլրապատ վայրում: Նախկինում Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառում: 1831թ. ուներ 486, 1897թ.՝ 1517, 1926թ.՝ 797 հայ բնակիչ, որոնց նախնիների մի մասը եկել է Խնուսից 1828թ.: Առաջին դպրոցը բացվել է 1870թ.: 1995թ. մտել է Շիրակի մարզի մեջ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, կերային կուլտուրաների մշակությամբ, բանջարաբուծությամբ: Համանուն ավանը երկաթուղային կայարանին կից է, Գյումրի-Վանաձոր երկաթգծի վրա, ԴՅ Ախուրյանի շրջանում, Ջաջուռ գյուղից 2-3 կմ հեռավորությամբ, մեղմաթեք հարթավայրում: Հիմնադրվել է 1928 թ.: 1897թ. ուներ 9, 1926՝ 46 հայ բնակիչ, որոնց նախնիները եկել էին Մուշից և Բասենից: Բնակչության զգալի մասը զբաղվում է երկաթուղու սպասարկմամբ: **ՉՏԲ, հ. IV, էջ 388-389:**

<sup>313</sup> Ջաջուռ, Դուզբենդ-գետակ ԴՅ-ում, Արաքսի ավազանում, նրա ձախակողմյան Ախուրյան վտակի ձախ Կարկաչան օժանդակի մեջ է թափվում աջ կողմից: Երկարությունը՝ 34 կմ, ավազանը՝ 393 քառ կմ: Սկիզբ է առնում Շիրակի լեռնաշղթայից: Ռեժիմը խիստ անկանոն է, սելավային: **ՉՏԲ, հ. IV, էջ 388-389:**

<sup>314</sup> 1920 թ. Կարսում կազմակերպվում է բուլշևիկյան ռազմահեղափոխական կոմիտե: **ՉՏԲ, հ. III, էջ 70:**

<sup>315</sup> Գյոլա, Գյոլե-շրջան Կարսի մարզի Արդահանի օկրուգում, Կուրի ակունքների շրջանում: Կուր գետի վերնագավառն է, մեծ մասամբ ճահճապատ է: Աղբյուրներում նշված է որպես գավառ, վիճակ, վայր: Տարածքով համընկնում է Մեծ Հայքի Տայք աշխարհի կազմի մեջ հիշատակվող Կող գավառի հետ: **ՉՏԲ, հ. I, էջ 889:**

<sup>316</sup> Բուղաթափա-լեռ Հայկական լեռնաշխարհում, Արփան-Սողանլուի լեռներում, Կարսի մարզի Արդահանի օկրուգում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1000 մ: Համանուն ևս երկու լեռ կա Կարսի մարզում, որոնք նաև կոչվել են Պուղաթեփե-առաջինի բարձրությունը ծովի մակերևույթից 2750 մ է, գտնվում է Ալաջա լեռնահամակարգում Արաքս և Կարս գետերի ջրբաժանում: Երկրորդի բարձրությունը 2741 մ է, գտնվում է Մեծորաց՝ Սողանլուի լեռների հս-արմ հատվածում, Չլրրի լեռներում: **ՉՏԲ, հ. I, էջ 754:**

<sup>317</sup> Մերդենիք, Մերդենեկ, Մերդենիկ-գյուղ Կարսի մարզի Արդահանի օկրուգում, Արդահան քաղաքից հվ-արմ, Կուրի հվ ակունքների շրջանում: 1907թ. ուներ 309 հայ բնակիչ: Գյուղից արմ անցնում է Արդահանից եկող ճանապարհը: 1915թ., մեծ զոհեր տալով, այստեղից գաղթել են 360 հայեր: **ՉՏԲ, հ. III, էջ 801:**

<sup>318</sup> Խնձորեք, Խնձորեկ, Խնձորիկ, Խնձորի-գյուղ Արմ Հայաստանի Էրզրումի նահանգի Էրզրումի գավառի Դերջանի (Մամախարուն) գավառակում, Արմ Եփրատի աջակողմյան վտակներից մեկի ակունքների մոտ, Դերջանից մոտ 24 կմ

հս-արմ, լեռնային վայրում: Գյուղի մոտով դեպի հարավ հոսում է Խնձորիկի ջուրը: 1909թ. ուներ 55 տուն, որից 30-ը հայեր, 25 տունը քրդեր էին: Զբաղվում էին երկրագործությամբ, անասնապահությամբ, արհեստներով: **ՀՏԲ, հ. II, էջ 748:**

<sup>319</sup> «Թուրքի թաղը» սկսվում է այժմյան ավտոկայանի տարածքից մինչև հին գերեզմանոց: Այդ թաղում նախկինում ապրում էին բավականին թվով թուրքեր: **Վազգեն Հարությունյան, Գյումրին, նրա մարդիկ, սովորույթները, Գյումրի, 1996թ., էջ 11: Տե՛ս Գյումրի, Քաղաքը և մարդիկ, Գյումրու քաղաքապետարան, Գյումրի, 2009, լուսանկար էջ 160:** Մոտ 40-50 տուն մահմեդականները Գյումրու հվ-արլ-ում հիմնեցին «Թուրքի մահլեն»: **Կ.Քազեյան, Գ.Աղանյան, Նշվ.աշխ., էջ 14:**

<sup>320</sup> Կումայրի, Գյումրի, Ալեքսանդրապոլ, Լեճիճական-քաղաք Շիրակի բարեբեր դաշտում, Ախուրյանի ձախ ափին, ծովի մակերևույթից 1556 մ բարձրության վրա, ակոսված է Չերքեզի, Ջաջուռի ձորերով: Շրջակայքում տարածված են սևահողեր: 1924թ. հունվարի 27-ին՝ Լեճիճի մահից հետո, անվանակոչվել է Լեճիճական: 1831թ. ուներ 3444, 1897թ.՝ 30616, 1926թ.՝ 42313 բնակիչ: 1920թ. այստեղ լույս էր տեսնում «Ալիք» թերթը: XIX դ. սկզբին՝ 1804թ., Գյումրին միացվում է Ռուսաստանին: 1829-30թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո երզրումի, Բայազետի, Կարսի շրջաններից հայերը տեղափոխվում են այստեղ: 1840թ. Ալեքսիսը համարվում էր քաղաք: 1898-99 թթ. Թիֆլիս-Ալեքսանդրապոլ, 1899թ. Ալեքսանդրապոլ-Կարս, 1902թ. Ալեքսանդրապոլ-Երևան երկաթուղիների կառուցումով քաղաքը դառնում է կարևոր երկաթուղային հանգուցակետ: Այստեղ էին հատվում մաս մի քանի խճուղային ճանապարհներ: XIX դ. կեսից-XX դ. սկիզբը աստեղ կային համաքաղաքայիններ և շուրջ 300 արհեստավորներ: XIX դ. վերջերին գործում էին տասը դպրոց և վարժարան (Արղության և Սահականուշյան դպրոցներ): **ՀՏԲ, 7. II, էջ 569-572:**

<sup>321</sup> Դշլաղ, Կշլաղ, Ժղանով, Ժղանովո-գյուղ ՀԽՍՀ Գուգարքի շրջանում, Կիրովականի արմ կողմում, Փամբակ գետի ձախ ափին: Ժղանով է վերանվանվել 1946թ.: Գյուղը թաղված է այգիների մեջ: 1831թ. ուներ 220, 1897թ.՝ 1473, 1926թ.՝ 1815 հայ բնակիչ, որոնց նախնիները այստեղ էին գաղթել Կարսի, Լեռնային Ղարաբաղի, Իջևանի շրջանի Սև քար գյուղերից: Եկեղեցին՝ Ս.Օհանը, անշուք է և կիսականգուն: **ՀՏԲ, հ. II, էջ 502-503:**

<sup>322</sup> Գյառգյառ, Գարգառ, Գերգեր Հայ, Գյառգյառ Հայոց, Հերիեր-գյուղ ՀՍՍՀ Ստեփանավանի շրջանում, Ստեփանավան քաղաքից 6 կմ հվ-արլ, բլրապատ հարթավայրում, որի արմ և հվ կողմում բարձրանում են անտառապատ լեռներ: Գյուղը թաղված է մրգատու այգիների ու բանջարանոցների մեջ: Բնակչությունը զբաղվում է հացահատիկի, կարտոֆիլի մշակությամբ, պտղաբուծությամբ, բանջարաբուծությամբ: 1831թ. ուներ 158, 1886թ.՝ 1005, 1926թ.՝ 1600 հայ բնակիչ: Գյուղի մոտ է գտնվում Ս. Ամենափրկիչ սրբավայր-մատուռը: Գյուղի մեջ կա մի անշուք եկեղեցի: **ՀՏԲ, հ. I, էջ 879:**

<sup>323</sup> Վարդաբլուր, Վարդապլուր-գյուղ ՀՀ Լոռու մարզում, նախկին Ստեփանավանի շրջանում, Ստեփանավան քաղաքից 6-7 կմ հվ-արլ, Գարգառ գետի ձախ կողմում: Կառուցված է բլրապատ հարթավայրում, մրգատու այգիների մեջ: Ունի առողջարար, ամառանոցային կլիմա: 1831թ.՝ ուներ 75, 1886թ.՝ 830, 1897թ.՝ 1019, 1926թ.՝ 1597 հայ բնակիչ, որոնց մի մասը վերաբնակվել էր Սպիտակի Մեծ Պարնի, Արմ Հայաստանի Մուշի, Սասունի գյուղերից: Բնակիչները զբաղվում են անասնապահությամբ, կարտոֆիլի, հացահատիկի, կերային կուլտուրաների մշակությամբ և բանջարաբուծությամբ: **ՀՏԲ, հ. IV, էջ 774:**

<sup>324</sup> Շնող, Շանիխ, Շեն, Շիմիզ, Շնող-գյուղ ՀԽՍՀ Թումանյանի շրջանում, Գուգարաց լեռնաշղթայի արլ մասում, Շնող գետի գետաբերանի մոտ, Դեբեդի աջակողմ-

յան բարձրադիր սարավանդի վրա, Ալավերդի քաղաքից 16-17 կմ հս-արլ լեռնային անտառապատ վայրում: Ամենուրեք մրգատու այգիներ են: 1831 ուներ 538, 1897թ.՝ 2205, 1926թ.՝ 2298 հայ բնակիչ: Ջրաղվում են անասնապահությանը, պտղաբուծությանը, բանջարաբուծությանը, կերային կուլտուրաների, կարտոֆիլի մշակութային, մեղվաբուծությանը: **ՉՏԲ, հ. IV, էջ 142:**

<sup>325</sup> Ուզունլար, Ուզունլարա, Օծուն, Ուզունլար Ներքին, Ուզունլար Նոր, Ղաչաղան - գյուղ Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառում, 1976թ. վերանվանվել է Արևածագ, ՀՀ Լոռու մարզում, նախկին Թունանյանի շրջանում, Ալավերդի քաղաքից 14 կմ հվ, Ձորագետի ստորին հոսանքի ձախ կողմում, գեղադիր սարավանդի վրա՝ թաղված մրգատու ծառերի մեջ: Հայտնի է վարդագույն ֆելզիտով, որով կառուցվել են Օծունի վանքը, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, Երևանի կառավարական տունը: Բնակչությունը զբաղվել է դաշտավարությամբ, անասնապահությամբ: Ունի փոքր քարաշեն եկեղեցի: **ՉՏԲ, հ. V, էջ 173, հ. I, էջ 423:**

<sup>326</sup> Ալավերդի, Մանասգոմ-քաղաք, ՀԽՍՀ Թունանյանի վարչական շրջանի կենտրոնը: Քաղաքի է վերածվել 1939թ.: Գտնվում է Դեբեդ գետի կիրճում: Այստեղով են անցնում Երևան-Թբիլիսի երկաթուղին և Կիրովական-Թբիլիսի խճուղին: Երևանից հեռու է 191 կմ: 1831թ. ուներ 24, 1873թ.՝ 748, 1926թ.՝ 4500 հայ բնակիչ, մեծ մասամբ՝ հայեր: Քաղաքի առաջին հատակագիծը կազմվել է 1928-30թթ.: Ալավերդի է կոչվել XVII դ. բորչալու կոչված քոչվոր ցեղի ցեղապետներից մեկի՝ Ալլահվերդու անունով: 1770թ. Գյումուշխանեից այստեղ եկած հույն հանքագործները կառուցեցին պղնձածուլական գործարաններ, որ ավերվեցին Աղա-Մահմեդ խանի 1795թ. արշավանքի ժամանակ: Ռուսաստանին է անցել 1801թ.: 1887թ. իշխող դիրք է ձեռք բերում Ֆրանսիական կապիտալը: Տնտեսական զարգացմանը զգալի չափով նպաստեց Թիֆլիս -Ալեքսանդրապոլ երկաթուղու (1899թ.) և Դեբեդի ՀԵԿ-ի (1909թ.) կառուցումը: **ՉՏԲ, հ. I, էջ 67:**

<sup>327</sup> Աղստաֆա-քաղաք Ադրբեջանական ՍՍՀ Ղազախի շրջանում, Կուր գետի հովտում: Երկաթուղային կայարան է Թիֆլիս-Բաքու գծի վրա: **ՉՏԲ, հ. I, էջ 221:**

<sup>328</sup> Երկաթգծի անցած ճանապարհը տես կից դրված քարտեզի վրա:

<sup>329</sup> Քվե-գյուղ Արմ. Հայաստանում Բիթլիսի (Դիարբեքի) նահանգի Գենջի գավառում, Խուլվի գավառակում: XIX դ. վերջին ուներ 12 տուն բնակիչ: Հիշատակում է Գ.Սրվանձտյանը: **ՉՏԲ, հ. V, էջ 441:**

<sup>330</sup> Վերապրածը 1921-22թթ. աշխատել է Դերբենդում, Պետրովսկ Պորտում (Մախաչկալա), Եկատերինոդարում (Կրասնոդար):

<sup>331</sup> Այս դեպքում խոսքը հաչմաս քաղաքի մասին է, որը Ադրբեջանական ՍՍՀ հաչմասի շրջանի վարչական կենտրոնն է: Գտնվում է Կասպիականի ծովամերձ Դիվլի-ժինյան ցածրությունում: Երկաթուղային կայարան է: **ՉՏԲ, հ. 5, եր., 1979:** Քարտեզի վրա տեղադրվում է Բաքու և Դերբենդ քաղաքների միջև: Հավանաբար Հովհաննեսի ազգական Գարեգինը շարունակել էր իր ճանապարհը և հասել Բաքու:

<sup>332</sup> Գնացք:

<sup>333</sup> Ամնիջապես:

<sup>334</sup> Дербенд (от персидского дер-дверь у бенд-преграда), город в Дагестанской АССР. Расположен на побережье Каспийского моря, порт, железнодорожная станция на линии Махачкала-Баку. В 1897г. имел 14,600 жителей. Город развивался к Востоку от построенной в V в. крепости, состоящей из расположенной на холме цитадели (Нарын-кала) и двух идущих от нее к морю каменных стен, которые заперали узкий проход (3 км) между морем и горами Кавказа и ограждали с Северо-Юга территорию города. В XVI-нач. XVIII вв. входил в состав Ирана, в 1722 г. присоединен к России, но в 1735 г. по

Гянджинскому договору отошел к Ирану. В 1747 г. образовалось Дербендское ханство с центром в Дербенде, которое в 1796 г. было занято русскими войсками. По Гюлистанскому договору 1813 г. окончательно присоединен к России. Основное занятие жителей-садоводство, виноградарство и рыбный промысел. В конце 1904 г. здесь была основана социал-демократическая группа. В феврале 1917 г. образовался Совет рабочих и солдатских депутатов. В начале декабря 1917 г. устанавливается Советская власть. С июля 1918 г. по март 1920 г. находился в руках буржуазных националистов. 25 марта 1920 г. Красная Армия освободила город. Делится на две части: верхнюю, старую, с узкими кривыми улочками и тупиками, и нижнюю, с прямоугольной сетью улиц и застроукоу (II-ая половина XIX-XX вв.). *ԵՏՅ, տ. 8, Մ., 1972, с. 109.*

<sup>335</sup> XIX դ. սկզբին (Դաղստանը Ռուսաստանին միանալուց հետո) Դերբենդում սկսել է վերակառգնվել հայկական համայնքը: Նախկին Ս. Ամենափրկիչ եկեղեցուց բացի՝ 1870թ. կառուցվել է Ա. Աստվածածին հայկական եկեղեցին: XIX դ. II կեսին բացվել են հայկական ծխական և Մարիամյան իգական դպրոցները: 1913թ. Դերբենդում ապրում էր 3000 հայ: *«Ղայ Սփյուռք» հանրագիտարան, էջ 466:*

<sup>336</sup> Բնագրում նորթին:

<sup>337</sup> Բնագրում՝ առաջ:

<sup>338</sup> Ղարսի նահանգ-վիլայեթ Յայաստանում, նրա կենտրոնական մասում, կազմվել է 1876թ. Էրզրումի նահանգի Կարսի գավառի տարածքում: Կենտրոնը Կարս քաղաքն էր: Տարածքը մոտավորապես համապատասխանում էր Այրարատյան աշխարհի Վանանդ գավառի ու նրա շրջակա տարածքին: Բաժանվում էր չորս գավառների՝ Արդահան, Կաղզվան, Կարս, Օլթի: 1882թ. ուներ 197438 բնակիչ, որից հայեր էին՝ 31518, մնացածը թուրքեր: Ծաղկել է Ռուսեր: Ուներ 800 բնակավայր: Ձբաղվում էին երկրագործությամբ, անասնապահությամբ, այգեգործությամբ: Համարվում էր հացահատիկի շտեմարան, այստեղից մեծ քանակությամբ ցորեն ու գարի էր տարվում Ռուսաստան, Պարսկաստան: Տնտեսության մեջ մեծ տեղ ուներ անասնապահությունը: 1878թ. Բեռլինի պայմանագրով միացվեց Ռուսաստանին, և դրա տարածքից ստեղծվեց Կարսի մարզը: *ԴՏԲ, հ. III, էջ 72:*

<sup>339</sup> Անի-քաղաք Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Շիրակ գավառում: Գտնվում է Արաքսի ձախ վտակ Ախուրյանի բարձրադիր աջ ափին, ՀՀ Շիրակի մարզի Խարկով գյուղի դիմաց, Հոռոմոսի վանքից՝ Ղոչավանք, 2-3 կմ հեռավորության վրա: Սարավանդի բարձրությունը ծովի մակերևույթից 1500 մ է, տարածքը՝ 3,5 քառ. կմ: Դիրքը բնականից ամուր է, հողերը՝ արգավանդ, ջրերը՝ առատ, հարուստ է շինարարական քարով: Ծաղկել է Բագրատունիների կառավարման շրջանում, 961թ. դարձել մայրաքաղաք: Յայաստանի խորհրդայնացումից հետո՝ 1920-21 թթ., Թուրքիայի հետ բավականին երկար բանակցություններ վարվեցին Անիի ավերակները Յայաստանին միացնելու համար, սակայն ապարդյուն եղան: *ԴՏԲ, հ. I, էջ 265, 272:*

<sup>340</sup> Յայաստանի մասին Աստվածաշնչում տես *Ծննդոց 8:4, Երեմիա 6:27, IV Թագավորաց 19:37, Եսայի 37:38:*

<sup>341</sup> Одинадцатая армия была сформирована в октябре 1918 г. из частей и отрядов, действовавших в западной части Северного Кавказа. После формирования была включена в состав войск Южного фронта, а с 8 декабря 1918 г. - Каспийско-Кавказского фронта. В декабре 1918-январе 1919 гг. армия, имея 5 стрелковых и 2 кавалерийские дивизии, проводила наступательную операцию в целях освобождения от белогвардейских войск г.г. Екатеринодар и Новороссийск. Потеряв 2/3 состава большими от эпидемии сыпного тифа, ранеными

и убитыми, армия оказалась неспособной противостоять белогвардейской Добровольческой армии генерала Деникина и вынуждена была отойти в районы Северной Кресты, Элисты, Владикавказа, Грозного, Кизляра. После захвата в феврале 1919 г. белогвардейскими войсками Северного Кавказа 11 Армия была расформирована. В марте 1919 г. на базе управления и войск Каспийско-Кавказского фронта сформировалась 11 отдельная армия подчинялась главному вооруженных сил республики. В апреле-мае 1919 г. армия воевала против армии Деникина в астраханском направлении, была расформирована 4 июня 1919 г. В середине августа 1919 г. вновь сформирована на базе Астраханской группы войск Восточного фронта, успешно действовала против армии Деникина в районе Царицына (1919) и на Северном Кавказе (январь-февраль 1920) при овладении Баку (апрель 1920). С июля 1920 по май 1921 г. оказывала активную помощь трудящимся Азербайджана, Армении и Грузии в установлении Советской власти в Закавказье. **СВЭ, т. 6, М., 1978, с. 26-27.**

<sup>342</sup> Վերապրածը ի նկատի ունի 1917թ. Հոկտեմբերյան հեղափոխությունը:

<sup>343</sup> Թուրքերը քաղաքը թողել են ապրիլի 22-ին: Այս մասին Խորհրդային Հայաստանի Ալեքսանդրապոլի քաղաքային դումայի նախկին նախագահ Նիկոլայ Կիրակոսյանը ասել է, որ իր և Կարաբեկիրի վերջին տեսակցության ժամին Կարաբեկիրը ասել է. «Սենք զնուճ ենք, գալիս են կարմիրները, տեսեք, հայեր, ձեզ լավ պահեք: Եթե մենք մեկ անգամ ևս եկանք, քարը քարի վրա չենք թողնի Ալեքսանդրապոլում: Ոչ մի ներում չի լինի, մույնիսկ երեխաներին: Բոլորին սրի կքաշենք: Այն, ինչ այս անգամ արեցինք, դա դեռ բարեբախտություն է: Վախեցե՛ք մեր երրորդ գալուց»:  
**Կ.Ալեքսանյան, Թուրքիայի ցեղասպանության քաղաքականության շարունակությունը Ալեքսանդրապոլի գավառում, Բանբեր Հայաստանի արխիվների, թիվ 1, 2005, էջ 24:**

<sup>344</sup> Петровск-Порт-прежнее (до 1921 г.) название города Махачкала в Дагестанской АССР. БСЭ, т. 19, М., 1975, с. 488. Переименован в честь дагестанского революционера Махача Дахадаева в 1922 г. С 1923 г. столица Дагестанской АССР, порт на западном берегу Каспийского моря. 1897г. имел 10000 жителей, 1926г.-34000 жителей. В городе два городских района. Основан в 1844г., на холме Анджу-Арка, как военное укрепление Петровское, 1857 г. переименован в город Петровск-Порт. В 1861-70 гг. велось строительство искусственной гавани и порта. В 1896 г.соединен железной дорогой с Владикавказом, Ростовом-на Дону и Баку, что способствовало значительному увеличению грузооборота порта.В конце XIX-нач. XX вв. возникли крупные предприятия: нефтеперегонный и бондарный заводы, бумагопрядильная и табачная фабрики, железнодорожные мастерские. Первые организации РСДРП появились в 1904г., рабочие Петровск-Порта и станции Петровск-Кавказский активно участвовали в революции 1905-07 гг. Советская власть установлена 1(14) декабря 1917 г. С лета 1918 г. до начала 1920 г. город находился в руках германо-турецких, а затем английских интервентов, белогвардейских отрядов Л. Бичерахова и деникинцев. 30 марта 1920 г. части 11-й Красной Армии совместно с партизанскими отрядами горцев освободили город и восстановили в нем Советскую власть. **БСЭ, т. 15, М., 1974, с. 522.** Расстояние между Петровск-Портом и Дербендом 129-135 км.

<sup>345</sup> Պետրովսկ պորտում հայկական համայնքը ձևավորվել է XIX դ. կեսին: 1877թ. գործում էր Ս. Պողոս-Պետրոս հայկական եկեղեցին: Հայ բնակչության հիմնական

մասը զբաղվել է առևտրով և արհեստներով: Առաջին աշխարհամարտի նախօրեին հայերի թիվը 1000 էր: **«Հայ Սփյուռք» հանրագիտարան, էջ 466:**

<sup>346</sup> Краснодар (до декабря 1920 г. -Екатеринодар), город, центр Краснодарского края РСФСР. Расположен на правом берегу Кубани. Основан как военный лагерь, затем крепость в 1793 г. черноморскими (запорожскими) казаками. С 1860 г. административный центр Кубанской области. В конце XIX в. в Краснодаре зарождаются первые марксистские кружки, 1902 г.возникла социально-демократическая организация. После Февральской революции 1917 г. являлся центром казачьей контрреволюции, возглавлявшейся Кубанской радой 1917-1920 гг. 1 марта 1918 г.отряды Красной Гвардии изгнали белогвардейцев из города. В мае 1918 г. Екатеринодар стал центром Кубано-Черноморской советской республики. 17 августа 1918 г. город был вновь захвачен белогвардейцами и освобожден Красной Армией 17 марта 1920 г.в результате разгрома войск Деникина. **БСЭ, т. 13, М. 1973, с. 333-334.**

<sup>347</sup> 1880թ. Եկատերինոդարում եղել է հայկական ծխական երկու դպրոց: 1907թ. հիմնվել է Կանանց հայկական բարեգործական ընկերությունը, 1908թ.՝ Կովկասյան հայկական բարեգործական ընկերության մասնաճյուղը: 1918թ. քաղաքում ապրում էր 4.500 հայ, 1920թ.՝ 12000: 1920թ. կար երկու հայկական պրոգիմնագիւ: 1918-19 թթ. գործել է Հայոց մշակութային գրական միությունը, որը հրատարակել է «Արծա-գանք» թերթը: 1920-21թթ. (խորհրդային իշխանության հաստատումից հետո) լույս է տեսել «Կարմիր աստղ» թերթը: **«Հայ Սփյուռք» հանրագիտարան, էջ 471:**

<sup>348</sup> Кубань-река в Ставропольском и Краснодарском краях России. Кубань судходна от Краснодара до устья. На реке города Карачаевск, Черкесск, Невинномысск, Армавир, Новокубанск, Кропоткин, Усть-Лабинск, Краснодар, Темрюк. **БСЭ, т. 13, с. 544-545.**

<sup>349</sup> Վարդանյու, Վարդանլի, հնձորուտ-գյուղ Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառում, Ղարաբիխայի ոստիկանական շրջանում: **ՀՏԲ, հ. IV, էջ 778-779:**

<sup>350</sup> Սանահին, Սանահին-գյուղ ՀԽՍՀ Թումանյանի շրջանում, Դեբեդ գետի աջափնյա բարձրադիր սարահարթի վրա: Հնում մտնում էր Մեծ Հայքի Գուգարք աշխարհի Տաշիրոք գավառի մեջ: Արլ կողմում ձգվում էին Աստվածածնա, արմ՝ Սևորյաց ձորերը: Ունի գեղատեսիլ դիրք, առողջարար, ամառանոցային կլիմա: Շրջակայքում կան անտառներ: Թաղված է մրգատու այգիների ու բանջարանոցների մեջ: 1886թ. ուներ 335, 1897թ.՝ 466, 1922թ.՝ 663, 1926թ.՝ 667 հայ բնակիչ: 1967թ. մտնում է Ալավերդի քաղաքի շրջագծի մեջ: Սանահինի շրջակա հողատարածությունների մեծ մասը XIX-XX դդ. սկզբներին պատկանում էր Արղության-Երկայնաբազուկների գեղրաստանին, մի մասով էլ՝ Սանահնի վանքին: **ՀՏԲ, հ. IV, էջ 493:**

<sup>351</sup> Թբիլիսի-մինչև 1936թ. Թիֆլիս, Տփղիս: Այստեղ 1917-18 թթ.գործել է հայոց ազգային խորհուրդը: XIX դ. արևելահայ լուսավորչական շարժման խոշորագույն կենտրոններից է: 1823թ.գործել է հայկական տպարան: Լուսավորչական շարժանը նպաստել են մի շարք կազմակերպություններ՝ Թիֆլիսի հրատարակչական ընկե-րությունը (1880թ.), Հայուկիաց բարեգործական ընկերությունը: Այստեղ հրատա-րակված առաջին պարբերականը «Կովկասն» է (1846թ.), հաջորդը՝ Կովկասի առա-ջին հայ աշխարհաբար շաբաթաթերթը՝ Գ.Պատկանյանի «Արարատը»: Թիֆլիս այ-ցելած ժ. Տուրնֆորը նշել է, որ քաղաքի 20000 բնակչից 14500 հայեր են: Սա հաս-տատել է Վախտշին XVIII դ.: XIX դ. բնակչության թիվը աճել է հայերի ներգաղթի պատճառով: 97 համբարություններում մեծամասնություն են կազմել հայերը: 1890թ. այստեղ է հիմնադրվել Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցու-թյունը: **Հայկական համառոտ հանրագիտարան, հ. II, եր., 1995, էջ 275-276:**

<sup>352</sup> Եղիշե Քաջունին այս մասին գրում է.«[Մայիս] 22ին Ղարաքիլիսեի անկման սգաւոր օրն էր. այդ օրը շատ զհնուորականներ կորսցնելով, թողելով Կորպուսը, որը ուղղուած էր Դիլիջան, փութով կը դիմէին դէպի Թիֆլիս՝ ազատելու յոյսով: Սակայն Ղարաքիլիսեի, աւելի ճիշդը՝ Սանահինի և Թիֆլիսի մէջտեղ կայ Բորչալու թրքական շրջանը, աւազակաբարոյ շրջան մը, որոնք քանիցս կտրած էին երկաթուղագիծը՝ արգիլելու համար դէպի ֆրոնտ զինուորական ուժերու առաքումը եւ կտտորած ու թալանած բազմաթիւ կառախումբեր: Այդ օրը Ջօրավար Անդրանիկի պահակները բազմաթիւ զինուորականներ բռնած էին, որոնք կը փորձէին անցնիլ դէպի Թիֆլիս, փոխանակ հետեւելու իրենց զինուորական հրամանատարին, Կորպուսին: Չուր էին Անդրանիկի խօսքերը՝ համոզելու, որ չէրթան Թիֆլիս: Վստահելի ալ չէր այն խոստումը, որ տուին անոնք՝ չէրթալ Թիֆլիս, այլ մնալ Անդրանիկին հետ, Կորպուսին հետ: Յաջորդ առաւօտ արդէն անոնք ուղղուած էին դէպի Թիֆլիս: Այդ խումբերէն շատ, շատ քիչեր միայն ազատուած կը լինեն, թերեւ: Ստոյգ է, որ գրեթէ բոլորը ինկած են Բորչալուի բարբարոս թիրքերուն ձեռքը եւ անխնայ կտտորուած»: **Նշվ. աշխ., էջ 31:**

<sup>353</sup> Ջոջկան, Չոչկան, ճոճկան Կարմիր-գյուղ ՀՀ Թումանյանի շրջանում, Ալավերդի շրջկենտրոնից 20-21 կմ հս-արլ, Դեբեդ գետի ձախ կողմում, Վիրահայոց լեռնաշղթայի հարավահայաց բարձրադիր լանջին: Շրջակայքում ընդարձակ դաշտեր են, թաղված է մրգատու ծառերի մեջ: Կլիման մեղմ է: Խմելու ջուրը տեղից է: 1873թ. ուներ 501, 1897թ.՝ 646, 1926թ.՝ 1071 բնակիչ: Զբաղվում էին անասնապահությամբ, պտղաբանջարաբուծությամբ: Գյուղի եկեղեցին կառուցվել էր XIX դ. Լոռի-Մելիքովի մոր ծախսերով: Գյուղը XIX դ. վերջերին եղել է գեներալ Լոռի-Մելիքովի և իշխան Լևոն Մելիքովի կալվածքը: Կա նաև համանուն ձոր և գյուղախումբ: **ՀՏԲ, հ. III, էջ 617:**

<sup>354</sup> Բոլնիս-խաչեն, Բոլնիս Մեծ, Բոլնիս-քաղաքատիպ ավան Վրացական ՍՍՀ Բոլնիսի շրջանում, նրա վարչական կենտրոնը: Գտնվում է Վանաձոր-Թբիլիսի ավտոմայրուղու աջ կողմում, հարթավայրում, Կուրի ավազանի Բոլնիս գետակի վրա, Խաչենի քարաժայռի ստորոտում: 1907թ. ուներ 380, 1914թ.՝ 607 հայ բնակիչ: Բնակիչները զբաղվում էին խաղողագործությամբ, պտղաբուծությամբ, բանջարաբուծությամբ, դաշտավարությամբ, անասնապահությամբ: Հայտնի է բալով և կենասով: **ՀՏԲ, հ. I, էջ 720-721:**

<sup>355</sup> Владикавказ, до 1931 г. название г.Орджоникидзе, столицы Северно-Осетинской АССР, с 1944-1954 гг. Дзауджикау БСЭ, т. 5, М. 1971, с. 141. Расположен на реке Терек, 1897г. имел 44000 жителей, в 1926 г.-78000. Основан в 1784 г., близ селения Дзауджикау, как Владикавказская крепость для охраны Военно-Грузинской дороги. В 1860 г. преобразована в город Владикавказ. С 1863 г. центр Терской области. В 1875 г. соединен Владикавказской железной дорогой с Ростовом-на Дону. В конце XIX в. в городе было 54 фабрики и завода с годовым оборотом 2 млн. руб. Советская власть правозглашена в ноябре 1917 г. В феврале 1919 г. захвачен Деникиным, в марте 1920 г. освобожден Красной Армией. БСЭ, т. 18, М., 1974, с.495.

<sup>356</sup> Казбек (грузинское Мкинвари-ледяной, осетинское Урсхох-белая гора), вершина Бокового хребта Большого Кавказа, поднимающаяся над долиной Терека, вблизи Военно-Грузинской дороги. Главная вершина-восточная, высота 5033 м, западная вершина на 400 м ниже Казбека-потухший вулкан высота 370 м. Вершина покрыта вечными снегами и фирном. **БСЭ, т. 11, М., 1973 г., с. 178.**

<sup>357</sup> XVIII դ. վերջին-XIX դ. սկզբին քաղաքի կենտրոնում գտնվող Արմյանսկայա փողոցում կառուցվել է Ս.Գրիգոր Լուսավորիչ քարաշեն եկեղեցին, որին կից գործել է

հայկական ծխական դպրոց, որը փակվել է 1885թ.: 1913թ. այստեղ ապրում էր 5000 հայ, 1920թ՝ 6.500 հայ: Հայերի թիվը ավելացել է Առաջին աշխարհամարտի տարիների: **«Հայ Սփյուռք» հանրագիտարան, էջ 467:**

<sup>358</sup> Армавир, город в Краснодарском крае РСФСР. Расположен на левом берегу реки Кубани при выходе ее из северных предгорий Большого Кавказа. Узел железнодорожных линий (на Ростов на Дону, Туапсе, Баку) и шоссеиных дорог. Второй после Краснодара промышленный центр края. Основан в 1839 г., с 1914 г.-город. В период гражданской войны 1918-20 гг. в районе Армавира происходили ожесточенные бои. Здесь закончился поход Таманской армии. Советская власть установилась в марте 1920 г. **БСЭ, т. II, М., 1970, с. 209.**

<sup>359</sup> 1828-38 թթ. Կուրբան գետի ափին չերքեզահայերը հիմնել են չորս բնակավայր, որոնք 1839թ. միավորվել են մեկ գյուղի՝ Արմյանսկի առևի մեջ: 1848թ. Ստավրոպոլի հայերի հոգևոր առաջնորդ Պետրոս Պատկանյանի առաջարկությամբ առևը վերանվանվել է Արմավիր: Բնակչության թիվը 1.500 է: 1914թ. ստացել է քաղաքի կարգավիճակ, քաղաքն ուներ 8000 հայ բնակիչ: 1920թ.՝ 15000 հայ, Արմավիրը դարձել է Հայ առաքելական եկեղեցու Հս Կովկասի և Աստրախանի թեմի կենտրոնը (մինչև 1966թ.), հայերը մասնակցել են հեղափոխական շարժումներին: Գործել են ՀՅԴ և ՍԴՀԿ կուսակցությունների բաժանմունքները: **«Հայ Սփյուռք» հանրագիտարան, էջ 471-472:**

<sup>360</sup> Белая гвардия, 1) наименование буржуазной милиции, созданной в Финляндии в 1906 г. для борьбы с революционным движением. Отличительным знаком Белой гвардии были белые нарукавные повязки. 2) Во время Гражданской войны и военной интервенции 1918-20 гг. так неофициально именовались военные формирования, борющиеся за восстановление буржуазного строя. Этот термин применялся к контрреволюционным национальным военным формированиям (белофинны, белополяки, белочехи) и к контрреволюции вообще. Происхождение термина связано с традиционной символикой белого цвета, как цвета сторонников законного правопорядка в противопоставление красному цвету-цвету крови восставшего народа, цвету революции. **БСЭ, т. III, М., 1970, с. 100.**

<sup>361</sup> Деникин Антон Иванович (4.12.1872 г. округ Варшавы-8.8.1947 г., Анн-Арбор, штат Мичиган, США, один из главных руководителей всероссийской контрреволюции во время Гражданской войны 1918-20 гг., генерал-лейтенант (1916 г.). Родился в семье офицера. Окончил Киевское пехотное юнкерское училище (1892 г.) и Академию Генштаба. Во время Первой мировой войны командовал бригадой, дивизией, с осени 1916 г. 8-м армейским корпусом на Румынском фронте. В апреле-мае 1917 г. начальник штаба верховного главнокомандующего, затем командовал войсками Западного и Юго-Западного фронтов, активный участник Корниловщины. 19 ноября 1917 г. вместе с А.Г. Корниловым бежал из Быховской тюрьмы на Дон, где участвовал в создании Добровольческой армии, которую возглавил после гибели Корнилова 13 апреля 1918 г. Осенью 1918 г. при содействии Антанты стал главнокомандующим контрреволюции. Командовал "Вооруженными силами Юга России" (ВСЮР), был заместителем верховного правителя России адмирала А.В.Колчака. Летом-осенью 1919 г. руководил походом на Москву. После разгрома белогвардейцев в марте 1920 г. с остатками армии эвакуировался в Крым, где 4 апреля сдал командование генералу П.Н. Врангелю и отправился на английский эсминце в Константинополь. По политическим взглядам примыкал к кадетам и выступал

за буржуазную парламентарную республику. К началу 1919 г. Деникину удалось подавить Советскую власть на Северном Кавказе, объединить под своим командованием казачьи войска Дона и Кубани, получить через черноморские порты большое количество оружия от запада. Весной и летом 1919г. после длительных боев войска Деникина заняли Донбас и область от Царицына до Харькова, Екатеринослава, Александрова. В походе на Москву участвовало 153000 штыков и сабель, 500 орудий, более 1900 пулеметов. Преобладала конница по сравнению с Красной Армией. Целью являлось отвлечение внимания крупных сил Красной Армии решающими боями против войск адмирала А.В.Колчака. **БСЭ, т. VIII, М., 1972, с. 96.**

<sup>362</sup> Новоросси́йск-город краевого подчинения в Краснодарском крае РСФСР. Основан в 1838 г. как укрепления на месте разрушенной в 1912 г. русскими войсками турецкой крепости Суджук-Кале (с 1722 г.). С 1836 г. центр Черноморского округа, в 1896-1920 гг.-центр Черноморской губернии. В 1892 здесь организовалась марксистская группа, затем социал-демократические кружки. В декабре 1905 г. в результате вооруженного восстания власть перешла в руки Совета рабочих депутатов. Советская власть установлена 1 декабря 1917г. 18 июня 1918 г. в бухте города была затоплена часть кораблей Черноморского флота, чтобы они не попали в руки кайзеровской Германии. 27 марта 1920 г. освобожден Красной Армией. **БСЭ, т. 18, М. 1974 г., с.75.**

<sup>363</sup> Արշուտ, Արջուտ, Արջիտի-գյուղ ՅՍՍՀ Գուգարքի շրջանում, Կիրովականից (Վանաձոր) ժղանով գյուղից 6 կմ հս-արմ, Կիրովական-Սպիտակ ավտոխճուղու աջ կողմում, բլրապատ, մեղմաթեք լեռնալանջի վրա, թաղված խնձորենիների, սալորենիների ու մրգատու այլ ծառերի մեջ։ Դիրքը գեղատեսիլ է, տները՝ քարակերտ։ 1897թ. ուներ 574, 1926թ.՝ 823 բնակիչ։ Զբաղվում էին անասնապահությամբ, դաշտավարությամբ, բանջարաբուծությամբ, մեղվաբուծությամբ։ Գյուղից երկու կմ հեռավորության վրա է գտնվում Արջուտ ավանը համանուն երկաթուղային կայարանին կից, որի բնակիչները զբաղվում էին երևան-Թբիլիսի երկաթուղու սպասարկմամբ։ **ՃՏԲ, հ. 1, էջ 483-484:**

<sup>364</sup> Բնագրում՝ դոբրովոյնի:

<sup>365</sup> *Стэн Армянский вопрос, с. 191-192.*

<sup>366</sup> Այստեղ հուշապատումը ընդհատվում է:

<sup>367</sup> *Գ. Ստեփանյան, Երզնկա, էջ 608-609:*

## Օտար բառերի և արտահայտությունների բառարան

*Բառարանում քերում ենք գրքում գործածված բոլոր օտար բառերն ու արտահայտությունները՝ նշելով դրանց բացատրություններն ու իմաստները: Օտար բառերի բացատրությունը նշելիս նկատի ենք ունենել որևէ բառի իմաստն ընդհանրապես, նաև ստույգ կամ մոտավոր իմաստը, որով տվյալ բառը գործածվում է հուշապատումի մեջ: Ակնհայտ է, որ արաբերեն և պարսկերեն մի շարք բառեր վերցված են անմիջապես թուրքերենից: Բառերի ուղղագրությունը պահել ենք բնագրին համապատասխան՝ ընդգրկելով նաև ժամանակակից գրական ուղղագրությունը և բարբառային ու խոսակցական ավելի շատ տարածում գրած որոշ ձևեր: Տվել ենք նաև ճիշտ տառադարձումը:*

**Աբաղ, արամակ-թեքվել,** դառնալ, հավասարությունը դեպի, հավասարում:

**Աբասի, աբբասի-** պրսկ. արծաթ դրամ:

**Աբլավա, աբլավ-ռու.** շուրջկալ, խուզարկություն:

**Աբոզ, օբոզ-** ռուս. գումակ:

**Ադիալ, օդեյալո-** ռուս. ծածկոց:

**Ազիզ-արբ.** սիրելի, լավ, թանկագին, սուրբ:

**Աթեշ-** թրք. կրակ:

**Ալաման-** թրք. գերմանացի:

**Ալամանիա, Ալմանիա-** թրք. Գերմանիա:

**Ալդըմզը-** հրամայել, ստիպել:

**Ալթըն, ալթուն-** ոսկի:

**Ալլահ, ալլախ-** արբ. Աստված:

**Ախմախ-** արբ. հիմար:

**Աղա-** թրք. աղա, (դրվում է հատուկ անունից հետո), տեր, պարոն, ունևոր գյուղացի, ավագ եղբայր, եղբայր (կոչական): Պատմական՝ որոշ պաշտոնավոր պետերի և դեմքերի տիտղոս, կոչում հին Թուրքիայում: Պատմական՝ որոշ մանր պաշտոնավոր դեմքերի և արհեստավորների տիտղոս, կոչում: Պատմական՝ ցածր և միջին սպաներին տրվող տիտղոս, կոչում:

**Ամալե, ամալե, ամէլե, ամալիա, ամալյա, համալիա, համալե-**

արբ. աշխատավորական, բանվորական, աշխատանքային:

**Ամի, ամմի**-արբ. հորեղբայր:

**Անա, աննա, աննե**-թրք. մայրիկ:

**Ասլան**-քաջ, առյուծ:

**Ասլյար, ասքյար, ասքեր, էսկեր**-արբ. զինվոր, զինվորներ, զորք, զինվորական գունդ:

**Ավադ, էվեթ**-թրք. այր:

**Ավտո**-լատ. մեքենա:

**Արաբա**-ֆուրգոն, կառք, սայլ, վագոն:

**Արադ**-խոսակցական՝ օղի:

**Աֆանդիմ, էֆենդիմ**-պարոն:

**Աֆարիմ**՝ խոսակցական, **աֆերիմ**-պրսկ. բրավո, ապրես, հիանալի, շատ լավ, գերազանց:

**Աֆիցեր, օֆիցեր**-ռուս. սպա:

**Բարա**-թրք. հայր, պապա, ծնող, փոխաբերական՝ բարերար, հայր հարազատ: Շեյխ (որոշ դերվիշական օրդենների, միաբանությունների գլուխ), շեյխերի տիտղոս:

**Բազլիկ**-պղծել, կապվել, բաժին:

**Բազար, պազար**-պրսկ. շուկա, առևտուր, վաճառք, վաճառատեղ:

**Բալկոն**-ռուս. պատշգամբ:

**Բախիմ**-կապ, կախվածություն:

**Բալքիմ, պելքի**-թերևս:

**Բահո**-քննարկում:

**Բանկա**-ռուս. մետաղյա կամ ապակյա գլանաձև անոթ:

**Բանկանոտ, բանկնոտ, փոնկնոտ**-թուրքական թուղթ փող:

**Բաշ, պաշ**-թրք. գլուխ, գլխավոր, առաջնորդ, ազնիվ:

**Բաջի, բաճի, բաջը**-թրք. (ավագ) քույր, դայակ, մորաքույր, կողակից, հորաքույր, հորեղբոր կին:

**Բաս**-խոսակցական՝ գրագ:

**Բասեիմ**-լողավազան:

**Բարակ, բառաք**-իտ. հյուղակ:

**Բարբառ, բարբար**-սափրիչ: Բար բրբ. դեմք, երես, հանդիպում է

Սասունի և Վանի խոսվածքներում:

**Բեկ-արք.** տիտղոս, որ տրվում էր կրտսեր զինվորականներին և մանր ֆեոդալներին:

**Բեյ, պեյ, բեյ-թրք.** բեյ, պարոն, ցեղի, տոհմի առաջնորդ, հասուկ անունների բաղադրիչ Իհչան Բեյ:

**Բիճա-ձերուկ:**

**Բինբաշի, պինբաշի-** թրք. մայր (ռազմական աստիճան), հազարապետ:

**Բինտ-բինտ,** երիզ, վիրակապ, վիրակապ ժապավեն, կապ:

**Բիր-մեկ:**

**Բիրդա-նորից,** մեկ էլ:

**Բողազ, պողազ-արք.** կոկորդ:

**Բողչա, բոխչա, բոհչա-** թրք. քառակուսի կտոր, գործվածք, գլխաշոր (որի մեջ իրեր են փաթաթում), փաթեթ, ծրար, կապոց:

**Բոմբ-ռումբ:**

**Բոյ, պոյ-թրք.** բարձրություն, հասակ, երկարություն, ցեղ, տոհմ, համայնք:

**Բոյ-ռու.** ճակատամարտ:

**Բոչկա-ռու.** տակառ:

**Բոստան-բանջարանոց:**

**Բուղա-արք.** հրամանատար, պետ, առաջնորդ:

**Բուտկա, բուդկա-ռու.** պահակախցիկ, փայտե տնակ:

**Բուրդա-ալստեղ:**

**Բուրդոկալ, պոռտակալ-նարինջ:**

**Գաղլա, գախլե-արք.** հոգսեր, հոգսաշատ գործ:

**Գայմակամ, կայմակամ, կայկամ, քայմաքամ, դայմադամ, դայի-մախամ, դայմագամ, դայկամ-թրք.** կուսակալի տեղակալ, տեղապահ, գավառապետ, ժամանակավոր պարտականություններ կատարող, տեղակալ, փոխարինող, ռազմական, հնացած՝ փոխզնդապետ:

**Գաստինիցա, գոստինիցա-հյուրանոց:**

**Գարաժ-ավտոտնակ:**

**Գեներալնի-լատ.** գլխավոր, ընդհանուր, հիմնական:

**Գյավուր, գյաուր, գավուր, գյավուր, գյաուր, կյավուր, գավիր-**պրսկ. գյաուր, անհավատ, ոչ մահմեդական, քրիստոնյա, անաստված, հեթանոս, այլադավան, սրբապիղծ մարդ, դաժան, անխիղճ, անսիրտ, երդմնազանց, ուխտադրուժ:

**Գյավուրլարա-**անհավատի մեկը:

**Գյավուրողի, գյաուրողի-**պարսկ.թրք. հեթանոսի տղա, այլադավանի տղա, անհավատի տղա:

**Գյոզ-**աչք, անցք, լուսամուտ:

**Գյոզլարին-**աչքերդ:

**Գյորդում, գյորդումեկ-**ցույց տալ, ստիպել ինչ-որ բան անել:

**Գյուզալ, գյոզալ, գյուզել-**թրք. գեղեցիկ, հիանալի:

**Գյուզալի, գյոզալի-**գեղեցկուհի:

**Գոռե-**համաձայն:

**Գաբբա, դաբբե-**արբ. հեծնելու, բեռնակիր կենդանի:

**Գաբախանա, թաբախանա, դեբբադհանե, դաբբախանե, դաբբահանե-**արբ. կաշեգործարան, կաշեմշակման արհեստանոց:

**Գաբադա-**դաբադանոց, դաբադարան, աղադորդ, աղադոց, դաբադ:

**Գաբանջա-**կաշեգործ, պարսատիկ:

**Գալ-**մեջք:

**Գալի-**հարթավայր:

**Գալիքյահա-**ամայի տափարակ, դաշտ, հարթավայր:

**Գակ, դաք-**անկարող:

**Գահուլ-**դիող:

**Գարիդայնա, դելիքանը-**երիտասարդ:

**Գարման, դերման-**պրսկ. ուժ, ամրություն (ֆիզիկական), դեղ, բուժիչ միջոց, դեղամիջոց, բուժամիջոց, դարման, փրկություն, պրծում, ազատություն, սփոփում:

**Գեսյատնիկ-**ռուս. տասնապետ:

**Գենչիկ, դենչիկ-**ռուս. սպասյակ, զինվորական սպասավոր, ծառայող, զինվոր, որը ծառայում է բարձրաստիճան սպային:

**Գիկի-**վայրի, վայրենի:

**Գինինի-**կրոնի, կրոնական:

**Գիվիզիա**-լատ. դիվիզիա, զինվորական ստորաբաժանում:  
**Գորբավոյնի, դոբրովոյնի**- ռուս. կամավոր:  
**Գոնդար, դյոնդար**-պտտվել, պտտել, վերադառնալ:  
**Գրագուն**-ռազմ. հեծելագործի տեսակ, հեծյալ գունդ, հեծյալ:  
**Գուրան**-հարթ, տափարակ:

**Չաբիթ, գաբիտ, գապիթ, գաբիդ**-թրք. քաղաքապետ, իշխան, ոստիկան, պետ:

**Չաբուն**-նիհար:

**Չավտրա**-ռուս. վաղը, էգուց:

**Չատվոռ**-ռուս. փականք, սողնակ, փակաղակ:

**Չեմյանկա**- ռուս. գետնափոր կացարան:

**Չոռ, գոռ**-պրսկ. ուժ, հզորություն, կարողություն, բռնություն, հարկադրում, ստիպում, անհրաժեշտություն, նեղություն, դժվարություն, ժող.՝ տանջանք, տառապանք:

**Չոռել**-բռնանալ, բռնադատել, խոսակցական՝ դժվարանալ:

**Չորը**-պրսկ. դժվար:

**Չոռով, գոռով**-պրսկ. հազիվ: Խոսակցական՝ ստիպողաբար, դժվարությամբ, դժվար:

**Չուլում**-արբ. անարդարություն, աղետ, մեծ չարիք, անհրավություն, բռնություն, բռնակալություն, բռնապետություն:

**Էզան**-արբ. աղոթքի կոչ (մուէզինի կողմից կատարվող):

**Էնթու, էնդի**-բրբ. այն կողմ:

**Էսկի**-հին, հնագույն:

**Էֆենդի**- թրք. էֆենդի, տեր, պարոն, սեփականատեր, ազնիվ, դաստիարակված, վեհանճն, ազնվաբարո:

**Էֆերիմ**-տե՛ս **Աֆարիմ**:

**Թարաղ**-ափսես:

**Թարուր, թարր, թափոր, թափուր, թրբուռ, տարր** -թրք. ռազմական գումարտակ, դիվիզիոն, շարասյուն, ջոկատ, ռազմական հատուկ միավոր, տարր, գումարտակ, գունդ:

**Թաղը, թաթ**-համ, ինչ-որ բան փորձել:

**Թագա, քաժա, քազէ**-պրսկ. թարմ, ամուր, ուժեղ, առողջ, նոր: Թարմ, ջահել՝ կնոջ մասին, ջահել կին –նոր:

**Թագբահ, քագբեհ, քեսպիհ, քեսբիհ, քագբեհ, քագբէ, քագբէխ**-թրք. քագբեհ, տերողորմյա, համբիչ, վարդարան:

**Թագի, քերզի, քըրզի**-թրք. դերձակ:

**Թալալ, քալի**-արբ. ինչ-որ մեկին, բանին հետևող:

**Թահթ, քախթ, քաղթ, քախտ**-պրսկ. գահ, գահույթ:

**Թամալահ**-պատիվ:

**Թամալահ**-պատիվ տալ, պատվի կանգնել:

**Թամբալ-ծույլ, լողր, անբան:**

**Թանդիր, թոնիր, թունդիր**-արբ. թանդիր, թոնիր, հողի մեջ փորված օջախ:

**Թապիմ, քեսլիմ, քեսլիմ**-արբ. ընծայում, ապավինում, հանձնում, փոխանցում, անձնատուր լինել, կապիտուլյացիա, հանձնվել:

**Թէսլիմ օլ**-հանձնվի՛ր, ընծայվի՛ր, ապավինի՛ր -հանձնվել:

**Թարա, քարե, քարեք**-դարակ:

**Թարաքյմեքը, քարաքյմա**-գող, ավազակ, թալանչի, բաշխբոզուկ:

**Թափել, քաբլել**-զցել, նետել:

**Թարաֆ**-կողմ:

**Թեզ**-արագ:

**Թէրեքէմէնի**-խաշնարած թուրքեր:

**Թոփ**-զնդակ, հրանոթ, թնդանոթ:

**Թոփալ**-թրք. կաղ:

**Թուլա**-լակոտ:

**Թունջ, թուջ**-խոսակցական՝ բրոնզ:

**Ժանդարմա, ջանդարմա**-նստիկան, ժանդարմ, ժանդարմերիա:

**Ժեշտ**-ռուս. թիթեղ:

**ժնջիլ, գնջիլ**-շրթա:

**Իլաջ, իլաժ**-արբ. դեղ, դարման, թուրմ:

**Իլար, իլարի**-առաջ, առջև, առջևից, զարգանալ:

**Իյալի, իյալա, եալա**-աճապարել, այս կողմ:

**Լապատկա, լապատա-ռուս.** բահ:

**Լեյտենանտ-ֆր.** զինվորական տիտղոս՝ կապիտանի տեղակալ:

**Լողկա-ռուս.** նավակ:

**Լուլա-բարակ** սնամեջ խողովակ:

**Խաբար, հաբեր, խապար-արբ.** լուր, տեղեկություն, ազդարար, հաղորդում, նորություն:

**Խազեին, խոզյաին-տեր:**

**Խան, հան-պատմական** տիտղոս՝ խան, արսկ. իջևանատուն, իջևան, օբևան, պանդոկ, քարվանսարա, գործարարական տուն, որ-տեղ տեղավորված են զանազան հաստատություններ, հիմնարկութ-յուններ ու գրասենյակներ:

**Խան, հանե, խանե-պրսկ.տուն,** բարդ բառի երկրորդ մաս՝ սրահ, գետեղարան, շենք, տեղ, խանութ, կրպակ, իջևանատուն:

**Խանում, հանըմ-թրք.** խանում, տիկին, տիրուհի, տանտիրուհի, տանտիկին, օրիորդ:

**Խզմատչի-բանվոր,** զինվորական ծառայության մեջ եղած ծառա:

**Խզմաթքյար-բանվոր:**

**Խշտիզ, շտիկ-սվին,** տեգ, միզակ:

**Խո-հո:**

**Խոխա-տե՛ս հոխա:**

**Խումար- մախմուր:**

**Կագա-գավառակ:**

**Կագարմա-գորանոց:**

**Կակալ, կագալ-ընկույզ,** խոսակցական՝ պոպոկի միջուկ:

**Կամանդ, կոմանդա-հրաման,** կարգադրություն:

**Կամենդանտ, կոմենդանտ-պարետ,** բերդակալ:

**Կաշկա-սալլակ, սալլ:**

**Կապիտան-լատ.** սպայական տիտղոս, գորահրամանատար:

**Կապլի-կաթիլ, կաթիլներ:**

**Կառավատ (кровать)-մահճակալ:**

**Կառզինա, կառզինկա-կողով, գամբյուղ:**

**Կասաբ, դասաբ, կասապ, քասափ, դասապ**-արբ. ուղիղ և փոխաբերական իմաստով՝ մսավաճառ, մսագործ:

**Կարակուլ**-ոչխարի տեսակ:

**Կարտուլ**-խոսակցական՝ կարտոֆիլ:

**Կոպալ, կոպալ**-խոսակցական՝ փայտ, ձեռնափայտ, հաստ գլխով գավազան, ցուպ, մահակ:

**Կոպեկ, կոպեյկա**-ռուս. ռուսական մանրադրամ:

**Կոպտորգ, կոոպտորգ**-կիսամասնավոր խանութ:

**Կոիշ, կոիշա**-տանիք:

**Կրուպա**-ձավար, կորկոտ:

**Կովանի**-խոհանոց:

**Կուբ**-խորանարդ:

**Կուկուշկա**-կկու, տվյալ դեպքում գնացքի տեսակ:

**Կուրբան, կորբան, դուրբան, քուրբան**-արբ. զոհաբերվող կենդանի, մատաղ, զոհ:

**Կուրբան բայրամը, Ղուրբան բայրամ**-մուս. լուսնային օրացույցի տասներկուերորդ ամսում կատարվող զոհաբերության տոն:

**Հազըր**-արբ. պատրաստ, ներկա, առկա, ի վիճակի:

**Հալ**-արբ. վիճակ, դրություն, պարագա, հանգամանք, կացություն:

**Հալա, հլը, հըլա, հըլը**-արբ. այս պահին, դեռ:

**Հալալ, հըլալ**-թույլատրելի, արդար:

**Հալան**-դեռ:

**Հախ**-արբ. իրավունք, ճշմարտություն, մասնաբաժին, բաժին, վարձ, աշխատավարձ:

**Համալ, ամէլ, համէլ**-արբ. գործ, գործողություն, աշխատավոր, բեռնակիր, աշխատանքային գործիք՝ տե՛ս դանթար:

**Հայաթ**-արբ. կյանք, գոյություն: Բարբառային՝ տան արտաքին սրահ (ծածկված) նախասենյակ, նախասրահ, տան առջև գտնվող բակ:

**Հանաթ**-պարսկ. կատակ:

**Հաջ, հաճ**-արբ. մուսուլմանական հաջ՝ ուխտագնացություն Մեքքա, որը կատարվում է զիլխիջ ամսին:

**Հաջի, հաճի**-արբ., թրք. ուխտավոր, ուխտագնաց, մահտեսի, կո-

չում, որ տրվում է Մեքքայից եկած ուխտագնացին:

**Հավար-**շտապ, խոսակցական՝ վռագ:

**Հարդա-**ծանր եմ:

**Հելլու-**անգլ. ողջույն:

**Հերու-**բրբ. անցած տարի:

**Հեքում, հյուքում, հուքմ, յուքմ-**արբ. հրաման, դատաստան, կամք, վճիռ:

**Հեքումյաթ, հյուքումեթ, հյուքիմեթ, հուքիմեթ, հյուքիմես-**արբ. կառավարություն:

**Հյուր-**ազատություն:

**Հյուրաթ-**ազատության:

**Հոլիկ-**հյուղակ:

**Հոխա-**երեխա, չափի միավոր:

**Ղալմաղալ-**կռիվ, մեծ աղմուկ, աղմուկ-աղաղակ:

**Ղալմագ-**անիրավ:

**Ղայրման-**հերոս:

**Ղայֆա, ղայֆե, ղահե, ղայֆե, ղահֆե, կայֆա, կահե, կահվե-**արբ. սուրճ, կոֆե:

**Ղայֆախանա-**սրճարան:

**Ղայֆաջի-**սուրճ եփող, սրճարանի տեր:

**Ղանթար-**կշեռք, չափի միավոր:

**Ղաշարլանմակ-**ծերանալ, հմտանալ:

**Ղաշտը-**փախչել:

**Ղաուրմա, ղավուրմա, կավուրմա, կաուրմա, կաղուրմա, քավուրմա-**թրք. ղավուրմա, տապակած, խորոված, չորացրած, շիկացրած: Սառը ձևով պահվող տապակած միս:

**Ղոնախ-**հյուր:

**Ղուլ, ղուլի, կուլի-**թրք. ստրուկ-զինվոր (գվարդիական զինվոր), այստեղից՝ **ղուլուխ, կուլուխ, կուլուխ, քուլուք, ղուլուխ, քուիկ, քուլեկ-**թրք. ստրկություն, հնացած՝ պահակակետ, դիրք, կետ, պոստ, պահականոց, պահակատնակ:

**Ղուրուշ, կուրուշ, ղուրուշ, քուրուշ-**ղուրուշ՝ թուրքական լիրայի հարյուրերորդ մասը, պիաստր:

**ճամաթ, ջամահաստ**-շրջապատ, մարդիկ, ժողովուրդ:  
**ճենջ**-յուղ:

**Մագ-քսուք**:

**Մալ**-արբ., թրք. խոշոր եղջերավոր անասունների խումբ, հարստություն, ապրանք, գույք, ոսկի, արծաթ, սեփականություն, կարողություն:

**Մալական, մոլոկան, մոլոկանին**-օրթոդոքս եկեղեցուց անջատված աղանդավորական:

**Մալատլնի, մալոսլնի**-թույլ աղած:

**Մախորկա**-վատատեսակ ծխախոտ:

**Մահանա**-պատճառ:

**Մանա, մանի**-խոչընդոտ:

**Մասխուզ, մախուզ, մախսուս**-դիտմամբ, դիտավորյալ:

**Մեյդան, մէյդան, մէյտան, միյտան**-արբ. հրապարակ, վարժահրապարակ, դաշտ:

**Մեշոկ**-պարկ:

**Մեսաբ, մեսաբե, մէսաբէ**-դիրք, վիճակ, աստիճան:

**Մզկիթ, մէսջիդ, մաչիթ, մէչէթ, մէչէտ, մէչիդ, մէչիթ**-արբ. աղոթատուն, կան փոքր մզկիթներ, ուր չի կատարվում ուրբաթ օրվա կեսօրի աղոթքը:

**Միդյուր, մուդյուր, մյուդիր, մյուդուր**-արբ. կառավարիչ, պետ, տնօրեն, ղեկավար, վարիչ, գավառակի ավագ:

**Միլք, միլկ, միլխ**-աղ, ունեցվածք:

**Մինարա, մինարե, մինարեթ**-արբ. մինարեթ՝ մզկիթների մոտ 10-20մ բարձրություն ունեցող աշտարակ, որի վրայից մուլաները բարձրաձայն աղոթքով հավատացյալներին աղոթքի են հրավիրում:

**Միշուրիին**-խոսակցական՝ քաղաքագլուխ, առաջադեմ, երևելի, **միշուրնի**-խաբուսիկ, կեղծ, ցուցադրական, կեղծ ոսկի, կեղծ ոսկեթել կամ արծաթաթել:

**Միչիզան, Միչիկանց**-հատուկ անուն:

**Մխթար, մուխթար, մուխտար**-թաղապետ, գեղջավագ, անկախ, ինքնավար:

**Մյուզդա, միզդա, մյուժդէ**-աչքի լույս:

**Մյուզդասու**-աչքի լույս, աչքալույս:

**Մուլա**, **մոլա**-արբ. մուսուլմանական հնացած՝ մուլլա, «տեր», մուլլա, գլխավոր դադի (մուսուլմանական հոգևոր դատավոր), մուսուլմանական իրավունքի դոկտոր, մեդրեսեի (հոգևոր ուսումնարան) աշակերտ:

**Մոմենտ**-լատ. վայրկյան:

**Մորբուրօղլի**-մորաբրոջ տղա:

**Մուեզին**-մզկիթի պաշտոնյա, որը մինարեի գագաթից աղոթքի է կանչում հավատացյալներին:

**Մուննաթ**, **մուհանաթ**, **մուհնաթ**-արբ. վախկոտ, փոքրոգի, ստոր, անարժան, սրիկա, անպիտան:

**Մուշտարի**-արբ. գնորդ, հաճախորդ:

**Մուսաբինի**-ներգրավված է:

**Մուսուլման**, **մյուսուլման**-արբ. հավատարիմ, իսլամի հետևորդ:

**Մուրազ**, **մուրիզ**-արբ. կտակող, ժառանգող, մուրազ՝ ժառանգություն:

**Յաման**, **յեման**-գթություն, խնայում:

**Յայլա**-ամառային արոտավայր, արոտավայր լեռներում, սարահարթում:

**Յաշիկ**-արկղ:

**Յարա**-արբ. վերք:

**Յարադդան**-արարիչ:

**Յոլ**-ճանապարհ, ուղի, բավականին:

**Յոլդաշ**-ընկեր:

**Յուզ**-թրք. հարյուր:

**Յուզբաշի**-թրք. հարյուրապետ, կապիտան, ռոտմիստր:

**Նագիմ**, **նագըմ**-արբ. հանգավորում, պոեզիա, կարգավորող, բանաստեղծ:

**Նախախ**-անօրեն:

**Նամազ**, **նէմազ**-պրս. մուս. աղոթք, նամազ, Մուհամմեդ մարգարեին ուղղված աղոթք:

**Նասիբ**, **նեսեփ**-արբ. **ծննդաբանություն**, **տոհմաբանություն**,

**նեսերի-արբ-պարսկ.** տոհմաբանական:

**Նարդվան-աստիճան,** սանդուղք:

**Շալ-բուրդ:**

**Շալե-բրդյա:**

**Շահարի-քաղաք:**

**Շապկա-գլխարկ:**

**Շեյխ, շէյխ, շէխ-արբ.** ծերունի, տարիքավոր մարդ, մուսուլմանական կրոնապետ, հոգևոր առաջնորդ, շեյխ, դերվիշների մենաստանի առաջնորդ, արաբական ցեղի առաջնորդ:

**Շինել-գինվորական վերարկու,** գրատ:

**Շիվան, շիվեկար-պրսկ.** նագուտուզ անել, կոտրատվել, շինծու, անբնական: Այստեղից էլ՝ հնացած, գավառական՝ սուգ ու շիվանողք, լացուկոծ:

**Շոշ-փողոց:**

**Շպալ, շպալա-փայտակոճ, կոճ:**

**Շտաք, շտապ-սպայակույտ,** դեկավար օրգան:

**Շուբ, շուբա-մուշտակ:**

**Չաքա, չաքար, չեթե, չետե, չեթէ-չետնիկներ, չեթներ՝** չետնիկների գնդեր (Բալկաններում՝ տասնապետ):

**Չալել-նվագել:**

**Չալղջի-նվագող:**

**Չայ-ջուր, թեյ:**

**Չայիր, չերա-արոտավայր: Չերին-արածել:**

**Չանգա, չայնա, չենե-ծնոտ:**

**Չանգալ, չանգյալ-պատառաքաղ:**

**Չարա, չարե-գլխի ճարը տեսնել:**

**Չարշը, չարշի, չարշու, չարսու, չարչնոց-պրսկ.** շուկա, առևտրական շարքեր, պասաժ, առուծախի հրապարակ: Կապալի չարշը-ձածկած շուկա:

**Չարչի-խոսակցական՝ մանրավաճառ:**

**Չաուշ, չավուշ, չաուշ, չավիշ-թրք.** պատմական՝ մունետիկ, ավետաբեր, հանձնակատար, գինվորական կրտսեր աստիճան, նվիրակ,

ավագ ժանդարմ, հարվածամարտիկ:

**Չլբախ**-մերկ:

**Չյարքազ, չարքյազ, չերքեզ**-չերքեզ՝ ազգություն, օս, Կովկասի լեռնական:

**Չարսավ**-ծածկոց, սավան:

**Չոք, չյօք, չոք**-պրսկաթոք. ծունկ, ծնկից, **չյօքեր**:

**Չոքել**- իջնել, ծնկել:

**Չվան**-պարան, թոկ:

**Չրա, չրրա**-կրակոտ, կրակ:

**Չրավամակ**-գրգռել, այրել:

**Չուլ**-թոք. կոպիտ բրոյս կտոր, բրդե սթար, քուրձ, հնացած՝ շոր, գգեստ, վատ կարված և անփույթ հագած հագուստ:

**Պալատկա**-վրան:

**Պառադ**-շքերթ:

**Պարուչիկ**-12-րդ դասի զինվորական աստիճան, կոչում:

**Պեչենի, պեչենյե**-թխվածքաբլիթ:

**Պլան**-նախագիծ, ծրագիր, հատակագիծ:

**Պլետ, բլետ**-մտրակ:

**Պլիմոտ, պոպիմյոտ**-գնդացիր:

**Պոեզ, պոեզդ**-գնացք:

**Պոլիցիա, պոլիցիե, փոլիս, պօլիս**-հուն. պատմական՝ քաղաք-պետություն, ոստիկան, փոլիսմեն: **Փօլիս մյուդուրու**-ոստիկանական վարչության պետ:

**Պոլկ**-գունդ:

**Պովր**-խոհարար:

**Չամահաք**-տե՛ս ճամաք:

**Չան**-պրսկ.թոք. հոգի, անձ, մարմին, ոզի, կյանք, գոյություն:

**Չանդակ**-մարմին, դիակ

**Չանդամ, ջհանդամ, ջեհենեմ, ջահնամ, ջայնամ, ջհայնամ, ջհա-նամը**-արբ. դժոխք, գեհեն, տարտարոս, սանդարամետ:

**Չանդարմա**-տե՛ս ժանդարմա:

**Չանըմ, ջանան**- պրսկ. սիրուն, սիրելիս, հոգիս, հոգյակս:

**Ջիկարա, սիգարա-**ֆր. ծխախոտ, սիգար:

**Ռ-աստ գալ-**հանդիպել:

**Ռ-եալական-**իրական, ճշմարիտ:

**Ռ-եզիմ-**ռետիմ:

**Ռ-ելս-**երկաթուղագիծ:

**Ռ-գա, ռիգա-**հատուկ անուն, ընդունելի, համաձայնություն, կամք, հնազանդություն, թույլտվություն:

**Ռ-դադ-**բաղադրիչ, որը տարբեր բառերի հետ ստանում է այլ իմաստներ:

**Ռ-ուբլի, ռուբլ-**ռուսական դրամական միավոր:

**Ռ-ևուլ, ռևուլներ-**զենքի տեսակ, ատրճանակ:

**Սադ-**ողջ, կենդանի, աջ, աջ կողմ, երջանկություն:

**Սադցնել-**կենդանացնել, ողջացնել:

**Սան, սանրմ-**եթե:

**Սանը-**երազանք, ենթադրություն:

**Սանի-**արբ. երկրորդ:

**Սապոզ-**կրկնակոշիկ, երկարաճիտ զինվորական կոշիկներ:

**Սապոն, սապուն, սաբոն-**օճառ:

**Սաստավ-**զնացք, վագոնաշարք:

**Սավ-**հաստատ:

**Սավգյաթ, սովգյաթ-**աքսոր:

**Սավդաքյար-**սիրահարվել (սավ՝ հաստատ, դաք՝ կարողություն-նից վեր, ուժերից վեր):

**Սավոկ-**կարճակոթ գոգավոր թիակ:

**Սարայ-**մարագ, խորդանոց:

**Սաքու, սաքի-**բրբ. նստարան:

**Սարըկը, սարիկի-**չալմա կրող:

**Սարին, սասլարեն-**մագ, վարս:

**Սընի-**արբ. արարող, ստեղծող:

**Սեմբազ-**յոթ պահեստ:

**Սեգողնյա-**այսօր:

**Սելավ-**հեղեղ:

**Սեյրողյա, սիյոտկա**-ապխտած ձուկ:

**Սհաթ**-արբ. ժամ:

**Սողան**-տոխ:

**Ստա**-հրահան, վիզ:

**Ստանցի, ստանցիյա**-կայարան:

**Սուխարի**-չորացրած հաց:

**Սումկա**-պայուսակ:

**Սունդուկ**-սնդուկ:

**Սուպ**-ապուր:

**Վախտ**-ժամանակ:

**Վայթե, վայ թե**-երևի, խոսակցական՝ կասկածի, երկյուղի, տարակուսանքի արտահայտություն:

**Վաննա**-լոգարան, տաշտ:

**Վեդրո**-ռուս. դույլ:

**Վեշ**-ռուս. իր, առարկա:

**Վերստ, վարս**- ռուս. վերստա, XIX դ. օգտագործվող երկարությամբ միավոր, հավասար էր 1066, 78 մ, 1,067 կմ, մղոնի 2/3:

**Վոժժի**-սանձեր:

**Տաճկա, տաչկա**-սայլակ, ձեռնասայլակ:

**Տաճկական**-խոսակցական՝ թրքաքրդական:

**Տամա**-ազահ:

**Տամազլո**-ագահանալ:

**Տավարնի**-քեռնատար:

**Տարախումե, տրախումա**-հուն. խշրուկ, կոպերի բորբոքային վարակիչ հիվանդություն:

**Տեխնիկ**-մասնագետ:

**Տերիտորիա**-տարածք:

**Տոնգաջ**-խորամանկ:

**Տոնգուզողի, տյոնգուզողի, դյոնգուզողի**-խորամանկի որդի:

**Տոնգուզլար, տյոնգուզլար**-խորամանկ:

**Տրամվայ**-փոխադրամիջոց, տրանսպորտի տեսակ:

**Բայդ-անգ.** լավ:

**Ցեպ-շոթա:**

**Ուռում-հույն:**

**Ուռուս-ռուս:**

**Փաշա-թրք.** պատմական՝ փաշա (բարձրագույն քաղաքացիական և ռազմական տիտղոս Օսմանյան Թուրքիայում):

**Փալաքիան, փալախան, փարախան-խոսակցական՝** մտրակել, պատժածն, աշակերտներին պատժելու գործիք, տե՛ս ֆալախկա:

**Փարա-դրամ, մանրադրամ, փարա:**

Փափաք, փափախ, փափաղ-թրք. **գլխարկ (ոչխարի մորթուց), ժողովրդական փափախ:**

**Փեխամբար, փեյգամբեր, փեխամբար, փեխամբըր, փեխեմբեր –** պրսկ. մարգարե:

**Փեշք, պեչկ-վառարան:**

**Փեշքաշ, փեշկեշ, փեշքեշ-պրսկ.** նվեր, ընծա:

**Փերի-պրսկ.** փերի, ոգի, դիցանուշ:

**Փիլավ, փըլավ-պրսկ.** փլավ:

**Փոխեղիզմը-շողոքորթ, շողոքորթել:**

**Փոխփոխ-շողոքորթություն:**

**Փոխփոխլամակ-շողոքորթել:**

**Փոր-փոշման-խոսակցական՝** շատ փոշմանել, շատ զոջալ, ափսոսալ:

**Փորթուզալե-սերմնապտուղ:**

**Քեֆ, քեյֆ-արբ.** ուրախություն, քեֆ, զվարճանք, որակյալ, անկաշկանդ, ինքնական -ուրախություն:

**Քիթաք, կիտաք-արբ.** գիրք:

**Քիլար, քիլեր-խորդանոց,** ամբար, շտեմարան, մթերանոց, մառանիկ:

**Քյալաշ-փայտե գերան, հեծան:**

**Քյալլա-գլուխ:**

**Քյահա, կյահա**-աղա, գյուղի մեծը, գյուղապետ:

**Քյաչալ**-անմազ, ճաղատ:

**Քյարպիճ**-աղյուս:

**Քյոխվա**-ռես, գյուղապետ, գեղջավազ:

**Քյոփաք, քյոփագ**-, շուն, խոսակցական ծեր, տարիքով:

**Քյուչուկ, կյուչեք, քյուչեք**-փոքր:

**Քյուրդուն**-քրդի:

**Քյուֆլաք**-մարմին, շունչ (ծեծված?):

**Քոչա**-թրք. արի, քաջ, խիզախ, անվեհեր, կտրիճ, առատաձեռն,

ոչխար:

**Քոռ**-կույր:

**Քով**-բրբ. մոտ:

**Քրֆեյ, քրվեյ**-հայիոյել:

**Քուկդ**-բրբ. քոնը:

**Օդա**-թրք. սենյակ, խուց, խցիկ, կամերա, կրպակ:

**Օլ**-անգ. բոլորը:

**Օլան**-գոյություն ունեցող, իրոք, ծո՛:

**Օլդում, օլդումակ**-հասունացնել, աճեցնել:

**Օղի, օղում, օղուկ(օղու)**-թրք. որդի, զավակ, տղա, երեխա:

**Օյին, օյուն**-թրք. խաղ, ուրախություն, խորամանկություն, միջոց,

ինտրիգ:

**Օյուն**-վայնասուն:

**Օսյաք**-կտակ, խրատ:

**Օվան**-դաշտ:

**Օրդա, օրդու, ուտու**-թրք. բանակ, բանակատեղ, ճամբար զորագունդ, բանակ: **Օրդա**-այնտեղ, հոն:

**Ֆալախան**-խոսակցական մտրակել:

**Ֆալախկա, Ֆալաքխա, ֆալախա**-աշակերտներին պատժելու գործիք՝ փայտ որին կապում էին ոտքերը մտրակելու համար, մտրակ:

**Ֆայտուն**-բրբ. քառանիվ ձիաքարշ սարք:

**Ֆայտոնջի, Ֆայտոնջի**-բրբ. ֆայտոն քշող՝ վարող անձ,

կառապան:

**Ֆաշիստ-ֆաշիստ:**

**Ֆաս, ֆես-գլխարկ:**

**Ֆերշել, ֆերդշել-բուժակ, բժշկի՝ միջնակարգ բուժկրթությամբ**  
օգնական:

**Ֆետֆեբիլ, ֆելդֆեբիլ-գերմ.** ֆելդ՝ դաշտ, ֆեբիլ՝ դատարանի  
ծառայող բառերից, կրտսեր սպայական զինվորական աստիճան,  
կոչում, որը համապատասխանում է խորհրդային բանակի ավագ  
սերժանտին:

**Ֆիլար-դասալիք:**

**Ֆիտան, ֆիդան-շիվ, ծիլ, ընձյուղ, շառավիղ, սերունդ, գարմ:**

**Ֆնդիս-կաղին:**

**Ֆրոնտ-ռազմաճակատ:**

**Ֆուրգոն-սայլ, կառք, ուղեբեռի վագոն:**

**Ֆուրգոնչի-սայլապան, կառք վարող:**

## **Արտահայտություններ և բառակապակցություններ**

**Ալլահ հեքբար, յա հիլլալի, հիլլալա...** - Փառք ալլահին, աստված  
միայն ալլահն է...

**Արմեն կատտամ յու-անգ.** անբացատրելի արտահայտություն:

**Բագլիկ աղըմզը, էրման ի լար, փոխէդիզմը էրման ի լար, բագլիկ  
խտադիզ էրման ի լար, փոխէդիզմը էրման ի լար:**-Հրամայված է  
սկզբից (առջևից) ստիպելով հային պղծել, շողոքորթ հային սկզբից  
(առջևից) պղծել, ինչ-որ ձևով հային սկզբից (առջևից) պղծել, շողո-  
քորթ հային սկզբից (առջևից) պղծել:

**Գյավուրողլի գյավուր, գյաուրողլի գյաուր-անհավատի տղա,**  
անհավատ:

**Գոռե բահո-համաձայն քննարկման:**

**Գա է ստա, դա-Նույնպես ինչպես վիզը (հրահանը), նույնպես...**  
Նման է ինչ-որ մեկին՝ իմաստով:

**Գա-լիկո-դա-լիկո քյաֆուր խողեդա զուլում է օսման:**-Գաշտերը,  
դաշտերը կարմիր են ներկվել, ոչ իսլամ աստվածը հանդուրժեց օս-  
մանցիների աղետը:

**Պարիղայնի խզմատքյար**-երիտասարդ բանվոր:

**Էսկի շահարի**-հին քաղաք:

**Թապիմ, քապիմ: Թէպիմ, քէպիմ**:-արք. Հանձնվի՛ր, հանձնվի՛ր:

**Թեզ, թեզ դոնդար, բաբամ, թեզ դոնդար**-Արագ, արագ, հայրի՛կ, պտտվի՛ր (շուն՝ արի), արագ:

**Իյալի՛, գյավու՛րօղլի գյավուր**-Արագացրու՛ (այս կողմ), անհավատի տղա՛ անհավատ:

**Խաբարդա, խաբարդա**-Ճանապարհի տվեք: Լու՛ր տվեք:

**Կապիտամ յու, սանըմա բիչ-անգլ**. Ինչու՞ դու խփեցիր էգ շանը:

**Կակո՞ն տվայո դելո**- ռուս. Քո ի՞նչ գործն է:

**Կյաչե հառե, կյաչե հառե, դագախ է**:-քրդ. Հավանաբար շանն է բարկացնում (քսի տալիս) կազակի վրա:

**Հագր բաբա օղլի դառար**:-Պատրաստի (հաճույքով) տղի տեր դարձար:

**Հախից գալ**-պրս. հաշվեհարդար տեսնել, իրավագրկել, մասնաբաժնից գրկել:

**Հելլու, հելլու, Հանես**-անգլ. Ողջու՛յն, ողջու՛յն, Հովհաննես՛ս:

**Մալի մեյդան**-բառացի՝ անասունի հրապարակ, դաշտ, հավանաբար բաց տարածք՝ հրապարակ, որտեղ կարսեցիները խոշոր եղջերավոր անասուն են վաճառել:

**Յաա՛լլահ, յա ալլահ**-է, Աստված՛:

**Յոլդաշ բուրդա հարդա սուվար: Յոլդաշ բուրդա հարդա սուվար-յուր**:-Ընկե՛ր, այստեղ որտե՞ղ ջուր կա:

**Նախախան երթա խալմագ: Նախախ դան երդա դալմագ**:-Անօրեցի տուն երթա անիրավը:

**Ռ-դադ խզմատքյաշ**-գերի, տան սպասյակ:

**Սադ աբադ, սողան աբադ**-հավասարությունը դեպի աջ (աջ դարձ), սոխին դարձ(իր):

**Սանըմ մանա յոլդաշ էդանին, դինինի մուսաբինի յոլնի քիթաբընը սան բանընը նա յոլդաշ սան մանի յա մուսուլման**:-Եթե ընկերը կրոնական է լինում, ապա ներգրավված է և հետևում է գրքի սովորույթին, այստեղ խոչընդոտ կա, օ՛, ես մուսուլման եմ:

## Թրքաբղերեն երգ

**Մանի (սանը) գյորդյում (գյորդյում), սավդաքյար օղում-Քեզ տեսա, հաստատ (ստիպված) անկարող եղա (ես քեզ տեսա, սիրահարվեցի),**

**Էյ փերի, քյուրդուն գյոզալի-Է՛յ փերի, քրդի՛ գեղեցկուհի,**

**Գյոզլարին չրա-աչքերդ կրակի նման,**

**Մասլարեն աթուն (ալթըն)-վարսերդ ոսկի,**

**Քոյին ֆիտան-Քոյիդ մատաղ (հասակդ բարդի՞),**

**Քյուրդուն գյոզալի-Քրդի գեղեցկուհի,**

**Մանի (սանը) յարադրան ալլահ-Քեզ աստված արարեց (ստեղծեց),**

**Քիրդա յարասան-Սի հատըմ նորեն (ևս մի անգամ էլ) ստեղծվի՛ր (արարվի՛ր),**

**Գյուզալ լարի, գյուզալի-Դու գեղեցիկ գեղեցկուհի (գեղեցկուհիների գեղեցկուհի),**

**Քյուրդուն գյոզալի:- Քրդի գեղեցկուհի:**

**Սուխոյ պայոկ-ռուս. չոր օրապարեն:**

**Վա՛նյա, միլի մոյ, յա սամա ուսպեյու:-ռուս. Վանյա՛, թանկագի՛նս, ես ինքս կհասցնեմ:**

**Վոտ ի գվերինսուվո-ռուս. Ա՛յ քեզ գազանություն:**

**Տոնգոզոլի-տոնգուզլար, տյոնգոզոլի-տյոնգուզլար-Խորամանկի տղա խորամանկ:**

**Ուռա՛, ուռա՛, մայի առլի:-ռուս. Կեցցե՛ք, կեցցե՛ք, իմ արծիվներ:**

**Ուռա՛, ուռա՛, գրոսավույտե մաի առլի:-ռուս. Կեցցե՛ք, կեցցե՛ք, բարև, իմ արծիվներ:**

**Փաշա հարդա-Փաշա ծանր եմ (փաշային գանգատվելու իմաստով):**

**Քոմ ան, քոմ ան/Քամ օն, քամ օն-անգլ. Դու՛րս արի:**

**Օլան էլմանի դաշտը: Օլան Էրմանի դաշտը-Ծո՛ղ, հայը փախավ:**

**Օլան, ուռուսա բախին հալան-Իրոք, դեռ գոյություն ունի ռուսի հետ կապը:**

**օլ ռայդ-անգլ. շատ լավ:**

**На, кушайтеправляйтесь:- Վերցրե՛ք, կերե՛ք չաղացե՛ք:**

**Я не знаю. -Ես չգիտեմ:**

## Օգտագործված գրականություն

### Բառարաններ

Էդ. Ադայան, Արդի հայերենի բացատրական բառարան, հատ. Ա-Բ, Հայաստան, Եր., 1976:

Հր.Աճառյան, Հայերեն արմատական բառարան, ԵՊՀ, ԵՀ հրատ, Եր., 1976:

Հ.Ա.Ասմանգուլյան, Մ.Ի.Հովհաննիսյան, Անգլերեն-հայերեն բառարան, շուրջ 30000 բառ, Հայաստան, Եր., 1984:

Գ.Գասպարյան, Ա.Գրիգորյան, Ա.Հակոբյան, Հայոց լեզվի բարբառային բառարան, հ.Ա-Բ, Գիտություն, Եր., 2001, 2002:

Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, 4հատ., ՀՍՍՀ ԳԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1969-1980:

Ա.Ս. Ղարիբյան, Ռուս-հայերեն բառարան, երկրորդ հրատարակություն, «Հայաստան» հրատ., Եր., 1977:

Վ.Հ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ., հ. II, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ հրատ., Եր., 1956, էջ 603-613:

Հայ-ռուսերեն բառարան, ՀՍՍՀ ԳԱ, Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1987:

Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Թ.Խ. Հակոբյան, Ստ.Տ.Մելիք-Բախշյան, Հ.Խ.Բարսեղյան, 5 հատորով, ԵՀ հրատ., Եր., 1986, 1988, 1991, 1998, 2001:

Д.А. Магазаник, Турецко-русский словарь, 40000 слов и выражений, ОГИЗ, гос.изд. иностранных и национальных словарей, М., 1945.

С.И. Ожегов, Словарь русского языка, около 57000 слов, М., “Русский язык”, 1988.

Иосиф А. Орбели, Избранные труды в двух томах, том II, выпуск 2, Курдско-русский словарь, НАН РА Институт Востоковедения, Зангак-97, Ер., 2002.

Большой Российский энциклопедический словарь, Золотой фонд, Энциклопедический словарь, изд. «Большая Российская энциклопедия», М., 2003.

Турецко-русский словарь 48000 слов, АН СССР Институт Востоковедения, изд. "Русский язык", М., 1977.

В.Г. Шербинин, Э.М.-Э.Мустафаев, Карманный русско-турецкий словарь, 11000 слов, изд. "Русский язык, М., 1995.

Ю.В. Щека, Русско-турецкий разговорник, М., Высш. Шк., СП "Конто", 1992.







Հյուսիսային Կովկասը XIX դ.



Երզնկան Մուսղին աշխարհամարտի փարիներին



*Էրզրումի միջնաբերդը մեր օրերում*



*Հին հրանոթները Էրզրումի միջնաբերդում*




*Էրզրումի միջնաբերդի մուտքը*



*Կարսի հզոր միջնաբերդը մեր օրերում*



*Տեսարան Կարսից*




*Կարսի միջնաբերդի հզոր պարիսպները մեր օրերում*



*Կարսի միջնաբերդը մեր օրերում*




*Հասան Կալախի միջնաբերդը և Բասենի դաշպր մեր օրերում*




**Կարս քաղաքը և միջնաբերդը**



**Ալեքսանդրապոլի Կազաչի պուստի որբերը**



*Ագուլիս*




Հ. Թոշունյան-Հովհաննիսյանը, 1972թ. փետրվարի 13




Հ. Թոշունյան-Հովհաննիսյանի զերդասարանը






***Ալեքսանդրապոլ ամրոցի զինվորական հիվանդանոցը  
(ծառերի ետևում) և Ս. Ալեքսանդրայի եկեղեցին***



***Ալեքսանդրապոլի ամրոցը***



*Տեասրան Ալեքսանդրապոլի ամրոցից*



*Տեասրան Էրզրումից*

## ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք .....	3
Գիրք առաջին.....	12
Գիրք երկրորդ.....	209
Վերջաբանի փոխարեն .....	241
Резюме .....	243
Summary .....	244
Համառոտագրություններ և հապավումներ.....	247
Ծանոթագրություններ.....	249
Օտար բառերի բացատրական բառարան .....	298
Բառակապակցություններ և արտահայտություններ.....	315
Օգտագործված գրականություն.....	318
Քարտեզներ, աղյուսակներ.....	320
Լուսանկարներ .....	322

***Ավագյան Ինգա Էդուարդի***

**Մեծ եղեռնը վերապրածները**

**(մատենաշար, գիրք 5)**

**Մեր գնդի ճակատագիրը.**

**Հովհաննես Թռչունյան-Հովհաննիսյանի հուշապատումը**

***Авагян Инга Эдуардовна***

**Пережившие Великий геноцид**

**(серия изданий, книга 5)**

**Судьба нашего полка**

**Мемуары Оганнеса Трчуняна-Оганнисяна**

***Гюмри, Эльдorado, 2016г.***

***(на армянском языке)***

Գիտական խմբագիր՝  
պատմ. գիտ. քեկնածու, դոցենտ

Գրախոսներ՝

Խմբագիր՝

Սրբագրիչներ՝

Լուսանկարիչներ՝

Շապիկիկն՝

**Արտակ Հովհաննիսյան**

**Սյրեվան Տեր-Մարգարյան  
Պարույր Զաքարյան**

**Անահիտ Սիրոջյան**

**Անահիտ Սիրոջյան  
Համիկ Թադևոսյան (ռուսերեն)**

**Գ. Նիկիտին**

**«Ալեքսանդրապոլի ջոկատի ալբոմից»  
Ս. Տեր Մարգարյան**

**Կամսիսի կիրճը**

---

**Միրելի՛ ընթերցող, Ձեր առաջարկություններն  
ու ցանկությունները կարող եք ուղարկել  
ingavagan.76@mail.ru էլ փոստով**

---

Ստորագրված է տպագրության՝ 25.11.2016թ.  
Գրաչափ՝ 60x84 1/16: Թուղթ՝ օֆսեթ: Տպագրությունը՝ օֆսեթ:  
21 պայմ.տպ. մամուլ: Տպաքանակ՝ 150:



*«Տրապիզոնի և Էրզրումի վիլայեթների տեղահանված հայ բնակչությանը Եփրատի հովիտով քնեցին դեպի Կամախի կիրճը: Այն, ինչ այսօրեղ կարարվեց հազարավոր հայերի հեղ, պատկերում էր դաժանության և զազանության այնպիսի աներեակայելի տեսարան, որ քվում էր, քե ևս մեկ անգամ հազարամյակների խելագարությունը խտացել և վեր է բարձրացել այս անհիծյալ հողակտորի վրա, որպեսզի հսկա հրեշի կերպարով այրող հուլիսյան արևին հաղթանակած քղավի, որ ողջ քաղաքակրթությունը միայն շղարշ է, որը ամեն օր կարող է պատռել երկրորնանի դահիճը»:*

**Հենրիխ Ֆիրբյուխեր**



**ISBN 978-9939-826-54-7**